182





ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ն Ե Ա Ց

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

70-42



2004

2951 ԿՀ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՒՒՆՔ

Գ 1424-57 (գ 14)



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1827. ՌՄԻԷ

243



ԱՒՈՐ ԸՆԹԵՒՆՈՒԻՑՈՒՆ



Վարեվեան Օսարլենոյն Հոգեշարժ Ողբերգութեց Վատեան, ինքնագիւտ և յոգնադիմակ ստեղծաբանութեքն Հայկազանցս սիրելի, աւասիկ վերստին ելանէ ի լոյս՝ հանդերձ այլովք ամենեքումբք, որ յանուն նորին գրչի մնայուածք են տառից յայտնիք առ մեզ, անեղծք և անթերիք։ Եւ թէպէտ ի շարի մատենագրացն նախնեաց խոնարհագոյն դնի սա ժամանակաւ, դէպք իրաց յառաջեցուցին ի տիպ. թէ արդեւք և ինքն ի գաղտնիս զարժանն իւր պահանջեաց՝ ուրեմն հարիւրոց ամաց անթառամ համբաւոյն պսակեալ յազգէն քան զամենայն բանահիւսս Վասպուրական նահանգին և Աղուանից։

Ելինչ հայեցեալ ի կարդ ժամանակաց այլ և այլ շարադրածոց Հօրս, զհոյակապ գլուխս յօրինուածոց նորա, զՎատեան Ողբերգուեց, լաւ համարեցաք և յառաջս մատենիս դասել. օրինակ զայն կալեալ մեզ յայնմ, որ ինչ ցայժմ տպագրեաւն էր ի մէնջ, բայց առանց ի կարևորացն և քան զևս ուղղութեն հեղգանալոց և ի բաղում ընթերցուածոց լաւագունին ընտրութեն՝ ըստ կիրթ քննութեն ստուգագոյն օրինակաց։

Ոչնոյն ջան սկզբնատիպ գեղոյ Վախնեացն ախորժակաց ըստ կարի և յայլ գիրս սորին, որպէս և ի բնաւ խակ շարադրածութիս Հարանց, ուշ կալեալ

տեսանելիքեն՝ որք նոցին ուսմանցն էին ցանկացօղք և հասուք։ Սակայն զայլ և այլ գուշակս ընթերցուածոց օրինակաց աւելորդ վարկաւ ժողովել և յայս տիպ. որ բազում անգամ, այլ և արդ իսկ այլուր տուեալք են ի մէնջ շատ լեզին։

Ոնորին զհետ գան Պատմուի Պարանից, Ներբողեանք ի փայտն կենաց, և ի ծն Յայտն, յերանելի Դաւթեայն և ի սքն Յակոբ Մծբնայ, գանձք երեք և տաղք զանազանք և մեկնութի Ներդոյ երդոյն, յորս յամենեսին երևի այլ և այլ հասակ և կերպարանք ոճոյ նարեկեան գրչին։

Ի մերոյս Գրիգորի և այլ գրած վայելուչ ի մեկնութի յովհեան Ով է գային, զոր չեղև մեզ վստահելի առ ժամս ընդ սոսին ածել ի տիպ միով և եթ ընտիր՝ այլ հնոտի օրինակաւ, յուսով սպասեալ՝ զլուսաղոյնն հայրենասէր վաստակոցս ընդունել փոխարէնս ի հայրասէր մերազանց։

Ց Ո Ւ Ց Ա Կ

	Էջ
Մատեան Ողբերգութեանց	3
Յիշատակարան	280
Պատմութիւն Ապարանից	283
Ներբող ի սբ խաչն	302
Ներբող ի սբ կոյսն	319
Ընդդէմ վերստին ի վերայ դրոյ անուան Իւրոյ	332
Յիշատակագիր նամակ առ Սահականոս Մոկ.	334
Ներբող ի սբ Աթաքեալն	336
Ներբող ի սբն Յակոբ Մծբնայ	351
Գանձ ի գալուստ սբ Հոգւոյն	367
Գանձ ի սբ Եկեղեցի	370
Գանձ ի սբ խաչն ձեռնկալ	373
Տաղք Ծննդեան	376
Տաղք Յարութեան	381
Տաղ Գալստեան Հոգւոյն սրբ	383
Տաղ Վարդավառին	384
Տաղ Եկեղեցւոյ	385
Տաղ սրբ Քառասնիցն	386
Մեկնութիւն Երգոց Երգոյն	389
Յիշատակարան	486

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՎԱՆՈՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵՆԸ ՈՂՂԲՊՈՒԹԵՍՑ

ԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ
ԱՊԱՇԱԽԱՆԱՑ ՀՈԳԵՀԱՀ ԽՐԱՏՈՒՑ ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ
ԶՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ
ՅԱՆՁՆԱՒՈՒԹԵԱՆՑ ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՑՏՆՈՒԹԵԱՆՑ
ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ
ՅՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵՑԵԼՈՑ
ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱԳՈՒՑԵԼՈՑ ՍՊԵՂԱՆԻՔ
ԶՕՐԱՒՈՐՔ ՎԻՐԱՑ ԱՆԲԺՇԿԱԿԱՆԱՑ
ԴԵՂՔ ԱԶԴՈՂԱԿԱՆՔ ՅԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԲԱԶՄԱՄԱՍՆԵԱՑ ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ
Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ
ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՒՈՒԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ
ՊԱՏՃԱՒՔ ԱՂՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՒՐՑ
ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ
ԱՄԱՑԵԱԼ

ՄԱՏՅԵԱՆ ՈՂՐՆԵՊՈՒՄԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑԻ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ



ԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Զայն հառաչանաց հեծումեան սրտի՝ ողբոյ աղաղակի քեզ վերընծայեմ, տեսօղդ գաղտնեաց, և մատուցեալ եդեալ ի հուր Թախծումեան անձին տոչորման՝ զպատուղ ըղձից ձենձերոյ՝ սասանեալ մնացս, բուրվառատ կամացս առաքել առ քեզ։ Ա. յլ հոտոտեսցիս հայեսցիս, գթած, քան ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդումեբ։ Ընկալ զսակաւամանեայ քանիցս յօդուած քեզ ի հաձումեն, և մի ի բարկումեն. ելցէ ի խոցոյ աստի զգայումեեց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէրը քանական զոհիս, ողջակիզեալ զօրումեբ ձարպոյ՝ որ չիան է պարարտումեիւն։ Այս ի գնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիս, հզօր, մի խբրև զհամբաւձուածն ձեռաց ամպարշտեաըն Յակոբայ, ըստ բողոքելոյն Լայասեայ, և զանիրաւումեն Նաբելոնի՝ տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ եւթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. այլ խբր զբուրեալ խունկն հաձոյական ի խորանին Աեղովայ, զոր Դաւիթն

կանգնեալ նորոգեաց տապանակին Հանգստեան ՚ի գերուԹենէն դարձելոյ , որ ՚ի վերստին գիւտ կոթուսեալը հոգւոյ առակի , ընդունելի կամաց քոց լեալ ։

Բ· Այլ քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ ուժգնիս հնչեցեալ ՚ի ձորն վրէժխընդրուԹե , կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս , այժմէն զուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց , որ յիմումն անձին ցուցանի , խռովուԹիս ամբոխից , հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոյն հոյլք , չարեացն ընդ բարիսն , և գերեալ զնս ՚ի մահ ըստ հինն դիպուածոյն՝ որ նախ քան զընորհին ժամանել առ իս · զոր ընտրեալն առաքեալ անացն դասուց Պաւղոս՝ առօրինակեալ զ՝ովսէս , զԱՀի փրկուԹիս յաղԹօղ ցուցանէ ։ Վ՝ասն զի ԹԷ մերձ է օր ՚ն , որպէս գիր ասէ , ՚ի հովիտն Ա՝ձուկ ասպարիսին ՅովսափաԹու և հեղեղատին Կեդրոնի , փոքր հանդիսարանացն իրաւանց ժամագրուԹեց , որ կենցաղականաւ այսր յաւիտենիս զՀանդերձեալսն ինձ կերպարանեն , ապա և՛ս յաւէտ մերձեցաւ ՚ի վերայ իմ արքայուԹիւնն ՚ի՝ մարմին եղելոյ , մեծապէս գտեալ զիս առիԹ միասուց՝ բազմաց տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց Ճշմարտապատուիյ , քան զձեռնն նորին վերակացուին անդ ուրեմն երբեմն ՚ի հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց , և այլոց բարբարոս ազգաց ։ Վ՝անզի այն ընտրուԹիւն ամօք չափեցաւ , իսկ պատուհաս իմումն պարտուց առանց աւարտման ունի զսահման ։ Ո՝՛չ , գուբ և որոգայԹ անՀոգոպրելի , ըստ մարգարէին և առակողին , տագնապաւ մեծաւ առ գուբս ինձ հասեալ՝ զամենն միանչեանաւոր աստէն գծագրել ։ Օ՝ որ միայն քո է հրաշագործել պատուղս գեղոյ ՚ի հնարս կենաց ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից , քաւիչ ամենայնի՝ գովեալ ՚ի փառս անձառս անսահմանելի բարձրուԹե , յաւիտեանս յաւիտենից ։

ԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ քանզի առ բարձրեալն ՅԾ յօդաւորական շրթամբք կարդաս, որ գործովք միայն պրաւի, և ոչ ստեղծաբանութեամբ կաշառի, որ Այգիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն, զինչ օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական առաքեալ եդից՝ ահաձայն իմ պարտաւոր, պատժակիցս կործանեցելոյն Սոդոմայ, ըմբերանեալ դատախազս Կինուեի, անարի բարբարոսս քան զՀիկինն Հարաւային, վատթարագոյնս քան զՔանան, յամառեցեալս քան զՄաղեկ, անբժշկականս քաղաք դրօշելոյ, նշմար մնացեալ ապստամբուե հինն Իսրայէլ, յիշատակարան պահեալ ուխտազանցուեն Յուդայ, կշտամբեալս գեր քան զՅուր, տարամերժեալս քան զՅայդան, խորթաբարոյս քան զԱվելեա, աններելիս քան զանհաւանն Լափառնաում, պարսաւեցեալս իբր զՀորազին, բամբասեցեալս ըստ Նեթսայիդայ, անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս Եփրեմի, աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտութեամբ, Ի կորեանց առիւծուց անձնական օձս եղեռնային, կերպս ձուոց քարբից լցեալ ժանտութիւք, պատկերս վերջին հարուածոցն Նրոսաղեմի, ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի, տաղաւարս մերժեալ՝ հասեալ Ի կործանումն, խորտակեալ դրացս վստահարան, և կրկին ծըրդեալ շինուածս խօսուն, Թողեալ ժառանգութիս յարմարական, մոռացեալ տունս ՅԾակերտ, ըստ բանից նախագրեցելոցն՝ Մովսէսի, Դաւթայ և Երեմիայի, յարիս քանակաւ՝ ունօղս բորոտութեան, հարուածեալ խրատու քերմանն, օրինիս կազդուրեալ, օծեալ կաւոյն՝ ողբական հեզութիւն, անձնա-

բակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին, արտաքս ընկեցեալ իբաւացի հատուցմամբ հրամանաւ Հզօրին ի տեղի անսուրբ, հերքեալ տարագրեալ խտրոցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ, ծածկեալ գրամն յերկրի չարեօք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի։

Բ. Այլ դուն ած, ածդ հոգւոց և ամենայն մարմնոց՝ ըստ գաւանելոյ ածաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ՝ ըստ սքանչանաւ ձայնին, շնորհեա կատարել ի քոյդ հաճուն օրհնեալդ կամաց՝ զկրեօք քնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան։ Այս ընդ լալով սերմանել բանիս ի նախընթաց չուս աստիճանաց օթևանացս պատրաստուէ, ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, գարձայց բերկրեցեալ լուսեղէն քաւութեամբ՝ պտղոյն երանութեան որպիսին բարուէ։ Ի տացես ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր Իսրայելի, և ստինս աչաց ցամաքեալս՝ ոմ ամենագութ։ Ի ուր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած, նախ քան երկինի, և երկինն երկրի, և նա ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա Իսրայելի։ Այս երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս աղաչեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց։ Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բայց տարակուսելոյս ի մուտս մաղթանաց այսր հեծութեան՝ կամն քաղցրութեան՝ զօրանալ աստէն. զի մի՛ ի բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ, իբր զնիւթ մոմոյ սպառեցայց ջնջեալ ի միջոյ։ Գի՛ զրկելոյս, ըստ մաղթանաց գոչմանն ասողին, և այժ թալկացելոյս, և կեանք մանչելոյս՝ մոացս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութեք զքեզ խնդրելոյ, առ զաւանդ մաղթանացս, և տուր զողորմութեդ քո շնորհացդ. ընկալ զփոքրս ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ ի հզօրեդդ. զօրացո զբանս զղջման, առաքեալ ի մեզ հոգի ի բարձանց՝ ածաշունչ պատգամաբս ի սմա եդելոցս։ Պարգեւեա բարերար՝ զառակն Իսայեայ, լուսաւորեալ առ ձշմարտութիւն, մատուցանելով մանր արժանոյս՝ ընդ պղնձոյս գոյն անարգս ձայնի՝

զոսկի քո հնորհի, լինդ անզարդուհե երկաթոյս սեռու-
թե գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյգք առաքինութե,
հրաշեկ լ իբանանու։ Լնդկեր կարծրացուցանես ըզ-
սիրտ եղկելոյս՝ չերկնչել ի քէն, անձառ և ահաւոր։
Ո՛ի եղեց անպտուղ ի փոքր վաստակոյս՝ իբր ապա-
ջան սերմանօղ անբերբի երկրի։ Ո՛ի լնցի լինձ երկ-
նել և ոչ ծնանել, ողբալ և ոչ արտասուել, խոր-
հել և ոչ հառաչել, ամպել և ոչ անձրևել, ընթա-
նալ և ոչ հասանել, լինձ ձայնել և քեզ ոչ լսել,
պաղատիլ և անտես ինալ, կողկողել և ոչ ողորմել,
աղաչել և ոչ ինչ օգտել, զոհել և ոչ ձենձե-
ռել, զքեզ տեսանել և դատարկ ելանել։ Լ ուր
լինձ նախ քան զկարդալը իմ առ քեզ միայնդ հզօր·
մի զանվնաս տանջանացն տոյժս՝ ընդ թուով ա-
ւուրց մեղօք կեցելոյս չարագործիս լինձ հատուցա-
նել։ Լեցո զիս դթած, լուր լինձ ողորմած, մարդա-
սիրեա ներօղ, խնայեա երկայնամիտ, պաշտպանեա
ապաւէն, բարերարեա հզօր, աղատեա ամենակալ,
կենագործեա նորոգօղ, վերահանդնեա ահաւոր, լու-
սաւորեա երկնային, բժշկեա հնարաւոր, քաւեա
անքնին, պարգևատրեա առատ, հնորհազարդեա
աննախանձ, հաշտեա անախտակիր, ընկալ անոխա-
կալ, սրբեա ի պարտուց օրհնեալ։ Լ թէ յաւե-
ցից զաչս իմ, նայեցեալ՝, հայեցուած երկուց վտան-
գից յաւուր թշուառութեան, զքոյդ տեսից փըր-
կութի՝ յոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտե-
ցից ի վեր յամենագրաւ ուղին սոսկալի, հրեշտակ
քո խաղաղութեան քաղցրութէ լինձ պատահեսցէ։
Զայդ լինձ ևր ի յելից աւուր հնչոյս արձակման՝
մաքրութէ ոգի լուսով ամբարձեալ ի յերկնաւո-
րացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քոյ եկեալ հա-
սեալ։ ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց լինձ կը-
ցորդ ժամանելոցս։ զանակնկալն բարի՝ չարիս ի
յուսահատութեանն աւուր հնորհեսցես։ Ո՛ւռ լոյս
քեզ, բարեբանեալ, որ փրկուիդ ես ամենայնի, եթէ
ախտացեալս քո ոչխարի՝ գազան դժնդակ տացես ու-
ղեկից, մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք, կործանե-
լոյս պարտեօք՝ փրկութէ։

Գ· Ո՛ղեւք մոռասցին զբարերարելդ՝ ակնկալու-

լութիւն. անտեսեսցեն զգթասիրելդ՝ խնամող. այլայլեսցեն զմարդասիրելդ՝ անփոփոխ. նհանջեսցեն զկենսագործելդ՝ անվախձան. թողուցուս զողորմուիդ՝ երջանիկ պտուղ։ Ցշաւաղեսցեն զքաղցրութեդ բարեհնորհ ծաղկիդ. անպատուեսցեն զնիւթ պանձանաց քումդ ձոխութե. յեղանակեսցեն զփառս հերաց քումդ բարձրութե. ոչ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պսակի։ Ցթէ ողորմածացն ես երանութե, իսկ դու քնաւ իսկ արքայուե լցեալ փափաքմամբ, ոչ զբոլորն պարգևեսցես փրկութե. ոչ մատուցանիցես դեղ վիրացս, ոչ սպեղանիս խոցուածոյս, ոչ դարման տկարութեանս. ոչ ծագեսցես լոյս ի խաւարի՝ յուսացելոյս ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգևդ տիեզերաց, որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութե և յարակայ մշանջենաւորութե, վկայեալ ի քնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերից յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ Նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր իմ տէր, տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից տիրօղ հաւասարապէս, միայն արարիչ ղենաւս յոչեից, փառաւորեալ, անքննին, ահեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտանելի, անմերձենալի, անբմբռնելի, անիմանալի, անչառելի, անտեսանելի, անգիտելի, անշօշափելի, անորոնելի, անսկիզբն, անժամանակ, անչամանդաղ դիտուքեր, աներկեան տեսուքեր, չիմարիտ էականուքիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյուքեր, անստուեր ծագումն, ամենափայլ չառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահուքեր, անտարտամ հանպիտս, անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն, չաշակ քաղցրուքեր, բաժակ բերկրուքեան, հաստիչ հոգւոց հաց, օտար մթուքեց սէր, աներկբայ խոստումն, ծածկոյթ յանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռընկալուս մեծ, ապաւէն գովեալ, անհնուաղելի ընորհ, անպակասելի գանձ, անապական անձրեւ, արփիացնօղ յօղ, ամենատեղաց դեղ, ձրի բժշկուքեր, կրկնաձիր առաղջուքեր, վերհագոյն խրատ խոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, ստրկամեծար թագաւոր, աղքատասէր պաշտպան, մշտատարաւստ տուիչ, անխափան դիմեցումն, աննահանջելի հրամանն, անհամառօտ յոյս, երկար տեսողուքիւն, անզգեցական տուր, ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն. միսիթարուքեան ձայն, սփոփանաց լուր, բերկրուքեան բերումն, անուն կենդանի, նախախնամող մատն, անդայթագղելի ելք, անխարդախ ընթացք, կենդանարար կամք, աննենգելի խրատ, աննախանձ պա-

տիւ, լայնական հնազանդ, անձկական պայման, անգտանելի հետք, աներեւոյթ շաւիղ, անչափագիր պատկեր, ողբանուէն անսահման, աննմանական տիպ, անզուգական գունդ, ողջմունքի բազմազեղ, խոնարհութիւն ստեղծի, համբոյր փրկական։ Այս եւս քան զայս աղաչմունք վայելչականք՝ ընծայութեդ նուիրելիք. օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, քարոզեալ, աւետարանեալ, հռչակեալ, հնչեցեալ, պատուեալ, անխափ բերի կամօք աղաչեալ, եւ որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն հոսմունք քաղցրութ, զոր հանդերձելոցն ձայնից լուսաբանեն կերպաւորութիք. որով զուարթ ցուցանիս 'ի փրկութիւն իմ, երանութի, իբր 'ի պարարտութենէ իմոք ախորժ տենչանօք լցեալ. զի ոչ իմովս ինչ մնոտիապատուաստ փառատրիս երգով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրոս աղերս՝ մեծիդ փրկանաց։

Ը. Այս քանզի առ ամ հասակ անկեցեալ յերկրի աղգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի, իբր կցորդ մեծգիտակական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից, առ նախնի ժամն ժամանողաց, եւ առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն, առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութիքն, առ պարտաւորս եւ արդարս, առ ինքնարդոյ բարձրայօնն եւ սխալեալ անձնագատ գտեալն, առ բարիսն եւ եղեռնագործս, առ նկուճս եւ առ արիս, առ ստրուկս եւ ներքոյանկեալս, առ սեպուհս եւ դերաշխարհիկս, միջակաշոց եւ պայազատաց, շինականաց եւ տոհմականաց, արուաց եւ իգաց, հրամայողաց եւ հնազանդելոց, գեր եղոց եւ նուաստից, վեհից եւ փոքունց, պատուականաց եւ ոամկաց, ձիավարժից եւ սոսկականաց, քաղաքականաց եւ գեղջկաց, արքայից գոռոզութեց 'ի սանձս ահաւորին լսելոց, միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց, մաքրականաց տիրանուէր զգաստութեց, քահանայականն երջանկակրօն ընտրութեց, այցելութեանց բարեզգեստից դիտաղութեց, աթոռակալուեց նախա-

գահից սրբանուէր տեսողուեց . որոց ոմանց աղերս աղաչանաց , և ոմանց խրատ բարեաց առ դէմն աղօթից այսու մատենիւ մատակարարեցի , ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիմիս , և ամենեցուն սոցին խնդրուածս՝ զըՔրիստեան մեծիդ յանդիման լինել սուաւ հանապազ ։

Գ· Այլ արասցես զսոյն ընթերցողացն ի սիրտս յըստակ՝ բժշկութեի հոգւոց և մաքրութեի յանցանաց , Քողութիւն պարտուց և արձակուրդ մեղաց կապանաց ։ Այդիցի բղխումն արտասուաց սուաւ վարժելոյն , և պարգեւեալ տացի ի ձեռն սորին ապաշաւ ըղձից ։ Ընորհեսցի տէր և ինձ ընտիր առ ի քէն ղղջումն կանաց , և նոցա իմովս ձայնիւս շունչս բարեհամբոյրս . նուիրեսցի վասն իմ այսու մատենիւս պաղատանք նոցին , և բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեսցին ։ Ընդ համբոյր Ճաշակման այսր ողբերգուե , ընորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ ։ Այնժամ ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սուաւ , ընկալ կենդանեաքն վասն քո , գԹած , և զիս ընդ նոսին . եԹէ ախտս ինչ սրբանուէրս կաԹուածոց աչաց սովիմբ բերիցի , եղիցի ի քէն խնամակալ՝ և յիս անձրևեալ . եԹէ գրեսցի և ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կիրս կենաց , արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարեալ ։ Այնժամ հեծուիս ՅաճախաձոյսՅ ի ձեռն այսր բանի ի գաղտնեաց ուրուք յառաջ եկեսցէ , օգտեցայց քև բարձրեալ՝ և ես ընդ նմին . եԹէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի , հասցէ միասցի ընդ իմ ձայնի և աղաչողացն աղերս յառաջ մատուցեալ ։ Այնժամ պաղատանս բազմադիմիս ընդ իմ երկնեսցի , լսցի և ինձ քև և վասն սորին կրկին նուիրեալ . եԹէ յարգեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ ի հաճոյ , նախայլսցն ընդ իս քև ընծայեսցի ։ Այնժամ ի տխրանաց ինչ ձանձրութեի ոք նուաղեսցի , կանգնեսցի վերստին հաստատանաւ այս հառաչանաց՝ ի քեզ յուսացեալ . եԹէ համբարտակն վստահութեան մեղաց յատակի , այսու արձանաք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի ։ Այնժամ

յուսոյն ձգարան սուսերըն յանցանաց հատեալ կտրեսցէ, կցեսցէ դարձեալ միւսանգամ կամօք ա-մենակալիդ բարւոք պատուաստեալ. եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ զոք պաշարեսցէ, դադցի փրկութէն սուաւ առ՝ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի՝ի սիրտ խոցիցի, քաղցրութեամբ քո՝ սուաւ ապրեալ ողջասցի: Եթէ անքաւելի կորստեամբ պարտեայ՝ յանդունդս ոք խորոց իցէ ընկղմեալ, եկեսցէ՝ի լոյս՝ կարելիս այս հնարիցդ՝ քեւ պատսպարեալ. եթէ թմբրութէ խաբից խաւարին գործոց իցէ ոք փնաւեալ, զօրասցի անդրէն վասն քո՝ միայն ապաւէն՝՝ի քեզ ապաստան եղեալ: Եթէ պահպանակն վստահութէ զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդիս ձեռն քո զնա՝ ամիծսեալ՝՝ի նոյն հաստատութէ. եթէ ամայի՝՝ի զգուշութէ պահողացն ոք դեպերեսցի, սպասեսցէ սուիմբ առ՝՝ի նոյն զարձ նորոգողիդ: Եթէ սարսուռ դիւային ջերմանն՝ զողութէ լինչ զոք խռովեսցէ, սթափեսցի՝՝ի սոյն յայս նըշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութեան մրրիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս, հանդարտեսցի՝ անդրէն ղեկաւ այս թեւոց՝՝ի քեզ պատկանեալ:

Դ. Եւ արասցես լինել դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողջոյ մաահէնի սկզբնեցելոյ յայնոսն քո՝ բարձրեալ: Օ սկսեալս իմ դէւ կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ՝՝ի սա. շունչ զօրութէ մածիդ միասցի՝՝ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիս. ղի դու տաս զօրութէն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց. ամէն:

ԲԱՆ ՁՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծումեան նորին հսկողն առ նոյն ապերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հոգւոյս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի և ի սահմանէ բանի փախչելի յիշատակ անձողոպրելի անաչառդ քո առենի՝ ի կշռատմբուն իմ պարտաւորի՝ արարչէ երկնի և երկրի։ Վայ զի և չիք իսկ բժշկութիւն բազմավտանդ սատկութենէ վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսողին զանձն իմ ի կորուստ ։ Անաւանդ զի ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի, և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկուաւ պատապարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբեք խաբելի, ոչ յօդուածովք բանից ստելի, ոչ արագամարթ ոտից փախչելի, ոչ թիկանց դարձուցանելի, ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի, ոչ բերանով ընդ հող հաստելի, ոչ ի խորս երկրի ղօղելի ։ Վասնզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներեւոյթքն. արդարեւ իմ նուազել և իսպառ ունայնացեալ մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ ինձ ցասկան, և ես կորստական. իրաւանցն կշիռ պակասեալ և անիրաւութիւն իսկոյն զօրացեալ. բարեացն բերք հալեալ, և սխալմունքն արձանացեալ։ աւանդն կորուսեալ, և դատակնիքն այժմէն գտեալ. մահուն մուրհակ գծեալ և աւետացն կտակ եղծեալ ։ Խարերարն տխրեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեալ, և սատանայ խնծղիւք պարել. վերնականն զօրքն ողբացեալ, և սատրնայինքն բերկրեցեալ. սպա-

նողին մեծերը լցեալ, և պահողին գանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ, և ստացողին պարգև մատնեալ. հաստողին ձիր մռացեալ, և կորուսչին հաղքն պահեալ. երախտիք փրկչին հենդնեալ, և բեռ լիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և գոռոզին ժանգ ժանդիս ժամանեալ։

Բ. Այս արդ ոչ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կանխուքեն նախաձայնելոյ, ոչ ստեղծանիլն երբեք յարգանդի, և ոչ նկարիլն՝ի յորովայնի, ոչ՝ի ծնուանդ յառաջագայիլ և ոչ՝ի լոյս կենաց հասանիլ, ոչ՝ի թիւս մարդկան գրիլ և ոչ՝ի հասակ աճմանն ամբառնալ, ոչ՝ի պատկեր գեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հանդերձաւորիլ, քան զ այսպիսեաց սատակագունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վճռոյ կարծրութեն բերել, թող թէ մարմնոյ լուծականութեն։

Գ. Այս արդ տուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութեն, որ զայսոսիկ դու ինքնին քեզ զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեն ձերոյ այլ, և սուրբ եղերուք. զի ղողորմութեն կամիմ, և ոչ զպատարագ։ Այդ բարձրացիր վերստին խնկեալ այսր յիշատակաւ, որ ունիս զամենայն, և՝ի քէն ես ամ, և քեզ փառք յաւիտեանց. ամէն։

ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն ազբս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղա-
կանաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարու-
թիւք պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ա-
մենայնիւ ատեմ, և ոչ միով իւիք ձշմարտեմ։ Վրան-
դի որով՛ք դիմօք վերագրեցեալով նշանակօք աղար-
տեցեալով՝ յանդգնեցայց լինել յանդիման քում
դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր, անձառ, ան-
պատում, հզօր ձօ բոլորից։ Վրանդի դասեալ աս-
տղստին ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս
առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո միշտ
զօրացեալ և զանիրաւունս իմ յաւէտ պարտաւորեալ։
Որ արարեր ի քո պատկեր պանծալի՝ ի ձեռն վեհիդ
տպաւորութեանդ, զտկարս օժանդակելով։

Բ. Օ արդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ,
մտօք ձնխացուցեր, իմաստիւք ամեցուցեր, հանձա-
րով հաստատեցեր, ի հնչականացն որոշեցեր, հոգ-
ւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ
պճնեցեր, ծնար հայրաբար, մնուցեր գայեկապէս,
տածեր ստացողապէս, տնկեցեր զամպարիշտս ի քումդ
գաւթի, ջրոյն կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով
մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հա-
ցիւդ երկնայնով ջամբեցեր, ձածային արեամդ ար-
բուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցու-
ցեր, զաչս երկրեղէն ի քեզ համարձակեցեր, լու-
սով փառաց վերաճածկեցեր, զհողանիւթ մա-
տունս անմաքուր ձեռագոյս ի քեզ մատուցեր, զմո-
խիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգե-
ցեր, զկայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա-
պէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր։ Այլ կիզեր
զբերանս լցեալ նանրութի՝ ի ժառանգակիցն կար-

դալ ղքեզ, ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս ՚ի քո կցորդութիւն, ո՛չ ստուերացուցեր զտեսիլ աչացս ՚ի քումդ ակնարկութիւն, ո՛չ արգելանաւ կապանաց ընդ մահապարտացն տարապրեցեր, ո՛չ խորտակեցեր ըզդաստակ բաղկիս՝ որ անմաքրապէս առ քեզ համբառնայր, ո՛չ մանրեցեր զոստս իմոյ մատանցս ՚ի շօշափելն զքանդ կենաց, ո՛չ պատեցեալն զինև մառախուղք ՚ի ձօնելն զքեզ՝ ահաւոր, ո՛չ փշրեցեր ըզպարս ատամանցս յըմբռնչնելն զքեզ՝ անսահմանելի, ո՛չ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևօղս, եւ ընդ վրիպեալ տունն Իսրայելի, ո՛չ խայտառակեցեր ՚ի հարսնացանիդ զանարժանս քումդ պարերգուե, ո՛չ ՚ի գձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր, ո՛չ կապանօք ձեռացս և ոտիցս յարտաքին խաւարն հալածեցեր։

Գ. Օ այս ամենայն մասունս բարեաց և զնելոյդ երկայնմտութի՛ն ընկալե՛ ՚ի քէն՝ բարերար, օրհնեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, փոխադրեցի՛ վնասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութի՛ս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիրք բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքաղշուե։ Օ այսոփիկ քեզ, ա՛ծ իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխաբերեցի։ զայս քեզ լինձէն հատուցի չարիս, ըստ մովսիսեան յանդիմանութե՛ն առակի, մոռացեալ զիմաստուե՛ և սիրօղս յիմարուե՛։ Օ այսց բարեաց երախտեաց կաձառա՝ ընդունայնութի՛ն զնացիք՝ չարաչար ուննայնացուցի։ զայս լուսաւորութի՛ն ընդորհաց անձառից ՚ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խելագարութի՛ն ցնդեցի։ Եւ թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելութի՛ն ձգել զիս առ քեզ, ո՛չ հաւանեցայ ըստ մարգարէին որ զԻսրայէլէ ամբաստանութեան. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ո՛չ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին յոմն առաջին մատեայ, փշոյն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յորոմանն արդիւնատրութիւն։ Ո՛ւր իս ելանէն առածք ՚ձ՛ծարեալ ՚ծը մարգարէիցն. քանզի

ինայեր յինէն խաղողդ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ գառնուն պտղոյ այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հողմն, որովք միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն Յոբայ ընդ Ճանապարհ իմն անդարձ գնացի. ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի: Այնատարը հետովք խաբեայ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելիցն ուղևորութեի. բացի կամաւ զկորստեան խորխորատն: Այլ զպատուհան լսելեացս իմոց առբանիւք կենաց ընդունելութեի. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ ի զկենացն դեղ նկատել: Ա՛չ ընդոստեայ ի թմբրութեց լքմանէ մտացս ի պատգամ փողոյդ ահաւորութե. ո՛չ զգաստացայ ի բողոք դուժի հրափորձական աւուրն ընտրութեան. ո՛չ երբեք զարթեայ ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ ի կորուստն կարապետէ: Ա՛չ ետուս հանդիստ քոյ հոգւոյդ ի մարմնեղէնս տաղտաւարի. ո՛չ ըստ քնութե ընչոյս խառնեցի զմանն ընտրհաց քումդ պարգևի. իմոյս ձեռաւք կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհոգիս կենդանի մահացուցանել:

Դ. Այլ զինչ է ինձ սակաւս և նուաղագոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ անցեալ է ըստ քանակութե և վրիպեալ ըստ բժշկութեիւն: Ա՛րդ քո՛ է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և անսխալականութե մատչել առ այցելութե դատապարտելոյս որդի՝ ով կենդանւոյ. քեզ փառք յաւիտ. ամէն:

94 4 7-57

ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծուծեան նորին հակողն առ նոյն ազերս մաղմանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Իսկ արդ զինչ բարւոք դոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն սահմանն ընթացից ձայնիս հեծուծեան՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մնալ հացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել, և կամ զծանրութիւն սրտիս մերելոյ ցաւոյս հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութիւ, մատնամուխս զղուանօք փսխել։

Բ. Այլ քանզի ոչ դատայ արժանի պարծելոյ ի փառս ընդ սքեղն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղու, և շրթունք իւրեանց ցնծութիւ, ըստ առակողին և սաղմոսողին, ի կարգն երկրորդ դիմելով՝ զնմանիան իմ յիշատակել համայն աստանօր. Թէպէտ առ իմում Թերութիւ բարւոց անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն։ Ցօնեալի եղև Աանասէ առ իմոյ պարտուցս առաւելու Թիւն. պատուեցաւ և փարիսեցին առ դժնեիս ամպարշտութիւ. գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտազանցութիւն. յիշատակեցաւ կեղծաւորութիւ որդւոյն Աւմասեայ առ անշնորհութիւ ապախտաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատախաղն է անհաւատից. պատուեցաւ կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց։ Ո՛չ պակաս քան զվերադառն զտեղծուած սրտիս իմ խոստացուցի. ըստ օրինակի խռովութիւ մըրկաց ծովու ծփեցայ. ոչ այնքան սարսեցի և պատկառեցի ի սաստկութիւ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերացն։ Ընդ Թիւս չափուց կշռութիւ առ իմն գործոց՝ և աւազոյն կոյտ սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն շիրիք առ համբարս իմոյս անօրէնութիւ։

Գ. Ո՛վ Թէպէտ և յոյժ բազում են մանուանքն ի

յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ ուրոյնք և առանձնականք՝ ի ծննդոց աՀելուճ. իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնուլ՝ ի միտ։ Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր, ոմն և բիծք իւր, ոմն և արկածք իւր, ոմն և փուշք իւր, ոմն և արմատք իւր, ոմն և հաստուածք իւր, ոմն և պտուղք իւր, ոմն և նշխարք իւր, ոմն և ձիւղք իւր, ոմն և ոստք իւր, ոմն և արմկունք իւր, ոմն և ձիրանք իւր, ոմն և մատունք իւր, ոմն և խլրտմունք իւր, ոմն և զօրութիք իւր, ոմն և ազդմունք իւր, ոմն և նշմարանք իւր, ոմն և տիպք իւր, ոմն և մեացուածք իւր, ոմն և ստուերք իւր, ոմն և մեծութիք իւր, ոմն և յարձակմունք իւր, ոմն և հնարք իւր, ոմն և պատիրք իւր, ոմն և դիտմունք իւր, ոմն և դիմեցմունք իւր, ոմն և չափք իւր, ոմն և խորք իւր, ոմն և գարշութիք իւր, ոմն և կայծակունք իւր, ոմն և կիրք իւր, ոմն և մեծերք իւր, ոմն և գանձք իւր, ոմն և ցնցուղք իւր, ոմն և աղբերք իւր, ոմն և գիւտք իւր, ոմն և շանթք իւր, ոմն և հրդեհմունք իւր, ոմն և պատկառանք իւր, ոմն և վիհք իւր, ոմն և անդունդք իւր, ոմն և բորբոքմունք իւր, ոմն և աղջութիւնք իւր, ոմն և ամպրոպք իւր, ոմն և կայլակք իւր, ոմն և հոսմունք իւր, ոմն և հեղեղք իւր, ոմն և սառնամանիք իւր, ոմն և դրոմունք իւր, ոմն և շաւիղք իւր։ Ընոյն և տապ իւր, հրան և գոլորշիք իւր, հալոցն ձաթալին և ձեռնձերմունք իւր, օշինդրն և դառնութիք իւր, կործանիչն և հնազանդեալք իւր, բռնաւորն և յեղուզակք իւր, գոռոզն և սպառազինք իւր, աւազակապետն և գումարտակք իւր, գազանն և կորիւնք իւր, խածանօղն և ծակոտուածք իւր, ապականագործն և նմանիք իւր։

Դ· Արդ այսոքիկ պետք են գլխաւորութեանց ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ըստ ինքեանքեանց նուաճուիք մասանց՝ իւրաքանչիւրոք՝ ի սոցանէ բիւրք բիւրուց և հազարք հազարաց· իսկ զհամայնից թիւ նա միայն գօրէ իմանալ, որ զառ՝ ի միջոց չէութիւնն գրեալ՝ իբր զեռւէ գործոց տեսանէ։ Այլ արդ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարա-

նեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց քնութիւն վաթեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախատիւ մասունս արկածիդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ զընաւ խոկութիւն սահմանեցի, որ 'ի մերս քնութէ պատուակի աղդի աղդի վրիպականութիւն. այլ 'ի բիւրուցն արդասեաց չարեաց չափ մի երևեցուցի, զինոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, Թէպետ և ոչ բաւանդակապէս։

ԲԱՆ ԵԻԹՆԵՐՈՐԴ

Վերոյն յառելուած կրկին հեծութեան նորին հակոզն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա'Ի զի մի զիրկութեանն վստահութիւն 'ի սպառ կորեսից, և ապաշէն եղեալ մատնեցայց այսքանեաց աներևութիւց ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք Թշնամիք ինքնածին բուսեալք, զոր վերագրեալքդ սահմանեցին՝ զորքանութիւն պատկերին ձևոյ եղեալ ահարկուս, յուշիկ առ սմին բազմաթոյլ բռնութեան մարտակացդ՝ զօրեղ ախոյեանս ՀԾականս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, Թէ և կսկծելիս կիրս և դժուարակութ պատուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ Ճանապարհայ երկք և տաժանմունք։ Վ'անդի զայն Ամ դունդս չարուճ բանսարկուին զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց, իբր զՀՀս զեռունս բազմոտանիս խնայթից երկրի տակը խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ կամ դոյզն դեղ ինչ սատակչական, յամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութէ եղեալ 'ի յոգւոյ, իբր շնչումն

հարաւային ջերմութեէ խառնեալ յարեւու , զսառնամանեաց սաստկութիւն հալէ· քանզի ըստ միումէ նմանութեէ հեշտածինք են , և ըստ միւսումէ դիմաց դրութեէ դիւրամեռք ։

Բ· Ա՛յլ ես ո՛չ երբեք կասեցից դատել զդատաստապարտեալս՝ քանից կսկծմամբ , պարսել զպարտաւորեալս՝ իբր զինասակար անփրկանաւոր անհամոզելի· վասն զի զոմանս սաստակեալ ՚ի յիմոց նեղչայն , ոմանց զօրութեէ տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ ։ Զունկս դառնոստեան , որ զգաղջութեէ անառակ վարուց ծաղկեցի· բարուենակս ապականաբեր և մահոզկուզեան , որ զկորստեան գինին երկնեցի· Վանանու զաւակ՝ և ո՛չ Յուդայի, ըստ ասից մեծին Վանիելի· որդիս գեհենին , և ո՛չ արքայութե· ժառանգս դժոխոց , և ո՛չ փառացն փափաքելեաց· նիւթս տանջանացն , և ո՛չ հանդստեան ։ Ա՛պերախտս առ երախտաւորդ , ապաշնորհս առ բազմապարգեւդ , միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ , դառնացուցիչս քաղցրութեէ բարերարիդ , ծառայս չար և վատ , ըստ տէրունեան յանդիմանութեէն , իմաստունս զչարիս գործել ըստ Ա՛սայեայ նախատացութեանն , ժիրս առ ժանդագործութեիս զաղջունէ ։ Փոյթս առ ՚ի բարկացուցանել զՔրն , մշտաշարժս առ գիւտս սատանայականս , հանապազորդեան վիշտս ստացողին , Թոյլս առ բարեացն Թռիչս , ծոյլս առ երանութեէն ընտրութեան , դանդաղս առ դիտմունս խոստացելոցն , անարիս առ կարիս սիրտանեացն և օգտակարացն , պաշտօնեայս տիրադրութ երախտամոռաց ։

Գ· Ա՛յ անձինս մեղաւորի , զի զարթուիչն իմ բարկացուցի· վա՛յ որդւոյս կորստեան , որ զկենդանութեէն ձիր մոռացայ· վա՛յ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց , որ ո՛չ գոյ հատուցանել· վա՛յ բեռնակրիս ծանրութեէ մեղաց դժնեից , որ չունիմ դառնալ առ հանդստարարն· վա՛յ վնասակարիս տէրունեան պարտուցն , որ չէք հնար յանդիմանն լինել հզօրին· վա՛յ եղկնախռիւ կիզանողականս նիւթոյ , որ տաղտկալոյ եմ ՚ի գեհենին· վա՛յ լինձ առ այս չիշատակ , զի նեաք բարկութեանն այ այրեցելովք են

գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի ըզ-
ծածկեցեալսն յայտնութենէ հանդէս. վայ ամպարշտիս,
զի միշտ անդադար ոստայնս չարեաց կկեցի. վայ
վմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից,
կտտողացն Թուննաւորաց զիաւրդ համբերեցից. վայ
ինձ առ արբուճն մահուն բաժակի, որպէս զյաւիտե-
նականն տուժեցայց. վայ ինձ առ ելս անարժան հոգ-
ւոյս յեղկելի մարմնոյս, ի՛բր դատաւորին Աչխարհի
յանդիմանեցայց. վայ ինձ առ նուաղութեի իւղոյն
լապտերաց, զի անարձանգելի է աղօտանալն. վայ
ինձ առ Ձեպ տապնապի ահին պակուցման, յորժամ
առագաստին մուտն փակեսցի. վայ ինձ առ ձայնին
ահաւորուէ դողայուցչաց և սարսափելեացն բանից՝
երկնաւոր Թագաւորին վՃռաւ կնքելոյն, Թէ ոչ գի-
տեմ զքեզ։

ԲԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի
առ նոյն աղերս մաղթանաց բանի.*

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Վ՛Ի արդ զինչ գործեացես անձն իմ կորու-
սեալ, կամ ո՞ւր Թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս,
կամ ո՞րպէս ելցես ի՛ մեղաց բանդէ։ Վ՛Ճանզի բա-
զում են պարտիքդ և անԹիւ հատուցմունքն, սաս-
տիկ կշտամբանքն և անվախձան նախատինքն. ան-
ողոքմ են հրեշտակքն և անկաշառ դատաւորն,
հզօր ատեանն և անաչառ բեմն, քաոսնեալի սպառ-
նալիքն և անողոքմ հատուցմունքն, ահարկու հրա-
մանն և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրե-
ղէնն են գետքն և անանցանելի են վտակքն, Թանձ-
րամած խաւարն և արտաքոյ այցելութեան մառա-
խուղն. ապականութեան է գուբն և միտնջենաւոր

ի տագնապն, ամենագթաւ տարտարոսն և անզերծ սառնամանիքն։ Այլ արդ արդարև՛ քեզ են գանձեալ դառինքս այսոքիկ դժնդակք և տարժանելի օթևանք անըմբերելեացդ պատուհասից, ով անարժան անձն իմ մեղաւոր, չարագործ, պոռնիկ, բաղմաբիծ, և սահմանն անդաստանի քնաւին անմնքրուեան։ Այլ զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեսցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց և զառածեալդ 'ի մաքրութեանց, տարագրեալդ յարդարութեանց և 'ի կարգաց պարկեշտութեանց, ունայնդ 'ի լիութեանց հոգեպարգև հարստութեանց, նախանձարկու բարերարին և ամենակալ թագաւորին։

Ը. Այլ քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէրս և զանօրինակդ հարուած, վկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկութիւն, ով չարդ 'ի բարեաց, ով դառնութիւդ 'ի քաղցրութենէ, ով խաւարդ 'ի լուսազարմից, ով կապտեալդ 'ի պճնելոց, ով դարուվեալդ 'ի գովելոց, ով անպարիշտդ 'ի բարեպաշտից, ով շընչականդ 'ի բանականաց, ով անմիտդ 'ի մտաւորաց, ով անհանճարդ յիմաստնոց, ով անմաքուրդ յընտրելոց, ով մահացուդ 'ի կենդանեաց, ով խոհերականդ 'ի սրբոց, ով արբշիռդ 'ի պարկեշտից, ով կեղծաւորդ յարդարոց, ով անպիտանդ 'ի պիտանեաց, ով անարգդ 'ի փառաւորաց, ով նուաղդ յառաւելութենէ, ով գերիդ 'ի գերագունից, ով նուաստագոյնդ 'ի վեհից, ով աղքատդ յընչեղաց, ով անարժանդ 'ի փրկութենէ, ով տնանկդ 'ի բարձրութենէ և 'ի հոգևոր հարստութենէ, և հաւուաճեալդ յօրհնելոց։

ԲԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծուածեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍԱՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից ՚ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ով անձն իմ թշուառ, ամենապատակառ և առ պատասխանիս բանից անքարբառ, անպիտան այ և սքղմն մանկակցութեան։ Օ ի եթէ զլեառ մի ծովուց ՚ի յորակութիւն դեղոյ յեղեղեցից, և զգաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ ՚ի տարածումն լայնութեանց քարանէի չափեցից, և զպուրակս յոքունց անտառաց շամբից եղեգանց ՚ի հասուածս գոյութեանց գրչաց կազմեցից, և ոչ զթիւս մի ՚ի բարդելոցն անօրէնութեց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել։ Այա՝ զի թէ զմայրս լիբանանու ՚ի մի լուծ կշռոյ զօդեցից, և կամ զլեառն արարատեան ՚ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեանց միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնը հարթուքն համազուգակցել։

Բ. Զաւս ամբարձուղէշ՝ ստուարաստեղն՝ տերեւալից՝ ունայն ՚ի պտղոց, նմանակից յաւետ հարազատ այնը թզենւոյ՝ զոր ՚ի գօսայոյց. քանզի սա զարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպիւ՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ, բացակայ նայն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի անկօղն խօսել զնդրելին, գոցէ զքեզ ունայն ՚ի բարեաց և գարշելի ՚ի գեղեցկութեանց, ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց։ Օ ի եթէ ապաժամանի յանզգոյշ ժամուն հերապանծ տունկն պտղակորոյս անկենդան, որ գոյն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անիծիւք, և կամ երկիր ոռոգեալ ցօղով, և ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց երկրագործութեան տածողայն մատուցանէ,

լքեալ մոռանի, իսկ դու՝ ոմն անձն իմ եղկելի, սահմանն բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ ի ժամու իւրում պտղաւոր, ի՞նչ ինոյն կրեսցես պատիժ նախանձում առակիդ։ Այսու ըղ ջհամայնն ընկալաւ ի քեզ անպակաս յառաւելութեց, սկզբնաւորեալ ի մարդն առաջին և մինչև ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նանրուեց և զգիւտս նորոգս՝ առելիս և անախորժելիս հաստողին զքեզ ասյ։

Գ. Այլ վասն ըղ եղի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեն մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգելոյ արձանաց բանիւ, իբր զանընդեղ գաղան վայրենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Այլ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանւոջ՝ իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ոդորիմ, ըստ իմաստուէնն բանի. և զոյգս մտաց խորհրդոցս գաղանեաց իբր զգլխաւորեալ յանդաւորուէ չարութեն գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ ասծ իմ և ասր։ Օ՛ի որով չափով չափեցիր զանձինս ստգտանք, ի քոյգ անմտաւալ գթութեց այսրէն չափեցայց՝ ընկալեալ ըզ ընորհդ յաձախագոյնս ընդ մեծագունից պարտեաց։ Այլ որքան վիրացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ձարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին և իմասք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհռչակեալ լուսաւորեսցին. և ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատութեն բարեբանեալ միշտ պսակեսցի, ըստ խնկաւորդ քումդ առակի։ Օ՛ի քո է փրկութիւն, և ի քէն է քաւութեն, և աջով քո նորոգութիւն, և մատամբ քո զօրեղութեն, և ի հրամանաց քոց արդարութիւն, և յողորմութեանց քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութեն, և ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգւովդ քո բարութիւն, և օծմամբ իւղոյ քոյ սփոփութեն, և ցօղով հնորհի քոյ՝ զուարթութեն. և դու տաս միխթարութեն, և մոռացուցանես զվհատուէն, և բառնաս զխաւար վշտաց, և զվհծութեն ողբոց ի ծաղր փոխես։ Այլ քեզ վայել է օրհնութեն գովեստիւ հանդերձ յերկինս, և յաղգս հարցն և ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ քանզի միապէս մատնէ կորստեան և զղջումին ուժգնապէս և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ իմն ես ի միմեանց այլայլութիւք նմանութեցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վկայութեան ծնունդս արտադրեն: Ո՛ի միոն զկզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն բան նմանութեան քառոտանեաց պաճարեղինաց յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խղէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրորդումն՝ ըստ նմանութեանն լափլիզօզ զժոխորովային գազանի՝ իբր կերակրուկ արեամբ պարարի:

Բ. Այս արդ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ և յաւին մահու ժամանեալ, դոյզն ինչ դարձումն ընդոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յաբեցայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ Քրիստի ձեռամբն՝ որ զթածն ես յամենայնի. ի բարեբար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պատուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս: Այս սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուսյից. քանզի և ոմն ի նախնեացն սոքիմբք զինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութեն դեղ ընկալեալ, ապաշաւանաց Թոշակաւն ըզդրաւականն անեղծութեան աստէն ժառանգեաց, ի վեր քան զորոց առաքեալ ընդ նմին յուցանէ, որք զհանդիսն մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւաստացին, և ան-

տեսիլն Ձոխութեամբ փարթամացան : Իսկ զերա-
խայս տերունի պաշտելի բանին յիշեալ առ սմին ,
զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատայն ,
է զի և զչափն ընտրականաց բարեմասնութեան այ
հաձելեացն գնեալ աստանօր , զայս պատկեր բանի
ընկալաք նախնի գահերէց առ ի սրբութենէն մուտ
սովիմք հանդերձել . առանց որոյ և ոչ ոք ճրն փառաց
զիւրն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս , եթէ
ոչ նախ լծակից խնդրեաց բարերարութեանն իւրոյ
զհաւատն մեր . ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնա-
իշխան բաւականութեամբ առընթեր գոլով այ .
քանզի հաւատք քո կեցուցին զքեզ , օրհնաբանեալն
այ բերան վկայեաց : Քանզի արդարև սեռն տե-
սութիւն և կատարեալ իմաստութիւն և առ ճշ ըն-
տանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն հաւատոյ
մանն՝ երջանիկ և ընտրեալ անուն , որ յարաձգեալ
ինայ անվթար և անխափելի , պատուակից գոլով սի-
րոյ և յուսոյ : Օ՛ի եթէ փոքու սերմանի գոյի հա-
տի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք զլերանց մե-
ծութիւն փոխէ զօրեղապէս ի սիրտս ծովոյ , ասպա
յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշաւիղ առաքնորդ կե-
նաց՝ աներկիմիտ պաշտօն առ ճշ , որ զապառնիսն և
զճաճկեալսն առանց երկբայութեան ի հոգւոյն աչս
տեսանէ , Հրրորդութեանն փառատրելի անուամբն
պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ :
Օ՛ի թէ և զերիսն հատուածս առանձնաւորականս
ի մի և ի նոյն խորհուրդ դիտեացես , յաւէտ մե-
ծասքիս նոքօք ի յաճ . քանզի թէ հաւատաս ի նա ,
և սիրես . որով և յուսաս աներևութիւց պարգևաց
նորին : Ամն փառք յաւիտեանս . ամէն :

ԲԱՆ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հնծուածեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այժմ արդ ես յետինս դաւանողաց՝ ունայն ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս ի սկզբնաւորն իմ եղելութիւն ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանեից, յօսով հաւատամ Քեզի Վէմի առնել զոր կամի։ Վասնզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խրատեալ Պաւղոսիւ, ուսեալ ի Դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ. որպէս հաւատովք ձանաչել զնա, և զգօրութիւն յարութեանն նորա, ըստ առաքելոյ, և զհաղորդութիւն չարչարանաց նորա, և որ զկնի բերին ասացեալքն։ Այժմ էմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և ի նորոգս այս փոխադրութիւն, որ ի մեղացն ի քաւութիւն, և ի չարագործութենէ յարդարութիւն, և յանմաքրութենէ ի սրբութի, և յանբաւեղեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութիւն, և ի ծառայական կապանացս յերկնաւորն ազատութիւն։ Վասնզի զիարդ ոչ արդեւք չքնաղ քան զբան՝ և ի մթութէ երկևանութիւն խաւարի զտեալ՝ և Աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծել հոգեպէս։ Որ թէպետ և յամբարձմանէ բարձրութիւն գերագունեցն կայից՝ ստորատուզեալ ճանրութիւն յանգնդային վէրին խորխորատ գբոյն կործանման, նորագիւտ մեղաբն անջրելեաք, ունի և նշխար նշուլից՝ փրկութիւն կենաց հպատոր, իբր կայծակն լուսոյ պահեցեալ ի միտս և յոգի, որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վէհին հրամանի ի յատակս ներքինս նիւթեալ ջրհորոյն։ Աւազտի և մեղուցելոյն խպատ թաղծելոյ, և ակնկալութիւն բարւոյն բարձելոյ, և համարձակութիւն չնորհին լքելոյ, յուսալ վերստին անդրէն միւսանգամ նա-

խապարգևիցն փառազարդութեաց դարձեալ հասա-
նել. քանզի և յաճախաստ անդուստ հանդերձի և այս՝
ներգործիլ առ սոյնս. վասն զի սա զտուողին զօրու-
թիւն՝ ամենահնար աւետարանէ։ Որ խունկ հաձու-
թիւն մեծապէս հոտոտի աւձ, քան յամենայն բուրումն
անուշից, և քան ի խառնեալն երբեմն աղացմամբ
ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խոնար-
հից զիջեալ բեկութիւն առ ի միութիւն նոյն նմանու-
թիւն։ Ահա որում հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս
ախտացեալս տեսանելեօք, հաւատայք ասելով առ
այդ թէ կարօղ եմ առնել ձեզ զայդ, ոչ պարզևեաց
աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն դրաւ ընդ
կալաւ։ Վասն զի ընդ քան զմեռեալութիւն քառօրեայն
դիոյ առ կենդանութիւն մեզ անյուսապոյն, առ որ
կանանցն ժամանելոց ի յոտս արարչին հաւատոցն
հանդերձանօք, անյապաղաբար զփառացն այ տեսին
զհանդէս՝ ի յերջօրն կենդանութիւն։

Բ. Ոսկ աստուածն անկապուտ ընորհին մեացելոց
զինի մեղանացն՝ հղօրագոյն են վկայք՝ Լ[ա]խ Հնոմք,
զինի Հարսն, յետ նոցա Պաւլիթ, դարձեալ և Պե-
տրոս. ընդ որս և փոքրն Հղիազար, որ ի մեծէն այ
ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ։ Հելոզդ է առ
այս և բանն առաքի անառակ որդւոյն. Թողում
զպատնիկն՝ որ ի ձեռն գողեցաւ, և զմաքսաւորն՝ որ
ի բարեգործէն յիշատակեցաւ, և զաւազակն երջա-
նիկ՝ որ յարձակումն վերջին ընդոյն հաւատովքն պսա-
կեցաւ, և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխա-
ւորն ընտրելոց Պաւղոս, որ երբեմն նախնին էր ան-
օրինաց։ Որոց ոմանք ծանօթութիւնք օրինին գլո-
րեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերա-
զանցութիւնք քան զնախակրօնիցն առաւելութիւն։ Ոսկ որ
նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահեալ
հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնա-
հօրն գաւանուէ, որ և զնախնւոյն պարտիս ինքեան
վարկուցեալ, զնորայն իւրովքն տուժեաց կրից
տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ ի յերկրի,
այլ ջրչարելեաւն մարմնով բանականաց բնութիւն
կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բռնութեան

մահու փոխեցաւ։ Իսկ ումանք ի քուսոյ տհաս հասակին չարուեցեամբն յերկարաձգեալ ի կատարեալ տիս ժամանակին ոչ ի բարձրուեցանն կայից հոսեցան, քան թէ ի ստորնականաց թշուառութեանց դժնեից կենացս ի կամարն երկնից համբարձան։ Իւ թէ այն ժամանեաց կանխաւ զօրացեալ ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյուե, և պատկերն արքունի ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթօղ դաւաճանութեան զմերս ենթադրեալ բնութիւն, ապա առաւել յոսալն ե այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անքօղ և անվերարկու՝ երամբ Քրիստոսի ուխտեալ։ որով և միշտ հաստատեալ պահի ի մեզ բանն երկնի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութիւն և կնիք հաստատութիւն առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս։ Պատ ուրեմն ըստ այսու կանոնի ձշմարտագունի, և անփոխադրելի սահմանի, և արարչանդ պայմանի, համբուրեմ հաւատոց շղթամիք զպատկեր քոյնիս, և ակն ունիմ փառացն ընդրկի. քանզի արդարև յարդարացուցանելն զմեզ այ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել, ըստ առաքելական բանիս սահմանի։

Գ. Ալ յայս անստուերագիրս վստահուի ապաստան, կամ կործանեալս՝ կանգնուն, թշուառացեալս՝ յաղթօղ, վրիպեալս՝ ի դարձն կենդանական, ամենաթշուառ չարագործս՝ ի յոյս, մահու մատնեցեալս՝ ի կեանսն, ընդ ապականութիւն վաճառեալս՝ ի ձիրն, դժոխային գործովք գրաւեալս՝ ի լոյս, ստորնասեր անատնակենցաղս՝ յերկինս, կրկին գայթակղեալս՝ ի վերստին փրկութիւնն, մեղօք կապեցեալս՝ ի հանգստեանն խոստումն, անբժշկական վիրօք վարանեալս՝ ի դեղն անմահացուցիչ, ստամբակեալս վայրագութիւք՝ ի սանձն հանդարտութիւն, սրացեալս վարատական՝ ի կոչումնն, ապառուամ դժնդակս՝ ի հեզութիւնն, ընդդիմաբան լուտասցօղս՝ ի ներումնն։ Ի Քրիստոս և ի հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և ի կամս բարերարութե հոգւոյն ձշմարտի. օրհնա-

բանեալ իսկութեանն և մի ուժութեին՝ զօրութիւն և արքայութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այր արդ քանզի յաւէտ յառաջնում զըղջմանն յուսահատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանաւն ի մահ ձաղկեցայ, աստանօր ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարդահատել համարձակեցայց, զՅրրորդութեին՝ որ կարդալով յօգնականութիւն ինձ մեղաւորիս։ Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և ի դաւանելն զկենդանարարն բնաւից ուժ, իսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեանն անուան չնորհաձիրն բարերարի՝ մահացեալոյս է կենդանութեի, ըստ մարգարէին նախաձառութեան, թէ որ կարդայ զանուն տեն, նա կեցցէ։ Այսպէս ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութեի նորին. ոչ եթէ վասն պարգեւաց նորա մատուցեալ յողոք դեգերիմ, այլ իբր զկենդանութեի իսկապէս, և զընչեղ տուրեւառութեի հաւատոյ, առանց որոյ ոչ է շարժողութեի կամ ընթացուի. զի ոչ այսքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ։ Որ՝ի տուրն, այլ՝ի տուօղն յաւէտ կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ. ոչ վայելչին տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք յերիկամանց աստի կականիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ

Հարմնարանին խնձոյիւք , այլ փեսային անձկութիւք մաշիմ : Ի ձեռն որոյ զօրուե վատահապէս ակնկալութիւք վերադրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ի կարողին ձեռն ապաստանեալ , ոչ քաւութիւե միայն հասանել , այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և ի գթութիւն և յերկնից ժառանգութիւն , թէպէտ և յոյժ եմ տարապրելի :

Բ· Լե արդ բաղում պատկառանօք ամաչեցեալդ դիմաց կորացեալ , զմիջնորդ աղդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանապիակ աղխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութիւն , նորոգեցից ի յերդ հառաչման պաղատանաց յեղանակութեանց աղիողորմ հեծեծանաց՝ ի բարձունս աղաղակելոյ :

ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱԻՈՐՔ ԱՐՀԱԻՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Գ· Ընկալ քաղցրութեամբ , տէր ամէն հզօր , զդառնացողիս զաղաչանս . մատիր գթութեամբ առ պատկառելս դիմաց . փարատեա , ամենասարդեւ , զամօթական տխրութիւնս . բարձ յինէն , ողորմած , զանբերելի ծանրութիւնս . անջրպետեա , հնարաւոր , զմահացու կրթութիւնս . աւարեա , միշտ յաղթող , զկաթողնին հաձութիւնս . բացադրեա , վերնային , զմոլեղէնս մառախուղ . հնքեա , կեցուցիչ , զկորուսչին ընթացմունս . ցրուեա , ծածկատես , զըմբռնողին չար գըտմունս . խորտակեա , անքնին , զմարտողին դիմեցմունս : Տեառնադրեա զո անուամբդ զըօսանցոյց երդ յարկիս . պարփակեա զո ձեռամբդ զառաստաղ տաձարիս . գծագրեա զո արեամբդ զմուտ սեմոյ սենեկիս . կերպացո զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս . ամրացո զո աջովդ զհանդստեանս խշտի . մաքրեսցես ի հաղջից զծածկարան անկողնոյս . պահեսցես զո կամօքդ զառաւապեալ անձն ոգւոյս . անխարդախ արասցես զքո ընորհեալ շունչ մարմնոյս . կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ . կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու : Տուր հանգիստ բերկրութիւե մահահանգոյս ներհման ի խորութիւե գիշե-

բիս, բարեխօսութիւք Հայցուածոց սքոյ ՈՃածնիդ և ամենայն ընտրելոց։ Միտիթեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զդայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ ի ծփական խառնուածէդ, կենդանական զբաղմանց, անրջական երազոց, խօլական նաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ։ Այս սեթափեալ վերստին ի հնչմանէ ճանրութեան ամենազգաստ արթնութիք, հոգևնոդ զուարթութիք ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամենօրհնեալ Թագաւոր փառաց անձառից, փառաբանողաց երկնագումար խմբից երդակցեալ, յերկինս առաքել։ Օ՛ի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն ազէտս մաղթանաց բանիւ.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Աչ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի ողորմութեանդ չնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ զգեթութիւն և զընտանութեի աւետարանէ, քաղցր դժնէից և անգոհացողաց։ Ընդ քեզ և որդիդ քո իբրև զքեզ, զօրաւոր ձեռն իբրև զքոյդ, անժամանակ տերութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քումբ բարձրացեալ։ Այս հոգիդ սքբ Հնմարտութիք զղեսեալ առ ի քէն անսպառութիք, կատարեալ խնկութեի գոյ, էութիւն միանչեանաւոր, հաւասար քո Ամիս, փառակից որդւոյ քոյ տերութիք։ Այրբեակ անձնաւորութիւն՝ համայն անքնին, տրոհեալ՝ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ համազուգութիք, նոյնագոյ բնութիք տիրապէս, անչափոթ

և անանձրեւեայ՝ միով կամօք և կցորդութիւ. ոչ երկիւղ ունելով՝ ի յուսելն, և ոչ քաշել ի ակն առնուազուքեամբ միոյն ժամանեալ, քան թէ պատճառս իրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութեամբ, միով պսակաւ սրբասացուեալ անսկզբնաբար յաճախանեալ։ Վասնզի արդարև վերադարձեալս այս խոստովանութիւն երեքփառատրեանդ դաւանութեամբ զվերին հաւատոյ Պետրոս երանեաց. իսկ զդատապարտելոյս անձն մեղաւք՝ բարեհրամանն քո ակնարկութեամբ, ոչ խնդրողդ գերելոյս, հրաշանորոգ արդարացուսցէ։ Վասնզի թէպէտ և քո լոյսն պարգեւք, և քո ողորմութիւնք, այլ ոչ՝ ի պարգեւսն ես այնքան հռչակեալ, որքան յողորմութենն. զի երկրորդն ըզքոյդ յաճախել զփառս, իսկ առաջինն զձգնաւորացոյն յայտնէ զգործս. զի պարգեւք՝ վաստակոյն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք։

Բ. Այս արդ մի զօրասցին մարդկայինս գործք առաջի քոյոցդ հնարհաց, ամօ գթութեաց, թէ և անդր իսկ լոյսն քան զօրինս հասարակաց բնաւորականս հոսմանց. այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնմտութէ, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց։ Վասնզի և որ մաքրութեանն պերճանայլին օրինականացն վատահութիւնք, ի լուսաւորել քոյդ արդարութէ գուշակ ներկայիս, ամենանուազ անձկութեամբ լքեալ հրէութենէն յետնեալ, և յաւէտ ընդտարագրական ողորմելոյն, առաւել նոքա գտան կաթօտեալ մարդասիրութէ։ Այս քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ, բարերար, լաւ պաղատանաց գոչման հեծութեանս՝ որ կարդամն առ քեզ. ողորմեա, կեցո և մարդասիրեա։ Ո՛չ քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք յաւիտենից յաւիտեանց ազգաց. ամէն։

ԲԱՆ ԶՈՐԵՔՏԱՄԱՆԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա ։ ՊԱՂԱՏԻՄ առ քեզ լուսոյ Ձառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անձառ մեծիդ Այ ։ խոնարհեցո՛ զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին առ ամենօր ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս ։

Բ ։ Լ՚էցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ ի ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն, քանզի կարկամեալ էր ։ ո՛չ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի անկռինչ էր ։ ո՛չ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խոտակեալ էր ։ ո՛չ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց, քանզի ՀԱասաւպարտ էր ։ ո՛չ ի պատգամ բանից միջնորդի զողորմածիդ կամն հաձեցոյց, զի անայցելու էր ։ ո՛չ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւնեղանգ նեղուածով ձորձոյ զգթածիդ զսիրտ Ձնշեցոյց, վասն զի անյոյս էր ։ նա և ո՛չ ծնգովքն հաստատուն իբր գարշապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր ։ քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է ի մեռելութենէ ։ Ա՚անաւանդ զի ի քոյոդ խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութէ, և փառաւք քո լուսազարդեալ, ո՛չ միայն զի ո՛չ վերջացաւ ի հակառակն քո ընթացից, այլ ստահակեալ ապստամբութէ յիւր թշնամեացն Թիւ յաւելաւ ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց ։

Գ ։ Ւսկ դու՝ բազմապարգեւ, բարերար, անոխակալ, առնակեցոյց, ո՛չ միայն զի ո՛չ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ո՛չ բանիւ յանդիմանեցեր ։ ո՛չ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկ-

ցաքաղ մատուցեալ զծայրագոյն ցուցեր զխնամն ։ Ա՛ւ քահանայապէս ըստ ահաւուքեան տակաւ օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ ՚ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեաւր . և ո՛չ որպէս զևտաևականն կարապետային անկատարագործ՝ ՚ի յերկուցն միջի բաժանեալ խտրոց , հնոյն լուծմն և նորոյս սկիզբն , ուստի ՚ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ , զի մի սատակիչն օրինակութ տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն ՚ի քեզ նկատեալ , յառաջ քան զվորձ առակայիցն սատակեսցի . այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն , որք ՚ի հրեիցն ընկալեալ զօրինս ամբողջ պահեցին , զոր նոքա մուտացան , նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ մերակերպարան խառնուածք , զազատարարն գծագրեցեր զաւետիս առ օտարազգիսն . և ահաբարդ ներգործուածք անապականաւ ձեռն կարկառեալ , յարուցեր զմարդն նախնի մեղուցեալ ՚ի մահ իւրովքն ծննդովք ։ Օ՜ տրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր , և զվհատեալն հաստատեցեր , և զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր ։ Ա՛զազանին կենացրար օձմամբն և բաժակաւն լուսոյ լցեր . հայիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով նոր յեղանակեցեր ։ Ա՛ երակացութեամբ երջանկացն ազանց ընտրելոց յանձանձեցեր , զրգեցեր և խնամարկեցեր ։ Հանդարտընթաց գրաստուն տածուղութեամբ անզգուշելի պահեցեր , մինչև յարկն լուսոյ ածեր ։ Ո՛ձեռն երկաքանչիւրոց միջնորդայ՝ նախնեաց և երկրորդայ տուչութե կատակց կենդանականաց , մարդասիրապէս դարմանատրեցեր ։ Ո՛ր որպէս երբեմն ընդ Ա՛ովսեսի՝ թևս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա , և ՚ի հանգիստ հանդարտութե երկրին բարութեան առաջնորդեցեր , և զբանկն կերակուր ջամբել հրամանատրեցեր վարդապետութե ։

Դ· Ո՛ր արդ՝ որ զընաւն ծայրագունկն բարութե լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր , զօցտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր , կեցո՛ և զնս մաքրեալ

'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն, բարեգութ, ողորմած, անքննին, անեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի՛սկ դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութիւն սրտիս վտանգի ինձէն մատուցեալ, սովին նուագաւ 'ի նոյն ոձ բանի՝ զամենապարգևդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգիւ 'ի սպառ. իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ ՚այ, խոստովանեալ ընդ փառացդ քո զիմն անարգութիւն, և առ չարեաքս իմովք զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ գտայ քան թէ բժշկեալ, և առաչեցեալ քան թէ հաւարձակեալ, ուխտակոտոյս աւանդամոռաց։

Բ. Ի՛սկ կրկին առաւէն որ առ իս, որ ոչխարին տրուսն տարացուցիւ, որ յետին անզգայութեանն էր մահնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինս՝ ուր ոչ է այցելութիւն, ընդ գաղանականացն դիւաց և կռոցն վայրենութիւն թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ ևս հօտին, ոչ բան ունէի, որով և զքաւոյն աղէտ պատմէի, ոչ ձեռն ձգողական, որ հաւերցն ի աղդողական։ Ի՛սկ դու միայն գովեալդ յոկզբանցն յաւիտեանց և յարդի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին՝ զիս զմեղուցեալս յանկոյսն մոլորութենէ, խնամոդօրէն տեսչութիւնդ կամաց հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր.

և ոչ գտեր միայն, հրաշագործ, այլ անձառելիդ քա-
րերարուեթ սիրոյ ’ի կենդանարարդ քո յուս բար-
ձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր ’ի հայրենիդ
քո ժառանգուեթիւն : Այս արդ դու հզօր կենարար
օրհնեալ այցելու գթածդ յողորմուեթ, եթէ զնո-
սա ընկալար զապաբանեալն աղերսանաց, որ միով
’ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւս
ըստ անբանիցն անզգայուեթ վտարանդի բացամեր-
ժուեթ յանբնական վայրի վարանեալ, ’ի բառաչ
ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական,
ածային բարեխնամուեթդ տնտեսեցեր զտիեզերա-
հրաչն խնամոզուեի առ կորուսելոյն մեծ թշուառու-
թեի, յայտնեալ ’վերստին և արդ գթուեթեդ խորք
և բարերարուեթեդ հոսանք՝ առ անօրինեալս առա-
ւելուեթ վերագրելոյդ օրինակուեթեամբ, առ բազմե-
րինակ մահու պարտականս, առ որ ’ի բարուեթեանց
խառնիճ քաղցրուեթեդ յատուկ համն չար, առ ան-
դամն մարմնոյ արժանաւորս հատման, առ համա-
ձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր,
առ հաւասարեալս անզգայուեդ անասնոյ, առ օտա-
բացեալս յընտանուէ իմաստնոյ, առ աննմանս հան-
գունակից բանաւորուեդ : Որ եթէ տարացոյց գոյր,
ես ասէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ
հանգունակից գոյր, ես ձառէի. թէ հաւասար գոյր,
ես գրէի. թէ զուգագործ գոյր, յուցանէի. թէ օրի-
նակ գոյր, ես ազդէի. թէ յանցեալն, հայթայթէի.
թէ ’ի ներկայումն ասա, ես յուսայի : Այլ քան
զի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ ըստ նմա-
նուեթի, զոր միայն քո է քաւել, բժշկել և կենա-
գործել, կենդանարար համայն մեռելոց, նորոգու-
թիդ տիեզերաց :

Գ. Օ ’ի եթէ սքջն սրտի տեսուէք երջանկին Դաւ-
թայ անօրէնուեթի չարեաց բարձրացեալ ասի քան
զգլուխ, և ըստ ծանրուեթեց բեռանց դժուարակրե-
լոց յանցմունք մեղաց, իսկ որ առ իս կրկին սխալ-
մունք գերազանցէ քան զՀեղեղին ջրակուտակ տիե-
զերասոյզ ամենասպառ ծովուն յորդուեթի, և գլխոց
լերանց վերագրէ : Այլ ընչեցի՛ օդ քո քաղցրուեթ
իբր առ Նոյեան, և որ զլերինս հալէ զօրուեթի, յա-

մաքեցուցանել զչիղջս ջրակոյտս բազմակոհակ՝ և երկրակործան խմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութեան մեղացս ամբարձելոց։ Այս համառօտեալ զբան քո հղօր՝ ամենակար հնարաւորութիւն հակիրճ հատուցմամբ, արասցես ահա ելս քաւութե, ըստ մարգարէին, առ երկարաձիգս անօրէնութիւն. և ներելով իմս յամառութե, ամ երկայնամիտ ողորմած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեացես իսկապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս։ Այս զի և չիք իսկ առ քեզ ցասումն սրտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս ամ կրին նենգութիւնք և կամ նշմարանք մեծութեան. քանզի կեանք են ի կամաց քոց և լոյս, և ոչ արարեր զմահ և ամ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ Գաւթի և Սողոմոնի։

Դ. Այթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանն մեծի պայմանի՝ ի բարեվճակդ քո կանոնաց՝ ամ փոխատրել անդրէն չարի չար, այլ եւթանասնից եւթն ծողուլ անդուստ ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ ի բնութէ ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրիւ նաւորին երևին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բնութէս, ըստ անսուտ քո վկայութէ, որ թէ միտք մարդոյ ի խնամն չարի են արձանացեալ ի մանկութէ։ Օ ի որ զկատարեալ մաքրութէին ուներ աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս, և զինքն ընդ հասարակաց բնութեան լծակցեալ, հաստատեաց զձշմարտուն քո առ իմն ստուն յոյժ արդարացեալ. թէ ասեմք, ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա։ Այս արդ կատարեալ է բան քո խնկեալ, և ի գլուխ ելեալ անպակաս ի ստուգութենէ առ իմն մոլորութի և գժնդակ անիրաւութիւն։ Ա ան որոյ խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութեան ձաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտեանից. ամէն։

ԲԱՆ ՎԵՇՏԱՍՏԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծումեան նորին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Լ Ի արդ դու միայնաճ երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ. քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութի, քո են պարգեւք, քո միայնոյ են ձիրք ձրի, քո քաւութի, քո պաշտպանութի, քո հնարք անիմանալիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք, դու սկիզբն և դու կատարած։ Վասն որ երբեք ստուերացուցանէ զլոյս ողորմութիւն քո՝ խաւար սրտմտութիւն. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ ի վերդ քան զքեզ։ Պատկեր անպարագիր անդր քան զորքանութի կշռութիւն, անչափ լայնութիւն փառաց, անտարափակ ընդարձակութիւն հատոյ զօրութիւն, անամփոփելի առաւելութի բացարձակութիւն, անտկարանալի բարերարութիւն գթութիւն։ Դու դարձուցանես, ըստ մարգարէին, յայգ զտուերս մահու. որ իջեր կամաւ ի տարտարոսն ներքին արդելականացն բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ, և գերեալ անտի զմերիսն կապուտ վտարանդեալ զոհս հոգւոց, սուսերըք հրամանի յաղթական բանիդ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կաղծիս ցրուեցեր։ Դարձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ վհիս տղմասիզ գլոյս յերկաթս մեղաց, վերստին հոգւոցս խոցմամբ սլաքաց բանսարկուին նեաւից։

Բ. Լ ՈՒՅԼ դու յամենայնի տերդ բարերար, լոյսդ ի մէջ խաւարի, օրհնութեդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարօղ զօրաւոր, անպատում, անքնին, անձառ, բաւական ըստ սքեչն Յակոբայ, անհնարիցդ ամենից դիւրապատրաստ հնարաւորսն, հուր ծախիչ զխուիս մեղաց, ձաձանչ կիզանող ընդհանրական թափանցանցուածք խորհրդոյ մեծի, յիշեա զիս

յողորմութիե քո, օրհնեալ, և մի յիրաւունս քո· ՚ի ներողութիե քո, և մի ՚ի հատուցմանն· յերկայնմտութեան քան ՚ի հաւաստութիե: Լթէ կշռեացես զմեղանաց իմոց ծանրութիե, ընդ քաղցրութիե քո՝ և մի ընդ արդարութիե· զի առ սակ նախնուամն՝ յոյժ է նուազեալ, իսկ ՚ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր:

Գ· Լրդ մատիր առ իս, բարութիե, որպէս յունկանն բժշկուի հակառակ քո համբարձելոյն· բարձ ՚ի մեղուցելոյս զհոգւ մահու խռովութեանս, զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան: Լս քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից· ամէն:

ԲԱՆ ԵԻԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի·

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՒՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Լրդ աղաչեմ զինամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թաղծութեց հոգւոց վշտացելոց, մի յաւելուր հեծութեանս ցաւ, մի խոցեր զվէրաւորեալս, մի դատապարտեր զպատժեալս, մի տանջեր զչարչարեալս, մի գաներ զհարուածեալս, մի գլորեր զանկեալս, մի կործաներ զդայթագղեալս, մի մերժեր զհեռացեալս, մի տարագրեր զկալածեալս, մի ամաչեցուցաներ զպատկառեալս, մի կշտամբեր զհարթուցեալս, մի խորտակեր զբեկեալս, մի խռովեցուցաներ զամբոխեալս, մի ալեկոծեր զքաշեալս, մի սասանեցուցաներ զդղրդեալս, մի շփոթեր զմրրկեալս, մի կեղեքեր զդիշատեալս, մի ջաղջախեր զբեկեալս, մի գօշեր զմորմոքեալս, մի կուրացուցաներ զխաւարեալս, մի զարհուրեցուցաներ զապշեալս, մի

խորովքեր ղնաբշատեալս, մի մահացուցաներ զհիւանդս, մի թեռանց ծանրութեան մատներ զտկարս։ Մի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս, մի կըրկնակի ողբումն դառն հեծութեանս, մի ուժգնապէս վարեսցիս առ հողս, մի սաստկապէս առ մախիրս, մի անաչառապէս առ ստեղծուածս, մի ահարկութեամբ առ փոշիս։ Մի ընդհարկանիր խստութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ ընդ ստորնականիս, քնութեամբ բարիդ ընդ ի քնէ չարիս, ողկոյզդ օրհնութեանդ ընդ պտղոյս անիծից, քաղցրութիւնդ իսկապէս ընդ համային դառնութեանս, փառաւորեալդ անփոփոխս ընդ ամենևին անարգիս, կենացդ նշխար ընդ կաւոյս զանգուածոյ, տէրդ տերանց ընդ տղմիս երկրայնոյ, անմուաղ լուսիդ ընդ չքաւոր ստրկիս, անկապուտ ձոխութիդ ընդ անպատսպար տառապելոյս, անկարօտ բարութիդ ընդ ամենաթշուառ աղքատիս։ Վասնզի ոմ որ հասեալ յառաւօտ՝ և ի ծագման լուսոյն խիթայ մթանալ, և կամ ընթերակայ կենաց՝ մահանալ, կամ ազատուիլ՝ և պարտաւորիլ, կամ հնօրհայ՝ և դատապարտիլ, կամ փրկուիլ՝ և մատնիլ, կամ նորոգման՝ և եղծանիլ, կամ օրհնութեան՝ և տարագրիլ, կամ բժշկութեան՝ և վիրաւորիլ, կամ լուսիդ՝ և նուազիլ, կամ յաձախութեան հայի՝ և քաղցնուլ, կամ գետոց հոսանաց՝ և պասքիլ, կամ մայրենի գթոց՝ և նենգիլ, կամ խնամոց ածեան աջոյդ՝ և զզուիլ։

Բ. Այլ արդ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն բորոտութիւ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէր՝ եթէ կամիս, կարօղ ես զիս սրբել։ Ընդ աչս ցուացն ներեցող միտպիշերն խարխափանօք՝ մեծաձկան ձայնիւ հառաչեմ. ոչ որդի անուանեմ Քաւթի, այլ ծնունդ էիդ այ դաւանեմ. ոչ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողաց զիսկն գիտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ։ Ես ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան, ոմ բարեգութ ածծ մերձաւոր, այլ ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութի։ Ես թէ ինչ խորոց կասկածանաց միջոցն բանէ, որ երկմտութեան կարծի նշանակ, ի մէջ

արկանեմ կամելոյն և ողորմութեան, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ. ասա բանիւդ, և բժշկեցայց: Ընդ հարիւրապետին հաւատոց և ես լծակցեմ. ոչ մինչ անձուկ միայն բացակայութիւք հեռւն լինելով խօրան ի խոլանել հաւատամ աղաչել քոյ կարողութեդ առ յարուն և բժշկուի, այլ ի վերինն երկնի բազմելով և ի սաւրինս երկրի բովանդակ, առ հրաշիցն աքանչելութեի ոչ ունիմ հաւատացանել:

Գ. Ը նորհեա ինձ, որպէս դատակնիք քանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութիւն, հնգից հարիւրոց դենարաց պարտուց չնորհաքաշխութեի՝ ած բարուքեց և տեր երանութեց, որ յաձախն ընձեռել՝ բազում փառաւորիս, և ի շատն մատուցանել՝ նովին չափ սիրիս, և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս, և յայսքան բարիս իրաւամբք գովիս, և ամի տեր գոլով հաւասարորդ ձանաչիս, և որ զբաւորն ունիս՝ ընդ մերում կշռիս, և անձառելեաւդ ձրիւ մերայնովքս վճարիս, և ընդ երկրաւորիս զանվախձանն պարտ վարկանիս, և մեծագրեալ քո ըզմերն՝ վեհս գոհաբանիս, և ի սակաւուն տուչութեի դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս: Ա՛յդ և ինձ զնոյն գթուի ունողիս զգործս անհամար պարտուց. զի և ի ձառս երախտեաց քումդ պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեսցի. և քեզ փառք յամենայնի. ամէն:

ԲԱՆ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՐԴ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու եր-
կանց, արդարև անսահման բիւրուց քանքարաց տու-
ժիլ գոլ հատուցանող՝ի միամ աւուր։ Այլ ո՛չ
թէ առ փոքրկութեի մարդկային մտաց հայցեմ նե-
րուիլ, այլ առ աննուազ լիութեի փրկչիդ Յի-
սուսի պաղատիմ մարդասիրութենիւն. որ չէի երբեմն՝ և
առեղծեր, չմաղթեցի՝ և դուս արարեր, չև ևս ե-
կեալ՝ի լոյս՝ և տեսեր, ոչ յայտնեցեալ իմ՝ և
գթացար, ո՛չ կարդացեալ՝ և խնամարկեցեր, ո՛չ
համբարձեալ ձեռն՝ և նայեցար, ո՛չ պաղատեալ՝ և
ողորմեցար, ո՛չ կերպացեալ ձայնիս՝ և լուար, ո՛չ
հեծեծեալ՝ և ունկնդրեցեր, գիտելով զարդեան
դիպուածոյս՝ և չանտեսեցեր, նախահայեացդ աչօք
նկատեալ զպատժապարտիս չարագործութենիւն՝ և
յօրինեցեր։ Այս արդ զքո արարեալս և զքեզ փըր-
կեալս և զայսքանեաց խնամոյ յանձնանձեալս մի՛ի
սպառ կորուսցէ մեղացն հարուած գիւտք բանսար-
կուին, մի՛ յաղթեսցէ յամառուհիս իմոյ մառախուղ՝
ներողութե քո լուսոյ, մի՛ սրտիս կարծրութի՝ եր-
կայնամիտ բարութեդ, մի՛ մահացու մեղիս՝ ամե-
նակատարդ լրութե, մի՛ տկարութիս նիւթոյ՝ անպար-
տելիդ բարձրութե։

Բ. Ա՛յս կարկառեմ ղկարկամեալ բազուկս հոգ-
ւոյս յանուն քո, Տէր, արասցես ողջ իբրև զառաջինն
մինչ՝ի դրախտին փափկութե զպատուղն կենաց կթէիւ
Այաչկանդեալ գօսացեալ՝ի կոր կործանմամբ ընդ
կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուա-
ռութե, ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ՝ սա-
տանայական բուռն կապանօք, զի մի՛ զերկնայնոյդ
ընկալցէ զողջոյն. խոնարհեա՛ց առ իս, միայն ողոր-

մած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանա-
ւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես ՚ի բարւ
կրօնս վայելչութեամբ, ըստ ՚ճճաբանութեան ՚որ մար-
գարէին։ ՚Արդ ես զի ճնճ կոյսն անշուսաւոր՝ չու-
նիմ տեսարան, որով զտեղծչիդ նկատեալ զկերպ
մաղթեցից, հզօր բարեգութ, միայն դու պաշտպան
ակնարկեալ խնամովք անձառ քոյ սիրոյ՝ ՚ի ընչական
խօսուն քո անօթս, յանկից գոյաւորութիւն լուսոյ
հաստեսցես։ ՚Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչա-
րեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղա-
նաց արեան հեղեղիմ. հայեաց ՚ի բարձանց անմա-
տոյց լուսովդ պարածածկեալ, ուր ոչ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծուձն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ։ ՚Ի օծու-
թեամբ իւղով պատժապարտս ընդ մեղաւորին մա-
տուցեալ առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկա-
թիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ
զամբիծ հաւատս ամբարձմամբ բազկացս ստոյգ դա-
ւանմամբ հոգւոյ ողջունիւ շրթանց կափուցմամբ
զերկիր համբուրեմ, խառնեալ հեծութիւն աղբերաց
արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ։ ՚Ի առ-
նեալ մեղանօք հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղ-
կութեամբ, և յերկուց կայից միաչնակողմնամբ ան-
հաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջմամբ
չարին՝ զհետևականն բարձողութիւն շինուածոյ մարմ-
նոյս՝ առ ելս ծառոյն կենսառիթ պտղոյն խափա-
նեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին, միայն
հնարաւորդ առ ՚ի փրկութիւն։ Օ փառաբանարան
հաստուածոյ կերպիս ՚ի քէն եղելոյ՝ աւրափակ խըց-
մամբ համրայոյց արգել հողմն բանսարկուին. հոգիդ
քո աղդեալ մեծդ ողորմութիւք, ըստ յաւետարանին
բժշկեցելոյ, հրաշափառապես բարեգործեսցես բանդ
կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի։ ՚Ընկեալ
կամ չարեօք ՚ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի
կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խնամն
Թշուառութեան՝ ողբականօք քքուանաց ձայնից,
ով բարերար որդի ՚ով, օրհնաբանեալ աչացդ ցօղով
վերականգնեսցես ՚ի կենդանութիւն, իբր զսիրելին ՚ի
յանընչական մեռելութենէ։ ՚Ստոյգ դառնացօղս ՚ի

գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արեւ անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս ի լոյս քումդ նշուլից։ Ի՝նդ աղիողորմ Թշուառութե՛ կականման ձայնի այրւոյն ի Կային մոր միամբին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն, և ես պաղատիմ վերջին հեծուքս, տուր յուսահատելոյս զքաջալերութի՛ միխթարութե՛ գթած քո բանիդ, ասելով և ինձ զովեալդ բարի ստեղծիչ աշխարհի, թէ մի՛ լար զերի բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ ի՛ վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ։ Ի՝նդ այսակիսը անզգայեցոյն դիւալուկ և քարակոշկո՛ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քստմնելի դիսախուխ հերացն, վայրենաբերս բանդագուշելոցն, ի՛ քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ մերժեսցես զգունդս չարացն ապականողաց ի՛ քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի այսր կն հանգիցէ, լցեալ զմարմինս մաքրութի՛ ընչոյս՝ զգեցմամբ անդամոց, զգաստ արասցես զնեալագարեալս ամենաձշուառ։ Ի՝նդ զերեցեալ գժոխաբնակաց վըտարանդելոցն հոգւոց արգելեա՛լ կամ ի վտանգի. զձառագայթ ողորմուե՛ փառաց քոց ծագեալ՝ լոյսդիմ անձկութե՛, ի կապանաց օցտղին զերծեալ զիս ապրեցուսցես։ Վաղանորոգայթ աներեւութերակ վըրիպակ արահետ գարշութի՛ մեղաց ջրդողեցեալ ոգւոյս կերպարան կայ ի տագնապի. զծածկեցեալն ի տեսողութեանց զչարագործին թիւնիցն այտուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութի՛ որդի ՚այ, գթած ծաբար առողջացուսցես։ Օ՛ բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեանց մահացուցյանողայ իւրականօք կորստեան բերիւք, դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորչեսցես ի՛ ձեռն ձեռնդ ամենակալի, որ արօրադրեալ միշտ՝ և միակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնատրութեան։

Գ. Կ՚ե քանզի անցաւ ըստ նմանութի՛ օրինակուեց

յանցուածոցս վէր, ըստ Ձարակօղն քաղցկեղի, առ բնաւ անդամս մահաւորեալ զախտին տարածումն, չիք սպեղանի իբր Իսրայելի առ անչափութիւն խա- րանացն մատուցանել. ՚ի խարխափս բարձիցս մինչև ցաւին կառուցման լրութեան անդամոցս չէ առողջութիւն, այլ ամենևին անբժշկուի: Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանացս արդահատութեանդ սրտիս վառնպի, որ կարդամն առ քեզ տէր ՚ի նեղութեան:

ԲԱՆ ԻՆՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛յսցեաց ամենահայեաց տեսութիւն կենաց բարութեան յուսոյ ՚ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց: Ընդհատ մեծութեանդ, անուն ահաւոր, բարբառ կենդանի, լուր ցանկալի, Ձաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարուէ խոստովանելի, ազգումն խնկելի, իսկութիւն գաւանելի, էութեդ փառատրելի, գոյութեդ օրհնաբանելի, տէր Ոյս ընդ հօր քումմ գովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ սքանչ բարձրացեալ և վերաձայնեալ, որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո ըստ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային, և այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ զքեզ, նորոգ հաստատեա: Ո՛ք յոյն պատկերս մեղօք հնացեալս՝ ՚ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերատին ձուլեա: Ո՛ խախտեալ շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս՝ պահպանաւ հոգւոյս,

մաղթեմ բարերար, ՚ի բնակութիւն քեզ մաքրա-
գործեա։ Մի՛ հատուցաներ չարեացն իմ գործոյ
զնոյն փոխատրութիւն։ Այլ եմ ըստ մարգա-
բէին բանի՝ և ո՛չ ՚ի գինւոյ. Թափեա զմրուրս անօ-
րէնութեանց Թմբրութեանց մահու բաժակին՝ ազատարար
հրամանաւդ, ամենակեցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից ՚ի
վերջին աւուր յետնումն հատուցմանն։

Ը. Այդպէս ես յիրաւունս քո, և յաղթօղ ՚ի դա-
տաստանի. եթէ մահու մատնես, Ձեմարիտ են գործք
քո. եթէ դատապարտես՝ աստուածտ սկսեալ զտան-
ջողականն կշտամբուի, ստոյգ են հատուցմունք քո.
եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանու-
թիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրուն ունայ-
նացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուս-
ցես, թէ զկենացն Ճաշակ ՚ի քեզ ինքն ամիոփես-
ցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձ-
ցես, թէ զաւուրցս հարստութիւն համառօտեսցես,
թէ ընդ իմման քաղցրութեանդ ցօղոյ՝ և հուր տեղաս-
ցես, թէ ՚ի լրութենէ բանի քոյ սովեցուսցես, թէ
զականջացս դրունս խցցես, թէ զընդոչիւդ ձիր կարեա-
ցես, թէ զգետին յատակի ոտիցս սասանեցուսցես,
թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ ՚ի
համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլա-
տակմամբք հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցա-
ւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ
զաղանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցաս-
մանն հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տան-
ջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն և
սաստիկ քան զգեհենին, Թունաւորագոյն քան զօր-
դունսն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին
քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն, վը-
կայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտապան գոլ սոցա։

Գ. Այս քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանու-
թիւք փոխատրութեացն առ ազգակցութիւն մեղանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք նշա-
նակիչք այսր խորհրդոյ, արդ կարևւոր է խոստովա-
նել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս առ ծա-
նօթութիւն խնդրոյնիս։ Որպէս՝ զի ո՛չ ջերմն սիրով
առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի ՚ի նախնումն

վանդին տաղնապեալ սառնում։ Եւ ոչ ոք զգանայականն խրոխտականուն սանձեցոյ, յարժանի կրեմ եղկելիս զանզովանալն զկիզումն։ Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար Հատուցմամբ ի մըթամուքն ըմբռնողական միգին կորստեան վըխեալ դանդաչեմ։ Եւ զի ոչ խորհեցի զմանուկս փոքունցն յանցանաց, իբրև անվնասակարք վարկանելով, պատկանապես ի խաճանողականացն զազիրն զեռնոց խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վանգաւորին՝ այլ առնել նմին, ի դէպ իսկ ըստ գծագրութեանն այսր օրինակի ապականուեն գբոյ նուիրեալ մատնիմ։

Դ. Եւ արդ ոչ յաճոյստ ամենաբարի գանձուցդ չարիս, և ոչ ի լուսոյդ նշուղից խաւար, և ոչ յապաւինութենդ գայթագղուի, այլ ես ինձէն կորըստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէնութենդ իմոյ գանձեցին նիւթեցին զայաքանեաց բարկութենդ մթերս. հոգւոյ իշխանին մոլորութենդ հնազանդեալ, Թողի զտեղի քո նորա, ըստ գրոյն խրատու յանդիմանութենդ։ Եւ քանզի յայտնեցաւ յետուստ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կերպիս անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենևին իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեաց յիս զլոյս քաւութենդ արքայ երկնաւոր. զի թօթափեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձեալ ոչն ի Բաբելոնէն, նստայց վերստին կանգնեալ ի հողոյ, և ի հաստատութենդ յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութենդ բազկի կարութենդ նախնում մաքրութենն, վանս մեծութենդ փառաց քաղցրութենդ ամենապարգև քոյ ձեռնդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր տէր անոխակալ և երկայնամիտ, նե-
ըօղ, բարեգուԹ, հզօր, ողորմած. ահա Ձեմարտու-
ԹԻԲ են գործք քո, և խոստովանեալ դատաստանք
քո. վկայեալ են ընտրողուԹիք քո՝ տեսչդ ծած-
կուԹիւ: Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կի-
զանոզական բոցոյին փորձեցան և ոչ ջնասեցան Ի
Նաբելոնի, զնոցա ԹախծուԹԻԲ զերկն հառաչեմ,
մեղայ, անօրինեցայ, յանցեալ, ապստամբեցայ, և
պատուիրանաց քոց ոչ անսացի: Նա քանզի մաքուր
գոլով Ի ջնասուց նոքա, և զայս խոստովանուԹիւն
գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նուիրն աղերսիս ձայնակ-
ցեալ սմին ողբոց երգուե, և այլ յաւելից՝ ամենա-
պարտս մահու: Ընդ Դանիէլի երանեալ և՛ զքեզ մեծ
մարգարէի, որ Ի քում ՀարազատուԹԻԲ աղջամու-
նուԹԻ տանն Ցուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնո-
բսյն առեալ ընդունական և նուիրական բանից պա-
զատանս, իմանալ պատժականուԹԻԲ գոչմամբ հեծու-
ԹԻԲս և այլ կրկնեցից: Ի մեջ գիտուԹԻԲս՝ անպատ-
շաճական գնացի, զարտուղի սխալեալ գԺնդակա-
պէս. այս է ամենայնիւ ամենայն իրօք մեզանչելն:
Ետ սահման կշռուԹԻԲ կամայ քոց արտաքս վազե-
ցի. որ է հաւաստի կերպարան բասիր անօրէնուԹ:
Ընդհատից չափոյ չարուԹԻԲ գործոց լրումն յաճա-
խուԹԻԲ նիւԹեցի. որ է Ձդրիտ պատկեր յանցաւո-
րուԹԻԲ: Պատնացար, և ոչ զարհուրեցայ. արդա-
հատեցեր, և ոչ երբեք լուայ. որ է ապստամբուԹԻԲ
յայտնի նշանակ: Վեզ արդարուԹԻ հանդերձեցեր,
բարերար, և ինձ ամօԹ և պատկառանս պատրաս-
տեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս
յարմարաւորս. քեզ քաղցրուԹԻԲ յիշատակ, և ինձ

մաղձ քացախեալ ՚ի կատարածի· քեզ բարեբանուի անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի· քեզ օրհնութիս երգոց խնկելի, և ինձ մերժուն տարագրուե· քեզ իրաւունս բաղմարժանիս, և ինձ պատասխանատուս ամենավարանս· քեզ բարձրութիս անձառ գովեստից, և ինձ զաձիւն լիզելոց պատիժ ձաղանաց։

Ի· Եւ արդ ընկալար դու բարեաց ընտրութեդ անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրկաց պտղոց վերառեալըստ քեզ, և ես զիմոյս աստէն առ սմին պարսաւանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս եր յանձնառուի, իսկ ինձ զնոր հիւսեցից շարս և տողս բանից դասրովականաց, որ քան զամենայն դժնեայս յաւէտ վըխպեցայ։ Մոլորեցայ անառակ ընթացիւք ՚ի միտս վայրենիս, յանդգնեցայ շրթամբք խօսից ՚ի բանս երկրաւորս, զակատեցայ անկասելի ՚ի պատկառելեացն գործոց։ Վքացայ, վերացայ, որ յետ սակաւ ի ժամանակի ՚ի հող մահու եմ իջանելոց· դառոզացայ, բարձրացայ, որ և ոչ զդրաւական հոգւոյս տուրևառուիթ հնչոյս ունիմ ՚ի ձեռին։ Ա՛մբարտաւանեցայ փոշիս հնչաւոր, ամպարհաւաձեցայ կաւս ձայնաւոր, հպարտացայ հողս անարգութեան, ՚ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի, բաղուկ կառուցի բաժակս մանրելի։ Տարածեցայ առաւել իբր վհ և դարձեալ իբր գիերքեալ առ իս ինքն ամիսփեցայ։ Խարկութիւն բոցոյ ցոլացայ տիղմն բանաւոր· իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ ընդ քառատանեայ մահու եմ փակեալ։ Վ՚իրկս արկի կենցաղոյս սիրոյ, և ՚ի քեզ Թիկունս փոխանակ դիմաց դարձուցի· ՚ի Թուիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ· զանարատ հոգիս մարմնոյս փափկութիւք յաւէտ վատեցի· զգօրութիւն աջական կողմանս տկար արարի, ահեկանացս կայից ուժգնութիւն տալով յաղթեցի։ Ո՛ քեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ աստ գրելի, և ոչ պատկառեցի· իբրև զհաւ վայրենի սրացայ, ըստ սովհեան բանին առ Եփրեմ՝ ՚ի նախնին իմ սովորութի։ Յաղօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ· ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բանին։ Ընդ հին չարուեցն

նորոգ լինքնաստեղծուԹիւնս գոխ. անուրս ըստ Յոբ
բայ ծանուհնս և անտանելիս լինձէն լինձ սաստկացու-
ցէ. առիգած անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն
իմ արարէ. իբր զվիժած անպրելի կոչմանն, ըստ առա-
կարկուին, ՚ի մարգկանէ համարոյ եղծայ. իբր զհան-
դերձս լինչ ապարահից, ըստ Եսայեան բանին, զաղ-
բացայ. որպէս զԹրծեալ ամման խեցեղէն փշրեցայ
անարծարծելի. ըստ բամբասանացն Դաւթի՝ ՚ի մոլ-
գարէնն զբորբորդ չափն անօրինուԹեան սատակմանն
լինձ պատրաստեցի, Եւ զինչ ստուԹիւն առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս. քանզի զվրանն իսկ դիւա-
նուէր Ոզոքայ առի լինձ այսրէն՝ առ դժոխոցն ժա-
ռանգուԹի, լքեալ զերկնայինն յեղանակաւ լինի օ-
րինակի նմանակիւք ձևակերպուԹեան, որպէս առակ
պատկերի աստեղն Լեփանայ բաբելականի՝ Յա-
բայելէ պատուեցեալ յուցաւ ՚ի Ոլինայ։

Գ. Լսակ արդ զի ՚ի նախնի շնորհին համարձակու-
ԹէՀ դարձեալ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ,
բաժանեցայ և անպատուաստելի կտրեցայ, արդ ըն-
կալ զիս տէր վերստին կերպարանեալ ՚ի պատկեր
հոգւոյ, զանարժանս կենաց իբր զմահապարտ, իբր
զչարագործ, իբր զպատկառեալ, իբր զկոխան և-
զեալ բանսարկուին, որպէս զանբժշկելի մանեցեալ,
որպէս զհատեալ յատակս մահու, որպէս զգաբշե-
ցեալ, որպէս զխոտան գտեալ քո կոչմանդ, որպէս
միանգամայն ՚ի կորուստ վարեալ, որպէս դեգե-
րեալ, որպէս վանեցեալ, որպէս տարակուսեալ, որ-
պէս Թշուառացեալ, որպէս վհատեալ, որպէս կոր-
ծանեալ, որպէս խորտակեալ, որպէս բեկեալ, որպէս
զԹախծեալ, որպէս յոգի տրտմեցեալ, որպէս Թըշ-
նամանեալ։ Լսակ դարձեալ ակնարկելով քո՝ զԹած,
մարգասէր, հզօր, ՚ի յաղերս բանիս՝ որպէս զղջա-
ցեալ, որպէս խոստովանեալ, որպէս ՚ի յոտս քո դի-
մեցեալ, որպէս զապաշխարեալ։ Որ կշռես, դրես
և մեծ համարիս զհառաչ հոգւոյ, և զաղդուհի
ընչից հեծուԹեան, զկսկիծ շրԹանց, զպասքել լե-
զուի և զախտականուԹիւն երեսաց, զկամս խորհրդ-
ոց և զյօժարուԹէ խորուԹեան սրտից։ Որ փըր-
կուԹիւնդ ես անձանց, և առաջի ոչ գործեցելոց,

և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց անբուժելիից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամող տէր ամենեցուն։ Այս քեզ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Երբոյն յաւելուած կրկին հնծութեան նորին հակառակ առ նոյն ազբա մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այի քանզի ես լինէին անձամբ իմով լինքնապրաւ ի մահ՝ ոչ կացի երբեք ի յոտս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն, և քանզի ոչ փոփոխեցայ ի նախակարգելոցդ, և ոչ ընդ բարեաւք ուղին ընթացայ, ընդ որ ոչ գիտացնական հետոցն խաւարամտոց զգեմս ցուցից ի սահման կարգի այսր ընթերցուածոյ։ Այս որս ածեալ յարմարեալ առ սոյն զկերպարան տեսակի բանիդ երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ անփոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին գարձեալ աստանօր զննացեալ չարութեանցն զբիծս, զոր յաջորդաւդ ես իմանալի։

Բ. Ոտար ժանտագործս արժանապատիժս՝ առնեցուն արարի գնացիւք անսատուածեան զգուշանդն Աելիայ։ Աաքաւս կայթից և ցոյցս վաղից խաղալեացն գիւաց գարշելեաց Ճարտար խաբողաց ծուլութեամբ իմով չնորհեցի։ Ոչանս գաղանիս և խոցուածս անյայտս ի կործանեցելոցն գահճաց ընկալայ։ Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն Աին, քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի։ Ոչ սան իմոյ հիքոյս անօրինաւէ անունդ Ցեի հայհոյի ի մէջ այսակնաց, որպէս վանասրայելի ի մէջ հեթանոսաց։ Հարուածս հարուածոց ընտսակարս ապականութեանց ժանտոյ

և Թլթլոյ և այլոց կերչաց վատնողաց ջճաղիկ հոգ-
ւոյս , ըստ սքջն Յովհելեայ հրաշական ողբոցն , որ ՚ի
ցոյցս երկրի վասն Իսրայելի՝ յառաւօտ հինից և չա-
բաց հոգւոց , յիս ինքն տնկեցի . ստեղծանել զնոսա
պատրաստեցայ , քան թէ սատակել : Ռեւբոս կու-
տեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաղինս .
կշտամբիչս ինձ գոյացուցի անիրաւս և անպատկա-
ռելիս . ներհակս ինձ զօրացուցի ապառումն և ան-
կառուելիս . դառինս ինձ առի մատունս ընդ քաղց-
րաւենեացն Ձաշակաց , առ ատացօղն միշտ նենգա-
ւորս , և առ բանսարկուն յաւէտ հաւատարիմս :
Ընդ աղէտիս , վճիռ վատնգիս , խաւար ամօթոյս ,
մութ պատկառանացս . զիա՞րդ և առ բանիս յան-
դիմանութի՛ համարձակեցայց . մեծ է ձայնս գոչիւն ,
և անբերելի բողոքս աղաղակի : Վասնզի թէ զհոգիս
եր զիմ՝ տեսանել , տգեղս և նուաղս և ամենևին
ներգնեալս , ցաւովք հեծուեաս ՚ի վերջինս վարեալ
վարանումն , և մրձոտեալ աղտեղեալ գունով զազ-
րութի՛ իբրև զպաշտօնատարս մեհենի . վասն զի նոյն
է սպաս տանել ձուլեալ պատկերի , և մեղաց ախ-
տի : Ընդ ես զնացի ընդ այս ձանապարհ կորստեան
հետոց խաւարի . եւտու զբաժինն քո ցանկալի յա-
նապատ անկոխ , ըստ մարգարէին որ առ քահանայն
Իսրայելի ամբաստանութե՛ :

Գ. Այլ զիա՞րդ ասացից անձին իմում մարդ՝ զրեալս
ընդ անմարդիս . և իբր անուանեցայց բանական՝ ան-
բանիւքն յիմարութի՛ կցորդեալ . և ո՞րպէս կոչեցայց
տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս . և ըն-
դե՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստիցս զրուներս
փակեալ . կամ որո՞վք ցուցայց տպաւորութի՛ նկա-
րագրուե՛ անեղծին ՀՈՐՆ՝ անձամբ ինձէն յոգի մա-
հացեալ . նաև ո՛չ շարժողական և կամ ընչական
ունիմ անուանել , թմրղ թէ հոգեկան կամ մտաց
ընդունական . անպիտանս ՚ի թիւս անօթոց , անարգս
՚ի քարինս որմոց , արհամարհեալս ՚ի կարգս կոչե-
ցելոց , վատթարս ՚ի յաղգս հրաւիրելոց , արհաւ-
րօք մահու պահուցեալս , անխորհրդաբանելի ՚ի բոլորե-
ցոնց՝ ցաւովք և տանջանօքն Յերուսաղեմի ըստ Յե-
րեմիայի բանին խրատեցեալ , պահասեալ աւուրցս ՚ի

հեծութիւնէ, և ընթացք ամացս ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին ։ Լուր ասուի ի ցեցոյ և փայտ ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, ի խիթ մանէ սրտիս հալեցայ · լուր զոստայն սարդիոյ մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գոյ · լուր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ ։ Աւյլ ոչ ի մարդ ոք ունիմ զյոյս եթէ անիծեալ ի տեսանողէն անյուսադրելի վհատիմ, այլ ի քեզ՝ տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից, և ի բևեռելոյն ժամու ի խաչին մաղթեցեր մեծագողորմութեամբ առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Արդ ընդրհեա լինձ յոյս քաւութեան, կեանք և ապաւէն, և ի տուր ինչ յոյս թշուառի՝ առիւ զոգիդ քո բարի ։ Աչս քեզ ընդ հօր հոգւովդ սրբով զօրութեամբ, յաղթութեամբ, մեծութեամբ և փառք յաւիտեանս · ամէն ։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերաման յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի ·

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Ղարձեալ այլաբանեցից ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս եղանակ զարուեստ ձևիս, ածեալ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ ի նոյն պայմանի · Թերևս զրեսցէ լինձ ամենագէտն զայս յանդիմանութեան զատակնիք կսկծեցուցանողական բանի Աչմարիտ խոստովանութեամբ համայնից գործոց զաղտնութեանց չարեաց ։

Բ· Աւյլ ոմն ձիս խօսնական կարծրերախ սանձաւոտոր արձակերասան, յուսանակս անհամբոյր վայրենական և անկրթական, երիւնջս աւդական անուղղական և անվարժական ։ Արդս մոլեգնական

տարագրական և կորստական, մանուկս մեղանչական անխրատական և վարատական, տնտեսս մահապարտական տարտամական և անգործական, բանականս անասնական դաղանական և անմաքրական։ Զիմիենիս ամայական անպտղական և կործանական, մարմինս հոգւոյս իմ Թախծողական դատողական և տանջողական, խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական։ Ոսկի շարս կայսերական՝ արդ. վատնական և անգտական, ծառայս սխալական վախրատական և թշուառական։

Գ. Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտախաբ, կամակոր իսկ և սրտաբեկ, ուշամոռաց և հանձարազրաւ, զգայազիրկ և իմաստասպառ, յայրատատես և եղեռնալուր։ Այս աստուստ և անդուստ բնաւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք վնասեալ, ոչ միով իւիք տեսութեամբ՝ ի գործ ընտրուեք քեզ պիտանացուս, տէրդ բոլորից. ողբամ զորովայնն որ երկնեացն զիս. աշխարեմ զտիւնան, որ դիեցուցին. ընդէր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի, և զիաՌդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութիւնն ջամբեալ մատուցաւ։ Օ՜ի եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք, և ուստիմ տակաւին զսուր բարկութեան անխոնարհելի, ոմն ոք՝ ի յերկրածնաց աստի զիս ողբեսցէ. զնմ խայտառակեցից, զնաև էութիւնս դատեալ տուժեցից, զհամօրէն զինաւորութեանդ դանեցից, զխոցոտացն զինուորութեանդ դատախազեցից, զգայականացն գլխաւորութիւն կշտամբեցից։ Վեղայ ամենայնիւ յամենայնի, ողորմեա գթած. ոչ նոր ինչ գտեր յիս պանցանայս պարտեաց մառախուղ, այլ նոյն եմ յաւէտ նուիրն պատահմամբ պարտաւորութեանդ, անկցելի ձորձով սխալեալ առաջի քո՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութեանդ կանխեալ ներութեանդ անպայթելի։

Դ. Վերդ մատո, խնամակալ, հզօր, երկնաւոր, բարի, ամենից հաստիչ յոչէից, զբանիդ զօրութեանդ կայծակն՝ ի գործի աղդման լեզուիս շարժուեր,

առիթ մաքրութեանէ յամենուստ ղպայականաց գոյացորութեց յիս մատնաւորելոց՝ քո ձեռակերտից, առ քօք առ՝ի քէն եղելովք և բժշկելովք կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն՝ի փառս մեծուհէ հօրդ քոյ ով մերոյ, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր ով ամենայնի, զօրաւոր յամենայնի, անպարագիր և անվայրափակ տէրդ ամենեցուն. բոլոր իսկութիւք հուպ յամենեսին, անուրեք վայրիոյ, և չիք սահման առանց քո։ Ա՛յ երևեալ երբեք, ո՛չ տեսականութիւն առանց քո ծագման լուսաւորի։ Փառք ահաւորութեանդ, անուն անհասութեան, կոչումն մեծութեանդ, ձայն անբաւութեանդ, իսկութի անքննութեանդ, անմատչելի հեռաւորդ, և անընդմիջելի մերձաւորդ, տեսօղ հեծութեանդ, նկատիչ թշուառութեանդ, մծատակաց թախծութեանդ, ամենաբոյժ հնարդ անձարութեանդ, հայր դժուութեց, ծագօղ ողորմութեանդ, ով մխիթարութեան։

Բ. Յայեաց տէր ողորմութի՛ պատկեր վշտաց դառնութե բազմավտանգ կրից կարեաց, զոր հանդիպ քո տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի՛ խոյզ ընտրութե կոչեր դատաւորաբար։ Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ իցէ մարմինն մեղօք գրաւեալ, և անձն՝ի գործոց չարեաց ո՛չ մեկուսացեալ, գործնականացն գործի սովորութիւնն կարեաց կապեալ, զանգուածն հանդերձանաց մահացու կրկնք շաղա-

խեալ, զգայութիւն սրտին խմաստից խեթիւ խոցոտեալ. ակնկալութիւն բարեացն քնաւին բարձեալ, և ՚ի բանականութենն ընդ անասունս դասակարգեալ, և զաղիր գալշութիւնն ընդ գոյութենն չարամանեալ, և տեսականացն ողջ ելոյլ իմանալիքն վիրաւորեալ, և ՚ի սաստկութենէ յանցանացն յիշատակի յաւէտ յուսահատեալ, և տապնապաւ նախագործելոցն միշտ տարակուսեալ, և յոտակուռ աղերսին ՚ի սպառ պղտորեալ, և խղճիւ մտացն յուզմանց կրկին ձենն ձերեալ, և ձեռն ՚ի մաձի գործոյն գյետնոցն հետազօտեալ, և կերպ ՚ի յառաջ դիմեալ՝ ոտք ՚ի վերջ կոյս յետահարեալ, և գիտութեամբ էիցն՝ ՚ի չէիցն միշտ խաբեցեալ, և ՚ի մտացն մարտ՝ ՚ի փոքունցն յաղթահարեալ, և ՚ի թառանչ սրտին հապագին դուռն հրդեհեալ, և խոնաւ զօրութիւն քմացն ամենայն ուրեք տոչորեալ, և անարև միգով յամենայն մասանց պարփակեալ, և լայնութենէ ակնկալութեանն ամենևին ՚ի սպառ ամփոփեալ, և անբերելեացն տոյժ ՚ի զգալիսն տպաւորեալ, և եղկութենէ կորստեանն ՚ի յուշ անդ եկեալ, և գատաստանիք հատուցմանն ՚ի դիւանի մտացն գրեցեալ, և բարերարին ակն ՚ի ցասումն լիմն երևեցեալ, և լոյս բնութեք՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ, և ահաւասիկ թեէն էին ընդ փոքրկութենէ քնութենս ընդհարեալ, և միշտ որոտամբ բանից բանաւոր մխրճոյս բարկացեալ, և իրաւանցն վիմօք զարժանիս մահու կոչկոձեալ, և որ իմն է տաղանդ՝ յանառակս աստէն կորսեալ, և պատուական իրին ստացուած իբրև անարդ յերկրի թաղեալ, և տաժանմանցն արգասիք ծուլութեանն մեծով ծածկեալ, և իբրև զ՚ի բաց բարձեալ նշմարան Ճրագի չերևեալ, և պատասխանարան լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ, և անհամբոյր չրթանցս դրութիւն օրինաւոր դատմամբ պատանձեալ, և յուզմունք մտացս՝ ՚ի զանազան մասունս ցնդեալ, և զկալն ՚ի վերայ օգտին ոչ ինչ գիտացեալ, և ՚ի կշռութիւն բարւոյն ընտրութեան յիմար երևեալ, և ընթացք ելիցն նշանջմամբ չարին խափանեալ, և վառարան իւղոյն աՃիւնոյն հնոցի լցեալ, և անուանս գիր ՚ի կենաց

մատենին եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան անդ արձանացեալ:

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. եթէ պատգամաւոր, խոտնեմ. եթէ մատենագիտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծիչ. եթէ աւետարանական, փոշոյ ոտիցն Թօթափելոյ. եթէ բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառաժ, կսկծման: Եթէ ջրոյն ընտրութեան փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ: Եթէ բերս նկատեմ բարութեան, 'ի կարծեաց չաբեաց փախնում. եթէ ձեռն հարձարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն, ընդոստիմ: Եթէ 'ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդիմանեն լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցուածն բանի կոչիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ: Եւ զդէպ այսքան ամենաձշուառ և ողորմագին տապաստանացս 'ի վերայ միմեանց բարդելոց, որք զատորև զգայականաց սրտիս գոյութիւն 'ի ներքուստ անտուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նեխութեք խոցոտեալ, անարտաբերելի միտակիր յարամնաց հանապազամուխ բևեռեալ աստուստ ընդ հոգւոյս, լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակմանն մահու գուշակեն: Զարարած մեծերից պատեալ զերկաթով գաղտնեացս ծածուկք ազդեն ինձ տապնապս՝ վերս պահեալս անխնամարկելիս ընդ ելս ընդոյս տուրևառուութեանց. յորոց նեղուեցեալ չարաչար Ճնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կողկողադին Թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութեանդ յերկրաստեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութեամբ և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենաքաւմբք նուիրողօք՝ զաղերսանս ըղձիցս 'ի ստորնայնոցս աստի յերկինս առաքեմ: Ո՞նարհեա տէր անդորրութիւն կենաց հանգստեան ողբմագին վաստակեցելոյս 'ի յընդունայն երկրագործութիս, համայնդ յամենայնում, ամենայնիւ ատացեալ քեզ փառս:

ԲԱՆ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

Վերամին յառելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԼԻ արդ որոյ խնդրոյ արժանաւոր վարկանելով զիս մատչիմ աղերսել, արքայութեա՞ն յորմէ վերիպեցայ, եթէ փառացդ վայելչութեան յորմէ զրկեցայ, թէ կենացդ անմահականաց յորմէ հեռացեայ, թէ ընդ հրեշտակն պարակցութեան յորմէ տրտմեցայ, թէ ընդ արդարոն մանկակցութեան յորոց ձեղքեցայ, թէ ո՛ւր որթոյն կենդանւոյ յորմէ քանցեցայ, թէ ոստ տնկոյն քերկրութեան յորմէ զօսացայ, թէ ծաղի՛կ փառացն ջնորհի յորմէ թափեցայ, թէ պանձանա՛յն ժառանգաւոր յորմէ կորացայ, թէ հայրենի՛ ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, եթէ զգեստո՛ւն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ 'ի ստացո՛ղ դարձին յուսացայց յորմէ խորթացայ, եթէ 'ի լուսո՛յն լղձս դիմեցից յորմէ մեկնեցայ, եթէ Յիսուսի՛ յոսկերն յօդիմ յորմէ մերժեցայ, եթէ 'ի թեւո՛ նորա մերձիմ յորմէ օտարացայ, եթէ յասպաւէ՛ն ապաստանեցայց յորմէ խեթացայ, եթէ 'ի փրկութե՛ն նորոգուիմ յորմէ մահացայ, եթէ 'ի զգաստութեա՛ն զուարթութի՛ւն յորմէ ես լքայ, եթէ 'ի կանո՛ն կենացն ուխտի յորմէ փոխեցայ, եթէ 'ի սահմա՛ն հաստատրական յորմէ սահեցայ, եթէ յանշա՛րժ վիմին սնդուքի՛ յորմէ սասանեցայ, եթէ 'ի շա՛րս գումարտակին յորմէ հոսեցայ, եթէ 'ի քաղաքն անդրանկաց շինիմ յորմէ գերեցայ, եթէ հանապազորդեան հայի՛ն աղօթիմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փոխադրութի՛ւն երկանցն խնդրեմ յոր ո՛չ քրտնեցայ, թէ պարգեւո՛ք պսակեցայց յոր չհանդիսացայ, թէ արձա՛ն լինձ կենաց գրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեա՛ցդ ձիր չիշեցից զոր միշտ մոռացայ։

Ե· Ո՛չ՝ հատաւ և կամ խզեցաւ լար կենացդ յոս-
սոյն, տիրեցայ ՚ի բորոտութեանդն գարշելութէ հա-
մայն ախտացեալ, ամենայնիւ սպառեալ զմարմնա-
ապականութիւնն շրջապատեալ՝ մեռուցք այ: Ոչոյզն
պալար փայլունակ տգեղ լնացեալ, մնացուածք ինչ
պահեալ նախնունակ երկդիմի կերպին, որ զկրկին
անմաքրութին նշանակէ, պարծանացն նշոյլ ամենևին
լինձ չիջաւ, փրկութէն մատնեցաւ, բարին ստուե-
րացաւ, ելք կենացն բնաւին փակեցաւ, մխիթա-
րութէն բարձաւ, դատաստանին ատեան մերձեցաւ,
Թոյնք մահուն լինձ արծարծեցաւ, սպանեալն կրկին
լինձ կենդանացաւ, լաստին դադարք վիմօք խցաւ,
շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յի-
նէն մերկացաւ, փառացն վայելչութէ ստուերացաւ,
հանձարն առաջնորդական խափանեցաւ, կշտամբա-
նացն փուշ բազմացաւ, անօրէնութէն ուղէշ ծաղ-
կեցաւ, բոց գեհենին լինձ բորբոքեցաւ, ծառայու-
թէն լուծ սաստկացաւ, սորկութէն կապ զօրացաւ·
ունօղն յարկին կառուցման ահա անկաւ, բարե-
րութէն վստահարան կործանեցաւ, ընտանութէն
միաւորութէ անջրպետեցաւ, սրբութէն սիրօղ հա-
դին այ տրտմեցաւ:

Զ· Այլ քանզի զվերջինն համբուրեցի դառնուէ,
տանջանս՝ խեթս՝ տխրուիս, վիշտս հոգեկանս, ցաւս
անխնամարկելիս, տարակոյսս անյուսադրելիս, ամե-
թեանս անպարուրելիս, խայտառականս անվերարկե-
լիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս ան-
դառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն
ուղևորութէ ապաձեռն անթոշակութիս, իսկ դու
փրկութէ զօրութէ և օգնութէ, ողորմութէ լուսա-
ւորութէ քաւութէ և անմահութէ տէր Յ՚ս Ք՚ս, որ-
դի այ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի, որ ըն-
ձեռեաս ջուր պասքելոյն ՚ի ծարաւուտ վայրս անա-
պատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր,
երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու,
պաշտպան աննախանձ, պահապան յաղթող, կեանք
անկործանս, միջնորդ երկնային, լուսոյ աննուազ,
երանութէն տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ ողորմութէ
քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս

զամենասպարտս՝ քանզ կենդանի՝ առ Հաւասարապա-
տիւ քո հոգի, զի քեզ վերատին հաշտեալ լիս զարձ-
ցի : Այլ ի ձեռն քո իւրոյին կամաք մաքուր նուի-
րեալ, զօրեղն ինքնուԹեամբ զիս հօր ընծայեալ, ան-
դէն առ նմին նովիմբ միշտ ի քեզ ընդոյս ողջունիւ
կապեալ ընդ ընորհիդ՝ ի քեզ միանալ անբաժանե-
լի : Ա՛ն որոյ քեզ ընդ հօր քում հոգւովդ սրբով
երրեակ անձնաւորուԹեանդ՝ ի միում բնուԹեՁ և ի
մի ՁոծուԹեՁ փառք, և ի ստեղծականաց էից զոհա-
բանուԹի յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հնՁուԹեան նորին հոգւոյն,
առ նոյն ալերս մաղԹանաց բանի .

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա . Բ ԱՑՑ քանզի ի վերայ այսքանեաց դերու-
Թեանց ամենաԹշուառ վտանգաւորիս մի զմիով
եԼ և եԼս առնելոյ, զոր ղկերպարանս անցիցն ի մաս
նէ վերաՁառեալդ նախագրեցին . ուստի և փո-
խեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկուԹիւն աղէ-
տիս :

Բ . Ա՛յն զի ծով է ինՁ ծփանաց կենցաղոյս բեր-
մունք յոյժ նմանագոյն . յորում կոհակօք բազմօք
անԹիւ դիմեցմանց տատանեալ հոգիս ի յայսմ աշ-
խարհի մարմնոյս շինուածով իբր ի նաւակի : Ո՛ր
Ա՛սային մարգարէ զյանկարծադէպ կատարածն
որ ի պարսկականն հինից՝ Ա՛րուսաղէմի և Ա՛մա-
րիայ կործանմանն, նմանուԹիՁ այսր օրինակի կեր-
պաւորեցոյց . որ և առ իւն հոգևորական խորհր-
կուԹիւն զուգաձայնել՝ ոչ է սխալական : Ա՛նգի մինչ-
դեռ չուէի ես յանհոգուԹիՁ անտարակոյս վտա-
հուԹիՁ, դոյզն կասկած արկածից ի միտ բերելով

առ խորոց փոքր միջոցին, որ ՚ի մէջ հանգստեանն և աշխատուէն, իբր այն թէ հասեալ լցեմ, ձմեռն յամառանի բքաբեր հողմով ժամանեալ երեքա- լեանն դիմակցութիւն ամբոխեաց զհանդարտութիւն։ Ասի նաեւ ՚ի բախմանէ վայրենի ալեացն խորտա- կեցաւ։ Ալեացն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման ՚ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին Թռչարան յանկարկատելի ծուխն պատառեցաւ, շի- նուածոյն շուք անզարդեցաւ, առասանք ձգողակա- նացն խզեցաւ, տեսարան գլխոյն դիտակի խոնարհե- ցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապաւինու- թիւն խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամլոյն կցորդութիւն բաժանեցան, սամիք ուղղեցան հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմե- ցաւ, ղեկացն կառուցմունք անդրէն սուզան, չուացն յարմարութիւք պակասեցան, ողնափայտին պատսպա- րան խոկոյն բեկաւ, կապարանք ղբսոյն հաստուածոյ յօշատեցաւ, գոգք ամիսփման ծոցոյն կազմածոյ ան- արգեցան, խեղք շրթանցն եղերաց խախտեալ ոս- տեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բար- ձաւ, վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ, գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք ՚ի միաբանութեց միմեանց անջատե- ցան, հեղոյսք սնդման բևեռացն քարշեցան։ Ընդա- սիք իրին յիշատակարան ողբոց լինէ նմանեցաւ։ Կա- ւուղին հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն ՚ի ծնօսի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Կըշ- մարք սակաւ մնացուածոց՝ ՚ի ծայրից ծփմանց ազ- դելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր, ողբումա- գին Թախծանօք հեծէ։ Ասն զի Թէ զբարի նաւա- պետն երկնաւորքն զօրօք յաշխարհիս ծովու առ ՚ի գխորտակեալս իմ տապան իմանալի գոյութես առ- ցէ աշխարել բանիս յարմարութիւն, ոչ լինչ վրիպես- ցէ ՚ի ստուգութէ։ Կանգի արդարեւ ելոյ բարեգութն տէր յառակ մարդկութեանն զԹաղեալ ազգակիցն, ելոյ առ նմին և գնդրուսաղէմ մոլեալ և գՅուդաս մոլեգնեալ, յորոց երկուցն կորեաւ վստահութիւն յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի. իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց՝ առասան յուսոյն ձե-

ռամբ ունողին յանքոյթն արտաբերեաց խաղաղու-
թիւն ։

Գ. Աղդ իցէ թէ յաւելից հայել զբաղմախոր-
տակելն տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ ։ Ոչ
արդեւք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս
ողջացեալ ։ Ոչ արդեւք տեսանել զբաժանեցեալս
միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ ։ Ոչ արդեւք տե-
սանել զյոքնաձախիծ սիրտ վշտացելոյս բերկրե-
ցեալ ։ Աղդ իցէ ակն ունել նայել զյաւէտ խաթա-
րեալ կերպարան քնուԹեանս կրկին հանդերձեալ ։
Ոչ արդեւք Թէ տեսից զքակտեալ տաղտաւար Թը-
շուառացելոյս միւսանգամ կանգնեցեալ ։ Ոչ
արդեւք յուսալի նայել զտարամերժեալ գերիս ա-
զատեալ ։ Ապաքէն գուցէ ակն ունել զանկեալս ի
շնորհէդ լուսոյ դարձեալ կաղդուրեալ ։ Աղդեւք
տեսից զվայելչուԹիւն ընտանիդ քո պայծառու-
Թեան յողորմուԹիւն լինձ երևեցեալ ։ Թէ տե-
սից երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս ի-
մոյ ժպտեցեալ ։ Աղդեւք լուայց ընդ ձայնի գուժիս
աւետեաց համբաւ լինձ առաքեցեալ ։ Աղդեւք տե-
սից զբիւրակործան վնասեցեալս անօԹ կազմեցեալ ։
Ոչ Թէ տեսցեն պատուհանք աչացս իմոսոից ըզ-
մուրհակ պարտուցս իմոց պատառեալ ։ Թէ յայտ-
նեսցի օրն իմ անձկուԹեան շնորհին քաւուԹեան
բարւոք լինձ ծագեալ ։ Աղդեւք մտից ի խրախճա-
նուն խորանին լուսոյ քև առաջնորդեալ ։ Ոչ Թէ
կենդանի լինիցին ոսկերքս , ըստ Եզեկիէլի , ցամա-
քեալքս ի կենդանուԹեանց եկաւորուԹեամբ աղ-
դողական շնչոյս զօրացեալ ։ Ոչ Թէ յաւելից հայել
ի տաճար ՚ձբ քո , աղաղակաձն մարդարէին ի պոր-
տոյ կիտին , հերքեալս ի լուսոյ որ կամ առաջի քո
ամաչեցեալ ։ Թէ լինիցի խաւարատունդս մԹա-
ցելոյ ծագման առաւօտ ։ Թէ հասցէ տեսանել
զտաղնապեալս մշտասառոյց յեղանակս գարնանին
մեծ ։ Թէ տեսից զցօղ անձրևոյն կանաչացուցա-
նօղն հոգւոյ լինձ արօտ ։ Թէ իցէ արդեւք նկա-
տել զգազանաբեկ հերքելն ոչխարս վերստին կամոյ
գԹուԹեան քո հօտ ։

Դ. Աւ քանզի ըստ բանին Յոբայ շուրջ պատեալ

ևն չարեացն հնարք ընդ որ ուչ կարացիցց անցանել · իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց ցուցցի , գթութեան քոց դուռն բացցի , ձառագայթ փառաց քոց ծաւալեսցի , խնամք ձեռին քոյ յայտնեսցի , արեգականդ կենաց օր տարածեսցի , առաւօտիդ ըղձալի տեսիլ մերկասցի , առաւտուրթի քաղցրութեան քոյ աղբերասցի , վտակ արարչիդ կողից հոսեսցի , ծորումն անապակ սիրոյ քոյ հեղցի , ծաղումն աւետեաց հնորհի քոյ երևեսցի , պարգևիդ քո ծառ ծաղկեսցի , մխսունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի , համառօտեալն ակնկալութի հանդիպեսցի , հատուածեալ ձայն ողջունի քոյ ՚ի լուիցի , հեռացեալդ խաղաղութիւն մերձեսցի · յայսոսիկ յաւէտ սահմանաւ երանականաւ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատանոյ , ապաւինեալ ՚ի հոգիդ քո ՚ով , որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փառաւորեալ ՚ի լոյս անմատոյց , որով կեանք և երանութի քաւութիք հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս · յաւանդ անկորուստ ընդ իս պահելով առհաւատչեայ Հմարիտ յիշատակի , ՚ի ձիր անեղծութե անուամբդ անձառելեաւ ահաւորութեան հզօրի սքի միայնոյ և անքննելի տերութեան երրեակ անձնաւորութեանդ՝ որ հոգ յիսկութեան յերթէ և յարարակայութի բարձրութե քաղցրութիք ողորմութեամբ և մարդասիրութիք պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ · Ո՛վ առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարօղ ես , գթած · և քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի և ՚ի հանդերձեալ միանջենաւորութիւն յայտնութե աւուրն մեծի , յաւիտեանս · ամէն ։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ ստուգապէս և իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնիւդ կողկողանացն և զբանիցն յարմարու-թիւն հանդերձեն, և ի նոյն գիր բերեալ զա-ւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մոր-մնքեալ ձմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղ-ձից առ արտասուացն բղխմունս. ուստի և բազմեալ իմ ի գլուխս պարու ակնբից դասու այնր երախա-նաց՝ որք զլալեացն յեղանակին բանաստեղծուն, և ես ընդ նոսին նոյնին հեծութ աւաղական ձայնար-կութեամբ զանձինս տարածանեմ զվշտակրութի, որ ոչ քնաւին մեռեալ աշխարհի, և ոչ խակապէս կենդանի ասի, ոչ ջերմ սոսկ և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին գրեալ ի յայտնութեանն. երիցս ատելի երրեակ տէրութեանն և ամենատես արարչութեանն: Այս այս են պատկանեալ թախծա-կանացն կերպագրութք, կրկին ողբմելի այսու երևե-ցեալ՝ որ ի մի գիծ սահմանեալ կացուցանին զթշուա-ռութեցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ շաղ-կապեալ:

Բ. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեռով մեծաւ ի տուժի, ես ասլիկար մատնեալ անարժան գործովքս յիրաւի, վատնիչ արքունի գանձուց կրկնա-դատ և անթափելի, պատասխանատու մեծին ըմբռն-նեալ անհրաժարելի, բեւր քանքարոյ խնդիր՝ ես չու-նիմ կշիռ մի ունկի: Ընդարեխաս կապեալ ի պա-հեստ դառն արգելանի, հեծումն և վաստակ ցաւոց ձաշակեալ յանհոյլ բանտի, անապաւէն տանջեալ անթոշակ կամ ողբմելի. այլ յեղանակ ինձ ողբա-կանաց աստուստ կնքեցի, փոխատրեցի սովին քար-բառով կոծ կսկծելի, կարգադրեցի շրջաբերութիւ

’ի նոյն պայմանի, անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի։ Ա՛ղքատութեանն հնոց յաւետնուստ մասանց մերկի, անպատասպար թշուառ վտանգեալ սրտիւ ’ի դրաւի, տարակուսեալ հոգւով ապաշնորհ այր ’ի վերպակի, անխնամելի հայցմամբ դատաստանն յինէն պահանջի։ Ա՛ղաց և մահու զինուք զգայարան գաղտնեացս խոցի, անփրկելի մատնեալ բռնուե չարեացս գերի, սուր սուսերաւ սատիւ գոյութի քնուքեանս յօշատի։ Յիշատակաւ բեմին աստուին ’ի դատաստանի, անճագելի մեայլ չարատես աչացս երևի, անձեռնկալ կապեալ եղկելիս ’ի տարակուսի, ահարկուքիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի։ Յոյժ անարև և անվերարկու ’ի տարտարոսի, անապաւէն մոլար մորմոքեալ ’ի հուր գեհենի, անյայտանելի կորուստ կործանեալ ’ի մեղաց վէմ։ Ա՛յս զոր ունիմ արծաթ անպիտան ոչ երբէք յարգի, և ոչ ընդունի և կամ համբարի ’ի գանձ տէրունի, հայցուած պղտոր և ձեռն անմաքուր անհնուիրելի։ Ա՛յլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ յոյս առեալ դարձի, զդէմն ’ի յերկիր եդեալ պաղատիմ մորդի Յոի, բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի, դու զօրաւոր փրկանակ կենաց խոկուհի երկնի, քեզ օրհնութիւնք ձայնիւ և բուրմունք խնկոց ’ի յերկրի, և անուշիւ խաղոց մատուցումըն յամենայնի։

Գ. Ա՛զդ յասացեալ ողբոցս հիսուած այլ մանս յաւելի, բարեբարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի. զկորստեան խորս չափելով զորքանն երբէք ոչ գտի, մանաւանդ քանիւք ’ի հանդէս նորին չառնացի, զմտացս արագեալ զթևս յերևոյթ իրին ոչ հասի, զուշին պարտութի յանվթարելեացն բաժակ բարկութեան ’ի ձեռն իմ առի, զտարտամութիւն տարակուսանացն իբր ձաշակումըն մահու արբի. և այժմ զյանցիցն յաձախութի ողորմելի ձայնիւ յերգ արկի։ Ա՛ներևոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզուլանալի, անտեսական լիմն քրայս հալոցաց սաստիկ եռացմամբ անչինչանելի, սլաքս նետից պատկանեալ դեղովք ’ի չտեմարան խորութե սրտի, խոթք ցաւոց խոցոտման մահու ’ի գնացս ե-

բակաց գոյութեան լերդի , կիրք երկանց անձարակ
ձեռոյ ի պատուած աղեացս անելանելի . անզօրելի
դեղոց ջերմութե՛ ի յերիկամանց մաստնս երկակի ,
անհնարաւոր դառնութե՛ մաղձի ի նախագուն և
մոյս կոկորդի : Հաղս ձայնից լքուցանողաց ի փողս
ընդոյս խոշորս հնչի , բազմահատուած էութե՛ ընտես
նելհակք միմեանց ի պատերազմի , երկչոտութեամբ
կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ ի վտանգի .
հարազատաց դաւաճանութե՛ անհաշտելի ի կոտո-
րուածի , ոչ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ ի մե-
ղաց գարշութե՛ տղմի , կասկածաւոր պատժապար-
տութե՛ վերակնարկելով քեզ բարերարի , յանակն-
կալս կենաց վհե արտաբերել ի լոյս անձկալի :

Դ . Այլ ինքն որ զայս բան տպաւորեաց՝ ընդ եր-
ջանկացըն պահեսցի , ակնարկելով քո ողորմութե՛
անարատիցըն հաղորդեսցի , վասն զենման այ բա-
նիդ՝ բարեգործեալ քեւ կենդանասցի . օրհնութիւն
դուեալ քո շրթանց ի գլուխ բաշխողի այսր մատե-
նի , հատատեսցի ըղձականութե՛ սողոմոնեան բանիս
առակի , նկարագրեա՛ հոգւով քո բարձրեալ ի նա-
բոգուն անեղծանելի . զի դու միայն ես երկայնա-
միտ ներօղ , քեզ փառք յամենայնի . ամէն :

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒԹՆԵՐՈՐԴ

Վերաքն յաւելուած կրկին հեծումեան նորին հակոզն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Լի քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծումեաց վերընծայելոց զդրումեն Թուոցս յարմարեցի կական և հեծումեիւն, հառաչանք կողկողանքինք, դառնումեամբ լալումն և արտասուաց երգ, դարձեալ սկսայց զձառ պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար զգաղտնածածումէն յայտնաբարբառ. զի անդրադարձումեամբ սկզբմամբն և վերջաւորքն բառիւք, զնոյն համաձեւումեն ի մի Թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհումեամբ աստանօր եդից։

Բ. Ո՜եղայ մեծիդ բարերարումեանդ՝ անարգս մեղայ, մեղայ ծագմանդ ձառագայթից՝ խաւարս մեղայ, մեղայ ընօրհացդ անբաւ երախտեաց՝ արդարեմ մեղայ, մեղայ սիրոյդ վերնումդ գԹումեամբ՝ յայտնապէս մեղայ, մեղայ ստացողիդ յոչէումեն՝ ստուգապէս մեղայ, մեղայ գերունակ գոգոյդ զրգանաց՝ անբաւս մեղայ, մեղայ աննուազ լուսոյդ վայելման՝ նենգօղս մեղայ, մեղայ ձաշակման անձառդ կենաց՝ բազումս մեղայ, մեղայ անհաս պարգեւացդ ձրիոյ՝ հանապազ մեղայ, մեղայ գովեալ մարմնոյդ ով՝ մանրագոյն մեղայ, մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ իսկապէս մեղայ։ Ո՜յժ արդարեւ օրհնեալ և հաստուածդ բանի յոտսագրական սրտի այսր մեղայի, սոյն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից Թոշակ, անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանումեամբ կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատձառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրբատաբեկ հնչումն, անհնարիցդ ձարակ, կարծրումեան

վանիչ , ՝ճճապաշտից սահման , հեթանոսաց գիրք , վաղնջուց կանան , քրիստոնէից հարազատ , արարչու- թեանն յաղթօղ , անջրպետ հզօր , խորոց ահաւոր , արուեստ բարձրութե՛ , խորութե՛ն անչափ , հիացման տեսիլ , խորհուրդ կնքեալ , ընդ որ չիք ումեք ան- ցանել , եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ճանիցէ ։ Զայն բարեպատեհ հրաշաւորական , որ ոչ յիշատակեցաւ ՚ի վերջին դատաւնիք դասուն լքելոյ . զուցէ առ նմին խղեալ համառօտ զվըի- ժակն իրաւանց մահուն հասելոյ , յորմէ ընտրութե՛ն ապագործ եղեալ , զսահմանն յաւիտենական քակ- տեսցէ ։ Օ՜ արդ փառաց մեծութե՛ , որով նոյն լինքն ՝ճճութե՛ն պսակեալ բարդաւաճի ։ Վ՚անզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութե՛ , և ոչ առժամայն պրծեալ ՚ի պատժոյ անարատ գտաւ ։ Լսակ եթէ Ա՚քար զարմեան , և Ա՚աւուղ կիսեան , և Յուդա սիմոնեան , ասելով զսոյն ոչ արդարացան , և ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի , զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատա- րեալ սէր , ուստի և ոչ բովանդակապէս փրկութե՛ ։ Լսակ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զեր- ջանիկ բանիդ զմկրտութե՛ն հարազատս ։

Գ· Ա՚եղայ երախտեացդ մոռացութե՛ն վերստին մեղայ , մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղայ , մեղայ առ կեանդ դրժողութե՛ն՝ իսկ և իսկ մեղայ , մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝ չարաչար մեղայ , մեղայ ՚ի յօր սատակման լինձէն ստիպեալ՝ վատթարս մեղայ , մեղայ պարտականս անկենդան մահուն՝ ձաղելիս մեղայ , մեղայ անպատկառս քո բարձրութեան՝ տաղտկալիս մեղայ ։ Ա՚երջին լինձ կրկին աշխար հոգևոր՝ զի ՚ի կորուստ և՝ ՚ի կործա- նումն լինձ երևեցաւ , զի անդարձս վարատեցայ , զի որդիս Թշնամի գրեցայ , զի ՚ի բարձանցն երկնից ըն- կեցայ , զի փուշս վարուց դիպի ։ Ա՚յլ և առ սմին ողբք աղաղակի , զի անձամբ զանձն անարգեցի , զի բազին կորուսցին գոյ ։ Ա՚յլ լիմն կսկիծ դժնդակ սրտի , զի զիս ունկն առ որ չեմ , զարտաքնայար- գար բաժակս անմաքուր , զբռնաւորսն գարշելնակ , զսին սարծանօք պաճուճեալս , զլոյսս ՚ի մնայլ

ջրջեալ, զդերանակիսը ակնս թշուառացեալ, զջահս փառաց շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք ձեռասակարս, առ մնօրինականն տէրունականս, առ յայտնութիւնն ածայինս, առ երևմունսն աբարչադիրս, առ խոնարհութիւնն սարսափելիս, առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուութիւս քան առ համօրէն աւետարանին զարմանս, հիացմունս, հոգս հալոցականս, անդաձմունս անհնարաւորս, թուականութիւնս մտաց անքարդելիս, երևմունս անկատարս, իմմունս անհատատս, յուսահատութիւս յարմարականս, յանդիմանութիւս պատշաճականս, ձաղանս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս։ Զդոյ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնաս հարուած տանջանաւորութեի։

Դ. Այլ քանզի կարօղ ես զայս ամ զպարտս թողուլ, և զնայթուածս մահու բժշկել, որ ողորմութեեց, ած բոլորից, վյն թագաւոր բարձրեալ հօր որդի, ստեղծիչ զթած բարերար, օրհնեալ առատ հարուստ, ահաւոր հզօր ողորմած, տեսուչ ձեռնկալ հասուիչ, ապրեցուցիչ դարմանիչ կեցուցիչ, երկայնամիտ անոխակալ ապաւէն, բժիշկ գովելի երկնաւոր, անձառ լոյս կեանք, յարութիւն նորոգութիւն քաւութե, եթէ հայեսցես մարդասիրութիւ, ըստ որում քոյդ են սովորութիւնք, նայեցեալ ի քեզ կողկողիմ և ես. եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առ իս դառնայցես, գոչեմ։ Այսպ եթէ անտես առնիցես, կօրծանիմ. իսկ եթէ առ ոսն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ինչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմն յուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սասեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ. եթէ զողոց վհատութիս ինչ առցես, տապնասլիմ. եթէ խստանաս, փախուստ. ապա եթէ սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ինչ

անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ։ Օ բարեացն պարգեւ մատնեալ, զերանուելին Թողեալ, զչնորհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զստեղծիչդ էիցս բարկացուցեալ, զանձառուն չնորհին ընդոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ։ Իսկ եթէ առ այս խեղդմտհու հեծութեամբ ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժամանեցուսցես, ՏԵՐ ՔՆ ՎՆ, զազդեալն գիր ընանիլ'ի յիս, եթէ բժշկութեամբ դաղարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն ազերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Լ՚Ի արդ զնոսս յայտնեցիք, և յաղագս նոյց նշանակեցիք, և վասն որպիսեաց ձառեցիք, և զնոքան ծածկեալս մերկացուցիք, և կամ վասն որոց խոստացեալ եղեալ էիք՝ զներկայիցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցեալսն՝ զոր մոռացեալ. զապագայիցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շարժուեցն՝ յորոց գլորեցայ. զփոքրն լինձ համարեալ՝ որ է ահ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չիշատակելի. զնուաճն՝ որ է առաւել, թէ զթեթևագոյնն՝ որ են ծանուցք. զհոգեկանացն կրից կորուսեալ, թէ զմարմնականաց ախտից սպանողաց. զառ դրունս հեշտականացն, թէ զծայրակոտոր փետսակարութեց. զանհերևութիցն, թէ զտեսականացն. զառ ձեռն հպատորութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն. զլայնականն դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նետաձգութիւն. զխորութեամբն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ. զյոքնագլուխն պոռնկութիւն, թէ զառողջութեն անբժշկութիւն. զպարարումն չարին մարմնով, թէ զսովինն բարւոյն հոգւով. զինամին հանդիսանալ յոչ ախորժելին ահ, թէ զբռնադատութեն տոռամբ ձգիլն ի նոյն մղեգնութիւն. զառ ի մէնն մեղաց, թէ զընդունայնութեն կարծեաց։

Բ. Լ՚Արդարև՝ որպէս կամաւ խելագար զերծեալ՝ի ձորձոյ, զառականացս տեսիլ յանդիմանեցի, զընդդիմին գործեալ լմաստնոյն, որ թէ հանձարեղքն վերարկեսցեն զամենս իւրեանց, օտարացեալս՝ի կրօնից, հեռացեալս՝ի կարգաց, ՚ի սրբութէ անսուրբ, ՚ի կուսութէ անմաքուր, յարդարութէ ամպարիշտ, ՚ի բարեպաշտութեան փետսապարտ, բե-

*բանուկս մերձ առ ստացօղն և հեռի երիկամամբք, շրթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս։ Այլ եթէ պարտ է զքստմնելիսն ասել աստանօր, չար քան զտանջանսն յանդգնութիւն, լաւ զուր լիմն պաշտօնատարս ՚ի միտս անկայունս երկեակ Ճանապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ և ոչ ինչ օգտիմ, այնդիմ և ոչ հասանեմ, փութամ և ոչ ժամանեմ, անձկամ և ոչ տեսանեմ, փափաքեմ և ոչ հանդիպիմ, կարօտիմ և ոչ պատահիմ, ունիմ զամենայն երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէրը ՚ամ աշխարհի։ Այլ թող զբազում զայսոսիկ, բարեբար, և մի ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանաւորս աջով նկարել. վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ընդհեսցես, օրհնեալ, որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց քանի հեծուծէ սրտի Դաւթի երջանկի, յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի քանին յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յամ կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ ՚ի վիհ գարշուէ մեղաց անդնդականաց ապականուէից. քան զի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, ըստ Յոբայ ձայնին։ Արդ ես ինձէն ինքնագրով անձնագատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ քնուէից, արդեւ փակեցի հնչեցի առ յինէն յամենայն մասանց զկենացն հնար, զի ՚ի փրկուէ մեղօք կապելոյս կըրկին մեծասպիս գովեալ։

Գ. Այլ քանզի ՚ի մարգարէին բարւոք խրատեալ փորձ գտայուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնուով ՚ի քեզ ապաստանեալ. առիք ընդ ձեզ բանս, ասէ Աւետիք, և գարձարուք առ տէր ՚ամ ձեր, և ասացէք ցնա, կարօղ ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն ՚ի բարուէ անձինք ձեր։ Այո ՚ամ խօսեցաւ, և ոմն է որ ոչ լսելոյ. նոյն ինքն վկայեաց, և ոմն է որ ոչ հաւատասցէ։ Արդ այսորիկ վճիռ պաշտելի, նուիրեալ պայման, սահման նոյնագոյ, կենացդ աւետիս, կնիք տէրունի, դուռն բարուէից, սիւնանաց հրաւէր, ձկըրիտ պատկեր, անըսպիւտ գանձ, անմուռացի

յիշատակ: Աչսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ աստուստ վկայեմ ամին՝ ընդ մարդարէին, կարօղ ես յամենայնի Թողուլ զմեղանս բազմաբեղուն. և և զօրասցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս: Յամենայնի իշխես, ամենայնի բաւես, ամ ուրեք հասանես, ամենից բռնութենէ յաղթես, և զամ կարծրութեի փշրես. զամ ընդդիմահար վանես, զամ խստութեի վատնես, զամ սրացեալ ընդոստնես, զամ դառինս անուշես, զամ դըժուարամբելիս քաղցրացուցանես, զամ զպարտս ընդրհես, զամ յանցանս Թողուս: Կարօղ ես, զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենարուեստ, զամենեցուն զմեղս ընկղմել և չքացուցանել բառնալ ՚ի միջոյ, իբր զձանձանչ փոքրու կայծական սահմանեալ ՚ի չափ ոչեից՝ անկեալ ընկլուղեալ կորուսեալ ՚ի տիեզերաբարածն ծովու:

Դ· Աչդ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մաեանի, ողորմեա վասն խաչի և չարչարանաց մերոյ որդւոյ քոյ, Տայր գԹուԹեան: Ակիզբն առաքելի ողբերգուԹեան ձայնի այսմ արտօսրածին նուագի, որ զայս դեղ փրկուԹեան կենաց մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր: Որ հետս ելից խոստովանուԹե մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց: Որ զՀպարտուԹեանն Թևս հարԹել մեզ վարդապետեաց ՚ի սոյն կանոնի կենաց պատգամի, և ելից զերծեալ ՚ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց վերջնոց և միջնոց, ԱչրորդուԹեդ բարեգործեալ, ՚ի նորոգուԹե լուսաւորուԹեան. ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ դասեալ ընդ սմին:

Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօԹից, և դիւաստարուս ջերմեռանդնալ ախտաւորուԹեց Աստուծով փարատիչ:

Ե· Աչդ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ Տայր ամենասաՀեղծ՝ անուսնդ ահաւոր, ձայն սաստիկ, կոչումն ընտանի, բան համբուրելի, աղդումն աքանչելի, հրաման սոսկալի, էուԹի անքննե-

լի, գոյութիւն անձառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անչնչելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անքովանդակելի, ողքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, պատճառ որդւոյ հայրութիւն, այլ ոչ նախագրութիւն. քեզ և ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեդ սաստեա տագնապօղ և դիւական տենդս ջերմութիւնդ, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախիցէ ի մարդոյս՝ զարհուրեալ ի սպառալի և յանքաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի, որով սրսկեալ միանգամ ի մշանջենաւորս համայն մաքրեցաք։

2. Նա արդ յայսց պատկառելի խոնարհուիդ արարչակերպս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց. տանջեսցի և հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ ի շինուածոյ խորանիդ քումդ բնակութեան յարտաքին խաւարն։ Նա ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոցս ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեդ ի սրտից մերոց։ Նա յիշատակաւ հարման հեղուսիցն քրստոփոշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պըղծեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեսցի չարին։ Նա ի կողահերձ սայրատուր սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, ի սպառ սատակեսցի սկզբնաւարար մահուն։ Նա զի խոնարհեցոյց զգուվեալն գլուխ յաւանդել զոգին ի ծոց քո, բարձրեալ, ապստամբութեդ անքաւրի բարուցն Ադեմայ ի կոր կործանեսցի, ամիւս հերքեալ ի կորուստ։ Նա զի զօրեալ ծածկեցաւ անմահն իսկութիւն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութեդ կարծեալ գոռոզին ի յատակս մահու դժոխոց մերին ստուերին յառեալ դիտեսցէ. և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտութեդ Թիւնից վիշապին կենարարն կրիւք ամենազօրին։ Ալ ասն զի ի փառս քո, Հայր ողորմութեան, իբր ի գովեստ որդւոյ քոյ Հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեն ունի զիւսմէն առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն բանդ անձնաւորը ընդ

անժամանակդ հօր փառաւորեմք : Այլ քեզ միայնոյ
Աբբորդուհեդ, հաւասարապատիւ տերուհեդ,
համաքաւն անբաժին ինքնուհեդ՝ օրհնաբանուհեի,
գոհուհի, զօրեղուհիւն և անձառ վայելչուհի մե-
ծուհե, բարեվիճակ հարթուհե, զուգակշիռ հա-
ւասարուհե յաւիտեանս. ամէն :

ԲԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերամին յաւելուած կրկին հեծուհեան նորին հակոզի առ նոյն ապերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ դու միայն սկիզբն բարեաց, գԹու-
Թիւն անձառ, որդի բարձրեալ միոյդ Այ, որ զոզ-
ջոյն զօրն ԹողուԹեան ցուցեր փրկարար, և ոչ
կորուսեան դատապարտարար, յեղանակեալ ինձ զա-
ւուրն չար առ մեծ աւետիս ակնկալուԹե : Լուժիկ
ախտացելոյս, հովիւ մոլորեալ ոչխարիս, տեր ա-
պաւինեալ ծառայիս, գինի անապակ մեծ տրտմե-
ցելոյս, սպեղանեաց դեղ վիրաւորեցելոյս, ազատու-
Թի մեղօք գրաւելոյս, օրհնուԹիւն բարեաց մերժե-
լոյս, կնիք ընտրհաց խոտելոյս, օծումն կոչման կապ-
տելոյս, կանգնումն վերստին կործանեալոյս, պատսպա-
րան հզօր գլորեցելոյս, օժանդակ վեհ գայԹակղե-
ցելոյս, գաւազն բարձրուհե տարակուսելոյս, սանդուխք
երանուԹե եղկելոյս, Ճանապարհ շաւղաց մոլորե-
լոյս, Թագաւոր ներող պարտելոյս, քաղցր յուսա-
դրուԹիւն լքելոյս, ձեռնկալ կենաց հերքելոյս,
մեծդ միայն և ամենառատ, որ զլիուԹիւն բարեաց
սահմանեալ հեղուս անչափ յաճախուԹե քան զոր
խնդրեմք և իմանամք, ըստ Պաւղոսի գոհաբանու-
Թեն : Վասնզի ինձուց յրմնից և Թուոց երից և չո-
րեակ տասանց՝՝ի վաղորդայնէ տունջևանն առ մուտս

արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ
իսկ և իսկ ՚ի սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր ե՛ք քան
զաղերսանաց ակնկալուԹե՛ մարդկան, բարեգործել
միմեանց ընդհատուԹե՛. իսկ առ իմն Թշուառուե՛
և անարգուԹե՛ զքոյդ եդեալ փառս, ամենակարօղ
զօրուե՛ ահեղ, բոլորից ՚ած, օրհնեալ տէր ՚Ի՛, որմ՚ովք
սահմանեսցի կշռուԹե՛ չափոյ հաստողիդ ընդ հողոյս
հաւասարուԹե՛ կցորդեալ: ՚Վանղի ՚ինաս յայսոսիկ
անբաւ և անհետաքօտելի, ամենևին բարւ անմանն
բարկուԹե՛ խաւարի. ուստի յոյժ նուազ են քում
մեծուԹե՛ աստեղացն Թիւք, զորս գոյացուցեալ յոչ
էից յորջորջմամբ անուանց կնքեցեր, և կամ հիւԹ
երկրի ՚ի յօդս հեղեալ, զոր ՚ի չգոյից հաստեալ տա-
ցածումն յատակի կառուցեր, քան ինձ նախագրեալ
համարդ սակաւուԹե՛, որով՚ք քեզ նմանիլ վարդա-
պետեցեր:

Բ. ՚Ես՛ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կա-
մայ երկայնմտուԹե՛ հանուրց չարուԹե՛, իբր դոյզն
մնայլ ՚ի տապ արևու, և որպէս աստուստ իսկ կիրք
բնուԹե՛ց զհասարակաց բարուց ցուցանել: ՚Վանղի
ոմ՛ք ոք ՚ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ. ոմ՛ք ոք
զաղերսացաւ, և ոչ ամաչեաց. ոմ՛ք ոք գարշեցաւ, և
ոչ պատկառեաց. ոմ՛ք ոք սխալեաց, և ոչ ապաշա-
ւեաց. ոմ՛ք ոք կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ոմ՛ք ոք
գայԹակղեցաւ, և ոչ ստրջացաւ. ոմ՛ք ոք պարտե-
ցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ոմ՛ք ոք պատրե-
ցաւ, և ոչ յոգւոց ելաւ. ոմ՛ք ոք ձաշակեաց լեղի,
և ոչ դառնացաւ. ոմ՛ք ոք անկաւ ՚ի բարձրուԹե՛նէ,
և ոչ ընդոստեաւ. ոմ՛ք ոք կորոյս մեծուԹի՛ւն, և ոչ
աշխարեաց. ոմ՛ք ոք զրկեցաւ յերանուե՛, և ոչ ելաց.
ոմ՛ք ոք կապտեցաւ ՚ի ընդհե՛ փառաց, և ոչ ողբաց.
ոմ՛ք ոք գտաւ ինքեան ՚ինասակար, և ոչ ըստգտաւ. ոմ՛ք
ոք մերժեցաւ յերեսացն ՚ած, և ոչ հառաչեաց. ոմ՛ք
ոք լուաւ զ՚ած սպառնալիսն, և ոչ սոսկացաւ. ոմ՛ք
ոք ընդ մի չարեացն՝ հաղարս չաւաղեաց. ոմ՛ք ոք
մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ.
ոմ՛ք ոք անօրինեցաւ, և ոչ քարամ՛ք զմիտան կոծեաց.
ոմ՛ք ոք եռես զտրուկն յիւրում մեծուե՛, և ոչ զկծե-
ցաւ. ոմ՛ք ոք կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզո-

վեաց. ում ոք ախտացաւ, և ոչ զանձն դատովեաց. ում ոք յամենայնեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին ձաղեաց. ում ոք ՚ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ զօրն իւր անիծեաց. ում ոք զգործեցեալսն յիշեաց, և ոչ տապացաւ. ում ոք զգաղտնիսն մտաբերեաց, և ոչ խորովեցաւ. ում ոք զծածուկսն նկատեաց, և ոչ մահ կոծտեան խնդրեաց. ում ոք զաներևոյթսն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր կորացաւ. ում ոք ընդ մեղացն հեշտութեանբ բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց. ում ոք զինասակարսն բնութեանն, և ոչ պապակեցաւ. ում ոք զկամաւ ներգործեալսն, և ոչ սատակմանն ինքեան աղօթեաց. ում ոք զանձառելիսն, և ոչ խռովեցաւ. ում ոք զանկրելիսն էութեանն, և ոչ թախծեցաւ. ում ոք զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ում ոք զանբծութեանն ապականարարսն, և ոչ տոչորեցաւ. ում ոք զտարագրութեանն պատճառ յանցմունս, և ոչ տապնապեցաւ. ում ոք զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեանբ վերնոյն զանձն պարտ վարկաւ. ում ոք զմի ՚ի կարևորացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ում ոք զնայատառականացն, և ոչ վայս վհատութեանբ ընդ հեծութիս ձայնն հիւսեաց. ում ոք յարքայական գահոյիցն անանկացաւ, և ոչ կարկամեալ ՚ի վայր գլորեցաւ. ում ոք ընդ պսակին պերճութեանբ հող ՚ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ յոտի մահացաւ. ում ոք ընդ պայծառ պատմուճանին քրձազգած եղեալ, և ոչ տխրեցաւ. ում ոք զկեանս իւր կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ում ոք ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. ում ոք ՚ի վերոյ սգոյ սիրելոյ ոչ թառամեցաւ։ Ա՛հա այս կերպարանք ձշդրտագոյնք պարտաւորիս յանդիմանութեանբ, տխուր դէմ, քաղեալ ձաձանչ, ցամաքեալ խոնաւութիւն, երիթացեալ շուրթն, անշքեալ տիպ, տրտմեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ պարանոց։ Այս զի թէ ոք զնակութիւնն իսկ նշանակեացէ, ոչ անօրինէ. անամբարտաւան միտ, անկրպարտ սիրտ, անխնդրօղ պարգևի թշուառ, անաղերսալի պասքեալ, ինքնակշտամբելի դեգերեալ, իրաւամբերժ սուգեալ, արդարալուսկ քաղցեալ, պատ-

շաձադատ Տալուածեալ, ինքնավկայ մահապար-
տեալ, արժանապէս Տանեալ, անձնանձն եղկելի։
Այլ զայս Թարգմանեալ ցուցանէ արդարագործ փա-
րիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բա-
րեՏամբաւեալ։

Գ. Այլ արդ, եթէ զբարիսն՝ Տնարաւորութիւն բան-
սարկուին գտողին զմեզ դայթակղեալս, զիւրսն ի
մեզ սերմանիս առ օրն Տամարէսցի, զնաՀրդ ա՛չ զբա-
րիսն տնկեալս ի մեզ Տոգւոյ արուեստիւնս ի խնամա-
կալութէ կամաց կեցուցչիդ օն և օն զրէսցես, տէր
բարեգութ, Տզօր և յաղթօղ, քաւիչ մեղուցելոց,
կարօղ յամենայնի առ ամենայն փրկութէ։ Այթէ
զանդունդս առ երկինս փոխես, և կամ զնաւար
մեծութեան ի լոյս Հաստատես, եթէ զգառնութէն
լերոյ ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ
զկոծ սաստկութէ վշտաց ի պարս գասու բերկրու-
թէ Տարսանեաց կարգես, դիւրինք և Տնարաւորք են
քեզ այսոքիկ. և ևս քան զսոսին բաւես առ նոսին
տիրեալ Համայնից ահաւորապէս. և քեզ փառք յա-
ւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Վերաքին յաւելուած կրկին հեծութեան նորին Հակովբ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ Աշմարտեսցի քան քո, ողորմած բո-
լորից ՝ած, ներօղ և օրհնեալ, ՝ի բազմադթելին
դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղա-
ւորին, թէ և առ յետին իսկ շունչն ինձ ընտրու-
թիւ, և կամ ՝ի մէջ չարութեանն փոխադրութիւն:
Ո՛անաւանդ զի դժնեայ կցորդս այս անձնիշխանա-
կան՝ միշտ մարտիկ, խաբօղ շողքորթ, յարեալ
՝ի ստուն, ըստ առաքողին արածօղ հողմոյ, դժուար-
ունելի հաստողին փախչօղ, գերեալ որսողին մո-
լեկան մարմնոյս, ներհակ տնկակից, յոգնապատձա-
ռեան ամենաւարան, զոր քո է գիտել զքանեացն
յաձախութիւն: Այլ զինի մեղանացն, ողորմագինս
իմն ողբարկութիւս վհատականս տաժանակօծս բազ-
մաւաղելիս, քո առաջի տեր գթարկութիւս գրեալս
արտասուօք, Թառանչս Թշուառութեց կարգելոց
անբաւս չար վտանգիս մեղսատապնասլ պատկառե-
ցելոյն:

Բ. Այլ զի մի կրկնաբանութիւնս ՝ի շատխօսութիւն
կրթեսցի, առաւել քան զսոյն այսու ողբալի, քան
զի ոչ երբեք համարձակի խնդրել իւր զարքայուէ,
այլ զտանջանացն Թեթևուի. ոչ ընդ կենդանեացն
՝ի լոյս, քան Թէ ընդ գերեզմանականացն զգայա-
կան շնչովն ՝ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ
ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն: ՝Ո՛ հանդըս-
տեան իւրում վաստակեալ, ՝ի խրախութիւնէ ինքեան
տրտմեցեալ. դիմօք ժպտեալ, և մտօք խոցեալ.
կերպ ՝ի ծաղր, և աչք ՝ի յողբութիւն. երեսք զսփո-
փանս ձևացուցանել, և արտասուքն զգառնութիւն
սրտին Աշմարտել: Մնպատակք երկու յերկոսին ձե-

ուին , միմն արեամբ և միւսն կաթամբ . երկու բուրանոցք կայծակնաւորք , միմն խնկով և միւսն ձեռնձերիւ . սկաւառակք կրկին կրաւորականք համոյ, միմն քաղցու և միւսն դառնութք . բաժակք ղոյզ առերկուս բերմունս , միմն արտօսր և միւսն ծծումբ տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանոյ , միմն գինի և միւսն լեղի . դրունք տեսանելեաց ներհակաց , միմն 'ի լոյս և միւսն 'ի վրիպուածն . խանութք հալոցակաց հակառակուեց , միմն արծարծէ և միւսն շիջուցանէ . հայեցուածք դիմաց երկուց , միմն դոյզն ո ղոքանօք և միւսն անխայելի բարկութեամբ . համբարձումն երկակի բազկաց , ոմն 'ի հարուած և ոմն 'ի մերժուն . դէմք կրկնակի կերպիւ , միմն տխրեալ և միւսն ցասուցեալ . կշտամբանք ընդ միոյ երկու , միմն աստեացս և միւսն ապառնեացն . ապաւինութիք կարծողականք , միմն գոնէ և միւսն թերեւս . 'ի մի բեբան երկակի բարբառ , միմն եղկութիւն և միւսն խռովութի . երկուս ազգմունս 'ի միում սրտի , միմն կեղակարծ յուսոյ և միւսն ձկդրիտ կորստեան . ամպ լրթագոյն ահազնատեսիլ կրկին տեղացմանց , միմն նեաս և միւսն քարինս . որոտումն ահեղ երկոցունց բերմանց , միմն կարկուտ և միւսն հրացան . ցայգ ցաւագին երկուց վտանգից , միմն լալոյ և միւսն մահու . առաւօտ սգոյ երկուց բողոքմանց , միմն սաստից և միւսն սպառնալեաց . արեգակունք երկու 'ի յերկուց ծայրից , միմն խաւարի և միւսն կիզման :

Գ. Լ'Թէ հարուածոց աչ կառուցանի, ինքեան վարկանի . և Թէ ձեռն պարզևաձիր , ոչ իւր ակն ունի : 'Ի պարծանս ուրուք կորանայ , յամբարձումն գլխոյ ընկճի, 'ի չարեացն յիշատակ հեծէ , 'ի ձառս մաքրոյ պատկառէ , 'ի պատմութիւնս հանդերձելոցն երերի : Լ'Թէ օրհնի յումեքէ յայտնի , 'ի ծածուկ զանձն անիծանէ . եթէ գովեստ յումեքէ լսէ, պարսաւանօք գինքն կշտամբէ . եթէ դարուեստ ի սաստկապէս, ինքեամբ ինքեան վկայէ . եթէ ձաղեսցի ուժգին , սակաւ Հատուցումն առաւել պարտուցն դրեսցէ . եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ, այո՛ ասէ , և դարձեալ կրկնէ . Թէ որոգայթ մահու ձայթեսցէ յերկինէ , հաղիւ զդէմն համբառ-

նայցէ : Օ Լուրոյ իրաւանցն մատեան խփեալ, զպա-
տասխանութենէն յոյս լքուցեալ, զհամարձակութենէն
ընթացս փակեալ : Այս եթէ ոչ էր անփրկանաւոր
կորուստ գերելոյն, զլուրովին երթալ ոչ ինչ դան-
դաղէր : Ողբարէ՛ վայ մեղաւորին՝ որ տարակու-
սեալ կայցէ՛ ի վերայ երկուց ձանապարհաց, ըստ հո-
գելոց բանի իմաստնոյն :

Դ. Այս արդ զիարդ ոչ ողորմեսցիս, բարեգութ,
այսքանեաց ձայնարկութեանց կողկողագինս հեծե-
ծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողոր-
մած եմ ես տէր : Ահա առ չարութի գերելոյս բա-
րութի քո, առ մահապարտիս դառնութի քաղցրութի
քո, առ կորուսեալոյս յայտնութիւն ձառագայթ քո,
առ յանդգնելոյս մոլութիւն ողորմութիւն քո, առ
խակութի ինաստակարիս հեզութիւն քո, առ կործա-
նելոյս այցելութիւն աչ քո, առ ընկղմելոյս վերբե-
րութիւն ձեռն քո, առ բժշկութի անողջանալի խո-
ցուածոյս մատն քո, առ պակուցելոյս պաշտպա-
նութիւն ոգի քո, առ ապախտաւորիս իմ վստահու-
թիւն երկայնմտութի քո, առ օծումն ամենադժնեխս
զօրութի քո, առ մեղաւորիս քաւութիւն հրամանն
քո, առ փախուցելոյս ապաւինութիւն ոտք քո, առ
սրացելոյս պատսպարութի բազուկ քո, առ վրիպե-
լոյս առաջնորդութիւն լոյս քո, առ տարակուսելոյս
հնարաւորութի հանձար քո, առ անիծելոյս կրկին
ստացումն օրհնութիւն քո, առ վհատելոյս քաջալե-
րութի խրախոյս քո, առ վշտագնելոյս միխթարու-
թի բաժակ քո, առ նեղելոյս ընդարձակութի կամք
քո, առ ատեցելոյս կոչումն սէր քո, առ հաստումն
սասանեցելոյս բան քո, առ հոգւով վիրաւորելոյս
կաթուած արեան քո, առ աներևոյթ մեծիս ցա-
ւոցս ակնարկութիւն քո, առ յուսահատելոյս ան-
դրէն ընտրութիւն իշխանութի քո, առ պատուաս-
տումն կարեցելոյս, կցորդութի քո, առ խաւարտա-
մահու ծածկելոյս նշոյլ կենաց քոց, առ խռովեցե-
լոյս իմ հանդարտութիւն խաղաղութիւն քո, առ
վայրագութիւն օտարացելոյս ողջոյն քո, առ մոլոր-
լոյս դարձաւորութի ձայն քո : Օ ի դու տիրես ամե-
նայնի գթութի՛, և չիք՝ ի քեզ՝ մանն ինչ խաւարի :

և ուչ է բարուէ առանց քո. և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄԵՐՈՐԴ ԱՒԱՋԵՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛Ի արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս զաղէտ տագնապի հեծուելեան ձայնիս մեծ հառաչանացս անսփոփելի խմոյս վտանգի. զի դու ողորմած սիրելնահայրդ խոստովանութեան անպատ ծածկութիւդ որդի ՚ոյ կենդանւոյ տէր Յա Քրս, քաղցրութեամբ նայեցցիս քաւել։ Ա՛րդարև կաթող ես, ձչմարտապէս բաւական ես, եթէ կամիս, հնարաւոր ես. կամիս առաւելապէս, որպէս և կաես։ Ա՛արստանաս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնուլն, բազմանան քեզ գանձք ՚ի ցրուելն քան ՚ի ժողովելն, յաձախեն ստացուածք քո ՚ի սփռելն քան ՚ի ձդելն, կուտին քեզ համբարք ՚ի տարածանելն քան ՚ի շտեմարանելն։ Ա՛աւատամ այսմ ամենայնի՝ գտանել քև եւք փրկութեան. հաւատամ անարգս ընդ պատուականին, յուսամ ընդ Ա՛բրահամու և ընդ Ա՛ննայի. զի միոն բանիդ քո հաւատաց և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Ա՛ասն որոյ և ոմն ՚ի խորին ծերութէ անհամար որդւոյ հայր հաստատեցաւ, զառանցեալն և զմուրն արգանդ Ա՛առայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութէ բազում ժողովրդոց մարգարէից սքոյ և թագաւորաց ընտրելոց հայել յուսացաւ։ Ի՛սկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի եւթնեակ զաւակօք բարգաւաձե-

ցոյց, որ ի Թիւ մի անբաւութեան զընաւն նշանա-
կելոց զէութէ, ՚ի ծածուածէն յարակայութէ սահման
անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց ան-
հատ յորդութէ: Այս Թիւ պանծալի, որում ոչ ի
կէտ կցորդի և ոչ սպառուած վախճանի, այլ կոյս
ումն ի ուրոյն ընտրութէ նուիրեալ յաւէտ անձառ
վիճակաւ համայն յաւիտենից, դժուարաթարգմա-
նելի մերոց իմաստից:

Բ. Այդ համարեա յարդարուի անյուսալի փրկու-
Թէ հոգւոյս զամենաւարան ձայն կողկողանաց սրտիս
հեծութէ, ընդ նախագրելոյն երջանկաց եդեալ և
դասեալ զայս գաւանուի փոքր հաւատոյ իմոյս խըն-
դրուածոյ. զի կեցից և ես առ նոքօք բերկրեալ
ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոյ գործոյ ըզ-
քոյդ ընտրեցս: Անաւանդ զի կրկին բարձունք են
և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի գե-
րագոյնք, իմումն խռովութեան հաշտարանք և հզօ-
րագոյն քաւարանք, և կարծեաց Թերութեան մը-
տաց սլացեալք. ընդ արեան քո ահաւորի և ըստ
մարմնոյ ծնօղդ քո խնկելի. պարք առաքելոյն, դասք
մարգարէիցն, գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն
հետևակ սպառազէն արիութեամբ մերկամարտիկն
մրցութեամբ, գումարք միանձանց, բոյլք բանակա-
նաց ընտրելոց, ժողովք բարեկրօնից, հոյլք հոգեղե-
նաց յերկրէ երկնաւորաց, զինուորութիւնք վեր-
նականաց ընդ մեզ կցորդելոց, աւանդք երախայ-
րեաց, մատուցմունք զուարակաց, լուացմունք զամ-
բարաց, բուրմունք խնկոց իւղոց հանդերձանաց,
յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խո-
րանաց ՚ի ծածկնակաց, ձեռք քահանայից ընտրեալ կա-
տարելոց: Զի շարժումն անձին յիշատակ ՚ի, առ
փոփոխումն գարշապարի, առ կարկառումն աչոյ և
ամբարձումն բազկի, առ բարիս գոհանի, և առ գթել
աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հասարակաց,
առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս,
առ առաքինութէ ջերմութէիս, որ ՚ի տունջեան և
՚ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քե-
առաջնորդեալք. ՚ի նիրհել և ՚ի զարթնուլ, ՚ի պա-
տերազմի ազգաց, ՚ի մնրատս դիւաց, ՚ի հակառակու-

թէ՝ հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս, առ ձգումն ըմպելեաց և ձաշակումն կերակրոց, և որ ինչ միանգամ՝ ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս՝ ինալ՝ ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես աքանչելապէս հնարիւք անձառիւք. հաւատացեալ յամենեցունց, թէ բաւական ես յամենայնի, կաթնաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, մտաց վայրենեաց, ստամբակաց գոռոզաց. մինչ զի առ Թատերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ուչ ես մոռացեալ։

Գ. Ա՛րդ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեացիս ամենեցուն՝ միայն բարեգութ. զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի՝ ի քում համարի են. քանզի գիտեն զզօրուն քո, ըստ առակողին մաղթանաց։ Արուամ և ես կցորդիմ թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապես. յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ, ճանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եւթեամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ, առ այս օրինակ կիրթ ձեռնարկուէ, զիարդ ուչ քո իցէ։ Յորս է տեսանել՝ ի մէջ արքունատես ագռաւուց՝ սպիտականիշ երամն աղաւնեաց, ՚ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոյս հանգարտաբարս, ՚ի թիւ շանց գազանականաց գառինս նուիրելիս, հեզութիւն՝ ի խստութէ, կատարելութիւն՝ ի թերութէ, խոնարհութիւն յամպարհաւաճութէ, ձշմարտութիւն՝ ի ստութեան, միամտութիւն՝ ի մանգութէ, անբծութիւն յայլամտութէ, բարօրութիւն՝ ի չարութէ, պարկեշտութիւն՝ ի լկտութէ, ողորմութիւն յանգթութէ, ապաշաւանք յանյուսութէ, քաղցրութիւն՝ ի բարկութէ, հաշտութիւն՝ ի թշնամութէ, անսխութիւն՝ ի խաճանողութէ, քաջալերութիւն՝ ի լկութեան, օրհնութիւն՝ ի նեռաձգութեան։ Յոր ուչ բաւականացայ երբէք՝ ի դատել ձշգրտապէս, թէ ուր յերկրածնաց աստի կանխեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառաբար կշտամբես իրաւամբք զարդարութիւն՝ առ ամպարիշտ մաքուրն և առ պոռնիկ զղջացեալն. առ

ամենեսին բարեգործ՝ միայն Թագաւոր օրհնեալ ՚ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերոյն յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Այ արդ ես յեռանեալս ՚ի նախադրութեանց արժանաւորաց գրեալ լինէին ընդ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթանաց· ընդ նկուննս և անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկուննս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարագրեալսն և առ քեզ դարձեալս, ընդ երկուացեալսն և ձչմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկձեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զղջացեալս, ընդ հեռացեալսն և մերձեցեալս, ընդ հեռքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս։ Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղսն Աբուսաղեմի, ըստ մարգարէին հրամանաւորութեանն որ առ Ժողովուրդն նախնի, և կամ տանն Յակոբու զանօրէնութիւնս նորա, այլ իմոյս ժամանակիս յայտնութիւնս. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յարեալով ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութենէ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն ՚ի սպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ էիր։

Բ· Այլ արդ կրկնելով ծունր բարեբարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զի մահ

գլորմանն ցուցից կերպարան. որ ’ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ անամենական գետնաքարշուճ սողնոյ սահելմամբ՝ կամք բևեռեցայ։ Ո՛չ ’ի քեզ տէր յեցեալ՝ իբր ’ի հաստատուն կենաց գաւազան ’ի յարմատոյն Ադամայ ընծիւղեալ մարմնով անձառ շաղկապմամբ յանեղ Աստուածդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ ’ի քոյդ երախտեաց ’ի վայր կորացեալ դիմօք, աչք ’ի բարձունս յառեալ ողորմագին տեսուքիւ ’ի քեզ մերձդ ’ի հեծուքեդ, բնաւին ողորմութիւն, բոլորովին քաղցրութիւն, զլիա՛ր լուսոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից։ Ա՛ւր ամենառատ աննուազ երկայնմտութիւնք՝ քո դառնացուցչիս, միայն դու ’ի յամենայնի սահման փրկուես, ած բոլորից, անձառ մեծութիւն, անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն, հղօր զօրութիւն, կարօղ բարերարութիւն, անպակաս լրութիւն, անձառ ժառանգութիւնս, վայելչական վիճակ, առատ պատրաստութիւն, անստուեր խմաստութիւն, տենչալի տուրք, անձկալի ձիր, բաղձալի բերկրութիւն, անախտ հանգիստ, անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք, անծախելի ստացուած, անփոխարինորդելի բարձրութիւն, ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւնս, դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց, լոյս խաւարեալոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցելոց, փրկուիդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպարանդ սահեցելոց, վշտակիցդ դայթագղելոց, երկայնմտութիւն տարակուսելոց, լուսոյ տեսակ, ցնծութիւն ցոյցք, օրհնութիւն անձրև, հոգի երեսաց, զօրութիւնս դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, աղդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի, ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցորդուն հարազատ, խնամ ածութիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ, խնդութեամբ մաւք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն, Աչմարտութիւն ձա-

նապարհ, երկնաձեմ սանդուղք: Եւ այլ բազմութիւն բանից գովեստից անհամար կարգաց և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգեղէնք:

Դ. Եւ քեզ հայի ամ ակն տեսողի, ածդ ամենայնի. նայեա՛ ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և եթէ յաղախնաց ոք աղաչեսցէ: Եւ ընկալ զցօղ ողբերգութիւնք լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութեանդ քոյ, Քո՛, և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ դարձն և զդաւանութիւնք, և համբուրիս շրթանցս առ ձաշակ փրկութիւնք կենացդ հաղորդուն՝ համանչեալսէս զանբակ միութիւն. և զնոյն գթութիւնք նորին ողորմութեամբ ընկալեալ՝ի քէն, բարերար, դրաւականեսցես զմեծդ պարգև ընդ փոքու հաւատոցս. և՝ի ձեռն գթութեան սիրոյ քոյ առ քո անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմերունք հոգմոյն խստութիւնք՝ի յօդ հանդարտութիւնք և մրրկին սաստկութիւնք՝ի սիք ախորժութիւնք, և կարծիք երկիւղին՝ի մեծ վստահութիւն, և պատուհաս պատժոյն յերանութեան պատահումն, և վտանգք թախծանացն՝ի հոգևոր խրախճանութիւնք, և ալեկոծութիւնք ծփանացն՝ի խոր խաղաղութիւն, և ղեկացն թևարկմունք յանբոյթ նաւահանգիստն, և բերք բեռանցս մեղաց փոխարկեսցի՝ի թոշակ շնորհաց: Եւ յայսքանեայս ամենից բիւրուց բարութիւնց՝ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոստովանեալ, ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հերքեալ և հալածեցեալ, ունայնասցին մուրհակք մեղաց, խզեսցին հաղոյք, որոշեսցին որոգայթքն, կապտեսցին կապանքն, վանեսցի վիհն, վերասցին ճիւաքն, պարսեսցին պատրանքն, ջրեսցին մեղքն, պատառեսցին պարտիքն, խորտակեսցի լուծն, քակտեսցին քեղիքն: Եւ ընդ մեայլ մթութեան չարեացն յանցանաց և դիւացն բանսակաց պաշարողաց՝ արև փառաց քոյ ժամանեսցէ կեցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, ՚ի դիմաց և ՚ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ դար-

նայնոյ ընդ ակնկալութիւն սպասողացն քումդ երևա-
ման ։ Օ՛ի դու ես բարերար առ ամենեսին , և հնա-
րաւոր են քեզ ամենայնք . և ամենեցուն զկեանն կա-
միս և զփրկութիւնն բաղձաս ։

Դ· Ո՛վ ամենապարգև ձեռն Աստի ՝Ստի , և առ իս
դարձցիս կարկառմամբ ընդրկի աջոյդ քոյ սիրյ բնա-
կեալ միացեալ , և ոչ հեռացեալ յանձկութենէ սրտի
սիրոյ սենեկիս . և անեղծական քո նկարագիր՝ նըշ-
խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
մանս՝ ընդ իս պահեսցի , միշնորդեալ ընդ քեզ ՚ի
մտաեան յաւիտեան կտակաւդ կենաց հոգւոյդ ա-
ւետեաց երկնից յօրինողիդ ։ Այս քեզ միայնոյ պատ-
ձառիդ , և միոյդ՚ի միոյ պատճառէ , և ունողիդ ըզ-
պատճառ միոյ ; երբեակ անձնաւորութեան և միոյ
աճութենանդ վայելչեն փառք յերկնաւորացն վերից ,
՚ի սրբոցն դասուց , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողն առ նոյն ալեզս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԱՐԴ գլխաւորութիւն պաշտաման բանիս ի խայբեաց հոգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազդեստիցն զուգամասնակս խառնեացես ի յանուշութիւն կազմութեան իւղոյն Աարիամոր կնոջ բարեպաշտի։ Որ հաւատարեալ նոյնութիւք ընդ երջանիկ պսակնկայն ի քէն ընկալելոցն յաւետահրաշ յարգանաք, պարարեսցիս մեծապէս իմովս բանիւ նուաստիս, ընկալեալ յանհաս և ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ, անկըշտամբելի ի բամբասանաց սաղմոսին, մի օծցէ զտերև ոստոց գազաթան եւզ մեղաւորին։ Այլ արասցես զօրանալ կրկին յաձախութեամբ բուրման խոստովանութեան այսր մատենի ի բազում ազդեալ, հանմասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեառակաւ, ըստ օրինակի համեմատութիք նոցայն յիշատակի։ Վանզի դու նոյն տէր զգաստացուցիչ նախանձ չարախորհից կանանց մեղաւորաց, որոց առաւել զմարգարէին կերպարան՝ քումդ Աշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սոսին անձառ ներգործութ ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն։ Ընդ անատնական գաւթոյն կերա կրոյ զգաստմահամբար պտուղ ցորենոյդ կենացդ հայի, ընդ ապականացու արծաթոյն՝ զարբունականդ պատկեր, ընդ յիմարարար թմբրուե դինւոյն՝ զաժակդ արեան արարչիդ, ընդ իւղոյն առելոյ ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝ զօծումն շնորհին առ իս դարձելոյ, ընդ վերծման գլխաշուք կտաւոյն՝ զանապականութեան վերարկուն, ապարանջանին պճնութիք՝ զթուիչս բարեմասնութեան, օրինիւն և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինու-

թէն, ընդ ունկանն գնդի վայելչականն զարդու՝ զանստուեր յիշատակ տերունականդ ձայնի, ընդ քայս պերձուԹեան լանջացն՝ գյոքնահաւաք ա-ւանդս ուղղուԹե՛ քոյինակրօն լծոյդ քաղցրուԹե՛։

Ր. Լայց զի՞ ե՛ յայսոսիկ լինձ պարծել, և ո՛չ վերըա-տին ՚ի սոյն պատկառել։ Ա. Այլ այլ օրինակ փո-խեալ զմատեան մաղԹանաց այսր ողբերգուԹե՛, որ լինչ լինձ ե՛ յարմարաւոր, ամենայնիւ հատուցից ըզ-պատիժ պարտուցս իմոց մեղանաց, ՚ի մարգարէիցն տառից բերեալ համառօտս՝ ՚ի սոյն յարկ մուծից սաստիկ դատախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան Թէ ընդ բերկրուԹեան նոցա պարել. յորս հառա-չանս, ձայնս հեծուԹե՛, բողոքս բարկուԹե՛, նախա-տինս խորտակմանն, լալուՆն կարևոր։ Ա. Այլ մեծիդ ՚ի գԹուԹե՛ ամենաժամման՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրուԹե՛, առ որս՝ զղջմունս, խոստովանուե-Թիս, աւետիս, պարգևս, լուսոյ երևմունս, խրա-խոյս ՚ճաչելիս, փառաց ժառանգուԹիս, հրաշից յայտնուԹիս, սքանչելեաց տեսուիս. յորոց ումանք յոյս ընձեռուն, և ումանք վհատուԹիս բաղումն մա-տուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ։ Ո՛վ ե՛Թէ զգեստ ՚ի զվարագուրին պատրուակ ասաց Ադեկիել, յորում արար ժողո-վուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել ասէ ՚ի նոսա, իսկ ո՞րքան պատիժ անմաքրուԹե՛ս եղիցի զնո՛ զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Ո՛ արմանամ, Թէ զիա՞րդ ո՛չ կիզուս. հիանամ, Թէ ՚ի՞նչ ո՛չ այրիս. ափշիմ, Թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ չարչարեալ, ջաղխեալ, մանրեալ, խորտակեալ, կըտ-րեալ, բաժանեալ ՚ի յօրինակէ ժանեաց կորուս-չին, ըստ գրոյն։ Ա. Այս միայն ե՛ պահեցեալ լինձ նշոյլ յիշատակի փրկուԹե՛ յուսոյ, զի քեռեան աւե-տարանն կեանս ե՛ ամենևին, ՚ի կերպարանաց պատ-կերի բանին ծանուցեալ. որով առ մեղանն դարձն, առ պարտիսն ընդրկն, առ եղծումն նորոգուԹիւնն, առ անօրէնուԹե՛ն քաւուԹիւնն, առ վերն բժշկու-Թիւնն, առ վտանգն անդորրուԹե՛ն, առ պատիժն ներումն, առ պատերազմն հանդարտանալն, առ հուրն անձրևն, առ պատուհասն պարգևն, առ ակն-

կալուն սատակմանն՝ ձիրն, առ գործարան մահուն կենացն ազատութեն։

Դ· Այս զինչ է ինձ զայսքանեայ յիշմանց՝ ի թիւ արկանել, և ոչ զանձառելիսն ասասնօր դասել։ Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութեն, յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն, սոցին ակնարկութեք՝ ընդ հոգւոյն հաղորդութիւն. խաչին փրկանք, բանին սիրտութիւն, բարւոք վարձ կամացս առ կշռուն դիտողին, աւազանն կենդանարար՝ հաշտութեանն միջնորդութիւն, և այլք ամենայնք անթիւք բարիք՝ ի բարերարէն բարդեցեալք, ազատք՝ ի հարկէ, արձակք՝ ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք։ Այսոքիկ են, որ ինձ՝ ի մէջ դառնութեն մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի եթէ ոչ զայսոսիկ ունիցի, կանխաւ արդեւք կորուսեալ էի իսկ և իսկ ըստ բանի երգողին։ Ո՛չ փոքր կութեք որդւոյ զհայր փառաւորեմ, ոչ նուաստութեք հոգւոյ զորդի նախադասեմ. համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչութեք։ Վանզի և ՚ի դէմս հոգւոյն սքի՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զենանի, զայս աղօթեցի։

Աղօթք, որ նախ քան զպատարագն մատուցանի։

Դ· Ամենակալ բարերար մարդասէր ած բոլորից, յօրինօղ երեւութից և աներեւութից, փերկօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար, հօր հզօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեք յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Ատչիմք մեծաւ դողութեք սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում անշնին զօրութեդ, ելք աթոռակցի փառակցի և արարչակցի հայրենի անկասլուտ պատուոյդ, և քննղի ծածկութեք խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Ամենատեղի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի։ ՚Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երբեակ անձնաւորութիւն միանական աճութեդ, յորոց մի և դու Հանապէս անհաս։ Վև

և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զանցեալն և ղգալոցն, զեղեալն և զոչ գոյացեալն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին։ Ոգի ՚ով քարոզեալ զքեզ Մովսէսի, որ ՚ի գնալն քո ՚ի վերայ Ջրոյն, անպարապիր զօրութիւն, ահեղ շրջարկութիւք տածողականաւ՝ թևապարփակ պաշտպանողօրէն, գԹասիրեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։ Որ կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր, կաւ ըօղ տիրապես, զաւանդակ բնութեիս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից յանեից։ Եւ ստեղ ծանկն ՚ի նորոգութեի յարութեէ ամենայն եղեալքս առ ՚ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց։ Եղեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում աղդակիցն քո, էակիցն հօր անդրանիկն որդի մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց Զքմարիտ ածծ հաւատսար և համագոյ հօր իւր հզօրի, և զառ ՚ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զնածամարտիկն զքո հեստելոցն չարաբանական բերանս կարկեաց, և զիւրն հնօրհեաց արդարն և անարատն գտիչն ամենայնի, որ վասն մերոց մերոյ մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Դարձեալ կրկնեացի ՚ի նոյն կարգ բանի, մինչև վաստուածիւ լուսոյ հրաշապէս յայտնեացի ազգեալ, աւետարանել վերսին զկրկին խաղաղութիւն։

Ե. Ակզբամբ և աղերսեմբ արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւդ անեղծ և անստեղծ անժամանակ հոգւոյդ զԹածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմուռնչ հեծութիւն առ ողորմածդ հայր. որ զսուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր։ Ակզբ

աղատեա զմեզ յամէ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեանդ. և մի՛ ելոյցին առ ի մէնջ լուսոյդ ընորհացդ փայլմունք ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Այլ քանզի միդ Հոգւոյդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ, իսկ դու ընկալեալս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս առ մէնայն պատրաստութեանդ ի վայելումն Հաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոյ դատապարտութեանդ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեանդ։ Այլ հալեսցի ի հրոյս յայսմանէ գայթագղութեանս մեր, որպէս մարգարէին կենդանի նախատրոյկ կայծակամբն ի ձեռն ունելեացն մատուցմանն. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս որդւովդ այ՛ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան։ Այո՛ այո՛ և ես մի եմ ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեանդ կարօտեալ մեծի, ընդհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս։ Օ՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո ողորմութիւդ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամն և ի մի իշխանութի գովութե. զի քոյ է գթութիւն և կարողութիւն և մարդասիրութիւն, զօրութի և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԶՈՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն ազերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԱՐԴ առ այսոքիկ Թշուառացեալ ընդոյս իմոյ լղձք, և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես քանիւ զամենայն՝ ած, զոր ի նախնին Ճառեալ՝ և յերկրորդումն ցուցիր։ Իսկ յանդիմա նուիս զրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց, և Թարգմանուելս ժողովրդոց, զայս արգահատութիւս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք։

Ի հանդիսարանս խօսից առնելի բանս մաղթանաց, որով հոգին ոյժ հաշտեալ հասանել յօգնականութիւն։

Բ. ՀԱշեմ զանփոփոխելի տերութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեա զցօղ քաղցրութեան քոյ, և բարեգործեա ի յանձին և յիշխանական ազգմանդ զգայուն զամենալից ընտրս բազմապարգեւ քո ողորմութեանդ։ Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէնս կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ։ Զուարճ ամենիմաստ էութեդ խոստովանիմք զամենայն պարգեւս ի վեր ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո Եսայիէն հօր անդրանիկն որդի քոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ ած հաւասարակից խոկութեդ հօր։ Ընտրեա և ինձ մարգարէս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետևել արագաթռիչ ընթացիւք մտաց ընդ անհուն աստիարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Եւ ի մատչել իմ ի

զլուխ հանդիսի մեկնութեանէ բանի՝ նախաժամանեա-
ցէ առ ես զթութեանէ քո, խոսելով յիս զարժանն և
զպիտանին և զհաճոյն քո ՚ի ժամանակի, ՚ի փառս
և ՚ի գովեստ ածութեանդ քո, և ՚ի լրութեան շինութեանէ
կաթողիկէ եկեղեցւոյ ։ Եւ կարկառեա ՚ի վերայ
իմ զամենամերձ աջ քո, և զօրացո զիս ընդհօք
զթութեդ քո. փարատեա ՚ի մտաց իմոց զմեզ մեծու-
թեանէ մոռացութեանէ, ապաքինեալ ընդ նմին զխաւար
մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ ՚ի կենցաղոյս
երկրէ ՚ի բարձունս ։ Ուսո՛ւցո՛ր եա ՚ի յիս վերստին
զծագումն անստուեր հրաշից գիտութեանէ ածուէ քոյ,
հնչող, արժանի լինել առնել և ուսուցանել յօրի-
նակ բարեաց ածասէր լսողաց ։ Եւ քեզ ամենայն
փառք յամենայնի ընդ հօր ամենակալի և ընդ որդ-
ւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան
յաւիտեանս. ամէն ։

Նոկ զհաւատոյ սահմանն բանի ընտրութեանէ հնօրհի
կենաց կանոնի առ համագոյ ՚ընդ Երրորդութեան՝ զայս
վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ ։

Երրորդութեանէ անապականն նորոգ ստեղծաբանութեանէ ազդեալ
յայց, յոր ինչ ՚ի Սկիզբն սահմանեցաւ հաւատ ։

Գ· Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և
երկրպագեմք զղուզափառ միութիւն ամենասքն Եր-
րորդութեանն, ածութիւն անձառ, միշտ բարի,
նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից թե-
ւոց սլացմանն, ՚ի վեր քան զօրինակ և անդր քան
զնմանութեանէ, գերազանց գոլով սահմանի անպարա-
դիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւի-
տեանցս անտարբաժակ էութեանց ստեղծականացս
կարգաց, օրհնաբանութեանէ անթարգմանելեաւ ամե-
նահարուստ մեծութեամբ յաւէտ պատկեալ, հաստիչ
ժամանակաց և որ ՚ի ժամանակի են կերպաւորեալք,
ինքն պատճառ հանդերձիչ և յարմարապէս յօրի-
նիչ տեսականաց և աներևութից ։ Ո՛չ անուամբ չա-
փեալ և ո՛չ յօրջորջմամբ նշանակեալ, ո՛չ որակու-
թիւն նմանեալ և ո՛չ քանակութիւն կշռեցեալ, ո՛չ օրի-
նակաւ ձևացեալ և ո՛չ որպիսութեամբ ճանուցեալ,

ոչ ՚ի թերութենէ տարածեալ, և ոչ ՚ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբեքի դրաւեալ և ոչ ՚ի տեղւոջ վայրի երևեալ։

Դ. Հայր դԹուԹեանց՝ ունօղ ամենայնի, և ՚ած հանուրց որ յերկինս և որ յերկրի, բաց ՚ի բանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի. ստեղծիչ և տուիչ ընչից ամենից, բաց ՚ի հոգւոյն խոկակից որով զհամայնն կազմեաց։

Ե. Ինն յերջանկափառ համաղօր ահաւորուԹէ երից անձնաւորուԹեանց խոնարհեալ ՚ի վերուստ անտուստ ՚ի ստորինս, որ էրն իսկ ՚ի բնէ անբաժ ՚ի ներքինոցս՝ անկապուտ մնալով փառացն աԹոռոյ, և անկարօտ դիմացն ճնողին սիրոյ, մաեալ ՚ի սենեակ կուսին արգանդի պարզաբար, և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անորոշելի, անԹերի մարդկուԹեամբն և անպակաս ՚ած ուԹեամբն։ Ի որդի հօրն միայնոյ, և միածին անդրանիկ ՚ածամայր սիրածին կուսին, արարիչն յեղակնուն մարդ եղեալ Ճշմարիտ սկզբնաճին. ահա ոչ զինի եղելոց երկրաստեղծիցս նմանուԹեամբ, այլ նոր և չքնաղ, Թագաւորաց վեհափառ, որ ոչ ցուցաւ ՚ի դարս, և ոչ դոյացաւ ՚ի ժամանակս, անդրանիկ ըստ սաղմոսողին, քան զամենայն Թագաւորս երկրի. անապական խառնուԹեամբ կերպացեալ զմերս ՚ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ։ Նոյն ինքն եկեալ կամաւորուԹ՚ի խաչն մահու, իբր զգառն անարատ ՚ի սպանդ վարեցաւ, և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանուԹիւ զարարածոյ իւրոյ փրկուԹիւն. չարչարեալ իսկուԹիւ կենդանեօք՝ եդաւ ՚ի շիրմի անորոշելի յաճուԹենէն. եռօրեայ Թաղմամբն ՚ի դժոխս՝ սանդարամետական նայն վհատելոցն բանտարգելից քարոզեալ յուցաւ նորոգումն և լոյս։ Նա աւարտեալ զանօրինականայն գործկանաւորն գնտեսուԹիւն, ՚ածապէս վերակենդաղեաց. և կառավարեալ ՚ի Թևս հողմոյ՝ ելեալ ՚ի Ներովբէս ամպով անքննուԹեամբ ծածկեցաւ. համբարձեալ գեր ՚ի վերոյ ամ երկնի, նստաւ ՁախուԹ՚ի յաԹոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հա-

ւաստարութիե, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ, անկորուստ առեցելովն և անուռաղ սեպհականօքն։ Որով և եկեսցէ ի դատաստան հատուցման, քննել զծածկեալսն կշռութեամբ չափոյ արդար իրաւանց· որում սպասեմք և յոր աղօթեմք, հաւատացեալք յայմ՝ ամիւ ամենակալ տէրունէ նորա· որ արդարև՛ մինն է միայն ի միայնոյն՝ ի միոյն փառակցուի յաւիտեան երկրպագեալ։

Զ· Յարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր և ընդ հոգւոյն էուէ նոցին, ամենաղօր, Աշխարհիտ, կատարեալ և ՚ծբ, որ յանհից գոյացողց զբոլոր եղեալքս ամենայն· ինքնագործ հոմիչխան երկուցն և ընդ նմին անեղծ և անսահման թագաւորութիե· որ ինչ պատճառն առաջինն և բանն ահաւոր նորին ինքնութիե, նոյն ինքն և հոգին բարձրացեալ։ Յարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգեւս ի գովեստ անուան փառաց միածնին· որ աղդեաց յօրէնսն, ընդեաց ի մարգարէսն, փչմամբ աղգակցին տպաւորեցաւ յառաքեալսն, կերպիւ աղաւնւոյ ցուցաւ ի Յորդանան ի մեծութիե փառաց եկելոյն, փայլեաց ի գիրս աւանդականաց, արար հանձարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, օծ արքայութիես, օժանդակեաց թագաւորս, ետ վերակացուս, հրամանատրեաց փրկուիս, ընդունեաց ձիրս, հանդերձաւորեաց քաւութիես, զմկրտութեալսն ի մահն Քրիստոսի՝ ի բնակութիե իւր մաքրազարդեաց· զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց, և ինքն է ՚ած խնկեալ սիրապէս ամենայն յամենայնի։

Է· Վանզի ոչ նախաթուեալովն հնդրորդութիեն ոք մեծ ինչ քան զմիւսն, և կամ զինչն անուանիլն նուաստագոյն առ նմանն, և կամ ի մինն ասելով խառնակութիե զոլ զիմացն, և կամ յերիցին տրտունջն ուրոյնութիե եղ կամացն։ Վանզի անմեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութիե· որպէս ոչ զոլով ընդ նմա հոգւոյն՝ անհագագ ոմն և անկենդան և առ ամենայն հրամանն նուաղեալ։ Իսկ բանն եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որք ոմն և կամ լքեալ և կամ ի մահա-

յուէ ուժեմնէ ոչէի ։ Ապրպես և հոգին եթէ ուժ ՚ի պատճառէն նշանակեսցի , ապաշուք ումն թափառեաւ՝ իբր զշունչ կինչ անդասելի ։ Ա.յլ եթէ ոք հակաճառական բանիւ յաւակնի կապտել զհայր ՚ի յիւրմէ բանէն , որ թէ էր երբեմն յորժամ ևչէր , և անբանութեանն բամբասանօք պատուել վարկանի զվեհին մեծութիւն , և կամ ստրկութիւն տացէ բղխողին՝ ուժ բնաւորաբար գոլով հոգևոր , որով այլ ինն գոյութիւն օտար մուծանել և կամ ամբոխումն կինչ այլայլական յանարատ պատիւ միութեանն Երրորդութեն , զայնպիսին քարամբք պարսից հաւատոյ բանից , իբր զդժնդակ դևս դիմամարտիկս դաշնականս , հերքեալ ՚ի միջոյ ՚ի բաց հալածեմք , եդեալ ՚ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս դաւթի ։ Ապա մի զիք Երրորդութիւն փառաւորելով ՚ի նոյն տէրութեէ միակցորդ հաւասարութեէ , զուգաձայն սրբաբանութեէ , հանգուցնատիպ հարթութեէ , օրհնեալ և փառաւորեալ յերկինի և յերկրի , ՚ի ժողովս անդրանկացն , և յազգս երկրածնացս բանականաց , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Ը . Ա.յդ զայս դոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի՝ առնալոյր ականջաց մեծիդ ՚այ ընծայեցուցի . սովիմբ սպառազինեալ , և ապա մտի ՚ի հանդէսն ։ Ա.յլ ուժ եթէ կարօտեալ իմոյս կինչ ձայնի այսու մեծանաս , որ մինչչև ստեղծեալ էր քո զամենայնն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք , դու քեզէն ՚ի քումդ լրութէ փառաւորեալ իսկ էիր . այլ զի զմերժեալս զիս յարգեսցես , անձաւ քաղցրութէ , ձաշակել զքեզ բանիս հաղորդութէ ։ Ասէ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ ասել Ա.զոնայի տէր , և զհրամայեալ պատուէրդ ուժ առնել . որ կինձէն իսկ զիս զոսկեղէնն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի , զգրեալս մատամբդ ՚այ՝ եղծի , որ և խորտակելն է իրաւացի . և ես տխրատեսակ մրոյ զերկրորդն նմանութէ առեալ հայթայթեմ ։ Ա.յլ արդ քանզի բաղմօք պաղատեցայ դրուագօք խանդաղա

տականօք, որ ոչ է գրեալ ՚ի յայս կարգ ձայնիկ, լուր, բարեգուէթ, ըստ սմին բանիկ այնմ ամենայնիկ։ Նշիցի և այս աղերս բարբառոյ Հայցմանն աղօթից յօդեալ ընդ նոսին. Թերևս ՚ի մաքրոյ և ՚ի կամարարից այս նուէրը հայի պանից բաղարջուց իւղով զանգելոյ ՚ի սեղան փառացդ քոյ մատիցէ։

Թ. Լ՚յլդոյ բարերար և յամենայնիկ մարդասէր, Աստ մի՝ այ միոյ, հզօր և ամենակալ, որ յաղթես դևոցն թնաման քաղցրութեան քո, ոչ հասարակաց կանաց միայն մարդկութեես իմոց գոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութէն և բիւրամանեայ հակառակութէն, այլ և հրեշտակացն անախտականութէ, նաև և ևս քան զայս՝ սրբամանելոցն անարատութէ. յորոց մի էր և Հեղիսա, որոյ ցոյցք խոստուէն ՚ի Աստուածբ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, ՚ի շարժումն մեծ, ՚ի հողմն ուժգին, ՚ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութէն երկայնմտութէ ՚ի հանդարտութէ մեղմութէ օդոյն քաղցրութեան. քանզի կամաց ողորմութէց դու միայն ես, ըստ գրեցելումն։ Ալ ասն զի թէ և հաճոյք գոան մերասերքս առաքինութէքն յեզանակեալ յայլ նմանութէ վերնային, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք ՚ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ իսկութէ բարիդ, յամենայնի օրհնեալդ, ամենևին փրկութէդ, ամենայնիս հանդիստդ, համայնից անդորրութիդ, համօրէն ախտացելոց դեղ առողջութեան, աղբիւր ջրոյ կենդանեաց ըստ Երեմիայ։ Վասն առ իս և ողորմեա ինձ, որ այնքան ծարաւես պատքիս անկարօտդ ՚ձ խմումդ փրկութէ, մինչ զի զուարթնոցն երկնից անմահիկ օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութէ մշտնջենաւոր պաշտամնս օրհնեալդ քո դէմութէ ՚ի մերոց դիմաց կենդանականաց վասն իմ լքելոյս հաշտութէ մաղթել, ողորմեա Երուսաղէմի. որ ե լուսաւոր խորհրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութէ առ հրեշտակաւկանն Թափուր տեղի ստորանկելոյ ՚ի ձեռն մարդկան՝ քո կցորդութէ աւետարանեալ առաքեա այսր օրինակաս, Երուսաղէմի։

ԺԸ. Ընդարձակ լուսաբարեգութ, անսպառ թագաւոր, ունկնդրեցեր կեանք և յոյս, ի միտս առեր երկնաւոր, յարգեցեր հղօր, նկատեցեր ծածկադէպ, տեսեր խնամակալ, կարեկցեցեր անպատուհաս խոնարհեցար միշտ բարձրեալ, նուաստացար ահաւոր, յայտնեցար անձառ, ամիոփեցար անսահման, քանակեցար անքնին, մածար ձառագայթ, մարգացար անմարմին, շօշափեցար անքանակ, կերպաւորեցար անորակ, լեր իսկապէս զաղաչողացն բարեձանս։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախձան, նուէր մարքուրեն, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ։ Ընդ ողորմած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստուրեն կամայ քոյ կենդանատուայ, գովեալ երկայնամիտ. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վէրսէին յաւելուած կրկին հեծուելեան նոքին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի արդ, տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, անտարակոյս տեսաւորութիւն, կամք ամենընդարձակ, առատութեի անպակաս, ոմ ոք զօրեսցէ տօնել հանդիսիւ պարերգութեք՝ ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարուէ, որ ցանկ դեգերիս պատրաստել պատձառս հնարից խմուտ փրկութեն։ Եւ զոր մեծն է գրեցից պատմել յապաւնիսն. քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս ոլամբարօք նոցին զմատանոյ քոյ գործ, ոչ գրեցեր երբեք սխ-

բել զնոսա· այլ առեր ի պատիւ մեծաց գովեստից առաջինն գասեալ զմարգասիրութիւն։ Ա՛ման որոյ կըրկին մեծացուցեր քեզ անուն անձառ ի խորհուրդս սոսկալիս· զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր ըզնոսին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակարարութեց· իսկ զստորնայինն ծնունդս մահկանացուաց տիրական և ահեղական պաշտելի անուամբդ պերձացուցեր։ Ընդեալ վերատին ըստ սահման կըրկռութե չափոյ, լայնեցեր քեզ կտակս գրոց Հառիւ անբաւիւ զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութեանն։ Այս և ի մարդանալդ քո միջ յերութէն, ոմանց վասն ինքեանց և կիսոց վասն այլոց զերեր առատութէ զտուրս կենաց, արուեստս բազմօրինակս, աքանչելիս ահեղագործս, նշանս Հիմարատատեսիլս։ Որպէս զի թէ անդամալուծին պակասելոյն ի Հաւատոցն՝ Հոգաբարձացն առաջարկութէ զոյոյս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար, և ոչ ըստ գործս քեսցէ առաւել քան զո ամենակար առ ախտալից մարմնոյս մաքրութէ աղաղակողիս Հառաչմանն· քանզի զի արդարև՛ մեծ են չափք հրաշից, քան զանմանքրեալս Հոգի՝ ըզ Հաստել զլուացեալս պատկեր անարիւրելի աղտոյ ներգործել· նա զի և երկրորդս առաւելութէ յաւազանին ընդՀ յաՀախեալ՝ զխառնն Հայրենի բարձրացուցանել։

Բ· Ա՛ռ ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցեալդն զո նախատապատուեցեր Ա՛ովսէսի· դու ես, որ ի մեղս և յանօրէնութիւնս վերակացու եղեր տոհմին Յակոբայ, մինչ յեգիպտացւոյն երկրի ընդ խաւարն հեթանոսաց ընտանենային։ Ա՛ռ ես, որ օրէնս գտ առնես զմեղաւորան ի Հանապարհի, ըստ բանի երգողին Ա՛աւթայ· դու ես, որ փոխատրես զքաղեղն սրտից կարծրութիւն ի լոյծ կակղութեան մարմնոյ դոյութեան բանի ընդունելութեան։ Ա՛ռ ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և Հանապարհ մի՝ երկնչել ի քէն զբովանդակ կենացն սահման· դու ես, որ տաս զերկիւղ քո ի միտս խստութեան՝ առ քեզ ուշ ունել Հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

Գ· Ո՛րՀնեալ քո շրթանցդ զաշխարհատեղծ

բերանոյդ զնածեղէն անձրևացդ զկեցուցանօղդ կա-
Թուած մատո լսելեացս դրանց բացարան, որով զո-
ձին խորամանկութեի՛ բանսարկուին Թիւնից բարձես
և բժշկեսցես։ Զմենակալդ ձեռօք զխօսականացս
շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն
ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դաս-
տիարակեալ զպատշաճականն՝ մի՛ յանդգնաբար խօ-
սելով իբր վնասխնին լքայց ՚ի յուսոյդ, և անբա-
նութե՛ մատնեցայց վանեալ յորսողէն։ Ուսուցո-
բեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդա-
նաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի՛ համարձակու-
թե՛ն շինչեալ լապտեր շնչմամբ վիշապին՝ ՚ի ներքոյ
դրուանին ստորածածկեցայց։ Ահարձ զանօրէնութիս
իմ, տեր, և ընկեա ՚ի խորս ծովոս. որ է փոքր ա-
ռակ մեծութե՛ քումդ անբաւութե, ըստ մարգարէին,
զիմն ընկղմել չարութիւն։ Կանգնեա կործանեալս
անձին նշան վստահութե՛, զի մի՛ յուսահատութե՛ն
կոթող կառուցեալ զծածկեցելոյն բողոքեսցէ։ Ահա,
Հզօր և գթած, զբժշկարանիդ կենաց վարդապե-
տարան, զի զառ ՚ի ներքոյսն մշակութե՛ կորուսչին
սերմանց՝ մանկաղաւ կամացդ հուպ առ արմատ խու-
զեալ հնձեսցես։ Ոչեմ եդեալ հետևել առ քեզ քո-
ղորիցդ ՚ած՝ պետրոսեան օրինակութեամբն, ՚ի կեն-
ցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկղուզայ. մատո
ժամանեա զաջդ կեցուցիչ յօդնականութիւն ինձ սա-
սանեցելոյս։ Ընդ քանանուհւոյն ձայնի ՚ի խորոց
սրտիս պաղատիմ՝ սովեցելոյս ասպականասպաս կաղ-
կանձողական ամենաթշուառ վտանգաւորիս, ա-
պրուստ կերակրոյ փշրանաց հացի ՚ի բազմազեղդ
քո սեղանոյ մանանաւորեսցես։ Քրա փրկութիւն նիւ-
թոյ խորանիս որդւոյս դառնութե, որ եկիր խնդրել
և կեցուցանել զնս զկորուսեալս։ Օ՛ի քո է մեծու-
թի՛, յաղթութի՛ և զօրութիւն, և դու ես քաւու-
թիւն և բժշկութի՛, նորոգութիւն և երանութի՛, և
քեզ վայել է փառք և երկրպագութիւն յաւի-
տեանս. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վկրաին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի՛ քանզի անթիւ են յաձախեցեալ և զեբռազնութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ արդասիք ընդհայց առ պարտուցս իմոց առաւելութեի, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն։ Օ ափդ ամենափիչ ամենից հոգւոց գոյից արարիչ՝ ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարձակութեի իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես։ Օ ընթացողականդ լծակցութեի երկոցունց ոտից՝ կեցուցողաց՝ յանարգելութեանս պատճառ՝ ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութեի թշուառացելոյս գրաւականես ցես զթածաբար։

Բ. Ա՛է գօսանալ ձեռաց կռփողային հրամայեցեր օրհնեալ գագաթանդ, որ զթգենւոյն տունկ առժամայն չորացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես։ Ա՛է գանողային ապիրատութեի զխոստովանեալդ ածծ սպառնացար, որ զաբուսեական մթացուցեր, զի մահացելոյս անձին բարութեի հանգամեամբ հանդերձ գործեսցես։ Ա՛է ըզհայհոյչացն հնարաւոր չարաբանութիւն կապտեցեր, որ զլուանին պատկեր երանգաւ արեան գունեցեր, զի զանհամարձակ լեզուս ի գովեստ քեզ զօրացուցես։ Ա՛է նախատողային մոլեգնութեան սաստեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացեալս գլուխ գթութեդ օծմամբ իւղեսցես։ Ա՛է ի մոլորեցուցիչն կարգալ զքեզ ածծասպանիցն՝ զօդուած ծնօթիցն բաժանեցեր քակտեալ ի միմեանց, որ զկարծրութեի վիմացն հերձեր, զի զանուսնակս բարեաց հոգիս՝ ի բերմանէ ընդունայնութեի ողորմութեամբ հանդարտեցուսցես։ Ա՛է զպահապանացն սուրս ընդերաց

իւրեանց մատուցեր, որ զորովային օձին սահեցմանն հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս իբր ի գանձարանի պահեալ, կենաց յարուցեն արժանացուսցես։ Ո՛չ ի կնքելն զչիրմին փականս կենդանակիր քո գերեզմանին՝ անպրկէն յորսայսեալս զնոսին յանդունդս երկրի սուզեցեր, զի ի տապանակի անձինս զնչխար լուսոյդ հանդուսցես։ Ո՛չ ի համբաւելն զքեզ կորուսեալ, և իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենասպառ զսերմն ծնդոցն կրձատեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրուեն բարեաց՝ անկորուստ և անվնասելի ընդ փրկեցելոցն հաղորդեսցես։ Ո՛չ յարծաթոյն կրկնակապկն կաշառաձգուելիւն, որ ի գանձարանէ հօր քումմ նուիրանաց քեզ գրաւ մատնուեն և անարգուելոյ մատնաւորեցեալն՝ զուրացողացն մոլեգնելոց, ըստ հինն հարուածոց հանցն Ա՝ովաքում՝ ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս ի հաստատուելոյ և ընդ իշխանութիւն մահու վաճառեալ՝ արեամբ քո փրկեալ, ի հաստատուի վիմիդ կառուսցես։ Ո՛րհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամենայնի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒԹՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հնծումեան նորին հակոզի առ նոյն առիթս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԱՐԴ այդ գումարտակ վերադասեցեալ քաջ բեհնորհութեան քոյդ պարգեւաց առ իմն երախտիս, ոչ ամենագութ բարերար գովեալ և ամենաշնորհ, թէ և սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ արքայազունք են և իշխանականք ինքնակալութեդ, որդիք գօրութեանց, ծնունդք վեհից, մեծափառք, լուսանորոգք և հրաշապատիւք. յաղթողական վերամբարձուք դրօշիւք հռչակեալք ըստ գլխոց գլխոց պսակապատճոյճ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիս օրհնաբանողաց, համբոյրս հեզս երջանիկս և խաղաղականս ոճծային հարազատուեդ այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթո՛ տէր զգօրութիս քո, և եկ կեցուցանել զմեզ. որք յոյժ գօրեն հալածել զմեզս, և զանյաւսութեն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն գինուորութեդ երկնային պարսն զգիշերավարն խաւարասէր սկզբնաներկակ բարւոյն այ։ Վանդ և զբնաւն այսքանեացս ձրիդ որ ի բարձրելոյն ինձ անձրևեցաւ տկարիս, թշնամւոյս և ապիտաւոր ծառայիս, անձառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի ոք գօրել խօսել, զսակաւս ի բազմացն քան թէ գիտութեդ համանգամայնիցն. առ այսոսիկ զառաջինն նուէնն յիշելով յորմէ հաստեցաւն, իբր զտկար ոք նկուն ի գօրութէ մեծէ հերքեալ պարտեսցի։

Բ. ԱՅԼ թեպէտ և այսպէս գրեցի, և զարձեալ գնոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և կաւարելութիւն հաստողիդ, և առ բարիսն իմ չարաժանութէ, սակայն ամենալոյս աննախանձ և բազմազեղուն գովեալ արարչութեդ գօրեղութէ վանեալ

են կարծրութիւնք արտաբերուէ սրտի բանսարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վհատուէ, սպառնամբք խոպանման աղբերացս երկուց, որ ’ի զգայական կանս կ’ուժեայ բղխել պատրաստեաց անկօղն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ ’ի յիս բարեգործութեանէ կենսատունկն դրախտ, ահա մի ցամաքուքէ արտասուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խռովմանկեսցէ վերատին հանել ’ի փափկութենէ նախնում վիճակին։ Ասէ յորժամ կացցէ ած համբարձեալ հրաշիւք արուեստից ’ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղաղութեան, բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամենայն ինասակարութիւնք խարդախութեանց և կարձմտութիւնք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերինն պնդուէ բախեցեալ ցնդին, ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ հողոյ խորտակմամբ փշրեալ։

Գ. Ընդ էս իմ կշտամբանաւքս՝ ըստ ձայնին Յոբայ՝ ’ի մարդկանէ լցեն, այլ յամենատես աչաց վերին հրամանիդ. մոեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս, սոսկալի սասանեալ յամենայն կարծեաց. ապաւինիմ և արդ անձամբ բեկեալով ’ի յոյսդ հաստատութեանն կենդանի անեղծ. զի ողորմութիւնք նայեցեալ ’ի յիս իբր ’ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի քաղերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ ապաձեռն անթոշակութիւնք, զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթամմամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծութիւնն կրից անտես։ Վերացո՛ յինէն, ազալեմ զքեզ, խաչիւդ լուսոյ զնեղդ վտանգիս, հոգարկութիւնք տրտմութեանդ՝ զտառապուսեալն տխրութիւնս, փշանութիւնք պատկառն՝ զբոզքոյ մեղացս, զարկուածոյ դանին՝ զհարուած մահուս, ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս, թըշնամանօք թքոյն՝ զանպատնեալն գարշութիւնս, լեզուոյն ձաշակմամբ՝ զհոգւոյս դառնութենէ։ Ո՛չ քո էն այս ամ բարութիւնք անբովանդակելիք՝ ով միոյ միածին որդի. առ որովք զբարութիւնս իմ յիշատակեալ՝ զաւկնօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ խմնալեացս պաղատանօք։ Ցե՛ս ’ի խոստովանութե

զղջման պարտութեան ամաչեցեալոյս, և տուր ողորմութիւն որդւոյս սատակման մահուն անմահի. զի ՚ի բազմութենէ իմոց մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աձեցմամբ առաւելութիւն՝ քո ողորմութիւդ աւետարանեսցի, հնչակեալ հնչմամբ ահաւորութենէ յերկինն և յերկրի: Այս քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլի առ նոյն ալեբա մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

*Ա. Ղ*ազ զրդ որպէս երբեմն յայլ ընթերցուածն որ ՚ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն ղիտաւորային ծնունդս գլխաւորացն օրինացն մարմնականացն անդամոց գրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութենէ բանի զլուսաճնելոյն զաղատարարն օրինս հոգւոյն կենաց որ ՚ի տէր Յ՚ յիշատակեցից նուաղս յոքունց, իբր յանբաւ բազմութեց ծովու կաթիլ մի առեալ:

*Բ. Վ*անզի են արդարև կայսերականք ոմանք ՚ի բարձրութենէն գահի բազմեալք, Թոշակաւն ընտրհայց լցեալք և հարստացեալք: Ոմադաւորն և սիրեցեալք իւր, արքայն և պատուաւորք իւր, պսակեալն և իշխանականք իւր, բարեհռչակեալն և հնչմունք իւր, յաղթողականն և փողք իւր, զօրաւորն և մարտիկք իւր, գովեցեալն և փառք իւր, փեսայն և պարաւորք իւր, դշխոյն և օրիորդք իւր, փեսաւէրն և հանդերձանք իւր, ազատութիւնն և ընտրհք իւր, այցելութիւն և ձեռն իւր, խոստումն և քաւութիւն իւր, պահպանութիւն և աչ իւր, պարգևն

և զարդ իւր , նշանն կենաց և ամրուէ իւր , կնիքն և նկարագիր իւր , ամպն և հովանի իւր , արուեստն և հրաշք իւր , հոգին և անեղծուածիւն իւր , բանն և կատարած իւր , ուխտադրուածքն և լրումն իւր , զօրութիւնն և հրամանք իւր , լուացարանն և սքանչելիք իւր , մանանայն և անապականութիւն իւր , վէմն կենդանի և վտակք իւր , սիւնն հրոյ և ձառագայթ իւր , որոտումն և ազդմունք իւր , յոյսն վերին և փրկութիւնն իւր , ծառն օրհնութեանն և պտուղք իւր , բարուեսակն և բարութիւք իւր : Այլ զի մի զբնաւն ասեմ յամենայնէն վրիպեցայց , իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարուէ , ի շատն ասել լռեցից և ի սակաւն ժամանեցից , բաւականացեալ ամենապիսիսն կարիս :

Դ. Այլ աւաղ յաւէտ աստանօր Թշուառացեալս եղկելի անձինս , քանզի կարդ քանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս բողոք գուժիս . վասն զի ընդ այսոսիկ առընթեր սորին գայ արդարութիւնն և կշիռքն , վճիռն և հատուցմունքն քննութիւնն և լոյս , յանդիմանուէին և դամբարքն , մերկութիւնն և պատկառանքն , յայտնութիւնն և ամօթն , ամբիծն և վաստակքն , թիւրեալն և պատիժքն :

Դ. Վարձեալ վերստին աշխարս կրկին եղկելոյս , քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անշնաբին բարկութիւք մինգաղն առ հունձն , դատաւորն առ ատեանն , հզօրն առ բեմն , սպառնացեալն առ կորուստն , բաղուկն առ դատաստանն , գաւազան խրատուն առ հարուածն , սպառազինութիւնն առ նախանձն , հովիւն առ ընտրութիւնն : Վասնզի բանն զոր խօսեցայր ընդ իս , նա դատի զդատապարտեալս ի վերջնումն աւուր հատուցմանն : Այլ կանխեա , բարեգութ , նախընծայ քաղցրութեամբ առ նուաղ հեծութիւն վարանական երկիւղիս , և զօրութիւն ընձեռեա ձեռամբդ օրհնութեան ի յետին տագնապիս առաջինդ քո օգնութիւք միսիթարել , բժշկել , քաւել և կենագործել : Այս քեզ փառք յաւիտ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲԱՆ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզն առ նոյն աղբս մաղձանաց բանի։

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ քանզի զկերպարանն առաջին լքի ի ձեռսակարին Թեղադրութենէ իմոլս ծուլութեամբ կորուսեալ ի սպառ, ցուցիչ արդ այժմուս զինոյն չիս տեսակ. ողբմելի հեծութիք Թախծեալ ի հոգի, անաչառ խայտառականօք հրապարակաւ ի չեկեղեցիս բազմութիք աղգայ վերապատմեցից բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով։

Բ. Ա՝ատեանս ընչական բարդեալ ի չինքեան ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս, ըստ տուսմարի տեսլեանն Ազեկիելի, քաղաքս անպատուար և անմահարձան, յարկս ունայն ի դռնափակաց ամրութեց, աղս տեսակաւ այլ ոչ համեղութիք, ջուրս աղտաղտին անախորժելի ծարաւեաց արբման, գետինս անօգուտ հերկագործութեիք, սահմանս լքեալ հեղեղավայրս կնիւնոյ, խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս, ՝ածանիսամ երկիրս անձնաւոր՝ որ բանսարկուին պատրանաց մշակեցայ, եւ ղընծիւղ փայտս պտղակորոյս, հատանելի ծառս ունայնաբոյս, կրկնամեռ խօսուն տունկս անյոյս, ամենաշէնջ Ճրագարանս անլոյս։ Արդ վերտին առ սոյն բերելով զայս նմանուն աւազականաց, բազմաք կրկնեցից. որ ամօթոյն դառն պատուհաս պահեալ կայ հիքոյս, կըզՃուման ատամանց և անկէտ լալուին աչաց եղկելոյս, հայրական ցասումն անսպառժելի՝ դառնութիք որդուոյս, ապականուին անմորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս, նոր կշտամբուն գտողիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս, տարտամ տպհնապի տարակուսանաց՝ եղելոց դերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն Թշուառացելոյս, ի խրձունս որոմանցն վկայելով վտանգեալ լոյս, ի ձայն ահարկու զանբժշկուին աղդեալ լքելոյս։

Ա՛հա արդարև երգս կատակերգութեան Ջնարա-
հար պոռնկի, յածեալ և կոծեալ քաջ հնչեցու-
ցեալ ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ առա-
կաւոր բանին Դասալեայ՝ որ ի պատգամին Տիւրոսի:
Օ՛ի թէ նա զդիպուածն փոքր անցից ապառնեացն
ի մեծոյ իմն ապաւորեալ, բողոքեր դիմակս դիմակս
կերպիւ կերպիւ աւաղականաց, ըստ կոծողացն կա-
քաւելոյ, իսկ առ իս ո՛րչափս և որպիսի՛ս ձայնս
մրմնջեցից վկաւեցուցիչս. որ գալստեանն ետն սպա-
սեալ առանց վրիպանալոյ, մնալոյ անպատրաստ և ան-
հանդերձելի: Ա՛րդ եթէ զգաստաստանացն ահաւո-
րութեն կրկնեցից, բազմացուցից ինձ աշխատ. ապա
եթէ զփորձն իսկութ՛ ցուցից, յաձախէ ինձ երկիւղ.
իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւե-
լուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զսոյնս՝
և ո՛չ անագան ապաշաւեցի: Ա՛յլ խնայեա՛ յիս, գո-
թաճ, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգև
Տէ՛ր թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՔԱՒԱՄՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՄԵՆԱԿԱԼ ահ բարերար ստեղծիչ զոլո-
րիցն՝ լուր հառաչանաց ձայնիս վտանգի, և յերկիւ-
զէ տագնապի ապագայիցն կարծեաց փրկեա կարօղ
զօրութ՛ զերծեալ՝ի պարտեաց. քանզի բաւական
ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անբաւ
մեծութ՛ և իմաստութ՛ անսահմանելեաւ:

Բ. Այլ քանզի ուշիւ մտացս տեսեալ՝ի հեռուստ
զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ նկատեմ
ինձէն աստանօր կանխաւ զիւն լուսոյ սրբոցն յու-

սոյ, զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յէից առ պատսպարան փախըս տեան. ոչ անդունդք խորոց, ոչ վիհք վհից, ոչ բարձրութիւնք լերանց, ոչ անձաւք քարանց, ոչ կարծրութիւնք արձանաց, ոչ ծերպք ծակաց, ոչ փապարք փոսից, ոչ սորք հեղեղաց, ոչ բաւիղք խորշից, ոչ շառաւարանք յարկաց, ոչ ծածկութիւնք սենեկաց, ոչ եմակք հովտաց, ոչ ծործորք դժուարաց, ոչ վերադրութիւնք բլրոց, ոչ արձակմունք ընչից, ոչ անբաւութիւնք ծովուց, ոչ սահանք յորձանաց, ոչ հեռաւորութիւնք եղերաց, ոչ ողջմունք ձայնից, ոչ հեղեղք արտասուաց, ոչ տատանմունք մատանց, ոչ համբարձմունք ձեռաց, ոչ պաղատանք շըրթանց։

Ե. Այսոցիկ սաստկութեաց մասանց անձողոպրելեաց դու ես, տէր Աստուած, հնարք և դադարք դիւրութեամբ և անդորրուն փրկուն ամենամեղս հոգւոյ. արդ հայեա՛ ի յանդերձ վտանգիս շրջադրութեան միայնոքաղցր առ ամենեսեան։ Լսեա՛ սուսերաւ յաղթական կենաւղին խաչիդ ղցանցս վարմիս, որ յամենայն կայից պաշարեն ի մահ զգերիս, և հան՛ ի յանդորըզոտս սասանեալ թիւր ընթացողիս։ Աժշկեա՛ զհրատապ ջերմնական տոչորումն մղձկեալ սրտիս, մերժեա՛ զդիւայինն չարաճնարութեանս շշուկ քո պարտաւորիս, հալածեա՛ զյուսահատ անձկութեն հոգւոյս մթոյն չարի կենակիցիս, ցրուեա՛ զծխամած թանձրութիւն բռնութեն մեղացս երևոյթ մտելոյս ի յիս, կորո՛ զզազիր թիսատիպ կրից ապականութես կալիս։ Լորոգեա՛ զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց մեծութեն անուան հզօրիդ յոգիս, զօրացո՛ ըզընդհարիդ փայլումն ի դեղ դիմացս և ի կերպարան տեսութեն մտացս հողեղինիս, յարմար յերիւրմամբ կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութեն զտեալ զմեայլս մեղաւորիս, ձայնին կենդանի անեղծ երկնաւոր լուսով քո ծածկեալ յօրինակս երիս։ Օ՛ի դու միայն ես օրհնեալ ընդ հօր ի գովեստ հոգւոյդ սքեղ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՓԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծումեան նորին հսկողն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Արդ՝ ով կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ՛ի քէն և ոչ լինէ. որ՛ի ծագել անստուեր նշուլից ողորմութեանդ քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խղին կապանք, խորտակին շղթայք, կենդանանան մահացեալք, բժշկին հարուածք, ողջ ջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախուստ խաւարին, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, էքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և Թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի։

Բ. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. Թոյղ լինիմ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութիւնդ, զի դու միայն ես յերկինի անձառ, և յերկրի անշնին,՛ի տարր գոյի, և յեղծս ծագաց աշխարհի, սկիզբն ամի և յամի ամենայն լըմամբ, օրհնեալ՛ի բարձունս, և քեզ ընդ հօր և հոգւոյդ սուրբ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն ապերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր ամ գթասո՛ւր, փրկութե՛ն և ողորմութե՛ն, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան և առողջութե՛ն, լուսաւորութե՛ն և կենդանութե՛ն, յաղթութե՛ն և անմահութե՛ն, յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութե՛ն քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենաստեղծ, կենդանի, գովեալ, ամենակատար, մերձ՛ի հեծութիւն համայն եղելոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ, որ ո՛չ ըմբռնեալ վասն քո և ո՛չ կապեցեալ, ո՛չ կախեալ և ո՛չ բևեռեալ, ո՛չ կուփեալ յանուն մեծիդ և ո՛չ անարգեալ, ո՛չ լկեալ և ո՛չ նշկահեալ, ո՛չ խորտակեալ և ո՛չ մահացեալ, և արքայութեանն արդարոց մասին անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնակատնաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոց, փառաւորեցեր առ յոյս փրկուե՛ն՛ի սպառ լքելոյս։

Բ. Երկնեալ օրհնեալ և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք կանգնեա՛ի կործանմանէս, բարերար. բժշկեա՛ի հիւանդութեցս ախտից, ողորմած. յեղերաց մահուս դարձո՛ զիս՛ի կեանս, կենդանութե՛ն. քո եմ և ես, կեցո՛ ընդ նմին, ապաւինուե՛ն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո, յարութե՛ն, կեանք, անմահութե՛ն, անպակաս բարութե՛ն, անապառ հնարք, անփոփոխ ներողութիւն, աջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ։ Յամեայց տեր և փրկեցայոյց, ակնարկեա՛ միայն գթութե՛ք՝ և արդարացայոյց, ասա՛ բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայոյ, մուտպիր գթիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայոյ, առատաձեռնեա՛ և արդէն՛ի քեզ իսկ պատուաստեցայոյ. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլ առ նոյն ազգս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ պատճառ կենաց անախտակաց նայ, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յս Ք. Աած ամենեցուն, իմանալեաց և տեսականայ. ահա դու ի յիս ըստ մարդարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութիւ. առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին ողջացեալ ընչով և մարմնով, ամենայնիւ կարօղ և անվանելի։

Բ. Որ ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութեան, ոչ փոփոխս մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ սրագործութիւ, ըստ երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ ի վերիպութիւ և ամենասխալ տարակուսութիւն։ Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց ամ ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամ ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայնն հնարաւոր է, խմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամեն կատարեալ է, քո կտակն աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն ընտրեալ է։ Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուաղութիւ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութիւ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութիւ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ, ոչ վրիպեալ ի բարկութիւ, ոչ այլայլեալ ինչ ի ցասմանէ, ոչ սխալեալ ի խստութիւ, ոչ ամբոխեալ ի խռովութիւ, ոչ դղրդեալ յանգիստութէ, ոչ փոփոխեալ յողորմութէ, ոչ պակասեալ ի բարեբերութիւ, ոչ լքեալ յայցելութիւ, ոչ տկարացեալ ի

փրկութիէ։ Դու սկիզբն և լրումն ամենայնի, և՛ ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔԱՌԱՄԵՐՈՐԴ ԶՈՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հեծութեան նորին հոկտի առ նոյն աղբս մաղթանաց բանի·

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Աստուած անսահման, ծնունդ ամ հարա- զատ անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց, Որ թագաւոր, լոյս՛ի խաւարի սրտից մթացելոց· ընդ մեզ լսմամբ և ընդ առաքչիդ խոկութիւ, մե- ծայնով զքոյինսդ ծանուցանող հրաշապէս։ Ամէն քո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեացդ զքեզ՛ի վերուստ, ուր փառակիցդ ես արարչութիւ. այն- քան հոգացաւ փրկութիէ իմոյ տարագրեալ գերւոյ, մինչև զքեզ խոկ մանեաց մարդկան։ Խոկ դու կա- րօղ գոլով՛ի վեր քան զմիշտս, զտնտեսութեանն ա- ւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումն զմահուն ձաշակել բաժակ անթերի մարդկութիէ և անպակաս ածութիէ։ Այս հոգիդ՝ որ կենդանարար՝ որպէս քո և հօր քոյ իսկակից, և համապատիւ էու- թիէ ծնողիդ և ծնեցելոյդ։ Ամի Աստուածդ կատա- րեալ՛ի դիմաց երից անորոշելի հատուածոց, անըս- կիզբն և անժամանակ, բնաւին բարերար, համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից, անքակութիէ և միալ բնութիէ փառաւորեալ։

Բ· Խոկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յեութիէ՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանքննին ծոցոյն, ոչ անխոհեակ յօրդիդ՛ի համապատիւդ և՛ի սիրելիդ, այլ կամաւ

նուիրեաց մահու չարչարողացն զինու, ըստ մարգա-
րէութեանն Օ աքարիայ. վասն զի զարհնուլ սրոյն ի
վերայ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապե-
տին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն
նուրբ նախատգրին և ուխտադրութիւն խորանին և
նուիրուածն արեան սպանդին և առակ խորհրդոյ
աբրահամեան պատարագին, զիրկութեն Թշուառա-
գելոյս ի կամաց կեցուցչիդ յառաջադոյն նկարա-
գրեր. և արդ հիմ արտիս անձն իմ կործանեալ՝
ուչ յաճուստ հնարաւորութեց, այլ ի քումդ ինք-
նագործ հակամիտութեց. կամ ընդէր զիս խոտվես՝
յուսահատութեք սատանայականաւ զմիտս հարեալ.
յուսա յաճ, խոստովանն լեր նմա, և նա հոգայ վասն
քո, ըստ դաւթեան սաղմոսին, և այլ մարգարէի կեն-
սաբերոյն բանի:

Գ. Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստողին ի վեր
ե քան զսահման կշռուած մտաց հրեշտակաց և երկ-
րականաց. և եթէ բեւրս կրկնեասցի, ուչ լինի չա-
փեալ. քանզի անբովանդակելոյն և բարերարելն ե
անձառելի: Ա՛ւա զի ոմն օրհնեալ զոմն օրհնաբա-
նեալ յերրորդական համագոյութէն առաքեաց. իսկ
նա ի հաճութեի կամաց առաքչին մեռաւ. և միւսն
ահաւոր՝ ի յերկուցն հաւանութեի՝ մեծաջան բաղ-
ձանօք մաղթէ: Իսկ համաբարոյ միակամութեանն
ցուցակ՝ առ ի զնոյն բարի ներգործել, որպէս հո-
գին կենդանացոյն և բանն բանականին, պայծառու-
թիւն փառացն և կերպարան էութեանն: Ա՛ւ-
կեանն փոյթ, առ ողորմութեին սեթափ, առ ձեռն
կալութեին պատրաստ, առ փրկութիւնն կազմ, առ
առաւութեին յորդ, առ յաձախութեին զեղուն, առ
անբաւութեին լի, առ անհուաղուին փարթամ, առ
երկայնմտութեին Հոխ, առ անհասութեին բարձրեալ.
մի Երրորդութեի կատարեալ ի յանձանց երից, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Լի արդ յոյս բարեաց անկեալ ի սրտի՝ անձն իմ կործանեալ, և գօտեաւ հաւատոյ պլչեալ զերիկամանցդ երկակի մասունս՝ զկրկնապըղտոր խորհրդոցդ զյանկականիդ գործարան, խոստովան լեր բարերարին ամ՝ զմտացդ իբրև զգործոց, զխորհրդոցդ իբրև զլուսեանց, զանտեսիչն իբրև զյայտանեցելոց, զսրտիդ ծածկուածից իբրև զբարբառումն ձայնից, զակնարկուեդդ իբրև զարդիւնակատնաց մեղանաց, զաղդել շրթանցդ իբրև ի գլուխ ելելոց չարի, զոտիցդ հետոց իբրև զպատուիրանաւն ամ վազղագ, զձեռացդ ձգումն առ ցաստումն իբրև ի հեղումն արեան գործողի, զծիծաղելն քնաւին իբրև զկամաւորական լքումն ընդհի, զերդմնակատնն, որ թէ ի հանդէպս թէ ի տարադէպս, իբր զգործակցութիւն խաբողին, զամբարտաւանութիւնն իբր զհին կործանիչ նախասահեղծին բարձրութիւն, զսրտին նեղութիւն իբրև զթերութիւն հաւատոց, զմեղկութիւնն իբրև զպարտուի զօրաւորին պնդութիւն, զտրտունջն առ վտանգս կրկին՝ իբր զուրացուի ուխտին որ առ տէրն, զապաբասանութիւնն իբր զթոռն իմն անգթութեն, զամբարհաւաճութիւնն իբր ոչնիւք առ վհկան գոռոզութիւն, զհպարտութիւնն իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց, զակամայիցն ընդ կամաւորացն, զընտացելոցն ընդ հաւանականացն, զեկամտիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնն ընդ ապաստուածութեն, զփոքունսն ընդ սաստկագունիցն, զնուազունսն ընդ յոլովիցն, զանձառիցն խմոց իբր զձառելեաց գիտողին, զանպրելոց ինաստցն իբր զնկարելոց տեսողին ի յարձան մաղնեստիս վիմի, զթեթևապունիցն առ խտիր մտաց իբր զտուար

ծանրութեի բեռանց, զինդիր չափոյ ծածկելոյն իբր զձիդով պահանջումն սատերն սակի ՚ի բերանոյ կիտին կորիւնի չորեքդրամեան կշռուքեն, զանդնդակաձայնացն գործոց իբր ՚ի յականջս այ արագ ժամանելոց։ Օ այսոսիկ յաձախեաւ կուտեաւ կրկին յանձնառութեամբ, վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեք զէոցն իբր զեղելոց, ընծայեալ այ զպարտութեի վանեցեալ անձինդ. զի ընկալցիս ՚ի փոխատուէն զնորհօք Թողուեի պարտուց մեղաւորին, զոր տերն արդարացոյց և հրաշափառապէս հռչակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ զղջմանն քան զպարսաւանս մեղացն։

Բ. Խարդեաւ և դիւեաւ անձինդ մեղապարտի բամբասանս յոքունս զբոյսն խոհերս բազմամանեայս, անձն իմ կշտամբեալ յոքնախթանդ բանիւ. զբաւութեին, զանօրինութեին, զվրիպուքին, զառ ՚ի մարտին հանդիսե փախստա, զպարտուքին, զմոլեգնութեին, զամպարշտութեին, զապշութեին, զթմբրուքին, զբունն արթնական, զառ ՚ի յրնթացսն զնիրհումին, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրութեի, զզրպրութեին հաձութեի, զյամենալն ՚ի նմին, զփափաքելն այ ատելեացն, զաներկիւղութեին, զանսաստութեին, զանհարթութեին, զթերուքին, զթիւրութիւնն, զլուծուքին, զձղդուքին, զանկապ արձակումին, զծիծաղականն, զվընջողականն, զկատակերգականն, զդայթադղականն, զպատրոզականն, զանդեպ քաջութեին, զանյարմար մարտն, զառանց օրինի ապիսեին, զխեղդմունս հոգւոյն, զտատանողականն զերկչոտութիւնս, զբազմաստեղնեան ձիւղն զրահետականս, զանպատկառ փարաքմունսն, զգժտութեին, զգժգնութիւնն, զանդատ ատելութիւնն, զմարմնջմունսն դիւրըմբռնողականս, զփոքունցն զանկշռուքս, զխոստմանցն դրժողութիս, զուխտիցն մոռացութիս, զնմանեացն այլակերպութի, զկեղծեացն քողարկութի, զփառամոլութեին մորոսուի, զյօնիցն յաւակնութի, զապիրատութիսն, զինքնասիրութիսն, զնախագահիցն տենչութի, զհատուցանելն եղեռնականացն, զնոցինսն զանշահաղձատանսն, զվայրապար բերմունսն, զընթացակցութիսն խորա-

մանկութիե քանսարկուին, զբանին սերմնակաթուէ, զվաճառուին կենացն ընդ գնոց սատակմանն, զկոչուսա աւանդիցն, զհայրենեացն ծախս, զկապարանն ձգողական զփակով լծոյ երկնոյց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիես, զյարաթաձաւ տղմաբնակութիս, զլքուին լաւացն, զընթադրուես անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական, զնորոգ մտացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաչման հագագին, զեութիե շնչոյն, զևան քան զսահման կաղ նոնացն դրութիե՝ զիշխանականին զամենատիւռ բացարձակութիւն, և զոր չէ ձառելի և կամ դրելի և կամ պատմելի և կամ յերեսս դիմաց բերելի։

Գ. Այլ արդ զիարդ բժշկեացիս, անձն իմ եղկելի, ՚ի յայսքանեաց սիգաց խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի տարագիր անողջանալի, ըստ մարգարէին. քանզի մի ՚ի վերադրելոյդ բաւականապէս զօրէ սատակման, թէպէ թէ այսքան դասք սպանողաց դժնեից դահճաց շուրջ պաշարողաց։ Այանաւանդ զի ոչ այսու ևեթ նմանագրութեամբ կշռի տարաբոյց տարժանեցելոյս, այլ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ ՚ի ստորին մասունս ծայրից տանոյն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մնչկեղէն արկեալ ամփոփէ զելոյն շաւիղ կապարանին շրջափակութեամբ, յուսյանի արտաքուստ բարիոք, իսկ ՚ի ներքուստ համբաք չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և գործնեայք սատակման և մշակք մահու։ Այրդ այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեան տաժանեաց թշուառաբիւրն թոշակք, անձն իմ պարտական կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալար ՚ի քեզ, զոր թշնամին սերմանեաց ՚ի վերայ յօրենոյն՝ յագարակի աշխարհիս. ով այր անմաքուր՝ ամ պարիշտ և ծոյլ, բնաւին առեցեալ, սիրօդ մտացդ ախորժմամբ զլցեալսն ամ անառակութիէ. և զոր առաքեալ յուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց, սատուստ սկսեալ մինչև ՚ի կատար կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են, ասէ, յայ իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսին գործեն և կամ կամակից են, արժանի են մահու։ Այրդ ես

ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սատակման ՚ի մահ դատապարտուէ . այլ անխայեա յիս ողորմութեամբ՝ բարեգութ , կենդանի , հզօր , կամարար , կարօղ , հնարաւոր , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

ԲԱՆ ՔԱՒԱԱՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հնծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի .

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա . ԱՐԴ վերսկեալս ես յաւէտ ամենասպատիժ , միշտ դժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ , արածօղս զերամակս զաղերս վայրագասունս խոզից արօտականաց դարշուէ մեղաց նախատվարձկանութեանց , հովիւս տածողական զՀօրանս ուղղացն ամայաբնակաց ՚ի վրանս հովուացն , ըստ երգոյն երգոց առ իս առակին . որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք գիտել , թէ յո՞վ և յո՞յր պատկեր և վասն ո՞յր գոյացայ :

Բ . ԱՀա ՚ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց , ըստ ձևոյ հրեշտակի կառուցաւր , իբր ՚ի Թռիչս Թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել , ո՛վ յիմար , զի՞նդ քեզէն կորացար յերկիր , զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս , ընդ ցիուս անապատականս համարեցար : Իբր զՀրաշագ բազմաբեռանեան ՚ի յաշտանակի մարմնիդ հասանեցաւ զըլխոյդ բոլորութիւն , զի և այսու ՚ի յօրինակէն չնորհի մի օտարասցիս զնաճ տեսանել , և զինացականացն իմաստասիրել : Կանականութենն յարգանօք կրկին Ձոխացար , զի դյաղթանակ բարեմասնութենն որ առքեզ եղեն՝ անարգել լեզուով խօսեացիս : Զեռնդ

հաստմամբ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն անօրինել զանտեսուել, իբր կցորդ համացեղութիւն ամենաբաշխ աջոյն ՚այ՝ ՚ած կոչեցար։ Արիւց հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ ՚ի քեզ ընդ նոսին ՚ի նոյն և պատշաճական մասունս չափոյ ազդողականաց հինդ ըզդայութեց, զի մի և երևելիդ նիւթականուն քումդ տեսուն մոացդ դիտման անդատ եղիցի· զի ոմանք ստուարք են և զօրաւորք, և այլք փոքունք են և պիտանիք, կէսք կարծրակերտք և ազդողականք, են և զողտրականք և պատուականագոյնք, դարձեալ կարևորք և պատկառելիք։ Ոսկ Թարգմանութիւնք սոցին տեսութե ՚ի քեզ են նկարեալ իբր յարձանի անչնջականի անձն իմ եղկելի· որպես զի և տարը ժամանակաց և շարունակ հետևման աւուրցն առպատակ ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեցիր։

Գ· Ոարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ ՚ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի· իբր զի առանց բնաւից զուգամասնութե կապակցել լծով հաւանականաւ զվերնն ընդ փոքուն, ինասեալ է հաստուածոյն անարատութի յանուն Ոչխի ժողովելոյն· որպես ՚ի հատուսն և ՚ի նուաղուն միոյ յանդամոց անարգացս պատուաստելոցս ՚ի մարմնի, կրճատեալ լինն է յօրինուած կազմութե մարդոյդ քումդ սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութե պատկերին յանարգ փոփոխուն։ Ոյս արդ այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութե եղական պատկեր ՚այ՝ կշտամբեալ ՚ի սպառողի իմ գերի· և թէպետ յառաջին նմանուէն կորզտեալ գտար պատուիրանին յանցաւորութե ՚ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսաղարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանուել ես կերպարանին· և արդ ընդկր կորուսեր զփառան երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր Ոդէն դարաստանի· ընդկր փակեցեր քեզկն քեզ զերկին, և զվերելոյն դուռն աղեսեցեր· ընդկր խաւնեցեր ընդ ջրոյն մաքրուե զանա արտասուացդ տարժանուե· ընդկր զլուացեալ զձորձ վերարկուին

պարշելլն գործովք զաղբացուցեր. Հիմ զեզեալ Հանդերձեալն մեղաց պատմուձան անառակ վարուք քեզ արկեր. ընդէր զանսողացդ ոտից սրբուԹի՛ Հանապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէր կրկնեցեր իրաւադատին զուխտազանցուԹիւն հին պատուիրանին. ընդէր մերժեցար՝ ի պաղոյն Հնորհաց, իբր զ՚դամ՝ ի ծառոյն կենաց. ընդէր նենդեցեր քեզն քո կամաւ զանստուեր յուսոյն յարակայուԹիւն. ընդէր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նըպաստեցեր. ընդէր զինեցար ընդդէմ քո ներհակ, ա՛վ ընդունարան խելագարուԹե՛. ընդէր որսացար՝ ի ծուղակ մահու՝ Թողեալ զարահետն վստահուԹե՛. ընդէր կարԹիւ պատրանաց ածար Հաղորդդ մարմնոյ կենդանարարին: Ա՚յլ վերստին յուսացեալ՝ ի նա կարդա նմա ապաւինելոյս քաւիչ նորոգիչ փրկիչ կեցուցիչ և կենդանարար, ողորմած խնամօղ մարդասէր և անոխակալ բազմագուԹ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՒԱՒՈՒԱՄՆԵՐՈՐԴ ԵԻԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծուԹեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղԹանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՚Ի արդ զի՞նչ դոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորուԹենէ, բայց եԹէ Համրանալ և Հող՝ ի բերան եղեալ լռե՛լ՝ ի սրտի, ըստ մարգարէուԹե՛ն խրատու, ահա՝ ի բարւոյն կարկառեալ՝ ի յոյս: Իսկ եԹէ զիսկանս շարժողուԹեան շրԹանցս բացիլ, բռնադատեցիլ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգուե՛ լալեաց բազմուԹե՛ խեԹ մտացս յառաջադրե՛:

Բ. Ա՚ւ արդ ողբակիւղ մեծ մեղաւորին անօրինե-

լոյ կամաւ առ ՚ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղայ տէր մեղայ, և անօրէնութեց իմոց լինձէն վկայեմ։ Իւսեաւ ընդ նմին զբանս յիս ներօրդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակ անձինս մեղաց՝ քան զՀիւղ երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ։

Գ· Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի զթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն ա՚ղերսանաց արտօսրածին ողբովք գոչման ՚ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ, հայր զԹուԹեանց, ՚ած բոլորից, չեմ արժանի կոչիլ և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաքան վարձկան։ Նկալ զսովեալս տարագրական, պարտական ՀնասուցՀ. և զգաւ քաղցոյս լլկանաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հայցիւդ բժշկեացես։ Եր ընդ առաջ քո ողորմութեդ ՚ի սկզբնաւորս ապաւինուե. զգեցո՛, զԹած և անուխակալ, անօրինեալս մեղապարտի զնախախապուտ հանդերձին ծածկոյԹ. աւանդակորոյս ձեռացս աղաՀեղեալ մեղօք՝ զինիք մատանւոյն համարձակուԹե ամենառատ կամօք մատուցես. զգարշապարացս ԹշուառուԹե մերկուԹե ոտիցս՝ պատսպարուք աւետարանական ամրավերարկու օդիցս կօշկաց ՚ի յօձին Թիւնից միշտ ամրացուսցես։ Ո զուարակդ պարարակի եղինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրՀնեալ խոկապէս մարդասիրուԹե, կարօտելոյս բարեաց նուիրեա. որ մատուցեալ միշտ և անպակաս ՀնոյՀ ՚ի լրուԹեան, յարակայ զինեալ ՚ի սպանդարանի անԹիւ սեղանոց անսպառուԹե, բոլոր յամենեսին և բնաւ յամենայնում, էուԹե յերկինս և խոկուԹե ՚ի ստորինս, աննուաղ մարդկուԹեամբ և անԹերի ՚ածուԹե. փչեալ և բաշխի ՚ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեացե առ ՚ի նոյն մարմին իւրում զլխոյ. քեզ փառք ընդ նմին, հայր ողորմուԹե, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՔԱՒԱՒԱՄԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի, աննկրկնելի ակնդ նկատօղ, ճնօղ անքնին փառաց միածնիդ. իրաւացուսցես զնմա ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս։ Ցօնեա զկեալս կորուսեալոյս վերնականային պարերգութեամբ, աւետարանեա բանիւդ օրհնութիւն զկենդանութիւնն իմ մահացելոյս, զբարեբաստութիւն կամացդ յայտնեա, զովեալ բոլորից գոյից եղելոց, ստացիր անուն քեզ անձառ և ինձ թշուառիս նորոգ փրկութիւն, կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան, զմիով հոգւոյս մահու ջրեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելւոյ, վատահութիւն փրկութիւն բարեաց արեամբ Քնի քո նկարեսցես, ցոյց զսքանչելիս քո բարեգթութիւնդ ի ձաշ հարսանեաց քումդ հարազատի։ Ալի փակեսցես դիմելոյս առ քեզ զառագաստ սրահի կենացդ յարկի, մի տրոհեսցես ի բազմականացդ և ի բարեացդ քո զրկեսցես, մի պահեսցես ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութի, մի կնքեսցես ի քսակ բարեացդ զզաղութեանդ իմոց գարշութի, մի երկարս լինձ զվէրս մեղացս ի յախտալից մարմնիս ծածկեսցես, մի զվիրտութի նեխութի ցաւոցս լինձ անկակից մնհու ինայուսցես, այլ բարձ բանիւ քոյդ ողորմութի զժանտութին ապականարար, որպէս զի զատեալ ի հիւծմանց ախտից՝ առողջութեն պատրաստեցայց. Հնարաւորեա, զթութեդդ հայր, մեծ խոցուածոյս զօրեղ սպեղանիս, կարևւոր կործանմանս՝ բարի այցելութեա։ Օ՜ի քո եմ, տէր ոգեսէր, թէ և առ մի նուազ բեւրս մեղեցեմ, բայց ոչ գրեցայց համայն

մեղուցեալ, տուիչ կենաց իմոյ բարերար, ՚ի շնորհ պարգեւաց կենաց քոց ապաւինեալ. զի ձանաչելդ զքեզ բովանդակ արդարութիւն է, և գիտել զոգորութիւդ քո՝ արմատ անմահութիւն, որպէս և կանխաւ իսկ զրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո, ասէ, ամենեցուն, խնայել տայ քեզ յամ. և դարձեալ, մծտ է քեզ յորժամ և կամիս կարօղ գտանել։

Բ. Ա՛յս Աողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ որքան զինս ինձ զուգաշափիլ. երբեմն որդի, ապա առեալ. երբեմն միջնորդ խաղաղութե՛ այ ժողովրդեանն, և յետոյ խորոց որոշման բաղում խուովութիւն. երբեմն օրինաց կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդոստնեալ, և զօտարին անուն ծանուցեալ։ Ընդատձաւ օյտօղ, անկարօտ զրկօղ, անսովելի գող, զրգեալ տրտնջօղ, փափկացեալ փախստական, սեղանանենդ սարտուցեալ, անպատասխանի վնասապարտ, քաղցրամոյց հայհոյիչ, զաւակ հայրատեաց, կտակարանացն մատնիչ, Ընտանեաւ չարախօս, մոռացօղ երախտեացն, իմաստուն սխալական, ամենագէտ յանցաւոր, ամենաթագաւոր զղջացեալ, տարակուսեալ աշխատօղ, աղաչաւոր կռապաշտեալ, յամրայլին դարձաւոր, կաղակարծ ընկալեալ, կասկածաւոր հաշտութիւն, յապայս յիշատակ, յերկբայս փրկութիւն, չաւատալի գիւտ, ՚ի մանկէ մնացուածք, խարդաւանեալ գերի, կիսակատուր պրծեալ, կամաւոր անձնամատն, տրմարդի յղփացեալ, բաղմավրկիպ հանձարեղ։ ՚Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ամենայն ուրբք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ և փոքր գովեստ՝ իբր ՚ի վերայ ինքնագրաւ կորստական, երգիծանութիւն խառնեալ ընդ աչխար. բան նորա թելադիր բարգաւաձումն ամենայն հասակի, և խոտորումն նորին ՚ի չրթունս զնաւից թառանչ թախծութիւն ողորմելիս ինն ազդեալ։

Գ. Օ՛ արմանամ, վհատիմ տարակուսեալ ապշութեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պատահեսցէ. զիա՞րդ անկաւ ամբարձեալն, զիա՞րդ սա-

սանեցաւ Հաստատեալն, զիաթդ կորճանեցաւ կա-
ռուցեալն, իբր օտարացաւ ծանուցեալն, զիաթդ
զակատեցաւ զաւակին ընտրուեթեան, զիաթդ սրացաւ
վերձաւորն, զիաթդ աղօտացաւ փայլեցեալն, զիաթդ
պատանդեցաւ աղատեալն, զիաթդ անօրինեցաւ ու-
սուցիչն, զիաթդ նուաղեցաւ հաչակեալն, զիաթդ
անարգեցաւ փառաւորն, զիաթդ փոքրկացաւ մեծա-
ւունն, զիաթդ ամպարշտեցաւ բարեպաշտն, զիաթդ
ամբարհաւաճեցաւ ընտրօղն, զիաթդ ունայնացաւ
պատարուճն, զիաթդ կտրեաց զուխան որ ընդ բարձ-
րելոյն։ Պատկառեմ ասել, թէ և ընդ սանդարա-
մետականին կապեցաւ. զի կայր նորա և կռոց,
ուստի սէրն ընդ պատկերաց, վասն էր կամքն ընդ
խտրանաց. զիաթդ ոչ յիշեցաւ յանդիմանուեթիւնն
Յամուէլի առ Սաւուղ եղեալ, հմայք, ասէ, մեղք
են, և ցաւս և աշխատուեթի ածէ թերափ՝ի վերայ.
զիաթդ ոչ հայրենի յանդիմանուեթին, կուռք, ասէ,
հեթանոսաց դէք և անշունչք են, և նման նոցա լի-
նիլն պաշտօնեայք նոցա։ Տէր միայն ածէր զնոսա,
Մովսէս նախագրեալ յառաջաձայն ձաղանօք սաս-
տիկս իմն ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա ասէ ածս
օտարոտիս, զոր ոչ ձանաչէին հարք նոցա։ Որ է
մահամատոյց այլազնեայ արձանն Փագովրայ, ուր
տգէղն և անպատճառելին սիդոնացւոց իգական առե-
նանդով ձուլածոյն, ուր կանացի կերպին անգրելին
խայտառակուեթիւն զաղիր տեսակին, որով ամօթոյ
մարգարէքն զանասնօրէն դիմեցուին անխտրաբար
յանուն չարուեթեան անժուժկալ դիւրին անձճաբար
ձօնեալ մնելին։ Տարաւ զէուեթի բարեբաստուեթեն՝
որ զնախնին որսաց՝ի կորուստ, յաղեթեաց մեծու-
եթին իմաստիցն առաւելուեթէ, դերեաց գոռոզու-
եթին, յիմարեցոյց փափկուեթին, վանեաց արձաթին
ծառայեցուցիչ, յոգի դատեցաւ զայրն ոսկեզի հին
զէնն կորճանողին, ՚ի գրկացն այ հանեալ ՚ի յոտս
ստամբակին գնեցոյց, մեռոյց մեղկուեթին, թմբրե-
ցոյց ծուլուեթին, արբեցոյց շուայտուեթին։ Ով դիւ-
րապատիր մարմին երկրածին, որոյ՛ք ձայնարկու-
եթամբք զքեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ-
նա հանդիսի ընդդիմաբանուելս, այլ ամենից սխա-

լողայ՝ կամաւ վըխլելոց. վասն զի նուաւ է իմանալ, թէ անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եթէ ոչ Աստուծով դատեալ ընտրեսցի. որ զի թէ առ այս պայմանի յիմար ոք լոյծ, և՝ի հաստչին կամ յուսաստ ցի, ոչ ևս՝ի նորայոյց անտի լինչ կրեսցէ։

Դ. Աչ քանզի սաստիկս և քաւմնելիս ունի Աոզոմն զդարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կշտամբութեամբ, իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զիսկն ոք նկատեսցէ, Աննայնութքն է իմանալի. այլ և՝ի մատեանս քահանայիցն և՝ի գիրս Աքիայ սիլոնացւոյ, յորում զիոյթն իւրում ընթացիցն արտասուելիս իմն յեղանակէ. զուր ջան, անօգուտ վաստակ, անմիտ հեաւուն, անշահ արշաւանք, անկայուն երկիր, օտարին իմաստք, ոչընչից հոլովք, բամբասելի բերք, անյարմար վարկածք, մնոտի սերմանիք, աւազափուլ շինուածք, ապականացու ստացուածք, քամահանաց տաժանմունք, ինքնամարտ կռիւ, ընդ ոգւոյ իւրում դատ, ընդունայնաթոյն քիրան, վնասակար փափաք, կորստական շաւիղ, վըխլակ Ճանապարհ, կործանական կրթուութիք, մոլորապատիր վարժուիք, հանապազասխալ տեսութիւն, ակնայայրատ պչրութիւն, պոռնկակերտ կերպարան, ախտաբորբոք նիւթ, դժնեաստեսիլ գոյն, յոքնատխուր գեղ, յոլովամեղձ ծուխ, շոգի ցնդելի, վաճառ մերձ՝ի չառ, տաղտուար քակտելի, ընդվայր աղաղակ, անպատճառաւոր ծաղր, արհամարհելի ասպարէզ, անձնասպանդ գիր, սատակչական ելք, անճաճ մտածմունք, ստայօդ Ճառ, զայրացուցանօղ զրոյցք, եպերանաց խօքիծ, խելագարութեան խնդիր, ամօթանաց ցոյցք, խայտառականաց յայտնութիք, առակ ապառնեայն, ապաշաւանաց գործ, ըմպահկանաց պատմութիք, հեղգացեղոց օրինակ, խորխորատ ծածուկ, որս խաւարային, մահադուշակ վիհ, անյատակելի անդունդք, ուղեկցութիք սպանողաց, յիմարութեան բարբանջմունք, դարանակալաց վայր, խարխուլ յարկ, շինուած սասանեալ, կամուրջ խախտեցեալ, երևոյթ փախչելի, խաբօղ շողոքորթ, անոպայ մատնիչ, ընդդէմ բարձրելոյն հակառակութիք։ Օ այս ամ մասունս

բանից խոստովանական կանոնադրութեի, ի սիրոս բնաւից նախասերմանեաց Յողովողս կանոնադիր դարձելոց ղղլման. որպէս զի մի պարծեսցի ոք ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանն միայն ունի, և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ։

Ե. Այլ արդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ որքան զղջացաւ, մի՛ ի սպառ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն այն ի բարի, իբրև զհինն յուսադրութեէ ի տերունի ոտն դիմելոց, յորժամ հոգւովին ել յայցելութի ածուածքն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալն. զոր մեռեալքն ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս։ Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ խմաստութենն ոչ ժամանելոյ, ի մեղանացն մանն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լից զնուազդ իմ բանադրութէ ի յերջանկին հանձարեղութէ. նիւթեսցին ներկայիս հայցմունք ի բարգաւաճին յարգաւորութիւն՝ ի գերաշխարան արքային աղերս. այցելուէ խնդրոյս դիցի քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրհնակեցեր։ Յարեանն կցորդութէ զքո փառակիցդ ձաշակեցաք. տուր փրկուէ քոյոյ ծառայիս, ամենահնար, զօրեղ, ահաւոր, ի ստեղծողիդ փառս աձեցուցեալ զանքաւելի մեղացն ջնջումն։ Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաձաշակ բազմապաձոյձ առակագրուէ զձածուիդ քո քաւրողեալ ի մտեսան լուսազարդ կտակի, եկեղեցւոյ ընծայեաց հետս բարուէ խոստովանութէ մատչել առ քեզ, հայր։ Վանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է խմանալի, թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ ի յեռանդն սրտին ըղձից, որ զձեզ զղջմանն փոքր ինչ կասեաց։

Զ. Արդ ի յուշ բերեալ զոր ի քեզ անձառելի բարեմանութէ, զգթութէ քո ողջունեսցես. որով զկոչկոձեալն ի բազում դարուց՝ բամբասանաց քաբաձգութէ, երանութէ վերարժանացո. որ յոքնահասան արտասուաց եւիւք զմկէ յատակի յարիւնն հե-

ղեղեալ ապարանիցն իւր խրախճանութիւնք սաստ-
կակիծն ապաշաւանօք, հօրն կրկին գերազանցեաց
ողորմելի ոգւոյն հեծութիւք. զոր ի յաչաց բանիդ-
քո արտօսր՝ առ որ մերովս ի յիւրն ախտակրեաց,
երկայնամիտդ ներողութիւք միացուցեալ խառնեսցես,
գթած. և զանչարմարն առ նա կարծեցեալ զսաղ-
մոսին բարեբանուի, ի փառս հակցի որդւոյդ կնքե-
լոյ նովաւ կեցուսցես զնա քաղցրութեամբ ընդ աղ-
քատս ժողովրդոց: Օ այս պուետիկոս ոմն բարե-
հնորհ արգահատեր ընդ Յողոմոնի, ամենայնիւ վարձս
վարկուցեալ համակցորդ զուգաձայնութիւք իւր կեն-
դանեօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ
քեզ, զոր յաւելուած կարդիդ տնտեսէ: Վհանգի և
աւստացւոյն ի նմանէ ստեղծեալն բազմահրաշա-
ւորն մարգարէաձառն պատմագրութիւնն ածութիւնն
արդարացուցիչ՝ զՅողոմոն ողորմեալ կարդէ. որ զի
անպարսաւ ի աղօթիչն, քան չարաբանիչն վասն
նորին:

Ի. Օ որ և ես մաղթեմ մեծ վստահութիւք նմանա-
կից այսր հեծութիւք և զիմն ընդ նմին ընծայել գո-
ջուն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գոր-
ծոց, ո՛չ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ձա-
նաչես. իսկ եթէ գտցես, այնքան բարձրանաս, որ-
քան մեծուեդ քում վայել է. քանզի յաւէտ օրհ-
նաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ,
քան նախահրամանն սաստկութիւնն: Վարձիր տէր՝
դարձիր քաղցրութիւն ի խնամն գթութեանդ և ամէն-
առատ պարգեւօք սիրոյ մխիթարել յաւէտ զորա-
մեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տոչորմանն
անբժշկականի: Զեռն եդեալ փրկութիւնդ նորոգես-
ցես վերստին, քաւեալ և պատռպարեալ ի մեղսա-
կործանս խորտակմանէ: Այս քեզ միայնոյ սկզբանդ
և անսկզբանդ, ընդ սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբ-
բանց՝ սուրբ Երրորդութեանդ և միւսմ աստուա-
ծութեանդ փառք և իշխանութիւնն յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն:

ԲԱՆ ՓԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերատին յառէլուած կրկին հեծութեան նոքին հսկայի առ նոյն ազէրս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ մի տիրեսցեն անօրէնութիւնք քոյ պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնոյ, ած բոլորից լուսոյ. մի կապտեսցէ գառոյն ապրստամբ զլարդ փչմանդ հնորհն ի քո ստեղծեալս կերպէ. մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ մարմնոյս մահացուի առ ի գրաւել զիս ի նոյն։ Զիք իմ թագաւոր առ իշխել հնոյս բաց ի քէն, Այ, որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութիւն, որ բառնաս զկարիս մեղաց ամենակարդ բանիւ, որ արեամբդ քո ստացար և մարմնովդ կերակրեցեր. որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի, որ յոգի քո հնքեալ կցորդ քեզ գրեալով, հօր քոյ մատուցեր ժառանգակցապէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղծիչ ամենից և կեանք։ Դու ես ած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս հնորհաց քան զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութիւք, ոչ զերկիրս և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւք, ոչ զսահման լայնութիւնք ծովու և որ ի նմա են եղեւլութիւնք, ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ և որ ի նմա են անքաւութիւք, ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք՝ որչափ առ իմն կարեկցութիւն, յասելն քո՝ նը մարդարէիւն՝ քաղցրութեայ յուսոյ բարութիւն, ով ես ած իբրև զիս կարող Թողուլ միշտ զմեղս և ընդել զանօրէնութիւնս։ Այ արդ խնկեալ են բանք քո, ողորմած, և խոստովանեալ բարերարութիւնք, փառաւորեալ խորք խորհրդոյդ, և երկրպագեալ զէմմունք հնորհացդ։

Բ· Աղաչեմ՝ ոչ ոք բաւէ յէից Յարդմանել խօսիւք նիւթական լեզուի՝ ի մասանց այսր քումդ գԹուԹեանց զոր առ իս ցուցեր, յօրինիչ· քանզի և մեծ իսկ է զօրուԹի՝ զհնացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառուԹե, քան յանդոյից ստեղ ծագործել· Այլ զի ոչ է քո տկարուԹի, որ զօրուԹիդ ես ամենայնի, առ որ քան քո միայն ազդեալ՝ զլուԹի գործոցն գվնասուորէ, ահա յարիցեմ փառաւոր լինել, բարեգործ, ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկուԹե· զի իրաւամբք ուխտի բարձրասցի՝ հաստատուն եղեալ մեծապէս օրհնաբան առեառաց քո ձայն ի քաւելոյդ ընդՀ ծանուցեալ, ողորմուԹե լուսով ուղերձեալ, քան ի Ճանապարհ ստեղծանելոյն· Օ՛ի առ միոն արարիչ միայն Ճանաչիս, իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր· ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն և բարերար, ընդ հաստելոյն և ողորմած, ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ յօրինելոյն և հեզ, ընդ նկարելոյն ամենազօր, ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տածելոյն հովիւ, ընդ դարմանելոյն խնամիչ, ընդ ողջ պահելոյն բժիշկ, ընդ ձեռն կալուԹեն զօրաւոր, ընդ անպարտուԹեանն Թագաւոր, ընդ արարչուԹեանն քաղցր, ընդ ամենատուր պարգեւացն առատ, ընդ միշտ անսալոյն ներօղ, ընդ ոչ բարկանալոյն անդխակալ, ընդ կարեացս վշտակցելոյ ծածկագէտ, ընդ յանձանձելոյ գԹոյն ապաւէն, ընդ գերունակ գորովոյն Ճշմ, ընդ անսպառ բարուԹեն՝ օրհնեալ յամենայնի՝

Գ· Աղդ որպէս ստեղծեր միոնչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զՀոգի մաղԹողիս մարմնոյս տաղաւարաւ յարդարեա անդրէն վերըստին յանարատուԹի մաքուր սրբուԹե նախնի լինելուԹեն· զի բազմասցի առաւել ամեցուն եղեալ յաՃախ տուչուԹի անսահմանելի քոյդ սքանչելեաց նորոգ ներկայիս, քան զանցելոց Հնոցն ստուերաբանաց· Այլ ընդ Ճառելոյս զԹիւս մեղայս՝ որքան մտացս Թևս ընԹանայ զանբերելիսն յիշատակել, արդարացայց յանուն քո Հզօր· և ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և դու Թողեա զամպարշտու-

թէ բազում մեղանաց խոստովանելոյս, հզօր, ծածկաւես, ամենափրկիչ. զի մի ծայրագոյն լրութեաւ աւետեացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով սաղմոսիւն զհնարհօք փրկեալսն մկրտութեան. և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեցեալ յիս առաւելապէս այժմէն վերստին, ծանրս առնելով զբեռն պարտեացս քան զքաղցրութիւն պարգեւացդ, այլ աղատեա զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու: Վաւ լեզի, թէ անկցի ընդ տակաւութեաւ սահմանաւ ձեմարտութեդ ծագումն իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ՝ վտարեալ են մեղք, և՝ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է յուսահատուիլ, և ամբարձեալ քոյոցդ շնորհաց՝ հալածեալ են պարտիքն, և մերձ գոլով ձեռնդ այդ՝ ոչ գոյ անհնարութեի, այլ ամենևին լուսաւորութեի, բովանդակապէս զօրութեի, անպարտելի կարողութեի: Վո է փրկութեի, կենդանութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, արքայութիւն, անեղծութեի և փառք յաւիտեանս. ամէն:



ԲԱՆ ՑԻՄՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ցել արդ, քանզի որպէս ոչ է առանց Վրէի այդ ոգւոյ փրկութիւն, և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զսարձութիւն, և կամ առանց արուեստ կին հնչուլից արեւու երբէք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութիւն և ըստգտանաց անձին՝ քաւութիւն: Օ՛ի զինչ օգուտ

քեզ է մաքրութիւդ, եթէ ընդ փարիսեցւոյն դա-
տեսցիս, և կամ զինչ ինասեսցեն զիս պարտիքս,
եթէ ընդ մաքսաւորին գովեցայց, և կամ ուր ասի
պարսաւեալ մարգարէն Յովէլ՝ երիցս կրկնելով
զանձինն եղկուէ, և կամ զի գուցէ սիրն դառաս-
տան առ ի յիշատակ աւուրն մեծի, և կամ իբր
արդեւք անմաքուր իմասցի շրթամբք Ասայի՝ հեռին
ի գործոց տանն Իսրայէլի, և զիա՞րդ ասծ պարտա-
ւոր պաշտի ազատեան մարմնովն՝ իմոյս կարեկցեալ
յանցաւորապէս առ հայր աղօթել, և կամ յո՞րս
Թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն
ի տան սգոյ, և սիրտ անմտին ի տան ուրախութե։
Օ՛ի որ զսխալեցն Աստուած անձին իւրում ուշ գրեա-
ցէ, և զիեզս ամենից լինքեան ուշ համարեսցի, իբր
երջանիկն արքային Դաւիթ, կորոյս զիւրն արդարու-
թի՝ որպէս անախտակիր գոլ բնութեա. և ուշ բերկ-
րի սիրտ առ զուարթութի երեսաց աւետեօք յու-
սոյն, ըստ ասացելոյն, եթէ ուշ յառաքելոյն Պետրի ու-
սեալ՝ ասիս ահա ըստ այ տրամեսցի։

Բ· Աղդ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն
Հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանձարեղին, զոր
տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել ուշ յառա-
ջինն բարձին Հպարտից ընդ ամպարշտացն նանրա-
խոհ՝ ուրդ ժողովելոց, ուստի Դաւիթ և Երեմիա
ուխտիւ կանանչ սահման հաստատեալ հրաժարեցու-
ցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մե-
ղաք՝ և ի դառաստանաց մեծին պակուցեալ ահիւ
հատուցմանն, յեռնոցն հաւասարեալ աստէն ի յերկ-
րի կամաւ խոնարհութե, ուստի բարձրեալն ասծ պա-
րարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն ի բաղ-
մականան երանութեան համարձակեցայց, թէ ես և
Թէ նա հետևեալ սովիմք։ Աղ որ զերծեալ ի բամբ
բասանաց բանի մարգարէին, որ ի վեսս ոմանս ակն-
արկի. մի յիս, ասէ մերձենար. մաքուր եմ, և ուշ
զիս տեսանիցէ։ Աչալ զանկշիւն խոնարհութիւն եր-
ջանկին Դաւթի ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին,
ես իբրև զանասուն համարեցայ հերքեալ ի զգայու-
Թէ, և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան
և փտեցան վէրք իմ ի յանզգամիս անբժշկութի,

և զայլոց ոմանց ընտրելոց ՚ի յասորեստանի՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտութեան անձանցն անարատից . ընդ որս և զՅոզրի մեծի քահանայի զասելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զերեսս բաւական իցեմ համբառնալ ՚ի վեր առ քեզ Աստուած :

Գ. Արդ ես Ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զիմն խառնեալ ընդ նոցին պարտիս , և ՚ի նոցայոցն զառ իս դառնութեն կրկին առաւելեալ , նոքօք հեծեծեցից . Թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութեն գունոյ՝ դարձեալ տգեղութեն : Ահա արդ մեղայ, զի անմտութեամբ գործեցի զոչ հաճոյսն քո բազմօք սխալեալ յանցաւորութեամբք . նայեա՛ յիս , դԹագ , որպէս երբեմն յուրացութեն ըմբռնեալ Պետրոս , զի յոյժ ունայնացայ : Ի ուսաւորեա՛ ինձ զողորմութեդ քո Ճառագայթ , ամենևին բարերարութեդ . զի ընկալեալ զօրհնութիւն քո , տէր , արդարացայց կեցից և մաքուր եղէց յանսահեղծից քո իմոց լկողաց : Զունիմ համարձակութիւն զմեղապարտ ձեռինս հաստուած առ քեզ տարածանել , մինչև մատուսցես զօրհնեալդ քո զալ ՚ի նորոգութեն դատապարտելոյս : Արդ յաղթեա՛ վերստին իմում յամառութեդ քոյին հեղութեդ առ իս ժամանեալ մարդասիրապէս . և զամենայնն յամենայնի ամենայնիւ քո կարողութեդ՝ զառաջինն չարիսն միջնովքն և վերջնականօքն թո՛ղ ինձ , հնարաւո՛ր անհասից Վո՛ թագաւորս լուսոյն արդարոց :

Դ. Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ , զի միասակար եմ բարեգործիդ մահու հարուածոց առ կնիքն , առ շնորհն , առ փչումն , առ պարգևն , առ աւանդն , առ ձիրն , առ անունն , առ որդեգրութիւնն , առ պատիւն աղբայական , առ պատկերն , առ դրոշմն , առ օծումն , առ Ճոխութիւնն , առ համարձակութիւնն , առ ընտանութեն , առ կեանսն , առ լոյսն , առ երանութեն , առ յոյսն , առ փառսն , առ անխոնարհելի բարձրութեն , առ պսակն անկապտելի , առ խոստմունսն ծածկեցելոցն , որ քե՝ տէր Վո՛, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս իժիս և քարբիս՝ ունկնակիից և լսելարիակ անդուր ական

ջացս. որ միշտ յառաւելութիւն քումդ բարութեան յոքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաձառ խեալ, ՚ի սպառ կործանեցին, մերժեալ ՚ի կենաց ընդ մահ կապեցին, ծառայ կարդեալ սպասկանութիւն։ Այս արդ զու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ ՚ի գթութիւն, մեղայ քեզ անօրինեցայ անիրաւեցայ. վասն որոյ և եղծայ զեղծայ յանցեայ ամպարշտեցայ. և ո՛չ լուայ խոստովանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ, որ զու իսկ երևեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր պրեղն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի։ Վասն արդարութիւն և փառս և միանձնաւոր գովութիւն, և ինձ պատկառեցելոյս ՚ի քէն, խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժշկութիւն, օգնուել և պահպանութիւն սրտի և ոգւոյ. բարեբանեալդ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Վկրսալին յաւելուած կրկին հեծութեան նորին հոկոյ առ նոյն աղեբս մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ առ երկրածինն որ պաղատեցայ այրս մահացու ամենապատիւր, եթէ ընդունայն է աղաղակելն. առ մահկանացու բանական, եթէ սուտ լսեկ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն. առ մարդ որ եղծական, եթէ ընդ տկարութիւն բանին և նանիր է զօրութիւնն. առ իշխանս երկրաւոր գահից, եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցին բարութիւն. առ եղբայրն որ հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն. առ հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ էն խնամակալքն ընդ աւուրց նուաղութիւնն. առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան

գԹուԼԹԷքն ընդ նահանջել կենդանուԼԹեն . առ Թաւ-
գաւորուԼԹիւնս աշխարհի արդեւք , որք զմահացու-
ցանելն միշտ արուեստաւորեն քան զկենագործելն .
այլ առ քեզ բարերար ՅԱծ օրհնեալ ՚ի բարձունս ,
որ կենդանի ես և զկենդանուԼԹի տաս ամենայնի , որ
և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել ։

Բ· Որ եԹէ փախնուիք ՚ի քէն , դու զկնի ընԹա-
նաս . եԹէ տկարանաք , զօրացուցանես . եԹէ վըի-
պիք , շաւիղ դիւրուԼԹեան ուղղես . եԹէ պատկա-
ռիք , քաջալերես . եԹէ ախտանաք յանձն և ՚ի
մարմին , բժշկես . եԹէ գալշանաք մեղաց , մաքրես .
եԹէ ստեմք , քո ձշմարտուԼԹիդ արդարացուցանես .
եԹէ յանդուգնդս ներքինս սուգեաւ գլորիցիմք , յեր-
կինս ցուցանես . եԹէ ՚ի կամաց մերոյ ոչ գառնանաք ,
դու դարձուցանես . եԹէ մեղանչեմք , ողբաս . եԹէ
արդարանամք , ժպտիս . եԹէ օտարանամք , սգաս .
եԹէ մերձենամք , տօնես . եԹէ տամք , ընդունիս .
եԹէ յամրանամք , երկայնամտես . եԹէ մեք ժխտեմք ,
դու առատապէս ընդհեաւ ընձեռես . եԹէ լքանիմք ,
արտիս . եԹէ արիանամք , խնդաս ։

Գ· Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոն օրհնա-
բան հրաշաւորական զվհատելոյս զսիրտ սփոփէ , և
մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկուԼԹեն հան-
դէս . որ յաղԹականն է դիւաց և տարակոյս բան-
սարկուԼին . որ իբր զնաւին տէրունի նշան բարեբախտ
պանծալի աքանչելափառ , անխոնարհելի բարձրուԼԹիւ
լուսոյ և անպարտելի վերնոյն զօրուԼԹիւ կանգնեալ
է ախոյեան անվանական և անշարժական ամենայ-
նիւ յաւիտենական ընդդէմ անբարի բարուց բըն-
նուԼԹեն Որ ելիարայ , որ ունի յինքեան դանձս հոգևոր
օգտից գիտողաց մտաց ընծայեալս զպարտուցն մա-
հու և զլուծուցն մեղաց , և յոյսս կրկինս յերկուս
յաւիտեանս , և զնորոգուցն խոստման անեղծուԼԹե
արդարոցն , կանոնս բարեհրաւէրս և կենդանա-
տուրս գրեալս հոգւովն ՅԱյ . որպէս ամենայն խոկ
երգ սաղմոսացն մաքուր սրտից է տեսանելի կատակ
կենաց մարդկան նկարեալ ։

Դ· Օ ի ԼԹէ ՚ի նախնուցն տկար կերպարանն զայս
աւետիս և վստահուԼԹիւ ընդդոգեալ ունէր՝ կործան-

ման մահու նախաժաման մեծ աւետարիր և կեանս
երկնակրօնս վերնակենցաղս միշտ անձառելիս, և
այն՝ ջնջական գիրն և յեղանակաւոր օրինակն, և
պաշտօնն դատապարտիչ վհատութեանն յանցաւորացն,
և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարա-
րութեանն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթո-
ղացն: Այր զի թէ Ա՛նասելի փրկութիւն խոստովանե-
լի է, անտուստ վկայեալ յետ այնքանեաց մեղանաց
անբժշկականաց. որ արեամբն արդարոց ելից զնուի-
րեալն մեծի Թադեւորին հրաշանուն քաղաք Հայրե-
նի, ըստ մարգարէիդիր անուստ պատմութեն. որ
և զմեծն իսկ տեսանողաց բազմերախտիս ձեռնկա-
լութեան խնամոզօրէնն պաշտպանութե նախնակերտ
յարկին տեսչութե, մանկավարժ ինքեան և նախնի,
մեքենայիւ մահու սղոցեաց, Ի յերկուս մասունս
խզեալ գԺնդակ տանջանօք մաշեաց, իբր խորհրդով
ապստամբութե գյուսոյն փրկանակ կտրեալ: Ա՛ր-
որով զբար յաւելուածն մոլեգնական՝ գքրէական
վերնամարտութեին Ի բարձրեալն յանդգնութիւն.
քանզի ոչ պատկառեաց երբեք զստեղծողին պատիւ
և զանուն յիւրաքնակ խորանէն մերժել. Հալա-
ծեալ զայ հոգին, Ա՛ելիարայ զանձն գաւանեաց:
Վանզի զնոյն տաճար տիրական խնկարկութեան
հաստողին սահման՝ հուչակաւորն երկրի տեսարան՝
զարբսափելին ազանց սրբարան, ուր տեսիլք հրեշ-
տակականք և ՚ձայնին հրամանք յաղթողականք լու-
սաւորապէս յայտնութեամբ աղդեալ երևէին, զայն
վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ Վ՚եւանայ
ումեմն քառադիմակի նախանձարկու պատկերի աւե-
րածոյն անապատի պաշտօնետեղ գարշելի և դիւա-
ձենձեր զոհարան պատրաստեալ կազմեաց: Ո՛ր կեալ
զարքայն երկնաւոր Ի յարքայականն կայից, զամե-
նահարուստն՝ ունայն Ի ստացուածոց իւրոց, զտա-
նուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ,
Ա՛ղեղեբուղայ ձեղուն նկարեալ, և զանունն ա-
հեղ վտարանդի արարեալ. գերի տարեալ զաւանդ
գովելոյն, ողբալի զողորմածին մանն նուաղեցու-
ցեալ. աղուեսուն փոքու ապարանք զբարձն լուսոյ
կարգեալ, և բնաւից ունողին և ոչ գլխոյն տաղա-

ւար յիւրայոցն եդեալ. Հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից զսեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման երևեցուցեալ: Այնեալ հետս բազում ընթացելոց ի գայթակղուի, հովիւ կորստեան հօտին սատակման, մոլորութեանն բուռն վարդապետ, և այն՝ դիտուք կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն Յակիա զնմանակիցն Պաւթի:

Ե. Ընդքան ստացեալ գտմունս չարեաց, որ և զայլ պատիւն՝ որ զարքայուէն փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թշնամանեալ, և զաղօթիկերացն բազմութեան սուսերաւ մահու խողխողեալ: Ընտանի դաւաճան, մերձաւոր վատնիչ, հարազատ սատակիչ, կցորդակից սպանօղ: Ընդ ամ ոչ գոյր գառնալ, զի ուրացեալ էր զնա. զԲրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր ի նմանէ. Իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր ի նմանէ. Իսրայէլիւ ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն չնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. ի քահանայն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. ի տապանակին ամօթագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ դարշուէ ձուլածուին էր փոխանակեալ. առ Մովսէս ոչ էր կարդալ, զի անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ Ահարոն ոչ գոյր աղաչել, զի ինաստապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր նոցա: Յոր նորա քաւութեն մեղաց, և արքայուէն թագաւորութե վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ, բարերար, բազմացուսցես կարգեսցես զովեստս անձառս և անլռելիս ի յաղգս տոհմից և ի դարս ժամանակաց, և զդուռն յուսոյն մերից անփակ կելի պահեսցես ի փառս քոյդ բարձրութե և ի փրկութեն զատապարտելոյս, անմահութեդ պարգևացդ տուիչ Քո, դովեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վէրստին յաւելուած կրկին հեծուելեան նորին հսկողի առ նոյն ազգս մաղթանաց բանիւ.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ՈՐՀՆԵԱԼ տիրաբար ի քումդ էութեան, անսահմանելի և անփոխադրելի իսկապէս բարի, պաշտօն խնկելի և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի, երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն, գթած ողորմած, որ ոչ պահես ոխս քազմութեան ամաց մեղանաց քեթել մի ական, որ հրաշալորս զարմանալիս գեր քան զամենայն ազինս նախնեացն անսահման առաւելութեամբ կրկին ընդ միոյ հաձեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս ի շնորհաբաշխութեես նորոգումն։ Այլ զանտուստ զմուտս լուսարանի պատուհանին անձկութեե նշուլիցն աղօտականաց, չափով գիտութեեցն ըստ Սողոմոնի, և իւր իսկ նմին և ինձ ընդ նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելումն զառաջասան անջըպետարան ելիցն ողորմութե ձրի պարգևացն ճաճականաց. զոր ընդ մէջ իմն մանաւորօք աւետաւոր յիշատակաց և ի հնուն զայսր տպաւորութե օրինակաւ նկարագրեր, զդարձարուքն առ իս և ես դառնամ առ ձեզ. և յորժամ դարձցիս և հառաչեսցես, յայնժամ կեցցես։ Այս ոչ և զաղջամղջին սևութե գունոյն փոխարկել ի ձեան պայծառութե, և զարանցն արեամբ ներկելոցն յեղանակել ի պատահումն գեղման, ըստ Եսայեայ և Ովսեայ, և ի մէջ բարկութեեն դարձեալ զայգ ողորմութիւն. քանզի անապատանալ քաղաքացն Իսրայելի և դարձեալ բնակիլ, և ձանապարհացն ամայի լինել ի չգոյե մարդկան և անդրէն հետեւիլ, և լքանիլ ի սովոյն ոգւով և դարձեալ զօրանալ ձեռամբ, և գնալ ոչ ի տեղի իւր զայրացմամբ և դառնալ ողորմութե, ըստ ներողութեան զելոն,

և՝ ի միջ սաստիցն սպառնալեացն կրկին պաշտպանութեի, և՝ ի սրտին խաւուլութե յուզումն խնամոց գթութեան։

Ե. Ա՛յս մարգարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալստեան զազատարարդ հրամայն կանխաւ ազդէին, և զոր չէ բանիւ նուիրեալին լեզուի ընդ թիւ արկանել վասն անբաւութե, փոքունք են և նուազունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկագործութիւն։ Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վկայութե արեան քո ուխտի, որք մեծապարբառ միշտ աղաղակեն քան զդատակնիք մահուն Հաբելի զյաղթանակ բարեաց քոյմդ հանդիսի, կեանս կրկինս և անմահականս շնորհայց, մկրտութե, յարութե, նորոգութե, առ քեզ ընտանութե, ընդ հոգւոյդ սքի միութե, քաւութե, ազատութե, լուսաւորութե, միանձնաւոր մաքրութե, իսկապէս երանութե, ընդ վերնայնոցն կցորդութե, անկապուտ փառաց, ՚ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Ոյս զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր յիշատակ եդեալ մեծիդ երախտեաց, աստուածծ իսկ լինել ընտրութե շնորհին, և ընդ հաստոցիդ միանալ տէրունի մարմնոյդ ձաշակմանբ, և ընդ լուսոյդ կենաց խառնուե զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ Պաւղոսի բանին, ոչ ուներ օրէնն։ Ա՛յլ դու, փրկուե, եկիր հայրենիդ քո հարստութե, արարեր և կատարեցեր պարսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի, քաւիչ ամենայնի։ Ոյս քեզ փառք ընդ հօր քում՝ ի դովեստ բարեբանութե հոգւոյդ քո սքի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր տէր զօրութեանց, բոլորից գոյից Թագաւոր, օրհնաբանեալ ողորմութիւն, ՚ած ամենեցունն, որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութեան, ամենայն անբաւութեանց դու ես որքանութիւն. միով ձի կարծրն քեզ հոսանուտ է, և լոյծն քեզ պնդակազմ, և վիթ քո իր անհնարաւորական, յաղթօղ զօրութեի ահեղ. հուրն ցօղ լինի զովական, և անձրևն բոց կիզանողական: Օ՜քարն բաւես ցուցանել կերպարան աղդմանն, և զբանականն դնես անխօս և անշունչ արձան: Օ՜պարտաւորն ողբեալ պատուական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ դատիս: Օ՜մատուցեալն ՚ի մահ՝ բերկրութեք բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութեք օծեալ դարձուցանես: Կանգնես զմահանեալն հաղթից գլորման, և զսասանեալն՝ ՚ի վստահութիւն վիմիդ հաստատես: Օ՜ախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն դարձեալ անդրէն ՚ի յետս նահանջես: Այլ յորժամ սպառին առ ՚ի մինչ բարիքն, զառաւել զարմանալին յայնժամ ներգործես. քան զի վասն քո գիտես Թողուլ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել անիրաւութեց և զմեղս մերս ոչ յիշատակել, ըստ Նայեայ և Երեմիայ:

Բ. Այլ առ հնարս նորոգ փրկութեես բազմօք զոհաբանութեք հետևեալ, ՚ի յաձախութեի անբաւիցն լռեալ առ ամէն իսկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ զլուսոյդ անսպառ բարիսդ, որ ՚ի քէն առ իմ յամառս Թշուառութեի, քոյին աղերսիս առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ ՚ի նուիրեալ բանիս ըզտառ ողբերգութեի այսր մատենի, լցից Թախծութեք

և հեծեծանօք։ Զայլ առեալ խառնեցից ՚ի տուղդիդ հաճութիւն ընդ ցաւոցն զգեղն, ընդ վհատութեն զներախոյսն, ընդ յուսահատութեն զյիշատակդ անուան հաստողիդ, ընդ տխրութես զսփոփանսդ, ընդ խմուսն դառնութե զքաղցրութե կենարարիդ, ընդ պատիժ օրինին զչնորհն, ընդ պարտս անիծիցն զաղատարար օրհնութե՛դ, ընդ մարմնոյ մահուն զաւետեսիս նորոգութե՛դ։

Գ. Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ. լուր լուեալ սրտիս, տէր Քո, որ հնչումն է առ քեզ մեծութե ձայնի երկար դոչելոյ։ Զմարմնակից և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ զենման մահու անատնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ անմահապէս միշտ մատուցանիս, և անչնուաղաբար քաւութե՛ն ընդրես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութիւն առ եալս կենաց։ Օ՚ի ժրքան զօրէ մարմնոյ անդամոց առ մեղս կենդանութե՛, թէ և բիւրուց ամաց ունի՚ի յերկարաձգութե՛ն, յորժամ ՚ած բոլորեցուն վճռորին կամաւ և յօժարութէ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ՚ի քաւութե՛։ Օ՚ի ոչ եթէ մաքրութե՛դ աղբեւր պարտական գոյ մահու յօր ըստ օրէ կատարիլն, այլ կամաք քովք՝ հոգւոյդ գործակցութե՛ք՝ ՚ի հաճութե՛ն հօր և ՚ի մեր հաշտութե՛ն ցանկ մատուցանիս։ Ոչ եթէ ամենիցդ ՚ած անքնին՝ խմելս վասն իմ առ իմ փրկութիւն, ՚ի դէմս իմ, եթէ թէ ընդ քոյդ էութե՛ես իցեմ մարմնով պատրաստակողիդ կցորդ միացեալ. և դու, բարերար, յաղագս իմ ՚ի յիմն կերպի փոխանակեալ ընդ իմում պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ զմահապարտիս ՚ինասուց պատուհաս, և ՚ի յիմ անուն յանցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բազումն մեռեալ և ՚ինաս կենդանի. ոչ ուրացողացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ՚ածապէս նուիրեալ և ՚ի մասունս անհատս բաշխեալ։

Դ. Զսեր ոմն ողբաւոր՝ չաւատալեացն պաշտօնատար. մեծ լինձ և անկշռելի առ սմին դատեր անչարմարագիր անձին յուսադիր, Հաւատամ զիտաս

և զերջանկութիւն, քան թէ մարտիրոսութիւն իսկ՝ թէպէտ թէ ուղղութիւն իմն թշուառութեան յանցաւոր մարմինս վախճան ընդունել: Իսկ զանձառութիւն խորհրդոյս այսու դիտեցի· դաւաներ իսկոյն, որ զի և մաքրոյն անձինք առանց նուիրման այսր չիշատակի չեն իսկապէս կատարեալք՝ ի սպառ, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութիւն մեծութիւն հոգւով խառնեսցին: Ապա թէ մեղաւորիս մասին կրկին մատուցար բաժին ասելով յուսայր, իբրև այն թէ ես ինքն եղեր ձշմարտիւ, զրաւեալ զիմն դաժանութիւն ընդ քում համեղութեան, պատարագեալ քոյինանիւթ զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ: Այսու ամենայնիւ՝ ի վերնատանն նախանուէրը բարեշնորհուեցաք անհնարաւոր ախտիցն ձարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց՝ ի քաւութիւն, ՝ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ· յուսոյս օրինակ յարգաւորութիւն գրել ղիս՝ ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երևեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ ձեռականիւդ առ մարդ զօրութիւն, և տիրական ձեռախառն մարմնոյն կամաւորական նուիրուամն առ անասնական սպանդին մատուցումն, և անմահն առ մահկանացուս, լոյսն առաւոր առ սուտերայինս, յաւիտենականն քան զմնացաւորս, բարձրեալն քան զերկրաւորս, անստեղծն քան զեղեալսն, բարին քան զութիւն քան զթիւրեալս բնութիւն, մանաւանդ զի իւր է կամելն և իւր կենագործելն, օրհնութեանն առիթ քան զանիծիցս պատճառ:

Ե· Ապրդ տուր խոցելոյս՝ ի սիրտ և յոգի, աղաչեմ գթած, զառ՝ ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց, մասիր քաղցրութիւն առ ախտացեալս մեղօք, քաւեա՝ ի պարտեաց՝ ամենակատար բաւականութիւն: Իսկ առ՝ ի յինէն այս է ձշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից՝ ի սէս բնակես· և ըստ տարազու սերմանն և հնձելն է իրաւացի, ըստ ձշմարիտ բանին Պաւղոսի, և աչացաւացն՝ ի տապ արևու ոչ է զօրութիւն: Այլդու, բարերար հաստիչ յոչեից, յարգեա յաւէտ իսկապէս համայն և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն·

և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթեսս՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց համօրէն յանցաւոցս տարակուսելոց։ Այլ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

ԲՒՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՁՈՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ յամենայնի առ ամենայն ակնկալութիւն քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի խմաստից Յ՚ս. քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն։ Դարձ առ իս գթութիւք, և հանդերձեսցես դառնալ առ քեզ լինձ կրկին բերկրութիւք. զի առանց քոյ կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և եթէ ոչ հառավարդ յարդարեսցես պատրաստել լինձ հետս ձանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է լինձ խորոց յաջմէ և յահեկէ։

Բ. Այս ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս, ոչ պանծամ դարուվեալս, ոչ խրոխտանամ լքեալս, ոչ մեծաբանեմ պապանձեալս, ոչ ըմբռստանամ ձաղեալս, ոչ երջանկանամ եղկելիս, ոչ արդարանամ ամպարիշտս։ Օ՚ի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ լինչ գործէ առանց մանձակալի, և ոչ երկուորեակք լծոյն՚է ձահ ձեռեսցին առանց եզողի, ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գումբին առանց ժամանակին, ոչ արեգակն փոխաբե-

բեալ ուր շրջանակի առանց տարրական օդոյ, և ոչ ես նոքօք հանդերձ առանց բարեգործիդ Հրամանաց ակնարկութեանն։ Օ՜ի դու միայն ես տուիչ կենաց բա- նականաց և խնամիչ կարգաց հոլովմանն արարածոց, և՝ի քէն է լինել փրկութիւն, ըստ սաղմոսողին. և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման յա- կանջս լսելութեանն ամենայն հասակի, և՝կայք՝ի հան- դիստ իմ ընաւէն աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ՝ի պարտեաց։ Իսկ զինչ օգուտ՝ի լուացմանէն, ե- թէ կրկնակի զազրացայց. և կամ ո՞ր օգուտ՝ի ձա- շակմանէն, եթէ դեհենին մատնեցայց։ Եւ կամ զիա՞րդ Աբրահամ պարծեցայց խորհածեալս՝ի գործոց նորին որդիս գարշութեանն հօր ամօթս կայց, և մօր քեռացս կամ քանանացս, ըստ մարգա- րէին որ առ իս յանկաւոր ձայնի. ժառանգս մեր՝ ժեղի եթովպացի և ոչ սենեկին Պառայի, ըստ տե- սանողին առ իս առածի, եղբայրս Շ ամրնի և կամ Կոմորայ, համբակս անլուացս և անաղելի՝ խակա- կութ պորտոյն խակութեանն Ղողայ և Ղողղիբայ, ըստ Ղեկկիելի կրկնանախատն կշտամբութեան։

Գ. Եւ քանզի՝ի ծուխս բազմավառանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զղջեալ ուժգին լկանօք՝ի սպառ տապնապմամբ՝ի ծովին, փոխեալ ընկեցեալ՝ի վտակն վայրենական ողողիչ. առ որս զմատուցս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր՝ի հոսանաց բռնութեանց գարնանազայլը գետոց, արտաձգեալ յա- կամայ ընթացս ողորմագին գլորման, ջրակուռ ոգեա- պատ պղտորարբութեան, դաժանահոտ սկախառն մամ- ռարմատ խառնախուճ մահաբեր երկամեաք վանեալ, ըստ որոց յուղեխցն հեղեղեցեալ հեղձուցեալ։ Ա՛յ- սու առակաւ և ես եղկելիս՝ խօսին և ոչ խմանամ, գոչեն և ոչինչ լսեմ, բարբառին և ոչ զարթնանամ, հնչեն և ոչ փոխադրիմ, փողեն և ոչ գումարիմ, վի- բաւորիմ և ոչ ևս զգամ, կառոյն գարշուճ նմանեալ Թափուր յազգմանէ բարեաց խմաստից։ Զդարև չար առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ. Ձըշ- մարտութիս, ատելի և մեղադրելի և ատենին Աշխ արժանապէս մատնելի։

Դ. Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ աս-

տեսայս պարտեաց զայս կտակ Թողէ որոց ընձեռնուն, իմովք բանիւ առ Աճ կարդալ հանապազորդութիւն, այս կայցէ սահմանն յանձնառական խոստովանութիւն միտնջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս և բանդ ընդ հոգւոյս զանսահմանելիդ միշտ Թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս ձայնէ, բարեգութ, մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՒՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ 'ի վանն ալ սլացեալ ոգւոյս Թևօք 'ի Թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կշիռս իմանալեացս մտաց, ոչ գտի համեմատ զոք ինձ պարտաւոր. և առ այս զդաւթեան սաղմոսին զբանն 'ի յերդ ինձ առի գառն կշտամբութեանց գաւազանաւոր գործավար. ո՞վ յարիցէ ընդ իս 'ի չարիս հաւատասրեալ յանօրէնութիւն։ Այս քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ և ձգմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կըրկին հաստատեալ. առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ 'ի սպառ, քան իմովս բանիւ բազմոց տարագրիլ. Թերևս սովիմբ առ այսոսիկ արդեաք և ինձ ընդհեռացես, ընդհողիս զպարտիս իմոյն։

Բ. Այս արդ զի՞նչ քեզ աղերս հաձոյական 'ի յայսմ և 'ի սոյն, և ծուխս անուշիկ ընդունելի խնկոյ մատուցիչ, գովեալ Թագաւոր երկնաւոր Վէ՛ր, եԹէ ոչ զառ 'ի յինէն անկծեալսն օրհնել մաղԹեմ, զկաս պեալսն արձակել, ազատել զդատապարտեալսն, բաշխել զնեղուածեալ զնղովեալսն, պսակել զԹշնամանեալսն

սփոփել զտրտմեցեալսն, դարմանել զխորտակեալսն, խնամել զսարտուցեալսն, պատսպարել զվհատեալսն, զվիրաւորեալսն ի մարմին՝ յոգի բժշկել: Եթէ օրհնութեամբ բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի հայեսցիս ընդունել, զհաճ: Այս առաւելեալս ամենաթշուառ ի վերջին սպասաւորեալ մաղթանաց այսր մատենի ի բովանդակ մտաց ընդհեցի իմոյն՝ փակեալ առ ի քէն զանիծիցն դժբնդակ ըղձիցն չարաշունք ձայն. և դժնեից նենդողացն իմոց՝ ընդ բարիսն ի բոլոր սրտե հաշտութեամբ արդա հատեալ, վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց ելեալ առաւել ողորմեացիս ըստ քոյդ մեծութեան, գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս, ամենակարդ՝ վարանելոյս, իմաստութեանդ աղբեւր՝ յիմարիս և ծնբրեցելոյս: Ոչ ոք յաւէտ սխալեալ անկայ իբրև զնոզակ մծայնն ոչ ընդելական ի հաղբս մահու անզգայասէս, չիմացայ զկորուստն, չգիտացի զորդգայթն, չտեսի զըմբռնօղ որսոյն ծածուկ մեքենայս, չկարծեցի զաբեղումն կերպարանաց կեղծաւոր վարմին, չնկատեցի զգայթագղուէնն շուրջանակի, չջօշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին, ժամանեցեալն ինձ չարիք, և ես ոչ կարացի ձանաչել, ըստ սաղմոսողին:

Գ· Ոչ ոք և որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ բարւոք թուեցաւ, չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ. քան զի իբր զանզգայ պաճարս անամոյ մեռանիմք և ոչ զարհուրիմք, կորնչիմք և ոչ հիանամք, թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք, եղծանիմք և ոչ զղջանամք, մաշիմք և ոչ մտառեմք, պակասիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք, գերիմք և ոչ ևս զգամք: Այլ հանգիստ ասել երջանկին Յոբայ զվախձան մարդոյ, և ես խոստովանիմ զսոյն ընդ սմին, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեն մահացու գործոց ըստ անձնեաւ: Այնուամենայնիւ զի որոգայթն գաղանի և հնարադիրն անելուակի, տարր ժամանակիս յանեից, անցեալն անյայտ և ապառնին կարծողական, ես ան-

համբեր և քնուն Թերահաւատ, ոտք անհաստատոք և միտք ցնդեալք, կիրք հարկաւորք և բարք անժուժկալք, մարմին մեղսամակարդ և յօժարութիւն երկրասէր, դիմամարտութեի տնկակից և խառնութիւն ներհակական, քնակութեի կաւեղէն և անձրևք ուժգնակիք, կարիք անթուելիք և պատահարք ամենադրաւք, միտք չարախնամք և տենչմունք բարիատեացք, կեանք առօրեայք և զմբաղք սակաւաւորք, խաբմունք յիմարուե և խաղալիք տղայականք, աշխատութիւնք ընդունայնք և վայելմունք երազականք, համբարք ոչընչից և պահեստք հողմոյ, նմանութիւնք ստուերաց և կերպարանք ծիծաղելիք։ Վանդի իբրև եկն եհաս պատուիրանն, ըստ պաւղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեցն, և ես մահացայ կենացն և կենդանացայ կորստեանն։

Դ. Վոզացան օտարք, չարին գումարք, զտացուածս սրտիս իմաստից, ըստ գրոյն կանխաբանութե. որով եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութե ինձ նուաճանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութիւն։ Ո՛չ յառեցի զակն ոգւոյս ՚ի գլուխն իմ կենաց ՎՀՊ, որով ընդ ուղիղն հետևեցայց Վանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս, յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի, ՚ի մեծագոյնն առաւել՝ աստուստ գլորեցայ, յերկնայինն ուղղոյն անդնդոց մատնեցայ, ՚ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ, յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ, կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն գթեցի, ՚ի զերկրորդն խուզել՝ զնախինն կորուսի, ՚ի լինդիր սակաւուն՝ ՚ի կարևորացն զրկեցայ, ՚ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի, առ սովորութեն կորիլ՝ կորուսիչս գտի, ՚ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ, զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝ չարչար դատախազ անձին կարգեցի։ Յորոց փրկել զմատնեալ զերիս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու զհոգիս. զի դու միայն, տէր Յն, Ձանաչիս բարերար, անսահման փառօք ընդ հօր և հոգւոյն սքղ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հնծուքեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի՛սկ զառիթման մահու դիպուածս դժոխար՝ մատ ծառոյս դառնութե՛ պտուղք, ընտանիք թշնամիք, հարաշատք հակառակք, և որդիք դաւաճանողք, ստորագրեցելովք մասամբդ նշանակեցիչ՝ դրեալ յանուանէ, որ են այսոքիկ։

Բ. Միրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկեւղ, հետք խոտորնակ, շունչք ծխախառն, գնացք խաւարային, գոյութի՛ւ լերդի վհմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութի՛ սասանեալ, անձն տապիր, աւանդ վաճառեալ։ Վաղան վիրաւոր, Թուչուն նետահար, փախստական քարավճիժ, ըմբռնեցեալ միաստպարտ, աւազակ ծովակուր։ Օ՛ի նուաղ նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, միակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս, բեմական ստորնաքարշ, քահանայ անխնդրուկ, օրինական աննուէր։ Վախիր կշտամբեալ, խմաստակ խելագար, Ճարտասան անձոռնի։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, երեսք լպրծեալ, գոյն անհամբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ։ Յորտիկ խանգարեալ, Ճաշակ գարշեցեալ, այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուռճահալ, մեղր՝ի մկանց Ճարակեալ, անպատսպար անկեալ։ Մնասարծ յուսահատ, անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռոզ, անասնօրէն ապիրատ, դժոխային ազահ, աներասան չանդուդն։ Մոլեգնութի՛ անձծ, ձեռնաձգութի՛ սպա-

նօղ, տատասկացան երկրագործ, երջանկուԹէ եղ-
կելի, մեծուԹէ վատԹարեալ, վայելչուԹէ անչքեալ,
կարողուԹէ տկարացեալ, բարձրուԹէ խոնարհեալ,
փառաւորուԹէ ընդոստնեալ, պատուիրանազանցու-
Թէ յարակայ, սխալանք ինքնակամ: Ա՛տակարար
կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հա-
տուածեալ, հաղարապետ գողամիտ, մերձաւոր կծծի,
բաշխօղ ժլատ, վերատեսուչ կարկամ, ոգի անախ-
տակիր, լեզք անսեր, բարք ատեցօղ, աղիք անգԹա-
կանք, գնացք անխոհեմ, աներևոյԹք ինասեալք,
ծածուկք անիծեալք, դիպուածք Թշնամանեալք:
Ա՛ահաւական վատնիչ, շահարար շուայտեալ, պաշ-
տօնեայ արբեցօղ, գանձուց ոտիկան երկմիտ, պատ-
գամաւոր բանսարկու, դռնապան քնեաճ, աղքատ
հպարտ, մեծատուն ժխտօղ: Գ՛իւանապետ անօրէն,
պահապան մատնիչ, բնակակից չարախօս, սուրհան-
դակ անժամն, ԹղԹաբեր պարտաւոր, առաքեալ
խռովարար, միջնորդ անիմաստ: Ա՛ղբեայ արտա-
լած, Թագաւոր Թարմատար, կայսր ոգեկործան,
իշխան տիրադաւ, զօրավար զրկօղ, դատաւոր ակն-
առու, ռամիկ ինքնագործ: Ղ՛ահատողի ծաղր, սի-
րելոյ աշխարհ, բանագրի դժրով, յանդիմանչի դատա-
խազուԹիւն: Գ՛անգի և ՚ի վերհադունիցդ կոչմանց
էր ուրեք արդեւք գի էի, իսկ ՚ի վատԹարականացդ
մասանց եկն երբեմն եհաս գի եղէ: Ա՛րդ այսքան
ինասակարուԹիւնք խարդախուԹեանց յաձախա-
գունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և
յոմանց տիրեցայ իբր զտկար՝ կամաւ մատնեալ գիս
ինքն մահու:

Գ. Ա՛րդ զո՞րս ՚ի վերագրելոցդ մասանց քեզ ատե-
լեաց և իմ կորուսչաց ՚ի սպաս պաշտաման քեզ
ընծայեցից, զորպիսիս ապականուԹէ պարագրեալս
ամենասուրբդ քո մեծուԹէ հանդիպ կացուցից, և
կամ որքանեօք երկայնմտուԹք համբերեսցես այսքա-
նեաց պարտուց, ո՞րքան նեղես, ո՞րպիսս լռեսցես,
գինո՞րդ իսկ անսպայես, իբր ոչ մատնեսցես հարուա-
ծոց գանից զարժանիս սատակման մահու: Ա՛րդ
այսոցիկ անշոյլ մեծուԹեց հոգւոց խաւարի ողոր-
մուԹէ լուսոյ քոյ պատահեսցես բժշկել քաւել և

կենագործել, զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԵԻԹՆԵՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ՔՐԻՍՏՈՍ ած անուն ահաւոր, մեծութեան տեսակ, անքննին բարձրութեան պատկեր, անսահմանն զօրութիւն, կերպարան փրկութիւնդ լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութիւնդ վերնում հանդերձ տեառնն, Աստուածարհ հանդարտութիւնդ, ապաւինութիւնդ նորոգ և անտխրական երանութիւնդ, ամենակալ լինքն իշխանութիւնդ բոլոր էականնութիւնդ, օրհնութիւնդ կոչումն աւետեաց ձայն, բերկրութիւնդ բարբառ, անմահութիւնդ դեղ, որդի անձառ այր միոյ. որ լինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ լինձ անհաս է, քեզ սահմանեալ է. որ լինձ անանցն է, քեզ հպատոր է. որ եղկելոյս լինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ լինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ լինձ անկշռելին է, քումդ անձառութիւնդ չափեալ է. որ լինձ յուսահատութեանն է, քեզ սփոփանոց է. որ լինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ լինձ հեծութիւնն է, քեզ խնդութեան է. որ լինձ ծանուցանք են, քեզ թևթևագոյնք են. որ լինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան պրեգեալ է. որ լինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ լինձ անձառն է, քեզ համարեալ է. որ լինձ մեայլն է, քեզ ձառագայթ է. որ լինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ լինձ սուրկալին է, քեզ հեշտալի է. որ լինձ փախչելին է, քեզ վանելի է. որ լինձ անմատոյցն է, քեզ դիւրա-

հերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ հակառակ ըզօրութիւնդ ընդ ոչգոյին համարեալ է։

Բ. Ա՛յլ դու, ողորմած՝ ած զոլորից տէր զՅովհ, և այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն անուան փառաց մեծութեանդ հօր քոյ օրհնելոյ, վասն կամաց գթութեանդ ոգւոյդ քոյ սրբոյ, տես՝ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութեանդ, և՝ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազուն. նայեա՝ի քնուածս ամենապատաղ խակութեանդ, և պարգեւեա բժըշկութիւն վիրացս և հնարաւորութիւն կորստեանս, զերծումն բազմամանեայ մահուս և շաւիղ կենաց ապականելոյս, նորոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամպարշտելոյս։ Եթէ ես զանմանն ինձ կամ ցուցի, որչափ առաւել դու զընաւորականդ քո զընտանի բարերարութենդ. եթէ՝ի փշոյ պտուղ ընծայեցաւ քաղցրութիւն, որչափ առաւել՝ի ծառոյդ կենաց՝ Հաշակ անմահութենէ. եթէ ես իմոյ ատելեաց ողորմութեանդ մաղթեցի, դու քոյոյս զիաւրդ ոչ կրկին մատուսցես, հզօր, յանհնազանդ առատութենէ։

Գ. Ա՛րդ տես՝ի քոյդ մեծութէ, բարձրեալ, նայեա ցեալ՝ի յիւմ փոքրկութենէ. ընկալ զսակաւ խոստովանութիւս անհամար մեղացս, որ զընաւն համայն տեսանես. և որպէս զվի իմին գթել ոչ գրեցեր, և զաւազոյս փոքու սասանել մի համարեսցիս. և իբրև զԱւաթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպաւիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութեանդ զնոյն գործեսցես, երկայնմտութենդ. որ տաս ամենեցուն առատապէս անաչառութիւն որպէս յաղթօղ բարի բազմիմաստ, և ոչ նախատես գլեանեալ ստրուկս որպէս ողորմած և ամենաստեղծ. ստոյիր վերստին, և մի կորուսաներ զբուծեալս արեամբ քո, գթած։ Օ՛ի քո է փրկուն, և՝ի քէն է քաւութէն, և քեզ վայել է փառք յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերաբերեալ յաւելուած կրկին հնծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Օրհնեալ տէր Յն ընդ հօր, ի կամս հաճութեանդ հոգւոյդ քո սքեղ. և օրհնեալք ամենայն առ ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցօղ չնչոյս բայ ի քէն, Տէր: Այս է օրհնութիւն Յակոբայ, ասէ Աստուած, յորժամ բարձից զմեղս նորա:

Բ. Արդ ողորմեաց ինձ, տէր բարեգութ, ըստ նախնիդ քո սովորութեանդ, և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին Դաւթի և ըստ Պօղոսի. զի բաւնիդ քո փրկութեանդ ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ ի քէն: Ընծայեա ինձ հրաշագործեա, ողորմած արքայ երկնաւոր, որպէս անկելոցն ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոցն ի սրահին Աբեթհեզդայ: Յորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայեցեր զբժշկութենն ձեռնտուութի, իբր գիտեալով զանբոյժ չարութենն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեանդ առն գիշերին տիրամարտութեանդ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ: Որ թէպէտ և կանխաւ ինն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկինեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբերելի դատողացն զքեզ ի խաչին: Այլ դու այսպիսւոյ անյարիր ջատուկ մահու ճնշեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձառ բարութի, սիրալի մարդասիրութի, սարսափելի ներողութի, սոսկալի երկայնմտութի, անբաւելի քաղցրութի, փառատրելի հեզութիւն: Որ միշտ յաղթիս ի զթութէդ և ոչ թշնամանիս, պարտիս յողորմութէդ և ոչ պարսաւիս, բռնադատիս ի մարդասիրու-

թենէ և ոչ անգոհանիս, հարկիս ի բարուքէ, և ոչ հայհոյիս, ատիպիս ի սիրոյ և ոչ բամբասիս։ Պաղատիս զարձին իմ առ քեզ և ոչ ձանձրանաս, արագես զկնի ապերասանիս և ոչ լքանիս, ձայնես չլսողիս և ոչ սրտմտիս, փութաս մեղկելոյս և ոչ խափանիս։ Ո՛ւր չարս ես բարի, առ ամենապարտս ես ներօղ, առ մեղաւորս ես քաւիչ, առ խաւարեալս ես լոյս, առ մահացեալս ես կեանք։

Գ. Ո՛յս են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաձախս ծնանին երկնաւոր պտուղս անձառս և զարմանալիս։ Ո՛յս և ինձ թշուառացեալումն, օրհնեալ ամենապարգեւ, արի առ զմահիձս խշտացդ մեղաց ի վայր կործանմանդ, և հեռեալ ժամանեա յանդորը հանգիստ անաշխատ կենաց։ Լսեցեալ ամենակարօղ սուսերաւ բանիդ հրամանի զերիզասնդեալ մահազդեստս պարփակութիւն դրժոխասնեայ կապանացս, և լոյծ ինձ պհանգոյցս խեղդողականս ոգեպահանջ սաստկութեանս, առաքելով զարժանաւորս մահու յաղատութիւնն վերին անանց բերկրութենն, կենսաբեր և ՚ծծային քո բանիւդ։ Ո՛ի տակաւ տակաւ ազդեսցես, և մի օր ի յօր յերկարաձգեսցես, զի մի ստուար ծանրուի բեռանցս մեզաց տիրեսցէ թիկանցս ազդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ հայել ի դժոխս, և ուժգնակի զոռոզ բռնութեամբ անպարտալ հոգևորական զինուն արարեալ՝ մահու ծառայեցուսցէ։ Ո՛չ օգնեա ինձ, բարի վշտակից հեծութեանց մահու երկանց, առեալ չինեն զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուսցես զվայելչականն յաղթանակի արի զօրութենն, այնպատեհ հաւատով յուսոյն կարծրութեամբ ընդ քեզ բևեռել անսայթաքելի։ Ո՛ւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՅԻՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծումեան նորին հակոզն առ նոյն ազբս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ՀԱՒԱՏԱՄ և վկայեմ մտաց դիտումեամբ՝ ի քէն ազդեցեալ ոգւոյս խնամտիւ ուշիւս տեսանել, զի ըղձալի են քեզ, բարերար, աղաչանք մեղաւորաց քան զինդրուածս արդարոց։ Օ՛ի միոն զպարտումեիւն անձինն յայտնեալ՝ հնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զբնումեես չափ, և մեծ կրճտամբիչ աստէն համբարձեալ ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան և դառն դարովիչ և ծածկատես դատախաղ։ Իսկ միւսն յարդիւնս բարեացն իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վստահումեե, մեռանայ զսահման բնումեն, և պարգևաց քան ողորմումեե դիտեալ ակն ունի։ Վ՛ասն որոյ առ միոնսն մեումեիւ են ստեղծուածք Ձառից, որ զողորմումեեդ քո փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն լռեալ են քոյդ, անքնին ահաւոր և ամենահնամ, ամաչեմ ասել՝ մեք և երկրաւորիս գործոց պատմումեե զքոյդ յառաջեալ։ Ի՛դդ արի տէր, և մի զօրասցի քան զքոյդ աչ հողեղինի. մի կշռեսցին ողորմումեիք քո ընդ Ջանից մարդկան։

Բ. Ի՛ւ արդ առողջքն անդամք անկարօտք են բժշկումեե, և տեսանողականքն աչօք չունին ակտս առաջնորդի, և փարթամքն ընչիւք ոչ դեգերին առ դուրս լինոյն, և ամենայնիւ յղփացեալքն ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հայոյ, և սքքն վարուք ապէնիազ են ողորմումեե։ Ի՛ւ արդ ինձ զմասցիս ողորմել, բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատխուր վարանեցելոյս։ Ո՛րանգի մեք էի իբրև զշնօք, ասէի զանձն իմ իբրև վնա արդար և անարատ. մեք էի իբրև զՈ՛ուխս, ասէի վստահումեե զնորայսն, ծանիցէ տէր զայնոսիկ որ իւրն են. եթէ էի իբրև զ՛Ասւեթ,

ասէի արարի զերաւունս և զարդարուն, և դարձեալ զմեծն քան զբնութեն մարմնոյ, զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում մի լուիցէ ինձ տէր. թէ էի իբրև զ֊ղիա, ասէի զանձն իմ այր այ. թէ էի իբրև զ֊բեմիա, զբոյդ ձչմարտութեն յանձն օրինակէի. թէ էի իբրև զ֊զեկիա, պարծէի զբարուքն և զերաւա֊ցին՝ գնացի առաջի քո արդարութե. թէ էի իբրև զ֊Պաւղոս, ասէի զիս բնակարան ազդարան և ընդու֊նարան այ բանին։ Ա֊յլ ես անօրէնս ի մէջ գիտու֊թե օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ըն֊ծայել յարգանօք բանից իբրև զնոսա, և զբնաւին չարս որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշա֊տակել, այլ և ոչ զամենեսեան գոյից զբարեհո֊չա֊կեալ անունդ հզօր ամպարշտեալս լեզուով գովել։ Այսուհետև առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատո ինձ ողի փրկութե, աջ պաշտպանութե, ձեռն այցելու֊թե, հրաման բարութե, լոյս ողորմութե, բան նո֊րոգութե, պատճառ քաւութե, գաւազան կենաց օգնութե։ Ո֊չ դու ես յոյս ապաւինութե, տէր Յ֊ս Վ֊ս, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւի֊տեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն առեալս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ որպէս զի ոչ վայելէ օրհնաբանու֊թե ի բերան մեղաւորի՝ ի ձչմարիտն առաւել կանխաւ քան ոսայ, զիա֊րդ յաւելից կրկնել զնոյն գո֊վութե աղաչաւորս քաղմապատիկառ, որ հանապազ ընդունիմ անկեծս ի սաղմոսիս բարեբաստութեան։ Ո֊չ իբր երգեցից ինձ վտանգս և արձանացուցից

նախատինս, և 'ի մերկութեես գրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից· զիա՛րդ ընդ Պաւղի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես· զիա՛րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք քնակեսցեն առաջի աչաց քոց· զիա՛րդ, թէ դա՛տ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ անբծութեե իմոյ որ յիս· զիա՛րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց· զիա՛րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայնը որ գինի· զիա՛րդ, թէ տեղասցե՛ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ· զիա՛րդ, թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս և զլեզուս մեծաբանս· զիա՛րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ո՛չ գտեր անիրաւութիւն· զիա՛րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս· զիա՛րդ զևան, թէ ես արդարութե երևեցայց երեսաց քոց· զիա՛րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա· զիա՛րդ զմիւսն, թէ հատուսցե՛ ինձ տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց· զիա՛րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սքին, թէ լուացայց սրբութե զձեռս իմ· զիա՛րդ 'ի մէջ նանրուե զամպարշտացն աձռուս բամբասեցից· զիա՛րդ զերջանկին պարծանս Թշուառացելումն կերպաւորեցից, թէ դա՛տ արա ինձ տէր՝ զի ես յանբծութե իմում գնացի· զիա՛րդ օտարս 'ի բարեաց՝ գիտողիդ գաղտնեաց արգահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամպարիշտս զանձն իմ· զիա՛րդ ես ինքն գոլով զայլս անիծեցից, թէ տա՛ւր նոցա տէր զգործս նոցա, և 'ի կարգ բանիցն համարձակեցայց։

Ը· Պանդի թէ զյետինս բանիցն առաջնումքն աստանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք և յաճախեսցեն դառնութիւք։ Պայց 'ի շեղջեցելոցն արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց հանապազորդեան յանդիմանութե սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ· առ որս և սպառուած քառասներորդի ինններորդի հատուածի բանի յանդիմանողի զիս գարշեցուցեալ, հանապազ խոյտառակէ· խոցեալ զբերանս 'ի փառաբանութե, եղկելի զանձն իմ ցուցանէ, ա՛ծ յինձ ձայնիւն դատախազեալ, յանկալուէ կենաց լքանէ,

միանգամայն և վերջս մահու ինձ իբր ի պատնիշէ առաքէ ։ Վասնզի թէ չար է անէծս առնուլ յօտար ըէ , ապա անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար . իսկ եթէ չառնուլ նախատինք ի մերձաւորաց օրէնք են, ապա ի տեսողէն հայել զայսոսիկ , կրից արեան տաժանմունք, վիշտք ազէտից և խեթք մտաց։ Վայ թէ առ խոնարհուլեն անձին իւրում մատնեսցի , ջնեալ և կշտամբեալ անիծիւք ի լեզուէ իւրմէ , ի խոստովանեալ և յամչնիչեան շրթանց բերանոյ վերնոյն օրհնեսցի . զի ձչգրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքանելով . սահմանաւն սիրոյ զպատեացն արմատ կըրճատեաց , ոչ տիրեալ ի խարդաւանաց չարաբանողաց . ոչխար հօտին Վասի գտաւ բժշկեալ՝ դիմելով ի յաղն բուժիչ աղեացն արկածից ։ Վայ և այս անբանական բարոյից է՝ ասուն կենդանեաց ի մէջ դալարոց ծաղկածին վայրից կենաձիր բանից թըմբրութիւն մտաց ի յարօտս մահու ձարակել ։

Գ . Այս արդ քանզի իմ է առակս վերջնին կշտամբողական , և առ իս ակնարկէ զդիպուածոյն չար պատահմունս , որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիպանողականս հրոյ տօչորման , հոսեալ ի յերկինս ի զդոյիւ գազաթանս իմաստնարանի բազմակիս ։ Վանզի զիաիրդ ի յարդիւնս ինձ օգտից սաղմոսն եկեսցէ , յորժամ անպտուղ ի բազմերգութիւն լինիցիմ, ոչ նուագել հոգւով , ըստ Թեղադրեցոյն Պաւղոսի . զիաիրդ ընդ մարգարէին և զերուն իմն խառնեցից մեծս մեղաւորաց՝ նկուն պիտանեաց, ասել ընդ սմին , Թէ ի բայ կացէք յինէն ամենեքին որ գործէք զանօրէնութիւն . զիաիրդ ոչ ունելով ի բազմոյն պատուիրանաց կատարեալ՝ ընդհին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին , որ նախ ինքն արար զոր մեզ կանոնեաց , Թէ քանզի ծառայս քո պահեցի զայս , և որ զհետն գան ասացեալքն . զիաիրդ Թափուրս ի լուսնկենէ իմաստից կենաց ընդ երկիւղածս ճոն օրհնեցից . զիաիրդ ընդ մեծին մաղԹանաց զիմն յօդեցից , Թէ զմին խնդրեցի ի ճոնէ՝ զտեսիլ վայելչութեան նորա և զհրամանատրութիւն տաճարի նորա . զիաիրդ ի հրաժարելին ինձ ձեռ-

նամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայել է օրհնութիւն. զի՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զկնի յոլովից առեալն, թէ երեսք ՚ին վերայ չարագործաց՝ սատակել ՚ի յիշատակս նոցա յերկրէ. զի՞րդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին. զի՞րդ զկերպարանացն իմ նմանութիւն, թէ բազուկք ամպարշտաց խորտակեսցին. զի՞րդ սատակմանն ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն. զի՞րդ զբազմայածեան լեզուս ՚ի յօրհնեալն բան միեցից, թէ ասացի պահել զձանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով. զի՞րդ փշով մեղաց հեղձեալս զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութիւն իմում ընկալար. զի՞րդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր զՀանդուրձակիցն դատուվեցից ապրել ՚ի նոցունց, թէ ՚ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս ՚ած։

Դ· Օ՜ իմ՛րդ իբր ո՛չ կռապաշտեալ անպատկառաբար պէս պերձացայց ունայն պանծանօք ասել ընդ Դաւիթ, միթէ մոռացեա՞լ էիցէ մեր զանուն ՚այ, կամ ձգեալ զձեռս ՚ի մաղթանս օտար աստուածոց· քանզի որ ՚ի մեզս դարշուրթէ խոնարհեսցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ ՚ի պաշտօն յաւանեակաւ նայն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ Աստարտայ և Քամոսայ և Մեղքոմայ արուարձանի և Քարահատայ Թաբմատարի, ընդ զաղրոտեացն կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք անվերարկու ծանակութիւնք։ Իբր ո՛չ պատկառեցից սովիմբ ասել ընդ նահատակին, որ զայս դիմագրաւութիւն առ բարին ունէր միշտ, թէ վասն քոյ մեռանիմք զօրհանապազ, և որ ՚ի կարգին է սորին սաղմոս։ Իբր չիմարս յարս և վատթարս ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութիւն և սիրտս զհանճար. իբր մարդելոյզ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից. իբր զկրկին երկրորդեալսն մեծանուննն բարութիւնս, թէ հաճոյ եղիցէ առաջի ՚ած յերկրին կենդանեաց։ Օ՜ իմ՛րդ ունօղս անբաւից մեղաց զարդարոյն առեալ կարդացից, թէ ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք. առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ·

զիա՛րդ զիս լինքն մատնեցից կորստեան յասելն զայս բան, Թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութիւն. զիա՛րդ, Թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորքդ յերեսաց ՅԱ. զիա՛րդ դրդեալս ապաշխանացու փափկութեամբ՝ սահմանեցից զանմանն ինձ բան, Թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և զաղգակիցս նորին ընդ նոյն, Թէ ես՝ ի նեղել նոցա քուրձ զգենուի, և իբրև զսգաւոր և զտրտում խոնարհ առնեի։ Որպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, Թէ սակայն մրուր բարկութեն ՅՀ սպառեսցի, և արբցեն՝ ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի. իբրև զևան առ սմին, Թէ զի՞մ եղջեւրս մեղաւորաց փշրեսցես։ Զիա՛րդ զապերախտութեն Յակոբայ՝ ի ձառ առեալ Հենոքնեցից, որ ընդ ստուերին զՀմարտութեն ընկալեաւ, մուտացայ ընդ նոսին նոցին Թերութեք զերախտիսն Աստի՝ ածայնովքն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զզօրավարութեն Յովսեփի ցպոյն աքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տերունական մտեսութեն։ Զիա՛րդ զյարուցելոցն՝ ի վերայ դիւաց զաղետս ցուցից, իբր նոքա զօտարացեղից խուժադուժ ազգացն ասելով, Թէ արկին զդիակունս բարեացն որ՝ ի մեզ՝ կուր ինասակարացն Թուխոց, այս է՝ այսոցն օդայնոց. որպէս զանկեալ զսերմն բանին՝ ի Հանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ որ անուանեցից. իբրև զնմանակիցն առ՝ ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ գուպար գաղտնամարտ մոացս օցտելոց, զոր ես զօրացուցի գործակցեալ հնարիւք բանսարկուին։ Կա՛ւ ո՛չ ունիմ աղերսել, Թէ մի՛ լռեր և մի՛ դադարեր, ՅԱ. և խորհեցան՝ ի վերայ սը՛ց քոց և ասացին, զոր՝ ի կարգէ սաղմոսիս և աղօթել։ Վասնզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ՝ ի վերայ բռնութեն մելեկան դիւաց միշտ Հակատելոց առ ներկայիս խռովութեի, և ընդ նոսին նոցին մշակաց։

Ե. Յորոց դու, տէր Վա՛ որդի բարձրեալ մեծիդ ՅՀ, պահեսցես և ամրացուսցես երկնային զօրուդ շքեղ Ջախակութե՛ք՝ յամենայն ընթացից խաբողին հողմոյ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի Թէ և

գոյին չիս անօրէնութիք բազմօրինակիք, այլ ուչ հայհոյութիք։ Որ ուչ հանգեաւ ի կորուստ նմանեացն իմոց ամպարշտելոց, այլ ամենագորով Թախանձմամբ ընդ եղծման ջրոյղին զաղբագործաց կրկին վշտացար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ դրեցեր, ասելով զզարմանալին լսողաց բան, ածեալ զմտաւ ուչ եւս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Այլ միխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմնաքրից և պարտաւորաց սատակմանն. որ երբեմն առակաւ դիմենուոյն զանխայելն ի կործանելիան ցուցեր, ողորմած, և առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարմանն։ Ընձառեալիս ցուցեր բարութեան տեսակս յիշատակաց տօնելիս՝ ի վերջին աւուրս. քեւ ի ձեռն առաքելոցն քոց՝ ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաձաշակս հրամայեցեր։ Ահա և յիս ցօղեա կենդանի զհայրենի գթութեդ զսեր, զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութեդ։ Այս քեզ ընդ հօր հոգւովդ սքանչ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այի ընդէր է լինձ քնաւն որ ի սաղմոսին այսպիսեաց բանիցն ի կիր արկանել, որ ի նախատինս միանգամայն և ի նզովս լինձ յարակայիս, հանապազ երգել խմովս տաւղօք։ Վասնզի զինքդ արդեւք զշուք երջանկին լինձ գատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ուչ մերձեցաւ առ իս թիւրեաւն սրտիւ։ Ո՛չ ինքդ զկարգադրութիւնս

տանցն՝ի յայսմանէ զկնի Թուելոյն զարհուրեցուցչաց ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինաւորին և Թագաւորին և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն ևն համբուրելիք ասելով, ոչ յուսա- հատ եղեց՝ի կենաց պատմողս աւետեացս և նորոյս աշակերտս անմահն յամենասուտ բարեկարգութենէ։ Օ՜ իմոյդ ըստ իրաւախոհ արդարոյն, ընդդէմ մե- ղաւորացն մահու զինեցայց առակաւ առաւօտին՝ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինե- լոյ, որ և ոչ զանդամն մարմնոյս գանեալ խրատեցի. զիմոյդ մտանակցեալ մեծին արուեստ՝ սատակեցից՝ի քաղաքն ետն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի։ Օ՜ իմոյդ ստեցից զրու- զինն չև յայտնելոցն, թէ զմխիթր որպէս հայց կերայ. զիմոյդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր ընդ յստակ արտօսր աղբերց երկոցին՝ ա- սեմ ընդ նմին, թէ զըմպելիս իմ արտասուօք խառ- նեցի, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Օ՜ ոհս լինձ զրեցից մեղօք մահացեալս, յորժամ սի- րոյն այ՝ի բոլոր սրտե զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրի- նեցաք և յանցեաք, և որ՝ի վախճանն յանդի սաղ- մոս իրաւամբք առ խս, քան առ Իսրայէլ։ Ամենք յարգեցայց դասիւընդ բարիսն, յորժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս գտաւ, ՚ի դարշուրթէ կերակրոյ ՚ի մահ սովեցեալք և յաճա- խասէ ձգանց ՚ի հոգւոց նուաղեալք, ըստ խտրուէ ինքնօրէն կրօնից հրեից և հեթանոսաց։ Օ՜ իմոյդ արդարուն իմ ինայ յաւիտեանս, զոր ոչ քնաւ իսկ կատարեցի։

Բ. Ես զի մի տաղտկացայց յամեալ՚ի բանից, հա- մառօտել զսոյն փութացայց։ Օ՜ ինչ ունիմ ասել ՚ի տեղի բանիցն՝ զոր ահաշուընչ ձայնն նուագեաց օրհնեզդոյն Դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խընդ- դրեցի զքեզ. զիմոյդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամենայն ձանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. ինչ ընդ եղեալս և զայն մատուցից, թէ՚ի սրտի իմում Թաքուցի զբանս քո, որպէս զի մի մե- ղայց քեզ։ Որպէս զուշնայնութենացս իւրոց զլուս-

թէեւ Հառեցիկ ընդ պարս մաքրոց , թէ 'ի պատուի-
րանաց քոց խմացեալ , առեցի զամենայն Հանա-
պարհս չարաց : ¶ Օ Տ֊ր իմդ զՀեզոյն Հշմարտութիւն
իմում ստուգեաս մշտնջենական երդմնահարութիւն
կարգեցից՝ ուխտեալ ընդ Հաւատարմին , երդուայ
զոր Հաստատեցի պահել զդատաստանս արդարու-
թեանդ քոյ : ¶ Օ Տ֊ր ինձ հրեշտակ մահագոյժ անհրա-
ժեշտ վՀռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ Հեռի
է 'ի մեղաւորաց փրկութիւն : ¶ Օ Տ֊ր չարս խակապէս՝
զբարեացն գրեցից՝ որք 'ի ՚ոնէ առնուն զնոյն Հա-
տուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ
տէր ուղղոց սրտից : ¶ Օ Տ֊ր զՀամառօտն փոխա-
տրութիւն անաչառութիւն՝ վրիպեցելոյս ինձ տահմանե-
ցից , թէ զԹիւրեալն յափշտակութիւն տանի ընդ
այնոսիկ , որ գործեն զանօրէնսն : ¶ Օ Տ֊ր զՅաճա-
ղգեստին պանծանս ամաչեցելոյս ինձ պատուաստե-
ցից՝ ասել զնորայն , թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ
իմ և ոչ զբօսան աչք իմ , և որ յետ սորին պատ-
միս ասացեալքն : ¶ Օ Տ֊ր զանձառն քան զմարմին
բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութեան վՀատելոց
ես զանձ գեՀեռին , ասել ընդ օծեալն ՚այ Հոգւոյն ,
թէ յառաջագոյն տեսեր , զի ոչ գոյ նենգութիւն 'ի
լեզուի իմում , 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղ-
մոսին մինչև 'ի լրումն աւարտման բանիս : ¶ Օ Տ֊ր
դասակցութեանդ դժնեից մարդոց Համաբան այլս մա-
Հու և որդիս սատակման բարբառիմ զբարեհնօր-
Հին , ոչ ահա զատելիս քո տէր ատեցի , և զմնա-
յուածն սորին կարգի : ¶ Օ Տ֊ր մեծաւն վստահու-
թեամբ ոտնելի վերին , ահաւ իմ և դու աշխարս աշ-
խարհի , զանգատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծա-
ցուցանես ընդ պսակելոյն , թէ փորձեա զիս տէր և
տես , թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ , և
դյաւելուածն որ զետ սորին : ¶ Օ Տ֊ր ես գոլով և
յայլոց աղօթեմ՝ ապրել՝ յուսացելոցն յաճ ձայնակ
յեալ , պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի և 'ի
մարդոյ չարէ : ¶ Օ Տ֊ր Համբարձայդ ընդ փառա-
ւորեաւն մաղթել ՚այ , թէ դու ես յոյս և բաժին իմ
յերկրին կենդանեաց : ¶ Օ Տ֊ր իբր Հանդիսացեալ
ընդ Հնաւորին՝ զմիջանակին յաղթանակի Թագաւո-

ըլլիս մատուցանելով զառաւելեալն քան զօրինակ ա-
ղերս աղօթից, թէ լինձ սպասեսցեն արդարք քո մինչև
հատուսցես լինձ։

Գ. Կարեբանեալ է և այս իմաստ հոգևոր և տե-
րունի գործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց,
յորժամ զամենայն արհամարհիցէ և զկղզնապատ-
ճառն եղելոց միայն ընտրիցէ ասելով, թէ երանի
ժողովրդեան, որոյ տէր Աստծ է նոցա։ Աստծ է և այս
բարձրութիւն ընորհի և զգուշական համարձակութիւն
լցեալ երանութիւն, թէ սիրք քո օրհնեսցեն զքեզ։
Ուղիղ է և այս ընտանութեն մերձաւորական հոգևոր
հաղորդութիւն յաճ յուսալ և ի նոյն արձանանալ
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կատարէ,
մինչև զողբալին և զզուարձալին ազդեսցէ, թէ պա-
հէ տէր զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն
մեղաւորս սատակէ տէր. ի գլուխս լրման գրոց
նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ ե-
ցոյց վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց։
Օ ուգակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս.
զի թէ ընդունի զՀեզս տէր և խոնարհ առնէ զամ-
բարտաւանս մինչև յերկիր, ապա լինձ ոճրքան եղկու-
թիւք կան առաջի. իսկ եթէ հաձի տէր ընդ ժողո-
վուրդ ՝ՁԲ, և բարձր առնէ զՀեզս ի փրկութիւն, ա-
պա հերքեալս ի բարեմանութեէց ես ոճր հաստա-
տեցայց. իսկ եթէ օրհնելի է ՝ՁԲ ի սքանորա տիրա-
պէս, ապա օտարս ես ի մաքրութեէց ընդ ոճս դա-
տեցայց. իսկ եթէ ի կանխերգիչն մերձ այսր եդից
յիշատակարան լինձ կշտամբուե, թէ սիրեցէք զտէր
սքք նորա, զի ստուգութիւն խնդրէ տէր՝ և կրկին հա-
տուցանէ ամբարտաւանիցն, ապա յորոմ գնդի ես
գտայց գերեալս ի գաղտնեաց գտողին չարեաց։
Վանզի զօրօրինակ տատանին տագնապաւ տերևք
անկոյ եղևին ծառոց շարժեալք ի հողմոյ ուժգին
բախելոց հոսեալք ի խոնարհ, այնպէս զանացաւ
զարդել զընթացից իմոյ վերարձակութիւն քաջաբեր
ուղիշս՝ գյարմարեալս ձեռամբ անեղ միակիդ։ Օ որ
հաստատեսցես արմատացուցեալ վերստին դարձեալ
նոր պտղաւորութիւն անապականաւ, յանդաստան կե-

նաց խնամոց քոց կամացդ ամենապարգև Թագաւոր Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոպն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՅՍ արդ ընդէր ոչ ի վերագրեցեալն սաղմոս նախաձառական և յայլ մարգարէից մասն ինչ յօդեցից։ Քանզի զի՞նչ վայելուչն էցէ կերակրոյն, եթէ անզգայեալ յաւուրք ուտիցեմ. և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ի միտ առնուցում։ Քանզի նզովեմ զիս ինքն ի նոսին և ոչ խմանամ, լուացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արևու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղը ձաշակեմ և ոչ քաղցրանամ, ուռնիս ընանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ ի նոյն և դատարկ երևիմ, հանապազ ձաղիմ և ոչ երբեք խրատիմ, ողբիմ դարձեալ և ոչ զգաստանամ։

Բ. Ա՛րդարև մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ ի նոսին, ըստ մարգարէին որ ի դիմաց պարտաւորացն բանի և տէրունական առակին հինն տկոյն և նոր գինւոյն։ Ա՛ ասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք ի միասին, ըստ Դաւթեայ ձայնին, ապա և ինձ դժնեխս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի ասեմ զսաղմոն, թէ Հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր ՚ն ի վերայ հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար ելցեն մեղաւորք ի մէջ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամպարիշտն բարձցի յերկրէ, և ան-

իրաւք մերժեսցին ՚ի նմանէ ։ Ա՛ղքք ինձ կարդացէք առ ձայնն, Թէ զոր օրինակ վառի եղէգն ՚ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք ՚ի բորբոքեալ բոցոյն. լացէ՛ք առ սաղմոսն, Թէ արկցես ՚ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք ՚ի բանս ՅԱծեան վՀնւին մարգարէիւն ազդեցեալ Թէ ո՛չ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարո՛ւք առ սաղմոսն, Թէ մահ հովուեսցէ զնոսա. աղի արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիս իմ յարմարեցէ՛ք, յորժամ բարձրեալն ընդ Խորայէլ և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, Թէ ժողովուրդ իմ ո՛չ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք Թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վայ նոցա զի վազեցին զնևև ։ Խարբա՛ւ փոխեցէք ՚ի սիրտ մՀձկեալ Նոր աղաղակի, յորժամ տեսանօղն Յստուծով ամաչեցուցեալ զնս կշտամբեսցէ ընդ ապարասան տանն Յակոբայ, տեսէ՛ք արհամարհոտք՝ զարմացարո՛ւք և եղծարո՛ւք ։

Գ· Ա՛յլ դարձուսցես և ամիոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութիՀ ահաւորիդ սպառնալեաց ՚ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ, և խնամովք աջոյդ բարեբաշխութիՀ առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս ։ Այս քեզ փառք յերկինս ՚ի բարձունս, և ՚ի մահացուաց յերկիր ՚ի խոնարՀ, ՚ի սահմանս բոլոր աղանց և յամենայն յաւիտեանս. ամէն ։

ԲԱՆ ՎԱՔՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուելեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ միայն Թագաւոր, ընդ հօր քումմ պատուեալ և օրհնաբանեալ տեր ամենայնի, որդի այ կենդանւոյ. անպատձառդ միշտ լսումմ կորստեան, որ ամենևին անփորձ ես ի չարեաց, որ ոչ կամիս զմահ մեղաւորի, որ փրկուելոյ են ի քոց կամաց ընծայեցեալ, որ դարձուցանես զմրրիկ մեղաց ի յօդ քաւութեան, որ զհուր բարկութեան յանձրև փոխարկես։ Որ զթեանեալ զկինն ի բարեաց՝ կրկնակի գոյիւ նահանջեր երկեակ բնութեան ի նոյն արձանի, ոչ խափակես ընդ անպարտսն, և ոչ համայն ընդ պատժաւորսն։ Որ զլուծութիւն ծովուն սահմանաց իւր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր. որ զկարծրանիւթ վէմն անապատին ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր։ Որ զՅորդանանու ջրոյն սրաշարժ վայրեկութի՝ հրաշաւոր անդրադարձութեամբ ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւազանին ի թիկունս առաքեցեր։ Որ զպատուաստեալ պարիսպն Երիքովի, յօրինակ կործանման բռնութենն սատանայի՝ իւր զթեթևութեի յարդի ցնդեցեր. որ զինաստակար ջուր նորին ի յառակ այլայլութեան առ ի բարին փոխարկութեի՝ քանանացւոցն փրկութեի խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր։ Որ զՊեռային դառնութեի, իւր զմնաց անհատանութեի, կենացն փայտիւ ի քեզ յարմարեալ պիտանի արարեր։ Որ զառեալն ի գետոյն՝ ի գծագրութիւն անսահմանդ քո հրամանի անորակիդ գունակութեի՝ ի նոր երանգ բոսորային մածեր արիւն ի ցամաքի։ Որ զանկենդան ցուպ գաւազանին, ի կերպառութեի առ ի զքոյդ մերովս նկարագրիլ այլ և յօտարս

աչխից ընտրուԹի, 'ի տիպն ապաԹոյն կերպիւ վկ-
շապի նմանեալ ցուցեր : Որ զերջանիկ ձեռն աջոյն
Ա՛ովսիսի , 'ի ցոյցս տեսուԹե ապագայիցս հրաշից
մարգեղուեդ քո , բարձրեալ , և քև ախտաւոր մար-
մնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրուԹ՝ կրկին
դուշակեցեր : Որ յայսքանեացս շրջադրուԹիւն բա-
րեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ
մեղաւորաց կորստականաց նշանակեցեր , օրհնեալ
ամենագուԹ :

Բ. Որ բուսուցանես յերկրէ գալարի զմեռեալն
յանչնչականէն , որ զանշարժն իբր զընԹացօղ կա-
ռավարես , որ յանարգ արգանդէ կոչես քեզ պատ-
կերակից , որ տաս պատանեկաց աղօրիս ըմբռչխ-
նելիս , որ յայտս մաքուրս հերս ընծայես , որ զա-
զարԹ սևուԹե վարսից 'ի ձեան կերպարան զարմա-
նագործես , ցուցեալ՝ Թէ առ ամենայն սահման հե-
ռաւորական յաղԹօղ ես հզօր . որ փոփոխես զչըր-
Թունս բնաւորականս , ըստ բանին Յոբայ , 'ի կամ
հաւատարիմս : Որ սասանես զերկիր և զսիւնս նո-
րին 'ի հիմանց , նշանակեալ հաստուածին գոյիւ՝ Թէ
դու միայն ինաս անկորնչելի . որ հոլովես զտարերս
իբրև զանցաւորս , և դարձեալ 'ի նոյնն կապես իբրև
զյարակայս , յայտ արարեալ՝ Թէ և առ մեղաց բազ-
մուԹի դիւրապէս ունել կամ Թողուլ դոյնպէս զօ-
րաւոր իցես : Որ զարուսեկին անզգայ էուԹի իբր
երասանաւ ինն դաստիարակես , երևեցուցեալ այնր
իբրի կերպիւ , Թէ զընուես չար դիմեցումն յորժամ
և կամիս հանդարտ առնիցես : Որ զանբարբառ բո-
լորակ լուսնին կարգես ունայնս և պատարուսս ,
լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝
Թէ 'ի նուազուԹէ բարեաց զպարտաւորս մարմին
դու ածես 'ի լրուԹիւն առաջնաստեղծ հարստու-
Թեն : Որ զպատկերս անխօս աստեղաց իբր զդասակս
դոյզն հօտից տրոհես և ժողովես , յոյս ինն կենաց
առ այս խորհրդաբերեալ , քաղցրահայեաց տեսուի ,
Թէ և անաղաչաւորաց լեզուաց կարողապէս բաւես
ողորմել : Որ 'ի մէջ մահու և կենաց շաւիղ վստա-
հուԹե ուղղես 'ի ծովու , վկայուԹի եղեալ հաւաս-
ւոյ , Թէ և յանկասկածաւորն վայրի քև պաշտպա-

նիմք անգայթագղելի· որ իբր զջուր կաթսայից ի հրոյ եռացեալ, որպէս զմեղայ մըրիկ պղտորեալ բանիւ կամաց քոց խափուցանես: Որ հայիս յերկիր և տատանես զսա, զի անբանիւն զմտաւորս զգաստացուցանես· որ իբր զակատ մի անձուկ նաւի ի վերայ շարժուԹիւնս ալեաց՝ զանբաւ ԹանձրուԹիւն գետնոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաստատուածոց՝ Թէ իցես աներկբայելի, որ ի բան քո զօրեղ հիմնացեալ ունիս զամենայն: Որ սերմանես զարտաչնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստ պահեալ կրկին կենդանացնես· որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս ստանաս, որ ընդ մահացու նիւԹոյս՝ զնշխարդ կենաց խառնես, որ հրամմնաւ ակնարկուԹիւնդ ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանզարդուԹիւն ամենից եղանակաց: Վո՛ւ ե զօրուԹիւն և կարողուԹիւն, որ շրջանակես զժամանակս ամաց հոլովմանն աւուրց յայլ նմմանուԹիւն բարեպատեհ տեսողուԹեան· որ կարդաս զանմուռնչան իբրև զկենդանիս· որ ազդես միայն, և նոքա ընԹանան, որ միայն հնուս անկանես անՀառ արուեստիւ հնարագիտուԹեան մեզ և առաւօտ: Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ լինելուդեն, արարեր զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից, ըստ գրոյն երջանկուԹեան կանխահիացն զարմացման, այլ լիճն գոյացուԹիւն տօնելի տեսակի անեղծ աշխարհագործուԹեան և քան զսոյն ի մարդանալդ քո, որոց ոչ գոյ Թիւ:

Գ· Որ ահա զինսան մեր քեզ գրեցեր, որ զարդարուԹիւնն քո մեզ ընորհեցեր, որ ընդ քեզ կրեցեր զՀաշտուԹեն մերում փրկանակ, որ ոչ երբեք լքանիս յողորմուԹէ, զարձո զամպարշտեալս ի պաշտօն բարի երկիւղի, զԹմբրեալս ի զգաստուԹի արԹնուԹէ սրտի, զանմաքուրս ի սրբուԹիւն պայծառուԹէ կերպարանի, զգազմաբիծս յանբծուԹիւն հանդարտական ձեզ պատկերի, զբեկեալս յողջուԹիւն, որ ի գիպմանց ոչ խորտակի, զլացեալս ի խնդուԹիւն զուարԹուԹէ անտխրելի, զյուսահատեալս ի սէր միաւորիչ անքակտելի, զամաչեցեալս ի վստա

հուլթի հաստատուլթե անշարժելի, զվաւաղեալս ի լոյս երանուլթեան անմեկնելի, զմահու դերեալս ի կեանս որ ընդ եղծմամբ ոչ անկանի։ Օ՛ի փառաւորեսցի անուն քո, Քո՛, խոստովանեալ յամենայնի ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբ՛ի բարձունս երկնի և ի ստորևս երկրի և ի քնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՎԱՒԹՄՆԵՐՈՐԴ ՁՈՐԲՈՐԴ

Վկայեն յաւելուած կրկին հեծուլթեան նորին հակոզ առ նոյն ասելս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի՛ արդ առ ամենայն բան յամենայնի ուղիղ ես, ա՛ծ, իրաւամբք դատիս, արդարուլթ՛ կշռես, ճշմարտուլթեամբ չափես, օրհնուլթեամբ հեռևիս, բարւոք ընթանաս, ստուգուլթե սիրես, յստակուլթ կամիս, լուսաւորուլթիւն համբուրես, փորձիւ յանդիմանես, երկայնմտուլթեամբ քննես. ոչ ունիս նենգուլթե և ոչ գոռոզուլթե, այլ ամենևին հեզուլթե, հանդարտուլթե և ողորմուլթե։

Բ. Արդարացար վերին իմաստուլթ անապական հօրդ հանձարոյ՝ կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն ընորհօք, ըստ բանին սրբուլթեան՝ որ աւետարանաւն կենաց ի քէն ընկալաք. որ ոչ ի կոծելն ողբացի, և ոչ ի փողելն կաքաւեցի։ Պատ՛ղեր անօրինիս՝ թէ մի անօրինիր, և ես ի նոյն չարիս անդրեցայ. մեղաւորիս՝ թէ մի ամբաստնար եղ ջեւր ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի, և ոչ զգացի երբէք զառաջեալս, թէ ի ձեռին քո են եղ ջեւրք արքայուլթէ հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ Պ՛մբակումայ Պաւթի և Օ՛ աքարիայ։ Որ՛նուն լինձ կամեցար,

ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութիւն խոտորեցայ յարժանին ինձ մանն. սիրեցի բարկութիւն և ոչ բարութիւն, շջեալեցի ըստ գրոյն զնաւաւր և ոչ զլոյս, կենդանի ձայնիդ քո, զԹած, ապաւաւմն պատասխանեցի։ Օ որդին անմահ ասացեր բանիւ Նասայեայ, և զհուրն անշէջ և զկշտամբութիւնն անվախձան և զտեղին յաւիտենից և զօրինակ նմին սոսկալի, և ես ոչ խնացայ ըստ սաղմոսողին և ոչ մտառեցի, այլ՝ի մեայլ մտաւորական կուրութիւն գնացի։ Յուցեր մարգարէիւն, թէ զօրհնուի ստացյի որ զօրինս դնէ, և ես համառօտել զնոյն փութացայ։ Աբրահամ հոգևոր վիմի դրեալ մատամբ քո, աւր Յ՝Ն՝, զԱւրիթի իւրովքն բանիւք կանգնեցեր, ասելովն ինքեան ընտրութիւն առ սոյն, թէ պահեցի զօրինս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութիւն բանին միջնորդեալ զկրկին հաստատութիւն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս և զսորին նմանիս պարծանաց առ իմն խրախոյս, և ոչ զկծեցայ. Ձեպեցայ՝ի ծօնս Նահապետ և ոչ այլ՝ի յերկուս հետս երկմտութեան կրկին կաղացի կասեալ՝ի բարեաց, ըստ երգիծանելոյն Ղեղիւս։ Անիմ զԱովսես իւրովքն օրինակօք եկեալ՝ի մեռեալոց, և զտառս մարգարէիցն զրեալ՝ի յոգի, և զմտաեանս առաքելոցն ընդ մտացս մատն յեռեալ, և զտերդ հաստարակաց կտակաւն աւետեաց յարուցեալ՝ի Թաղմանէ անթիւ ննջեցելովք, և անհատատագոյն քան զնգեսին եղբայրակցութիւնս այնը մեծատան, որ է առակ իմն յարմարական, նմանեալ զդպրականացն մասանց անողորմիցն յղփացելոց, մնայի իբրև զսալ գարբնաց անոստ՝ յամառեալ քառացեալ սրտիւ, որպէս օրինակն է Ռեվիարայ, և ոչ ապաշխարեցի։

Գ· Այլ աղդեա վերստին առ սոյն կերպարան լքեալ կրկին ողորմութիւն բարի, ահաւոր, մարգարէ, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախձան Թագաւոր, զօրութիւն պանծալի խաչիդ խորհրդոյ, ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան երիկամանցս լիմարութիւն և անպտուղ սրտիս լքութիւն. զի առեալ նպաստ օժանդակութիւն՝ի գԹութիւն

կամաց ամենակալիդ, որոտասցէ բղխեսցէ Հոգիս, ընծայեալ աչաց վշտապնեցելոյս վտակս արտասուաց արբուցանողաց ինձ 'ի փրկուքիւ և 'ի մաքրուքիւ, և քեզ 'ի հաճուքիւ ընդունելուն, ամենապարգեւ տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՎԱՌՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերաքին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Յի արդ ես նախնիս ամպարշտաց, դլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, ատելիկեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանձառիցն իմոյ ձառեցի, զպատկառելիսն խայտառակեցի, զգաղտնիսն հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, զթաքուցեալսն ցուցի, զամիսփեալսն տարածեցի, զդառնութեանս մաղձ ժայթքեցի, զդործակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վիրիս քամեցի, զխորս պարտեաց իմոյ ծանուցի, զպատրուակն կեղծեաց առի, զքօղ տգեղութեանս վերացուցի, զամենալեացն զգեստ մերկացուցի, զգարշելիսն յանդիմանեցի, զմրուրն մահու փսխեցի, զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի, մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի, զարմատն հնուռ տեսիլ արարի, բնութիս կարեաց ոչ ողորմեցայ, զմիաբանութիւն կապ խզեցի, զդղեակ սրտիս քանդեցի, ընդ կամացս որոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ, զպահեստ անյայտիցն արտաքս հանի, ըզ-մթերիցն զանձ՝ մեծին գուշակեցի, զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի, զպատառնեացն զիւրձ

այժմէն խակ գոխ, զդաչն կործանողին կարեցէ, զուխան խաբողին ցրուեցէ, զկատարած մարտին յաղթ Թուե՛ի քեզ տէր [illegible] ապաստանեցէ, զպատերազմին խումբ զրգռեցէ, զդիմադրուե՛ դիմեցմանն՝ բանիդ ՚այ յուսացեալ, զնաւարասիրացն փաղանգ լուսեղինացն զինուց սադրեցէ:

Բ. Նա արդ, ստեղծիչդ ամենայն եղելոց [illegible] որդի բարձրեալդ ՚այ, զաստէն դարուվեալս յայսպիսեաց բանից և զհարուածեալս յայսքանեաց գանից մի՛ կշտամբեսցես կրկնակի գատել ՚ի մեծի աւուրն: [illegible], հզօր անքննին անձառ բարերար Թագաւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւս խոնարհուԹեան, որ ինձէն զանձն մեծաւ ձայնօք յոգի գատեցի, լից նուագօք այսր մատենի անարգանօք ամօԹոյ զդէմն սատանայի, և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո: [illegible]յայցի հնիքդ լուսոյ ՚ի գեղ տեսակիս, ամրուԹեդ նշան հաստատեսցի ՚ի տիպ դիտակիս, երևակ կենացդ փայտի ձևասցի ՚ի պատկեր այտիս, արուեստդ հրաշից ՚ի ձակատիս շուք նշանակեսցի: [illegible]՚ի այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապատկոյ՛, մի՛ բարձցի ՚ի տեսանելեացս բբայ ձաձանչդ օրհնուԹե՛, մի՛ մերժեսցի ՚ի գլխոյս առհասարակ վստահուԹե՛, մի՛ սասանեսցի ՚ի բերանոյս ամրուե սեմոյ՝ փառք [illegible]ուԹեանդ: Պահպանակդ երկրպագելի ՚ի զգայարան սրտիս միասցի, ջորիցս նիւԹոյ իմոյս գոյուԹե՛ քաւաԹևիդ նշոյլ ազդեսցէ, ձեռինս կարկառմանն փրկչիդ իշխանուԹիւն օժանդակեսցէ, մատուցմանն հաստուածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակուԹե՛ բարեգործեսցէ: [illegible]՚ի մեկնելս իմում՛ մի՛ հեռասցի սրբուԹիւնդ, մի՛ լքցի պատիւս ՚ի պատիլն պարտաւորիս, մի՛ մերժեսցի ՚ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկուԹե՛, մի՛ ընչեսցին գիծք կենդանատուիդ ՚ի քո գրեցեալս ընչոյ, մի՛ եղծցի նկարուածն արեան զօրուԹե՛ ՚ի տիրատիպ խորանէս, ընդ իս բնակեսցէ յիմում գերեզմանին. ՚ի ծորել մարմնոյս Թշուառի՝ օծուածն ընորհիդ առ իս պահեսցի, ՚ի նորոգուԹե՛ն աւուր սոված հանդիպեցայց փառաց փեսայիդ, ՚ի քոյոց այտի ծանուցայց, քոյովքդ վաստակօք

պՀՆեցայց , երախտեօք մեծիդ յարդեցայց , աւա-
զանին ղգեստիւ պերձացայց՝ քաւեալ ողորմութիք :
Ա՛տո՛ , բարեգութ , ղվերարկուդ անապականու-
թիե տաժանեցեալս մեղօք մարմնոյս , մի՛ յարիցե ընդ-
քոյս՝ բանսարկուին , հնացուցիչ հոգւոյս վատնես-
ցի, խաւարաբնակացն պատիրք մի՛ ընդ իս վերերևես-
ցին : Որհնեսցի անուամբ քո , գթած , վիճն իմ
հանգստեան , ողորմութիք քո լցցի գուբն իմ գերու-
թիե , ընդարձակեսցի քև լինձ տեղին թշուառութիե ,
անդորը եղիցի , խնամօղ , լինձ բանսն բարկութեան ,
մնուացիկ զիս առ յաձուծն արդանդն մխուե , յա-
սով քո շտեմարանեսցէ զիս յարկն այն անձկութիե ,
ձեռամբ քո պահեցայց 'ի խշտին տարտամութեան ,
թևօք քո ընկալայց 'ի տունն տագնապի , դու , դո-
վեալ , ընդ իս 'ի սենեակն վտանգի : Լա՛ւ լինձ
աստանօր 'ի թիւս հաղարաց , զի երբեմն էի վեր-
նային և այժմ անընդայնի , երբեմն տճնելի և այժմ
աշխարելի :

Գ. Լա՛յ և արդ կրկին դու օրհնեալ 'ի բոլորից
գոյից յերկնայինոց և 'ի տարընայնոց և 'ի սանդարա-
մետականաց մեռելոց , անպարտականդ այս տարա-
գրութիե : Լաս վըիսկեցայ , ես օտարացայ , ես չիմա-
ըեցայ , պարտեցայ և խոտան գտայ . ես լքայ , կա-
մեցայ և կործանեցայ . ես մոլորեցայ , ես մատնե-
ցայ , ես մերժեցայ , ես խորթացայ , գերեցայ , և
գայթագղեցայ . ես նզովեցայ , ես թշուառացայ ,
արբեցայ և վատթարացայ . ես ընկլուզայ ես խա-
բեցայ , ես անօրինեցայ , ես ապականեցայ , մահա-
ցայ և 'ի սպառ եղծայ . չիք քո առ այս լինչ մատն
չարի , որ ես միայն անփոփոխ բարի : Լա՛րդ կամք քո
չիս , և խաւարն լինձ ձառագայթ . Ձրագ յուսոյ
քո անդ , և գիշերն վաղորդայն . մարմնոյ քո հաղոր-
դեալ , և յամօթոյն կարծեաց ապրեալ : Լսկ ես
ո՛չ գրեմ զանձն իմ կենդանի վասն անփախչե-
լի վախճանին , դարձեալ զի ո՛չ վարկանիմ կորու-
սեալ վասն աներկևան նորոգմանն : Որ և փա-
կեալ համարիմ լինձ զերս կենացդ վասն անքաւե-
լեացն պարտեաց , դարձեալ՝ բացեալ լինձ ըղ-
դրախտն՝ վասն փրկութիե աւետեաց . քանզի ո՛չ

այնքան վհատութենն գոյժ տագնապէ, որչափ փրկու-
թեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ: Ա՛րդ տուր,
տէր տուր ողորմութի՛ն, առ ամենայն ձայն գոհաբա-
նեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յառէջս կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն ապերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛րդ որ ոք և առցէ զայս դեղ մաղթա-
նաց այսր մատենի պարկեշտականի պաղատել սո-
վաւ, եթէ՛ ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղիցի
և ես իմովս բանիւս կցորդեալ նմա. իսկ եթէ յար-
դարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ ընդ-
նմին ողորմեալ նովաւ: Ա՛պա թէ երջանկասցի այն-
պիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութի՛ն, և
ես ինձէն վկայեմ այսմիկ: Ա՛յլ յիշեսցէ նա զՀո-
ղումն և զբանս նորա զհոգեշունչս, թէ ո՛վ ոք վըս-
տահասցի սիրտ՛ոք ունել, և կամ ո՛վ պարծեսցի մա-
քուր լինել՛ ի մեղաց, և զի ո՛չ յարեաւ մարդ երկ-
րածին աղաւեալ՛ ի պատասխանեաց. և ո՛չ ընտիր՝
ինքնարշաւ վազիւքն, և ո՛չ՝ թէ և՛ի թռիչս ամբարձ-
ման թևոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի կրկին
երկուցեալ՛ ի վիմին իսկ հաստատութե՛ն՝ ուսեալ՛ ի
Պաւղոսէ, դուցէ անկեալ՛ի յերկիր՝ սահմանողի այսմ
կանոնի իրաւադատի կշռեալ նմանեսցի: Ա՛յլ առ-
ցէ զայս կշռամբութի՛ն մաքուրն՝ նիւթ պսակաց, առ
՛ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրու-
թե՛ն. պատժապարտն՝ առիթ աղաւթութե՛ն, որով ամ
բարձեալ՛ ի կործանմանէ հոգևորական մահուն՝
ապրեսցի յուսով: Իսկ ինձ եղիցի պատգամն այս
բանի արձան փորագրեալ ամենևին անեղծանելի,

որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծուե լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակե. լոյսի և ոսկերացս քակտեցելոյ ՚ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խոստովանել. հասցե և մարմնոյս ՚ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անաղդելեաւ ծածկատեսիդ զսոյն պաղատել։

Ռ. Տէր գթուեց, աղբեւր ողորմութեց, պարգևք բարութեց, որդի բարձրելոյ տէր Յ՚Ա՚Ի՚, ողորմեա ինձ, մարդասիրեա, նայեա ՚ի վտանգս, ակնարկեա ՚ի բեկութեիս, խոնարհեաց ՚ի թշուառութիս, տես ՚ի տարակոյս անձեռնհաս տագնապիս, հասիր հաղորդել կորստականս կարեաց։ Շ օշափեա բժըշկապէս զամենաթշուառ ախտաւորութիս, ուստի մատուցես քաղցրութիւն ողորմագին հեծութեես, լուր ՚ի խորոյն անդնդոց մահուն դերեզմանի անմռունչելի հառաչմանս, մոցէ յականջս ամենալուր լսելեացդ ձայն պաղատանաց վտանեալ անդամոյս։ Նա վասն զի գրաւական կենդանութեես անապական է, անփոփոխ լեցի և սիրոյդ քո գթութեէ. կցորդ լեր հեզութեիդ տաժանաւորս տկարութեէ։ Վ՚եռեալ պատկերիս մի՚ ոխս պահեսցես, ընդ անշունչ կերպարանիս մի՚ ի դատ քննութեէ մոցես, մահու տանջեցելոյս մի՚ հարուածս յաւելցես, ընդ բեկեալ խեցեղէնս անօթոյս մի՚ ուժգնութիւն մարտիցես, վէռաւ կոշկոռեալոյս մի՚ բարկութիւն կրկնեսցես, կործանեալ շինուածոյս մի՚ պատուհաս մատուսցես, շանս սպանելոյ մի՚ քարինս արձակեսցես, լուսոյս զանգլանելոյ մի՚ սաստիկս որոտասցես, հողոյս անպատուելոյ մի՚ իբր ամբարհաւաճ ուժգինս մռնչեսցես։ Ո՚ մխիթս մերժելի մի՚ ի դատ ընտրութեէ կոչեսցես, զփոշիս ցնդելի մի՚ իբր զքո դիմամարտ գոցես, զտիղմս տաղտկալի մի՚ իբր զոսոխ վարկանիցես, զգարշութիս անդոմնելի մի՚ իբր զբռնամարտիկ վանեսցես, զնկեթս ՚ի բաց ընկենլի մի՚ նիւթ դեհենին պահեսցես, զայս քանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի՚ վերըստին յանդիմանեսցես։

Գ. Ա՚յս ամենաթշուառ և խաւարաթաղել շիրմին են ահա սրտաբեկ և յոքնաթախիծ արդահատութիք.

հաստատեսցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել, ըստ սրտի արդահատելոյս. քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ. որպես ՚ի կորուստ մահուն սատակմանն՝ ամենաղօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս: Արդ աղաչեմ զքեզ, տէր Յա Աւհ, հայեաց յիս ողորմութեբ, և մի Թողացուսցես լինել տնակից ինձ Լեւհարայ. և ըզմահաղեկոյց տապանին աղդումն անկենդանաւորն Թնդման Թշուառն Թաղման՝ աղաղակ ձայնի հառաչման լալեաց քեզ հաշտեցուցչաց՝ յարգեսցես լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր մարդասէր. և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ ՚ի խաւարին: Ննասցէն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ դանձու զիս պահեալ ՚ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն. օձառք անվատնելի զինուց լինէ պատկանեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից հոգևոր հնարից՝ զչարին հալածել զգունդ: Ննարան որ առ իս՝ քե, տէր, վանեսցի. զի եթէ յարիցես ՚ի վերայ իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն ՚ի զօրաց և զազդողականացն դորձի ապաձայն, ըզքեզ տէր ունիմ միանձնաւոր և անհիրհելի պահապան:

Դ. Օ ի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, և անշուխիլ արգելան լինէ պատրաստեսցէ, առաքեմ զազօթան տէրունական նմին զան մահու. եթէ ՚ի վայր զիս հնարի կործանել, զծնրադրութիւն արարչին. եթէ ՚ի մխիր երկրի Թաւալել ձեռն բերիցէ, երեսացն ՚այ ՚ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ. եթէ վաստակս լինէ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն զանգեալ փրկչին աշխարհի զնա խուեսցէ. եթէ լըսնթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծին զիս արձակեսցէ. եթէ յուրացուԹիւն պարգևաց լուսոյն բռնադատեսցէ, հայհոյուԹեանն համբերութիւն յաճամարտիցն՝ զնոսին ընդնոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից դաղտնաձիգ զինուց լինէ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան փառաց հօրն կապարձից նմին պատահեսցէ: Եթէ

քօղով լուսոյ խաւարականի մտանել ընդ աչս անա-
մօթեսցի, կռփուսն գլխոյն ձորձով պատեցեալ լըր-
մանն ամենից զնա տանջեսցէ. եթէ մոլեսցի զվատա-
հուելի ձեռինս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ
գոյացուցչին զնա չարչարեալ ըմբերանեսցէ. եթէ
ձաղանօք այպանման գլխս կատակեսցէ, տանելն ծա-
ղու ամենազօրին զնա հենգնեսցէ: Եթէ բժժա-
նօք ինչ յուելից կախարդել խորամանկեսցէ, ապ-
տակին դիմաց հզօրին ՚ի զնա սաստկապէս ամաչե-
ցուսցէ. եթէ 'ի մուտս գիշերային մթուելե խաւա-
րաւ խաբէուելեան լինել մարտիցէ, 'ի Հառագայ-
թից լուսոյ երեւման քո, տէր, խայտառակեսցի. եթէ
'ի միջօրէական տապոյ փորձուելեցն արեգակնակէզ
վատնիլ խորշակին՝ գնս 'ի յարմատոյ խախտել կար-
ծիցէ, 'ի զօրուելէ նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի:
Եթէ 'ի փչմանն հոգւոյ ունայն գնս առնել հնարա-
ւորեսցի, Թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէիից ընդ
մեղաւորիս՝ զնա պատկառեցուսցէ: Եթէ ժանիք
խածօղք լինել ցուցանիցէ, լուսնթիւն երկնաւորին
բերանոյ զնա պապանձեցուսցէ. եթէ խածմունս ա-
ղուականս հոգւոյս ազդեսցէ, բևեռացն հալմունք
հաստողին բնաւից զնա կսկծեցուսցէ: Եթէ յըն-
թացս անիրաւութեց խորհրդոց գնս մոլորեցուսցէ,
սեւեռք ոտից անհասանելւոյն զնա կաղեսցէ. եթէ
հրապոյրս լինել դժնեայս արբուսցէ, քաջախն ընդ
լեղւոյն խառնեալ 'ի յարբուն բարերարին՝ զնա
դառնացուսցէ: Եթէ առաջնին Հաշակմամբ փայ-
տին գնս գոցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբըռ-
նեալ 'ի սպառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել ընդ-
դէմ հնազանդութե ՚ն հրամանի զանձն իմ ու-
սուսցէ, բերուն պարանոցի անսահմանելւոյն զնա
կործանեսցէ. եթէ 'ի մահ սատակման գնս վանեալ
վիրաւորեսցէ, ստուար տեգ գինու մխելոյն 'ի կող
ստեղծչին Աստմայ զնա հերձեսցէ. եթէ երկամթք
վշտաց դժոխականաց գնս պարփակեսցէ, պատա-
նաց կատաւ էից ունողին զնա ըմբռնեսցէ. եթէ
յատակս մահու հայել գնս խորդախեսցէ, բնակել
կենդանւոյն 'ի վէմն մահու զնա մեռուսցէ. եթէ
խնդասցէ ընդ մարդկօրէնս իմ գայթագղուել, կրկին

կորասցի կարկամեալ կամաւ, յորժամ անմահն ած յարուցեալ փառօք ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս։ Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հազարամիւց բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերատին խակոյն ընդ վերջին շղթայս անզերծ տապնապին ըմբռնման սատակագունի յանվախձան տանջանարանն։ Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի, զոյժ կորստեան յեանուամ սատակմանն անշէջ գեհենին, որ պատրաստեալն է նորա և նորին հրեշտակաց, նմա պատմեսցի, որ յաւուրն մեծի մեծին աստենի։

Ե. Ասէ ինձ ապաւինեալոյս ի քեզ տէր Յս, միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ, արարիչ երկնի և երկրի և ամենայն զարդուն որ ի նմա, որ գալստեանդ քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ, զպարտութիւնս խոստովանիմ և զմեղանս հրապարակեմ, կշտամբանաց քարամբք կոծիմ և հառաչանօք սրտիս տապանամ, ի խեթ խղճիս խոցոտիմ և բոցով շնչոյս ձենձերիմ, աղի ցօղով արտասուացս այրիմ և երիկամանցս ազդմամբ կիզանիմ, յուսահատուր օդով ցամաքիմ և դառնաշունչ հոգմով շնջանիմ, թախանձանաց բանիս երերիմ և կողկողագին հեծութեամբ դողամ, տաժանելի կրիւք տուայտիմ և տապնապաս հոգւոյս տատանիմ, ի կոծ մրրկաց ծփիմ և ի բախմանէ ալեաց սասանիմ, ի լուութէ համբաւոյն սարսեմ և յիշատակաւ ահին կորնչիմ, կերպարանօք առեղծին հալիմ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լուր բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ, քաղցրութեա՛ն անձառ, օր բարի և տիւ տենչալի։ Զանգի կարօղ ես յամենայնի և առ ելս ընդոյս իմոյ՝ փրկութեան մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ սքանչել փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ԵՒԹՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բաց քանզի յոյժ արդար է բան իրաւանցն Ա
Քրիստի այ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սա-
տանայ. զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի
լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի զՔնացեալ
պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանիս բո-
լոր էութիւն կերպին իսկութեանն մեծին այ՝ միացոյց ինս-
քեան անշուշտ խառնուածս։ Զորս ոչ են չնորհեալ
ի բազմացն, և ինձ զգուանդակին եհեղ առատութիւն.
վասն նորա ոչ երբեք չարչարեալ, և վասն իմ հա-
նապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և
ես միշտ վայելեմ ի փրկութեանն. նա վանեալ է
խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն. նա հերքեալ ի
լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոս-
տացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպ-
հականեաց. զնորայն կտրեաց զառհաւատչեայ, և
զիմն առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս
խոզին արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կար-
ձաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց.
զնա սողնոց նմանեցոյց, զիս խրոխտ անուամբ կըն-
քեաց։

Բ. Իսկ ես զերախտիսն այ լքի զայսքանեաց բա-
րեաց արարողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ
նմին յատակս դժոխոց, ահա անարժանս բարեաց,
անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, տոռամբք
մեղաց ձգեալս, յերկիամուն խորոյ խոցեալս, քան-
ցեալ ծառս արմատենոյ, գինիս յեղաշրջեալ, ցո-
րեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատա-
ռեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիւնս փոխեալ,
արկանելիքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս
ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատռեալ,

կան սուգեալ, տունկս գօսացեալ, նեցուկս խորտա-
կեալ, փայտս ամենևին փտեալ, մանրագոյս աղա-
ւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ,
բոյսս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ 'ի գետն
աղբևաց, կամնս հոսեալ 'ի կոյտս մոխրոց, այրս
մահու 'ի յարեաց գնդից։ Ոչանգի միշտ խրատեալ
ընդ Երուսաղէմի առաքաւ Յաբելոնի 'ի Ամարգա-
րեից ձայնից անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատե-
ցեալ· որ աստէն անգոմնեալ եմ և անդէն խայտա-
ռակեալ, աստ դարովեալ և անդ կշտամբեալ, աստ
ձաղեալ և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և
անդ յանդիմանեալ, աստուստ ապշեալ և անդանօր
լքեալ։ Ոստ հեծումն և անդ հառաչանք, աստ կար-
ծիս և անդ կատարած, աստ խէթ և անդ հատու-
ցումն, աստ արկածք և անդ հանդէսք դատաստա-
նի, ուր ոչ է բան իրաւանց և ոչ ձայն պաղատանաց,
ոչ թիւք աւուրց և ոչ ելք ժամանակաց, ոչ ուղք
յուսոյ և ոչ դրունք ողորմութեց, ոչ աչք պաշտպա-
նութեան և ոչ ձեռն այցելութե։

Գ· Ոչ դու ապաւինուն, դու լինքն փրկութի,
դու այցելութի, դու և քաւութի, դու երանուն,
քև բժշկութի, քո ողորմուն, միայն հզօր, կենդանի,
անձառ, տէր ։ Ոչ բարերար ։ Ած· օրհնեալ օրհ-
նեալ և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սքղ
յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի խոկութեան
մեծիդ յաւիտեանս յաւիտենից· ամէն։

ԲԱՆ ՎԱՔՄԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծումեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այր արդ ի յիշատակ ահարկուածեան վերադրեցելոցդ՝ որք յաճուստ են սպառնալիք լինձ ժամանեցեալք, զիա՞րդ դադարեցայց ի նորոգ ողբերգութեց, և կամ ո՞րպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս։ Օ՛ի եթէ զչորեքվտակեան առաջս գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ գլդեմ և գերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականուածեամբ բաշխեալ ամենայնի, և զբղխումն եղից իւրեանց առ աչս իմ եդեալ, զանձինս մեզաց սաստկուածէ զբոց զովացուցանել ոչ բաւականասցին։ Եւ կամ մարգարէին սէր ըղձականուածիւն՝ կրկին լինձ լցցի գլուխս ջուրց բաղմուէ, և ձրագարան տեսուածէ կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ոգոց չափել զլանդ ոչ ձեռնարկեսցեն. և ոչ եղերականք ջայլից համօրէն բանահիւսից կանանց լալականաց՝ ի սիրտ և յոգի վիրաւորելոց՝ զաղէտ վտանգիս ի յերգ արկանել և կամ ի նուագս ձայնից բերել։

Բ. Կամ է օրն լինելութէ նզովեալ, և ոչ Յոբայ կամ Երեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա, զորոց մի ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի. ապա ուրեմն զիս նկատեալ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ միոյ մանաւանդ բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծին՝ յորում ես գտայ կորսեան որդիս և մահու դրացիս, միշտ մեզաց և արբանեակս անօրէնութեց։ Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դուս սահմանեցեր, ա՛ծ բարերար. ոչ գնացի ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ, ոչ վաստակեցի ի հունձս արմտեացն, որով ի մուտս ձեռանն աւուրցն խառնուրդեան կերակրել պատրաստեցայց.

ոչ կառուցի ամրութիւն որմոց և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով ՚ի ընչմանէ մրրկաց օգոյ պահեցայց· ոչ համբարեցի նշխարս պաշարաց ՚ի յուղին անեղբական, որով զտապնապ սովոյն իմ բժշկեցից· ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթիւց, որով առաջի քո կալ համարձակեցայց· ոչ կազմեցի թոշակ փրկութեան վարուց մաքրութիւն, որ զնորոգուէ ինձ երաշխաւորէ· ոչ ետու զընտրութիւն հաշուն ՚ի կենցաղոյս ձանապարհի՝ իմոյ մատնչին, զի ՚ի դատաստանին ձեռանէ աստէն իսկ փրծայց· ոչ լրութիւն ձեռին օրհնուէ մատեայ յանդիմման, որով օրէնսդրին մանակից գտայց սրբեցեալ։ Ա՛ն դիմաց ետու ըզդուշութիւն և ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աչացս իմ զննուորութիւնն և ոչ ահեկիս պարածածկութիւն, որով ՚ի պատերազմիս վտանգէ զերծայց· զերիվարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս սպառազինութիւն, որով զձակատն յարդարեցից։ Ո՞ կանուխն ոչ կապտեցի պտուղ, և անագանին ոչ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն ՚ի բարեաց· մաքրութէ ծաղիկ ոչ ունիմ և ոչ եւզ ողորմութիւն, և գիշերոյն մեայլ՝ անշոյլ· ՚ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տապնապ կոչղին փողոյ նոխակ· զզարդ հարսանեացն կրկին մերկացայ, և զձեթ վարուցն վերատին լքի, և գուռն մտին հարսանեաց աւասիկ փակի։

Գ· Ո՞ւր արդ զիա՞րդ առից միսիթարութիւն այսքանեաց վշտաց, և կամ ընդ որքանեա՞ց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից, և կամ ո՞ր արդեւք զգարշապարս ոտին կառուցից, և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից, և զինչ անդորրութիւն ծփանացս նկատեցից, և կամ յո՞ր ըղձական գիւրութիւն ձեռն համբարձից։ Ո՞վ ի եթէ ՚ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրեւեաց հուրն Յոդմայ, որպէս ասացեալ է· իսկ եթէ յատակ խորութիւնէ երկրի, սա եթաց զկոկորդն ըմբռնողական և եկուր զ՚Ադան բանակաքն Ա՛բիւրոնի։ Ա՛թէ յանդգնեցայց փախչել յուսնողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին։ Ա՛թէ ընդ գազանս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ սատակողին առաւել առ իս քան երբեմն զ՚ղիսկին

առ մատաղ մանկունն բեթելացիս քրմորդիս ։ Զի
յամենատարած օդոյս պարզուիլն , այն եղև եղիս-
տացւոցն խաւար շօշափելի ։ Զի ի թուչունս բար-
ձանց , նոքա են կոչեցեալք ի սպանդն զոհին բոստ-
բայ դիականցն ։ Զի ի տկարսն խիզախեցից , վատ-
նիմ ի պիծակացն , և զի պիտոյ են ինձ առիւծունք ։
Զի յարջոյն պատառողաց ապրեցայց , մժիխքն ա-
բեան ծարաւիք ինձ պատահեսցեն ։ Զի յանհոգս
ուրեք նստիցիմ , մժղուկքն անարգադոյնք՝ իբր ցըն-
ցուղս հրոյ եռացման զինև մաղեսցին ։ Զի յեղջե-
րիկ միեղջերուոյ փախնուցումբ զերծեալ , նկուն ձի-
բանք աղկաղկաց մնոյն մորմոքողաց՝ զիս կեղեքես-
ցեն ։ Զի ի սենեակս շահմարանաց խորշից զօղեալ
ամիոփիցիմ , տաղտկատեսակ գարշուրեի գորտոյն
զիս զաղրացուսցեն ։ Զի ի վայրս ինչ անդաստա-
նաց կացեալ զետեղեցայց , չարք շանաձանձոյն տար-
մից զինև պատեսցեն ։ Ողորմ ասել զխառնիճն և
զջորեակն զղօրն զօրաւոր ընդ Թունաւորն Թրթուր
և ընդ անկենդանական երևիլն , հանդերձ ջրակարծ
կարկտիւն և ապականագործ եղեմամբն . որ առ
աչաց տեսիլ ապաշէնք և նուաստագոյնք , բայց ի
յակնարկելն ՚ի յաւէտ գոռոզաբար ուժգնուլէ հա-
րին վանեցին զՀպարտն ամբարհաւաձուելի փարա-
ւոնի բռնուլեն բուռն գաւազանին՝ յաղթօղ վիձա-
կաւ . որ են կերպարանք Թաքուցելոցն կրից լկո-
ղաց անձնականացն աներևութելից եգիպտացւոցն ան-
օրէնուլենէ՝ յոգի տանջողաց՝ գաղտնի մեսաողաց ։

Դ . Ա յլդու ամենաղօր արարիչ բնաւից տէրդ բո-
լորից , ի յատելիսն հանդիսացիր հերքել զնոսա . և
ինձ ողորմեա կրկին զԹուէձ ձեռն մատուցեալ փըր-
կուլեն տարակուսեցեալ կոչմամեալ վարանեալ ի
մահ պարտելոյս ։ Օ ի դու միայն ձանաչիս ՚ած փա-
ռաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւի-
տեանս յաւիտենից . ամէն ։

ԲԱՆ ՎԱՌԹՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերամին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ, վասն զի ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմն եղանուելեան ես և ոչ՝ իբր ի քրայս ընտրուելեան փուելոյ քոյ սիրոյ հանապազ եառամ և ոչ երբեք պարզիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ ևս միանամ, ահա զուր արծաթադործդ երկնաւոր իմ Ճարտարապետ, ի մնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի առակի, և չարուելես իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զնեելագար դիւաբախ իմն ողորմելի յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմս զպարտիս աձեցուցանել, քան հաշտուելէ հնարս ինձ այսու կազմել։ Այլ զի մի անընդել դիպուած և անկիրթ պատահումն և անհաւասար հանդիպումն՝ պատրաստուելիւնք հանդերձելոց տանջանարանացն ինձ երևեսցին, ամենևին անմոռաց պահեայ աստըստին ի յիմում մարմնի նշխար մեռացուածոց նախնումն անիծիցն. զոր ի փոքուէ տարբէ անարգէ զմեծն է ուսանել։

Բ. Վասնզի խաղալն ինքնաբերական գիւտք որովայնի՝ բոտոտք ձագուկք շարժողականք և աղգիաղգիք, որդունք աղեաց գաղտնակուռք, խաղաւարտք հրակայծակք և բիծք բոցակիծք և անիծք անկերպաւորք և երամակք ոմանք քրտնածինք զազբաթօրմիք կսկծեցուցիչք և մարմնջողականք։ Այս պատակք այլոց վայրենեաց, ըստ նմանուելէ դիւաց գիշերամարտից և մեկնազին բարբարոս գնդից խաւարասիրաց, և գաղտնուելք քանասար գայլոց արաբացւոց, կորակոր գնացիւքն, արջնաթոյր գոնոցին, կրկնապարոյր կռաճագ կացաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարձն, իբր դժնիկ փշուք խոցոտեալ

ծծեն ձգէն զարեանն խոնաւութէ, և յանկողինս մահճաց հանգստեանն վաստակս կրից յուցանեն։ Այլ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն նոցա նոցին, վաղվաղակի զգան զվնաս վտանգին՝ զոր ազգէն մարդոյն. և անդէն խակոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թևաք ինն թըռիչս արձակեն, և ըստ մարախի ձևոյ ոստոստեալ այսր անդր տարաբերին. և ըստ բազմապատիր նեն դութէ բարեյից դաւօղ աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն 'ի պատուաճս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին։ Այս այնքան չքոտի և անքատ անձամբքն ոչ միայն զռամիկն և զխառնիճաղանձս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հանեն տարագրեն 'ի դստիկոն յարկի ապարանիցն բարձրութէ, և կամ 'ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց արեաց, որք եշխեցին ամբոխից և տիրեցին ժողովրդոց և առին զքաղաքս ազգաց, զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռինն ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել վհտից բռնութէ, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի։

Գ. Այս զի՞նչ է ինձ զփոքունց և զանկածից ծաղբականաց ոմանց գոյութէից 'ի կիր արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են ածութէն՝ յիշատակել ինձ զհանդերձեալն, որք 'ի մարմնոյս անօրինելոյ ընծային պտուղք դառնութէ։ Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից գիւաք, և կերջացն կոյտք անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապագայիցն սոքօք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կասմայ քումդ ակնարկութէեան և մարդկային կարք և հնարք վերիպեցան։ Ասէ դու, բարեբար, զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵՒԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ

Վերամին յաւելուած կրկին հեծուղեան նորին հակողն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ քանզի համբարձեալ զընթացս բանիս ի փոքունց ասեի երկրայնոց չհամարելոյ ընդ գոյս եղելոց՝ ի մեծագունիցն տեսակս, ասացիւ զտճնելն հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան։ Որ զի թէ մերձաւորագոյնք էին այ իբրև զնաւ խածանօթ հայրապետութենին, և կամ մաքրագոյնք որպէս մարգարէքն, կամ անբծագոյնք իբրև զառաքեալսն, կի ընտրելագոյնք որպէս մարտիրոսան, եթէ ոչ դու մարդասիրեացես աննուազ բարիդ և անփոփոխ խնամակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութենն առ ի նոյանէ։

Բ. Ո՛ի եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ, ի տապոյ անտի պապակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութենէ։ Իսկ եթէ առ Մովսէս, և նա զգածեալ է տկարութեաբ, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ զհայթայթանաց կերակուտն ի պահպանութեանն աւուր ժողովէր. իսկ եթէ առ Ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. իսկ եթէ առ Դաւիթ, ի մէջ բարեացն առաւելուն ըստգտեալ է և նա. իսկ եթէ առ Յոբ և Յոբ և Դանիէլ, զայս նշմարիլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր ի գիմաց այ ազգեալ, կենդանի եմ ես, ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրեանց ի բարկութենէն որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին. իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, ի քումդ խնամոյ խուն

մի խլեցեալ և նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ։ Յոտնումն ասել զբազմացն գումարուելն խռնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք լինեն. ընդ որս և Յովասու ոմն մարգարէի՝ ի մէջ ածառաքն սպասաւորութեանն մարդկօրէնն գայթագղուի՝ ինայ յոլովից անթարգմանելի, թէ և՝ ի դէմս իմն մեկնութեանն ձեւակերպեցի։

Գ. Լաւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկուեանն մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, ընդհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ, կենագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետև գիտացեալ զսակն որքանութեանց հողածին բնութեան, որք միմիթարեն օրինակաւն նմանաբար հարազատապէս վստահուեալ յուսահատելոց, ահա առ քեզ դիմեցից՝ որդի՝ ոչ կենդանւոյ վէմ օրհնեալ յամենայնի։ Անաւանդ զառաքին ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերագրելոցդ բան վերստին արդարացուցանել. բարի է, ըստ իմաստնոյ ուսմանն երջանկի, անկանել՝ ի ձեռս նոր, և մի՝ ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին։ Լաւ այս բան թէ և զվաթին իմն գծագրեր, որ զերեքմանեան հարուածն ածեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդատակնիք մահուն սատակմանն՝ իբր զկենդանի վէմի հաւատոցն յաճախութիւն, քան զերկուսեան և այլ փոքրկուեանս՝ որք տանջենն և ոչ ողորմին. սակայն և իմն օրինակութիւն բանիս պատկերի ձարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութէ. զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ՝ ի մատենի այսր ողբերգութէ, առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին անուն պսակեմ, և զշնորհն նորին առ ամենեսին բարեհռչակեմ, և զբնաւին քարձունսն՝ ի թևիչս վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութէն դեղոյ։

Դ. Լ՚հա դու կեանք, դու փրկութէ, դու բժշկութէ, դու անմահութէ, դու երանութէ, դու լուսա-

ւորութի· արա՛ ինձ անդորը ՚ի մեղացս աշխատուեցեալ, զի և քեզ լեցի հանգիստ ՚ի միտադատս հեծութեց՝ ձանձրացուցիչս Թախանձանաց· որ ոչ այլ իւիք, քան թէ փրկութի՛ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս· ամէն։

ԲԱՆ ԵՒԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլի առ նոյն աղերս մաղթանաց բանի·

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Այլ քանզի երջանիկքն և փառաւորեալք սիրոյն պարք, յորոց ամանք դոյզն ինչ գթեցին և յաձախագոյնս հաստատեցան, փոքունս սասանեցան և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան· յորոց միոյն զգանգուածոյն յայտնէ գՀաստարակաստեղծն տկարութի՛ իսկ միւսն զգերազանցն քան զբնութեանն օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշտակականս։ Այլ արդ նորա որ օրհնեալքն են յամենիշխանն բերանոյ ՚ածութեան հօրն ՚Ի՛ն, ընտրեալքն տօնեալքն խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս ՚Ի՛ն պաշտեցեալք, և իբրև զօթեվանս հոգւոյն սիրոյ յարդարեալք, յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութի՛ և լուսաւոր արդարութի՛, և որքան մարթի է զմարդն ՚այ՝ ՚այ նմանեցուցանել։ Այրեաք պարզք և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անշտապտանելիք, պաշտօն առ ՚ած կարծր և անփոխարկելի, ընթացք արիականք և անկասելիք, Հնմարտութե՛ միատարը և անցնդելի, դիմագրաւութե՛ զօրեղ և անհերքելի, տեսաւորուն պայծառ և անապշելի, իմաստասիրուն վերնական և անկոխելի, պատ-

կեր մաքուր և անաղարտելի ։ Օ որոց կերպարանս և գլիշատակս անուանցն աղաչել՝ ած իսկ վարդապետեաց, և նոքօք հաձուի ի մէջ խուռվուճ՝ արարչիդ քան լուսաւորեաց ։

Բ· Ա՛յլ ես անպիտանս յամենայնի, և որքան քան զօրէ պարսաւեալս, որ մինչդեռ արթնուս եմ՝ նիրհեմ, մինչ դեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ, ի քարեպաշտելս իմում գայթագղիմ, մինչ դեռ աղօթեմն՝ և վրիպիմ, ի յընթանալս իմում և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ, ի խաղաղանալս իմում ամբոխիմ, մինչդեռ արշաւեմն՝ առ ի յետոյն հակամիտեմ, ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեանն ձաշակ՝ օշինդր խառնեմ, ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ, ընդ կանգնելն և կրկին գլորիմ ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ, ասեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վճարեմ, կարկառեմ և անդրկն ամփոփեմ, ցուցանեմ և ոչ ընծայեմ, մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ ։ Ի ձարակել խոցուածոյս անդրկն վիրաւորիմ ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ, զուր հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ, գրիմ և իսկոյն եղծանիմ, նաւեմ և ի գիծն թուլանամ, սկսանիմ և ի հանդիստն ոչ ժամանեմ ։ Կարգիմ և դարձեալ սասանիմ, ընանիմ և կրկին հեղում, շարունակիմ աստ՝ և անդ ի ստորևս հոսիմ, բարգիմ և անդէն տոչորիմ ։ Հինն արկանեմ և ոչ գլխաւորեմ, սակաւ վաստակիմ և բեւեռս վառնեմ, դոյզն դանձեմ և անթիւս սպառեմ, զայլս խրատեմ և ես ինքն անփորձեմ, միշտ ուսանիմ և երբեք ի ձշմարտութի գիտութե ոչ հասանեմ ։ Օ շինչեալ չարիսն նոյնչափ արծարծեմ, սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լքանիմ, լարիմ և իսկ և իսկ առ նմին մեղկիմ, զայս կարկատեմ և զայն պատառեմ, խլեմ զեղիձն և տատասկ տնկեմ ։ Ընդ ամբառնալն և այսրէն բերիմ, մտեմ ի բոյնն աղաւնի և անտուստ ագռաւ ելանեմ, գամ սակաւ մի սպիտակ և սրամատամ դառնամ քնաւին սևացեալ, ասեմ զիս քեզ դաւանել և սպանողին նուիրիմ, ընդ յանդիմման լի-

նեղն և թիկունս դարձուցանեմ։ Աչքիս և այլ մրճոտիմ, լուանիմ և նովին զազրանամ, կերպա-
րանիմ զԱւթին և զորձք զԱւուղայն կատա-
րեմ, շրթամբք ձիմարտեմ և սեմ երիկամբք, աջուվ մատակարարեմ և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ երկրագործուե ցորենոյն՝ որոմն սերմանեմ, ի քարձրագոյն իմաստիցն ի վայր իջեալ, ես ինքն գտա-
նիմ։ Հրեշտականամ յերեսս և ի խորհուրդս դի-
ւանամ, ի յոտս հաստատիմ և ի միտս տատանիմ, սուտ ձևանամ և իրօք խոտորիմ, կեղծաւորիմ արդար և արդեամբք ամպարշտեմ։ Ասիմ ի պարս հեղոյ և ընդ այսս կաքաւեմ, ի մարդկանէ գովիմ և ի տեսողէդ պարսաւիմ, ի հողածնելոցս երանիմ և յորդւոցն լուսոյ աւաղիմ, Հաձոյանամ յետինն ոամկին և Թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Օ ա-
տեանն դատաւորին Թողեալ, խառնակրօնիցն աղեր-
սեմ. հերքեալ ի վհիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնիս Ձայլին Ձանաչիմ. Հպատուրիմ դաշն Հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Ա.յսօր մաքուր հո-
գեկիր և վաղիւ մոլի խելագար. զտերունէ պա-
տուէրն լքեալ, Թելադրուե օձին հետևիմ. արիա-
նամ զօրապես, և վատԹարագոյնս ընկրկիմ. զծանր-
բուԹի աւուրն բառնամ, և ի ժամ վարձուն ան-
մասն ելանեմ. ի բացուստ Ձոռումն խօսիմ, և ի պա-
տասխանուէն պահու պապանձեալ կարկիմ. ի յելս արևուն Հարուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դե-
դերիմ։ ՅաԹոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ. Ննջեմ խեԹիւ, և արհաւրօք զարհուրեալ զարԹնուում։ Օ անդաստանս կամացս չարաչարս հեր-
կեմ, փոյԹ խնամով ի չարիս, միշտ անառակ որդիս, անդարձ տարագրեալս, անզղջական զառածեալս, անմխիԹար տրտմեալս, ինքնագրաւ դերեալս, մահու և ապականուե ծառայեալս, անողոքելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուաստելի Հատուա-
ծեալս, անարծարծելի շիջուցեալս, անկազդուրելի խորտակեալս, անՀանդերձելի կործանեալս։ Այս եԹէ պարտ է զսաստիկն աստանօր ասել անօրինեալս ան-
ձին նախատինս, ահա դրեմ դրեմ և ոչ անխայեմ

զկռիւս նիւթեալ գՀԻՆԻն : Ստացուածս նախանձու նորոյս Աստուածոյ, որպէս և Այիննն առաջին հնոյն և հողեղինին . որ ունիմ զբնաւն առատաստ ՚ի յանձին զնշանակ ամբաստանութեանս , ոչ զնչոյս տուրևառուԹիւն , այլ զբանիցս կշտամբութիւն :

Գ. Նա արդ ո՞ր իցէն փրկութիւնքն , ուր սկզբնահայրն հաւատոյ ՚ի յուսահատութենն վայրի զանդրեւեանն իմ չարիս կրկնէ , մեծն մարգարէից քառամբք բանից կոչկոձէ , արիւն բարեփառ աշտեին նիզակաւ ՚ի մահ սատակէ , պատկեր Աշմարտին ընդ Աքարու համայնիւ ջնջէ , ՚ձեռարեալն վհիւ՝ յարաւղողային վըիժուց մատնէ , մարգարէածին տեսանօղն՝ ընդ ամաղեկացւոյն առաջի ՚ետն սպանանէ , նախանձաւորն ՚այ՝ երկնատեղւոյ բոցոյնի վատնէ , ստուերին լրումն և նորոյս սկիզբն՝ հեծանոյին ընտրութիւն հոսէ , պետն առաքելոյ ընդ Ասիրայի ՚ի կենաց զրաւէ , զարմանալին քնութիւն հոգւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ կենացն քարող խառնէ : Աղդ անաչառ և ինձ կաձառ երջանկացն , և ուժգնութիւն հրամանի վերնոյն արի սպառազինք . ընդ հրեշտակացն և մարդիկ , ընդ տիեզերաց երկրի և տարերք , ընդ անզգայիցն և շարժողականք , որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք լկանաց յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապագայից . իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վտահութիւն , ՚ձնայ անկայուն ՚ի հաստատութենէ : Օ՞ր եթէ ոք իմաստութիւն ՚ի քնին առեալ խուզեսցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութիւն , զմանուսն փոքունս ընդ մեծամեծացն դասեալ , որ առանց Թուոյ և քանակութենէ համարոյ Թինդս առեալ անբաւ երամոյ եռան զեռան սլանան ՚ի մարմնիս ծովու , վկայեսցէ և հաստատեսցէ Աշըմարիտ լինել զասացելոցս բանադրութենէ :

Դ. Այլ դժ լինքն օրհնաբանեալ անմահ Թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Աստ , ՚այ կենդանւոյ միածին որդի , հզօր բարձրեալ անքնին անձառ քաւիչ ահաւոր , սաստեա ՚ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց , արձանացո զծարաւս մոլեգին շարժմանն սրտիս խռովութենէ , ընդոստեա ՚ի սանձս կապոյ

երասանաց ըմբռնման զգնդեալ մտացս վայրագու-
թիւն։ Զղեցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամենա-
վարան բջոյս սասանման, սատակեա խափանեա ըզ-
բազմագլխեան անդամս ուրուականս գաղտնեաց ա-
մենայս երկրակենցաղս հինից։ Զրեսցես աղօթս
միտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմածիդ
թախծագին ձայնի ողբերգարկուածիդ այսր մատենի·
Հան՝ի խորոց մահուս անդնդոց չքնաղ ապրեցեալ
ընդ մարգարէին փրկելոյ· ընկալ զխոստովանուածիդ
անձնագատ բանիս՝ի հոտ անուշից· հնարհեա միւս-
թար դառնութիւնդ վշտաց ուժգին հեծութիւնդ յուսա-
հատելոյս։ Զի քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք
պատիւ և իշխանութիւն յաւիտեանս· ամէն։

ԲԱՆ ԵՒԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոյղ առ նոյն աղերս մաղթանաց բանի·

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Ո՜Յ, ահա ձեզ ասեմ ո՛վ եկեղեցիք միանձանց և աշակերտութիւնք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռօք առ ակնկալութի՛ն յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտակաց քանիցն ընծայեցուցի, ընկալարո՛ւք զայս աւանդութի՛ն խոստովանութեան՝ի շինուած փրկութեան հոգւոց։ Ո՜աներ՛ուք սովիմբ զմարմնոյս պարտութի՛ւն, յիշեցէ՛ք զմարգարէականն ընդ առաքելականին առեալ մեզ՝ի խրատ, զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի՝ն այ, և զոչ ոք է արդարն և ո՛չ մի։ Ո՜տեր՛ունականն մի՛ մոռանայք, ՝ի կատարածն իսկ պատուիրանին զոգջի՛ք զձեզ ծառայս անպիտանս· մի՛ եղիցի լինել ձեզ որսք խաբողին· զգուշացարո՛ւք և

գրոյն, Թէ կերակուրք նորա ընտիրքն։ Վասնզի և ես իսկ, որ զայս նուաղուկ Թէ մանաւանդ պղտոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ըստ գտանիք բեւր բամբասանաց անբժշկական մեղանաց, 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութէ հաստեցի եղի զիս ամենայնիւք պարտական ջարեաց։

Բ. Լուայ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաձեցայ, 'ի յասելն նորա անյարմարապէս առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, Թէ ոչ երբեք ընացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ հանեւուրեցի ձաշակս մահու։ Զի ոչ ընդհատ ինչ յանօրէնութենէ. Թողեմ նմա տէր ած զայսոսիկ. Թէ և ձշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան Թէ գԹեաց, 'ի յասել զանյարմարսըն 'ի դիմաց ժողովրդեանն Իսրայելի բանիւ Օ աքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Զայց ես քանզի գիտող ինն այ մանաւանդ եմ դատաստանի, որ զկիրս աներևուԹիցն մտաց 'ի կշռուս եդեալ՝ համարի դատել զիս նոքօք ամենիւրաւ հատուցմամբք, ոչ կերպարանեցայց տեսողին, ոչ կեղծաւորեցայց քննողին, ոչ ստեցից զոչ գործեցեալն նկատողին, ոչ խաբէուԹիւ ընդ միտ ինչ մտից մեծին, ոչ 'ի տեսիլ բարւոյ յոփուԹեան ղբարս քողարկեցից, ոչ 'ի պատկեր ընտանի զասիկարս երբեք յարգեցից, ոչ խենեղացայց 'ի զարդ օտարոտի, ոչ պճնեցայց այլով պայծառուԹիւ, ոչ պաձուձանս յարմարեցից տգեղուԹես գեղոյ։ Ոչ ոք մեղաւոր իբրև զիս, ոչ ոք անօրէնն, ոչ ոք ամպարիշտ, ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ, ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ, ոչ ոք մոլեգնեալ, ոչ ոք խարդախեալ, ոչ ոք շաղախեալ, ոչ ոք դատապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ ոք, ես ամենայնն և յիս ամենեցուն։ Ոչ հեթանոսք, զի ոչ գիտէին. ոչ հրեայք, քանզի կուրացան. ոչ տըգէտք և խառնիձաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ յանձինս դատաստող. ուրբի ուրբի անուանեցայ, և զգուեստս առ ած եղծի. բարի ասացայ առ եղկուԹեանն ժառանգ

գուԹէ. Եթէ վկայեցայ ի մարդկանէ, որ եմ անմա-
քուր առաջի Ա՛յ. արդար գաւանեցայ ամենայն ի-
ւօք ամպարիշտս. հեշտացայ ի գուէստ մարդկան,
զի ծաղր եղէց յատենին Ա՛ստի. յաւազանէ կոչեցայ
Ա՛ղԹուն, և ես ի քուն մահու ննջեցի. ի փրկուԹիւն
աւուր Ա՛սկող յորջորջեցայ, բայց զզգաստուԹիւն աչս
կափուցի: Ա՛յժ դատաստան, ահա յանդիմանուԹի,
ահա նոր կշտամբանք և հին դատապարտուԹիւն, ահա
ամօԹ դիմաց և տագնապ հոգւոյս, ահա խնդիրք
փոքունց և կշիռք մեծամեծաց:

Գ· Ա՛յլ դուռ միայն տէր Ա՛ծ մարդասէր, ան-
օթակալ և երկայնամիտ, համարեաց մեղապարտս ան-
ձին ընդ վերջին պարտաւորուԹիւնէ աւուրն ահաւորի
զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս:
Ա՛ի լուայց ի քէն զայսոսիկ, գԹամծ, փոխանակ զի
ես ինձէն անձինս գրեցի: Ա՛րդ բարձցես և վերա-
ցուսցես զպահ պարտաւորուԹիւնէ կանոնիս ընդ քեզ
կապելոյս տենչանօք հոգւոյս: Ա՛ն զնախատինս
պատկառանաց խայտառակուԹիւնս, ծածկեա՛ աջովդ
կարողուԹիւնդ զոգեղ տեսակ մարմնոյս մերկուԹեան,
մատո՛ հանպատեան զԹոպեալս ուժգին մեղացս քե-
ռամբք, կարգեա՛ ինձ սահման հետոց բարուԹիւնէ առ-
ելս կենացդ, պահեա՛ յիշատակ ինձ ողորմուԹիւնէ և
զկնի մահու կեանք ամենևին, օրհնեալ յերկինս և
գովեալ յերկրի, բարեբանեալ միշտ յամենայնի՝ յա-
ւիտեանս յաւիտենից· ամէն:

ԲԱՆ ԵՒԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողն առ նոյն աղերս մաղթանաց բանիւ.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ով ագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն տէր Յիսուս, զո ի փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութեամբ զսատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւս, զպարսաւանս վհատութեամբ առ զուարթացուցիչ գովեստիւն, ընդ ամենայն՝ համարձակութեամբ, ընդ պատկառանացն՝ պատիւ, ընդ տարապրութեանն՝ յոյս բարութեամբ, ընդ բաժանմանն՝ անկակաղուամբ միաւէս, ընդ սպառնականացն բանից՝ ողբ քական սփոփանս, ընդ միանգամ դատապարտութեանն կրկին ազատութեամբ։

Բ. Ողբամեա, տէր, մահու մեղապարտիս յաւուր արձակման հնչոյս կենդանութեամբ, մինչ աչացս ողբմանդին հայեցուածս ի բարձունս կողկողիցի, զբազմարկածեան ուղեցոյն զանգերծ ընթացիցն զանսիալ չելին Ձանապարհ յաչս բերելով մտացս տեսմամբ ամենայնիւ վստանդեալ. և ի յերդ քննութեամբ յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմաք այլայլութեան, տատանմամբ մանացս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութեամբ, նրբական ձայնիւ, յոգի թախծութեամբ յոքնամանեայ տարակուսանաց՝ ի խորոց աներեւութիւ զգործեցեալոցս ողբալով հառաչեմ։ Վարօղ ես, բարեգութ, և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեամբ ասելով, թէ ոչղջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ, և կամ թող ղեալ լինցին քեզ մեղանք քո, կամ թէ երթ ի խաղաղութեամբ սրբեալ ի մեղաց։ Այս զոր յայնմ ժամու ոչ ժամանեցիս պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ոչ երկայնամիտ բազմաշնորհ առնակեցոյց։ Յորժամ, որ այժմ բանապատոյ խրոխտաձայն սիգացօղ բարձրապարանոց, անկեալ դնիմ դի

անկենդան, կարկեալ ՚ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ շրթամբք, կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, դոյութիւն անշունչ, ողորմելի տեսիլ, աչխարելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, Թափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, շիջեալ ջամբար, դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ, աղխեալ աղբարան, սպառեալ աղբեւր, Թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղաւար, կոտորեալ ոստք, բաժանեալ յօդք, Հատեալ ծառ, սղոցեալ արմատ, Թողեալ տուն, հնձեալ արտ, ատրախուզեալ բոյս, օտարացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, Թաղեալ գարշութիւն, մերժեալ ատելի, բարձեալ խէԹ, անարգեալ կմախք, և իբր զանպիտան առ ոտն կոխեալ: Կարօտեալ այլոց մաղԹանաց, որք զՀաւատոց Թշուառիս ձայնիւնուազեալ աղերս Հառաչմանն, յօղով արտասուաց բաբերարիդ գԹուԹեան ՚ի բարձունս տարածանեն: Օ աւ քեզ դարձն յեղանակեն արգահատելով, զոր օրՀնեմ. զնշան խաչիդ փրկութեան, զոր երկրպագեմ. զյարութեն Ձմարտութիւն, որում Հաւատամ. զփառացդ քո յայտնութիւն, զոր փառաւորեմ. զդատաստանիդ ահաւորութիւն, զոր խոստովանիմ. զբանիցդ յանդիմանութիւնն, յորմէ զարհուրիմ. զՀոգւոյդ սքղ լինձ ուղեկցութիւն, զոր պաշտեմ. զօծմանդ տեառնապրութիւն, զոր և Համբուրեմ. զԹագաւորեն ընդ քեզ, տէր Յս, որում պաղատիմ: Ա՛րդ լքաւ մերժեցաւ բարձաւ տրտՀեցաւ փախեաւ սրտցաւ տեղի ետ կցորդութիւն զուգուէ կենցաղոյս կենդանութեն, և յոյսդ որ ՚ի քէն պարգև՝ միացական և անջնջական յիշատակարան պահեցաւ:

Գ· Ցնս ողորմութիւ ՚ի տարակուսանս վտանգելոյս, միայն բարեգութ փառաբանեալ որդի ՚ոյ, քաւել բժշկել կենագործել պաշտպանել նորոգել նկարել կանգնել Հաստատել, վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն. չկք քո անկարուն, այլ

ամենևին զօրութեի, բարձրութեի, իշխանութեի, անվախձան թագաւորութեի, խոկութեի, ինքնութիւն, ամենատեղի բացարձակութեի, բարերարութեի, լուսաւորութեի. փառաւորեալ տիրապէս, անսկսեալ և անյաւելուած, խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յԱրարողութենէդ սրբում, գոհաբանեալ յաւէտ և ևս առ սմին 'ի նոյն պաշտօն հաւատարութեի միապատիւ զուգականութեի, երկիւղ և այսօր և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԵԻԹԱՆԱՄԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Վերոյն յաւելուած կրկին հեծութեան նոցին հակոլն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Արքաց երկնաւոր, տէր բոլորեցուն, առ ամենայն բան յամենայնի միշտ երկայնամիտ, ով կենդանեաց անքննին որդի: Ահա անդ է ողորմելն իսկապէս, յորում հատաւ ակնկալութեի վաստակոյն. անդ է բարեգործելն, յորում տեսութեի իմաստիցն խափանեցաւ. յայնմ ժամու է մարդասիրելն, յորում տկարութենն վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ. անդանօր է բժշկուի ածայինն քոյ ձեռինդ, յորժամ քնաւ անդամոյն տեղի ետ կենդանութենն. այն վայր է այցելութե, յորում ելք հնարից ոչ գոյ: Այն է քո մեծութի, յորժամ պատասխանեալ վերն ողջացուցանես. այն է հարատաւ քումդ ազգակցութե, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեացես փրկութե. այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ պիսակեալն մուտս կենաց 'ի սպառումն ընչոյս բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեացես: Այսմ ես անտոհա-

կալ, եթէ ապախտաւորիս ընդ երախտաւորացն խնամարկեսցես. ՚ի սոսին ծանեալ գիտացից՝ եթէ նայեցար ՚ի նուէր բանիս նախնի գթութիդ, եթէ զսովորութիդ չարեացս բարձցես։

Բ· Յաղագս այսորիկ հիւսին բանք և եղանակին նուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի զբարեգործացն պարգևեսցէ. որ մինչ իրաւամբք ծնասցէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուսցէ. մինչ հրաւիրեալ է ՚ի գուբ տղմոյ, նա ՚ի բազմականս ամենապատիւս գահոյս զրգեցուցանիցէ. մինչ բրելոյ զաչսն դիտեսցէ, նա ՚ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ. մինչ ծայրատութիւնէ մատանցն սպասէ, նա մատանի համարձակութիւնէ մատուցանիցէ. մինչ հայի հարուածոյ գահնից, նա գթոյ գիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յուսոյ կորստեան, նա երևելի տեսողաց բազմաց առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ. մինչ հատմանն գլխոյն նայեսցի, նա գլխոյն պսակաւ պայծառացուցանիցէ։ Այս պտուղք օրհնութեանն, գԱստ, սքանչելարմատ քումդ շառաւիղաց. այս արգասիք կենաց արարչականդ քո հրամանաց. այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց. այս նշոյլք լուսոյ ամենասփիւռդ Հառաջայթից. այս ախորժուն Հաշակաց բարեբանեալդ քո քաղցրութե։

Գ· Այո միայնոյ են այսոքիկ, տէր· ՚ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին. ահա զքոյդ յատուկ աղերս աղաչեմ, օրհնեա՛լ, ՚ի քոյոց այտի պարգևեալ հնարհեա· բայց, տէր, զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց առակին։ Այ՚ի խառնեսցես ՚ի համբարս բարեացդ քոյ ՚ի չարեացն իմոց. մի՛ շահեմարանեսցես զատելիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի՛ պահեսցես ՚ի սատցուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ ՚ինասելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք։ Այ՚ի դրեսցես աջովդ օրհնութեան ՚ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցս անիծից. այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուսցես կրկին առա-

ւել զանուն քո տէր ի նոսին, յուցանել զդոյն լոյս դիւրինս և հեշտականագոյնս: Շատ են իմ պարտիքս և անդր քան զքիւ, այլ ոչ այնքան հրաշալիք իբրև զքո զողորմութիդ. բազում են մեղանքս, այլ յաւէտ են նուազեալ առաջի քոյդ ներողուե. յաձախ են չարութիքս, այլ յաղթական են համայնից, հզօր ամենակալ, քոյդ մարդասիրուե. լինձ են անհամար իմոյս անձին բիծք, այլ քեզ յոյժ գրաւեալ են ընդ սահմանաւ: Ոչ են այնքան զօրաւորք առ կենդանութիւն զինք մեղանաց պատկառեցեալոյս պողպեբերութե, որքան յիշատակ մահու կենդանոյդ առ վանումն կործանողին բռնութեան: Օ՜ինչ աղդեսցէ փոքր խաւար՝ աւուրդ այ, զիարդ բաւեսցէ դոյզն լինչ աղջամուղջ՝ մեծիդ ձառագայթից, զիարդ համբարձցի կշռեսցի ընդ խայտ քո կրից՝ խակութիւն հեշտութե մարմնոյս տկարութե: Օ՜ինչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատութեան՝ կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց. ահա կոշտ մի հողոյ դիւրաւիսրելի ի կարծրութե բախման վանեցեալ, իբր զպղպջակ անձրևոյ բազմազեղ հոսմամբ քո կամացդ չքացեալ պայթեալ անդատին: Օ՜ինչ պիտոյ են քումդ զօրութեանդ ամենահնարդ կարողութե ժամանակաց առաւելուի առ յանցուածոց իմոց քաւութիւն. ոչ քթթել մի ական, ոչ խուն մի տեսութե ածանցական, ոչ սակաւ մի նայեցուած փայլական, ոչ կիսամամնեայ յամրութե, ոչ փութացելոց ոտից յեղեղումն, ոչ յելից բարձրութե միոյ կանգնոյ կաթի անկելոյ, ոչ դիծ մի չափոյ մտաց հետևեցելոյ, ոչ նշուղից արագութե, ոչ շնչոյ տուրևառութե, այլինչ յայսմ յանդոյ և յանտպատուորական նմանութե անձև օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առաժամայնք կամ հարևանցիկք, որքան եղծմունք, ցնդմունք և հալմունք մեղացս սառամանեաց պահեստի՝ քումդ զօրութեան, ած ամենայնի տէր Յե՛ս Ա՛ստ, որպէս անքնին կենդանոյդ այ: Որ տաս պարգևես արև քաղցրութե՝ չարաց ընդ բարիս, և անձրևես երկաքանչիւրոցն անաչառապէս. կշռես սահմանես իրաւամբք և զվտանգս կրելոցն հաւասարաբար. որոյ մեծ է հանդիսան առ

ակնկալութեի պարգևին, փոքր խթանաւ փորձութեե զսակաւութեի պարտուցն աստէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցեր, ներես ողորմութե, տալով և սո֊ցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպա֊սես: Այլ քեզ փառք ամենաղօրիդ առ ամենայն հրաշագործութեի բարեխնամող երկայնմտութե, օրհ֊նեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԵԻԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դարձեալ առ Նմին կրկնապատիկ երկրորդութե եաճային հոգւոյն աղ֊դեցեալ յոր ինչ յառաքելոցն սահմանեցաւ աստղութե՝ առ ամե֊նայն լուսաւորութե եկեղեցւոյ դաւանութե մեկնապէս եդեալ աստա֊նօր: Եւ որ առ անշնչականս նիւթեղէն ցուցանի երանաւոր կերպա֊գրութիւն անձառելի:

ՎԵՐՍՏԻՆ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ ընկղմեալ զմայլեալ և՛ի սպառ ծած֊կեալ և՛ի յանձառութե առաւելութեան բազմամաս֊նեայ յաճախութե մեծիդ երախտեաց, որ ամենա֊ուստ լըմամբ աննուազելեաւ յաջմէ և յահեկէ՝ և՛ի դիմաց և՛ի թիկանց համբարեալ կան անքաւութիքս,

Բ. Ա՝ատուցանեմ ընծայեմ դարձեալ ա֊յտանօր աւանդ գովեստի դաւանման ձշմարտականի: Օ՛ն որպէս երբեմն հերձուածականին չարափառութե ա֊մենապատիրն խաբէութե նենգողին կարթիւն հա֊տուածեալ և՛ի բաց հերքեցայ՝ ելեալ և՛ի դրախտին, արդ միաւորականաւս այսու ուղիղ անքծութե՝ և՛ի յաւանդ խոկապէս շնորհի անդրէն միւսանգամ համ֊բարձեալ սովիմբ՝ և՛ի թռիչս թևոց լուսոյ ահա յեր֊կինս ժամանեցից հետևեալ:

Գ. Ա՛յլ քանզի յարգանդէն՝ յորում չղացայ հո֊գևոր երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ՝ ամենից կուսից խոկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձա֊նագրել յայսմ մատենի. զի ծանիցի յուցցի և այլոց և ապագայիցն աղգաց պատմեսցի օրքանութե փա֊

ուաց խնկելոյն, արժանապէս պաշտամամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ գլխոյ մարդեղութեան քանին ՅԻ, ի յիշատակ Ճառիս Հաւատոյ Նրբորդութեան դաւանութեանն։ Նա արդ ի յայս օրինակ հոգևնկար պատկերի բանի, որ գլխորանէս լուսոյ յարմարի, ընկալ զիս, գթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ ի սմին։ Նմն սուաւ ի հոգւոյս զնախատինս մեղացս, անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցո, յաւել զտկարս ի տունն Դաւթի, և անտուստ փոխեալ ի տունդ ՅՈ, ըստ մարգարէին ձայնի՝ որ ի քեզ ՅՈ ակնարկի։ Նմի սուկ զմտիցն, և մի անօգուտ գելից հետևութեն արասցես. մի զՀաւատոյս Ջերմութիւն ցուրտ համարեսցիս, և մի զՀամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանիցիս. մի զպաշտօնն ապաշնորհ գրեսցես, և մի զերկրպագութեն անխորհուրդ լքցես. մի անպտուղ լինի տեսականութեն պատկերին, և մի աննշոյլ՝ կերպարանին սքանչելութեն. մի անհուր ողջակիզին սպանդ մռաասցի, և մի պատարագ ուխտի այս Ճառի՝ արտաքոյ ցրեսցի. մի Ճաշակդ լուսոյ լինիմահու լինի, և մի բաժակ քո կողիցդ արեան՝ ի դատապարտութեն եղիցի։

Դ. Նզաւեմ զքեզ, տէր ՅՈ միդ յԵռնէդ, որով զգիտութեն հօր քոյ և հոգւոյդ սըբ Ճաշակեալ ծանեաք. քանզի ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգև կարգս եկեղեցւոյ, և ի սմին աղօթանուէրը լուսապան կենաց փրկութեն բարեաց, տարածեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիդ ի սմա տիրողիդ բնաւից երեքսրբենիդ մատուցեալ յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեն։

Աշ որ ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ ևին խորհրդածութեն ածային աւանդութեն։

Ե. Փառաւորեմք վերադայնեալ նուագօք օրհնութեան երգոց ի հաւատ պաշտամանն բանի զբարեհրամանն պատճառն եղելոց զՆրբորդութիւնն անսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ, անհասական խորհրդոյ և անըմբռնելի իմաստից, անվինելի ըզ-

գայութեէց և անբեւրելի եղելոց, քանակութեի վերնականն երկնի և անսահման ներքնային խորոց, լուսթիւն սպառմանց և նախադրութիւն սկզբանց, մի յերից անշփոթ կերպից, և երիս՝ ի միոյ անհատուածելի իսկութեանց, ի վեր քան զմտաց անսաղելութեի յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ։ Անփոփոխ բարի, անսասանելի ուղղութեի, անխառն կերպարան սիրոյ, մեծութեի անչափութեի, բարձրութեի անխոնարհելի, անվատնելի տեսականութիւն, բարեբերարութեի աննուազելի, կամք կայուն, հրամանն կենդանի, ակնարկութեի փրկչական, երանուելի Հիմնբիւր, ակնկալութեի հաւաստի, խոստումն անսուտելի, աւանդ արգասաւոր, ստոյգ աւետիս, վերամբարձութեի անձեռնարկելի։

Զ· Ա՛ի հայր միանոյ որդւոյ՝ միական հոգւովին պատուեալ, ամենահարուստ բարութիւ ամենևին ունայն ի չարէ, օրհնաձայն գոհաբանութիւ անքնին ներբողիւ գովեալ։

Է· Ա՛ին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեէց, անպատումն աղգականութեէց, եռալուսեանն զուգակցուեց, անյաւելուածն լրականութեէց, ինքնիշխան կամաւորութիւ պատուասիրեալ առ հայրն հանգուցնատիպ՝ գործակցութիւ հոգւոյն սրբութեէ խոնարհեալ ինքեալ ի յերկնից, աննուազ գոլով ընտանի փառացն, հաձեցաւ մանանել յարգանդ մայրենի ոճածին կուսին մաքրութեէ. յորում աձեցոյց զբոյսն օրհնութիւ ի լուսատահման անդաստանին անարատութեէ. ընդ ամենակատարն էութեէ համանմանեալ յանանջրպետ միականութեի, Թափանցական խառնութիւ յոճութեէն ոգի բաղկացոյց ըզգոյութիւն ընչոյս հրաշապէս։ Որով անստամբակեալ երասանաւ սանձաց կրթութեէ զստահակութիւս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց ի ծայրս լուսթեան անմահականն տնկոյ. ի մահ վիրաւորեցաւ՝ ոճութեէն անընդմիջելի ի մերասերն մարմնոյ, որով կենսացոյց զգործին պարտեաց, արարչութեէն իսկութեէ ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վերստացեալ։ Ելեալ ի վայրս խաւարային գժո-

խոց, եհան զկապուտան իւրաստեղծ ի կապանաց օդոտողին. և իբր ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ յինքն նահանջեալ զդիմեցումն մահու, կանգնեցաւ կենդանացաւ ածապէս՝ ելեալ ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց: Հաւատարիմ եղև յաշխարհի, և երևեցեալ նոյնուիթ ամենևին աննաւազելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ ի գերունական գահոյս նախնականին պարզուիթեան արարչական փառաւորուիթ: Օ՜ որ խոստովանիմք ածծ բարերար և տէր բոլորից, որ գաղտ զնմ երկիր արդար ընտրուիթ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն և ինքն կատարած, նոյն առաջինն և նոյն առյապայ, անպակաս բովանդակուիթ Թագաւորեալ ի լոյս անմահոյց:

Ը. Երկնաբանեմք ընդ հօր և որդւոյ և զանբաժանելի բղխումն նոցին՝ փառակից հոգւոյն տէրութեան. որ ստեղծ զբնաւս և կենդանածնիկ զնմ, որ անդստին իսկ ի բնէ համապարփակ մեծուէ աշխարհակալն միգի շրջեր նկարեր և կերպարաներ ամենունակ ջուրքն անբաւուէ երկրատարածն ծովու՝ ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զոր աւազանն լոսոյ: Նախ արար և այժմ գործէ, գոյացոյց և միշտ կատարէ արուեստս, սքանչելիս, նախատեսուիս սրբամնելոց, ապրմունս ածօրէնս, զօրուիս զարմանաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս վարժօղս կրթուիթէ հանձարոյ: Օ՜ սրբարարն մատուցման արեանն Քրիստի յարդարեաց, քաւուիս անձանց, առողջուիթիս մարմնոց, ըստ նմանուիթէ Քրիստի ողորմուիթէ հրամայեաց: Կերակրեաց և զեր քան զջուր, ինքեան միայն բաւականուիթէ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործուիթէ զօրանայ: Կայեաց միածնին ածուիթէն ի հօսանն Յորդանանու, օրինակաւ տեսուիթէ ամպոյ ցուցաւ ձայնիւ հօր ի լերինն Թափօրական: Նոյն տիպ նմանուիթէ հովանի եղև յակոբեան տոհմին ի յելսն Եգիպտոսի. յուղեգնացուիթիւն զօրավարուիթեն Յովսիսի՝ հողմով սաստկուիթէ զվարաւսն ընկղմեաց: Վասն այսր կատարագործէ, խմաստունս կազմէ, թաղաւորս զօրացուցանէ, քաւուիթիս ընձեռէ, կեանս

ընորհէ մահացելոց ի նորոգութիւն կարութեան։ Այլ ինքն և օծումն մարդացելոյն այ. միանձնաւոր հաւատարութիւք ընդ հօր երկրպագեալ՝ ի պատիւ մեծութեան որդւոյ, անսահման փառաւորութիւք օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Աղաչեալ վասն եկեղեցւոյ, ընդդէմ մանիքեցւոցն, որ են պոլիկեանք։

Թ. Պատանեաք ի հաւատ ուղիղ և անխոտոր-նակ անբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ ածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ. որ գերազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութեամբ, որ ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Այլ զնա առեալ կենացս այս գանձու ի վերնայարկն սրահ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին այ լցոյց, փայլեցուցեալ ի նմա զօրութեամբ յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտունն բարեհեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման ընորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութեամբ, յորում ապա և ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութիւն։ Ասաի արիւն հզօրին այ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զ[illegible]աբելին մաքուր գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեամբ կենդանութեան անմահութեան ի սմա ազդելով։ Պանդի ոչ է կար զօրութեամբ ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական ի սպասաւորուն խորհրդոյ այսր ահաւորութեամբ ձեռնարկել, եթէ ոչ ընդ թևօք սորին պահեցի. նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեամբ ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զածային պատարագն մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն յայսնութիւրան ընծայեցուցցէ։ Այլ ի սմա լուացումն ի մահն Պաի, զի մի յանգիտս անարգեալ ածութիւնն՝ ի ծանուցելումն

զնախնին կրեսցէ. մի ձեռնադրութիւն ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի. մի և չնորհօք քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի ձչմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի. մի յընտրութիւնն ապառնի՝ հաւատ, զի մի սպառնալիք հատուցմանն զրոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի. մի երկաքանչիւրոց գոյութեց մերոց իրաւամբք կշտամբութեի, զի մի կիսամամնեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութենն կարծիցի յանմահ զօրութեի արքայական որդեգրութենն, զի ընդելութեք երկրայնովս առաւելուն վերնոյն թագաւորութեան յայտնապէս ձչմարտեսցի. մի յոյս կենդանութեան առ անեղծութենն սքէց, զի աներկևանութիւն խոստացելոյն՝ ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի:

ԺԲ. Ա՛յս դշխոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ կեանս և մահու իշխէ, ըստ օրինակի ադամեան պղտոյն յարմարապէս ձաշակելի. գերազանց քան զբանականս յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նկարեալ ի մէջ զկերպարանն փառաց լուսոյ: Կրեալ ևս է տեսակ մեծութենէ վերնոյն կամարին սկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղենացն ի նմա զօրութեանց: Կոր իմն ընծայէ Թուիչս մարմնոց ընդ Թեթևութիւս հոգւոց, պատուականին հարստութեամբ զանարգն յարգաւորեալ: Ա՛է ինքնակիր մեղօք զազրանայ, եթէ ոչ ի մարդոյ չարաց և կամ յանհաւատից կոխիցի: Ցիպ իմն է զարմանաւոր յաղթօղ իմաստից մերս տեսութեց. անբանն ի բանաւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ երբ վեհագոյնն յաւէտ նուաստն: Ա՛եծ է քան զմարդ, որքան ընտրելոյն Ա՛ովսիսի ցուպն յաղթողական. առաւել քան զբանաւոր, որքան զԱ՛հարոնէն գաւազանն խորհրդական ծաղկեցեալ. գերազանց քան զմնաւոր, որչափ զԱ՛ղիսա և զԱ՛ղիսէոս գետաբեր մաշկեայն սքանչելահրաշ փայլեալ արուեստիւ: ( )զնուէ պարգևէ կրկին ամենակատար սրբամնեալ ձեռաց մաքրաբար, քան թէ զինապէս. մաք-

մին նիւթական քարի և հողոյ, գոյակից հարուա-
ղատ զգայականաց և սրբոց։ Իբր զվէմն անմահ կեն-
դանի՝ ի կործանումն է և՝ ի կանգնումն. որպէս
զգատաւորն ամենից հոգւոց հանդիսանայ հրաշա-
պէս ազգմամբ յանէծս և յօրհնութիւն. իբրև տե-
սող աներևութից զոմն հրապարակէ և զոմն տա-
ճէ. առ ինքն կոչէ զբեալ յանուանէ իբր զսիրօղ
հրամանատար էիցս։ Իբր զվեառն յաւիտենական
անհարուածելի է՝ ի դիմամարտից. ըմբռնէ զհո-
գևորս իբր զինարարդութիւն մեծին արուեստի. ան-
մեղս և անվրիպութիւնս ըստ Աստի հետոյն ընթանայ,
բարձր ձոխութեամբ անպատկառաբար համարձակապէս
զօրէն գովելոյ գլուխս ամբառնայ։

ԺԱ· Ո՞րքան մեծ ունի սրբութի, մինչ զի զորս ըստ
պատկերի այ եղեն, կանոնաւ խարէ։ Յետ յա-
գուստ ընտրութեց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ
ոք սխալեալ՝ ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի,
այլ ընդ անպատրաստից թերութեց դժուարի. ոչ
նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զբաւ.
ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրովին գտեալ, այլ
՝ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացուցանէ եր-
կիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց,
ըստ տիրական անձառ խորհրդոյն. ոչ կրկին յա-
ւուր զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար նուիրանն
խայտառակեսցի։ Ա՝ շտակէ կարեաց զօրապէս իբր
անախտակիր ապականութեանց որ՝ ի մեզ շարժ-
մանց. առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ
դատի։

ԺԲ· Ցա զվէ և տապան լինի է մաքրական, կրկին
երջանկական, ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պա-
հապան. ոչ բազմօք անբանիւք գազանաց դաստւք
և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվէ-
ղինան յինքն հաւաքէ. ոչ յալիս ջրոցն թեր, այլ՝ ի բարձրութենն երկնի համբառնայ։ Իբր զաշա-
կերտ հրահանգեալ հոգւոյն այ փախչէ՝ ի նենգու-
թենէ. ոչ՝ ի բոլոր մահու մարմնոյ հարուածոց, այլ
՝ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ. ոչ Նոյիւ ձեռն
արկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի.
ոչ Նոյեան ընդ Աբեսելիէլ, այլ միածինն այ հոգւովն

սրբով զսա հանդերձել. ոչ յարաշարժ հանապազա-
փոխ, այլ միտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա
հաստատե: Դարձեալ իբր զտապանակն անխօս
փայտեղէն մածեալ տախտակօք առանց ղպայուքեայ
տեսողականաց մերձ առաքնորդել. որպէս կերպա-
րան անքանակ Յինն յառաջ հետևեալ՝ ի հանդեր-
ձանս լուսոյն կենաց տեղի պատրաստե: Ընդ ա-
ղիելի անուսաց սատակե, եթէ ոչ խաչապէս յոգի
բերիցի. սպանանել վանեալ վաղվաղակի առժա-
մայն, եթէ անսանալինն լծակցութիւք երկրասիրաբար
գեանակոս սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնաձնին
բարձեալ տանիցի: Ո՛չ լեզուաւ մարմնոյ, այլ բա-
նիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութեի, և
արագապէս մտառեալ լսե. ոչ ձայն կերպաւորական
բարբառոյ, և զպատգամն գործոցն Յիսի համօրէն
աղանց պատմեալ հռչակե. ոչ խաղալեաց շարժա-
կանութեի, և ոճայնով իմն կենդանութեի հոգացաւ
աղդե: Ո՛չ ոսկերաց և ջլաց յօդուած, և երկուք
հաղարօք կանգնօք լայնութիւք՝ իբր զգունդն անհա-
մար բարձրեալն ոյ՝ զկենդանական զօրուն գումար-
տակ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ
նոսին իբր զանմաքուրս ի սրբութեի՝ զոմանս ախտիւ
մեղանաց ջեռեալս հատուածեալ յինքենէ հեռի,
ուղեկցել ապրեցելոցն ի տաժանաւոր աղխասարկու-
թեէն: Յոյն իսկ էութիւնն ոյ մարմին եղելոյ՝ ա-
նուամբ այս վիմի նշանակեցաւ, պատառմամբ կողին
զբնաւս արբուցեալ: Ո՛չ արեան երակաց ընթացք,
այլ լուսոյ վերնոյն շառաւիղք Թափանցանց միութք
զսոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանե. ոչ Սո-
ղոմոն կամ Օ որբաբել մահկանացուաց ոստիկա-
նութեի, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրե.
ոչ աննուիրական հասարակաձաշակ իւղով առ ի
Յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ և փա-
ռօք մեծին օծանի: Ո՛չ տուն երկրային նիւթոյ՝
քան թէ մարմին երկնային լուսոյ ոյ զսորին որդիս
կինքեալ ձեռնադրե. ոչ կենցաղոյս յերկրէ յղաց-
մունս, այլ արքայութենն երկնից ժառանգս կրթե.
զի ծոյ իւր զգեաւլոն գոգոյն Աբրահամու ընծայե-
ցուցանէ: Փեսայ հարսնութեէ սորա որդին ոյ կեն-

դանուոյ, օրիորդք խնձոյից սորին Հայրապետացն գումարք։ Այն ինքն մռաացումն առնէ այսակիր բարձանցն կռամոլութիէ, զի զերկնայնոյն ՝ոյ ունի զծանօթութիէ. օտարութիէ և ամենայնիւ դիւցն դրօշելոց, զի ՚ի համօրէն քարինս սորա ՚Ի՞ն երկրպագի. քակտումն և յայտնապէս ուրուականն ըղձիցն անառաց, զի ՚ի բնաւից մայրից աշխարհի նմանութիէ կենացն փայտի ՚ի սմա տէրն նուիրի. խորտակումն և համայն դիւապատիր յուրութիցն արձանաց, զի քարն գոլեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդանեօք այսրէն հաստատի։

ԺԳ· Այս յարկ չքնաղ և ՚ճծրնկալ ազատ և միանդամայն ՚ի յաւիտենաստ ծառայութիենէ. ոչ օրինակ վերնոյն Սիոնի, քան թէ ձգնարտութիէ նմին ձանաչի. ոչ կռապաշտութեանն կապաւ բագին և կամ լծով օրինին տեղի պարտաւորութիէ, այլ տերունի բարերարութիէն պարգեւարան ՚Ի մինչ հաւիտեան։ Ո՛չ սասանի երբեք յայլ ինն կերպարան ձեւոյ փոխարկեալ, այլ ՚ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն ինքն և երկին երկնի յերկրի լուսալայծառ կերպիւ հռչակի։ Պրպէս չէ առանց հօրն ՚Ի՞ի, և ոչ առանց այսր մեր արդանդի յոգի կատարիլ։ Ընտուն շրջի անբովանդակելին, եթէ ոչ ՚Ի սմին տան տաղաւարեսցի. ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան տէրն բոլորից, եթէ ոչ ՚Ի յայս կայարան կենաց մտեալ ագանիցի։ Վ՚ան ՚Ի կամար վերնայինն երկնի՝ ՚Ի յայս հիւթաւոր բնակութիէ առաւել պարծի. անբաւութիւն ՚ճծեան լուսոյն, որպէս զդէմն մարգարէին և զօրինակս սորին ծածկեցին, որպէս փախեան ՚Ի փառաց երեսաց նորին, և նմանութիէ սորուն՝ որ ՚Ի տաճարին՝ ոչ հանդարտեցին, ՚Ի տօն հանդիսի մեծի գոլեստի, և ՚Ի բանականացս դասուց խմբեալ նուագի. աստ օրհնի կրկին բաղձանօք, քան ՚Ի դրախտն վայելչական։

ԺԴ· Այս մայր հոգևոր երկնաւոր լուսաւոր, քան թէ երկրաւոր ընչաւոր մարմնաւոր, զիս գգուեաց որդի. կաթն ստեանց սորա արիւնն Վ՚ի՞ի։ Եթէ ՚ճծածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ, ոչ անօրինի։ Երբ վնշան խաչին փրկութիէ՝ զօրութիս զարմա-

նազանս և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործել. բեմ ահաւորին ատենի՝ ի սմա հաստատեալ տեսանել. սովաւ խորհաբարոյիցն հերձուածողաց մոլեգնաձառ բերանք կարկին։ Ունի և քարինս լինն իմանալիս և բանաւորականս, որով զգաղանամիտս անմաքուրս բացաւստ ի բաց հալածեալ տարագրել։ Ընդանի և ածս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս միոյն այ Աստի։ Ունի և զդիրն իւր ընդ արևելս՝ ի տեղի խոստման քնակութենն մեծոյ առաջնոյ. ձեռամբ լինն ցուցանել յայտնապէս զգալստեանն այ շաւիղ, զիայլականն առակ տիրականն ի դէմն բերեալ մեզ վարդապետէ, զիրկունն ի յելից անտի ծագման արուսեակին քեռան երևմանն ի վերջնում աւուրն արարածոց երկրի Թարգմանէ։ Ցաւս հալածէ, ախտաժէտս բժշկէ, դիւաց բռնութենէ զօրէ։ Ընդանդ որովայնի սորին աւազանն կենդանարար. ի պար հարսանեաց սորա դասք առաքելոցն։ Ինքան Ճոխացաւ բարգաւաճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յորջորջեցաւ. տիրամօրն լուսոյ կոչմամբ ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ։ Ոփելոց մեղաւորաց նաւահանդիստ հանդարտութե՛ն, խրախճանարան վերնոցն դասուց, բժշկարան անսխալելի տարակուսեալ պարտաւորաց։ Յորոդութենն անպատում ի սմա փառաւորի օրհնեալ յամենայնի։

ԺԵ. Իսկ եթէ ոք ձեռն չարութե՛ ի վերինն արքայուէ յանդգնաբար համբառնայցէ, և զիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ աւրուեստ երկրաւենցաղ զսահմանեալ աւանդութիս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև առաւել կենաց և ակնկալութիւն ածային և հոգւոյն սքի յայտնեալ լուսանորոգ նախագրութե՛ և երախտեաց բարձրելոյն ամենատուր լիակատարութիւն և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան և առաքելոց ձեռինն աջոյ բարեհանձար հիմնարկութ՛, և միանգամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք այ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց և Ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բա-

նականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շշմարիտ-
լին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեցն անդանձա-
ւոյ գերազանցեալ նոր սրբութեի և քեռանն նշա-
նաւ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոս-
տովանօղն մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենա-
կալ՝ ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ՝ ի նմա-
նէ և զաւանդ շնորհն հոգւոյն փառակից. փակեսցէ
զդուռն կենացս այս առադաստի յանդիմման նորին:
Լոկ մեք զորս գրեցաք՝ սէրն և վկայեմք, հաւատա-
ցեալ որում կարդեցաքս, յանուն և՝ ի փառս ամե-
նակալ Երրորդութեն և միում ածութեն, յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Ա՜յն իմ հաւատ Երրորդութեին, և այս՝ ի մայրն իմ ըստափաս
խոստովանեալ գաւանութիւն:

ԲԱՆ ԵԻԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Աստուած ողորմած, բազմագութ, հզօր, ա-
հաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անձառ,
որ ոչ ելանէ երբեք ըստ բան քո իւր անձեռնարկե-
լի, որ և մնաց է անհնարաւոր. քո է հաւատացա-
նել պատուղ քաղցրութե ընդ փշոյ խստութե, սկզբնա-
հայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց.
քանզի բարի առնել ատելոյն և աղօթս ի վերայ
հալածչին, և փրկութի հայցել խոցողին, և սպանո-
ղին ներումն խնդրել՝ ի քէն ընծայեցաւ պտուղս
այս հրաշից. որոյ քաղցրութին անձառ է քան զօ-
րինակ և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք և
գովեալ շրթանց քոց ձաշակելիք. հոգի երեսաց և

զօրութեանէ գեղոյ մերոյ տէր Աստուած օրհնեալ ի բարձունս։ Այլ մարդք երկրածինք և ամենավըհպք՝ և բարեմատոյց ձեռաց չարիս դարձուցին. իսկ դու լոյս և տուիչ լուսոյ ոչ լսես անկծս, ոչ ախորժես չար, ոչ կամիս կորուստ, ոչ ըղձանաս մահ, ոչ յուզիս ի խռովութէ, ոչ տիրիս ի ցասմանէ, ոչ հարկիս ի բարկութէ, ոչ մթանաս ի սիրոյ, ոչ այլայլիս ի գթութէ, ոչ փոփոխիս ի բարութէ, ոչ թիւկանոց շրջուիս և ոչ երեսաց անդրադարձութեի, այլ ամենևին լուսաւորութիւն և նկատուիս փրկութեան։

Ե. Աթէ քաւեսցես, կարօղ ես. եթէ բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, ճշմ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեացս ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես ի քոյոցդ ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան ի մէնջ խընդրելն դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես նեղութեես, անդորրիչ ես. եթէ զվերջայեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վեմ ես. Թէ պապաքելոյս արբուցանիցես, աղբեւր ես. Թէ զճաճկեալսն երեւեցուցանես, լոյս ես. Թէ զօդտակարսն իմ ծանուցանես, բարի ես. Թէ զբիծսն անտես առնիցես, երկայնամիտ ես. Թէ ընդ փոքուս ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. Թէ ծառայիս ձեռն մատուսցես, ստացօղ ես. Թէ աջուկդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. Թէ վհատելոյս դարման մատուսցես, կերակրիչ ես. Թէ զանդկաս պարարեսցես, վարդապետ ես. Թէ զդիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես։

Զ. Այս արդ քո են այսոքիկ, տէր ողորմութէ, ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ, նախ-

նի նահատակդ համբերութիւնէ վկայից, որ վասն իմոյ փրկութեանէ հանդիսացար զօրապետ յաստպարիսի ձա-
կատուն, զի կակղեսցես զկարծր բռնութիւնի մարմնոյս զոռոզութիւնէ վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին չափեալ լըզ-
բնութիւնս մերում զտաժանականն տառնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես ՚ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵԻԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԵԻԹՆԵՐՈՐԴ

Վէրսին յաւելուած կրկին հետևութեան նորին հակոզի առ նոյն ազէրս մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ո՛վ քանզի օր է օրհնաբանեալ և լուսանո-
րոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարա-
ծոցս սասանութեանց՝ յեղանակելոյ յայլ ինն էու-
թիւն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն խո-
նարհութիւնէ և կործանելոցս վերբերութիւնէ, սարսա-
փելի Աբրահամ մեծի Պասեքիս, յորում եկն եհաս
ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հե-
ծութեան զուարճախառն երկիւղիս, ահա ըղձալի
համարիմ ասել աստանօր ՚ի քոյոց այտի՝ զոր ընդ-
իմ կրեցեր, ՚ած բոլորից։

Բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմովս կեր-
պիս, ո՛չ խօսեցար տուիչդ բանի, ո՛չ բարբառեցար
հասուիչդ լեզուի, ո՛չ ձայն արձակեցեր սասանիչդ
երկրի, ո՛չ մռնչեցեր ամենազդեցիկ փողդ մեծու-
թիւն, ո՛չ երախտեօքն քո յանդիմանեցեր և ո՛չ չա-
րեօք նոցին ըմբերանեցեր, ո՛չ մատնեցեր ամենոյ
գմատնիչն գքեզ տանջանաց մահու, ո՛չ ՚ի կապելն
գքեզ դիմադարձեցեր և ո՛չ յապտակելն դժուա-
րեցար, ո՛չ ՚ի թքնուելն թշնամանեցեր և ո՛չ ընդ-

կռփելն երբեք խռովելցար, ոչ ընդ կատակելն սրբամեցար և ոչ ընդ խաղ արկանելն երես փոխեցեր։ Վերկացուցին զզգեստ պատմուճանին իբրև ի տակարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Նմին ոչ էր արբեալ կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնուէն. Ձաշակեաց վհատութիւն և արգել անդէն տարակուսանօք, առին մոլեգնաբար և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Զանիւ հարուածոց յետին անարգուէ ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին, ծունր կրկնեցին նախատանաց և պսակ եղին արհամարհութեան։

Գ. Ո՛չ ետուն հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրև զհեզ, բարձեր որպէս համբերօղ, ըստանձնեալ իբր զպարտական զփայտն վշտաց. որպէս զճաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ զլինն կենաց, զի յարհաւրաց գիշերոյնոց զիւրակերտս գահաւորակս մարմնեղէնն գոյութեանս պահպանեսցէ ի դատապարտութեանն վայրի իբր ի խրախճան խնճոյից։ Ընկնին արտաքս իբր զողջակէզ, կախեցին իբր զնոյն Աբեկայ ձգեալ վեղջերայն, տարածեցին ի սեղան խաչին իբր զպատարագ, բևեռեցին որպէս չարագործ, պնդեցին իբր զապստամբ, զնաղաղուիդ երկնաւոր իբր զաւազակ, զանկապուտ մեծութիդ իբր զտառապեալ, զառ ի քրովբէից պաշտեցեալդ իբր զքամահեալ, զսահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակման մահու, զաւետարանիս նկարիչ իբր զհայհոյիչ օրինին, զտեր և զկատարուածն մարգարէից իբր զհամառօտիչ գրեցելոցն, զձառապայթդ փառաց և զկնիք անքնին խորհրդոցդ հօր իբր զներհակ ծնողիդ կամաց, զօրհնեալդ իսկապէս իբր զտարագրեալ, զըկատոյ օրինին լուծիչդ իբր զայր ի նզովս գրեալ, զհուրդ ծախիչ իբր զհերքեալ իմն կալանաւոր, զահաւորդ երկնի և երկրի իբր զհաւատի պատժաւոր, զի լոյս անմատոյց ծածկեալդ իբր զհոգածին ըմբռնեալ։

Դ· Ո՛վ քաղցրութիւդ և երկայնամիտ բարերարութիւդ ողորմածիդ գթութիւնե, որ վասն ապականուորս և անօրինեալ ծառայիս տերդ բոլորից զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական հաճութիւնք կատարեալ մարմնոյդ միութի՝ ի քեզ ընկալար, և միանձև ի քնարան շնորհին տապանի անպակաս ի լուսեղ ամբողջ նոյնութիւնե ածծ անքնին՝ զնոյն կրեալ նախատինս անձառ համբերուն, յարեար կենդանի ինքն իշխան բարձրութիւք լուսոյ, աննուազ մարմնով և անթերի ածուածեամբ։ ()րհնեալ փառաք, գովեալ գթութիք, բարեբանեալ միշտ ողորմութիք, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԵԻԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Ի արդ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս, ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութիք, զբաբեդործիդ ողորմածութիե զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

Բ· Զգաչեմ զքեզ, միայն խնամակալ, մարդասէր, գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի ոմնայնասցի վաստակք աշխատութե փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ՝ այ, մի սոսկ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ ի մատնութեանն աւուր գիշերի. մի լեցի ատուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացեալումն ինձ պարգևեցեր. մի ընկճեսցին հնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի անշահ եղիցին կրից դատուղք, զոր կարօտութես

խոհեմ մատուցեր . մի պարծեսցի բանսարկուն վասնեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել. ահա յաղթեալ ցես կամօք քո՝ ըղձից չարին, վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն, կրկին պարտեսցի՛ւ սպառդատեցեալն. մի անխայեր զաղատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզդարձուցանէ : Օ անձառն արարեր բարերարութիւնդ յանակնկալ ժամուն յուսահատուէ, յորժամ քնաւխակ կարեալ և օտարացեալ էր կենդանութենն շաւիղողութենէ. մեռար անմահդ և զմահացեալս նորոգեցեր . եթէ զկանոն համաձեւութենէ օրինին փոխեցեր , արդ զդիւրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի արգելցես , սկզբնաձիր ողորմածութենէ բարեգութ օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր : Ընդեա բանիդ ամենազօրաւ , որ զդոյութի լուսոյն ստեղծեր ի նախնումն աւուր , և վաղվաղակի փոփոխեալ գըտայց ի լաւ անդր . և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ , դու ելցես ինձ յայց՝ Ճառագայթ ծագման հայրենի կերպիդ , և կոչեցայց առաջի քո ծառայս ինասապատ՝ ողորմեալ հնորհեալ առ ի քէն . ոչ է ժամանակ յերկարաձգութենէ առ ի ըզպարտսն հատուցանել, ահա հնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լոյդ ի խաւարի սրտից վհատելոց : Ընդէ՞ւ և հնքեա զընթացմունս ելիցն , որ միշտ զեղուն բարիքն հոսեալ ի յուշոյս իմ տեսութենէ . պահեա ինձ զհնորհ ամենապայծառ գանձուցդ ճնացականաց , որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց , պաշտպանեալ ի քէն , անսահման բարի :

Գ. Ահա ողորմեա ինձ , զթած , աղաչեմ զքեզ ողորմեա ինձ , հզօր , կրկին ողորմեա : Ի փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց իմոց , բարիդ ամենևին . մի բառնար ի վտանգելոյս զառ ի քէն պարգևեալդ հնարս , մի կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ , մի լուծաներ զինկեալ զինիք արքունական պատկերիդ : Ի յայտնեացին փուշք մեղանացս ի սրբուհս մտացս . մի խզեր զկապ միութենէ զընդ քեզ սիրոյն սնդութեան , մի մերժեսցես զարուեստ զօրութենէ լեզուոյս յարմարուէ , մի պահասեցուցաներ զաջողուած աչոյս առ ի զլուսոյդ

մասունս բաշխել։ Այլ գրեր ՚ի գպրութեան կենաց մատենիդ զմահուն պարտիս, մի պահեր, մի լինձ համարիր, մի յիշեցուցաներ, մի ամաչեցուցաներ, մի նախատեր, մի ոտն հարկաներ, մի արձանացուցաներ զմեղկութեցն, մի ամբարեր զկորստեանցն, մի իբր գտեալ իմն ամբաստաներ։ Այլ յարուսցես ընդ իս զծառն անիծից, մի արձակեր ՚ի յիս զսաղարթ ճաւսուցն, մի ընծիւղեր զծաղիկ մեղացս, մի բերցես ընդառաջ զնամակ պարտուցս, մի արտաքերեր զեղութեն պտղոյն։ Այլ թուեսցես ՚ի Հիւղս երկրաստեղծ մատանցդ զգիւտս գործոցս, մի մատուսցես բան ընդդէմ ահեղ զանօրէնութիս իմ յիշատակել, մի մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյ վարել ՚ի գեբութեան, մի աստէն զիս փառաւորեր՝ զի անտանօր գատապարտեսցես, մի նուաղութեք այսր անցաւորի գյաւիտենական բարիսն տուժեր, մի ՚ի սակաւում այսմ ժամանակի զանվախճանելի զփառսն չափեր, մի ընդ հովտիս վշտաց հեծութեան զանախտական գկեանսդ գրաւեր, մի ընդ ստուերի այսր մթութեան զանձառելիդ լոյս փոխանակեր, մի զերասանակ մրտացս լքցես՝ ըստ արտուղի հետս հետևել, մի զկամութիւրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի զհովիտ հանձարոյս ստուերական պահեր ՚ի հանդերձեալսն ինձ հրապարակել։ Այլ եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ չտեմարանես ՚ի սրտի, աստղատին կիզեալ անբոյց այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիս, առանց յանդիմման քեզ լինելոյ ՚ի սպառ հալեցայց. եթէ տնկակից ինձ Թողցես զմեղսն, ՚ի նոսին վատնեալ մաշեցայց։

Դ· Այնարկեա, միշտ զօրեղ ամենակարօղ, փախնուլ չարութեցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա, գթած, խնամակալ, գովեալ, լոյս անշէջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութի բնութես մարմնեղէնս յարկի անդամոց. յորում հանգուցեալ անլքանելի բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութիդ հոգւոյս իմ ընդ քեզ. զասպականութեի մեղացս մերժեալ ՚ի սպառ՝ յանարատութեի զիս պատրաստեսցես

ամենակեցոյց Թագաւոր անմահ տէր Յ՚ս Ք՚ս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԵՒԹԱՆԱՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծուծեան նորին հակոզի առ նոյն ազերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Յուզեա տէր, տէր զթութեանց, սիրօղդ իրաւանց, ահ ձգմարիտ. նայեա վերատին ի բնութեանս կերպարան միշտ սխալական. զննեա լինձ դարձեալ զամենընթաց տարածմունս ելից արեանս շարժողութիւ. բժշկապէս մատիր տեսանել, զի մարդ եմ հաստատեալ մնօք խակութիւ թերի խորհրդոց յոյն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսօղդ ոչեից՝ միայն դու անմահն ստուեր խաւարի։ Ապա իրաւունս ես գրել լինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպասնոց սխալմամբ պարտեալ կրկին իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիդ քումդ սուտ երևել. քանզի արդարև գիտակ իսկ ես, թէ չար ես արարն և ընդաբոյս չարութիւն մեր, և ոչ փոխոխին խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանձար խնամոցդ նոյն կանխագիտոյց առակի։

Բ. Աղեթևացւոյ զսաստկութիւն տանջանացն, որ պատրաստեալ և ինայ լինձ՝ արկանել զորդիս գեհենին զարդ մահուն յաւիտենականի. բարձ զամբարտաւան պարոխս, որ պահեալ ես յայտնել թշուառականիս յեղին աստենին յանդիմանութեան։ Խրատ խաղաղութիւ յառաջապարգև ողորմութիւք քո ընծայեցո. զի մի անտանելիքն ահաւորութեան ի ցոյցս լինձ եկեալ կերպարանեսցին, անյոյս ապրուիլ ընդ կենաց զղջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր, անկաշառ և անխոնջելի դատաւորն, ամենեն սոսկա-

լի, կշտամբանքն սարսափելի, յանդիմանութիւնն անփախչելի, տաղնապն անձողոպրելի, պակուցումնն անխրախուսելի, դողումնն անվհարելի, լալումնն անսփոփելի կրճումն ատամանցն անբժշկելի, ապականուելն անողջանալի, անեծքն սարսափելի ՚ածայնն քո բանիդ, փակումն զթոյն և արգելումն ողորմութեանն։ Որ ընդ գալարելն երկնի և ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութիւն յատակիս, ըստ կուտակելոյ կոհակաց խռովութիւն ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով ի զիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց. և տատանեալ սասանեալ լայնատարած գետնոյս Թանձրութիւն ՚ի հիմանց անտի, ընդ ուժգնական բախման Թնդելոյ ներքնային խորոց հարթիկ գլերինս, և հալեալ հրդեհին բնութիւնք վիմաց և ամենայն տարերաց գոյից. այլայլին երկինք յանեղծ փոխոխութիւն, և յեղանակին արարածք տարերք իւրովք ՚ի նորոգ նմանութիւն։ Ծածկուիք գործոցս հրապարակին և աներևոյթք կրից մեր յայտնին. վարք կրօնից ներգործեցելոց ՚ի մարմինս մեր նկարին. Թագաւորն երկնից յատենի նստի, վճիռ հատուցմանն ՚ի ձեռին իւրում։ Վա՛յ վայ ինձ եւթնից անգամ կրկին եղկութիւք, ըստ չափոյ կշռութեանց այսր համարոյ, որ զանբաւութիւնս Թուոց պարագրէ։ Օ՛ի՞նչ գործեցից ողբալիս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիսումնն. զոր ումն մարգարէ զօրինակին նմանութիւն ՚ի գէմս բերելով, զձեպ տագնապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն. զոր օրինակ եթէ փախնուցու ոք ՚ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ, և փախնուցու յերեսաց արջոյն և մտանիցէ ՚ի տուն և յեցուսցէ զձեռն իւր ՚ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսիլն քստմնելի. ո՛չ ապաքէն, ասէ, խաւար է օր տեառն, օր խաւարոյ և մթոյ, օր ամպոյ և մառախոյ։

Գ. Յորժամ հրեշտակն պահպանողական կենացս հնչիցէ զշնորհ ոստիկան իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցանօղն ահաւոր արդարութիւք յանդիմանես-

ցէք. սպասաւորք Թագաւորին առանց խնայելոյ խօս-
ձապէն, զոմանս ՚ի կեանս հրաւիրէն և զոմանս յա-
մէթն դատապարտեն. կիսոց դէմն լցեալս ծաղու-
ցուցանեն, և ինձ ահարկուս և քստմնելիս երևեցու-
ցանեն. ոմանց պսակս լուսապաճոյճս մատուցանեն,
և այլոց կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն
աւետեաց, և ինձ գոյժ անվախձան վշտաց: Յոր-
ժամ առ բարիսն՝ մահու յաղթուէ ՚ի սպառ մեռա-
նի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դը-
րանն բախել ոչ ինչ ազդիցէ, վձար եղեալ գԹու-
Թէն առ իս: Յորժամ գալուԹիւնք հրաշիցն զար-
մանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հասա-
րակաց վարուցն տեսակք մարդկային քնուԹեաց գոր-
ծոց, յաղագս որոյ եղեն գոյուԹիք ամ էից, յիւրա-
քանչիւր մարմինս անպակաս գրուԹիք իսկոյն երևին.
և խորուԹիք անձառիցն կնքեցելոց յիմաստից աս-
տեացս առաջի աչաց մերոց կերպարանին: Ուր
այժմ շահավաճառուԹիւնք ողջոց և արտասուաց
զերկինս գրաւեն, և անդ իբր գապաժաման ընդու-
նայնուԹիք արհամարհեալք լքանին. հառաչմունք
հեծուԹեաց ոչ կանխաւ աստի առաքեալ, չէ երբեք
գտանել անդէն. ողորմուԹիք ձչդով սերմանեալ
ոչ պայծառ վառմամբ գնան առաջի: Ուր տա-
պանն նախայանցիցն և կտակարանն տիրանարդիցն
և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մե-
ծաձայնս դատախազեն. յորում սոսկալի վայրկ ոմն
զուխտն կցորդուէ հայրենի և ոմն զխորանն վկայու-
ԹԵ անտեսիցն և ոմն զարիւն մեծին ՚ի այ ամբաստան
լինն իրաւացի առաջի իմ տարածանեն: Օ տանջ-
ջանարանն բաղմապատիկս անձամբ անձին աստէն
իսկ պատրաստեցի, զիարդ մխիԹարեցայց համա-
ռօտեալս յուսոյ. զի եԹէ զօրքն լուսոյ՝ դասուք ար-
դարոցն, որ փառաւորեալքն են երանուԹեաց, սար-
սեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ ե-
րեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդա-
կորոյս սատակման որդիս ոսր երևեցայց. որ ոչ միայն
չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի
և կորուստն անսպառելի:

Դ. Այլ արագեա, ամենապարգև՛ զօրուԹի ան-

Ձառ, ձեռն վերկուԹԵ 'ի կորուստ գերելոյս. զի օգ-
նեալ 'ի քէն՝ զարձայց միւսանգամ 'ի զրանց զժո-
խոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին ան-
վտանգելի պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ
մեռացս իմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւակա-
նացեալ 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝
ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապ-
րեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք
խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամանքն
զազանուԹԵ. զի զորովայն մահուն լցուցեալ՝ զաս-
տուստ պարարեալս անդ ձգեալ հալեն, ուր անսպառ
պահի մեռացուած մԹերիցն 'ի ծախումն յաւիտենից:
Օ՜ի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակ-
ման 'ի կեանս և յերանուԹ, բնաւից ապաւէն Թա-
գաւոր լուսոյ տեր Յ՜ս Վ՜ս, օրհնեալ յաւիտեանս.
ամէն:

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ

Վերոյիշեալ յաւելուած կրկին հեծուԹեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղԹանաց բանի.

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՜Ի արդ 'ի վերայ այսքանեաց յուսահա-
տուԹեանց և ահարկու սրտաբեկուԹեանց, պակու-
ցանողական սաստկուԹեց ՀԾայլին բարկուԹեց, տագ-
նապեալ ոգւով Թախծուէ 'ի սպառ, աղաչեմ ըզ-
քեզ ՈՐ ՀԾածածին. հրեշտակ 'ի մարդկանէ, մարմ-
նատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուէն, ան-
խառն խբրև զօգ, մաքուր որպէս լոյս, անշաղախ
ըստ նմանուԹԵ պատկերի արուսեակին բարձրուԹԵ,
գերազանց քան զբնակուԹԵն անկոխելին սրբուԹեց,
երանաւոր խոստմանն տեղի, Ա՜դեմ ընչական, ծառ
կենացն անմահից բոցեղէն սրովէ պարուճակեալ, 'ի

բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանդստեամբ հոգւոյն Հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութիւնք որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. միածինն Հօր և քեզ անդրանիկ, որդի քո ծնընդեամբ և տէր արարչութիւն. ընդ անաղտ մաքրութեդ և անբիծ բարւոյ, ընդ անարատ սրբութեդ և խնամակալ բարեխօս։ Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քոյմ դաւանողիս, և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներքոյդ՝ի քոյդ պաղատանս. Հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութի ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ Հայցուածոյ, տունկդ կենաց պտղոյն օրհնութիւն. զի՝ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և՝ի մաքրականն քո ծնելութիւդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քո՛ով որդւոյ քոյ և Տե՛ն։

Ր. Ժանդակեա Թևոցդ աղօթիւք, խոստովանեալ մայրդ կենդանեաց, և ելից իմ յերկրէս հովտէ, առանց լլկանաց հետևել՝ի կեանս օթեվանացդ պատրաստուե. զի Թեթևասցի կատարածն իմ լինձ ծանրացելոյս անօրէնութէ։ Արասցես տօն լինձ բերկրութիե զօրն իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն Աւային. բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի ըստ անձառելի մաքրութեանդ և ահա զբանիդ Հաւատամ ընդունելութիե։ Արտասուօք օգնեա վտանգեցեալոյս, գոլեալդ՝ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ Հաշտուէ, ծնօղդ այ. ընդ իմում Թշուառիս Հոգա, խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս, տաձար երկնային. փառաւորեա զորդիդ քո՝ի քեզ՝ ամօքն լինձ Հրաշագործել քաւութիե և ողորմուէ, աղաչխին այ և մայր. բարձրասցի պատիւ քո լինև և յուսցի փրկութիե իմ քև։

Գ. Արէ զնս գացես՝ տիրամայր, Թէ լինձ ողորմեսցիս՝ սրբուհի, Թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, Թէ զՀարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, Թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, Թէ յուսահատելոյս լինձ միջնորդեսցես՝ միշտ ՝ուր կոյս, Թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ այ, Թէ չիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, Թէ զծփեալս Հաստատեսցես՝

հանգիստ, թէ 'ի խռովութեանցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս լինէ հնազբաւորեսցես զուլեալ, թէ վասն իմ մտցես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ, թէ զդառնութիս իմ անուշեսցես՝ քաղցրութի՛ւն, թէ զբաժանմանն իմ խտրոց քակտեսցես՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ, թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութի՛ւն, թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց, թէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից, թէ ողորմութի՛ւն լինէ պատահեսցես՝ կատակ նուիրեալ: Որ՛ևնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութե՛ւ յանձն իմ անձրևեալ՝ կենաց լինէ զօրէ, մա՛յրդ բարձրելոյ ՚ևն Յոի արարչին երկնի և քնաւին երկրի, զոր անձառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն ՚ևծութի՛ւն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սո՛յ էութի՛ւ և անքննութի՛ւ մեծոյին քնութի՛ւս միացեալով, ամենայն և յամենայնում, մի Աստուածութի՛ւն· նմա փառք յաւիտենից յաւիտեանս· ամէն:

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի·

'Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Ընդ ՚ևծաճնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ· որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ անկիրթք չարեաց, հաստեալք յա-

մէնիչեան հրամանաց էիդ , զօրուիք հզօրք ակնար-
կութիւն բարձրելոյդ , սիրք , մաքուրք , անարատք , օրհ-
նեալք , վայելչականք , յաղթօղք և անպարտելիք ,
և ըստ ընթացից տեսութիւն մնաց արագունք ։

Ր · Ուրք և պողակորոյս տնկոյ Թղենւոյն եռամեանն
դատարկութիւք , որ զբնաւ յաւիտեանս պարունակէ
ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ա-
պառնւոյն , յամայր յամրութիւն յերկարաձգելոյ ,
յայգի աշխարհիս արմատացելոյ , սին սաղարթիւն
պաճուճելոյ՝ զրկեալ ՚ի պտղոց , որ է Ճշգրիտ պատ-
կեր թշուառ մարդկութեես , սոքա բարեխօսք , հան-
դերձիչք , այլ և խնամակալք · որ դեգերին հանա-
պազ առ մեզ՝ ընդ մերում կրկնոյս կարեկցելով , բա-
րեմասնութեն մեր սպասեն · և յաւիտենականն կեն-
դանութիք փրկուին մեր աղօթեն՝ զայս բան ասելով ,
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ ։ Վասնզի ար-
դարև՛ մեր են այս աղաչանք ՚ի բարերարեդ այ վասն
մեր կարգեալ առ նոսա · զի նոքա բանիւ են ստեղ-
ծեալ , և մեք ձեռօք ներգործեալ ։ Ուրք և գալոց են
ընդ միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հա-
տուցման , Ճշմարտաբան դատախազք յանցաւորու-
թե երկրայնոցս , յահաւորին ատենի յայտնիչք իրա-
ւամբք զմատակարարութեին որ առ մեզ · որ և ան-
տանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն
նուագ ձայնի , ողորմեա՝ դու ստեղծեր , մի կորու-
սաներ ։

Գ · Ա՛րդ ընդ գոհաբանութե ձայնիցն խնդրուա-
ծոց անմահականացն վերից՝ և ՚ի մեր հեծութեես հա-
տուտեսցիս , բնաւից արարիչ , որ յաղթես գթութեդ
քո վերնոցն և ստորնայնոցս · քանզի քո է բարերա-
րելդ առ մեզ և առ նոսին ։ Ա՛րդ վասն բարեզարդ-
դութեան անախտականացն , հրաշատեսիլ հրակեր-
պիցն , անշաղախ մաքրոցն , անմեղիցն , բոցանիւ-
թիցն , հոգեղինացն և անվանելեացն , ամենաձեռուն
առաւելութեամբ ՚ի բարձրն ընտրականութե գե-
րափայլ յաձախ գիտութե՝ անցուրտ ջերմութե ջե-
ռուցանօղք լինքնաբուն տապովն ՝ածախրութե ըստ
լինքեանց զմերս սառնասեր սրտիցս անքորքոք շի-
ջուին , այրիլ անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբութ սե-

զանխա՝ որ ՚ի խորանխս , առանց նիրհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանելականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ , քրովբէօրէն առաքինութիւնք յաճ միացեալք անբաժանելի : Ոյք երկնաւոր պետութիւնք են մեծք , և վհնաւորութիւնք անբիծք , ահաւորք , երկնաւորիդ այ աղատագնեայ պաշտօնեայք , ՚ի յամ պոյդ լուսոյ ցօղք նշուղից :

Դ· Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեացն ողորմել , Յիսո՛ւս , աղաչանօք իմովն հրեշտակի , դարձուցանելով զիս , տէր , ՚ի բարիդ քո հետս լուսոյ · զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութե , զոր հաւատացեր նմին տեսչութե , զընկալեալն ՚ի քէն ՚ի կենցաղ աստեացս՝ ուրախութե սրտիւ յիս բերկրեալ , անմեղադրելի առ ՚ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութե՝ քեզ , արքայ բարձրութե փառաց անհասից , ՚ի խրախճանս կենդանախումբս բերկրեցեալոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ , զովեալ ողորմած : Այս քեզ անքնին ընդ հօր անհասի՝ Թուաց կյուրթե հոգւոյդ անձառի վայելէ փառք պատիւ և երկրպագութե , յաւիտեանս յաւիտենից · ամէն :

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերտին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողն առ նոյն աղերս մաղթանաց բանի ·

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Տէր ամ բարերար , բազմապարգև Թագաւոր , կենաց պատսպարան , լուսոյ կերպարան , լայնատարած հանդստարան · որ յաղագս մեղուցեալոյս եկեալ մարմնացար , գործեցեր զանսպատումն և հանդերձեցեր զհրաշալին , մինչև կատարեցեր զառեցեալն ընդ ամենայնի ամենայնիւ :

Բ· Արդ վասն առաքելոյն սքոյ յերկնաստեղծ քո

ձեռացդ ձեռնադրելոց և հոգւովդ սրբով օծելոց, զորոց զգուշեսան արժանաւորութիւն ըստ խնդրոյ կալցի՝ առ ի փառս քո, տեր ամենայնի, յայլոսմ բանիւ պաշտեցի, և ինձ ողորմեսցես յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութեան։ Ընդ այսիւղ ինձ ելից նոքօք հանդերձեսցես յերանութիւն փափաքելի. ձայն բարի հովուութիւն նոցին ի յաղջոյն ինձ կենաց քաղցր լսելի։ Ամէն կալայց ի յանեղծութիւն փրկութիւն առնեցեալ յուսոյն՝ ընդ առաքնորդացն կենաց, սկզբնաշխորհին պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, ի զարդ անկասլուտ զօրութիւն շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութիւն տիրական լուսոյն կատարելոց։

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ Հրամանի բարձրեալդ այ Քրիստի՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութիւն, որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողաշաղախ բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս. արիաբար ելեալք ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու, խմանալեացն անտեսից և ծածկելոց աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք. աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին. որ հաւասարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լրմամբ անպակասելեաւ պարեն ի խրախճանս անկէտն երանութիւն. որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր քրտնակնդրուկ աղերսիցն յարդմամբ՝ ընկալ զիս նոյոդ ըստ նոցին մասին անեղծ փրկութիւն ի քեզ արձանացեալ։

Դ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ արեամբ ներկելոցն, և ճգնաւորացն սեաց հարցն միանձանց և քեզ հետևելոցն, որդի այ, անպարտելի քաջութիւն և անպատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բռնութիւն արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն Սատանայ. և մշտամարտ հան-

դխիւ յաստպարխի կենցաղոյս առանց զղուանաց ծանրաբեռնութեան ՚ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս Թանձրութիւն ըզ Թեթեւութիւն հոգւոյն Թռուցեալ ՚ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր սիրօղք վերնում վիճակին առանց յետնոցն մտածութիւն, զԹագն յաղթութեան համարձակապէս պայծառ Հոխութիւք պՀնեալ իսկապէս ՚ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղԹանաց և նուիրական հայցուածոց և զիս զմեղաւորս ՚ի պատժականաց ընկալ ընդ նոսին։

Ե. Այլ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախագրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ ՚ի հաՀութիւն, և ես ընդ նոսին իբր դառնութիւն եդեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութիւն, տգեղութիւն ընդ վայելչութեան և տիղմ ընդ գեղեցկութիւն մարգարտի, կամ Հող ընդ յատակութիւն ոսկւոյ, և կամ քաւրինս անարգս ընդ պայծառութեան արծաԹոյ, բացասութիւն ընդ Հաստատութեան, կամ աւազ ինչ առատաձիւառու ընդ կակղութիւն զանգուածոյ Հացի. արդ լուր, Հզօր, Հնարաւոր, գովեալ, վնասոյն վասն իմ և զիս ընդ նոսին ՚ի նոցին գովեստ, ՚ի փրկութիւնն իմ և ՚ի փառս քո, ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարօղ, անքննին, անՀառ, անեղծ և անստեղծ։ Քոհն պարգևք, քո են ընծրՀք. դու սկիզբն և պատՀառ բարեաց ամենայնի։ Այ՛ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ո՛չ ես կորուսիչ, այլ գտիչ. ո՛չ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ո՛չ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ո՛չ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ո՛չ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ո՛չ ես գլորիչ, այլ կանգնիչ. ո՛չ ես անիծիչ, այլ օրհնիչ. ո՛չ ես վրիժառու, այլ ընծրՀիչ. ո՛չ ես թշուառացուցիչ, այլ միսԹարիչ։ Այ՛ եղծանես, այլ գրես. ո՛չ սասանես, այլ Հաստատես. ո՛չ ոտն Հարկանես, այլ սփոփես. ո՛չ պատՀառս յօդես մահու, այլ Հնարս խնդրես կենաց. ո՛չ ես ՚ի կամս շարժեալ սատակման, այլ ՚ի փրկութիւն ողորմութիւն։ Այ՛ մոռանաս զայցելութիւն, ո՛չ լքանես զբարի, ո՛չ արգելուս զգԹութիւն, ո՛չ բերես վՀիս կորստեան, այլ կտակ

աղատութեան : Ա՛ւ Թշնամանիս յառաջութեց , ու՛ր բամբասիս ՚ի շնորհաց , ու՛ր հայհոյիս ՚ի պարգեւաց , ու՛ր նախատիս ՚ի ձրի ձրից , ու՛ր անգոմանիս յերկայնամտութեց , ու՛ր եպերիս ՚ի ներողութեց , ու՛ր բանսարկիս ՚ի բարութեց , ու՛ր անպատուիս ՚ի քաղցրութեց , ու՛ր քամահիս ՚ի հեզութեց , ու՛ր առաքին այսոցիկ տրտմեալ մունք , այլ անլռելի գոհաբանութեք : Հարձ զմեզ իմ , հոգի . լոյծ զանէծս իմ , օրհնեալ . քաւեա զբազպարտիս իմ , ողորմած . ընկեա զյանցանս իմ , գթած . մատո մատն այցելութեան , և անդատին իսկ կատարեցայց . զի՞նչ քեզ , տէր , քան զսոսին դիւրագոյն , և կամ զի՞նչ լինէ պարտաւորիս կարևորագոյն : Ա՛յլ կենդանագրեա , բարեխնամ , քոյինաստեղծ պատկերիս փչումն կրկին ՚ի չունչ նորոգմանն լուսաւորութեե մաքրական հնորհի զամենամեղս ոգի պաշտպանեալ ,

Զ. Ա՛ի ածեր , ողորմած , ինձ օր տարաժամ ՚ի համառօտս երբի՝ անթոշակ ապաձեռնութեք ընդ անկատար ուղին հետևել , ու՛ր մատուցաներ բաժակ դառնութեան ՚ի ժամ ծարաւու . ու՛ր փակեր , գթած , իմ հանգէպ զյաղողուած հոգևոր օգտիս , և ու՛ր իբր յանկարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ . ու՛ր տապ տօթոյն յանպատրաստ պահուն զարմանս հատեալ ցամաքեցուսցէ , և ու՛ր լուսնական գիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն . ու՛ր պահեսցի ինձ սառն մեղացս , և ու՛ր հոսանք ուղխից կենցաղոյս վիս ողողեսցեն : Ա՛ի հանգիստն մահ բերիցէ , և ու՛ր ննջումն ՚ի սատակումն յառաջեսցէ . ու՛ր քունն ինձ կորուստ լիցի , և ու՛ր նիրհումն ապականութեե գործեսցէ . ու՛ր վախճանն անյարմար ՚ի վերայ իմ արշաւեսցէ , և ու՛ր հնոյս վերարձակութիւն ըմբռնեալ ՚ի խոնարհ լքցի :

Է. Ա՛ոու ես տէր , դու գթած , դու բարերար , դու երկայնամիտ , դու ամենակարօղ , առ ամենայն բան անհասութեան անձառ զօրաւոր , քաւել փրկել կենագործել լուսաւորել , վերստին հաստատել , ՚ի ժանեաց կերչաց գազանաց և կամ յատամանց վիշապաց ՚ի կեանս կորզել , ՚ի խորոց անդնդոց ՚ի լոյս բերկրութեե ածել , և ՚ի հեղձմանէ ծփանաց մեղաց

ընդ արդարս երջանկաց փառաւք բազմեցուցանել։ Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քումդ շնորհաց, եթէ երկնայինք և եթէ երկրաւորք, եթէ անկածն մեղաւք և եթէ առաբարձեալն արդարութիւք, եթէ տէր և եթէ ծառայ, եթէ տիկին և եթէ աղախին. և ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Այս քեզ ընդ հօր և հոգւոյդ սքանչ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Յարձրեալ անքնին, զօրութիւն ահեղ, տէր արարածոց, Թագաւոր երկնի, ստեղծիչ հրեշտակաց, դոյարան մտաց, հաստիչ հրեղինաց, պետ բարի հոգւոց, աղբ ապաւինութեան, անդորրութիւն հանդստեան, տեսարան լուսաւորութեան, պայծառութիւն բերկրութեան, ձանապարհ երանութեան, պատճառ կենդանութեան, առիթ բանաւորութեան, փրկութիւն առանց չարութեան, առաջնորդ խաղաղութեան, պարիսպ ամրութեան, պատուար պահպանութեան, ցանկ բոցոյ սուրի օրհնութեան, սահման անսխալականութեան, յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան և ղոր ի մարդկային աչիւք թշնամիս մեր՝ ի բարի, և արա՛ կատարեա՛ նոցին քաւութիւն և ողորմութիւն։ Այլ բարկացիս նոցա վասն իմ, տէր, իբրև ըզբա՛ց բամբասողաց՝ առ յաձախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա։ Այս արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, արդարադատ, ոմանք առ մեզ ընտանեկարագոյնք սակաւուք,

*Թերևս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ, ա-
մենապարգև, անթիւս և անկշռելիս բազմօրինակ
ուխտազանցութիւնս։*

*Ր. Ընդ յիշեա զքո մեծութիդ, տէր, նայեցեալ
ի յիմն անարգութիւն. և ընդ խնդրելս իմ ի քէն
բարի խոցն ատելեաց, և դու առ քոյս ըստ քում
մեծութեդ անձառելիս հրաշագործեացես։ Ի սա-
տակեացես զիմն խաճանօղն, այլ փոփոխեացես.
խլեալ զխոտանս բարս երկրաւորս, զբարիսն արմա-
տացուսցես և յիս և ի նոսին։ Անաւանդ զի դու
լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խոհու-
թիւ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար.
դու տէր ստօրիցս և երկնից, և ես անիշխան ընչոյս
և հոգւոյս. դու բարձրեալ ի կարեաց զատեալ, և
ես տաժանաւոր և վտանգաւոր. դու ի վեր քան
զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան գարշու-
թիւ. դու ըստ մարգարէին Ծնաս յաւիտեան յանբաւ
բարձրութիւ, և ես միշտ կորնչիմ ըստ նորին բանին.
ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես բա-
ւանդակն իսկ լցեմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցեմ։
Դուն զիս ի բանտէս, արձակեա ի կապանացս,
զերծ ի շղթայիցս, փրկեա ի խեղդմանէս, ազա-
տեա ի տագնապէս, քակտեա ի յերկաթիցս, լոյծ
ի պաշարմանցս, արտաքսեա յերկմտութեացս, սփո-
փեա ի տխրութեացս, հանգո ի նեղութեացս, փարա-
տեա ի վշտացս, հանդարտեա ի խռովութեացս, ա-
պաքինեա ի լալոյս, մերժեա ի հեծութեացս, հեռա-
ցո ի յողբոցս, կազդուրեա ի կականմանցս։ Ո-
ղորմութիւ և պարգևատու քաղցրութիւ, մի զգրա-
ւեալս արեամբ Հզօրիդ անտես արարեալ ընդ վայր
կորուսանելը. կանգնեա զհասեալս յաւին մահու ի
բազմահատոյ հիւանդութիւնս։*

*Գ. Նա բարդեցան կուտեցան շրջանակք ամացս
ընդունայնութիւ, յորմէհետե յայտնեցեալ ցուցայ
յոչակտս երևեալ, ի յանդաստանէ մօրն իմոյ սե-
նեկի փուշս դժնկի մեղայ շառաւիղի. մի լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուդայի,
և կամ զաւակին Եփրեմի։ Ես քանզի բուսուցեալ
անկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութե*

խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն, զիաւրդ ոչ կուշեցից զանձն իմ գարշելի անդաստան անիծաբեր փշուք մեղաց հեղձեալ։ Ա՛չ սերմանեցի արդարութեի, ըստ բանին Աւետեայ, և զիաւրդ հնձեցից և ժողովեցից ցկենաց պտուղն։ Ընկաւ ստինք կուսութե՛ն անձինս մաքրութե՛, ըստ մարգարէին բանի՝ որ առ Խորայէլ, կարօղ ես տէր ՚ի նոյնն հաստատել։ Այնեցի ընդարձակեցի ըստ մելեկան բարուցն Յուդայի զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, ՚ի ձեռս քո է ամփոփել դարձեալ ՚ի նոյն զգաստութի։ Ե՛թէ մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին անարատ գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութի՛ հոգեպէս միացեալ ՚ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ ՚ի քէն երկրիս մատակարար, և զկարակուծն մօրից ցամաքէ և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացօղդ ամենից հոգիդ այ ոչքան զօրեսցես զտիզմ չարեաց աղտոյ և զթարախ պղծուե՛ մեղաց մթերից իսկոյն սպառել։ Ա՛ան այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ ՚ի քէն բարի՝ առելեացն իմոց ՚ի կարգ այս բանի, զի զհերքեալ միասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես, օրհնեա՛լ գթութիւն. ադդ կենագործեա՛ զիս զամենամեղս անդամոք մարմնոյս ընդ բնութե՛ հոգւոյս խորհել միշտ զքոյդ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անբռնադատ կրիցն յաբակցապէս առ սոյն բերումն։ Վանզի արդարև առ միդ այդ պատուէր ամենայն հասակ զօրանայ, իսկ միւսոյդ երկրորդի առաջնովդ խնամով հանդիպել՝ ձեռնականիդ է նմանութե՛. յաղագս այսր իրի նախնի դասեցի զքննամեացն իմոց աղերսանս քան զեբախտաւորացն բարիս։

Դ· Ա՛ւ արդ յիշեա՛ զնոսա կրկին ընդ միոյ, որ ՚ի քո անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան. և տուր նոցա, տէր ամենառատ բարերար և անօսկալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նոցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պար-

տաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկեն, որպէս թէ՝ ի մասանցդ քո կեցուցչաց ի պահպանարան հոգւոյս ծածկուածի լիով ունիցիմ։ Եւ զպատժաւորս անամիտսն ի քոց տեսութեանց և յանխաբելի ի յուղիղ կշռութենէ՝ քաղցր գթութիւդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս մաքուր արասցես, անխայտառակելի պահելով ի տիեզերական յանդիմանութենն։ Եւ որպէս շուք ինն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո, նայեցեալ ի կրօնս զգեստուս բարեկերպութեանդ, չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարդան եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարգեւ օրհնեալ մարդասէր՝ առ քնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեանդ հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մատո պարգեւեա զանեղծ մեծութիդ և զանթառամելի զպսակդ յահաւոր աւուրն յետնում՝ հատուցմանն ամենափորձ ընտրութեանն։

Ե. Օ՛ի դու ես գրաւ փրկուե՛ մեծութե՛ն անվատնելի և՛ անճառ գանձուց ստրկիս և սովեցելոյս, ի վաճառ վերնային շահու օգտութե՛ն բանիւդ որ ի քէն՝ յարգեալ Հոխմանամբ։ Կառո՛ւ ինձ սահմանն ջրոյ հանգստեան. արձանացո՛, անփոփոխ, պատրաստական վստահութե՛ն. կարգեա՛, օրհնաբանեալ, անկաղակարծ յուսոյ ամրութ, տո՛ւր, ամենախնամ դու անաչառ պաշտպանութե՛ն, սասանեցելոյս բարեաց անդորրութե՛ն, տարակուսելոյս լուսոյ ապաւինուե՛, աշխարելոյս մեծ երջանկութիւն, վհատելոյս կենաց օգնութե՛ն, լքելոյս անդադարեալ ողորմածութե՛ն, նահանջելոյս անսայթաք վերընթացութիւն։ Օ՛ի քո է քնաւդ և՛ ի քէն է ամենայնդ, և՛ ի ձեռն քո բաշխին հաւաստութե՛ն պիտանացուաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծումեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՐՔԱՑ երկնաւոր, Թագաւոր բարձրեալ, տէր բոլորից, ամենից ակնկալութիւն, ստեղծող տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց, կազմիչ հանդերձելոց, տուիչ լուսոյ, աւրիթ առաւօտու, պատրաստիչ վաղորդայնի, երևեցուցիչ երեկոյի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, իմաստութեամբ գործօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմարիչ քնոյ, պարգևիչ ննջման, ընդոյ յարակարգութեամբ, զգայութեամբ տևողութիւն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անրջոց, փոխարկութեամբ զարհուրմանց, այլայլութեամբ տխրութեանց, խափանիչ խիթմանց, ընդարձակիչ կարծեաց, համադրութեամբ ծըփմանց, ահաւնութեամբ խարդախմանց, հարուածիչ դիւաց, փախուցիչ ախտից, ընկղմիչ գայթագղութեանց։

Բ. Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ, զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ, ամփոփեա՛ ամենակալդ թևօք, ծածկեա՛ ՚ծածեան խնամօքդ, ամրացո՛ վերակացուբ՛ վերնայնոցդ, շուրջանակի՛ պարսպեա զուարտակօքդ անմահից, ՚ի յամենայնէ պարփակեա կցորդուբ՛ հրեշտակացդ, վանեա՛ զընդդիմամարտն իմ զինուորութեբ՛ զուարթնոցդ, պատսպարեա՛ զսասանեալս՝ ՚ծածծնիդ մաղթանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա՛ ինձ պահապան։ Լ՚ոյց ընդ աչացս դիմաց և զմտացս իմ տեսանելիս, զգաստ ապա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրից դանդաղութեբ՛, վերացո՛ տէր ՚ի զգայութեցս զմածեալս յիմարութեբ՛. բարձ, միայն բարեգործ, զպատրուակիս թանձրութեբ՛։ Լ՚ոյց սկզբան բերմանս լուսոյ՝ զղղր-

մուԹի՛ քո ծագեա՛, ընդ ելոյ արեւուն՝ արդարուԹի՛ արեգակնդ՝ի յանձկուԹի՛ սրտիս մոցէ. ՁառագայԹ քո փառացդ՝ի յիմաստից խորհրդանոց Ջահեսցի. խաչիդ տեառնագրուԹի՛ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցի։ Յանձն առնեմ՛ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ՝ի սմին։ Օ՛ի դու ես ՚ած անքնին, առ ամենեսին բաւական և յաւենայնուամ։ բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուԹեան նոքին հսկողի առ նոյն աղերս մաղԹանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ի՛սկ արդ վասն զի արԹնականն մեր զուարԹուԹիւն քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ՚ի խոր ԹմբրուԹիւն լուեալն՝ վասն ուղիղ հաւատոյն՚ի քեզ՝ անԹարԹափ բացուԹի՛ աչաց, ուղղեա՛ հոգւոյդ քո իմաստուԹի՛ զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծուե՛ ձայնիս մաղԹանաց։ Օ՛ օրացո՛, տէր, ՚ի հանդէս բարի Ձգնաւորական արի՛ վաստակոյ, կցո՛րդ լեր կարեացս տկարուԹեան, ԹեԹեւս կացո զաշխատուԹե՛ս այս սկիզբն. արագեա՛, միշտ կարօղ, զյառաջադրեալ ձեռակերտս, դիւրաւո՛րս ընԹացո՛ ՚ի յաւարտումն լրման։ ՚Ի՛ վախձան իրին բերկրուԹի՛ զիս հասո՛, ժամանն կայուսցես ՚ի հանդիսուումն յուսոյն, կցո՛րդ լեր ուղեւոյն Ձանապարհիս ընԹացից, ՚ի Թռիչս ամբարձման փուԹացուսցես յօգտակարն, ընդ աջմէ իմ լեսցիս ՚ի վտանգի ծանրուԹեանն, զձայն քո լուո՛ ՚ի յանձկուԹի՛ն պահու, ձեռամբ քո կեցո՛ ՚ի կորստեանն ժամու, մատամբ քո աղդեա՛ ՚ի սահմանին անձկուԹի՛, հարԹեա՛ զկատրոց

ամենաչար խափանմանն, հոգեղինին առաքմամբ ըստ Աքակումայ լինձ հնարեա, բան լինձ հնորհեա ՚ի յատենի բազմութեէ, իմաստութեի չիս անկեա ՚ի հանդիպման քննութեէ։ Աքմով կամաց քոց հովանացիր հրաշապես, հանդարտեցո փայտիւդ կենաց զծովուս մըրիկ, սանձեա զաստեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ· քանզի թէ աստ ողորմութէ քո, տէր, կամեացի, այս լուծութէ կոհակաց կարծր է քան զվէմ· և թէ ՚ի ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ սնդութէ յատակիս ՚ի ներքոյ աստի հոսեալ սասանի։

Ր· Աբդ ընկալ, Յա, զպաղատանացս ձեռնարկուէ քեզ ՚ի հաձութէ, և արա լինձ զամենակարծն գայթագղութէ մեծ վատահութէ։ Որպես ՚ի ջրահեղձոյց ամենակործանն դարու, որք ՚ի հարթ տարածմանն գետնի առանց երկիւղի յանհոգս կեէին, յողորմութէդ ամայի մնացեալ կորուսան· իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստիւն յոգնատատան հիմանն հայթայթանօք յանուն գթածիդ յեցեալ պահեցան· ընդ որս և զաղաչօղս միտատատան ՚ի նաւահանգիստն խաղաղութէ մարդասիրապես պրծեալ ապրեցո· վարձս ՚ի քոյոդ ընդ իս բերելով հոգեւոր շահից, զստորաբերս այս ստուարութէն պարտուցս լքեալ բանիդ առակաւ, ՚ի քեզ տէր անկայց միացեալ ՚ի սպառ անբաժանելի, օրհնեալ յամենայնի։ Աչ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան, և յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ Թողին օգնութէ, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամանութէ՝ եղիցի՛ եղիցի՛։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն ապերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԸՆԴ այսր հառաչանաց Թախծուելեան ողբոց ի բաղմաց կերպից շարակարգելոց, և ամենից հոգւոց ողորմեա, գովեալ և երկայնամիտ Թագաւոր։ Կյա և այնոցիկ առաւել, որոց հատեալ է ակն կալուլեի փրկուել կենաց. որք ննջեցին անպատրաստաբար շնչեալ լապտերօք իւղոյն պակասուելեան։ Կյա յիշեա, տէր իմ գթուել, և ի յայս ևս պատճառ իրաւունս ինձ գրեա։ Կանգղի թէ և ի փառս ահաւորուել սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս, զոմն ծանր և զոմն թեթև, զմին զով և զմիւսն հրային զի դիմադրուելին ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կռչեցուք հաւատարիմ հաւասարուելէն. և ի յայսմ ի դատման առաքինուել վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհուելին առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ պակ ընկալցուք Հգնաւորական։ Կյր քանզի յայսմ կանոնէ ուխտի վերիպեցաք, և անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զնջման ընդ երկիր մածաք, այլ ոմն ախտիւ և այլ ոմն անպեծուէ, միւս մանն մոլուելէ ամենաբաղձ կերակրոց իբր դաշտն մշտաբոյծ յարակայ կապեալ ընդ բնուելեաւ։ Կսկ ի քառից ոմն անըմբռնելի և անողոքելի սլացմամբ ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումբ տապով սիրոյն որ ի քեզ՝ նշխարաբոցոյն որ ի մեզ, ցուրան առընթեր կենակից նմին զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդմիջէ. եթէ օգականաւն հրեշտակայնոյին յառիլիմբ ի քեզ, ծանրուելեի Թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ ի ստորև քարշեալ խափանէ։

Բ. Կյս արդ յամենուստ պատեալ և ի սպառ

լքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ, վատնեալ ՚ի բազմաց ՚ի մահ գրաւեցայ. վասն որոյ ՚ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմուէն կողմ նայիմ, և պատկառեալ դիմաք համայնից ուս նօղս ղընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կոըստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա՝ զի և ընդ անտկար կարելոյդ և կամելդ է ախորժելի։

Գ. Արդ այսց երկուց բարդաւաճ ջնորհաց նորոգչաց առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յուսահատութենն վհատութի աղգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հոգւոց բժշկութե քումդ հրամանի, տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԵՒԹՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

՚Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Այ արդ քանզի ՚ի գլուխ կատարման հասեալ սակաւամանեայ կտակի այսր ողբերգութե, արա, տէր, վախճան դադարման առնուլ ընդ այսց քանից մաղթանաց ինքնանախատս կշտամբութե և որ չիս կրկին չար սովորութիք։ Որ քեզկն կարգեցեր սահման աւետեաց ակնկալութե դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք ՚ի փոքրկանցս. և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսեան ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից։

Բ. Արդ օրհնեալ ես ՚ի գթութե, բարեբանեալ միշտ ՚ի քաղցրութե, խոստովանեալ յերկայնմտու-

ԹԵ, ծանուցեալ՝ի յայցելութե, քարոզեալ տէր՝ի փրկութե, ներբողեալ դու յառատուե, պատուեցեալ՝ի պաշտպանութե, փառաւորեալ ես՝ի փրկութե, երկրպագեալ յանբաւ բարձրութե, պաշտեցեալ՝ի յանքննութե, գովեցեալ միայն՝ի յաղթութե, վերաձայնեալ՝ի մեծ զօրութե, խնկաւորեալ յողորմածութե, համբուրեցեալ յանձառ հեզութե, ձաշակեցեալ՝ի խոնարհութե։ Ինդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր ածդ բոլորից մխիթարութե. ըստ որում հոգիդ քո՝ որ բարութե, որ զանկեալ զգրաստ թշնամւոյն և զգայթագղեալ մարդն անբանութե՝ կանոնեցեր ոչ անտես առնել։ Որոյ երախտիս հզօրիդ՝ի յիս, և առաքինութե մեծիդ՝ի բարձունս տօնեալ անդադար յանվախձան փառս բանողաց. որովք զայս ձայն աղերսական յարգեալ ընկալցիս մարտիրոսացն պաղատանօք՝ի հոտ հաճութե բուրման անուշից։ Այս այսու փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զանեղևոյթ վերս միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա, ամենակարօղ, զներքինս և զարտաքինս, զտիպքն և զգիծքն և զնսարանս հարուածոյն. բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեդ զկտեալ խածուածս բազմագունիս, որք գալշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զերութե բնութեանս։

Գ. Այս եթէ հասիցէ յամն ծերութե քև առաջնորդեալ արժանիս մահու, մի թողցես զտկարութիւնս, մի անարգեր զալիսն, մի կորացուսցես ըզկօրծանեալն, մի զինջուսցես զկքեալն, մի վայրաբերեր զխոնարհեալն, մի ընչման հոգւոյ մատներ զառկայծեալն, մի ընդպահկեսցես զդեղևեալն, մի անվերարկու առներ զսառուցեալն, մի անդարմանելոյն տագնապեալն, մի առանց տածելոյ յարկն խարխալեալ, մի անպատիւ պատկերն հնացեալ, մի պարտութիւնն անհամեալ, մի շուք ընորհին անարգեալ, մի հնութիւնն քամահեալ, մի նաւ հոգւոյս ալեկոծեալ, մի երկարութե յուսոյն կտրեցեալ, մի լար շաւեղին խզեալ, մի ուշ իմաստին բարձեալ, մի գոյին կազմած զեղծեալ, մի ամբարձմանն թևք

փետտեալ, մի զուարթութեի գեղոյն տգեղեալ, մի ձաձանչ նշուլին քաղեալ, մի պատուհանք աչացս փակեալ, մի լուսաւորութեի նորին խափանեալ, մի պատկերն խօսուն անկեալ: Ոչ՝ա աղաչեմ զքեզ, բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, լուր առ ցկեն ինձ կանխաւ, զի զանազանն մի մոռասցիս: Ոչու առաջնորդեցեր ինձ ըստ սաղմոսողին և ասրեցուցեր. Հան, տէր, ընդ երգողին և՝ի կարծեացն կասկածանաց, յորմէ երկնչիմ: Ոչ՝ակ ես չեմ արժանի՝ի քէն և ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարօղ ես սովորաբար և առ զլացօղս բարեգործել: Ոչո են զարմանալիք անձառից բարեաց, միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութեի, ընդ հօր և հոգւոյդ սքի օրհնեալ հանապազ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ոչ՝ արդ ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս մտացս լքմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի, զմարգարէին յիշեցուցանեմ՝ զարտասրեցուցոյն Յամուէլի, զոր առեալ եհեղ՝ի սկաւառակէ յանդիման քո, ամենատես, առ ժողովրդեանն օրինակութեի զանձն արկանելոյ խոստովանութեի և հնազանդութեի կենդանարարդ գարշապարաց:

Բ. Ոչ՝ արդ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց, և հոտոտեսցիս յայս նուէր բանի անարիւն զոհի, Թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեսի զտառ մատենի այսր ողբերգութեի, և գրեալ գրոշմեսցես յարձան յաւիտեան ընդ հաձոյականացն սպասաւորութիւնս: Կացցէ առաջի քո միշտնջենաւոր,

և յիշատակեսցի ՚ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ, և ընծայեսցի ՚ի սրահ սրբուէ քոյ. ինկեսցի ՚ի տաճար անուան քոյ, և բուրեսցի ՚ի սեղան փառաց քոց. պահեսցի ՚ի գանձարանի քում, և համբարեսցի ՚ի ստայուածս քո: Պատմեսցի ՚ի յականջս ազգաց, և քարոզեսցի ՚ի լուր ժողովրդոց. նկարեսցի ՚ի դրունս խմաստից, և տպաւորեսցի ՚ի սեամս զգայութեանց. իբր կենդանեօք զիմս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախձան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր սուրբերի՝ գրեցայց կենդանի: Ընասցէ սա անեղծ ՚ի կամս քո, տէր, լինիմ պատժապարտիս համբարձեալ միշտ անդուլ դատիչ, անաչառ կշտամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի դատուիչ, անողոքելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, անմարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կառափիչ, անխնամելի յայտնիչ, ապառումի հրապարակիչ, աշխարհալուր բողոքիչ: Փողով մեծութեամբ ազգման առանց լռութեան և կամ դադարման զիմոյս պարտեալս խոստովանեսցի:

Դ. Այն զիր իմովս ձայնիւ իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն, հռչակեսցէ զգաղտնիսն, կականեսցէ զկատարածն, հնչեսցէ զմոռացեալսն, յայտնեսցէ զաներևոյթսն, բարբառեսցէ զբարուրսն, քարոզեսցէ զխորոյսն, պատմեսցէ զվեղացն, մերկացուսցէ զանտեսիլսն, ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն: Զ օշափեսցին սովաւ որսքն, զտցին գայթագղութիքն, յանդիմանեսցին անձառքն, քամեսցին չարեացն մեացուածքն: Եւ թագաւորեսցեն կեանքդ չնորհայ ողորմութեանդ, Քո, ՚ի, ՚ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց. որով ՚ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի գարնայնոյն նորոգման աւուրն պայծառութեանդ քոյովդ ցողով յոգի աձեցեալ այսու փրկութեամբ անմահականաս, և անցամաքելի վերամբարձութեամբ շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դալարացայց և կրկին ծաղկեցայց ըստ քոյինաշունչ

դրոյն յուսադրութեամբ։ Այս քեզ միայնոյ փրկողին և Տիզուդ քումմ հօր խոկակցի, միանական տէրութեդ և անձառ Երրորդութեդ խորհրդական գովեստիս փառք և երկրպագուի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՈՒԹՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՓ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա՛ստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր, ամենագութ, պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ։ Դարան ամիրութեդ, պատսպարան վստահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպատոր, անյուսութեդ ելք, անուն քո խոստովանեալ ա՛յդ որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն զոհաբանութեամբ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԻՆՆԱՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բարեբանեալ ած երկնաւոր, միայն ա-
բարիչ, տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթու-
թեի օրհնաբանելի, ողորմութեի խոստովանելի, բա-
րերարութեի երկրպագելի, խնամակալութեի պաշտե-
լի, մարդասիրութեի տօնելի, պահպանութեի խնկե-
լի, բարձրեալ անքննին, սքանչելաւոր կառավար, ապա-
ւէն անկասկածելի, միսիթար սրտից, փարատիչ վըշ-
տաց, ապաքինիչ ցաւոց, սպառումն վհատութեից,
բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգա-
ւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի,
շրջադրութեի հնչից, կացուցիչ հադագի, ամիոփիչ
խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուղ-
մանց, հանդարտութեի մըրկաց, խաղաղութեի ծփա-
նաց, որ ունիս զթեւոց ամենընձեռ իշխանականիս,
և իմաստութեի. նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Բ. Պահաքանեալ միշտ երախտաւոր, որ հեզուի
անհպարտութեի երկայնամտեալ հանդիսիս տենչանօք
անձառ հրաշիւք յանձինս սրբոց: Ողազաւոր էից
համայնից, ամենայնիւ ծանուցեալ զթած. սկզբնա-
հայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. Հանապարհ
կենաց, որ առաջնորդես քաղցրութեի դիմելոյս ի
լոյսդ վերին: Զեռնկալու մեծ վստահութեի, որ ոչ
թողացուցանես գայթագղելոյս ի վայր կործանել.
յուսոյ կերպարան, Հշմարիտ առհաւատչեիւ աղա-
չողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինուի հան-
գըստեան, որ ոչ երբեք մատնես վտանգի դատա-
պարտութեի: Ըզատութեի հնարհաճիր, որ տաս լիա-
պես առանց փոխատրութեի փրկանաց. առատութեի
աննախանձելի, որ քոյին փառաւորութեի զանարգ-
նիւթ հողոյս Հոխացուցանես: Պայծառութեի անըս-

տուեր, որ Ձառագայթիւք ահեղ բարձրութեանդ պա-
րածածկեալ զԹշուառս՝ կրկին բարգաւաճ առնես:
Վասիւղ մեղանաց բազմաց, որ զՀերքեալս ի փրկու-
թենէ առաջնոյն պայծառութենէ նորոգեալ՝ վերստին
վայելչացուցանես: Ընարաւոր դիւրահաս առ ա-
մենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառա-
ջեալ, եղէ վստահութեանդ առ խոստացելոցն վայել.
երանութեանն անձկալի, յոր զկենդանութեանդ ընչից լքա-
նելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի: Կամք
անփոխադրելի առ ի քաւութեան գերբոյս զօրացեալ
ամենազօրելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռե-
լոց բնաւին եղծելոց առնես զոքանչելիս: Վմենա-
ստեղծ աներկբայելի, որ զՀուրբ կիզեալն և զՀոդ-
մով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն ի
քթթել ական նուիրն հիւթականութեանդ անպակաս յա-
րուցանես: Ընհատասար համարձակութեանդ, յորում
ամօրէն պանծանօք պարծելն է իրաւացի:

Գ. Հայեաց, տէր, յերկնից զուարթ քաղցրութեանդ
յամենակործան վտանգ նեղելոյս, և արա անդորր
հանգստական դիւրաւոր ի բազմատագնապս հեծու-
թենէ: Ընդ գայրուցեալ գումարս սատակչացն, եթէ
սպառազէնք այսական գժնեայ հնարաւորութեան
բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մե-
ղաց տգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և
ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժես
ցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես
հեռի սահմանաւ ի սպառ տարագրեալ անդարձ որոշ-
մամբ վերստին կորստեանն. և կառուցես կացուս-
ցես նպատակ կենաց և ամուր մահարձան զինչն խա-
չիդ ապաւինելոյս ի քեզ փրկութիւն: Ընդ յայսմ
անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ա-
հաւորիդ մեծութեանդ լուծցին որոգայթքն գաղտնա-
ծածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն,
վատնեսցին գայթակղութիւնքն, խայտառակեսցին հաղ-
թիչն դրուխք, յայտնեսցին երևոյթք որսոյն, գտցին
նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք,
տոչորեսցին որոմանցն բոյսք, նզովեսցին բռնաւորին
չարաբանութիւնք, կարեսցի լար խաբէութեանդ ի մահ
որսողին, պարսեսցին պատրողին բանսարկութիւնք,

պակասեսցին զՀնիք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սաղրողին պատրաստուիք, արձակեսցին տոռունք տապնապողին։ Ա՛յլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեսցին խրոխտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդուածիք կերչացն, բաժանեսցին ազինք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին ամրոցք ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրևք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին։ Կոտակեսցի եղջեր դուռողին, մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց, փշրեսցին ամբարհաւաճումիք հպարտացելոցն, նահանջեսցին դիմեցմունք ձակատելոցն, քակտեսցին միաբանութիք զբացն Ա՛ելիարայ՝ թէ անմարմինք և եթէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ձանապարհ՝ ի մի շաւղաց հետոց յեւթն տարակոյս. ի դուբն ինձ փորեալ ինքեանք ընկձեսցին։ Ցեղանակեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի կապն կցորդութեան միտեանն աւազակին, նողկասցի մտացս կայից համբոյր շղթայքորթին, ընդմիջեալ մեկնեսցին նետաձգութիք նեղչին, կապցե՛ի սասանման նաւ խարդախողին, խլեսցին յարմատոց անտի ատամունք խածանողին։

Դ. Ա՛ման փայտիդ օրհնութե՛ կենաց՝ յորում պրկեցար ձեռդ անըմբռնելի, յիշատակաւ բևեռացդ՝ որով՛ի գործի մահուն մածուցար արարիչդ երկնի և երկրի, արեամբդ տերունականաւ՝ որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեզուին դառնութի՝ զոր արբեալ, զդեղատուիքն կորուսչին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըղձական ձառիւք կրկին սարսափելեաց՝ որով զլրբութի հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր, անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելոյդ՝ յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երևութիից և անեըևութից, եղիցին այս ամենայն պարգևք չնորհաց խոստովանելոյս՝ ի պաշտպանութի, ի բժշկութի և ի քաւութիւն։ Ա՛ւ մահաբեր դառնաթոյն օձին, և որ՝ ի նմա ազգեաց տիեզերադաւ չարութին, ի սա-

տակումն եղիցի նորին. նոյն լինքն ՚ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սուաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղիցի ողբմութիւն ստեղծողիդ ընդ իս, և չունչ ոգւոյս իմ ընդ քեզ անքաժանօրէն կապաւ միացեալ ՚ի մի:

Ե· Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պատեսցի ՚ձծխրաբար, հաւասարապէս անաչառութիւք ընկալցին ՚ի քէն մասն երանութիւն պարտուց ազատութիւն, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի: Եհա տիրապէս հնարաւոր, զօրեղ, անպատում, անհաս, անիմանալի, տեսցես աստանօր ՚ի հառաչանս կողկողանաց այսր հեծուձ, որ ՚ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանին, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սքի փառակցի և կենդանատուի, ՚ձծաձնիդ բարեխօսութիւք և խնդրուածովք ամենայն սքոց: Օ ի դու ստեղծեր զամենայն, և ՚ի քէն եղեն ամենայնք, և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց, միշտ յիսկութիւնէ անժամանակ Երրորդութեդ, զուգակցապէս փառաւորեալ յանքաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻՆՆԱՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին Հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա ։ Տէր տէր գթութեանց և ողորմութեց, անուն մեծութեան, ձայն ահաւորութեան, կոչումն սաստկութեբ, լուր անհասութեբ, բարբառ զորութեբ, հնչումն հիացման, յուսադրութեբ բարերարութեբ ամենողորմ քաղցրութեբ. յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութեբք եղելոց ի քո սպառնալեաց ահիդ պակուցման, սաւառնին սերովբէք, ամփոփին քերովբէք, պարուրին պարք լուսակերպիցն, երկնչին հիացմամբ բոլոր պետութիք վերնոցն, նոյնք ցնծան զողութբ մեծաւ ի մի նաւակատիս բերկրութեբ, զարհուրին դևք, ընկրկին չարութեցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք օտարին ։ Կապին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին, փակին ի ստորին բանտի քինաւոր ամաղեկացիքն, անխզելի հանգուցիւք պաշարին խռմիք հակառակորդին, արգելին անզերծ զընդանաւ՝ մահաղինացն կաձառք, սրդին ի մեռաղս ահեղ հրամանիդ այսականացն գումարք, պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութեիք, պարաւանդին հիւծմամբ կորստեան աներևութեիցն ժողովք, անլոյծ շղթայիւք նեղին առաքելութեիք Պետրոսիք ։

Բ ։ Ընդ կարկառեմ մատամբք ձեռինս զտեառնագրութեի նշանիդ ի ժամ գիշերիս, որ ոչ միանաս խաւարաւ անգիտութեբ, աւերևին տեսականութեի, քան թէ ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես ։ Ընկալ զաղաչօղս վտանգաւոր գոհաբան ընդ պահպանութբ թևոց հզօրիդ, փրկեա ի ցնորից եկամուտ պղտորութեց, սուրբ արա զզգայարան հայելեաց արտիս նկատմանց, ամրացո փայտիւդ կենաց

'ի տխրական անրջոց, արեամբ քո սրսկեա զշրջարկուիս կայիցս, զհետս ելումտիցն կաթուածով կեղնարար կողիդ գծագրեա, երդոցն պահպանարան քառակերպիդ ձևակերպութեի եղիցի, հանդէպ տեսութե աչացս ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի, ընդ բարաւոր յարկիս չարչարանաց քոց զործի հաստիցի, զծառոյդ օրհնութե հաւատք յուսոյ իմոյ կախեսցի։ Ղբգե՛լ, տէր, սովաւ զսատակիչն հոգւոց, մոցէ անխափան պաշտպանն լուսոյ, և ընդ սաստիկ ծանրութե յաւուցս և զբեռն պարտեացս թեթևացո՛, զոր 'ի լռարանի մտացս ամ փոփման մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահատուեցն դառն պղտոցն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս։

Գ· Ա՛նդո՛ զվաստակեալս'ի բազմածուփս աշխատութե, բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութեին ընդ կարեացն, զանձկութեին ընդ թշուառութեցն, զհառաչմունսն ընդ խորտակմանցն, զբեկութեին ընդ ապշութեցն, զթմբրուիսն ընդ շրտմանցն, զարբեցութեին ընդ յիմարութեցն, զթերամտութեին ընդ խելագարութեցն, զսառուսին սիրոյն և զհրայինն ջերմութե աղաւական ախտին։ ( )ժանդակ լեր տկարութե բազմատխուրս տարտամութե, բարեգործ առջովդ հնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ մշտափայլի, յարակայութէ անեղծի, երեսօքդ զուարթականի, իսկութէ էիդ պաշտելի, բարձրութէդ երկրպագելի։ Հատո՛ զչարաչար հեծութեի կորստականս խեղդման, զնոր պիտաբերին, զհին խարդախութեի բանսարկուին, զօտար աղդեցմունս 'ի մահ կրթողին, զանյարմարական եւ բևեռյթս հանապազորդեան եղեռնագործին, զառաչս հնարադրուին դժնդակ դիւին, զողբական բռնաշնչուի ձգօղ կախարդին։ Պահեա՛ 'ի տեղւոջ հանդրստեան մեռօրինակ այսր դադարման յանեբեւեայթ մտածութեանց, 'ի մանաւոր սխալութեանց, 'ի մեծագոյն գայթագղութեց, 'ի փոքրագոյն ոտնառութեց, 'ի խաբեբայ չար ձանձրութեց։ Հեռացո՛ զանձ

Հանդէպ մտածութեան՝ ի զգայութեեղ ծառայիս յանցաւորի, զկիրս բասրելիս, զվարս թշնամանելիս, զդիպուածս պատկառելիս, զհետս վրիպելիս, զպատիւս ձաղելիս, զխորհուրդս անգոսնելիս, զաւելաբանութեիս նշկահելիս։ Ընդհակառակ հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս՝ ի քեզ հանդերձեա՛, ի ընդմանէ հողմոց, ի զարկմանէ բռնութեեց, ի բախմանէ փոթորկաց, ի յոստմանէ մրրկաց, ի յարձակմանէ գազանաց։ Ի կախման աչացս հայեցուածք սրտիս մի՛ ստուերասցի, այլ զուարթասցի պայծառասցի վայելչասցի՝ ընդ քեզ փայլեսցի, տէր Յիսուս, լուսաւոր վառմամբ անշէջանելեաւ։ Քանիւ քո սրբեա՛ զպատսպարանս բազմականիս՝ ի խորամանկութեանց, ի զբաղմանց, ի քո առելի յիշատակաց, ի վերնամարտ մտածմանց, ի քրէական մրոսուեց, ի տիրանենգ անընդհատութեեց, յաստուածընդդէմ հերձուածութեեց։ Կնդիւք վերնայնոցդ վերակացու՛ ինձ լեր, պետութեիք, իշխանութեամբք զօրաւորքն անյաղթականաց մաքուր մատակարարաց՝ որ ամենայնի։ առաքեալքն աւետեաց աւետարանչացն, մարգարէքն կտակարանաւքն, մանկանք երջանկացն՝ ի կատարածի աւուրն ընծայեալ։ Ողով նիրհեցիկ երկիւղիւ ըստ քեզ տրտմութիք, և զարթեայց ընդհանուր քո կրկին ուրախութիք. եթէ վհատութիք ննջեցիկ, յարեայց դարձեալ հոգևորական բերկրութիք. եթէ ընկողմնեցեալ մեղանաւք, կանգնեցեալ վերստին զատեալ՝ ի խղճէ անաղտ անբծութեամբ։

Դ. Ա՛ւր խնդրուածոց ամենահատուածդ ձայնիս հեծուե՛, միայն բազմագութ, բարեխօսութիք սքանչացիք և ամենայն արդարոց և նահատակաց ընտրելոց։ Ընդ քեզ փառք յամենեցունց լմնիս գոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց, ի գովեստ հօր քոյ այ մերոյ և հոգւոյդ սքանչելիոյ հաստատողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԻՆՆԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վերատին յաւելուած կրկին հեծուելեան նորին հակոզի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Երեգնկն արդար, Ճառագայթ օրհնեալ լուսոյ կերպարան, փափաք անձկութեանց, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութեան յուսոյ տեսուչ, գովեալ երկնաւոր, Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք։ Դու արդ զթերութեանց վերիպանաց բազմասխալ ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս Հաճութեանդ հօր քումմ բարձրելոյ։ Որ վասն իմ՛ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութեան, ամենևին կենաց օրհնութեան, վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից։ Օ՛ի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ, ոճ և տէրդ բոլորեցուն, որչափ հաձեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կաըեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ՝ի մինչ առ համասատիւդ քո հայր։

Բ. Դու վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ՝ի հաձութիւդ կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, Թողցին պարտիքն, ապաքինեսցի ամօթն, մոռասցին պատկառանքն, քաըեգործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցի լաչն, հանդարտեսցէ կրձտումն ատամանցն, սպառեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վատնեսցի հուրն սաստկութեանց, հերքեսցին տանջանարանքն քաղմօրինակք։

Գ. Դիակեսցեն գթութիւնք կամողիդ և պարգեւդ ղիդ կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, արագեսցէ փրկութիւդ, հասցէ օգնութիւդ, ժամանեսցէ այցելութիւդ, կանխեսցէ ցօղդ ողորմութեանդ, յառաչեսցէ արքունացդ զանդաստանս պասքեալ՝ անկեալ ոսկե-

բացս Թշուառութիւնէ՛ն վիշն մահու. ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց։ Օ՛ի ամենայնիւ մնայեալ հոգիս մարմնովս մեղայ՝ ընդհօք քո, գթած, ՛ի քեզ զօրացեալ քեւ նորոգեցայց, զատեալ ՛ի մեղայ անմահ կենդանութէ՛ն ՛ի յարուէն արդարոյ, հօր քումմ օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ սրբ բարեբանութէ՛ն վայելչական գոհութէ՛ն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԻՆՆԱՆԵՐՈՐԴ ԵՐՈՐԴ

Վերսին յաւելուած կրկին հեծութեան նորին հակոլն առ նոյն ասելս մաղթանաց բանի.

՛Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք ՛ի մահու և լոյս ՛ի խաւարի, յոյս ակնուսնողաց և երկայնմտութի՛ տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութէ՛ քո դարձուցանես յայդ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութէ՛ քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութէ՛ ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութէ՛ն կապելոց և հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զինդրուածս նոցա, ՝ած իմ և Թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութէ՛ իմ, Ո՛վ ՝ած ամենայնի, սուրբդ հանգուցեալ ՛ի հոգիս սէր, միսիթարութէ՛ վշտաց և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. առաքեա զսահպանողական զօ-

բուէ աջոյ քո և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և ՚ի դիւէ ցերեկ։ Որպէս զի ցյիշատակ սոսկալի և՝ բ անուանդ միշտ համբուրեալ ըղձամբք հոգւոյ ըղձուԹԷ հնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ։

Բ· Այլ ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ՚ի ճաճային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և ՚ի նոյն հնարՀ որդեգրուԹԷ զմեզ մկրտեցեր, և ՚ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք ՚ի ճաճանօք ամաչեցոյ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայԹքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մեզն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն։ Արաղուկ քո հովանասցի, և աչ քո կինքեսցէ· վասն զի զԹաճ ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ՚ի վերայ ծառայից քոց։ Այլ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք և իշխանուԹի յաւիտեանս յաւիտենից· ամէն։

Ի փայան երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութիւն. աղաչանս եդեալ ընդ կերպարանս Թարգմանութեանն։

Ա. Պոհանամ զքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի այ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քոյ յիշատակի ի լուսիւն հնչման փայտիդ հրաւիրման։ Որով բախեալ զձայնարձակութեանցն զաղտղաղարան, սթափեցաք կանգնեցաք, ի վեր յառուցեալ ի մեռօրինակս Թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի բերեալ ձգեցաք ի ժամ պաշտաման օրհնաբանութե, յանդիման լինել քեզ ուրախութիւ հանդէպ հատուցմանս քեմի։

Բ. Կհա փառք քեզ, անսահման անուն և անբռնադատելի զօրութիւ, որ այսքանեօք հնարաւորութիւք ընդ փրկութեան իմում հոգացար. գոհաբանեալ անեղծ իսկութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստսին զհանդերձելոցն նմանութիւն, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ առքունս անյարիր սաստիկս որոտացեր. որպէս թէ ընդ ծուլութեաս դանդաղութի կդանդիմանութիւն խրատուդ խառնեցեր, ի հայրենի սիրոյդ հեզութի զուժգնութի Հայթմանն յարեցեր. կընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցը անձրևեցեր. ոչ մեղմութիւք մեղմական վանգիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութիւք զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր։ Ընդարձակեալ երկրպագութի ստեղծչիդ բոլորից, որ այժմիկ ցուցեր համայն յայտնապէս զօրինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութե, կենդանացուցեր ի դադարմանէ գժոխական անբանութէ, ի խնդիր եղեալ կոչեցեր զպակասամիտս ի գինիդ ուրախութե. արարեր զսոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սեր փեսայիդ. երկուցեր փոքր այս խթանաւ զապարասանին զվիթխարութէ, լուծ ստուար կրթուէ սատանայկին ուսոյ զայս իր գործեցեր, վա-

բապան վանիչ չարախօսին կզակաց եղեալ կազմե-
ցեր ։ Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութիւն մե-
ծիդ այլ, որ փոխարկեցեր զիայտին պարտիս յաղա-
տութիւն ընդհիդ կենաց, իմաստնացուցեր վերստին
դարձեալ զիմարս ցնդեալ՝ հոգևորական հանձա-
րովդ, կարկառ կռնմամբ զանբժշկութիւն հարուա-
ծոց օձին առանց մռայման միշտ թարգմանեցեր,
ընդ Աբրորդութեանդ գծագրութիւն զկասն երեքկին
իմ վնասակարին՝ ի կատարածին սովիմբ կրկնեցեր ։

Գ. Ոսկեբան ներբողից բուրմամբ ինկոց վերառա-
քեմ քեզ, ամենանխնամ, զի՝ ի ստապատիր կռոցն
բազմաստուածութենէ առաւել յաձախագունիւք
որսացար զանձն իմ պարտաւոր՝ ի քո երկրպագու-
թիւն, խրոխտ և ահարկու նուիրեալ փայտիւս զձըշ-
մարտութիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատ-
ճառաւ պատշաճականաւ զնոր աւետարանութիւդ
պատիւ ։ Այոյն ինքն աղաղակ բարձրութիւն գոչման
սպառազինութիւդ քո, արքայ պետութիւնց կայսերաց
երկրի տէր Աստ. նշան խրախուսութիւն աւարտման հան-
դիսի մարտի քո, Քրիստոս, յորում իմանալին Փարաւոն
կապեալ ըմբռնեցաւ, կռփիչ հանապազորդեան գըլե-
խոյ գագաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս
այս տաշեցեալ ։ Այսպէս գումարին՝ ի պատերազմի
որդիք Այոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի.
տուն իմն ածաւանդ կրթութիւն կարգեալ՝ ի հեռուստ
այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ
խափանման, նշանակիչ ժամանակի ապագայիցն հա-
տուցման՝ ի բացուստ անդր ծանուցմանէն, աղգա-
կից հանգուանանման կենացն փայտի՝ որ՝ ի դրախտիդ
այլ, կոչարան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւք՝ ի
յարկն օրհնութեան, պատկեր տեսակի տնկոյն գի-
տութիւն՝ ի կարգ ընտրութիւն բարւոյն և չարի, յիշա-
տակ մեծ տեառնագրութիւն յերեսս կերպիս հոգւովդ
սրբով զնչան խաչիդ, նախազեկոյց աւետամատոյց
փառաց գալստեան՝ ի դչխոյն պահեալ՝ որ թագա-
ւորիդ, յորդորիչ քաջալերական մաքրապարիսին
խրախճանութեան, անախտական սիրարկու անձնա-
համբոյրն կցորդութիւն շքեղաշուք քողընծայ ամե-
նածին կուսին Թագուհոյ, յարդարիչ ծածուկ

պաՀՆուԹԵՔ՝ որ ’ի Հոգին Է վայելչուԹիւն, նմանուԹԵ՛ պատգամին Պինայ, որ ’ի տերունեաց արտաքս առաքիւր. միշտ օրիորդ պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սուրբ փառաւորեր։

Դ. Վերագոյնքան զԱրիքովին փղոյին եղջերեայ զբաՀնուԹին Ներսիսեայ սուրբ ՀարԹեալ տապալեցեր, քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ ԳողիաԹու, գայիսոն նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի, զի խորաձեղեալ արմատս մեղացն մեքենայիւս այսու խլեցեր, զմոռացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախաՀաւօք ընդ իս կապեցեր։ Օ՜ որ եԹէ այլ ինն ձայն քանիդ՝ ով անուանեմ նախապատուական եկաւորուԹեն, ոչ սխալեմ քան ԹԷ ՀշմարտեմՀ. ’ի տկար ամանս այս նիւԹոյ Հոգեկրի՝ մեծուԹ գործոցդ Յոի առաւելապէս պատմեալ Հռչակի. բիւրաւոր օգնականուԹիս վերնապարգեւս և քոյինատուրս ’ի յայսմ անպատրաստ ապաւինուԹԵ՛ երկրակամաց զարմանագրեցեր։

Ե. Խոստովանեալ անունդ անքնին մարդասիրիդ բարեխնամուԹեան, խնկեալ խորհրդով սրբամատնուԹԵ՛ անպճագրելի կերպարան լուսոյ, որ կրկնաձիր նշանաւս այսու նետս արձակեցեր Հեռաձիգս ձայնատրականս օդաչուս և յարմարաԹռիչս ուղնօղս յինքեան Հոգի կենդանի, որով անսխալ Հանդիպմամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին դաղտնուԹԵ՛ յաւէտ կործանմամբ ’ի յետս ընկձեցեր։ Իբր զպատնէշս ամրաքերձ բերդամարտուԹԵ՛ կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուստ անդադար զկտեալ դիպուածս այս փայտի զարկմանն Հրեշտակ կամարար Թշնամւոյն ներՀակ վերցուղարկեցեր։ Ականիս Հրամանի մեծիդ ակնարկուԹԵ՛, օծուԹԵ՛ ընորհիդ արեամբ քո խաչնեալ՝ զայս եղջեր խեԹիկիչ մոլի գոռոզին իբր զկաչփիդ փրկանակ յեսանեալ սրեցեր։ ’Ի մեծ աղդմանէ այսր աղաղակի դեր քան ’ի վերնոյն քանդեալ վերացաւ դրանդն ամրուԹԵ՛ կամաց անվայելուչ և ամեներկիւղած խենեշուԹԵ՛ կարձամտին, ընդ Հրեական սրտին խմաստից և սուտերական տանն կործանուԹԵ՛։

Զ. ՓառաբանուԹիւն քեզ վերընծայեմ, անմահ

թադաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր, աղաչեմ զքեզ, կրկին ներգործեա։ Լնցուցեր սովաւ հերքեալ առ ի մէնջ զխիթ դժնդակ խորատմանկութեան բանսարկուին, զտաժանական տագ մեղաց, զհողմն դառնութեանն ընչման խաբողին, զտարր արկածից մահու երկիւղի, զառ ի յօդից ցնդմանէ ինասակար բերմունս տխրեցուցիչս, զայսախառն հեծեծութիւնս թալկացուցիչս։ Յրուեա վերստին քոյինազին հեծանաւս՝ օժանդակեալ թևօք նշանիդ՝ զամպս հրածինս, զորոտմունս կարկտաբերս, զցաւագին ցոլմունս հրախառն կեղծաւորութեան փչման բազմոտանի վիշապին, զսուր սատակման, զձակատամարտ դիմեցման, զյարուցելոցն ի վերայ վայրենական խորհրդոց զդիւացն կաքաւս։ Յորմէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութիւ, կիրթ լինի ծանօթութիւ յայտնի գիտացեալ, թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր ի դատաստան։ Լյս խրախուսին յոգի արուեստիւ զրահեալ պնդապէս սուսերաւ հոգւոյն ածարեալ մարտիկք ամենայն ի ձև կանոնի այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպագրելեաւ համբերին ազանց քարոզէ ի յօրինաւոր ասպարէզ երջանկաբար նահատակութեան։

Ե· Ձարաւ ահա փող աւագափող, համբարձաւ սովաւ ածծ օրհնութիւ, պատմեցաւ սովիմբ ամ երկրի, հնչեաց ի լսելիս բաժանման հեթանոսաց, ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին Լսայեայ, և ի նոյն բարբառ առհասարակ ցնծասցուք։ Յնդեցան ջրոյն առակաւ ի ձեռն սորին թշնամիք խաչին, անպատուեցաւ Ձաշակն պտղոյ առաջնին փայտին, տօնեցաւ նիւթս այս խորհրդական կենաց առնուանեալ, անարգեցաւ երկաթ առ ի պէտս պատերազմի, իբր զսրբութիւն ետն ի սանձս երկնաւորին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ, ամիսփեցաւ օծեալս ցոլով հովուին երկնայնոյ սուր իշխանութեան մարդկային ձեռին։ Ալ՛է գծեաց ի քար տաճարին մուրճ ինչ գործողի. իսկ յածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին թևոց սլացեալ զօրէ։ Ալ՛է ի գլուխս ամենայն և

կամ յեւթնից եւ ինեւորդս յոբելինից՝ յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց եւ ընդ ծիրս եղերայ՝ ի ծոցս ջուրց բազմուԹեաց ծովուց եւ կղզեայ նոցա յաձախ սաստկուԹիւն անարգել ձայնմամբ իմն ահագնով հնչեցեալ աւետարանէ։ Կատարեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխադրեալ ի խուխս եւ ի մանգաղս։

Ը. Ոչ արձագանք արձանաց ի խորոց հնչ գանջուԹենէ խիստ առաքեցեալ, եւ ոչ դժնդակապէս ըստ իմաստակի ումեմն օտարի զօդ վիրաւորեալ, ոչ անախորժ սրուԹիւն ընդ ունկն մտեալ եւ ոչ զամանն ուղղոյն անկամակուԹիւն չար ենդեցուցեալ, ոչ ոսկերցն փուշ խրտուցման յանձն բուսուցեալ եւ ոչ մտացն այլայլ ապշուԹի առաջի արկեալ, ոչ զանգակ նիւԹոյ պղնձոյ դանդաչեցուցեալ եւ ոչ քար ընդ վիրգս սալի առանց քաղցրուԹիւն առ նոյն զարկուցեալ։ Պարփակարան անխորտակելի նորոյս Ոիով նի, մի սա ի սպասուցն կազմուածոց արարչական դիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ գլխատականացն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. նոր գործի հնորհի նուագարանաց աւետարանին՝ զարԹուցիչ հոգւոյն առ մեզ, քան առ օրհնաբանուԹիւն սաղմոսարանին ի վերայ Ադմոսէին։ Ակզբնապար նախընԹացուԹեան աղէյարմոր ջուԹակաց բարեառւիղ ողբերգարկուԹեանց՝ քաղցացուցական բամբռան բառացի բարառնուԹեց. սրինգ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդուԹիւ, ոչ հեԹանոսօրէն ուրուանձայն հնչման եւ կամ հրեաբար խակախորհուրդ, զոր մարգարէն տերամբ աղեցոյց՝ ի քաց արա յինէն, այլ զսա սիրեաց եւ կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ ահարկու դիւաց եւ ամենայն չար պատահարաց։

Թ. Ադ արդ ընկալայ օրհնաբանուԹիւ յարգեալ գովեստիւ զայս տուր սրբուԹիւ՝ ինձ պահպանուԹի եւ քո փառատրուԹիւ, քո պաշտօն եւ իմ գոհուԹիւն, անապղանդ արուեստ բարձրուԹեամ արարչական փառաւո-

բութեանդ։ Ա՛տցէ ձայնդ այդ ահաբեկալ ընդ պատուաստ յօդիցս շաղկապուէ, հանել՛ի հոգւոյս զպատիրս դիւաց և զմեռաց անիծից և մեղաց ապականութեան։ Ա՛րասցես լինել զայս իր նշանակիչ ինար ջահաւորական, անջրելի նամակ, ջատագով անխափանական տնօրինականացդ։ Ա՛հա պարգեւեա սովաւ, բաթգութ, աղաչեմ, հլօր, կրկին մեզ ընդհեա պահպանութե՛ի դիմամարտից յաներեւոյթ և յերեւելի։ Ա՛նձեռեա մեզ, ձեռն ամենալի, որ բանաս և մատուցանես պատրաստաբար բաշխմամբ՛ի մասունս բազմապիսիս, օդոց քաղցրութե՛, անձրեւաց շահեկանութե՛։ Պահապետացին քոյով հրամանաւ այսու բարբառով հողմ տապալառն, ընդունն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութե՛ց· սովաւ խափանեսցին ամենայն դիմամարտութի՛ք զինուորուե՛ց դժնեայ մատնչին, հալեսցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնե՛ օծեալս այս փայտե որդն և ուտիչ, և ամենայն նմանք սոցին, որ՛ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին։ Ա՛րմատացո՛ մեզ սովաւ տունկ երանութե՛ զյուսոյդ՛ի քեզ մեծ պաշտպանե՛ի, ստեղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ Աբեկայ, որ ունի կախեալ՛ի դիտակ ոստոցն զաւանդ՝ որ նորոգ այժմու փրկութե՛ս ծաղկեալ քև, Ա՛ծ, ՛ի պտուղ կենաց անմահականաց։ Պախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեզեկոյց ձայնարձակութի՛ք՝ նեսաքք ներհակք ստապատիրն ստորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց։ Ա՛երժեսցին սովաւ՛ի յանդոյց պտղատուհմական արօրադրութեանց մերոց սահմանաց և՛ի քո մշակեալ կենդանի երկրե՝ վերք վատնիչք և հոյլք մորմոքեցուցիչք· կարեսցին սովաւ յաւելուածք կրկնատգեղ և անվայելուչ պատահմանց՝ ՛ի հնարից չարին՛ի մեզ յայտնելոց· խափանեսցես վանեսցի սովաւ, որք յերկաքանչիւրոց բնութե՛ցս մերոց վերերևին ինքնաստեղծութի՛ք մերձաւոր դաւաճանողաց։ Փրկեա, տէր Յն, աղաչեմ զքեզ, փրկեա, բարերար· կարկառեա առ ինս զաջդ ամենագով, և օգնեալ լինձ սովաւ՝ զերծո՛ զնս յամենեցունց ընդդիմացողաց։

Ա. Աստուածային միասիրտ հրաման քո ՚ի սոյն՝ առ ՚ի փոխարկել զաղամանդեայ սիրտս յիմարեալ՝ ՚ի քոյին բանիդ արդիւնատուրութիւն. Հարցես մխեցես զայս նեցուկ հրաշից քումդ աքանչելեաց ՚ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս, և հաստատեսցես կաղմեալ պնդապէս ՚ի կայուն ուղիղ անսասանելի. իսկ զանընդոստն կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզուճ ածաւանդ քո պատուիրանիդ, որպէս զՊաւղոն և զՊատէհոն։ Ցիշեցո՛ մարդասէր, պատուեալս այս փայտիս զերախտիս խաչիդ, որով զանձառան ներգործեցեր. բարձ լինէն կեցուցիչ, զվտանգ պարտեացս պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ։ Ներացեն կամօք քո, հզօր, ՚ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց. լուիցեն յայս մեծի բարուէ ՚ի քումդ ակնարկութեի ականջք խլից. պարզեսցին ՚ի ձեռն սորին լեզուք համրացելոց. լուսաւորեսցին ՚ի սոյն տեսարանք աջաց, հայել մաքրապէս ՚ի քեզ պշուցեալ անայլայլաբար. զղջասցին դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց. ընձեռեալ տացես, տէր, տապնապելոյս անձրև արտասուաց։ Ակղիցի քեւ սա մեզ լուր ցնծութե, ձայն ուրախութե, բարբառ բերկրութե, նուագ հանգստեան, նիւթ երանութեան, պատճառ փրկութե, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խզումն խեղդմանց, ընդարձակութե նեղուեց, համառօտումն խեթմանց, հալածումն հեծութեց, թեթեւութե թառաչմանց, յապահովութե կարեաց, կարգադրութե կրից, սփոփութե վհատմանց, բժշկութե ցաւոց, տեւականութե հեղգութեց, ուշադրութե անտեսից։

ԺԱ. ՚Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և ՚ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբաց հետ սանդուղ երկնաչուս, առ հայր քո օրհնաբան ահաւոր անուն ձգեալ մատուսցես, բարերար, հոգւոյդ առաջնորդութբ միանալ ՚ի քեզ անընդմիջելի. որով և մեք միով միայնով և միամտական տէրութեդ և անեղծ արարչութեդ ՚ի կենդանեաց և յանշնչաց կանաց հաստելոց վայելչական գոհութբ փառք և իշխանութե յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԻՆՆԱՄԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Աղօթք Թարգմանօրինք վասն սրբալոյս խաղին Միւռոնի։

Ա. ՅՈՒՐԲ ահաւոր անուն քարձրեալ անապատում, անձկութիւնք փափաք յարախորժելի, ի սրբեցիչն փառատրողաց միշտ սրբաբանեալ քնակեալդ ի սրբում, լի և ամենազեղուն բարուքք առատաձեռն աննուազելի, լոյս բարի և ծագումն գովելի, երկրպագեալ փառաւորուն, ահեղ և անզննելի, ամէն և յամենայնում։ Ակյսու բանիւ դասշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութիւն, հզօր, այո, ամէն, ալէլուիայ. գովեալ Թագաւոր հանուրց, ազատ բոլորից, ստեղծիչ գոյից և տէր կամարար, միայն առիթ պատճառաւորաց, փրկիչ և օծեալ միւռոպաշտելի։

Բ. Ուստի մեկնապէս Թարգմանեալ ի մեզ զայս գանձ անվաճառ և հարստութիւն անսիոսպրելի, Յա Վյա արքայ երկնաւոր, որում գողութք մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշընչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութիւն ի հաճութենէ անխոտոր մտաց, ծունր գոհութեան ստեղծօղ էութեց, որ են ի տեսման և ի ծածկութիւն։ Ալր եղէ և էիր միայն բովանդակ ամենևին անպակասելի, առեր զմեզ իսկապէս համայն, զի ի լրութիւնդ քումմէ լցուսցես. օրհնեալ և բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութիւնք մեզ ի փրկութիւն, ի փառս և ի գովեստ անձառ բարձրութեն ահաւորիդ բարերարութեան։ Ակզբնաձիր օծմանս ընորհի մեծախորհուրդ հրաշազարդութեան. քանզի լոյս քո մեզ ծանուցեալ Ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգական անաչառասփիւռ, աստղ սահմանիչ երկակշիռ տարրութեանց, Ճրագ ոտից և լոյս հետևմանց, որով ի ցոյցս իմաստից եկեալ տեսութիւք բանիս այս յարմարուն, տօնեմք պարերգութիւք հրեշտակօրէն յաստակամտաբար փրկչավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգևաբաշխ առատատրութենէն ամենիմաստիդ յեղ զուարթ անբիծ

դաւանման։ Ի՞նչպէ՛ ի սկզբան անդ կապտեցեալ ողբմելի տխրականութեամբ՛ի փչմանէ բարձրադոյն ընդ հին՝ հայրն իմ սկզբնաստեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղայն գերմամբ՛ի մահ գրաւեցաւ, կապեալ ընդ եղծման ապականութե՛ն անղերծ հանգուցիւ, ՛ի ծառոյն պատճառաւորեալ յանկուճն անյարիր ամենակործան գլորման, հերքեալ՛ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ. իսկ դու, գթած տէր ողորմո՛ւ, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր, և զի էեիյն ակնկալութեամբ չեկաց յոր լինէրն, որով անկարօղանայր իսկապէս տեսանել՛ի լոյն վերին անմատոյց գերակայութե՛ն անսահմանելոյդ, ոչ միջոցիւ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ոսնալոլիրծ մթին արհաւրաց ձեռնկալուն ձիթոյ՝ շարամանութեամբ նիւթոյ պատրուգի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ՛ի լուսոյ մահու տարագրեալ գտաք՝ կանխակորուստ անկումն պարտեաց, ՛ի պատճառ իրին աղգակցաւ պղծոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ ՛ի նոյնն դարձցուք խնկաւորութե՛ն. որպէս և փայտիւն մահու՝ մածմամբ քո ՛ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առաւել մեծի խորհրդոյն միաւորեալ՛ի փայտն կենաց։

Գ. Այլ արդ որպէս ոչ է օր լրմամբ առանց գիշերոյ, և ոչ տնօրինութե՛ն յարկի առանց ձիթոյ սիւտոյից խնդրոյ. քանզի իբր օրինակն հասարակայինոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութե՛ն լուսաւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ հնոցին ընտրութե՛ն անխմանալեաւ զաներեւոյթ հոգիս միութե՛ն՛ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ։ Ո՛ր որպէս յիջումն լուսարանի՝ զբաւաղանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամբ առնուլ սրբութե՛ն, նոյնպէս՛ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով վհոգւոյն զօրութե՛ն սուլիմբ և՛ի նոյն համարիմբ ունել ամենայնիւ աներկմտելի։ Այլ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի զքաւութե՛ն մեզաց ախտացելոցն նախավճռէիր, իսկ

ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատեիր, զոյնպէս եւղս այս փրկութիւնե լուսով կատարեալ՝ հեղեալ ՚ի մեզ օծանեկ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներեւակ ծածկապես մտեալ՝ նոր կենդանածնեկ։

Դ. Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչիդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահրնծայութեն, և դու ՚ի դովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն անուանն կոչդիս ՚ձ, նոյնպէս ՚ի մանկ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ անտեսութենն որ առ մեզ։ Ի եհագոյն մեծութենէ խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութեն այս ձարպ պարարտութենէ երկրի Թանձրութե հոգանիւթ գոյացանութենէ. զի որպէս սոյն մանն ՚ի կենդանւոյն ոչ ՚ի կերակուր հրամայիւր անդ ըստ օրինին, այլ արարչութեդ բոլորովին պտուղ որոշիւր, նոյն նմանութե և աստանօր իբր զզօրութիւն՝ ՚ձն մատչելի յայս աւանդ հաձուե էիդ ՚ձ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարազատ զուգաձանապարհ, արարողիդ պահեալ և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան և ոչ ձենձեր ինչ զուարթութեան օրինակ հոգւոյս իմոյ և կարոյս ընդ անդամութիւս մնոյն ծախի, այլ արքայութեդ վերնում վիճակի տերունական բաժանին ձօնեցեալ ձաշակ՝ այս նիւթ ջահաւորականն միտաբորբոք անաղօտելի։

Ե. Ի՚ էր մատչելի ՚ի նախագահուէ արու անդրանիկ դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակեր. ոչ քահանայութեն ՚ի յանկոխելին տեղի ձեռնարկեր, եթէ ոչ այսու կատարեալ լիներ։ Յակոբ զքարն պատկեր Ի իմն, ՚ի խորհուրդ երկար՝ խոբանին ընտրուե, օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջումն անձառ բարձրելոյդ տեսութե առանձնոյն յարմարութենէ, և զիս ՚ի վեր տանելոյն անդուլ ղեկցութեն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ ՚ի ցոյցս ապառնեացն յիշատակի։ Ի՚հարմնեան քահանայութենն պայծառութեն հրամանաւ մեծիդ ՚ձ օծ-

մամբն Ձոխանայը. որով՝ ի գլխոյ անտի՝ ի մօրուսն զեղեալ գերափառ իւղոյն զարմանազան կենդանագործութեի, ըստ սաղմոսողին, զփառաց նախնեացն առաւելեր զանդրադարձութիւն և զշնորհիդ կենաց սրբութեե ընդ մեզ խառնութե։ Աստուածութիւն ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն ստեղծագործիդ, եթէ ոչ եղջերը իւղոյն օրհնութեե ձեռնադրեալ՝ պսակաւ պճնուե թագին յանուն քո, Քրիստ, գլուխս ամբառնայը։ Եւ զիա՛րդ զնախնին վերհից մոռացայ, զծառայն մեծիդ և զկերպարանն անպարագրելոյդ. ոչ ահա Մելքիսեդեկ յօրինակ Աշմարտիդ աշաւորութե՝ ի ձիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյդ՝ այ զետեղեալ կացին, ի վերնոյ անտի հրեշտակաց՝ ի պտղոյ տեղւոյն իւղեցաւ, ուստի շրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ Ձոխութե՝ ի քէն հանդերձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լրմամբ համայն իսկութե ադամային կենդանադործութեդ։

Զ. Եւ արդ, քանզի քո են չնորհք և քեզ վայելեն գոհաբանութիք, օրհնաբանեալ որդի այ, դու ինքն յարմարեա բարեհնշմար տպաւորութեամբ զաղաչանս իւղաւորականս խնկապատարս զմեաալիրս պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութե. մատո, տէր Քրիստ, վերացս աներևութիւ զայս ձեթ լուսանիւթ, և արկ՝ ի սոյն խարանս խոցոյ մահացուի զկաթուած օրհնուե իւղոյդ փրկութե անապակ գինեաւ սիրոյդ, միութիք արարչական նաև պատսպարեալ պատանօք խնամոց. զի յիշատակարանս թարգմանօրինս բանիս մաղթանաց՝ վայելչական լինի յարմարութիք՝ ի թևս հոգւոյդ զկարգ իւր գտցէ։ Ի վերայ Կաւթի հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութիքն նուիրեցաւ. Աստուած յայր յայր և՝ ի մարգարէս ոմանս անտուստ իսկ գրեցաւ, յորժամ օծումն ժամանեցաւ գագաթան նորին. արքայութիւնն աստրեստանեայց օծմամբն գրաւեալ մատուցաւ՝ ի կցորդուե տանն Իսրայէլի. կայսերս ոմանս նշանաւորս վերկս և երևելիս՝ ի խժականաց բարբարոս ազգաց եաղս այս կեն-

սացնցուղ ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ
՚ի յընտանութիւն հպատակութեանն մեծիդ ՅՈՎ. բանն
որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեանն զօ-
ծեալն ձայն նմին մեծ վարկաւ. ձայն սաղմոսողին
գեր քան զմարգարէութիւն զօծեալն անուն նախա-
յարմարեաց, կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր
աւանդեալ մի՛ մերձենայք և մի՛ մեղանչէք. առ Հե-
զնաս առաքելութեանն ՅՈՎՍԷՓ հրամանատարութեանն,
նշանակ լինի հանելոյ ՚ի պաշտամանէ անտի Յահա-
ղու, զօծելուին ՚ի Վորեբ ազգեաց Յեհուայ և Ի-
զայելի: Յոկ Թափեալ անուն փեսայիդ ՚ի հոգելից
բանից իմաստնոյն վերավկայեալ՝ կանխաւ իսկ գրե-
ցաւ. որպէս զի հոգին, ՅՈՎ յաւէտ պատկեր և նշա-
նակիչ, զ՚ի փոքուս զմեծդ կերպագրութեանն քեզ նկա-
րագրեալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո ընտրիդ:

Է· Յո՞ զի՞ և ես երկարս պատուածօրէնս բացա-
կանագոյնս զծագրականս և առակաւորս շարագրե-
ցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական
բանաստեղծութեամբ. տերդ և կենդանարարդ՝ արա-
րիչդ երկնի և երկրի ՚ի յօծմանէ անտի սկսար քա-
րոզել զաւետարանն արքայութեան, վկայեալ ան-
տուստ ՚ի Յովհաննէ՝ օծեալ և գառն ՅՈՎ բարձող մե-
ղաց աշխարհի: Օ ի թէպէտ ընդ օծմանն օրհնու-
թեան հոգին էր քեզ իսկաբար լրմամբ և ՅՈՎծութեանն
խառնութիւն բովանդակապէս, այլ անունն պաշտի
խորհրդեամբ ընտրհին հրաշափառապէս ազգելոյ ՚ի
սքան. զի զտարկութեանդ ադամեան մարմնոյն մեծանալ
յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես:
Յացեալ զառաջս մարգարէութեանն Յեսայեայ՝ դու
ինքն ՅՈՎութիւնդ մարգացեալ ընթերցար, հաւա-
տարիմ առնել զբան ծառայից քոց, տէր. և իբրև
ծանուցեալ եղեր օծութեն ՚ի կարգ անդ բանին, թէ
հոգի տեն ՚ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա
փակեցեր ՚ի հանդիսատփառն օծելութեանդ զորքանու-
թեանդ երկաքանչիւրոցն յայտ արարեալ խտրոցաւ սահ-
մանի՝ ընդարձակ հեռաւորութեանդ մեծաւ կնքեցեր,
զմերս կաթուածով ինչ ընտրհաղարդեալ, և զքոյդ
իսկութեանդ ընդ հօր և ընդ հոգւոյդ հաւասարութեանդ
թարգմանեալ: Նախածանօթ մերակերպութեանն

պանծալի լինի գովեստիւ՝ օծեալն կոչմամբ ՚ի հրեշտակացդ փառատրողաց արարածոց երկրի ծանուցեալ։ Օ՞ր մարգարէին կանխաւ գուշակեաց զ՚ի Յորդանան, և յընտրեալն լեառն Թաբօրական հայրենի ձայնիդ եկաւորութիւն, թէ որ պատմէ ՚ի մէջ մարդկան զօծեալ իւր. զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ առ ՚ի զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ ՚ած՝ ՚ած քո իւղով ուրախութեամբ։

Ը. Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս. որ է օծեալ անուանդ խոկոյն, որով զփչումն կենդանութեամբ ՚ի դէմս մեր լոյս բարերարութիւդ քո աղբեցեր. խնամատարութիւք ուժեմն երջանկի՝ մարդասիրութեամբ խոստովանելի, ասելով առ ոմն, թէ եդ վկայութիւն առաջի ՚ած օծելոյն. զնոր աւետեացս վկայելով, թէ կոշիկս անդամ ոչ առի յամենայն մնեղեաց։ Երդոյն երդ իւղեփեցական գինի զՔ՚ատուծով ծանուցեալ զնոր հուրդն ՚ի գովեստ հարսին որ եկեղեցւոյս՝ զմուռս առաքինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և ևս զմուռս և կնդրուկ մաքրութիւն վարուց ամենայն փոշեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անդրստին և այսր յառաջաբերեաց։ Վանիկ զկենսատու մահու քո, Քրիստոս երկնի, ՚ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և հինն եւթներորդ ձայն սպանցի օծեալն, և օծեալ առաքինորդ զքեզ յորջորջեաց։ Շրագակիր աշտանակն Յ՞աքարիայ Ի՞գդովայ՝ որ ՚ի Խարեքեայ իւղոյն բարեբաշխ բաժանութիւք ՚ի մատունս եւթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ ՚ի ջահէ անտի զօրութիւք անեկամնաբար վիճակաւորեալ, զի քոյդ լրութիւն ՚ի մէջ փրկութիւն և օծելութիւն գերաբնապէս նախապէտեցեր։ Օ՞ր ըստ օրինին անտուստ գուշակմամբ ՚ի խորանին որ ՚ի տաճարին՝ ամենընդել լինի կրթութիւք սուրբաբար մատուցեալ լինէր, պանք բաղարջին, ծայք և նաշիհք իւղովք խառնեցեալք, և զուարակք եղանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւմամբ յաղագակից Ճարպին ՚ի յարիւն, այսր խորհրդոյ առձեռն

տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ, միա-
ձին ճնունդ օրհնաբանեալ մեծիդ ՚ոյ· միայն դու
օծեալ նորոգ և զարմանալի՝ լինքնութիւք համայն էու-
թիւք իսկապէս լրմամբ ամենայնիւ անպակասելի։

Թ· Այլ զի՞ և ես իցէ բազմապատիկս նշանակել առ-
այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ձաշակել
ղքեզ, քաղցրութի· իմանալ քեզ զայս՝ թէ զի՞նչ իցէ
եւղն, եթէ ոչ զտխրութիւնն ՚ի փայտն պարտեաց սո-
վիմբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործես-
ցես· և զի՞նչ պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն
մահու սուաւ մոռասցուք լցեալ ՚ի ամանէ· և զի՞նչ
օծութիւնն, եթէ ոչ զմխրոյն թշուառ տեսութիւնն ՚ի
ձեռն սորին փոխարկեսցուք ՚ի պայծառութիւն յա-
ւէժ ուրախութիւնէ, անուամբ քո փրկեալ յոգի զո-
րութիւնէ՝ հօր անուանեսցուք· և զի՞նչ արդեօք մար-
գարէին հոգևոր ըղձականութիւնէ ամենատենչ բաղձա-
նացն իցէ իմանալ, որոյ ծերութիւնն առակի ՚ի ձէթ
պարարտութիւնէ, և կամ օծանելն իւղով զգլխոյն
վերամբարձութիւնէ, եթէ ոչ զհինն խարդախուն սգոյն
սաստկութիւնէ ՚ի մահ կործանմանն կենագործեալ դե-
ղովս այս կենաց՝ պատսպարեալ օժանդակեսցես·
և զի՞նչ ձրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն,
եթէ ոչ ՚ի մէջ իմն անյուսութիւնէ մեղայն միգի և
կռապաշտութիւնն խաւարի՝ կերպակցապէս միութիւք
՚ի յիս Աստմանուել· և կամ զի՞նչ մարդարէն ՚ուծա-
բանեալ ՚ի սիոփանս զուարթարարս օրհնութիւնէ՝ նշա-
նակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ, օծեալն իւ-
ղով ՚ի մերոյ պարզելոյ· և կամ իմաստունն ՚ի դի-
մաց հարսինն ասէ օրիորդացն, հաստատեցէք զիս
իւղով և գեղեցկազարդ խնձորով յարկեալ ծած-
կեցէք, և ՚ի պարտէզ իւղենեաց տածեալ գրգե-
ցէք, եթէ ոչ այսր ահա ընտրական նիւթիւ հո-
գւովդ քո լցեալ ՚ի սոյն լոյս տեսցուք զանխմանալիդ
՚ի մեզ բարձրութիւնէ գովեալ։ Այլ արդ քեզ, միայն
խնամակալ, պատճառ բարի բնաւիոյ եղելոյ, ձեռն
համբառնամ տարածմամբ բազկաց, երկիամանցս
գործակցութիւք, սրտիս հեծութիւք, լեզուիս և շրթանցս
ձայնարկութիւք· լուր ողորմութիւք, տէր, պաղատանացս
խնդրուածոց առ քեզ կարդալոյս· շնորհաւորեալ

այսու պարգեւօք՝ դոհաբանութեի՛ք քեզ վերընծայեմ, հզօր ահաւոր բարձրեալ անքնին, անսիակ փափաքմամբ միշտ հաւիրուրեցեալ, սուրբ սուրբ եւ միայն միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւիժ անդադար երգաձայնութի՛ք։ Ընձեռեա առաւել բարերարուի՛ ի սպառ վերկելոյս. տուր յոյս քաղցրուի՛ ուչ մանսին միոյ մատուցման լուսոյ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել քեւ, բարի, զնրբուի՛ ծածուկ խորհրդոյս, գրգռութի՛ խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ Դաւթի, ընկալաք ո՛ծ զողորմութի՛ քո, եւ զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութի՛ք քով յայտնի արարեր։

Ց. Դու արդ մեծութի՛ քեզ, ամենակալ առատաձեռն անսուաղելի, ամենափոյթ առ ի գթութիւն, մշտայօժար ի բժշկութի՛, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս ըզհրաշս անձառս քումդ սքանչելեաց ահաւորութե՛։ Դանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութի՛ք եւ անդնդոց ներքնոց խորութի՛ք ծովուց բազմութի՛ք ուչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն ի մեծ քեզ իւր, ի փոքր գոյս տեսականեցեր զօրութի՛ք սահմանեալ ձշմարտապէս անհրապուրելի. զի մի նորոգ լինի երեւելով յայլ էութենէ՝ առ աչս հարեւանցի երեւականուե ինչ վարկանիցի, վերաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց։ Դանզի որպէս մարմին քեզ հաւատապէս, օրհնաբանեալ որդի ով, իսկութի՛ եւ ուչ օրինակ ի յարդեանցն ցոլենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, եւ կայլակ կողմք զարիւն խաղողոյ, եւ արդանդ կենաց հոգեւոր ծննդեանն զառատութի՛ ջուրց յոլովութե՛, նոյնպէս եւ զհոգի անմահիդ փչման՝ սուաւ եւ ի սոյն արդիւնատրեցեր. երկունք կենաց որոյ կերպարան յառաջ եկելոյն եւ ուչ հեթանոսութի՛ ե փոխարկուե, ոչ ուչ աեառնագրութե՛ խաչական փայտի ինչ երկրորդութի՛, նատելոյս յերկրի խաւարի ըստ նմանութե՛ քո, տէր, ծագեցեր։ Դանզի յայս կերպարան շընորհի զանպակաս լրութե՛ անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի անանկն կարօտասցի եւ մի ընչեղն բարձրամտեսցի, ըստ օդոյ հաւասար

բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրա-
կան վտակաց ղեղման. զի հաւասարապէս բաշխիւր
երկրածնաց մանանային զուգամասնութիւն՝ փոքունցն
առաւել քան մեծամեծացն։

ԺԱ. Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն խորին խոր-
հրդոյ և ի ընտրստ անտուստ հրաշապէս ունի ըզ-
թարգմանութիւն. որպէս զի ոչ երկմիտ լինէ շուրթա-
փութիւք անհաստատապէս զտեղի փոխել, և ոչ նենգա-
զաբար զընակուելի լինքեան լքանել. քանզի ոչ վերջ
նակամնօք աճառոյք հերքի, և ոչ յընդդիմակեցե-
ումեքէ ողողեալ արտաքս ելանէ։ Այսան զի որպէս
պատահումն գունոյ յէութիւն մարմնոյ անփոփոխ
իմն և անհրաժեշտ, որ գոլովին գոյացուցանէ և ոչ
գոլովին ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութիւք
իւղոյս զօրութիւն անդստին ի յիւրոց անտի կերպա-
րան զառեալն ունողի միանական զուգութիւք ընդ-
մէջ իսկ կցորդեցեր, տէր ՅԻՒՍԻ, ընդ երկին գոյի և
զօրինակն լծակցեալով. քանզի զանխմանալին տեսու-
թիւն աչաց և մտաց ըղձից ի դէմն բերեալ կերպա-
ւորեցեր, ի պաղոց երկրի ձնշեալ մգելով զարմա-
նալեօք հրաշագործութիւք մատակարարիլ մեզ պատ-
րաստեցեր։ Այնաւանդ զի ոչ յոլովից խառնից ի
մի եկելոց խմբակցութիւն զանազան ծաղկանց, ըստ
հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլուէ, զայս
եւզ օծութիւն հրամանատրեցեր, այլ իւր զօրինակ
փոխեալ զայն առ այս՝ դու լինքն խառնեցար ի սոյն
մաքրութիւն վերնալոյս ձիթոյ։ Որ թէպէտ անձառ-
են համեղութիւնք քումդ անուշութեան, և ընդ օրի-
նակաց իւրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի և
շուշան հովտաց և նարդոս ընտիր և եղեգնախունկ
խառնեալ հալուեիս, յարմարութիւք հոտոյ քրքմոյ՝
փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ քան
թէ իւղոյ միութիւք պատշաճապէս օրինակեցար փա-
ռաւորեալ անունդ անքննին, որ զամենայն ընդուս, և
յիւրի իմեքէ ամենևին ոչ կարօտանաս։ Այստի ոչ
շփոթելով ի հակառակաց բռնադատութեց բա-
ժանեալ կամաց մեկին առակի, այլ ի սիրոյ հաւա-
նութիւն ածապէս ի մէնջ պարարիս, վասն մեր ըստ
մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակե-

ցեալ. առ որս լոյս բարի և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ ընչման անգթական սառնացրտութեան այս զանգուած նիւթոյ կաթուածոյ ձիւթոյ մաքուր մտաց տեսեալ լիմանի, որով յիրաւի սովաւ 'ի յաճձ է միանալի։ Ընդ Աղջմանի օձելոյ որդեգրեցելոյ այ երգեմ բերանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութիւն, համբուրեալ 'ի յիղձս մտաց զհոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս, և իբր զբանս կենաց յաւիտենական կանաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն և ածաբան աւետարանչին, զհետ քո 'ի հոտ իւղոյ քոյ ընթացցուք լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան զերկինն օդոյս այսորիկ, և օծեալ ըզգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղեց քեզ ուրախութիւն, զուարթապէս և ոչ տխրաբար։

ԺԲ. Այս եւղ խնկելի պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սենեկի, և կամ հերաց վարսից գագաթան նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տերունական կենսատու խաչիւդ ճնադրեսցի։ Այն եւղ զարմանահրաշ օրհնութեան լուսոյ զհրեայն և զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զդուժն դժնեաբար և զարհաւրատեսակ շանագլուխն սոսկավիթխարս, զտէրն աղատ և զստրուկն ծառայածին՝ քրիստոսեան արարեալ, ասնուամբ քո հնձէ, և հոգւոյդ սէր ընծայէ, և հօրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ։ Աղջմորինակ են սովաւ արուեստից տեսմունք յարմարեցեալք նախ նիւթոյն, ապա զօրութեանն։ Վանդի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի։ Վասն սա քո, Քո, որով զհրաշալիսն զարմանացրես. քանզի իբր անգծելի կազմուածք կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութիւք պաշտպանեալ ծածկէ յայլագունակ խրձնի եկամտից. մինչ զի այսու մաքրութիւք Թաթաւեաղն 'ի սմա ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւս այլայ-

լն ։ Կ՚ա զի և Թափանցանց լինն խառնուԹ՚ Հոգեպէս ընդ ԹանձրուԹիւն մերոյս գոյուԹեան մտեալ անցանէ· զի Թէ անէնՀ սաղմոսողին ձիԹոյ առաւկաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, ոչչափ և Հոգիդ սոյն ձարպով լուսոյ զանեղեւոյԹ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ, ազդումն տուեալ ՚ի խորոց անտի հնչման հագագին՝ մինչև ՚ի սպառուած ծայրին եզերաց զբնաւն ընկղմէ զչիշատակ մարմնոյ մահուն արկածից· քանզի կենդանական զօրուԹի՛ քո միշտ ահաւոր, տէր Յ՚Ն՚, ՚ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ ։

ԺԹ· Կ՚այս օծումն բարեեռխիլ և առ բռնամարտիկ մերկամարցանակ ըմբիշս իբր զօրաւոր հնարիւ կերպարան Ճգնաւորական անըմբռնելի ձեռաց ներհակին օրինօք պաշտի, դիւաց և ախտից հզօր ահարկու ։ Կ՚անզի յաջնապաՃոյՃ պՃնուի բանին Կ՚զեկիելի առ իմանալին Փարաւոն, հենգնաւոր առակագրուԹ՚ ողբականօք շարայարմարեալ, յորժամ եղեր, ասէ, և Հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան ։ Որ՚նաբանեալ ահաւորուԹիւն ամենաւլայր ձեռնկալուԹ՚, որ միշտ անՃառ ես բանից և գերազանցեալ քննուԹ՚ես, որ աւետարանաւն կենաց խնկիս յարակայ իբր նորածին օծեալ ՚ի քաղաքի Կ՚աւԹի, և ՚ի քահանայապետին հարցմանէ, դո՛ւ ես օծեալն որդի օրհնելոյն, և յերանաւորն դաւանուԹ՚ Պետրոսի օծեալ միայն որդի ՚այ կենդանւոյ, և յայտագիր հաւատ քննողայն, եԹէ դու ես օծեալն, ասէն, ասա մեզ համարձակ· և ՚ի կանոնականացն քոց հաւատովք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի· և Կ՚երովդէս յառաջ քան զսոյն զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ· և զիա՛րդ դրէն, դու իսկ ասացեր, զօծեալն ՚այ զտէրն Կ՚աւԹի զանսկիզբն որդի՝ ժամանակաւ որդի ։ Կ՚անզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս Թարգմանեցեալ, որ ՚ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուԹ՚ ։

ԺԹ· Կ՚ինքան ունի ահաւորուԹ՚ միանգամայն և սրբուԹիւն իւղաւորական խնկաւորուԹիւն սոսկալի

անուանս օծումէ, մինչ զի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկրաւնոցս ասծ անուանիլ՝ այլ ասծային, նոյնպէս ոչ բերէ մարմին զԽրիստոսդ անուն անձին համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի նախնւոյն մեծուէ մկրտչին՝ ջուրք զհոգին հրաւիրողին. քանզի չեմ ես, ասէ, օծեալն, այլ առաքեալ առաջի նորա: Ովաւ շրջելին, որպէս քանն ազդէ աւետարանչին Մարկոսի, առաքելականացն լծակցուԹիք, իբր ազգակից հարազատ ձեռինդ այ՝ այսու վարեցեալք. քանզի իւղով օծանելին և առանց մարդկային հնարից անուամբ քո բժշկեին: Ա ասն զի որպէս խաւար՝ ի լուսոյ և ցաւ յառողջուԹենէ, դիշեր՝ ի տուընջենէ և մահ՝ ի կենաց, այսպէս և՝ ի սոյն իրէ տիրապարգեւ աւենայն չարին երեւոյԹք մերժին խափանին և բնաւին ամիռափին: Վանզի որպէս ձանձք զազիրք և փոքր զեռունք սարդից և ունկնամոիկ իբր՝ ի դեղոց մահու. յայս նիւԹոյ սպառեալ պակասին, սոյնպէս լրուԹիւ հնորհի օրհնուէ սոյն եւղ զօրացեալ՝ և զայս վանէ և զմուրհակս չարեաց ջրեայ ջրեհ և զվհիւ մահու պատառէ: Ա՛է է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդակուԹեան: Ա՛Թէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկուԹէ մատուցեալ տուաւ. եԹէ անձարակ վիրայն Յակոբայ և Իսրայելի՝ սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափաքեալ ԴաւիԹ՝ իբր ձիԹենի պտղալից՝ ի տանն այ յուսով յարակայի, լքեալ զԹլփատուԹին՝ անդստին զմկրտուԹես հնորհ գուշակէ: Ա՛ւ զի՞ է լինձ զայսմանէ ձառել, և համայնին կարծել հասանել, որ և ոչ վերինքն զօրեն ձեռնարկուԹեամբ լինչ բանիւ զայն խորհուրդ՝ ի մանաւորէ լինչ ձառելով նշանակել, Թողում ասել՝ Թէ յիսկուԹէ:

ԺԵ. Վառք քեզ միշտ և յաւիտեանս, անմահ Թագաւոր, ի յայժմու երգեցեալ օրհնաբանուԹեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս, բարեխնամ գԹած և երկայնամիտ, հարուստ և առատ աւետնայաղԹօղ. անդստին՝ ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև՝ ի լրումն ածեր զիսկուԹէին ձշմարտապէս: Վաս լոյս իսկ բնուԹէ և արեգական մշտապայ-

ծառ, և զաշակերտացն դաս լոյս անուանեցեր, ո-
րով զարարածս ամենայն երկրի ձառագայթիւք եր-
ջանիկ ընդրկի նոցին լցուցեր: Ընկալար զեւղն ա-
նուշութեան յումեմնէ ի յոտս, յօրինակ ընդունե-
լութեանդ մաղթանաց առ քեզ, և ի միւսմէ պռնկէ
ի գլուխ, նշանակ սիրոյ գթութեդ առ մեզ. մշտա-
փափաք բաղձանօք անսահմանելիդ ի սոյն հոտո-
տեալ, մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ օրէնս
յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պա-
տուէրս կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զսա-
կաւաձեռն իւղոյն յարդաւորութեդ, զարմանս հրա-
շից լսողացն առ ապառնեացն յուսադրուել: Դուք
օծութիւն ունիք զսկզբն՝ ասաց երջանիկն առաքելու-
թեդ, մեկնեալ զխորհուրդն որ ի մեզ զեղեալ յա-
ռաւելութէ կենդանարարիդ անպակաս բովանդա-
կութէ: Ուստի յաւէտ լիմն յարմարաւոր և հան-
գունատիպ առ ի մանաւորն նմանութիւն լուսոյդ
և հոգւոյդ սրբ՝ այս կաթուած օրհնուէ ի վերնոյդ
բարեբաստութեդ անսպառաբար սրսկեցեալ ի մեզ,
և ասի լոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց և
արարչութեդ պատկերակից, որով զնաւաւր մեծու-
թէ մեղաց հալածես. իսկ հուր, զի յամենայն տարր
արարածոց հաւասարապէս ունի զուգութէ ըստ էա-
կանին կշիռ բաշխուէ, ծածուկ և յայտնի, լուեալ
և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի ի հակառակէն,
ոչ յինքնասաստ յօժարմունէդ բաղձայ բորբոքիլ:
Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդեգրեալ
ընդ քեզ ի ժառանգութէ հօրդ մատուցես. ողոր-
մութեդ աղգակցաւ նկարեալ ի մեզ անեղծանելի՝
ի հանդերձեալ փառն փայլեսցուք. դարձեալ և
հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէուէն՝ որ ի բան-
սարկուէն ներգործուէ, նորոգ փոփոխմամբ հոգւով
և ճշմարտութէ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք,
բևեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք, ամենա-
պարգև:

ԺԲ. Ահա արդարև յաւէտ իսկապէս եւղս այս
լուսապատառ խնկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսու-
թէ: Ո՞ան որոյ և Պաւղոս իսկ պատշաճ վարկաւ
ի ձառ գոհաբանուէն՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ

ձեւք հանդերձ՝ ի Քո՝ ած է, որ և կինքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ հոգւոյն ի սիրտս մեր. և դարձեալ, մի, ասէ, տրտմեցուցանէք զՀոգին Սո, որով կինքեցարուք յաւուրն փրկութեան։ Պատկառեսցի և անվանելի օծութեանս յորջորջուի՝ իբր ի նոր ումս յաւէտ քան ի հնումն. քանզի քանն դաւթեան սաղմոսին զտիրական տնօրինականացդ սկզբնաւոր կրեցդ խորհուրդ՝ Աշմարտաբար վերաստահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց վասն Սո և վասն օծելոյ նորա։ Արդարեւ մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս հրեախութեան չար մտերմութեանն՝ որ ի տերդ յանդգնութեան, ո՞վ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն Սո և քաւեսցի. քանզի թէ և յաղագսյոյն սպանաւ Պաւուղ, այլ ո՛չ ի սպառ մերժեցան յամօթ և ի նախատինս աղգաց օտարաց, մինչև արեանդ Սո հաղորդեալ գտան։ Պրաւական մեծ յիշատակի առագայիցն ժառանգութեան՝ աղօթանուէր աղերսարկութեամբ ասել սաղմոսին, վասն Պաւթի սիրելոյ քոյ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ. և դարձեալ, նայեա և տես յերեսս օծելոյ քոյ, և արա ողորմութիւն ընդ օծելոյ քոյ։

Ա՜Ի. Զեռին քո, Քո, երկրպագեալ պարգեւատրութեամբ այս հիւթ լուսակիր. քանզի ո՛չ այլ մեծ բարձրութեամբ յարքայութենէն Ձոխութեամբ ասէ մարգարէն ի դիմաց քո, տէր, քան թէ գտի զՊաւթի ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Աստի կիրթ լինի յիշատակաւ զքոյդ Համբուրեալ լուսոյ օծութեամբ, տէր Քո Քո, ճանիցուք զքեզ անփոփոխ միանձնաւորութեամբ, թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն Թագաւոր Թագաւորութեանց, և Աշմարիտ օծեալ իւղելոյ, փառաբանեալ երկրպագութեամբ երեկ և այսօր։ Քանզի զոր օրինակ պատրոյգ Թացեալ՝ Քարպուտ՝ ո՛չ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս և այս օծութեամբ լուսոյ առ՝ ի մեզ հեղեալ՝ ի հանդերձեալսն ջահաւորի։ Այս է կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, ի նախնեացն և այսր բերեալ բարենշան ինն յարմարութեամբ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ։

ԺԲ· Ընդ այսոցիկ պատճառ վերագոյն մասանց կեցուցչաց ՝ծածկանաց արարչութեանդ հարազատաց, առանց որոյ ո՛չ է գրիչքՙեան, և ո՛չ նաղովբեցի անուանիլ, և ո՛չ յիշատակիլ յորդիս Յուդայի, և կամ խրախոյս բառնալ յանուն ՙայ Յակոբայ, այս հիւթականութեի օրհնութեՙ ձիթոյս, յորում ՙբ Ընդորդուիդ խառնեցեալ միաւորի, Ճառագայթ շնորհաց, շուք մերոց դիմաց, նկարագրութիւն երեսաց, բարեձևութեի պատահմանց, լուսաւորութեի աչաց, ՙՙնագրութիւն բերաց, վայելչութիւն այտից, զարդ կերպարանաց, պահպանարան շրթանց, հանդերձիչ կրծոնից, յարմարիչ վարուց, շաղկապ հաւաքմանց, զօրութիւն անձանց, ուժգնութիւն դիմեցմանց, խափանիչ յուռթից, քակտիչ հմայեկաց, նահանջիչ ձեռնածուաց, խայտառակիչ կախարդաց, գտիչ աղանդից, բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց, կատարիչ կնքեցելոց, տենչանք երախայից, անգնին արտաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձարկու անհաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, յարգանք յեռնոց, փառք ստրկաց, պՙնումն կանանց, աՙեցումն տղայոց, հրՙուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, զգուշութեՙ մաքրոց, պսակ թագաւորաց, Ճոխութեՙ արքայից, յաղաջադրութիւն կայսերաց: Ո՞րանդր զոր օրինակ ամեն ինչ կնքեալ՝ նշանակիչ լիմն է ներքնայնոցն մեծագնութեան, նոյն պես բարձրութեՙ շնորհին ՙի մեզ սուաբ ծածկեցեալ յանուն քո, ՙՙծ տէր ՙՙ Ո՞ր, վայելչական լիմն տեսակաբ ծանուցեալ նշանակի: Ոսկ անունն իսկոյն անդամին ՙի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ Հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի սկսեալ, ՙի դէմս ածելով զերին կերպարան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր:

Սակս սրբալոյս ևղջն Միւռոնի:

ԺԹ· Ո՞րանդր միւռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաբ լոյս աչաց գրեթէ զսոյն աղերսեալ խնդրեր, ըստ քերթուԼեանն բառի որ ըստ խտրութեանն Հոմերոսի, Թարգմանեալ իմա-

նի, ինձ մայր. այսինքն է՝ առ ի լինքն ձգօղ զմերս բնութիւն զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականուէ առ աւազանին լուսաւորուն. և իբրև զդեղ մածուցիչ կաթին՝ ի նոյն լինքն յեղանակել զցնդեալս իմ վայրագութիւն, և զաղբերց հեղեղեալ միտահոսութիւն: Իսկ մառնամուտ՝ որ և այս միւռոն, ըստ այլում բառի ցուցանի. այս լինքն է՝ ալթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն դիմառուութիւնէ չէ օտարացեալ. քանզի արդարև յիրէ անտի անունն նշանակի. վասն զի անքնին է այս խոտութիւն յաւէտ քան զամենայն սրբութիւն սրց: Օ՛ի ո՛չ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ լինչ լուանայ, և կամ հայի բնութիւք զսիրտն հաստատէ, այլ նորոգ լինի յարմարութիւք՝ ի մտաւնս աղդողականացն տնօրինակս ձեռնադրի. սակայն անհասութիւքն վերնականաւ և զանունն ունի անքնին: Զանգի որպէս ձէթ իսկ և իսկ՝ ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութիւքն՝ յեղանակաւ լինի անքաւութիւք՝ ի խաւար անգնին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ՝ ի ձեռնարկութեց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորուման լուսոյ՝ ի լեզուաց ոմանց Ձարտարաց՝ ի ձահ ձեռնութեց դրականապէս անունադրութիւք մեալ առձայնի, վասն ո՛չ զօրելոյ երկրածին բնաւէ զնոյն գիտելոյ: Իսկ զերկաքանչիւրս ծածկականացն անդամոցն լինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի՝ ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ եւղս այս նուիրեալ ամենաբուրեան աղնիւ կնդրկաւ. վասն զի ծածկեալ մեր հաւր ծախիչ է ըստ Ովսէի, և դարձեալ լոյս է ըստ Յովհաննու. ուստի և Լուսայի Ձշմարտապէս զսոյն ակնարկէ, եղևոյ, ասէ, լոյս Իսրայելի՝ ի հաւր:

Ի. Դարձեալ այլ լինի կերպացուցանելով զբանս առ ի նոյն պատկեր յայտնութիւն իրի. վասն զի ո՛չ մոռանամ զնոյն նորկուութիւն՝ որ ի գիտութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել. քանզի Ա՛եռայ, որ է դառնուէն, այս լինքն՝ նշանակ լինի յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որ և միւռոն ստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելոյնէ

աղգականութեէ ։ Վանդի այսու օծմամբ հոգևորա-
կանաւ խզեալ կամ հատեալ ՚ի մտութասեր մահա-
կերոյարան տաղտկալազարական հեշտութենէ հակա-
ռակողին, որ օդախնամ մեղկութէ զբնարս ձայնա-
տրական և կամ զարկուած վերածածկուէ մինաբ
հետ ուժգնաբարբառ խրոխտահնչական կազմուա-
ծոյ Թմբկիս գործականուէ ջրացիր իմն գինքուէ ան-
վայելուչ Թուլադաչնակեալ՝ ՚ի ստորև կորստեան
քարշէ գօրինակ մերս գոյուէ, կապիմք յուսոյ վերըս-
տին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի քո ։ Վա՛,
միրտեալք ՚ի մահ կենդանւոյդ՝ անվախձան կենացդ
սովաւ հաղորդիմք ։ ՚ի քէզ իսկ ա՛ծ համայնիւ խրա-
խուսեալ ՚ի սպառ ամենևին անհատուածելի ։

ԻԱ· Վ՚այս եւղ զդրօշեալն քառակուսեան յա-
նուն քո ։ Ո՛ւ, նշանի բարձրելոյդ հաւատոյ հաստե·
չնորհ ընձեռեալ զուգափառ և նմանատիպ արեան
կեցուցչիդ նոյն անվանելի փառաւք պսակեալ մեծա-
յուցանէ ։ Վայս անուանի իւղոյ օրհնութեան, ըստ
մերգաբերէին կանխաձայնութէ, զ՚ի հաստարակաց կազ-
մեցեալ բուսոց անտառաց զօրապէս ուղղեալ՝ ՚ի խա-
կութէ չարին արկածից և օտար կարծեաց ՚ի ստեղ-
ծօղդ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հաստն
ներգործէ ։ Օ՚յ և որ ՚ի մեզ մտիցն պատուհանաց
մշտաբացիկ Թափանցանցութիւնք՝ յանուն մեծու-
թէ ահաւորիդ զօրուէ ՚ի խոհական իմն համեստուէ
քեւ ՚ինդագրեցեալ առ ՚ի յերդնակերտ օթեվան հոգ-
ւոյդ՝ անազդելի պատրանաց չարին խաւարահոգմ
խարդախողին, այսու լուսով զպակեալ ամիսփիմք ՚ի
նուագ գոհութէ երեկորեան պաշտամանն ընդ երկ-
նայնոցն ՚ի համբարաց՝ առ օրինակ վառման չնորհիդ
որ ՚ի մեզ · ՚ի սոյն յիշատակ փրկութեան բարեացն
սովաւ տնկեցեալ ծագի, և ծաղկաւէտ եղեալ
պտղածնի, ՚ի սպաս ընթերեայն պատրաստութեան
յետնում գիշերի ՚ի մեծիդ գալստեան · ահա զայս
լոյս ձրագի համարեալ ՚ի կիր արկանեմք ։

ԻԲ· Վարձեալ ըստ գծագրացն գումարութեան
քան և չորիցն շարագրութէ՝ որ յալփափետաց ան-
ատ վերաձուի մինչև ՚ի քանեերորդ երկրորդն կար-
գի, յորում զայս խորհուրդ խորութեան անտուստ

թարգմանեալ՝ ձաշակ հեշտալի որով հաղորդին ջամբելով պատրաստեմք ամենակազմ յարմարութիւն. քանզի յուխտերորդէ անտի գրոյ ի յորեքհարիւրն փոխեբերեալ՝ ստուգաբանօրէն քննութիւն ընդ ձիւթոյն անուան նիւթ ձշմարտագրի. որ և կերպարան արդեան խմորոյ յինքն բերողի զգանգուածն զօրեղապէս. որ ոչ սակաւն ի յոլովէն պարագայի, քանզի ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամենայն առ ինքն վերաբերեալ ձեռնուն առնէ։

ԻԳ. Այոյն եւղ հեզութեան միշտ համբարձման և խոնարհութիւն օրինակ և նմանուի, առ ոմն կակուղ պատառաւ մատուցեալ ջամբի, հարթակրկիռ և բազբեյարմար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծականաց հոսանուտ և ստորածորելի նիւթիւ գերապառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի և յաման ինչ մերձոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձևոյ և կամ ջրոյ թացութիւն մեղկ, այլ՝ի սահման պատշաձին պահէ։ Այսպես ընկալեալ զքոյոցդ բարեաց անհատասար առաւելութիւն որդի՝ այ կենդանոյ, զորքանուէր այս օծելութիւն՝ի ձակատ դիմացս արեամբ քո գրեմք, և՝ի բնութիւն ընչոյս հոգւով քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաձաձանչ ծայրարձակութեամբ՝ի տարածումն յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութե՝ պտուղ իւղոյ ընծայեալ զոյս՝ի փառս ապառնեացն հանդերձելոցն։ Այս ձարպ հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ի դէմս երեսաց իմոց պատկերի՝ քումդ նշանաւ ջահաւորեսցի։

ԻԴ. Այս քանզի իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ զօրութի արագ սլացմամբ՝ի թևս թեթևս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետևման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ՝ի սպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութիւն, ոչ սահմանեցաւ ձևակերպութիւն, ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ ՝ածեան խաչիդ նշանի հաւասարութի արեան կեցուցչիդ հոգիապէս գերազան-

ցեցաւ։ Եւ արդ օրհնեա զմեզ, տէր, սովաւ և ի սոյն. եւս և անուանդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր, ի գովեստ փառաց անձառիդ մաքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքնին, անապատում, բարձրեալ, ողորմած, վերերգեալ, Աշմարիտ, բարերար և՝ զի, արա սովաւ փրկութեի, տուր և քաւութեի, պարգևեա բժշկութեիւն, հանդերձաւորեա շնորհ, առատաձեռնեա ե-քանութեի։ Յօժումն այս ձիթոյ երկնանձրև լուսոյ անարատ գտայց. յիւղեալս այս թեզան բանաւորականն մի մտցէ և մի գրաւեսցէ ախրականութիւն աղտոյ մեղանաց՝ շաղախել երբեք զոգւոյս կերպարան։ Աղիցի սոյն ինքն որոյ մատչին օծանիլ սովաւ հարմնապաճոյճ պանծանօք պճնել գեղայօրէն զի վայելչութեի երջանկապէս յոգի զարդարեալ։ Աղի ցի հուրս այս լուսափառ և ճաճանչի՝ մերձեցելոցն ի սոյն ընտրութիւն մուխ կրկնեռաց և բարեփափաք ջերմութեի այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութեամբ՝ ի կարծրականումդ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց ի քեզ հաստատեալ աներկմտելի։ Լոյծ նշանակ վերնամրցանակ այսր պարգևի սովաւ վառելոցն, ոչ ողողիլ ջուրբ, ոչ այրիլ հուրբ, ոչ ցրտանալ՝ ի սառնութեի, ոչ փնասակար հողմով շիջանիլ, ոչ աղտեղիլ յուրուական ինչ պղծութեի, ոչ զպահեալսն՝ չարին մատնել, և ոչ՝ ի տորև ելիցն զմերս գանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատեպար ինալ՝ ի թևոց քոց օգնականութեի, և ոչ զեացեալն ի մեզ օծութիւն անմաքրապէս՝ ի քաց մերկանալ։ Այլ եղիցուք քեւ՝ ի սոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ ազատացեալ պսակեալ և թագաւորեալ։ Եւ քեզ միայնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութիւնք գովեստից, բարեբաստուիք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց, լոյս հօր և հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ա՜մէն իմ ձեռնարկութիւն՝ ի սրբութիւն, և այս արձանագրութիւն՝ ի սրբութենէն սրբութիւն։

Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժուէ, որ ըստ լրասպատարն նշուլագեղն արփիաձաձանչ լուսակիրն օրակշիռն մլտափարատն ակնապաշար ականն արևու՝ ստեղծականն արուսեակի, որ համբարե հոլովէ կուտէ ամաց յոլովուածն՝ ի չափս դարուց ընչասպառ և կենդանանորոգ առուղեկան յաւիտենից, ի յաւարտումն կատարման լիներեակ յոբելինին, ի սկիզբն պսակելոյ մաի տասնեկին յաբեթեական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեան ի կայս և ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝ յաղթօզ և մեծ կայսերն Հռոմոյ Ղասլի, յորժամ ընդարձակ և մակագաւիթ կանոնաւ սփիւռ տարածէր՝ լիասահման և անխտրոց՝ ի ստուարակարկառ կոթողս կարծր արձանաց՝ ի ձգումն ձեռին և յանխղելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ ի նոյն վերասլացեալ ի յաչ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ քաժինս մասանց վիճակաց խմբից աշխարհաց ի ծոց իւր, արդ ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եղեբեալ ընդոստնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարգեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութե այսմ սուիերի արգասաւորի, ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց, գործակցութե եղբօր իմոյ ընտրելոյ Յովաննէս կոչեցելոյ՝ Կաբեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իբրև զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք։

Արդ հայցեմք ի ձաշակողացդ յայսմ սեղանոյ յոբնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս և ի պատկանաւորս խընդրուածս, սեռն սիրով ի միաս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ ի մատեանս կենայ վերին դպրուեն։

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑԻ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՃԱՒԻՔ, ԳԱՆՁԻՔ ԵՒ ՏԱՂԻՔ.

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑՒ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

Յիշատակագրութիւն պատմութեան ամենազօր Նշանի ստուածեան խաչին, որ ի վերուստ ամենահայեաց նախատեսն ակնարկութեամբ ի տոքին կոչմանց կայից աշխարհի ազգացն Յունաց բերեալ հանգուցաւ ի սահմանս վայրից դաւառին Մոկաց, ի վիճակաւ ընակութեան ուխտին սրբութեան, որ կոչի Ապարանք,

Ա. Բնդ աւուրս ժամանակաց բազմալրդով սահմանութեանց, որ ի կայս և ի կոյս կոչմանցն Յունաց հարազատութեամբ արեան զարմին Կոստայ, և որ դւոցն մնիցն արևու, որ յաւարտումն Ներսիսի և ի ծագ գլխաւորութեան մասին Ասիայ, յարեալ և յարմարեալ ի հիւսիսոյ Լիբիայ, խառն և խիտ ընդ ծիրանածաւալ ծովային ծոցոյն ասպարէս. ունելով զդարձ գիտելոց գիմացն ի Լեւմանն, որ ըստ ումանց լեզուաց միջօրեայ կարդացեալ. որպէս ըստ եբրայական՝ հարաւ համբաւեալ. որ այժմ կոչի Ռուբհալք, իբր թէ հալք և մարդիկք ըստ մերս դիտմանց՝ բազում գոյութեց պատուական նիւթոց: ի սոյն երկաքանչիւր բանականաբոյս բազմածին լերանց հզօրաց և բարձրագունից՝ խիստ և հատու հակառակութեց, որք կառուցան կազմեցան կարգեցան կանգնեցան կացին՝ ի կիսոց կայից խարխաց բարձից տանողացն ոտից, իբր նախ քան զսոյն՝ Աէիր և Հագար, ընդդիմահարք միմեանց և ներհակակիրք: Որք կուռ և կարծրաճաճկոյթ վառելովք կառօք, լեգէոնախուռմբ կառաւօք, ձարտարաճիգ ամրոստեան մատանցն զինուք, մի ընդ միոյ մարտուցեալ ի հարուստ աւուրս և յերկայն ամանակս. մինչև իսկապէս սաստկութեբ հերքեաց ըստ Դանիէլի նախաձն ծովային զհոյն ցա-

մաքայիին, զարևմտայիին զայն՝ արևելայիինն. որպէս երբեմն կամբիւսեանն Կիւրոս զբաբելացին։

Ը. Այլ ամբարձան բարձրացան ՚ի պատիւ փառաց Ձոխութեանն կայսերական ոսկեփայլ գահոյիցպձնուելոյ, և վայելչաբար բազմեցան և հանդարտութիւն հանգուցեալ նստան. շառաւիղս ամենավստահս ՚ի խոնարհ առաքեալ՝ ոստքն սքանչելուղեշ բարուձակին բարձրութեանն, տիրական և արքայական հաստատմամբ անկոյն, եղբարքն երկոքին հարազատք միաշաւիղք համակցորդք և զուգածիրանիք՝ Վասիլ և Կոստանդին։ Վանդի մարտուցեալքն ընդ ՁՁաշէն ամուրս նոցա՝ ընկլան կորացան և ՚ի սպառ սուզան մերձ առ գարշապարս ընթացից ոտից Հզօրացդ, և ՚ի սպասաւորութեանն հպատակութեանն նոցա պատրաստեալ գտան. որք երբեմն անձանձ նոցա յուսային տիրել։ Այլ եղեն վայրք բնակութեանն առելեաց նոցին անապատ յետին. և կուրացան շաւիղք նոցա, իբրև ընդդիմադաց կամաց գԹութեանն խնամոյ բարձրութեան աջոյն ՁՁ։

Գ. Կա ղի և յիշատակս քարոզելոս՝ բազմադիմակս և յոքնապիսիս՝ անեղծականս և անստուերագիծս ՚ի դէմս երեսաց պատկերաց անզգայականաց վիմաց մատուցին։ Օ ի իբր ՚ի բարբառ բերանոյ բանից՝ անդադարձ ձայնիւ և անդուլ գոչմամբ միանչենաւորապէս հնչեալ պատմեսցի տիեզերալուր համբաւ գովելի գործոցն նոցա։ Յորոց մեքենայից ՁՁածատուր հանձարոյ խորին խորհրդոյ իմաստիցն նոցա՝ բնական բարոյից ընտանի սովորութիւնք այլ ընդ այլոյ յեղանակեցան։ Վանդի վտակք լայնակայլակք ջրականաց գետոց յորդաբուղս ուղիւք՝ իբր երասանաւ փոկոյ նահանջեալ ընչականապէս՝ ընկերկեալ յետին կացուցան։ Այլ որպէս զերիվարս վարժողական կրթականութեանն դաստիարակեալք՝ յոր ընթացս և միտք կառավարին կամիցին, նմանաբար և նոքին լքին զՁանապարհս հետոյ խաղացման իւրեանց. և գնացին ըստ մարգարէութեանն երջանկին Դաւթի գետք ընդ անջրդիս։ Այլ կարծրակերտ կարկառք պնդակցորդք քարապատուարքը վիմահոլովք՝ մահարձանօք պարսպաց՝ ուժգին շարժութեամբ ՚ի

սպառ սասանեալ՝ եղեն ի հարթ Ճանապարհս։ Այլ
տիրեաց բազկի նոցա արիութիւն՝ լայնութիւն տարած-
մանն մեծութեան երկրի. որպէս արարիչն աշխարհի՝
երկնի և երկրի։

Դ. Այս և ահագնութիւնք աշխարհապարուրնակ
երկրապարփակ տիեզերապատ պատուհասին Պխի-
դոնի, որպէս Սիդոնին Սիոնի՝ ի սպաս երևելի քրով
բեանկար և սրբագործմամբ ամենայարմար նոՃեայօ-
Ճառ, աքանչելի սիրալի և սօսասարան սրահի ի-
մաստունն Սաղովմոնի, իբրև զզոյգս ձիոց լծելոց
հանդարտական հպատակութեամբ զնկանունս մա-
սանց մարմնոց անդամոց իւրեանց մատուցին յընդ-
ունակութիւն հանգստեան իրանաց նոցին։ Այս հետս
շաւղաց երթևեկութեց փայտակերտ լաստաց՝ ան-
խարիսխ յարկաց և անշուշտ կառաց՝ գերագոյն դի-
մաց՝ երկնագոյն դաշտաց՝ լուծական լերանց՝ ան-
կայուն յատակաց՝ ի կոյտս կոհակաց՝ կապոյտ կու-
տակաց, իբր ի Թուիչս օդոց ի Թևս Թեթևս և յա-
րագընթացս ամպաչուս Թռչնոց երկթևեան կենդան-
ւոյ՝ զամենեքումբք անցեալ տիրեցին։ Այս ևս ի
քիլս ձեռին և ի քայլս ոտին՝ Թեպետ և ոչ զբնա-
ւին տարերս, այլ զբազում տեղիս չափեցին. և ի
կշիռս բանից իմաստից խօսից գլոգունս քանակե-
ցին։ Այս միանգամայն ասել, երկնօրէնն լայնութիւն՝
ամենահաս Թևոցն ձգմամբ՝ զմիջոց բացութեան
ընդարձակատարը յարկի բնաւին աշխարհի բազմ
ունակ ծոցոյ անթիւ ամբարոյ, իբր զմի հօտ ի մի
ւում խմբի, և զմի սիւնհոդոս ի մի եկեղեցի, և
զմի հարսն ի միում առագաստի, և զմի սիրելի ի
միում սենեկի, և զմի ամուսին ի միում տաղաւա-
րի, և զմի ընդակից ի միում վերարկուի, և զմի զու-
գակից ի միում խորանի խորհրդարանի, ի սեր փա-
փագման աենչանաց աչաց, ի գաւթի կամաց անձ-
կութեաց սրտի, կամ ի սահման միջոցի անդաստանի
գործոյ գրկի, երկուց միջնորդաց՝ համալծակցաց
բարի գործակցաց՝ բերողաց բազկաց դիւրաբար
բարձին։

Ե. Այդ այսքանեօք և այսպիսեօք բարեպատեհ
պատահմամբ ածային համբաւով հզօրապես արիու-

թէ հաւասարաբար հարթեցին տապալեցին ընկրկեցին ընդոտնեցին և ՚ի կոր կործանեցին զլեռնակարկառ մերձս ՚ի հարաւային բռնութէ որդւոցն Հադարու։ Եւ հաստահարիսխ հիմամբ կառուցին պատրաստեցին յօրինեցին յարմարեցին յարդարեցին գեղագրեցին ՚ի զարդս պայծառս և երերելիս զբրիստոնէից եկեղեցի։ Եւ ձգեցին ձգտեցին զդաստակս ձեռացն աշխարհակալաց ինքնիշխան մատանցն ՚ի տիեզերս եզերաց երկրի և ծագաց նորա. և մանր բախտդ շօշափմամբ աջոյ՝ զեղջեւրս արքայից և կայսերաց մեծաց՝ աւազակոյտ աղանց տոհմին Արշակայ և խմբից Հազրաց՝ քաջայ Ն՚ենաց և Հայկականաց՝ արիապես և յաղթողաբար ըմբռնեալ կալան ըստ Ա՚մբակումայ և Ո՚ձաբրիայ կանուխ պատգամագրաց։

Զ. Եւս և հիացուցանօղ համբաւ տերութեան վեհիցն հարազատաց երկոցունցն՝ մարմնացեալ մատուցեալ ՚ի կերպ պատկերի դիմաց քարտենի սրխտակերանգ ըղձալին դաշտի, հասին ՚ի խուժս և ՚ի սկիւթացիս։ Եւ քառաբանակեան շրջանակութէ շուտաժիր շտապով յընթացս թևոց հողմավար ամպոց՝ երագեցին և յառաջեցին. մինչև դրաւեցին պատանդեցին և ուռկանեցին ՚ի մի ծածկութիւն պաշարման վարմի կայտառունակ ցանցի՝ զդիրս ցընդման բաժանման երկրի որդւոց աշխարհի։ Եւ փորագրեցին՝ գեղերեսեցին՝ձեռնաձուլեցին տապալատաշ սրագործ անդրագիր արձան պատմաբանական և անջնջական յիշատակարան ՚ի փուխրագոյն քարանց այլայլականաց գեղաղարդ և գեղեցկագիւտ դունոց գոյութէ։ Եւ միահաղոյն զոլորտս ամենից բոլորից լռութէ՝ ՚ի պատուար ամուր և ՚ի ցանգ հրեղէն և յաշտարակ հզօր ապաստանեցին, և բարձրագոյն քերս բիւրուց բարեաց հեռաւոր երկրիս պատրաստեցին։

Եւ զհաղաղութէն հաստատուութէ յամենեսեան աւետարանեցին. և ձիրս ընծայից պայծառ պարգեւաց աղքանաշէան զարմից բաշխեցին։ Եւ զհրաշալնորհ զարմանազան զերջանկացն հանդիսարան՝ զմեծանունն վկայարան սրբասնունդ և երանուհի սիկինոյն

Սոփիայ՝ ևս քան զևս դեղեցկապանծ նոր պայծառու-
թիւ և ամրական դրուագիւ նորոգապէս վայելչացու-
ցին. և զսայթաքեալն ի տատանմանէ դողմանն շար-
ժուածն վերին բարկութենն՝ պատկանապէս պատսպա-
րեցին. և անստուեր և անապական և անյաղթական
զՀնչմարտութեանն բան՝ ամենայն աղգաց ծանուցին:
Այլ քանզի բանականապէս ողբայ պատմութիւնս
զլաւան ի վատթար կրօնս կորստական կամաց մոլո-
րուեն Արեդորի և Նիոդորի յոյժ հակամիտեալ,
համառօտեցից աստանօր զբանս իբր անվայելուչ ի
շաւիղս երկուց ընթացից՝ գովեստից և պարսաւա-
նաց միատեսակ դիմօք հետևիլ:

Ե. Ի ժամանակս և ի դարս աւուրց տիեզերա-
կալութենէ և արքայութենէ սոցա երկոցունց՝ Վասլի և
Կոստանդեայ, որք ի մի նկատումն կամաց խորհրդոյ
երկեակ մարմնով և միով սրտիւ կենցաղավարեցան.
և որպէս զէութիւն երկուց տարաղուց անձին և
մարմնոյ ի մի կերպարան շարունակեցան. և զի-
մաստնականն նախասաց բան յանձինս գծագրեցին,
եղբայրք յեղբօրէ օգնեալ իբրև զքաղաք ամուր ան-
կործան. և Հնչմարտաբար միութեամբ առանց այլայլ-
մանն կացին անբաժին. և զարարչականն թելադրու-
թիւն երկիւղագին սրտիւ պահեցին, այնինայն թա-
գաւորութիւն յանձն հատուածեալ՝ արմատովք իւ-
րովք խլեսցի: Այլ թէպէտ և բազում սրտից տա-
րակուսելոց՝ երկայնմտութենէ հետս հորդեցին, յա-
ւէտ առաւել հիւսիսայնոցս արևելականաց տանս
Գորգոմայ աղբերս ընորհաց կենաց անձրևաց ի
գթութենէ իւրեանց ցօղեցին:

Զ. Վանզի արք ոմանք երևելիք ի տոհմային
պայազատութենէ, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցա-
զանց, ի տանէ պետաց, ի զնդէ գովելեաց, ի դա-
սակարգէ քաջաց, ի շառաւիղէ հարազատութեան
արեանն Ելքիսեդեկի, որոյ նախանձկարն խորհուրդ
տպաւորեցաւ յընտրեալն ի Վանանէ և ի Միդոնէ,
այսպէս սոքա ըստ ամենայն մասանց պատուելիք.
իսկ ըստ քրիստոսասանդն գաւանութենէ՝ անսմանք և
անհաւասարք: Զորոց մին ընտրեալ յայր և հաւատա-
րիմ ծառայ Ձէ, և կամակատար սրտի քարձրելոյն,

որոյ անունն Ձանաչիւր Դաւիթ, Հանգուցեալից առաջնոյն՝ անուամբ և իրօք։ Այս ի ձեռն ձեռին մեծուԹեան ՅաճուԹենն, նախանձկար հրաւիրանօք, ըստ յառաջ գուշակելոյ հոգւոյն Ա՛ի, առ ի բարեպաշտ և ի պարկեշտակրօն ծնողացն իւրոց խրատեալ և դաստիարակեալ, լցեալ լինացեալ և ուղերձեալ, և իբր զեփրեմեան լերին հոգիբնակալ հզօր դիտապետն՝ զերկրորդ սկիզբն երջանկաց և զառաջինն կաճառից նահապետաց՝ զմարգարէածինն տեսանօղ՝ հաձոյ գըտեալ մարդկան և Ա՛յ վարուք մաքրուԹ։ Մինչև ընծայեալ մատուցաւ առաքելական մասին կոչդուԹե, վիճակին այցելուԹե ՅածախնամՀ տնտեսուԹենն, երկնաձիր և Յածատուր փառացն ժառանգուԹեան, Ըր և երանելի ուխտին պայծառուԹե, զգեստաւորեալ վայելչուԹե՛ի պարկեշտ պատիւ եպիսկոպոսուԹե։ Այլ յաւուրս ոչ սակաւս այսքանեօք բիւրուք բարուԹե բազմայեալ բերկրեալ և բարգեալ ՛ի ծագ աւարտմանն լրուԹե հասակի իւրոյն կենաց, իբրև զցօրեան հասեալ ՛ի ժամանակս հնձոյ արմտեաց հաւաքման արդեանց համբարոց, հանգեաւ՛ի Ա՛ՀՀ։ Օ որոյ երջանկի և առաքինւոյ զմաքուր ոսկերսըն, ըղձական և հրեշտակական բազմապատիկ նուագերգուԹեամբ ամփոփեալ հաւաքեցին ՛ի քարապատուար շիրիմ անձկուԹեան յարկի, կարծրաձեղուն խորանի, նսեմասուեր մԲուԹե հողախշտի հանգըստի։ Ա՛յ ձեռն որոյ երկրապատեան և գետնաԾածկոյԹ վերարկուի՝ հնորհս բժշկուԹեան հրաշակերտս և հուչակելիս ընդ բազում տեղիս պարգևեալ տարաձեցաւ։

Թ. Ա՛յդ զկնի տիրահրաւէր հանգստեան նորա արքանեալ ոմն պատանի՝ որդի դստեր համածին եղբօր նորա, ըստ հաւաստի ազգաբանուԹե քաղցրածաղիկ ծառոյն բարեփիպ պտուղ, ՛ի նմին խակ յերանելոյ ուսեալ, և հրեշտակահանգէտ կարգօք հրահանգեալ, և ՛ի ձեռն ՅածաՀերձ ձեռին նորա ձեռնադրեալ ՛ի քահանայուԹե, և վանականաց ՛ի վերակացուԹե։ Որ նկարագրեաց իբր զտարացոյց գեղոյ պատկերի ձևոյ տեսակի՝ զնմանուԹե նորին ՛ի յանձին գեղեցկապէս հետևեալ նախնեացն։ Խակ

՚ի դատումն ընտրութեանէ վարժից՝ առաքելագիտ և մարգարէածանօթ և աւետարանաժառանգն գիտութեանց և այլոց բազմաց սոփեստից, վայելչապէս համբերութիւ պատահեալ։

Ժ. Յաւուրն՚ի սոյն ամանակի՝ եղբայրն մեր սուրբ երջանկի և բարեպաշտուհոյ, ըստ պատահման իրիք հանդիպմանն՝ խոյս տուեալ և թիկունս փոխանակ դիմաց դարձուցեալ, թողեալ լքեալ և արտակացեալ՚ի յարկէ բնակութենէ հայրենեացն իւրոց, ՚ի գաւառէն Մոկաց, ՚ի լերանցն Կորդուաց, ՚ի գնացս ընթացից բազմօրեայ հետոց սուրհանդակօրէն խաղացմամբ յառաջ երագեալ՚ի յարեգ կուսէ կողմանց հիւսիսոյ մինչև՚ի սպառուած ծայրիցն Արեւելից և սկզբանն Արեւմտից, ՚ի կայանս նորոգն Վաղամտիայ, յարքայարանն Հունաց ազգացն Հռովմայեցւոյ հասանելոյ, ՚ի քուն բնակուէ ծովածաւալ ջրափակ անդընդափոս ահագնապարիսպ բազմաբնակ քաղաքին և անմոռանալի ամրոցին աքանչելոյն Կոստանդնուպօլսի։ Ընդ այր երագամիտ, և ըստ կարգադաբանութեան խօսից անթարթափ լեզուոյ՝ յոյժ պատկանաւոր, իսկ ըստ ՚ածային հոգելից խմաստութենն յաւէտ պարարեալ, մատուցեալ՚ի յօգուստս բնակ պայծառապսակ պատկառատեսակին պատշաճ գինուորեր։

ԺԱ. Ա՚ն նախ յորժամ տարաբաժաներ՚ի հայրենեացն, զտարաբնակութիւն օտարութենն Հակոբեան զմտաւ ածեալ. որ ՚ի նեցուկ ցպոյն միայն յեցեալ, ոչ ինչ բերելով Թոշակ մարդկային մարմնական կենաց՚ի ծնողացն՝ բայց միայն զօրհնութենէ երկնաշնորհ և տիրապարգեւ անդրանկարարն ձեռնադրութենէ. որովք յաւէտ առաւելութենէ անստուեր և անթարշամ փառօք կրկին պսակեցաւ, մեծաւ միջոցաւ գերազանց գտեալ քան զհոմանիսինն։ Այնպէս և սուրբ անփոյթ արարեալ զբազմածախ և զյոքնաշահ ինչս ստացուածոց գանձուց հայրենեացն, միայն՚ի դրկից դամբանէ շիրմի եղբօր հօրն իւրոյ Վաւթի սրբաշնաւղարդ և քառակարգ եպիսկոպոսի, զորոյ զգուշութենն բազձալի անուանն նախ նկարեցաք, անտի ողջունիւ բարձեալ ընդ լինքեան սուղ ինչ չափ դուշնա-

քեայ Հողոյ, և այնու շատացեալ անզուգական և ան-
համեմատ բերկրանօք բնակեր ՚ի Աիւր, քան թէ
սիրեցեալ սերմն Աափատայ՝ մաքուր մնչկեկաւ մե-
ծին Հեղեու ՚ի կատար ամբարձման գլխոյն Կարմե-
ղեայ։ Աբրով հանգուցնապէս և հաւասարաբար ըստ օ-
րինի նահանգութեանն նորին՝ յայտանկատ աչաց տեսողայ
պայծառ պանծանօք կարգաց յարգեցաւ։ Վանդի
իբրև տեսին զընորհ պարգևաց անզգայականաց հրա-
շակերտ նշանաց՝ լինքնակալքն Յունաց, որ ՚ի նշխա-
րաց Հողոյ քաղաքահեստն գանձարանի ՚ոծարեալ եղ-
բօր Հօրն նորա, նոյնժամայն ըստ ընդաբոյս բնածին
բարի բարուցն բուսոյ՝ սրբասէր և երկիւղածամե-
ծար սրտին իւրեանց ցանկութեանն, և ընտանի սովո-
րութեանն որ առ սքս սպասահարկութեանն կատարեալ կա-
մացն յօժարութեամբ անդէն վաղվաղակի անդանդաղ
սրտից բաղձանօք՝ զանընտել օտարականն՝ զհեռաւոր
աշխարհայինն՝ զանմերձաւորն աչաց սիրելեաց՝ զան-
հպատուրն հարազատաց, իսկ և իսկ ՚ի նմին աշխարհա-
խուռմբ երկրագումարք և բիւրաւորաձառն ատենիւ ՚ի
փառս բարձրութեան պարգևընկալ պանծանաց պա-
տուոյ կարգեին։

ԺԲ. Վրդ իբրև այս ըստ սմին տեսակի մասին յան-
գեցաւ և յարմարեցաւ, և այլն տարաշխարհիկ՝
պատուաւոր և սպասաւոր և ծանօթ ընտելական
կայսերացն երեսաց եղև, հարցմանն քանից համար-
ձակութեամբ արժանի գտեալ, և զդարձուածան անդէն
ընդ նմին կարգի ՚ի ձահ փոխադրեաց։ Յիշատակե-
ցաւ նորոգեցաւ և պատճառն առաջնին յանակընկալն
կալն հանդիպութեանն, այլ և աւանդն՝ որ մաքուր ըն-
ծայիցն, զոր ՚ի յերկրէն իւրմէ ընդ իւր կրեալ բե-
րեր։ Իբրև երկրորդ սկիզբն եղև իրին յայտնու-
թեան, և կրկին պատմեցաւ թէ յորմէ այսքան սքան-
չելիք նշանաց հրաշից գործեցան, արդ իբրև զբա-
վանդակն բնաւին լրութեամբ իւրով իմացեալ ծանեան,
և ՃՀմարտեալ ստուգեցին այսպէս տեսութեամբ՝ ե-
թէ եղբայր Հօրն նորա է պատճառ այնր գովելոյ և
պատուելոյ իրին, այնու ընդ նմա առաւել ՚ի փա-
փաղ զթութեան սիրոյ յորդեցան։ Վա ընդ նմին և
զայս ևս հոգացին և գիտել խնդրեցին, եթէ ուր ոք

յընտրելոց Հովուէ զտեղի բնակուԹիէ պաշտելի այնր հանդստի կենդանի մեռելոց ։ Իբրև ուսան յառնէն Թէ որդի քեռն իմոյ ընտրեալ իցէ ՚ի սոյն գործ պաշտման սպասու , ընծայս պարգևաց պայծառակա- նաց խոստացան ընորհել ՚ի պատան պիտոյից նորոգ- ման հանդերձանաց խնկեալ ոսկերացն ։ Իսկ իբրև զարդարն և զաներկևանն ստուգապէս իսկուԹեամբ պատմեաց , Թէ չունին կարիս պիտոյից երկրաւոր ի- րի , նախ հարազատն իմ քեռորդի , և ապա հո- վուեալքն ՚ի նմանէ ։ Այլ Թէ կամք վեհիցդ իցէ , քննեցիք և ՚ի խոր խուզեցիք զինդիրս կարեաց նո- ցին տենչանաց ։

ԺԳ· Իբրև կարի հոգեպէս տարփանօք սրտի ըզ- կամն կայսերացն առ իրին անձուկ յեղյեղեաց , ա- պա նամակս հրովարտակաց ինքնագիրս այրն հան- ձարեղ և ճարտարաբան՝ յերկոցունց կողմանց մե- քենաւորեաց . և ինքն հրեշտակ զոմն նամակակիր ՚ի սեպհական իւր հայրենական գաւառն առաքեաց ։ Եւ ըստ յաջողելոյ կամաց քաղցրուէ անեղին՝ մինչ դեռ Թագաւորքն Հունաց ՚ի նոյն շաւիղ խորհրդոյ բարւոյ հանդիսացեալ մտաբերէին , դարձաւ անդ- րէն սուրհանդակն պատձենաբեր , ունելով գիր նկա- րեալ ՚ի գէմն երեսաց գոյուԹէ գիմաց քառատեսակ քարտէնի , հաւաքեալ ՚ի ծոց իւր յիշատակարան բարեբուղխ բանից մեծի խորհրդոյ ։ Իբրև ծանեան զփափագ տարփանաց հոգևոր խնդրոյն , զի ա՛չ ըստ մարդկային բնաբարն բնուԹէ բարուց բաղձանաց՝ երկրաւոր ինչ նիւԹ սիրելին , այլ մանն փրկուԹէ անանց մեծուԹէ՝ ՚ի կենսակիրն կենդանագրուԹենէ անվաձառ և անգին զանձուն երկնային պարգև՝ անստուերափայլն լուսոյ անկապուտն կենաց՝ անստե- րիւր և սրբակերպորդն ստացուածոյ քեռան՝ Հշանին , գովեցին յարգեցին և գրուատեցին զշաւիղ խոր- հրդոյ մտաց խնդրողին ։ Եւ հաստատապէս սեռն ստուգուԹէ զծնունակ կամն անխոտորնակս զՀայ- ցողին և սիրոյն այնր բարձրուԹեան հրատարակե- ցին ։

ԺԴ· Ապա փուԹաբար և վաղվաղակի կազմեցին և պատրաստեցին ոսկեկուռ ձուլածոյ քառատեսակ

յօրինմամբ զձև տեսակի ածեանն խաչի։ Եւ նմին կառուցեալ մանն հատուածոյ ի կենսակիրն փայտէ տերունեան փառացն բազմականէ։ Եւ վասն առաւել փառս ընծայելոյ նմին նշանի, զբնաւին վկայս կեցուցիչ մահու վշտացն Յեի՝ ընդ նմին պատկանուԹիք գեղազարդեցին, ուստի ձաշակեացն և սփածաւ և պսակեցաւ և սեւեռապէս պնդմամբ մածուցաւ, և որով ի ծննդեանն աւուր տնանկաբար վերաստղեցաւ։ Ո այս ամենայն մասունս ըղձականս ընդ խաչին հիւսեալ միատարրեցին. և պատեհ պատրաստուԹեամբ ի տեղն ծխոյ բացուստ ի բաց ի ծագս եղերացն ի ներքոյ ըմնկացն դրանց՝ երկբայեալ սենեկացն պարագրողաց՝ արձանացուցեալ ի հանգիստ նշանին լուսոյ, առաւելապէս բաղձանս յուսոյ ընդ նոյն խառնեցին։ Եւ զբուրման կենացն բուրվառ այսպիսի կայծակամբքս՝ ընդ կնդրուկն լցեալ ի ձեռն նորին իսկ յարդարողի այր խորհըրդոյ մեծին Անդլատի, պարգեւս բարեաց աշխարհին Հայոց կողմանցն արևելից լերանցն Կորդուաց գաւառին Ոհակաց վերառաքեցին։ Որոյ իսկոյն իսկ բարձեալ մեծագին և ոսկեԹել վերարկուօք՝ պայծառ վարշամակօք և անկշռելի բերկրանօք՝ բերեալ բնակեցոյց հուպ ի պատուական վայրս Հանդստատրանի հօրեղբօրն իւրոյ աքանչելագործ և կենդանական ոսկերացն. որ և պատճառ իսկ ժառանգուԹե այսր նախ նա ծանուցաւ։

ԺԵ. Ընդ իբրև եկն եհաս այրն ընտրհընկալ և պարգևաբեր խաչտնակ և նշանաբարձ փրկուԹիւնս կիր գովեալն գանձու, եգիտ բազմեալ ի գահոյս տիբական ոծառաքն աստիճանի հանդարտական հեզուԹե սրբամատոյցն աԹոռոյ՝ զորդի քեռն իւրոյ ընտրելոյ. մեծաւ բարձրուԹե վսեմական գովուԹե՝ գերարփի շնորհիւ՝ վեհագոյն գոլով քան զՀօրն իւրոյ հարազատ՝ և զՀօրեղբայրն նորին, անդէն ի նմին աղգային և բնաբնակ լեռնահոլով և կարծրախարիսխ գաւառին Ոհակաց մայեկաց մրգաց, ի տեղի հանգստեան հոգևնորոգ մարմնոյ հօրեղբօրն իւրոյ երանեալն ԴաւԹի մեծի եպիսկոպոսի։ Որ նորոգեաց զնշխար համբաւեալ աղգին՝ երկանունն և

քազմանշոյլն յաւազանէ և ՚ի կոչմանէ. ոստ տոհմին և շառաւիղ զարմին. ընտրեալն ՚ի Թիւ համարոյ հանդիսի դասու եպիսկոպոսաց։ Որոյ անունն ըստ յորջորջանաց կոչման վերստին ծննդեանն աւուր փրկութեան Աստեփանոս կարդացեալ, որ ըստ եբրայականին՝ Պսակ առաջին է։ Զի հաւաստի ըստ կոչմանն իւրոյ եղև պսակ պարծանաց պանծալի վայրկեան այնոցիկ։ Զանգի ոչ Թերացոյց, քանԹէ լեացոյց, և ոչ պակասեցոյց, քան Թէ աճեցոյց զպատրաստուԹի նորոգման վայելից այնր բնակուԹե։ Որ ՚ի քնէ ՚ի սկզբանէ ՚ի վաղուց հետէ ՚ի հին պատմուԹէ և ՚ի հարուստ զրուցաբանուԹէ արանց ծերունեաց և երիցագունից, ժառանգուԹէ կայից դոյզն ապարանից գոյն ինչ շինուածոց նախագրեցեալ էր իւրեանցն հաւուց հզօրացն հարց։

ԺԶ. Օ այս՝ սա վերստին ստեղծմամբ ՚ի զարդ պաճուճանաց զարմանագործեաց, և գրեԹէ երկին երկնի ՚ի յերկրի վայելչապէս գեղով յօրինեաց։ Եւ զկազմած պատշաճողուԹէ հրաշակառոյց խոտանացն՝ քրովբէաբնակն յարկաց՝ բարենշան կերպիւ հիմնադրեաց. և նմանասեր սրովբէապատիւ սրահին Սիովնի սիրատեսչակ տեսիւ տիրագրեաց։ Եւ համանման երկնաբերձ կայից կանգնեալ ամբոցին, որ ՚ի համար համբարոյ զինուցն օձառաց՝ սայրասուր սլաքաց՝ ոսկեկուռ նիզակաց՝ հազարապատուոր վահանաց՝ յապաւինուԹէ պահեստի Թիկանց, բազմուԹ գնդաց գումարտակաց մարտկաց եբրայական արանց քաջաց որ ՚ի Գալիլիովք, Թագադիտակ փառօք պսակեաց։ Եւ ըստ ամբարձման կամարի վերնայարկն գնտի ձգման գմբեԹի՝ ձիգ ըստ ձարտարապետեաց. և գունակ խրախարար և բազմահաւաք խորին խնձոյից՝ որ հարմնարանին՝ զնծամարդն սրբասահման տենչալի տաձարն՝ ամենապուեստ հիւԹիւ յարդարեաց. և անդանօր համանգամայն զանդրանկացն բոյլ ՚ի միում խմբի բոլորեաց։ Եւ իբր քաղաք կենդանեաց շինեալ այ, խօսեալ Ցի, մայր մանրուր որդւոց, հանդէպ տեսակի դիմաց օրիորդաց փեսային, երգօք պարողաց առաքաստաստասաստաց ընտրելականաց, անդրդուելի

արուեստաւորեաց։ Եւ լայնատարած դրամբ անան-
ձուկ կայան բանակի թիւրաւոր զօրաց հրեշտակա-
կանաց գերվարպետութեաց։ Եւ ևս քան զևս՝ ան-
ստուեր փայլմամբ քան զմիավսեան շինուած վրա-
նին վկայականի՝ զանգակագանչ՝ բեհեզազանգուած՝
մետաքսահիւս՝ սպիտակապատուաստ՝ կարմրայար-
մար շաղաշարման զարիւնագեղ անձառն խորհուրդ
հանդերձակեաց։ Եւ իբր սարդինասեր անպահ
պահանգաց հնօրհապատար արարուածոյ յարկի
դաւթեան համբակին ձեմարանօրէն արուեստիւ
սադրեաց։ Օրմնոյն վերադրութի՝ վիմախարիսխ
արձանակառոյց կերպիւ առկայեաց. և իբր յա-
կանց վանեաց յեռելոյ ձարտարագործ արուես-
տայարմար՝ բաղմատեսակ երփնիւ նորոգեաց։ Եւ
զեզեկիելեան տեսլեանն երևոյթ անյօգն էուք՝ նոր
նմանութիք իբր զգայութի իրի արծարծեաց։ Եւ
իբր զմիոստոյնի վերարկու գեղեցկատիպ յանգուա-
ծով զգովանդակն սկսեալ յարմարեաց։

ԺԲ. Նոյն և զաներևոյթ հանդերձեալ բարեացն
ծանօթութի փառացն ապառնեաց՝ ի ներկայումն
աստ՝ ակներև տպիւ գծագրեաց։ Եւ իբր զփայ-
լուած լուսածագ բոցոյ բորբոքման զսրբամատոյց
տիեզերալոյսն տեղի ցանկեալ պարսպեաց։ Եւ զար-
տաքին որմնոյն զարձանս մանրապար տեղւոյն բերկ-
րութեան՝ ձառագայթանշոյլ բեհեզատիպ զգես-
տուքն պճնեաց։ Իսկ զդիմաց դրանդեացն դիրս՝
աքանչելի քանդակագործեալ քառաշրջութի զարմա-
նազան՝ իբր զծաղկեղէնն զգեստուց հանդերձանս
սրբաբեհեզն պատմուճանի առագաստանուէր գեղա-
պանծ հարսինն՝ ի գլուխ ծայրից լուսե թեզանեաց
շրջապարուրեաց։ Իսկ զդրանցն երեսաց տիպ՝ նկա-
րակերտ յանգուածատաշեալ կարմրերփեան փայ-
տիւք և փղաց ոսկերօք սեռակոտոր այլայլակ գու-
նովք երանգոց՝ յարակից կայիւք ի պէսպէս մա-
սանց արհեստիւ կապեաց։ Իսկ զմեջ գաւթի յա-
տակացն իբր զկնիք մի ապակեղէն ամենահարթ գոյիւ
անխորշ սկզբութիք պատշաճ պատրաստեաց։ Իսկ
զբարձրավանդակ սրբարանն դիտանոյն երկնատե-
սակ բարձրութիք բեմբին՝ դաբիրայօրէն յօրինմամբ

ըստ սարսափ անհուսալ և փայլեալ վերինն եթերին՝ ի
ստորնայնոցս աստի մեկուսեաց։ Իսկ զվարագուրացն
անջրպետարան իբր զպատրուակ անքոյթ տեսութե՛ն
ի պատիւ պատրաստութե՛ն ի պաշտօն զգուշութե՛ն
խորհրդոյ մեծի, ի պատուական հիւթ պայծառ
պաստառաց եդիպտացի դիպակակիտուած բազմա-
տեսիլ ոսկեփառ և հրակերպ՝ երկնաձև և երկվե-
բարկու՝ ընորհազարդ շքով պաճուճեաց։ Իսկ զտի-
բառանդ և զարարչատուր կտակիս պաշտամանն գոր-
ծի՝ սրբութեան սեղանոյն զաքանչելի զգեստս, իբր
ընդ սրբութե՛ն ստուերին մաքրութե՛ն և զփայլուձին
աղօտականին աստ պայծառութե՛ն, և ձշմարտութե՛ն
ստուե՛ն, և զնոր լրութե՛ն նախնոյն թերութեանն,
զվերընդունական անգամ բնութե՛ն տէրունոյն մարմ-
նոյ, ի զանազան թելոց գունելոց երկնակերպ կա-
պուտակատիպ յեղխմացի կղզեաց ծովայնոց, ծիրա-
նածուէն կերպասիւք պճնեաց։ Իսկ զկապ պա-
տուածոյ գօտեացն, եթովպացի և բաբելոնեացի
բազմագանձ ականց՝ բոցանշոյլ յակինթոյ՝ գարնա-
նագեղ զըմրդխատից, աստեղազարդ մարգարտից,
թխատիպ սաթոյն կապուտակաց յեռմամբ առ ի-
րեարս, ամենապատիւն համատակօք կրկնելովք զու-
զայարեաց. և որպէս զգշխոյ ոմն թագակալ հան-
դէպ ձակատոյ պայծառ պատկերի դրուատելի դի-
մոյ դիտակի սրբութե՛ն սեղանոյն՝ մածուցեալ կա-
պեաց։ Իսկ զդմբեթին վերամբարձութե՛ն որպէս կա-
ռուցումն ափան անդամոյ՝ ցանկալի հասակի մարմ-
նոյ զլխոյ գագաթան մեծ արքայուհւոյ, ի կարճ-
րակուի քարանց քերելոց քուաքատակեաց։ Իսկ
զդեղանկար ծաղկայօրինուորակ պատկերացն կեն-
դանագիր տեսակի գեղոյն զատուերացեալ հին ա-
մանակացն զաներևոյթն աչաց ներկայիցս, իբր զե-
րևոյթ յայտնի տեսակի ունողաց ընդ և զգայու-
թե՛ արգասաւորեաց։ Եւ ամենայնիւ զամենայնն
յամենեցունց մասանց նուիթելոց, ի մի կերպարան
տեսակի զօդեաց։ Եւ որպէս զարձանն եւթնատես վե-
միճն Օ՝ օրաբաբելի՝ յանդիման աչացն Յեհ ուղղեաց։
Որպէս զոտիցն այ տեղի ի վերայ հաւատոյ վիմին
հաստատեաց։ Եւ իբր զընդարձակ ծոց արարածոց

և երկրի արեգականն շրջադրութիւն՝ կանխեղաբոր-
բոք ջահավառ ցամքարանշոյլ լուսով փայլեցոյց ։
և գրեթէ բոցեղէն յեղանակեաց ի մարմնի հողե-
ղինի ։

ԺԸ ։ Ոսկ զարտաքին գաւթացն յատակս և զդա-
րաստանայն իրախձանութիւնս, ըստ իւրաքանչիւր
պատշաճ խորհրդոյ պայծառ պատկանեաց ։ Եւ
մնկեաց հաստատեաց և մշտնջենաւոր հիմնեցոյց
խիտս բիւրաւորաց բուսոց անտառաց, ծառս դեղա-
սաղարթս, շնորհաշառաւիղս, ամքարձուղէշս, հաս-
տատեղունս, մարդադարմանս, բազկաստածուս,
աձուռնաձիւղս, վայելչատերևս, բարեբողբոջ բոյս
վարսաւոր փայտից, այլայլասեռ տարազոց մրգոց,
համեղահամ դիւրամարքելիս կրից կոկորդաց ։ Եւ
և՛ս քան զևս յաճախեաց ի ցեղից ցեղից ցանկա-
լեաց ցցեալ ի գետինս գիրապարարս՝ արգաւանդա-
հողս տեսչալի վայրից, իբրև զծառսն ոՀն և զմայրսն
Լիբանանու լերինն Նուրայ՝ առատապէս պայծա-
ռաղարդեաց, տունկս բերրեաց բերողաց բարեաց,
ծաղկընծիւղս՝ պտղաճինս՝ արմախարխխս՝ մրգա-
մատոյցս՝ պատուաստակիրս՝ պտղապարգևս. անդս
ամենուսնակս ջրահոսս և շուշանափայլս. սահմանս
վտակարբուս՝ ուղխապարարս՝ անձրևամնունդս՝ ցօ-
ղամատոյցս ։ Երկիր՝ զոր տեր Ած ըստ մեծին Մովսե-
սէի գԹուԹք խնամոց իւրոց դարմանել, հանապազ
աչք տեսչութեամբ ողորմութեն Այ քան Թէ երեսաց նո-
րա՝ ի վերայ նորին, ի մէջ ամին մինչև ցելս տար-
ւոյն՝ ի գրգել տածել և յանձանձել ։ Զդր զայս
ամենայն զպատճառս նիւԹոյ բանից պատմութեես,
նախայիշատակեալ մեծ եպիսկոպոսն պսակ Միհռն և
ծառայն Ած, երկակի յորջորջմամբ անուանեալն
ըստ բարբառոյ ձայնի Ասաւայ և Ամայելի յանգեալ
կատարեաց ։ Զանգի որպէս Մովսէսն զաւանն Աս-
Թի զկնի հանգստեան հօրն իւրոյ վեհի՝ զանուանա-
կիրն շնեաց Այ տաճար՝ սրահին փրկութեն՝ տանն
Յուդայ և Իսրայէլի, նմանապէս և սա ընդ նմա
զՀնոյն ի նորս արծարծեաց զշնորհ ։

ԻԹ ։ Եւ իբրև զամենայն զայս այսպէս կարգեաց,
և Դեմ երկրորդ՝ փառօք առաջնոյն լուսանորո-

գեաց, ապա այնուհետև զընկալեալն ի նոսէ ընդհ
զիպեան գործակից կենացն արդարութեան, ընշա
նակին համբերութեան կամաւոր մահուն Յիսի, ըզ
պատկերն պարկեշտութեէ անձանց Ձգնաւորաց, ըզ
հաձութեի կամաց ածութեէն հօր, զգործի իւրի բարձ
րութե փառացն Աստուածելի, զնշանն լուսոյ քեհան
խաչին, մեծաւ ահիւ և զգուշական երկիւղիւ բար
ձեալ հանգուցին, յօրինեալ տեղի հրաշակառոյց
խորանի նազելի յարկի նը Կարապետին. զոր յա
ւուրս իւրոյ վանականութէն սկսեալ, ի նմին կա
տարեաց ընտրեալն յայցելութի մաքուր դիտողութե
սքն եպիսկոպոս։ Եւ սրբոյ և ընտրելոյ առաքելոյն
Պետիանոսի մարտիրոսարանի անուանն իւրոյ նո
րոգ յիշատակ՝ ի հանգիստն գերեզմանաց նախնեաց
մեռելոց ի հրաւէր խոստման անսուտն յարու
թե, նպաստաւորեաց յառաջագոյն քան զյայտնիլ
սրբոյ խաչին գալստեան։ Այլ զԿարապետին տի
րաբնակ և հոգիաշարժ տաղտաւրն՝ ի խորհուրդ
յուսոյ աներկբայ դիտման խաչին գալստեան իբր
ընծայութի մաքրութե ուխտի նուիրեաց նախ քան
զաթոռոյն վերակացուե։ Պ ասն որոյ և՝ ի գալուստ
ծագման փրկականն փայտի՝ իբր ի գուշակումն ա
նուան խոստացեալն ընդհի՝ ի նմին սեպհականե
ցաւ, հանգուցեալ ի տաճար մեծի մարդարէին Յով
հաննու։ Ասկ զածածնին չքնաղ կազմուած սքան
չելաշուք քանակութեանն զուգամասն կրօնից բարե
զարդն եպիսկոպոսութե կառուցեալ, սկիզբն արա
րեալ ի սկզբան տերունե իւրում նախագահութե։
Աստի և հանձարեղ խորհրդածութէ՝ ի նոյն տա
ճար վերագային պատրաստեաց նշանին սրբոյ՝ ի
յաւուր ուրբաթու մեծի Պասեքին։ Օ ի յիշատակ
գովութե պաշտելի անուանցն երկոցունց վեհից խա
չին և ածածնին, ի միասին երկրպագեսցին, համ
բաւեալ զումն ճնօղ, զումն ծանուցօղ մարդացելոյ
միոյ այ Յիսի Քրիսի, հօրն փառակից։

Ժ. Ասկ ի կողմանն աջոյ կայից հիւսիսոյ, ըստ ա
ռակողին ընթացից հետոյ աջողակ հողմոյն, ունի
զառաքեալսն տիրապատիւս, և զ ուսուցորչին նը
դաւանարանն։ Ասկ ըստ հարաւոյ դիմաց Կարու

մայ՝ զեբրայեցի ընտրեալ պատանին զմարտիրոսն Յ.ուդէմբեսհ։ Եւ համբարձեալ վերադրեաց գեղագոյն դրան երջանիկն առաքելոյ՝ ի սեան ուռնոյն խորանի՝ որ ՚ածամբն՝ ՚ի շինուած միջոցի որմոյն կառուցման՝ զորբոյն ոսկերս զՅ.կրտչի զարարչին Ջրով, և մաքրելոյն ՚ի նմանէ հոգւով. զնախաւորկայն՝ զերկրորդն Յ.ակ, և նորոյս Յ.ոհաննէս զվերջատոյն ծնունդ երանեալ, որ եղև հրաւիրօղ մեռելոցն ՚ի նախնին ընդ դրունս մահց երկրին կենդանեաց. զՅ.ակոբայ որդւոյն Յովսեփայ՝ որ կոչիւր արդար, և սակս մանգական կենցաղակցութեան՝ եղբայր Յի. զմեծի առաքելոյն Պետրէի, զՀզօրացն վկայից զընտրեալն Թոմանց, զքառասնիցն որ ՚ի Պոնտոսէ երկրին դամբացւոց ՚ած զինուորացն, զՈղմայէ և զԱմիանոսի զնահատակացն։ Եւ ըստ կայից հարաւոյ ՚ի սեան խորանին՝ ՚ուր պատանեկին Յ.ուդմբեսհի. զՎիկտրիանոսի զկարքեդոնացւոյն որ Յ.փրիկեայ ՚ած և երանեալ եպիսկոպոսի և վկայի. և Յուստիանեայ կուսի իմաստնոյ՝ անարատի և մարտիրոսի. զվերազնեայ վկայից ՚ածաշնորհ քահանայից փառաւորեալն Ղեւոնդեանց։ Ի յոսպէս զամենեսեան զորբոցն պարս՝ ունի հաւաքեալ ընդ թևովք իւրովք իբր զմայր երանեալ ամենայն կենդանեաց՝ տիրուհին և ՚ածածինն։

ԻԱ. Յ.ոյժ ծագեաց նորանշոյլ փայլուձն սրբոյ նշանիս ՚ի մահց լուսոյ ականն արևուս՝ ՚ի սահմանս քնարկուածիս լերանց Ալիշի, կողմանց հիւսիսոյ, յաւուրս ուռնոյաց տանս Ա.ասպուրականի՝ եղբարց երից վեհից և հզօրաց հարազատաց, ՚ի յարենէ արքայից, ՚ի սերմանէ սքանչելեաց, ՚ի տանէ տերանց, ՚ի գաւազանէ հակայից, ՚ի թուոյ թագաւորից, ՚ի քնութենէ արեաց, ՚ի յազգէ աղնուաց, ՚ի տոհմէ տիրողաց, ՚ի գլխաւորութենէ գեղեցկաց, ՚ի զարմէ զօրեղաց, յերկրակալ զաւակաց, սկզբնաւորեալ յերևելի և յերանելի նախնեաց, ՚ի քեռն Յ.սրբոյ դստեր Ա.նմայ որդւոյ Նոյ։ ՚Ի ծննդաբանուէ նախապետուէն Ադեբոլթայ, որդւոյ Ռուշայ, զաւակի Ռամայ։ Որ անդուստ իսկ ՚ի շինել նախակործան և վաղասահանականն բրդան, պետ և գլխաւոր հրամանա-

տաբ նոցա յաջորդեալ, տիրեաց ՚ի Վենիամ և ՚ի Վաղանէ, խառն ընդ Նաբիլոմէ։ Վասի և Ոսոր՝ եղբայր մօր Վեբրովթայ՝ շինեաց հրամանաւ Վեբրովթայ զՈսոր, յորմէ Ոսորիք մեծք և քաջագօտիք, մինչև եւթներորդն ՚ի նմանէ Վինոս, որ յիւր անուն փոխարկեալ Վինուէ անուանեաց։

ԻՌ. Ընդ յայսքան հեռաւորութիւն ամաց և կանխութիւն աւուրց դարուց վաղընջուց, ՚ի ստամբակ դառնութիւն դիւցապաշտ ինքնակալութիւն, ընտրեալ շառաւիղք ածպաշտութիւն սոքա երեքեան։ Վնուն կրտսերոյն զՀաւոյն եդեալ Վենեքերիմ մակադրեցիսկ միջնոյն՝ Վորգէն, և նախնւոյն՝ Ոշոտ։ Վայց ՚ի փրկագործն ծննդենէ աւազանին նորոգութեան՝ ածութիւն որդեգրութիւն, անդրանկին՝ Վահակ, երկրորդին՝ Վայէկ, վերջնոյն՝ Հովհաննէս։ Վատաւարեալք և փառաւորեալք ՚ի մի ամանակի արք բարիք և ածասէրք, խոհեմութիւն հանճարոյ առաւելեալք, և ըստ պատահման դիմաց պատկերի տեսման երեսի յաւէտ ցանկալիք։ Վսկ ՚ի սեր սրբոց, ՚ի պատիւ ընտրելոց, ՚ի յարգումն հեղոց, յընդունելութիւն ուղղոց, ՚ի զարդ եկեղեցեաց, ՚ի պայծառութիւն սրբութիւն տեղեաց և քեռեան նշանաց, ՚ի սպաս մարտիրոսաց, անկշիռք և անզուգականք։

ԻԴ. Վոքա իսկ մեծաւ հաւատով առեալ ընդ իւրեանս զգումարս և զկոյտս նախարարուէ սեպուհին ազատաց, ընդ առաջ խաղացին ածեան խաչին, զորմէ պատմուիս է։ Վյս վերբերեալ մեծաւ ընծայիւք՝ ՚ի սահմանեալ և յուխտեալ տեղին ածելին, որ է ՚ի ծորձորս միջոցի լերանցն Վորդուաց վիճակին Վոկաց, և յանձանձեալ անչափ գրգանօք, ՚ի սրբոյ ուխտին տաճար հանգուցին։ ՚Ի թիւս չափոյ քանակութիւն համարոյ եղանակական շրջանակի, հոլովման աթուսեկի, որ ըստ ընթացման ամանակի այսմիկ նկատի, չորեքհարիւրորդի, երեսներորդի երկրորդի, յաբելեական տոհմիս տումարի։ Վյս անդ գումարեցին խառնեցին ժողովս բազմութիւն տօնողաց աղանց։ Հրաւակեցին և աւանդեցին պաշտօն օրհնութիւն կատարել աւուրց յաւուրս։ Վյս մատուցին ընծայեցին շուրջ զնուաւս ակումբ զբաւրաւմն խնկոց ջահիւք

վառելով՝ և ծխով անուշիւք կնդրկի և կասիայի խառն ընդ երկրպագութիս Հոգւոյն սին պատարագ։ Այս աղաղակեցին բերկրալից բերանով օրհնառաք բարբառով, ի շրթունս ընտիրս, ի լեզուս մաքուրս, ի հնչումն երգոց, ի տաւիղ օրհնութեց, ի գոչումն ազդման, ի ձայն ցնծութե, ի քնար շնչաւոր, ի փող անձնաւոր, ի խնձոյս Հոգեւոր, ի ծնծղայս մարմնեղէն, ի ծափս ձեռին, ի տրուփումն կայթելոյ կաքաւման ոտին, ասելով զհոգեպարգեւն և զշնծաշունչն սաղմոս, Այտուր երկիւղածայ քոյ նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

ԻԴ. Այս անդր քան զօրինակն գերազանցեաց Հրեշմարտութին ի նշանս և ի սքանչելիս։ Որպէս զի վսեմապէս խնդութիւն զեղեաւ եպիսկոպոսն երջանիկ՝ ծնողօքն ածասիրով և հարազատ եղբայրական համբակօքն, բնաւին ազգայնով սրբասիրով, և բազմաթիւ պաշտօնէիւքն եկեղեցականով, հանդերձ ռամկացն զնդով, ըստ օրինի նորածին համբակաց հօտից, խայտացեալ առաւելապէս, քան թէ մեծն Պաւլէ՝ի հանդիպել ստուերագիծն տապանակին։ Վասնզի նա զամսամ մահաբերսն վերին բարկութեանն կարկտաբեր ամպով որոտայր. իսկ նշանս այս ածընկալ՝ զողորմութե և զշնորհս և ստուգութե յիւրում բարձեալ քաջանկար տեսակի՝ առաջի երեսաց այ բերեալ զցնծութե բիւրուց ազանց բաշխեալ աւետարանէ։ Այս զերաշխիկ վշտաց կեցուցիչն կրից՝ բոլորն իսկ խորհրդածութեամբ հաւաքեալ յինքեան՝ իբրև զգլուխ մարմնոյ անդամոց զտեսութե ազդման՝ հինգ զգայուե, առ ի յայտ առնելոյ թէ ոչ վայրապար ինչ գործ՝ կամ խառնախորթ խորհրդածուե ի վերայ խաչին կատարիւր։ Այլ տեսանողացն յառաջատես և նախագուշակ երգաբանութե՝ որ զկենսատու չարչարանացն և զինքնաժառանգն փառաց ամենակալն Քեի, պատմեալ վկայելին ըստ գուշակելոյ ի նոսա Հոգւոյն Քեի։

ԻԵ. Այսպիսեաւ մեծ լինի հրաշազարդութե նշանս այս առաւելաւ ի խումբս և ի հոյլս հոմասեռիցն։ Վասնզի որք ի բազում տեղիս բաշխեցան, և ի քառակուսեան եղերս աշխարհի սփռեալ տարածեցան,

յատուկ միայնակ ՚ի յաշտարակէ կենսատու փայտին մանաւորեցան։ Իսկ ՚ի ածաստեղծս այս բարելուԹԵ նորոգիչ և կենդանարար նշան, որպէս ԹԷ զնաչն իսկ խաչելուԹ՚ՁՆ՝ ելողին փառօք յինքեան ունելով, զամենեցունց մտաց տեսուԹԵ ՚ի սոյն յանկուցեալ միշտ պակուցանէ. և արեգակնօրէն նշուլիւք անշուաղ փայլումն արձակէ։ Որանզի զնանձարուբան խրԹնածածկոյԹս յիշատակ կորուսելոյ փառացն Ադամայ, և զմաշկեզկնն ծառայական սփածանելիս, փոխանակ տերևոյ անկոյ Թզենոյն, որով նախահայրն պատսպարեցաւ, ՚ի պատկեր յօդուածոյ բարձիցն վերբերելով ՚ի հօրն օրինակ՝ զորդւոցն գարշապարս օժանդակեաց. և զփուշըն դաժանաբոյսս ընդ ծաղկաճիճն վայրիկ դրախտին. և զարիւնեբանգն կարմիր ՚ի տարացոյց խակուԹԵ մտաց յանցաւորին, և պատերազմական փրկչին մարտն նշանակ. և զդժնդակատեգն սևեռաս, ՚ի ԹեԼադրուԹԵ նահանջման անարգելն ձեռաց, որ ներհակ հրամանի արարչին ձայնի յանդգնեալ ձգտեցաւ ՚ի փայտին պտուղ. և զպսակունգն դառնաԹորմի, ընդ աւորժելի քաղցր Ճաշակմանն. և զարկանելիս ըզդեստու արարչին ծնողի ՚ի շուք պատկառանաց պարտաւորին մեղաց Աւային։ Ո՜ այսոսիկ զսոսին ՚ի միում տեսակի մասին, իբր զգանձարան կենաց պարգևաց փրկուԹեան ձրից յաԹծունակին իւր քառադրուել առ բարձեալ բերէ։ Որպէս զի ըստ էական ամենանկատ տեսուԹԵ աչացն ՚ի յեԼԹնամանեայ շաւիղ դԹուԹԵ ՚ի սեռս ստորիցս ստեղծականաց անաղօտական ծագմամբ երգեսցի։

Ի՜. Այս արդ՝ զիւր ընԹացից պատմուԹեան բանիս աստուստ կինքեսցուք. և փոխատրեալ այլաբանեսցուք ՚ի զանազան բարեբաստուԹիս ներբողական արհեստահիւսակ առասացուԹՁ, պատեհ պատշաճողուԹՁ, սկզբնաւորեալ ՚ի պրակապատձէն պիտառուԹԵ ՚ի պարս կարգի բանիս Հոլովմանն, զի ՚ի հաւասարուԹԵ հարԹուն միամանեայ նկատման խառնեալ միասցին։ Այս արդ ահա սկսցուք զկնի գծադրուԹԵ գումարահոլով պատմաբանուԹեամ՝ խառնել գուն կնճ դրուԹիս համառօտագիր դրուատից,

նախ նմին իսկ կենդանարարն Աստուածութեանէ ածեան խաչին, և զկնի սորին՝ սրբոյ տիրուհւոյն և Աստուածնին, ընծայ մատուցեալ պատուղ հաձութեանէ կամացն էութեանէ անձառն իսկութենէ՝ զբուխ շնորհայ բերկրալիր շրթանց, ի հոտ անուշից։ Այլ արդ սկսանիմք ի մէջ առեալ զմնացեալն մեզ իմաստս քանի այժմ յայնցանէ, որք նախ քան զմեզ հոգւովն վարժեալ, և վերին իմաստութեանն կարապետեալ, նախակարգ յառաջադրութեանն զսոյն աքանչելի և խորին խորհուրդ՝ կանխահանդէս խմբիւ աքանչելի բանիւ ստնեցին։ Ուստի և մեք ըստ ազդմանն շնորհի մերում իմաստից՝ ի վերնատուողէն բանից զօրութեանէ, բացաձայնեսցուք երգողաբարբառ բարեբանութեամս այս խաչանիշ նորոգ նշանի, նորոգանուագ նկարս բանի, ի կարգ գովեստի նորոգ ներբողի։

Աբգնթեր գրութեի սակաւ սոփեստի յարակցեալ հիւսի ձառս ներբողի լուսակազմ խաչիդ նշանի։

Ա. Այսաւնօր սկզբնաւորեալ առ պատմական բանս յարակայ՝ նպաստաւոր ձեռնտու խորհրդոյս առեալ զառաջս պատգամաց ամենականն Աստուածոյ համբուրիւ ողջունել. այսպէս ասէ տէր, երկինն աթոռ իմ է, և երկիրս պատուանդան ոտից իմոց։ Արդարև հրաշալինն զօրութեի բանս ցուցանել, ընդգրկեալ ի կայս կրաւորական երկկերպեան պատկերացս երկնի և երկրի էութեի։ Այլ զիարդ զսա շարընթացելոց նիւթոց էութիւն մարմնոյ՝ հողագանգուաձն քանակութեէ մեղէին էութեէ հանգուցանել զօրեսցէ. նա և անյօդականն լուսանշոյլ պարզութեի օրպէս ի հեզս և ի խոնարհս ըստ անսուտն խոստմանն՝ բնակութեէ տեղի ընկալցի։ Այս յայտնապէս խոստովանեալ հաւատացեալ՝ թէ նախաձառս բանս գրութեի յապառնեացս խորհուրդ հոգւոյ ակամբն նայի. յորում աւարտումն՝ գերալրութեի էութեանն այ՝ և ի ստորինս կոյս ծանուցաւ հանգուցեալ ի

յօդաւոեսակ մարմնոյ խառնուլեն, և խոնարհ հնազանդութիւք բազմեալ ի կառն խոնարհութենէ կենսակիր ՚ծբ խաչին։ Վասնզի ոչքան էր գօրութիւն իշխանական անձնական գաւթի մարմնեղին հանձարոյ մտաց տեսութենէ, զանկիրն բարձրութենէ երկնի գագաթան, և զանընդունակն լայնատարած դիմաց երկրիս հարթութենէ, բովանդակապէս առ իւր պարփակել։ Վանաւանդ զի փախուցեալ ի նա լրնթացս թևոց թեթևոց հողմոց անհաս երագմամբ ի մէջ միջուկէ իւրն ընտելութենէ հայրենի անծանօթ ծայրն սրբութենէ։ Վպա ուրեմն ի հոգելից լեզուէ բղխումն կայլակաց բանից վտակաց՝ բազմական էին գաւանեաց ղերկինն, և հանգչարան ոտից պաւուանդան՝ զհրաշազան խաչս փրկական, անմահն իսկութեան յօդաւոր մարմնոյն խառնմամբ եղեալ օթևան։ Այս արդ, եթէ զուրուականին տեսակ իրօրէն ձեղրատաբանեաց առ ձեմարտութենէն հաւաստութէն, և զունօղն էից պարունակեալ յեակաց՝ երդարձեաց բանիւ մեծն ի տեսանօղս երջանկաշարմանն ծաղիկ, մեք օրքան կարօտանամք բացատական բանից զօրութէ՝ համբաւել զձեմարտութենես պայծառութէ խորհրդոյ խաչիս զօրութէ։

Բ. Օ ի եթէ ի տօթ անուն և հարաւային համբաւեալ բլոյն բարձրութէ ամովքհայեցոյն ամրոյի խորհրդականն Վիոնէի՝ գուշակողին միայն զերևոյթ ապագայից ըղձականութենէն, այնքան ամենապատկառ պատուասիրութիք Իսրայէլ տօներ անզգայական տաւղաց երդարանօքն հնչեր, և զգուշապէս սրտի սարսափմամբ միշտ երկրպագեր, յարծաթնակ և յոսկիակիրն կորբան տապանակին ընդունայն ի սողոմոնեան կառուցեալ խորանն անկատար քահանայուէ, ըստ Պաւղոսի բանին քննութեան, և արդարուէ թլփատութենէն ուխտիւ ի Վերմէի քարոզիւր բնակիլ։ և դարձեալ ըստ այլ տեսութեան մարգարէաձառ ակնարկութէ, ծառք բուսոց բնաւին անտառաց համայն հրձուանօք խրախուսեալ, ցնծան հոգեպէս, զյայտնուէ երևման հաստչին ծանուցեալ։ Այս արդ, եթէ այսոքիկ ստեղծուածքն փոքունք մեծն արարչութէ, վայելչական և բերկ-

բաղատարն խնդութիւք զանկողին և զհաստողն կենսաբեր գալուստն ի բարբառ ձայնի անբան բերանոյ, և ի ձեռս անյայտս անտիպ տեսակի, և յոտս անբերօղս բնութիւն բարձից, բազմադրուատ ձայնիւ նուագեն, ի ստուերականն գրոյ հրամանն ընկալեալ, ապա ոչքան ի հրատարակիչն յայտնութիւք կենսատու ներքողեալ խաչիս մեծ նշան, անշնչական շնորհին գրաւական, և ծածկեցեալ փառացն յայտարան, ծնկովք կրկնելովք և պատկերովք պատկառեցելովք և զգայական դիմօք սքողելովք և ճոնադիր երեսաց մեր գեղովք ի խոնարհ մածուցմամբ ի հպումն հողոյ արժանապէս խոստովանեալ երկրպագեսցի։ Վանդի յայսքան մեծամեծ շնորհս հաղորդեալ, և յերանութեն գլուխ ժամանեալ, ուր նօղ զօրինակ էին պատկերի մարդս բանական, զորպիսի՞ ըզձական նուէրս ձայնի ոչ ընձեռեսցէ սոցին առնողն։ Վանաւանդ զի և հոլովմանն յօդուածոյ բղխման երգաբանութեանն՝ ոչ եթէ զարձան մուխիսագիր քերեալ ի քարանց կարծրանիւթ վիմաց կենդանասպառ օրինի աղախնանուն ձագարուս՝ ստրկածինն Վինայի արտագծեալ ի թիւս որքանութեանն չափոյ սիղղոբայիցն նախադատն ընտրականութեանն, կասկածափորձ վարժողութիւն, սկզբնաբոյս հասակի պատանեկաց պիտոյից ունի առաջի աչաց նպատակ, այլ զևս գերազանցն նախագիծ նորա տեսութեանցն դիմանց նախահրաւէր հրճուանաց։ Օ՞ր կեանս ծածկեալ յօրինականացն խուզողութիւք քանն վկայեաց՝ յաղագս անհիւթակիրն այ յեղականն մարմնոյ թաքչելոյ։ Որոյ աղագաւ մոլեգնականն եղեռնութիւն տոհմին Յակոբայ՝ նախագուշակ քանիւ կշտամբի, այնք որք յանդգնութիւք երագեալ փութային ի լուսն ձառի ձայնի պատմողին՝ խրախոյս միմեանց ձայնելով։ Նկայք արկցուք փայտ մահու ի հացն կենաց։

Գ։ Յորում հեղուսեալ անապատական նոյնութիւք տէրն երկնի և երկրի ի բարձրն դիտանոյ կառուցեալ ի մէջ ստորինս վայրի, և ևս յաւէտ անտի ամբարձեալ գովեալ գերունակութիւք ի ստորև վերինն վարագուրի նախագրոյ հայրականն ծոցոյ՝ պետն մաք-

բուլթե համայն էակաց Յն, որ եմուտ ի սրբուլթի վերին սրբուլթեցն։ Ալ ասն որոյ ի դիմումն երապ-
մանն ընթացիկ նորին ի ստորինս վայրի եդամականս
կալից, ի բնակուէ հողածնաց մինչակերպ արիւնո-
րակ ձորձովքս ծածկեալ, դասապետք հրեշտակացն
անեղծից՝ ընդ տեսիլ աչաց նկատման անպատմա-
կան պակուցմամբ յաւէտ պղուցեալ, ձայն ուժգնա-
հնչակ առ միմեանս սքանչելի հնչէին. ոմ է սա պար-
դարեալ ի դեղ պատմուճանի բոսորակայլակն որա-
կի, որ դիմեալ անցանէ ընդ այս վայր ահեղ սքան-
չելի. քանզի տեսանէին ի յիրան էին զնաչէին պատ-
կեր։ Ալրով ի նմանէ և ի նոյն դիտմանէ ցուցեալ
ծանուցաւ ի հրաշօրէն հանդիսէ մեծ պատերազմի
ապաքինիչն մեհու զմրցանակն յաղթութե պսակ
պարծանաց ի գլուխ ընկալեալ։ Ա՛ր որս և զպա-
տասխանի խաչապսակին փրկչի ի շար առաջնոյն յա-
ւելեալ հոգեկերին, ես եմ որ հարի զհնձան մեղացն
միայն. և հարեալ կոխեցի զթշնամին կենաց՝ գոր-
ծեաւս մեհու պաշտման. խոցեալ զնա քառասայր
սլաքաւ զօրեղ այս զինու՝ ի կորուստ զենեալ սա-
տակման մեհու մահացուցչին զմոլար բռնութիւն։
Յայսոսիկ ստուգագիր և դրուատականս գործ գո-
վելի՝ ի բացուստ ի հեռուստ իբր ընդ հուպ նայե-
ցեալ տեսանօղս զհիացուցանօղն խորհուրդ բանա-
կարգ բարեզարդութե խաչիս քննութե, ի զինի
հեռուօղս զհոգեշունչն տառ կարկառեալ անձառ
դիտութե պարզեալ ընծայեաց։

Դ. Ալանզի և նոյն ինքն տէրն իբրև զնիւթ կե-
նաց նորոգութե անկապուտ իշխանութե առիթ հան-
գստեան վերստին Ա՛դեմն դրախտի դարաստան,
հաւանական կամօք էակիցն հօր՝ հանդերձ ինքնիշ-
խան հաճութե անկիրճն կարեաց վշտաց յանցանաց,
ի յուս կենսաւնակ ածեղէնն աղդերի պայծառա-
պարծ պանծանօք արքայօրէն ձոխութե յինքեան
ամբարձեալ։ Ա՛մենատես խոկութե գործօղն հրաշից
ամենայն գոյութեց, յանդիման աչաց նկատման էից
ամենից, անպատկառ դիմօք, անդանդաղ ձեռով,
իբրև զտեղն խնկոյ ծխոյ բուրելոյ, գայր ի կա-
տարած կտակի գրոյն ստուերի, հաստատել զարիւն

ուխտի նորոգ փոփոխման՝ ի հրաւիրեալն տեղի։ Որով՝ ի վեր ամբարձեալ՝ ի քայլս հանդարտութեանէ տիրական գնացից ոտից յեղյեղման, գերազանց գարշապարացն յառաջ խաղացման, զկայ հանդերձ տեառն առնոյր խաչակիր հետոյն՝ ի կատարս ծայրից Golgothay։ Այլ հաստատեալ վնոյն՝ ի նկատեալ տեղին սեղան սպանդի, նուիրեցաւ՝ ի վերայ նորին դառն անարատ, ի ծուխս պաղատման հօրն և այլ գրաւ հաշտութեանէ։ Որ ան որոյ՝ ի հանդիսիլ այնմ սոսկալի անպարտական զհնման տեսակի, դողացան սաստիկ սարսափմամբ եղելութենէք բնաւից բնութեանէ. և սաստկապէս ահիւ դղրդեալ սիւնք հաստատութենէ հիմանց աշխարհի յայլայլութենէ նորոգ յեղյեղման։ Այս և հուպ առ հուպ՝ ի քթիթ աչաց միայն թարթափման, թնդեալ շտեմարան անքոյթն ստուերի ստորին անդնդոց, և՝ ի մասունս յոգունս և զանազանակս հատեալ համառօտեալ՝ ի սպառ հատուածեալ՝ ի բոլոր կառուցման կարծրանիւթ մարմնոցն սեռից, եթէ ոչ՝ ի բանէ բանին ունողին զգոյս՝ աքանչելի փոփոխմամբ՝ ի նորոգ գոյութիւն գեղեցկապէս արծարծեալ շրջելին։ Որ ան զի նորն Ադամ վայելչապէս փառազարդեալ՝ ի նմանահիւթ տնկոյն մանհայուն, կամակար մտաք զբազուկն անարատ բևեռաք սևեռեալ՝ ի տերևաստղարթ տնկոյն տեսակ ամրափակ ուղերձեալ, գարձեալ զհրայանկն գաւթի ընդարձակայարկ յատակաց վայրկեան Ադինայ եբայ հնոյն Ադամայ։ Այս զնախախատուստ բոյսն հեզաստղարթ պտղովքն անուշիւք՝ ուստի արտաքս նա անկաւ ըստ պարտուց, պիտակն՝ ի պարտուց՝ ի հասարակ անուն փայտն վշտացեալ, գերազարդեալ թագաւորէն պճնուելիք՝ ի կառափեալ գագաթն՝ սեռհականեաց դարձեալ նմին մարդոյ յաւիտեան։ Այս՝ ի սոյնս կառուցեալ՝ ի գործի անիծիցն մահուան՝ կանգնեցաւ սուաւ բռնութենէ մահու ընդդիմամարտ և վանիչ ախոյեան. ուստի յաւէտ նորոգմամբ կացին արարածք՝ ի ձիրս շնորհի նախամարդոյն առեղծողի։

Ե. Ո՛վ մեծի անպատմելի և բաղձալի երանութեան որ շնորհեցաւ մեզ. ոչ՝ ի ձեռն բռնոյ արդաւանդ

դաբեր սաղարթիւ, ՚ի բնակութիւն հոզակոյտ բլրոյն Լասանու, և կամ բարձրաբերձ մայրիւք սանայիրա սերմ ծառոյն, և կամ թէ զՀիւղս ստեղնաձիւդս նռնձիաձաղձախն անտառաց ՚ի մէջ առեալ բանիս երգուածիւն գովեստիւք հռչակէ. այլ փայտ մահատեսակ աչաց զգալեաց, ունելով թաքուցեալ առ իւր զարմանան կենաց. յորում կենարարին մերում մահացեալ մարմինն մեղսօրէն գառամամբ, ՚ի հայրենի պարգեւաց սիրոյն երախտեաց ըստ պաւղոսեան իմաստասիրութեան ձառից՝ պատարագ մեզ փրկանաց և դրաւ Թողութեան մեզաց: Օ ի զանուշնակն յանցման զանդրանիկն որդի՝ զմիածինն ծնունդ ծածուկն ծոցոյ՝ ՚ի պարտիս պատժոց մեղուցելոց ՚ի ծառն անիծից մահապարծակն օրհնութեան առիթն խաչի կամաւ ընծայեաց: Վանդի առ սովաւ հրաման սոսկալի կամացն հօր՝ յորդին աւարտեալ, որ շարժեալ ՚ի փրկանս հօտին ցրուելոյ ածեր զսուրն ՚ի վերայ հովուին սիրելոյ. Օ արթիր, ասէ, սուր ՚ի վերայ հովուին իմոյ ընտրելոյ. զի քեւ զնա հարեալ սպանիցէ, և զՀօտն ցրուեցից, և դարձեալ ՚ի սպառ առիս իսկ պարուրեցից:

Զ. Յաղագս որոյ և զնոյն փրկօղ հովուոյ անուն նախաձայն յայտնութիւք տեսանողացն միաչակ իշխան լինքնակալ՝ գոյից տիրօղ տրոհմամբ տիրապետ՝ իւրաստեղծն հօտից տածօղ՝ բազկաձիգ գառանցն ժողովօղ՝ ՚ի հեռուստ նախապատմեցին. Ձեր հովուեսցէ, ասէ, զԻսրայէլ. և, ո՞ տէր, որ հովուեսցէ Յակոբայ ընդ տանն Եփրեմի, հայեաց ՚ի խաշինս քոյոյ կամացդ արօտի: Վոյն դարձեալ յաւելու ՚ի ձառս ազգման այսմ հովուի գուշակման. սա է, ասէ, ՚ած ՚ած մեր, և սա հովուեսցէ զմեզ անփոփոխ և անսահման ՚ի յաւիտենից մինչև յաւիտեան: Ընդ սոյն յարմարեաւ և զերդ երգողին, որ յայտնէ քեզ զիղձս բաղձանաց հարսինն ՚ի սէր փեսային. ո՞ւր հովուես քաղ հովիւ, ասելով, ո՞ւր հանգուցանես ըզհօտ քո ընտրեալ ՚ի մէջօրէի, հովանիդ խնամոյ նոցին կառուցեալ: Օ սա և Եսայի առաձգեալ յերկրէ յերկինս ամբարձեալ. և հովիւն հօտին կարապետ անտանօր ընթացեալ: Այս որ հովիւս՝ լինի ՚ի մեծէն

Յովհաննէ և զառն դաւանեալ. քանզի իբրև զգառն անմեղ ՚ի զենումն ածաւ, և իբրև զոչխար անարատ ՚ի սպանդ մատուցաւ ըստ Երեմիայի և Եսայեայ: Եւ այս հովիւս հզօր Աչմարիտ, Աշխրատաբանուէ միշտ նշանակեալ եդ զանձն իւր վասն ոչխարացն, իբրև զգառն անարատ ՚ի վերայ սպանդի կենսունակս խաչի: Եւ զնախատինս նախատչաց հօրն իւր քամահողաց՝ որդին հարազատ՝ հնազանդ հաձուելէ յանձն իւր ընկալաւ: Եւ առաքեալ զհոգի մարդկութեն ՚ի ձեռն նորին ընտրական քննութեէ իբր զբուրումն անուշից հոտոյ կնդրկաց ՚ի հաձոյի հաշտուէ մարդկան փրկութեէ:

Ի· Եայց զի՞նչ էր արդեօք պատարագարան կամ սեղան ընծայարան, ուր մատուցաւ զուարակս փըրկանք նորոգմանն: Ո՛չ ՚ի բլուր բակնեաց բաղմանիւթ բարձրաբերձ ձեռնաստեղծական սեղանոց կշռեալ քանակի անմահ զենումն, այլ ՚ի փրկանիւթ քառադէմ չքնաղակերպ երկնահանգոյն սրովբէական տիպ քառաոտնաձեայ չորեքկերպեան անօթս խաչիս: Ո՛չ ՚ի սողոմոնեան սրահ տաձարին՝ որ զանբանիկն ջոկս ամփոփէր, այլ ՚ի գիրկ միջոյ բնաւին աշխարհի, հողաճին զարմիցս ծնողին, ընդ վերնայարկ անձեռագործ երկնից կամարաս, հանդէպ դամբարանաց ՚ի նմա կառուցեալ լուսածագողաց· որպէս զի սրբութէ յաւէտ առլցին երկին և երկիր զանձեալ աստուածածնէ: Աստի և զանաղօտ ծագումն ընկալեալ, և լոյս ՚ի սմանէ էիցս զգեցեալ, ծխալից շարաւ վիշապին, չորիամիգ մեծին ատուերին մեայլ, շամանդաղ նսեմ խաւարին ՚ի սպառ խակ ցնդմամբ ՚ի բաց փարատեցաւ: Եւ սուսեր մահաձին մարտի յաղթանակ, ընդդիմակ միջոց միջնորդաց երկուց՝ եղծման և նորոգութէ, կենդանարար նշան խաչիս ատոյգ ծանուցաւ: Եւ Աչգամն վերին ՚ի լուսին ներքնոյս փառացն լքման, եղականապէս փոխառնեալ· քանզի զհոգին ներհակ ընչական կարեաց անփորձ յանցանաց, ՚ի հիւթ զանգուածոյ հողաճինն մարդոյ ՚ի լուսանորոգ խաչիս աշտարակ պարտաւորապէս առ հայր արձակեաց· վասն որոյ զապականագիրս մուրհակն պարտեաց նախնոյն յանցանաց՝ աննորո-

գելի եղծմամբ պատառեաց ։ Եւ զփախուցեալն յընտրականութենէ դատման օրինին նախատուր կտակէին, տիրաւանդ արարչապարգեւ սահմանին, ձգմամբ ձեռաց ՚ի խաչն պարտեաց՝ զնմանասեր զանգուածն ըմբռնեաց . վասն որոյ երասանաւն հանդարտութենէ զանկիրթն վարժից կալմամբ կապանաց հաւատոյն յաւծ՝ յորդեպրութենէ կարգն վերաձեաց ։ Եւ իբր ոչ ՚ի կամս ստեղծողին կամաւ նայեցօղ ստեղծեալ պատկերին կեցուցանօղն՝ ՚ի սահմանադրեալ միջոց պայմանի վձռին վրիժուց կանոնական անիծից զինքն հեղուսեալ, վերացեալ բարձրացեալ և մերկ մարմնոյն պնդեալ ՚ի խոշոր և ՚ի դժուարակիրն այն ապաշխարան, սեւեռակապ և խստասկնդ բնութենէ բևեռեաց։ Վասն որոյ և զընդվզեալն ապստամբութենէ ՚ի համբերատար հաւանութենէ, հպատակութենէ խաչին խորհրդոյ մատոյց մածուցեալ. առ որ և հայի խոտորնակին ձևոյ յայտանկատ տեսարան ։

Ը. Եւ արդ՝ զինչ է իմանալ իմաստութենէ սրտի զհրաշանորոգ և զնծակերտ խաչիս եղանակ. արդեւք տիրակալն ինչ գոյացութենէ, եթէ ստրկային սկզբնաւորութենէ. ազատականին դիտմանն տեսութիւն, եթէ մարդկեղէն ինչ իմաստութիւն. արարչականն գծագրութենէ, եթէ ստրնայինն սկզբնաւորութենէ ։ Զարդարև ոչ մարդկային յարմարումն ինչ իրի, քան թէ վերնային զսա նուագեմք ։ Վանգի ՚ի զանազան տառից զշարադրեալ բանականիս էութենէ, որ ՚ի զանազան մասանց շաղկապեալ աւարտեցաւ ՚ի մի բոլոր լրութենէ, սա ՚ի շեմարանս հասեալ զգայութենէ նոցա իմաստից զքառահիւթ խառնուածոյ թանձրութենէ մարմնոյ ՚ի թևս իւր կախեալ խաչակիրն ժուժկալութենէ, ՚ի հոգի անօսր զպահեալ փոխադրէ. և իբր քառակղեան ստուար առաւանաւ զնորոխտականն ՚ի մեզ սանձեալ յարձակումն. և որպէս ՚ի վէմ ամբարձմամբ հանեալ զծանրութենէ մարդոյս խակուէ, երագ սլացմամբ յիմանալին գերամբարձեալ՝ ածութենէն ընծայեցուցանէ ։ Վյաւքիկ ածագործ և անձառանշոյհ խաչիս են զօրութենիք, զորս ընթացք բանիս գուշակէ. մինչ զի ցմոլորական մտաց խակուէն զգաստ յարմարէ, զանբանական վրընջողութենէ ասուն կէնդ

դանեաց՝ ողջախոհաբար զգօնացուցանէ, զայլանդակականն օտար տեսութիւն՝ ընտանի զօրութիւք աղէն համեմ, զանհարթութիւնն՝ ի պատշաճականն՝ ուղղակի միաւորութիւք հանդէպ հաւասարէ ըստ քառակ դիրն ձևոյ պատկանատեսակ պատկերի իւրոյ։

Այլ մեք ըստ չափոյ կշռութիւն զօրութիւն մերոյ կենդանարար նշանի ՝ածեան խաչիս այսուհետև ձօնեսցուք ձայն մաքուր ընծայիւ քաղցրաբարբառ բանից օրհնութիւք։

Թ. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ անբաւ հանճարոյն՝ ամենակատ տեսութիւն աչացն՝ յարմարական ձևակերպութիւն քեռեան նշան. որ և ՝ի սկիզբն գոյանալոյն յէն էակացս՝ տարածումն յատակաց գետնոյն կառուցման, ՝ի գուշակութիւն քումդ օրինակի ՝ի կայս քառանկիւն կերպի հաստատեցաւ։

Ժ. Յարեբանեալ ես կենդանակիր ՝ածեան նշան փայտիդ փրկութեան. որ ՝ի հազարաւորս բիւրուց բոցեղէն զուարթնոց՝ զզարմ զաւակի մարդկասերմ բուսոց բանական բազմաթիւ բնութես՝ քև դաստիարակեալ ՝ի կիրթ կցորդուն քումդ հաղորդութե, խրատ խոյս հանդիսիւ միախառնութե դասակցութիւք՝ միապար երգակցութիւք ընծայեցուցանես ՝ի քեզ բազմելոյդ մաքուր օրհնաբանս։

ԺԱ. Կռվեալ ես նշան փրկական փառացն Քրի. որ մահատիպ տեսակաւ զկենացն ունիս զպարգև. զոր յերդագիր տառան իմաստունն Հոգեանիւթ հոսանաքն նախագիծ դիտմամբ նկատեալ զհրաշալի քո խորհուրդ՝ բացերևապէս լինի գոհաբան ասելով, օրհնեալ ես փայտն որով լինի արդարութիւն։

ԺԲ. Կրուատեալ ես ՝ըբ պանծալի նշան հրաշազան խաչիդ. որ ՝ի դրութիւն դիմակացն քառակուսեան լծորդացն, զուգակշիռ հետևմամբ, անկարօտաձեմ ձախրանօք բազմատեսող յոքնաչեայ քրովբէականիւթ ձևացեալ կառացն, սերաբփին սիրասուր սլացմամբ սխրասարաս սաւառնմամբ, անսայթաքական գնացիւք զքոյդ Աշմարտէր աքանչելատեսիլ երևումն կանուխ յայտնութիւք։ Վանգն անիւ ՝ի յանիւ խառնեալ խորհրդիւ, զդրութիւն խա-

չիդ անփոփոխադիր տեսակ ՚ի յինքեան նկարեր, զոր դի կենդանի էին ազդեցման՝ իբր զքո անդատապարտ դաշափար յինքեան ընկալեալ։ Այս և այլասեռ նիւթոյն հալուած յելէքտրիոն անուոյն կազմած՝ զքո փոփոխումդ ՚ի բացուստ նկատեաց. քանզի ՚ի վերայ քո հնչեաց բարբառ ձայնի այլ Աստղայի։ Ուստի և յայլ ոտիցն տեղիդ, գեղեցիկ երդաբանութիւնք զանեղծն իսկութիւն ՚ի քեզ պսակեն, օրհնեալ փառք ՚ին ՚ի տեղւոջ իւրում։

ԺԹ. Երանեալ ես նշան զօրութեան արփնափայլ խաչիդ. զոր տեսանողին նախադիտութիւն հոգելից բանի՝ աթոռ բարձրացեալ և վերացեալ ամբարձաձիգ ձգմամբ գուշակեաց այ։ Եւ պաշտպանեալ սրովբէադումար շրջապարուրք սաւառնացեալ թևոց սլացմամբ զբաղմեան ՚ի քեզ երրորդական սրբերգեանութիւք, տէր զօրութեց դասուց անմահիկ՝ աւարտեալ ձայնիւ վնոյն դաւանեալ. զորոյ իսկութիւն ծածուկ խորհրդոյ՝ պարզ և մեկին յայտնեալ Յոհաննու՝ տեսիլ փառացն ասաց Ինի։

Ի Օ. Օրացեալ ես և պաշտեցեալ անպատմելի պատուով նաղելի նշան. որ ՚ի գուշակութիւն նշանակութիւնք քումդ խորհրդոյ զպատերազմական մրցման մարտին զտեսակ և զինդիր վրիժուց տանն Իսրայէլի գերեցելոցն ՚ի Բաբիլոնի՝ յաւարտումն ամանակի դարձին Յակոբայ, երիվար աշխատ կարմրերանգ գունոյ մարգարէին ընտրելոյ ՚ի խորհուրդ ծածուկ նախաձանուցար։

ԻԱ. Խաչին փառաց մեծութենն հօր նշան պաշտելի. որ նախ քան զՀնդմարիտ շնորհացդ քոյ յայտնութիւն, յօրինակին տեսութիւն հայեցեալ Եզեկիէլի՝ և հրաշալի հիացմամբ տեղի տուեալ սքանչելեացն ՚ի փախուստ պակեալ շրջեցաւ. և ՚ի քեզ անդրէն վերսին ՚ի ձեռաց անեղին զօրացեալ դարձաւ։

ԻԲ. Ընդ ածային անաղօտ և անպարագիրս մարմնոյն Ինի միացեալ խորհուրդ պատուելի խաչիդ։ Ոչ անգի իբրև զերևակ նմին և տեսակ կոչիս կրօղդ ինքեան նշանակ. վասն որոյ պաշտի և երկրպագի ամ ջարչարեալ ՚ի քում պատկերի։

ԻԳ. Ամատ անթարշամ զարդու Աւետի՝ նշան զո-

վելի : Յորոյ ապացոյց նախանշանակ մարգարէն ընտրեալ որոշեաց՝ ի քարանց յոքունց զփայլակինանըշոյլս : Եւ զօրինակն ձշմարիտ քև փառաւորելոյ՝ ի քառառաջս նոքօք պաշնեալ պաճուճեաց, ՝ի բերս շրթանց բանաձարակ որոձման, ՝ի կոչումն քառից զքեզ համբաւեալ : Յորոյ օրինակ քումդ անեղ ծուխեան զմայրն ընդ նոձոյն, և զսարդն ընդ սօսևոյն ՝ի պատճառ փառաց մեծին այ վերանուաքեն :

ԻԸ. Ոտոտվեալ գումարուխեան բանական հօտից նշան արարչաստեղծ. որ ՝ի վաղնջուցն կանխուխե զքոյդ տպաւորեալ զարմանագործուխի ՝ի գումարտակ երամոյ գառնածին հօտից տանն Աբանու : Վանզի ՝ի քոյդ նշան գեղերփնեալ զուղեշ սիգնանի՝ քումդ շառաւիղի, որ ՝ի գոյն արեան որակի ներկես զազգս այլազեղուս բազմաթիւ զարմի : Եւ կամ զդարձեալս ՝ի հակակայս խայտաբղետուխե մեղացն գունով, ՝ի մի աւազան ջնորհիւ մաքրուխե զամենեցունն տեսակ ընկղմեալ՝ միում Յոի քան թե Ասրայելի ընծայեցուցանես :

ԻԹ. Ասկապէս լուսով նորոգեալ քեհան նշան. որ ՝ի յանմատոյց փառացն այ լուսաւորեցար. մինչ զի նկարագիրն կենդանաստեղծ երեսաց մերոց հոգի տեր Աստ՝ ՝ի պատկեր տեսակի մերում քև նշանակի : Որ երբեմն նոյն ինքն ՝ի քեզ ե յայտնի հանգուցեալ, որպէս և դու ընդ նմա ես միշտ միացեալ :

Ի. Ասւսաւորեալ ես ամենազօր նշան խաչիդ փրկուխե : Որ ՝ի սաղմոսանուագ երգոյն յորդորման զքեզ նկար մարմնոյս պահապան ՝ի մեզ ընկալաք նշան փրկուե, անմարտնչելի սլաքին հարման և չարին աղեղան ներհակ դու վահան :

ԻԱ. Ասոտովանեալ ես խորհրդարան մեծուխեան ելին, և նշան պարծանակ մահու յաղթողին : Վանզի զի քև ձիաւորեալ գունեալն ձորձով ըստ մեծին Յակոբայ յարիւն խաղողոյ, արագ ընթանայ ՝ի դրժուարակոխ մեծին շառմարան խորին դժոխոց՝ աճապարին հոգւովն լոյս ծագեալ : Օ որ և Դանիել աղդեաց մեզ յստակ, որ կայ ՝ի խաւարի, և լոյս ևր ընդ նմա փայլէ համարձակ :

ԻԲ. Ընծող զմեզ վերստին ի մահն Քրիստոսի նշան առաքելական. զոր սկզբնաւորն բարեաց Քրիստոս միրուրիւն և բաժակ լուացման մեղաց և արբման կենաց զքեզ դաւանեաց։ Նոյնպէս զկոյրդուրեն փառաց խնդրողաց որդւոցն որոտման, զկենսաւնակ խորհուրդ քո աղդեաց։

ԻԳ. Կացարան անբաժանելի հրաշից անմահին Քրիստոսի նշան անպարտելի։ Վասնզի քեզ գօտևորեալ միջակինդ ամրութ բանն մարմնացեալ, տիրեաց յոքնաթիւ ազանց հեթանոսաց. ի ջնորհ որդեգրութեն ծնողին իւրոյ զամենեսեան զմեզ հրաւիրեալ։

ԻԴ. Հանդիսակիր նահատակութեն նախկի վկայելոյն խաչ անեղակերտ։ Վասնզի ի քեզ ծանուցաւ բևեռեալն ած՝ մարդ երկրորդ՝ ստեղծիչ առաջնոյն։ Նա նա որ տարատրոհեաց ի կենաց դրախտին զկողին պարտակից, նոյն գարձեալ ի քեզ զմահակիցն ինքեան յայն վայր ցանկալի եմոյծ հրամանօք իւրովք վերստին։

ԻԵ. Ձօնարան ընծայամատոյց գառինն անմահի խաչ ամենազօր։ Վասնզի լուսին և սկիզբն առաքելոց և մարգարէից, մաքրութեն կարապետն և բարչին նախընթաց, զբազմեալդ ի քեզ գառն անարատ այ և հօր, ի միրուրեանն աւուր մատամբն յայտնեաց։ Օ ի բարձոյն մեղաց բնաւին աշխարհաց՝ զանձն իւր ի վերայ քո պատարագ նուիրեաց։

ԻԶ. Ո ամբար անշէջ և անստուեր բոցով պայծառ փայլատակեալ նշան ամենագով։ Վասնզի ի քեզ անպարունակն ած մարդացեալ՝ արտաքոյ բանակին ածուրեն ամենածախս հրոյն ի չարչարելն ողջամբ կիզեալ՝ սրբութեի մեզ ցուցաւ։ Որ և անմահն անշնչութեբ ըստ առակաւոր զոհիցն կիզման՝ զձարպ հնազանդութեն՝ հօր ձենձերեալ՝ զնծային հոգին բուրումն անուշից կնդրուկ հաշտութեն նմին ախորժակ յերկինս արձակեաց։

ԻԷ. Ձեմարան և ընդունարան երկնից արքային նշան ածընկալ։ Ահա են սքանչելիքն այ առ քեզ, քան թէ ի վրան Սողոմոնի. զի ի նա միայն աստեղք լուսատու շրջան առնուն ձեռներով, և վարագոյր տարածեալ ի մէջ փառացն այ։ Այլ դու

զճաճկեալն ՚ի նմանէ յայտնի շօշափեալ մեզ ընձեռեցեր. և ՚ի ձաշակումն հաղորդութեանդ կենացն հայցի՝ լուսաւորեալ զմարդիկ մատուցեր։

ԻԸ. Աբրութեան և բժշկութեան ախտիցն մեզաց՝ քոմաճիր նշան կենսատու խաչիդ ՚ի քեզ նորոգիչն խնամովք ՚ի ստորինս երկրի հետևեալն ՚ած՝ զտիղմ չարութեանդ ժահահոտ յանցուածոց հրանշոյլ և անշէջ բոցով տոչորեաց։ Օ որ հրեշտականացն Աստուածութիւնս քոյս աւետարանեալ կանուխ մեզ ապդեաց. Օ՜ա՜ գեղից երկիւղածաց իմոց արդար արեգակն՝ բժշկութեան թևովք սլացեալ։

ԻԹ. Յանվախձան փառացն հաղորդութեանդ զմեզ հրաւիրող երջանիկ նշան։ Ո՞ւր հաւատչեայ ուխտի խոստացեալ ընորհի աներկևեան ցնծութենէն։ Ո՞րանզի դու ես փոխանորդ գրաւական աննմանական բարեոյն հանգստեան։

Լ. Նախահետևօղ վերնական անճանօթ և անընտել ամենանձուկ ճանապարհին փայտ նորոգութեանդ։ Դու տիրապէս միշտ առաջնորդես զքեզ սիրողաց յերկիր կենդանեաց, խրամատեալ ինքնիշխան քո ընթացիւք՝ զգանկն անջրպետ սրոյ սրովբէին։

ԼԱ. Ճ նորհատուր աւանդ լուսոյ պարգևաց էին կեցուցիչ նշան. որ թէպէտ ՚ի սահմանելն քառից տարերաց զգայականաց զետեղեալ որոշեցար, սակայն անդր քան զուշ խորհրդոյ իմաստից գերազըգպէս բազմեցար։

ԼԲ. Աւնօղ յաղթութեանդ զօրեղն ուժգնութեանդ տիրական արուեստից մարմնաւոր անտեսութեանդ բնակողին ՚ի քեզ նշան ամենազօր. որ ՚ի յայտնութեանն իբրև առակաւ պատմաբանեցար ՚ի տեսողէն, զանցեալն իբրև զապառնիս նշանակեալ, գառն հեծեալ ՚ի ձերմակ երիվար, և զդիմեցումն ժպրհութեանդ վերշռալին վանեալ։ Աստի և խոստովանեցաւ ՚ի վերին աթոռոյն շրջան բազմելոյն, տեր ամենակալ, որէն և որ էր, և որ յապայն յուսով յայտնեսցի։ Որանզի արդարև ՚ի քո դէմն լուսանկար փրկութիւնքս այսոքիկ յանկեալ առլցան բարեաց լրութիւն ՚ի փառս անեղին։

ԼԹ. Զորեքծագեանս եղերայց տիեզերայց կնիք պահպանական նշան աւետաղօր։ Որ խեթիկիչ եղջեր օք քառալծորդ զուգութիւ՝ յագեցուցանես զցասումն այ ըստ Ովաբդիայ՝ի չարին գումարս։ Եւ ձիրնթաց երագմամբ՝ի կոյս ջրոս դիմեցմամբ՝ զազգաց և զազանց զսիրտ նուաձես ուղղութիւ՝ի զգաստութիւ միոյ երասանի սնդուէ։ Ա՛յս զի և խորհրդական տեսչութիւ՝ դէմք հետոց կառացն՝ի բնակութիւ կոյս քումդ հանգստեան տեսաւորեցան։

ԼԹ. Պայծառանշոյլ Քահ վեհին ծագման փրկչին Յի նշան անպարտելի. որ վաղաղեկոյց ազգմամբ գուշակեցար՝ի գրոյն նկարեալ. յորոյ օրինակ նահեանն Յեսու մանասեան՝ Յովսեփայ բողբոջն անգրանիկ, իբր նախատիպ մերոյդ կատակի, զքարինս ամիսփեաց՝ի Յորդանան՝ հնոյն Իսրայէլի նշանակ ուխտի։ Ա՛յլ զքեզ փրկութիւն յոյս երկնիցն վառաց նորոգն Յի հեթանոսաց ետ եկեղեցեաց։

Լ. Ջրոյն կենդանւոյ նորագործն աւազանի՝ մաքրարանդ նիւթ՝ նշանդ երկրպագեալ. որ իբր խմոր անապական կենաց զանգուածոյ արկեալ յարգանդ մօրն եկեղեցւոյ, զառընկղմեալսն՝ի տգեղ գունոյն յեղեալ փոխոխես, և յընտանութի արեանն Յի ներկեալ զարդարես. և նորոգ ծնեալսդն ծածկոյթ լուսաւոր զԻ՛ զանձամբ արկանես։

ԼԱ. Ահ կենսաչուխ Ճանապարհի արդարոցն՝ խաչ փրկչին հետևակ։ Ո՛րանզի ախորժոտչոյն զերկնիցն կայան՝ զքեզ եդ առաջի բանալիք բացարան. իբրև զընդակիկ դաստիարակարան, տուեալ մեզ զքոդ տիրական հետոյն ուղղութիւ։

ԼԲ. Սուր ածամուխ բարձրացեալն այցելութիւ, նշան աքանչելարուեստ փայլակնաձև փայլմամբ յերանեալ. քառասայրեան գոլով բերանաւ, ի ձեռն աջողակ աջոյն Յի յեղմամբ շողշողեալ։ Որ՝ի փըրկութիւ նորոգման մարդոյն՝ զՋիլս ուժգնասիրիկս չաբլին խստուէ քև հատեալ, ի սպառ պարսրեաց զօրեղ երթմամբ՝ի խոր խոցոտեալ, անպատուաստելի լուծեալ խորտակեաց։

ԼԳ. Ա՛յսմ մեր մարդացելոյ արարչին ազգումն ածային խաչ խորհրդական։ Ո՛րանզի դու դիւրա-

կործան բարուց հրեից խակամտութեն՝ գայթակղութեի, և արտաքնախորհուրդ հեթանոսաց հռետորաց հանձարախոյզ խնդրանացն՝ յիմարութեի։ Այլ ա պաւինելոցս ի քեզ՝ վեմ ի հաստատութեիդ արձանացուցիչ։ Ի վերայ որոյ Պաւղոս չինեաւ զՀաւատս՝ ի խորհուրդ քումդ փրկութեե զգործն աւարտեաց, և զմինն Աստուած անձառիւն մեկնապէս յայտնեաւ քարոզեաց. և զծայր կատարածի ընթացից բանին ի քոյդ գլխաւորեալ ուխտակցութեի կամաց առաքչին։ Այնպէս քեզ ընկալաք ի մեզ զԱստուած ըստ րութեին և զիմաստութեին։

ԼԹ. Տիեզերաց բաժանեալ աղգաց հրաւիրակ կոչման ի մի եկեղեցի նշան հաշտեցուցիչ։ Այնպէս հեշտապէս մարդահոյլ հօտից բանի ունողաց իբր գործի հնչման սաղմոսաց հոգիատաւիղ քնարահարութեե՝ դու առաջնորդեաս, քան թէ անբանից ջոկաց հաւաքման։ Այնպէս ի վայր գալարի անդորրապէս յուսով հանգստեան զամենեսեան գրգեալ պարարես։

Խ. Պախճան պատճառ հաշտութեե ամն անսկզբան ընդ ծառայն սխալական՝ նշանդ խաղաղութե։ Այնպէս ի վերայ քո նուէրն բարեաց փրկողին արեան մեծաբարբառ առ նա յերկինս ձայնեաց։ Այս որպէս Աբէլ որդի Ադամայ՝ մահու գտաւ գուժատու, այսպէս և դուն կարապետ կենաց յարութեե ես աւետաւու։

ԽԱ. Յանկացողաց երկնից փառաց նրբական հետս շաւղաց նշան լուսապարգև։ Այնպէս քեզ իշխանութեի մոլեգնութեե չարին պետուե յաւէտ կապեցաւ. և ձանապարհ մտից դրախտին լայն և ընդարձակ մարդկան հորդեցաւ։

ԽԲ. Վերք ածային ընորհացն գուշակման քոտառաք նբ մարգարէիցն ի քեզ հանգուցեալ նշան հրաշագործ։ Այնպէս զվաղաբարբառ երգոց նոցին կատարումն Ցե՝ հեծելութեըն ի քեզ կրեցեր. ուր ձաշակմամբն լեզուդ ընդ զմռսեալ քացախին՝ զամենայնն ի լրումն ածեալ աւարտեաց. և փառաւորեալ մարդացեալ որդին այ, զերկրպագութեի յիմանալեաց և ի զգալեաց՝ ի մի անունն Աստուծ կրկնեաց։

ԽԳ. Փառք անփոխանորդելի երկնից արքայութեն ժառանգողի նշան լուսապաճոյճ։ Վանդի զյառաջադրութեէ խորհրդոյ կամաւոր մահուն իւրոյ Յն քարոզեալ, զայս քեզ անուն սեպհականեալ հաստատեաց։ Ոգով և ժառանգեաց զփառս սրբասացուե միշտ օրհներգութեէ, որպես 'ի վերնոյ՝ և 'ի ներքնոյ խաղաղարարն տիեզերաց, որ զթշնամութեին հին 'ի քեզ նահանջեաց։

ԽԴ. Վաղաքիս լուսոյ՝ նոր Երուսաղէմի մահարձան անմատչելի։ Վանդի զմոլորեալսն ստոյգն Թիւր դաւանման՝ որք առաչս երևումն զմարմին բանին մարդկութէ համբաւեն շրթամբք նենգութէ, դու ցրես զնետս չարութեն՝ ընդդէմ կառուցեալ անվան նը արձան։ Եւ հաստատես 'ի գիծ քառանման պատկառելի քոյին տեսութէ զանյայտն հեղուսեալ, զանմարմինն բևեռեալ, զանմահն մահացեալ, և մերայնով՝ հօրն անեղի իսկակիցն որդի՝ 'ի չափն քո զՆազանդութեին աւարտեալ։

ԽԵ. Ոչ այսքանեօք և այսպիսեօք, և ես ընտրականօք բարեզարդ քառիւք միշտ բարեբանեալ քեեան նշան. որ զծածադործ պատուաստ պարծանաց պատուոյ պսակին՝ 'ի ձև պատկերի քումդ տեսակի մեք ժառանգեցաք։ Եւ մուտն անձուկ դրախտին սենեկի՝ 'ի բոցեղէնն սրոյ պարփակեալ, քեւ մարդկան ազանց հորդեցաւ։ Եւ սիւնհոդոս կաթողիկէ անսասանական վերինն Սիոնի՝ սիւն և նեցուկ նորին ամրոցի հաստատ պնդութէ դու խարսխեցար։ Ոսն այսորիկ խոստովանութէ յօդակապս բարառնուէ՝ փոքր և նուազ ես քումդ հիացման. որ զերազանցդ ես բանից գովութէ։ Ո՞վ թէ ստեղծիչն էութէ 'ի քեզ ծանուցաւ, ապա զորպիսի՞ ընդունել խոստովանեցայն երկրածինս մարդ 'ի քոյդ վստահացեալ անեղծ զօրութիւն։ Ոպա այսուհետև զերազանց սին նուազագ, խնացական մնքուր նուիրօք, և մտաւորն պատարագօք օրհնեալ խնկեալ և գովեալ ես 'ի սահման անաւարտ և անստուերս յաւիտենին, նշան պայծառափայլ, խաչ տերունական. գործի փրկչին յաղթուէ, նեցուկ մեր հաստատուէ, ցուպ բարի հովուութէ, կնիք ամուր պահպանուէ,

զբաւական միշտ խաղաղութեամբ, պաշտելի հրեշտակաց և մարդկան, ահարկու դիւաց դիմեցման, դատապարտիչ նոցին յաւիտեան։

ԽԶ. Երկնեալ ես, փայտ կենաց, որ դու միայնակ, լուսոյ ընդունակ, ի փառաց անքակ, ընտրհացն գտակ, երկրի երեւակ, ծագմանն դիտակ, արարչին խոնարհակ, միջնորդ հաւատարմակ, ամուր աշտարակ։ Ոյ սան որոյ ի յաւարտումն լման ջրհանակի եւթնեակ դարուց վախճանի, յորժամ բնութիւն նիւթոց լուծանի, միայն դու ի նոցանէ հիւթ անհնութիւց վեհագոյն, ձկտեալ ձգիս ի բարձունս երկնից փայլակնանման ի տես հայելման ամենայն էութիւն յաւուր դալստեան անմահ արքային։ Այս պյաղթանակ փառացն Քրիստոսի յայնժամ ի քեզ լրմամբ առներեալ, պարծեցուցանես ի պայծառութիւն քումդ տեսակի զբև պանծացեալն։ Այս փայլումն նշուլից անօրինակ քո դեղոյ յաշխարհ տարածեալ, տեսակ լրութիւն մեծ լուսաւորացդ տարերականաց՝ ի քոյդ ապաստանեալ տիրական ծագումն, աղօտանուագ և անճագելի ստուերիւ ծածկեալ մթամանն։ Այս մարքուր ընտրութիւնդ՝ որ պատմուճանին, անդատապարտ համարձակութիւնդ, ի դէմս անպատկառ գեղոյ երեսաց, ի հոգի ընտրհաց, ի յոյն կենաց, անբերօղ պարտեաց՝ չարին յանցանաց, ի հանդերձ փառաց ընտրհին հրեշտակաց միշտ երգեցողաց, զգուշական և աննիւրհելի փառաբանողաց, զերկրպագուս քումդ նշանի զուգապարակեա։ Ելերևս որպէս յերեկս աւարտման աւուր այսմ յաւիտեան, արժանի լինցուք և ի սկիզբն վաղորդայնի մշտատիւն ժամու՝ փառաւորել զքեզ կենսատու ի կանուխն ժամանութիւն և յանագանն յարաձգութիւն, ի գիծն լայնական և ի մակերևութիւնն հարստական։ Որ ես միշտ բարեպարական երդաբանութիւնք երկրպագեալ, ընդ արեամբն մխեալ, և զէն նորին զօրացեալ, որ է ի քեզ, ընդ քեզ և առ քեզ ի միջոց տարածման երկնաթռիչ և փայլակնընթաց խաչիդ ձևակի։ Որով վարժէ և յարմարէ զմեզս կրօն անանձնապետ դաստիարակութիւնդ ըստ քումդ խորհրդոյ, անանձնապետ միականութիւնդ բնակեալ բազմեալ միացեալ, և ոչ հեռացեալ։ Որով

ըմբռնեն զսարտուցեալքս ի լուծդ ածեալ ըղձալի. և ինքն ըմբռնի բովանդակապէս քեւ ի միջնջ ասա և ի հանդերձեալն ապառնի: Յաղագս որոյ ի գովեստ ներբողական ձառիս վախճանի՝ նմա փառք Յիսի Քրիստի ընդ Հօրն և ընդ Հոգւոյն աղբակցի, ի խոստովանութեան զգաւանութեան միոյ և միայնոյ պատուելի և պաշտելի երկրպագելի աբ Աստուածութեն: Ամէն: Ամէն սահման գովութեի երգոց, ըստ անկեան խոկութեե և ըստ անկշիռն իշխանութե, ըստ էականն յարակայութե և ըստ արարչականն զօրութե, որպէս ի սեղծօւածն առաջնն, նոյն և յերկրորդ գոյացուցանելս նորոգմամբ, և ևս առաւել յանփոփոխ և յանղգական յաւիտեանս. Ամէն:

Ի սոյն կարգ գասեալ էր զմիաշաբ խորհրդոյ տեսակ՝ ընդ ներբողենի խաչին խորհրդոյ՝ և զգովեստ երգաբանութե Տիրուհւոյդ:

Ա. Զ ՈՒՄԱՐՔ խմբից գասուց երջանկացն պատուասիրեն բիւրաբեղուն բանիւք գովեստի զսկզբնաւոր նալոյսն կենաց գոյից ի կիսս բանից ըղձաձայնութե. և որպէս փողովք տաւղօք և քնարիւք զգայական սրտի շարժեալ զգործի՝ զերազանցեալն ի լոյս անմատոյց ուրախութե վերադրուատեն: Այս զանձառ արարչութե հրաշագործ ամենաստեղծն տէրութիւն օրհնելով՝ պատձառ փառաբանութե խոկութե հաստչին զհաստուածոյս առնուն գոյուե. որպէս և ձշմարիտն բան ցուցանէ, ի ստեղծանելն ինձ զայս ամենայն, բայց զօրաց գասուց երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին զիս: Այս արդ՝ եթէ հրաւիրել և երաժշտութեացն փառաբանչօք վերնաձուիչ պատգամաւորօք հոգիանութե և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի. որ թէպէտ և նոքա վերջ են բնակութե կայից ստորից, և նշոյլ երկրորդ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ անտեսաբար տպաւորութե առ բնութիւն բարի բանին բարձրելոյ բարեզարդաբար բերկրա-

նօք բերին. և որ գոհաբանի առ՝ի նոցանէ՝ թէ ածուր
թին, լայնաձիգ հեռաւորութէ և ընդարձակ միջո-
ցաւ յաւէտ անչըպետ նշուլիւքն ծածկի՝ի նոցունց:

Բ. Այսպա զայն որ զանհաս հրեղինաց՝ի հողեղէն
յարկին պարունակեաց, և զանձառն՝ի սերովբէից
զգալի մարմնոյ յօդիւն պատեաց, և զկերակրիչն
դասուց հրեշտակաց կաթնասուն ստեամբքն դիե-
ցոյց, որ երդ պատկանագիր՝ի ձահ գովեստից օրհ-
նեալ պատուհասցէ: Օ մարմնարանն անտեսին և
զձեմարանն մեծին, զտաղաւարն տիրական և զխո-
րանն ածական, զխառնարանն ձաշակման անապա-
կան խրախճանութէ, զսրբարանն մաքրութեան և
զընդունակն զգաստութէ, զնպատակն կուսութէ և
զօրինակն երանութէ, զհարսնարանն անլուծանելի՝
անժամանակականն փեսային, զընակարանն հաձու-
թէ կամաց անեղն ածուէ: Օ այսքան փառազարդ
հնորհաց զընդունակն և ոչ նոքին ածութէն օրհնա-
ռաք հրեշտակացն պարք որպէս պարտն է պատուել
ժպրհին, թոզ թէ մարդ երկրային՝ի կշռոս չափոյ
բերանոյ հողաշունդուածս հիւթոյ մեղիս մարմնոյ.
քանզի անձառութէ անհասականաւ վերադոյն առ-
նեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկնայինք զա-
րարչին անհաս տնօրինութէն զանքնին ծնօղ արժա-
նապէս վերաքարոզել: Վասնզի թէ ըստ առաքելա-
կան ձայնին Պաւղոսի, մարդն անձնացեալ ոչ յու-
մեքէ պատմի, ապա որ զլըռութէ բանին էութէ ածու-
թէն յղացեալ կրեաց՝ի մարմնի՝ զիմաբդ զննեսցէ
շարժութէ շրթանց լեզուս մարմնեղէն զնա ձանաչել:
Օ՛ի թէ դասք պետութէց անմահից վերից վերնոյ
բնակութեանն՝ եկեղեցեաւս յայս խորհուրդ խորին
յառեցան, ապա յայտ է թէ մեծ է առ նոսա հիա-
ցումն սքանչելի ահեղս գործոյ, քան զհասուն երկ-
րաւորացս բանից պատմութէ:

Գ. Այլ սակայն երդեսցի՛ բանս որքան զօ-
րեսցէ՝ի բաղձանաց սրտի փափագման՝ նմին ընծայ
օրհնառաք փառացն տեսչութեան. նա զի թէ եր-
կինք փառացն այ լինին պատմաբանք, և յանդ-
րէն դարձ տարագրելոյ տոհմին Յուդայի ժողովք
ժողովրդոց տեսին զփառս անեղին, ապա այժմ յե-

բևեռ բանին ՚ի մարմնի և լինել մարմին ադամեան կերպիւ, հարկ է յոյժ ձահոզապէս՝ ոչ միայն անմարմնոցն, այլ և զգայնոցս արժանաբար ըղձակառնութիւն հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեան։ Ի՚նդ որս խոնարհ այս երկիր եղեալ տիեզերակիր, գտաւ լծակից ընդ ամենակիր երկինն վերին. վասն որոյ և խրախուսեալ հոգևորական հրճուանօք երկուցն դասուց ՚ի մի խումբ պարու, ոտանս տարեալ փրկչին փայլման կատարեն, զգայական սեռս եղականաց, և անմարմին դասք հրեշտակաց. յերեւելիս տեսականաց, և յիմանալիսն ծածկեցելոց։ Ի՚նդ որս և մեք կցորդք կարգեալ այսօր եկեղեցի դուստր վերինն յարկի երկնայինն առաքաստի, պատրեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Դ. Ո՛վ ամենասէր արարչընկալ տիրուհի և ամենածին, որ զանտանելին երկնի բարձրութեամբ և երկրի լայնութեամբ, ծովու խորութեամբ և անդնդոց անհասութեամբ, զի քեզ մարմնացեալն խնկութիւք էութեամբ յոգովային անձուկ սրբոյ քումդ սենեկի կրել զօրեցեր։ Ի՚նդ որ հայեցեալ երջանկին Յովսէ՝ պատուաբեալ նեաց ՚ի ձեւ առակաց, զանբաւութիւն մեծին սքանչացոյց, յումեքն դիմաց ասացեալ՝ եթէ չունիմ զնա, և զայլմէ՝ թէ չէ ընդ ինև։ Ո՛րում երգակցեալ վեհին Յովհաննու ՚ի բանն Յայտնութեան ասէ հիացմամբ. փախեաւ երկին և երկիր ՚ի մի սասանութիւն ՚ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարև յաւէտ անձկութիւք ամփոփին ՚ի բերումն բովանդակութեան արարչական բանին հանգստեան։ Ի՚սկ դու ընտրեալ ՚ի զարմէ և ՚ի զանգուածէ մաքուր զաւակի՝ որ ածածին, տարար զնա ՚ի քեզ ախորժ հանդրստեամբ կամացն հաճութեան, եղեալ երկիր անձնական բանական բուսոյն, և զգայական անդաստան կենացն հացի, և վառարան բորբոքման անշէջ կայծական, և վայր դալարաբեր հայրական ծոցածին ծաղկին, և ծառ երկնաղէշ անթառչամ խնծորին, և գործարան գոյութեան լուսատու մարգարտին, և լեառն արձանանման երկրալիր վիմին, և այգ արփիասկիզբն աստեղն առաւօտին, և յարկ դիտա-

պետին բանական հօտին. և արքայարան լուսակերտ անմահ թագաւորին. և մայր կաթնամատոյց բնաւից ստեղծողին, և հարսն սրբուհի հօրն Քրիստի:

Ե. Արդ և ուրախ լեր ձայնիւ երգոյս օրհնութեամբ քումդ երանութեամբ բանագովութեամբ. խրախացիր և ձայնիւ ողջունի գաբրիէլեան աւետեացն, բերկրեա՛ զ'ի կանայս, բնակարան արժանաւոր բանին խոնարհութեան, տնկաստաղարթ մարմնոյ ածութեան խառնարան, եւ զարան օծելութեամբ քաւական անուանադրութեամբ. որ նախ քան զծնանիլ բանին առ'ի քէն անթերի լրականութեամբ հրեշտակական թևոցն աքողմամբ ցանգարկեալ պահէիր անաղտ անբծութեամբ: Արդ որ հաճեալ հաւանութեամբ երրորդական փառաց ածութեամբն, ձանապարհ արար հանդստեան. քանզի հոգին սբ եկն'ի քեզ յօրինօղն անախտ սրբութեամբ. և բարձրելոյն հօրն զօրուն մարդ հովանացաւ, որդուոյն պատրաստեալ զքեզ ընդունակ: Արդ որ բնակեցաւն էակիցն հօր բարձրելոյ՝ էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով'ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էութեամբ նախ քան զարուսեակ. ուստի և զյօդաւոր մարմինն միակ՝ խառնեաց ընդ աճական բնութեամբն իւր անքակ. և սեպհականեաց զաթոռն հօր իւրոյ Յաւելի յաւիտեան, թագաւորեալ տանս աշխարհի, և երկրիս քաղաքի. արկեալ սոցա ուղ ձանապարհի զփայտակերտն գործի՝ հանել'ի կամարն երկնից տաճարի. և կանգնեաց զխորանն կործանեալ ադամեան մարմնոյն'ի նորոգութեամբ շինուած քաւական ուխտին դաշնաւորութեամբ: Արդ այսպիսեաց բազմաթիւ և բարձրագոյն բարեաց ընդունակ և մատակարար միայն դու մաքուր կուսութեամբ էիր խնկարան տիրուհի օրհնեալ սբ աճածին. քանզի իբրև զՀնչուման խառնութեամբ խնկոց կնդրկի և զմռսի ընդ տաշխին և կասիայի բորբոքեալ հրով մաքրութեամբ, բարդեցեր զծուխս բուրման անուշահոտ սրբութեամբ'ի հոտոտելիս այ և հօր հաճութեամբ. վարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեղութեամբ արձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ սբ աճամայր:

Զ. Արդ և ուրախ լեր յարկ անձառ ծնելոյդ'ի

քէն անեղդ Ա՛յ որ ՚ի նմին յորդւոյն քո խնամոց հրաշազարդ փառաւք ամբարձաւ ՚ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս, և թևաւք թեթևութե՛ հոգւոյն սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր ՚ի կայանս հանդչել։ Ուսոի և զանհասանելին իշխանաց իմացման՝ զանկապտելին զդայուե՛ սրտի նկատման վայելս անտեսիլն անճնապէս հոգիագրկեալ, զանեղծին փառաց Ձոխութե՛ քեզ սեպհականեցեր, ՚ըե՛ ՚ա՛ծածին։

Ե. Ելբօղեալ ես մաքուրդ փայլումն կրօղ ապարչին առաքինութե՛, որ աքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ քե՛ ՚ի մեզ զփոփոխումն մեծ արգասեաց փառացն ընդ փոքուն յեղանակեցեր. քանզի զանհայրն մանուկ մայրդ որդեպէս գերագոյեցեր. և ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկօք զանպատրագիրն էակ մարդացեալ՝ ՚ի համբոյր հպելոյ մատուցման շրթանցդ ողջագուրեցեր. որում գոտաք մեք ժառանգակիցք աբբայ հայր զա՛ծ առձայնել ՚ի ձեռն քումդ միջնորդութե՛, ՚ըե՛ ՚ա՛ծամայր։

Զ. Յարեհամբաւեալ ես մաքրուե՛ շաւիղ նախընթաց կուսից, որ զլերութե՛ ունօղն զոյից կարօտաբար կաթամբ լցուցեր, և աչաց մարդկուե՛ զանտեան ՚ի մարմնի եռուր նկատել. վասն որոյ զամենայն բերան գոհութե՛ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարփման, ՚ըե՛ ՚ա՛ծածին։ Յրանեալ ես դու ՚ի լեզուս անբիծս ընտրական շրթանց ծաղկիդ Յեսսեայ պտղոյն մեր կենաց. որ ՚ի դրութե՛ խառնուե՛ քառից յեղանակեալ տարերաց՝ անկցօրդ մնացեր ՚ի մանել հոգածնելոցս հասարակաց. ոչ բերօղ ծանրութե՛ բնականիւր համատեղծս կարեաց, այլ քրոջ բէօրէն հրաբերան բղխօղ նշուլից։ Ուսոի երագ ընթացիւք հետոց հեռացեալ՝ ՚ի վայրն անմատոյց յարփին վերին ընծայեցար, ՚ըե՛ ՚ա՛ծամայր։

Թ. Ստրախացիր յաւետ հրճուանօք բերկրեալդ ՚ի կանայս, որ գժուարընդել դաստիարակաւն խաչի վարժեալ կրեցեար. որդւոյ քոյ կցորդակցութե՛ միատեսակն ժուժկալութե՛ կրելով զերաշխեպ վշտաց ծնիցելոյդ ՚ի քէն ՚ա՛ն՝ միաստարչարն մեռելութե՛ անձնատուչդ տօթով խարուկեալ. իբրև զորոջ անարատ

քահանայական նուիրմամբ՝ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեաւր, ասրաբոյս և ստեաղիսակ գեղինաբարձ մաքուր պատարագ. ՝ի ձգնաւորական վարս ողջա- կիզեալ, քան թէ ՝ի սրոյ հանդէս խողխողեալ: Վ՚ասն այսորիկ ՝ի նուէր քոյ ղենման հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դա- սակցեալ, զիայն արժանիդ պատուեալ գուվէին՝ որ ՝ա՚ճածին:

ԺՈ. Խրախացիր համայն տարփանօք բերկրեալդ ՝ի կանայս, որ ՝ի կոյս և յանարօր արգանդէ բան բեղնաւորեցեր՝ ցաւոց անիծից արմատ օրհնութե՛, հօրն ադամայ որդի բերկրութե՛: Վ՚ասն որոյ ընդոհ ունելով քեզ օրհնեալքս ՝ի յորդիդ քո փրկիչ աշ- խարհի, երանեմք քեզ, որ ՝ա՚ճածին:

ԺԱ. Խրախացիր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ, որ յօրինս երկ- րայինս աղցաւոր կրից՝ զերկնայինն ածեալ մատու- ցեր, և զանմահն նմանեալ մնազանգուած ապդի մարդկուէս ՝ի չափ հասակի գեղոյ գեղեցիկ զտեղն վայելուչ ՝ի Լբանանէ մեզ պարգևեցեր: Վ՚ստի զպատկեր նախահօրն ՝ի քէն ստացեալ՝ նորոգ հաս- տատեալ, գոհաբանեմք զոր տիրամայրդ:

ԺԲ. Խրախացիր յողջոյն նախընծայ երկնային ա- ւետաւորին, տաճար սրբափայլ. որ լուսով ՝ա՚ճած- կանաւ ուռճացեալ լցար, և երկրաւոր մարմնով երկնայնոյն աթոռ կազմեցար, և արեգակնապէս հո- լովմամբ առ արուսեակն երագ ընթացար: Վ՚ասն որոյ բացեալ զբերան պատասխան ամբածին որդւոյն, օրհներ զօրհնեալդ ՝ի կանայս՝ որ ՝ա՚ճածին: Վ՚ա և դու լեր զտունն Տ՚աքարիայ բարբառովն գոհուե, յօրինակ հանրական եկեղեցւոյ, որ ե քո միշտ օրհ- նաբան. զի երանեն ահա յայսմհետէ քեզ ամենայն աղգք ըստ բանի ՝ա՚ճապդացիկ քումդ դաւանութե. սկզբնաւրար կուսից անարատութե, ՝ի բերկրեալ լե- զուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ՝ որ ՝ա՚ճածին:

ԺԳ. Վ՚անգի արդ եկեղեցի դասուց անդրանկաց զ՚ի քէն մարմինն ՝ի բանէն անանձնատ համապատիւ հօր փառաւորե յերից սրբասացս. առ որ Տպաւոր

քո գոլով ահաւոր խորհրդոյդ տեսօղ՝ զանձառն ու-
բախութիւն յաւէտ վայելես։ Օ՛ի զոր նոքա թևա-
սքողելով դիմաց ծածկութիւ՛ն բացուստ ակնար-
կէն, դու յաւէտ համարձակ նմին կաթնաձիր մայր
ցուցեալ ծանուցար, և՛ի մէջ դաստակաց ձեռաց
որպէս զմանուկ զձերն հինաւուրց գգուանօք ընկա-
լար, եղեալ կառք անձնաւոր կայից բազմելոյն յա-
թոռ քրովբէից։ Ա՛ման զի ո՛չ ընդ քեզ միայն,
այլ և՛ի քեզ ո՛չ միայն փարեցաւ բազմեալ, այլ և
բնակեցաւ տաղաւարեալ. ո՛չ միայն միացաւ՛ի զան-
դուածծ մարմնոյ, այլ և մարդացաւ՝ առեալ զկեր-
պարան՛ի քէն սկսեալ. ո՛չ միայն մի ըզդեցաւ Վի՛
յերկուց գոյութեց, այլ և ընկղմեցաւ յանապական
անօսր էութի՛ն մարմնոյն վերբերումն. ո՛չ միայն միջ
նորդաւ անձինն ընդ Հողոյ միաւորեցաւ դիմակ տե-
սակօք, այլ եռամանն խառնեալ էութի՛ք միաւորե-
ցաւ անշփոթելի։ Վ՛ի որդի մերում բնութի՛ յաթոռ
Հօրն իւր աջոյ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ։

ԺԴ. Յաղագս որոյ և մեք երկրաւորքս զմատակա-
րարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ երանեմք ըզ-
ձական երգօք՝ զանժամանակն էութեան երջանիկդ
ծնօղ. որ զամենայնի և ամենեցուն պսակեալն Հո-
գեշունչ երգօք՝ ի՛ քեզ ընկալար, ո՛չ ի՛ մասնէ, այլ
ի՛ լրութի՛ն. ո՛չ հատմամբ, այլ հաստատութի՛ն. ո՛չ
բաժանաբար, այլ ամբողջապէս. ո՛չ փոփոխմամբ,
այլ փոխատրութի՛ն. ո՛չ ի՛ ծիրս սահմանի տեղւոյ,
այլ՛ի սենեակ լայնատարած ոգւոյ։ Վ՛անզի զբերօղն
ի՛ կշիռ ձեռնի զերկիր և զերկին տարար յաթոռան-
դի. և ո՛չ միայն ի՛ տես նկատման աչաց նայեցար ի՛
նա, այլ և շօշափմամբ ձեռացդ ծանեար. ո՛չ միայն
ողջունեալ զանհուպն շրթանց, այլ և ըմբռնեալ.
ո՛չ միայն զննեալ զհասարակաշէն խորան մարդա-
ցեալ բանին, այլ և անուանեալ կոչմամբ Յո՛
զՎ՛ան այ. ո՛չ միայն ստեամբք մնուցեր զանժամա-
նակն ըստ աւուրց, այլ և աճման հասակի զնոյն ըն-
ծայեցեր։ Օ՛ որ խոստովանի հանրական եկեղեցի
զծնեալդ՛ի քէն ա՛ծ Հ՛իմարիտ՝ ընդ նախեղակ զոյակն
միացեալ՛ի տեսութի՛ն իմաստից քննութի՛ն մեր փա-
կեալ։ Յորոյ տիսն ապացուցի խաբօղն Յակոբ ըմ

բռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխուէլ խորհրդով զաճատեան անուն ընկալաւ։ Այսպէս և որ ի քէն ծնեալդ մարմին ի յարգանդ սրբոյդ սենեկի ընդ աճ խառնեցաւ. և խաբեալ զիշխանն մարդկան Թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսօղ այ՝ այլ Աշմարիտ աճ անուանեալ, զամենեսեան յԱսրայէլ անուն փոխադրեաց։ Ասակս որոյ լի բերանով զպաշտպանդ փրկութիւն այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ՝ որ աճածին։

ԺԵ. Որոյ տեսչութեամբն այ նախագիւծ ի ծովէ քարն պատուական հրաշալ և սպիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ։ Վանդի արդարև դու ես ակն պատուական ի յաշխարհիս ծովէ ընտրութեան, որ զաճային հրոյն տարար կերպարան։ Այվ որքան մեծ է ի քեզդ աւարտեալ խորհուրդ, սրբուհի. զի թէ առաջք մարգարէիցն հոգեկիր յղացմամբ Ասրայելի ծնօղք ասացան, ապա դու որ զբանն աճ անձնաւոր՝ հայրենի բնութեն հպատուոր՝ ի սենեկի քումմ մաքրականի մարմնապէս բացաճանուցեր, զորպիսի արժանապատիւ գովութիւնս ոչ ընդունիցիս։ Այվ չնորհաշուք գեղով արփաւոր ծածկութիւս յանմատոյց գեղեցկութէն պաճոյճ փաղփաղեալ. ով համեստ հեզութեք, խոնարհ անբծութեք, կերպասիւք լուսոյ ի հոգւոյն պարասքօղեցեալ. ով զարդուք երկնայնովք ոսկեզօծ սրբութեք, արծաթափայլ մաքրութեք, ականակատ պսակ քեզ փառայ զբարձրելոյն հովանի ի գլուխ ընկալեալ. ով քառեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ուլանցն յեռմամբ, այ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ, ի մի էութէ երիցն հիւսմամբ ի յորդւոյն լանջք սբ քո չնորհօք առլցեալ։

ԺԶ. Երհնեալդ միայն ի կանայս շրթամբք քահանայութեայ մեր մարգարէին Յովհաննու, փառաւոր և ի դասուց համազարմ նմանացելոյս ցանկալի երգօք ներբողականս տաւղօք։ Ո՞ի թէ բանականս մարդոյ գոյութէ պատկեր այ ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծողին զչնորհս կալաւ, ապա և առաւել քեզ պարտական եմք երկրպա-

գութ ունել ընդ, տիրամայր, որ ոչ ի ծառայի կերպարան ստեղծման եղեր պատճառ. առ որ ի լուսոյ աւարտման մարգարէական կտակն հասանելոյ, այն ըզոր ասէ, եղիցի ի վերայ առն ձեռն քո, և աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ ի քեզ խրախուսելոյ։ Աչք և կարողութիւն և բազուկն հօր միածինն ի քեզ հանգուցեալ, և զամենայն որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Այսոյն նկարագիրը և կերպարանն հօր գոյուէ ի քեզ բնակելոյն, սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեալ։ Ահա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք, ըզ ածաճին։

ԺԲ. Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յեղծականաց սեռիցս անմահ սերովբէ, ի հողային նիւթոյ ոսկի Սոփերայ, ի ծովային բերմանց ընդհալոյս մարգարիտ, ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ, ի յաւուրց նախնեացն Ձիւռ օրհնութիւն, ցօղոյն հանդարտի ամպ անձրևաձիր, արևուն ծագման ակն արփիափայլ, մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի, դիշերային մթոյն խօսնակ բերկրանաց, օրինի ստուերին տառ ճշմարտաձառ։ Սակս որոյ իբր զնիւթ գործօնեայ այսքանեաց բարեաց օրհնեալ ես դու ի կանայս, նախաստեղծին մերկացելոյ փառք անկապտելի, վշտացելոյ անխծապարտ մերն սփոփիչ քաւութիւն, որդւոյ նոցին խաւարութիւն խաղաղութիւն ձայնատու։ Այս արդ որ բան բազդատելով զանհամեմատ քո մեծութիւդ լիցի կարօղ գերահռչակել, ա բարչին մայր, անհասին ծնօղ, անբաւին զրկարան, ամենակալին յանձանձիչ, փառազարդողին զգեցուցիչ, վերօրհնելոյն զրգիչ։ Ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի տացուք քեզ երանի, մայրդ Ցեի։

ԺԸ. Ընդհրհելի դիտմամբ տեսակ լուսալիր աջօք նկատեալ, կտակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ, սահման յարակայ մեծութիւն կցորդութեանն, երկուց միութեանն անայլայլական կապ պատկանակիր, վերին պատկեր կերպիւ կշռորդեալ, թեթև պարզութիւն հիւթիւ բազկացեալ, տառ տարբերական տողիւ ձևացեալ,

տուամբ տենչալի անսխալ դրոշմեալ, մատեան մեծուԹիւնն շնորհիւ նկարեալ, նամակ ընտրուԹիւն բանիւք բարդեցեալ, արձան անձնական խմաստիւք զօդեալ, կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ: Զդեստ լուսանիւԹ երկնից արքային, օԹոց սրբուԹիւն անմահ քնակողին, յարկ վայելչուԹեան անեղ շինողին, առիւԹ մարդկուԹիւն բանի անեղին, գործի մարմնուԹիւն վեհին բնուԹիւն, պատճառ պատշաճից անպատկառ ձգնուԹեց, օրինակ ուղղուԹիւն անայլայլակ վրիպուԹիւն, անպակաս առնելուԹիւն լման ԹերուԹեան, խաչուհի երկնային կենդանեաց գաւառին, մանկակից շնորհընկալ հայրական գԹուն, անպարտակիրն ազգակցուԹիւն երկնից վերստին, անամմանակն արգանտի ծանուցօղ ծնողեան:

ԺԹ. Դու զՀօրն լուսոյ զորդի հարցաղատ՝ ի ստորինս կոյս աշխարհի մայրենի կաԹամբ ջամբեալ դիեցուցեր, և որպէս Թևովք խնայական պահպանուԹիւք զպարուհնակօղն պարփակեցեր: Դու զկենցաղոյս ընԹացք ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր, և ըստ նմանուԹեան արագման օդային Թռչնոյ ի յանցաւորաց աստի փոխեցար, և ի մէջ դասուց հրեշտակաց ուռնօղ այ յայտնեալ ծանուցար: Դու լուսարփի ամպով առ ի նոյանէ պատուեալ համբարձար, և հողեղէն հաստուած ի քրովբէից աղի հանգուցար, և ի կանանց ազանցն կերպից արուսեկին տեսակաւ տեսար, և զինեալ բնուԹիւք մարդկայնոյ յանձառաչնորհ խորհուրդ ծածկեցար, և ի ստեղ ծողէն քո և համայնից հպատակօրէն ձևով պաշտեցար, և հաստողին ծագաց աշխարհի մայրօրինակ առնուամբ ձայնեցար, և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար, և ամենայն անբծաց ընտրուԹիւն պսակ սրբուԹեան դու դաւանեցար, և իբրև զՀանդարտ երինջ անարատ արարչաւանդ լծոյն մատուցար, և իբր յաւանակ կամաց անբաւին ածուԹենն հետևեցար, և ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւղօք ամբարձար, և իբր ի ժինեայ փշոց խստուԹեանց յաշխարհիս զբաղմանց ծաղկեցար, և իբր ի դառն արմատոց երկրի քաղցրաձաշակ պտուղ յայտնեցար, և Հրեշտակու-

թէն անտես թաքնուէթ խորհրդակից սիրոյ կոչեցար, և ծածուկ հաւաքման բանին իբր լուսատու ձորձով պատեցար, և անքակ էին տերութեան սահմանն սկսման վերակարդեցար, և ’ի սրբասնեալ միջոց քո ստեանց զանկէտն ’ի տաշխին ծրար թադուցեր, և ’ի կուսական քում բարուենակէ զանմահ արարն ողկոյզ հասուցեր, և միջնորդ կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար, և համոզիչ ’ի խաղաղութէն մրրկածուփ շարժմանց կացուցար, և խրախակից վերնոյն բարձրութէն անկապտելի անուամբ պատուեցար:

Ի. Ա՛րդ յայսքանս և ’ի սոյնպիսիս, և յևս ընտրելական երդս բանահիւսից գերահռչակեալ ես վեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ ըզ ՅԾածծին: Ա՛ ամն զի որպէս երևեաւն ’ի քէն միածին անդրանիկ ընութէն Հօր՝ սկիզբն ասի հետևման խաչունակ մահակիր Հպանց, այսպէս երանեալդ և բարեբանեալդ գերօրինակ ցուցման տեսակի ՅԾածկրօն կարգաց ծագեցար: Վ՛և զանմատոյց հուրն կիզանող անապական ծասքմամբ ծախեցաք, քև զարադեալն ’ի թևս օդայինս ’ի քառընթաց կենդանիս տեսաք, քև զանկցորդն տեսականաց ’ի մարդկային կերպ նկատեցաք, քև զդուվեալ բարձոյն մեղաց իբր զգառն Ձաշակ ընկալաք, քև դատելոյն ’ի չարագործաց որպէս ՅՀ Ձիմարտի երկրպագեցաք, քև զանծանօթն Հօր տերութիւն ազգակցապէս օրհնաբանեցաք, քև զմուրհակ պարտուց անիծիցն ’ի յաւազանին ջուր ընկղմեցաք, քև զանտեսն աչաց հրեշտակաց տղայական տիօք գդուեցաք, քև զանսահման բանին քնութիւն ’ի հասարակածին տիպ համբուրեցաք, քև զ՛Ադամն նոր հոգեղէն ’ի չափ հասակի առաջնոյն տեսաք, քև զարեգակն արդարութէն կենցաղակից մեր կցորդ ստացաք, քև զանժամանակ բանին էութէն սկսեալ ’ի Աւրհայ պատմեցաք, քև զանհամեմատն մարդոյ պատկերի մեղ նմանատիպ գործով գրեցաք: Ա՛րդ այսքանեաց սրբազնական մասանցս Ձառեցելոց դու միայնակ պատՁառ, անարատ կուսից նպատակ կրօնից, տիրամայր ըզ ՅԾածծին:

ԻԱ. Վանդի Թէ էր ՚ի քէն աձեալ ուղէշն երկնային, ոչ էր պտղաբերեալ զանձաշակելին ՚ի շընորհանցն մեր հաղորդութիւն. և Թէ էր երևեալ հօրն արդարութիւն ՚ի յերկինից, էև էր սկսեալ ձիմարտութիւնն ՚ի յերկրէ. և Թէ էր յղացեալ յանփորձական քուէ արգանդի, ոչ էր մարմնացեալ. և Թէ էր յայտնեալ մերով բնութիւնս, ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ անհամն խմաստից. և Թէ էր կրեալ ՚ի գիրկ բարձողացդ հողեղէն բաղկաց, ոչ էր ծանուցեալ. և Թէ էր համբուրեալ երկրաւոր շրթամբք, ոչ էր ձառեցեալ. և Թէ էր հետևեալ ՚ի մարդկան ընթացս, ոչ էր քարոզեալ էակն ՚ի յերից. և Թէ էր Թափեալ եւղն անապական ՚ի վերհագուստէն, ոչ էր զմեզ օծեալ. և Թէ էր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր միրտեալ. և Թէ էր խրախուսեալ մարդն ՚ի յերկնայնումն, ոչ և ես էր սրբեալ. և Թէ էր խոնարհեալ բարձրն ՚ի յընտանի փառացն, ոչ էր վերացեալ ՚ի ստորնայնոցս առեցեալն։

ԻԲ. Բայց մարմնացաւ, որքան մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փառատրեցաւ. իսկ մանրեցաւ, որպէս երդեցաւ. իսկ միրտեցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս ձառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ձոխացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բևեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և սլացաւ որպէս վերնային, Թռեաւ որպէս հողեղէնն, ծածկեցաւ որպէս զանքնին, փախեաւ որպէս զանհաս, ՚ի յամպս երկնից եղ զընացս, դովեցաւ որպէս միածին, բռնորաբուղխ կայլակօք ներկեաւ, անկից վիրայն խոցով հարցաքննեցաւ, ՚ի վէրից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ, դատաւոր արդարակշիռ յամ ազգաց վերապատմեցաւ։ Վանդի ՚ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութիւնն անեղն խոկութիւն. և

յընտրեալ անպատում՝ ընդհէն զայս ամենայն անփոխանորդելի պարգեւական ձիրս ընկալաք. և քեւ ամենայն այս պատրաստութիւն բարեբաստութեան բազմերանեան յուսոյ հրձուանաց մեզ հանդերձեցաւ։ Այլ զնմա փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոց բազմագովեստ պայծառ յօրինման նոր արարածոց անձառ շինուած ծոյ՝ որ եկեղեցւոյ, ի քէն ծնեցելոյ կերպիս մերոյ և բարձրացելոյ անուանն Յեի ծնկովք կրկնելովք մատուցանեմք։ Ասատի և քեզ բերկրեցելոյդ զսովորականն օրհնաբանութիւն բանիս երկրորդեմք։

ԻԳ. Օրհնեալ ես դու ի կանայս, գլուխ նոցին պանծանաց, և պայծառ պսակ։ Պսակ կուսութեան մաքուր հարսնութիւն, պսակ ընտրութիւն անփորձ գովութիւն, պսակ անեղծութիւն լուսոյ նմանութիւն, պսակ հնարհանորոգ էին ծնելութիւն, պսակ երանական բանին հօր մայրութեան, պսակ՝ որ պանծանաց կենացն բարձրութիւն, պսակ պայծառափառ վարուց իմաստուն, պսակ տիրապատուաստ երկնահանձարն գիտութիւն, պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկուն, պսակ պաշտելուն Աստուծի նորոյ զարդարման, պսակ յոգնանկար յարփիւղ եւթանց փայլատակման, պսակ առաքինորդական վերնոցն ազգակցութիւն, պսակ անբծութիւն շաւղացն արդարութիւն։

ԻԴ. Զդմ ամենեցուն վերակարգելոյ Թուոցս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորաստեղծականն Ադամայ. որոց անհամար և անթիւ ազանց ամպական և պահպանական պարիսպ կառուցար։ Վանդի յարժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութիւդ միշտ ապաւինեալ ունիմք ի հաստատութիւն, խնամեալք և հանդուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամենայն պատուարի՝ որ ածածնիդ։ Պատուար պահապետ ինայօ ի զանազան մաքրազարդ ականց յարմարեալ. պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմադացն հինից. պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դրժոզաց. պատուար ամենահրաշ ըստ Եզեկիելի, որ աղխեալ զմուտ քո Աղդրատապա-

տուման գրեաց. պատուար շրջապարիսպ ըստ Դաւթայ, որոյ հիմն անշարժութե՛ի բարձրելոյն հաստատեցաւ. պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ Պաւղոսի, որում զհանուրս բնակիչս արարեր։ Վհանգի զայծ ծնար՛ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր Սիոնի որդիս արարեր վերնումն հոգևորի։ Որոյ աղագաւ օրհնեցաւ արդարդ քոյ կուսութիւն՛ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնարան և տաճար հօր իսկակցին։

ԻԵ. Որով արդարապէս՛ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղևից հեղեղաց յաւուր անձկութե. մաքրուի կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութե՛ հաստատութե՛ եկեղեցւոյ, և ծնօղ անապատ բանին Ա՛յ։ Օ՛ քեզ յաւէտ օրհնութե՛ միշտ պսակեմք՛ի նուիրեալ տեղիս սրբութե՛ քումմ տաճարի, և՛ի թևս պահպանութե՛ լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս մեր՛ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ։ Արդ աղաչեմք ընկալ զերդաբան օրհնութե՛ մերում լեզուի. և հաձեալ տացես սմա զձիրս շնորհաց Սիոնի և Յերեղեհմի։ Ուստի արժանասցուք ընդունել մանն փրկութե՛ յաւուր գալստեան մեծի յայտնութե՛ փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն Ա՛յ, Տեառն Յի՛ս։ Այս իբր զպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց՝ ՛ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք, անժամանակ էին բարձրացեալ ծնօղ։

Նոքին վերսին՛ի վերայ դրոյ անուան Ի՛ր։

ՊԵՐԱՋԱՆՑ չափոյ կշռման երկրային բնութե՛, և քրովբէականն նախագաստութե՛ եղեալ վեհական. սրբութի՛ պայծառ առագաստ փրկչին Յի՛ս, և նորոգն իսկ տեսաւորիչ վասն մեր. ծունր կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեա՛ վասն մեր առ ծնեալդ՛ի քէն ՚ած՛ի մարմնի։

Պոպէից յոգնաթիւ մասանց բերկրութիւն, ազ-

դաց և աղանց արմատ օրհնութեան . ՚ի ծագմանէ փառացն երկնայնոց անստուեր նշոյլ տարփալի շողեալ ՚ի ստորինս տեղի . անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ , անձառ խոստմամբ ապառնեացն յուսոյ՝ ՚ի մահու պարտեացն զերծո՛ զառ քեզ ապառաժան ծառայքս քումդ որդւոյ :

՚Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր , Աարիամ առիթ առնութեան նոցին զանձնին որդւոյն կերսպարան : Աստի տեսին զանկեան սկսեալ , և երանեցին զաստ և զպատճառ . յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենաց , և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութիւն :

Վայելաւորեալ այսօր ՚ի քեզ զիմանալին փառաւորութեամ մեծութիւն . որ սլացեալ հասեր ՚ի բարձունս երկնից , իբր անընդունակ ապականութե՛ն և մահու լուծման՝ մարմին , յորմէ պատկառեաց ամենայն պարտիքն մահու . և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ ՚ուստ կենակից ՚Որդ տիրամայր . արդահատեա՛ միշտ զողորմութի՛ն որոց պանդխտիմք ՚ի վիհս նեղութին :

Ունօղ հրաշուանաց անթիւ խրախութե՛ց ՚ուծայինն անկեան խոստմանց ՚ի բուբաստանս անդաստանաց տիրական տնկոյն , որոյ ստեղունք շառաւիղացն երկնայինն հնարից գերազանց . անդր մուծցես զքո զառաքեալս , ՚որ տիրուհի մայրդ Ցոի :

Ոտեմք ՚ի քէն աղերսիւ բանի , որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի . միայն երանեալ և բարեբանեալ , հօրն հաճութեամբ հուանաւորեալ . որդւոյն ծնօղ , հոգւոյն վերընդունօղ , Երրորդութեան փառացն տարօղ . վերանկարեա՛ զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն ՚ի գիր մատենի վերնում դպրոցիդ : Այս զերգագրութիւն սակաւամանեայ այսր գովեստի՝ արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի . ընծայեալ մարմնոյս զմիաշարս պիծ , և զգայական ընդոյս զպատկերը բանիս : Օ ի իբր ՚ի գոյից երկուց զուգելոց ՚ի մի խառնութի՛ միոյ կենդանւոյ , միշտ փառաւորեսցիս զուսոլին օրհնութի՛ , որպէս անեղջ պաշտօնեիցդ օրհ-

նաբանութեամբ : Ովերևս ՚ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր ՚ի դատաւորին : Եւ զոցուք արժանի անբիծ վարուք , և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոյն հաստատութիւն հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան . փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն յանդիմանն դիմաց պաշտելի և պսակելի քումդ ՚ծածփայլ և լուսաշնոյլ մեծ պայծառութիւդ զէութիւն՝ անքակ և անքընն նելի ՚ի Երրորդութենն ՚ի միում ՚երութիւն և արարչութեան : Որում վայելչական պատիւ , և զովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Ցիշատակագիր պատասխանւոյ Սորին ընծայական գրոյ երջանիկ և ՚ընդհանրական Տեառն Սահմանոսի , յերեսաց Նորին հոգևաբուղխն վարդապետի :

ՇՆՈՐՀԱԿԻՐ Լինի և հոգւոյ նորա ընդունակ , ընտրեալդ և ներանձնացեալդ այցելու . ըստ հայցման հաճութիւն բարեսէր կամաց երջանկիդ , և գրութիւն նամակի ձերում պատճէնի , յօրինեալ շարադրեցի զպատմութեանն գովեստ , և զձառքս ներբողենի : Կարեալ հաստատեալ ՚ի գեղ պատկերի դիմաց սուրեստի սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտենիդ . մտրակեալ յընթացս սորա ասպարիսի զչքթնունս գրչիս , անշունչ խօսողի , անքայլ ընթացողի , անձայն հնչողի , անդուլ պատմողի , և անսայթաքելի քարոզչի : Եւ արձանացուցի սմին անջինջ յիշատակ զանուն տենչալի ձերումդ կոչման , ՚ի Սահմանոս՝ լերինդ Մ՚ոկաց հզօր դիտապետ : Որպէս զի միասցես յարակայ ՚ի սոյն համառօտագիծ մատենի յաւուրս անթիւս և յամս հազարաւորս իմով սակաւամանեայ իմաստիւ : Եւ Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրսեր բանասիրաց , որդի դստեր եղբօր հօր Ներսիսեան հոգեզարդ և մտավարժ փիլիսոփայի , և ըստ վարուց մաքրութիւն կրօնից գովելոյ և հռչակելոյ : Եւ ընծայեցի քումդ եկեղեցեաց զայս նուէր բարեաց բանից ցանկալեաց . յորոյ պտուղ

վայելեսցես ախորժ բերկրանաց Հաշակմամբ յամեալ և յարակայեալ՝ի հոգևոր հրճուանս աղօթից։ Այլ ընկալեալ խառնեսցես՝ի յոքնահամբաւ զարդս աՀմենագեղս երկնային գանձուցդ՝ զտարազ տեսակի տառիդ։ Այդպէս և յիշատակեսցես զանուն իմ տրուալ՝ի գաւթի սիրոյ անձկութեանդ սրտիդ սենեկի, միշտ նորոգ մտածեալ զմեզ՝ի ձերումդ՝ծոր խորանի ՀաճաքնակիՀանդէպ սեղանոյդ արարչընկալի, զիս և զեղբայրն իմ զանդրանիկ զՅովաննէս ցանկալի անուն՝ի միտս կարգի, որ գիտականն է և հանճարեղ խմաստասէր քան զիս առաւել՝ի յամենայնի։ Այլ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ. որպէս և քոյդ ոգի միացեալ ընդ մեզ միշնորդաւ էութեան՝ի մի քրայ ընտրութեանդ հալոցի, անբաժին տեսմամբ և անորիշ սրտից ընչով, և անայլայլակ խորհրդով, և անանջրպետ կամօք խաբսխեալ, հաստատեալ և հիմնաւորեալ խորհրդով՝ի Քրիստոս՝ի տէր մեր. ո՞ր ըստ փառաց յաւիտեանս. ամէն։

Արդ քանզի անընդեալ գոլով տեսութեանդ բաղձալի վայրիցդ և սրբոց խորանացդ, զթերին լրութեան և զպակասն աՀելութեանդ յարմարման գրութեդ աղերսեմ՝ ընդհել։ Այլ ինձ տառապելոյս օգնեա՛ աղօթիւք, որ յարաժամ գեգերիմ յընթեռնուլն. իսկ գործ՝ և ո՛չ փոքր լինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։

Աղերսողական գովեստի ասացեալ ի հանճրին գունդս Առաքելոցն երկոտասանից՝ նախատպատիս պետութեանցն դվխաւորաց, և եւթանասուն և երկուցն սրբազան աշակերտացն Քրիստի։

Ա. ՏԻԵԶԵՐԱՑ ծաղիկք և տունկք տեառնջելիք տանն Դաւթեայ. Աղամայ նախաստեղծին ծնունդք, և զարմք Սիոնին. ծառք ամբարձուղեչք բիւրոց տեանք, ծիրանածայր ընծիւղք երփնագեղք, քաղցրատուղք և ախորժելիք. երկնընթացք դիտակք ընտրութեանք, լուսատնունդք և տիրահաստատք, շահեստք և արդիւնականք, առողջալք և արմատացեալք, պարարեալք և պանծացեալք ի ցօղոյ պարգեւողին. ընտրական սերմանք աճման բարեբոյս անդաստանին։ Ընդմանունք հանապազահոսք, մշտակայլակք, յարակայընթացք. գետք հանդարտահեռք, գերածաւալք և գեղածիծաղք, գարնադուշակք, սառնական օդոյն սուղիչք, և դժնդակասիք չնչոյն նհանջիչք և ապաքինիչք, որք և երջանկապունդ դուստր դասու Առաքելոց։ Ոչանչի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանէ լռութեանք շարժեալ կարգ բանիս՝ ի գովեստ փառաց մեծութեանք վեհին հաճութեանք, անսասանելի դրութեանք հիմնացեալ միշտ կառուցանի։ Ալ ասն զի յաւէտ բնակօղ բարեշունչ բանից՝ քան եթէ շինուածոց՝ էականն ոճ դաւանի։

Բ. Այս արդ ձօնեսջիք երգոյս բանի ընդրհ ի մաղթանաց ձերում հայցուածոց, զարժանապատիս ձեր տերութիւն գերահռչակել։ Ոչանչի ի վեր քան զձառ շրթանց և զլեզուական բանի զօրութեանք՝ շուք և զարդ գեղոյ ձոխութեանք ձերում բարձրութեանք չքնաղապէս գերահռչակի։ Այս եթէ ոչ հրաշալի գրեսցի լսողաց, մերկասցի բաց ի քաց երևեսցի ծածուկ ծոցոյ բանիս, անեղծականս ձառել զըստեղծեալսդ ժամանակաւ, և գրեալս ընդրհօք որդիք էուեն. և թէպէտ և ոչ անժամանակք ըստ անսահմանին, այլ սկիզբն գոյից յաւիտեանց։ Իբր հիմն ժամանակաց սկսեալք, ընտրեալք նախ քան զերկա-

նիլ էից աշխարհի, ըստ բարբառոյ Ձայնին Պաւղոսի։ Վասն զի որպէս Աստուծոյ վերին երկնային՝ սկզբնամեծար և կանխակառոյց մայրն ազատ մաքրածին, նոյնպէս և որդիք նորին անդրանիկք և հոգեպայծառք ի սկիզբն ծայրից անչըզեստ եղերաց ընդարձակ ամաց միջոցի աստուստ նկատեալք, ի դրուեթեան մատենի բանին նկարեալք, փառօք բարձրուեթե շնորհին պատկերեալք, անստուերական փայլմամբ բարերարն հօր կերպացեալք, անհաւասար համարձակուեթե ստորիցս ստեղծագործեալք, մանակից կրօնից օծուեթեամբ փրկչին ձեռնադրեալք. հանգուցեալ կից խմբից անմահիցն դասուց պարակցեալք։

Գ. Վասն զի գերազանց քան զասպարէս չափոյ սահմանի հին ամանակի՝ համբաւ հրաշափառ խորին խորհրդոյ մարգարէաբարոյ և տեսանողագուշակ երևման անօրինեցելոյն մարմնով Քրի՝ հօրն արարչակի՝ ձեռք քարոզեցաւ ծագայ աշխարհի։ Լրանալիք և բազմապատկաբար ընտրուեթեամբ փորձեալք ոսկիապէս ի հողոյ նիւթոյ. անընդունակք յանցման մեղաց չարուեթե ախտից մերոյս զանգուածոյ. պայծառագեստք և սպիտակափայլք ըստ պատահման արծաթոյ. մաքուրք վարուք և բարիք բարուք, ըստ պարզուեթե տարածման տեսուեթեան օդոյ. քաջապինդք ի հաստուեթե, ըստ կարծրուեթե ձուլման երկաթոյ. ըղձականք և ախորժելիք գունակուեթե տենչալի լուսոյ։ Վասն զի արդարև լոյսք միտապայծառք ի բնուեթեամբ անստուեր լուսոյն վերակարգեցեալք անաղօտապէս ծագել ի ստորինս. ուստի նորոգ գոյուեթիւն երկնի և երկրի ի Քրե ձեռք սահմանեցաւ։

Դ. Այ զի և ընդմիջեալն ի յամաց՝ խորհուրդ քառանիւթ աւուրն պահպանուեթե, յորում արուեսեակն հսկայընթաց և վայելչագեղ լուսապատարն պայծառուեթեամբ լծակցուեալ ընկերին լուսնոյ անըզգայաբար իբր ընդապէս՝ երասանակաւ կամաց անբաւին անմոլար շաւղօք հետևմամբ աստեղացն պարագրուեթե, յանվրիպական խորհուրդ ձերբումդ դիտման՝ զարարածս բարեզարդեն։ Վասն ցիրապա-

հակք և պահպանակք և կանոնք ուղղութեանէ երկրի, կրճնաշրջ մաքրականի գծագրութեանէ ձերում տեսութեանդ կանխադրոշմեցաւ։ Ա՝ սոն զի ոչ պատարք խոտաձարակք, և կամ ոչոզակք կերակրելիք, և կամ քոյոք սերմնատմատոյցք, և պտղածին ծառք վարսաւորք, մարմնաձաշակ կերակրոց խորտիկք, որ յերկրէ ցուցեալ՝ ի սոյն կորնչին, այլ երկնային զարդք և վերնային կամարին կանթեղք, լուսաբորբոքք և անշէջ ջամբարք. այսր աւուր բարերարութեան ապարչին ստեղծուածք և պարգևք։

Ե. Ա՝րդ նմանաբար և ազգակցապէս՝ ի ձեզ յարմարի վայելչական խորհրդոյն տեսակ, արեգակունք բազմահոլովք՝ դիջուածէ չարեաց ցամաքեցուցիչք, բանական բուսոց զարմանիչք, անձնաւոր տնկոց վերընձիւղիչք, սառնացելոց մտոք հրացուցիչք, թերի և խակ խորհրդոց հասուցիչք և հմտացուցիչք։ Ա՝ընթացելոց մտոք խաւարի՝ լուսնապէս խրախացուցիչք և բարեգործիչք. վրիպեցելոց ի ծովային ծփանաց աշխարհի՝ աստեղապէս ուղղիչք և առաջնորդիչք։ Պայծառափայլ լուսաւորք, ձրագունք եւթնաշաղեանք, շանթք կիզանողք, ցոլմունք ահագինք, հոսանք հրեղինք, մարդիչք մարդկան, բովք ընտրութեան, հալոցք հոգւոց։ Ա՝նգղի յայսոսիկ կոչեցայք՝ ի կամս կոչողին զօրել այսոցիկ։ Ա՝յս այսքանեօք հաստատակուածք բազմամանեայ չնորհիւ ամբարեալ և յաւէտ լցեալ և բնաւին մաքրեալ, զբնակուե վերին բարձրուե զփականս վերընկալայք և ձոխացայք և փարթամացայք փառօք տիրապէս, ՚ծածացեալք չնորհօք բանին, թագաւորեալք օծութիւն հոգւոյն, իշխանք պանծացեալք, պետք գլխաւորք, նահապետք վսեմականք, նախարարք նախահոգւակք, առաջնորդք բարեշաւիղք, որսորդք հմտավարժք, դիտապետք երկնաբնակք, վերատեսուչք անմոլարք, այցելուք ուղղադատք, քահանայք քաւութեան, երիցունք երևելիք։ Ա՝սոն զի այսպիսիք և այսոքիկ աստիճանի փառաց ձերում տիրաձիր գլխաւորութիւնք։ Ա՝յ զի և մասունք անդամոց սուրբհաստեալք, մաքուր սրբութիւն, մերձաւորն ընտանութիւն, յաւին կառուցման գլխոյ գովելոյն արժանապէս միաշարդեցայք։

Ուստի անխտրոց և անանձրպետ, միակենցաղ և զուգակցորդ ընդ Քեզ գոյք փառաւորեալք։ Քանզի և զսոյն հայցեաց միածինն առ պատուականին վերընծայեալ զբանիցն մաղթանս, կամիմ և սոցա ընդ իս պերձանալ, Հայր, ի քում պարգեւս։

Զ. Քառակի երիւք գովութիւք բարեաց բաղդատեալք, չորեքծագեան մասանց էակաց անպատկառ խօսնակք, միաբան բնութեան եղակաց սիրոյ Քատագովք, շնորհազարդ բանին տուողին հոգեշունչ աւետարանիչք, ամոլք ուղղաձիգք և հանդարտաքայլք, զուարակք եղանց բանականաց և նուիրելիք, լծակիցք կրօնիւք համահետք և խոհեմին Թացք, ի գործի ձեւակի խաչի խորհրդոյ՝ զմարդկային սրտից անդաստանս հերկագործօղք, աւազանին փրկագործութեան ունողք, և ի պարանոց ազգերի ձերում ամբարձողք։ Քանզի ի կոյս և յառաջն քառից ստորադրեալ գունդս երիս երիս թուով երկոտասանս ի ձուլելի ձեւս պատկերաց ըստ լուց կերպագրեալս, անդրիագործս՝ արհեստակիտուածս, ի դիտումն կայից հիւսիսոյ և դիմաց ծովու ընդ ելս և ընդ մուտս ծագմանն արեւու, զկերպարան ձերոյ օրինակի, լձակ ջրակիր խաչանիշ և պղնձանիւթ ուսով հաւատոյ ի գաւիթ ծոցոյ սողոմոնեան խորանին յարկի, իբր եկեղեցական խորհրդածութեամբ վերադիտօղք տիեզերաց. ի նպաստ պատճառի նոր նորոգութեանն զմկրտութիւնն ջուր սրբելով։ Որով զաներեւոյթ մտացն ծածուկս սրբագործեալ, իբր ստուերին առակաւ՝ ի նորս տեսակ կարկառեալ զհինն՝ զապաւառ թաղանթի աղեացն որովայնից, որ մերումն հոգւոց է աղգակցութեանն, զմտատուցելոց պաճարեղինացն։ Քանզի անվրէպ և անտարակոյս նշանակ դիմաց խորհրդոյս կերպի ի ձեզ յարմարի, ով ՚ածարեալք, խրոխտք՝ միանգամայն և հանդարտք։

Է. Ի սմա օձակոխն զարմի որդւոց եղջերուաց, ի ձեռն խնամոց զօրութեանն մարգասէր և ամենաստեղծ հոգւոյն ժողովեալք, և մանաւանդ երեալք վիճակաւ բանին ընտրութեանն ըստ նախագուշակ ձայնին Դաւթեայ։ Ի՝ահացու և սատակիչ թունիցն սատանայի ի սպառ

սատակիչք։ Պնդակ խստութիւնք ընչից վիշապին՝ առաքինոյ պատրողին պատրիչք։ Հրեշտակք ղօրութիւն, զուարթունք անխիղճելիք, լուսեղին պատգամաւորք, անաչառութեան բանին դատողին ընծայատուք, ընտրհապարգևք կամաց անեղին։ Սոփերք հոգեմտաւեանք ծածկուեն խորհրդոց Աւին, տառ ամենակաց՝ ծննդոց մարդկութեան նուագք, տախտակք տիրապիծք և ՝ձծադրոշմք։ Ցօն նաւակատեաց հանդարտաձայն սաղմոսաց, ամենայնիւ գերազանցեալ գովութեամբ։ Օ գեցողք փառաց քան հանդերձից, բնակողք երկնից քան թէ տաճարաց, կենցաղակից լուսակերպից՝ քան թէ երկրայնոց, հոգիք թեթեւք ՝ի ծանձր մարմնի, անձինք անբծութեամբ հիւթիւ չաղկապեալք, արագունք ՝ի թռիչս իմաստից բանի, ՝ի մուտս անմատոյց մօտ սլացեալք, հրաշեղէն երկնայնոց երկրաւոր գոյութեամբ պատմիչք, անմահին փառաց՝ մահացու զանգուածով քարոզք։

Ը. Ներօղք ղգլխաւորն դիւաց՝ կարեթիւ հանճարոյ, խաղացեալք բռնաւորին աստուածեամբ՝ իբր ձագու փոքու դիւրըմբռնելոյ։ Երկամարմին մատանցն ձեռաւքն՝ քան թէ ագուցեալ ոտիցն կօշիկք զխածանողին խորտակեալ զգլուխ։ Որոյ օրինակ նմանաչաւք ՝ի ձեռն տիրամեծար մաքրական և ընտրեալական պարգևաձիր և շնորհաբաշխ աջոյն Պաւղոսի՝ երևի հերքեալ ՝ի բորբոքեալ խարոյկին քոյոյ՝ ՝ի բարբարոսական վիճակին առաջնին. յորում հրաշապէս ծանուցաւ Յն յաշակերտին համարձակութիւն։ Վանգի իբր ծածկեալն ընդ վարագուրաւ խորութեն՝ կերպաւորութիւն պատկերի բանին Յոբայ ՝ի յաւարտումն լրութեն կատարման լայնաձիգ և դժոխամարտ հին ասպարիսին հանդիսի՝ զմրցանակ յաղթութեան գլխաւորեալ երջանկին, ապա ձառեցաւ անոստ սաստկութեի անգծելի, սխրալի և անբերելի կարծրութեն չարին կակղացեալ. և յաւէտ վանեալ անդր քան զկայ կենցաղոյս կարծեաց պատժապարտապէս ըմբերանեցաւ։ Նոյնպէս և սորին իւրով համակրօն դաւանահամբոյր գործակցօք իբր ՝ի դաւիթ զրկաց մի նաւի՝ զերկրածուփ ալիս կո-

խողի՝ սակաւաթիւ գնդաւ երջանկացն հանդուսանակ-
ցեալ այնր յաղթութենէ, զմեղեալսնաձառ բանսարկուին
զգլուխ՝ բոլորովին իւր զգայութենէ և խորհրդանս-
ցաւ կոր կամացն մեքենայից ՚ի յուսոյն արմատոց
հատեալ վերակործեցին։

Թ. Ա՝ան զի ընտրեալն և զարմանալին կիւրե-
կեցին, որ Յ՝ոբաբիայ հեթանոսաց կոչմանն առա-
քեալ, երանեալն ևս և հրաշանուէնն ախոյեանն և
քաջամարտիկ, միտանուէր հայցմամբ աղօթից ըզ-
դիւաբախ խորոյն կոհակս կարկեալ նհանդեալ յինք-
եան խափանեաց։ Յ՝ու թէ և ՚ի վկանայն կայից
պատուաստալաստն փայտից՝ ՚ի ստորին պատոյս խո-
րոյն սասանեցաւ, այլ անմարմնաբար՝ քան թէ
Թանձրապես յաղթեաց անդնդոց և անդնդայնոց.
և ծաղրականաւ այպանմամբ հենդնեաց ըստ մե-
ծին Պաւղի զմայրն ահագին զարմից դուզակաց։
Յ՝ու անսայթաքելի ոտիւն հետովք՝ ընդ անկոխն ըն-
թացաւ սահման յատակի, զանհուն ծովուն միացեալ
ծոյն բարժանեաց ըստ մեծին Մ՝ովսէսի, ՚ի խորհուրդ
հմուտ որսողաց առաքաւ նաւին բազմահոլով հո-
գիս նաւաղացն՝ ՚ի հեզձմանէ խորոյն փրկեաց։ Յ՝ու
շրթնաշղթայ կարծր առասանաւ դանդանաւանդաւ
կապ պաշարմամբ զկործանողին մալեալ զկզակս
ըստ առաքաւոր բանին նախնոյն Յ՝ովմայ, զկորու-
սիչ և զմահացու Թոյնս իժին ժանեաց՝ զօրութեամբ
կեցուցիչ խաչին պակասեաց և ցամաքեցոյց։ Յ՝ու
այսպէս գուշակեալ գիր ստուերական ձշմարտաբար
արդիւնագրեցին. և կոխեցին մանրեցին զատամունս
օձից խիստ հերձուածողաց և Թունից կարձաց նոցին
գործակցաց, ընդ զօրացեալսն ՚ի չարին մահու և
Յ՝ելիարայ։

Ժ. Յակ լծակից և կցորդակից նորին առաջնին,
սկզբնաթիւն և նախամեծար, վէմն հաստատեալ և
արձանն հիմնացեալ, քարն անուանի եւթնաթիւ դա-
ւանութեամբ յարմարագրեցեալ, ըստ չափոյ խոր-
հրդական ամանակի այսր յաւիտենի սկսման և
լրութեան, ընտրեալն և փառազարդեալն Աեփաս։
Աենարարին շրթամբք երանեալ, և բարերարութիւք
բարձրացեալն հօր ուշադրեալ և խնամատնացեալ. և

ուղղահամբոյր դաւանմամբ հոգւոյն իմաստից տե-
սեալ զանժամանակ պատճառ անքնին ծննդեանն,
արժանապէս բարգաւաճեցաւ բանիւ անեղին, երանի՛
եքեզ Աիմոնի ժառանգ Յովհաննու։ Աւստի և նովաս
ըստ սմին 'ի նոյն ուխտակցութեն պաշտօնակցաց սո-
ցին՝ սոյն երանութեն անձառապարգև ձայնիւ արար-
չին աւետարանագրեցաւ։ Օ՛ի թէ խոստովանու-
թե՛ նոցին համաձայնք՝ և փառացն զուգապատիւք.
և մաղթանօք մարդացեալ Աւին 'ի զօրուէ բանիցն
նոցա մեք պատսպարեալք, և յաւերժական յոյսով
պաշտպանեալք, յաղաչել փրկչին մարմնոյն Աստ-
ուծոյ ողորմութե՛, հայցեմ ասելով, որ-
պէս վասն սոցա՝ և յաղագս հաւատացելոց բանիւ
սոցա լիս, իմ բարձրեալդ Հայր։

ԺԱ. ԱՀա պատճառք և սկզբնաշաւիղք քնաւին բո-
վանդակ բազմաբեւեր բարեաց այսր երանութեան։
Ատրմնացելոյն կենցաղակցորդք, արարողին բանից
խօսակիցք, մատակարարք կամակատարք, կենարա-
րին կերպին նկատօղք, ծածկութե՛ փառաց փրկո-
ղին մերկապէս տեսօղք, յընտրելոցն թիւ անուանիք,
'ի դասակցութե՛ հարանցն հրաշալիք, վկայք նորոգ-
մանն վախճանելոցն։

Ակզբնաւորեալք 'ի նախապատիւ և կանխամեծար
սերմանէն Աեմայ անդրանկին Նոյի, զուգաշաւիղք
մաքրուե՛ վարուց Ատեքիսեդեկի, զաւակք խրախու-
թեան դոգոյն Աբրահամու, ժառանգք գովուբեան
գրկացն Իսահակայ, որդիք երանութե՛ ուխտին Յա-
կոբայելի, զարմք և շառաւիղք աւետեացն Յուդայի,
աշակերտք գերազանցք օրինացն Մովսէսի, ըղձա-
կանացն և գուշակելոցն մերձաւորք և առաջակայք։
Ընպարտելի կորիւնք առիւծուց, պատարագելի ա-
մենք գառանց, տիրահաւաք գումարք հօտից, ճաճա-
նչարդ աղինք գնդից, անդրանկին հօր ժառանգա-
կիցք, եղբարք փառաց միածնին։ Ատրմինն Յով
'ի ձէնջ ըստ վկայութե՛ն մարգարէին. մարդկապէս
ետր Աստ 'ի ձեզ, և դուք հոգեպէս ուղերձեալ 'ի
նա։ ԱՀա այսպիսեօք, և նմա բազմօք անկշիռ և ան
համեմատ գովեստիւ պատուեալք և փառաւորեալք։
'Ի նոսկոյն կենաց ընձիւղեալք, պտղաւէտք, հրաշա-

նշանք, քաղցրաձայնակ որթոյն բարուենակք, աձուցանաձիզ ուռք վարսաւորք։

ԺԲ. Արդ այսու բարգաւաճական բարեբաստութեամբ՝ ի բիւրուց թերկրալիր բանից հրաշանշան և հաճոյական խորին հանդիսիւ անտխուր հերձուանօք տօնեալք։ Օ՛ի թէպէտ ննջեցիք կափուցմամբ երկրաստեղծք աչաց, ընծայեալ ամենուսնակ և յոքնըմբռնող նախածին ծոցոյ մերն որովայնի հղածին զարմի, այլ կենսատու բարբառոյ սերման ձերոյ բոյս ցարդ և ցուցանի յանհատս և յանհամեմատ թիւս ամբարոյ արդիւնատրութեան։ Կենդանիք՝ ի մահու, անմահք՝ ի մարմնի, անեղծք՝ ի ստեղծման, միանձնաւորք՝ ի սկսման։ Ոչի վշոյ և հոգւոյ նորա առաքեալք, կաճառակիցք կրօնից փըրկչին, զուգաշաւիղք պարագրողին, հանդուներտիպք երևելոյն։ Հօրն ընդ միածնին փառք և աշակերտք, անսկիզբն և անժամանակն հոլթեան աղբք և ընտանիք. որպէս ումն յումեմնէ առեալ՝ ումանց իմաստասիրեաց։ Արժանապատիւ փառօք առաքեալք՝ ի ծածուկ ծոցոյ ստորինչեցելոյն. և՝ ի ձեռն ձեռնադրութեանն ձերոյ՝ մարգարէք Աբգարոս և Տիմոթէոս՝ ի ձինչ աւետարանիչք անուանեալն պատուէր բարձու Ալ լսին աշակերտ սրբասնունդ պատանին Մարկոս. անուանակիրն յարութեանն, պատմողն համբարձմանն՝ անտիոքացի համբակն Ղուկաս, բժշկապետն անձանոյ, քան եթէ մարմնոյ։ Ձեւք և՝ ի ձինչ հովիւք և վարդապետք։

ԺԳ. Խրճնաճածուկ բարբառոյ լեզուք, օտարատցեղ ձայնից յայտնութիւնք, աներևութիցն բացերևմունք, ընդարձակեալք և առատացեալք, ՝ի զօրութիս, յայցելուիս, ՝ի հանձարս, ՝ի պատասխանիս, ՝ի համարձակութիւնս, ՝ի պատշաճաւոր դարձուածս բանից, յաջողուածս երկաքանչիւրոց՝ եղծման որպէս Սափիրայն, և նորոգութեանն իւր Տաբիթայն։ Ընուշութեան բուրմունք հոտոց։ Ձայնատուք վերջ ահեղ որոտման, Յաներեգէս՝ ի Տեառնէ անուն ձեր. ըստ այսմ զօրացեալք և քաջացեալք, անշէսս ոտից գարշապարօք խրախուսեալք անգայթակղելիք։ Հոդիւք փայլմամբ առաջնոր-

դեալք ՚ի Հրագէն կենաց՝ ընթացից ձերոց գործա-
ցան, ընդհաշտուիղք և լուսատեսիլք. յերկրային
տոհմէ աննման: Ջոդակին աչօվ տեառնագրեալք
՚ի նորոգութեանն նշանակ. ախտից և մահու վշտաց
սխրուէ՝ ՚ի հրամանէ Ջհին յաղթական, անպարտե-
լիք և արուարագոյնք. ըստ երկնային զօրուն՝ զու-
գական: Ջուտք հետոց ձեր ՚ի փառս ՚ի յերջանիկ
վայրկին սահման, հարսանեկան պարուցն կցորդք
՚ի կենդանեացն կայիցն խորան. ամենակալ ձեռինն
օրհնեցեալք ՚ի դովեցեալն աւուր համբարձման. խոր-
հրդական խուժիք համարու պատկանաւորք թիւք ել-
կոտասան. ատենապետք դատաստանի ՚ի սոսկալի ա-
ւուր նորոգման:

ԺԴ. Ջրդ՝ այսքանեօք խնկելի և նուիրելի այլ և
սիրալի և զարմանալի մասամբք երանեալք և քա-
րեբանեալք, լուսանշոյլք և ոչ հողանիւթք, հո-
գեգումարք և ոչ մարմնագունդք, յաղթողականք և
ոչ պարտելիք, երկնակենցաղք և ոչ երկրանունդք,
անապականք և ոչ մահացուք, սրովբէամաքուրք և
ոչ երկրամեղք: Օ՚ի թէ և ստուգապէս մարդք ՚ի
ստորնայնոց համագումենից, այլ հրեշտակք հաւաս-
տապէս՝ բացակայք կայից երկրակիր կրօնից: Ջհայ-
նուամ գլխոյն Յիսի երկոտասան յօդուածք անդա-
մոց. կենդանարար կամաց բարձրելոյն հաճոյական
յիշատակարանք: Ջանզի թէ որ մարմնոյն են, ոչ լի-
նել տեղի այ կարեն. և դուք ոչ էք մարմնով, այլ
հոգւով. եթէ իցէք ունօղ այ հոգւոյն. և տարտրո-
հիլ առ ՚ի միմեանց ընչաւոր մարդն և անճնաւոր.
ապա հոգեպէս՝ քան թէ մարմնաբար ընտելութեդ
ձերոյ կենցաղ:

ԺԵ. Ջշանագիրք կերպատարագք այլազան զար-
մի միաթիւ շարի երկակի հնգիցն և երկուց վարո-
ղացն և յարմարաց տարեր երկրի, և ամաց շարժու-
թէ և հաստատութէ, ըստ քերթողացն Ջհագրու-
թէ: Ջանզի նուիրական ոմն է ՚ի սոցունց, որպէս
ոչխար կատարեալ արու. և այլ գործնական իբր
զուարակ լծաձիգ, կասօղ. և արքայական՝ իբր մար-
դադատիչ և առեւծ հզօր: Ջս այսպիսեաւ թուով
յարմարեալ մինչև ՚ի կատարեալ թիւն երկոտասան:

Երկոտասան և գրութիւն երկրի ձևականութեան. երկոտասան և աւուրցն ժամուց տունջեան տեսակ. երկոտասան և գլխաւոր թիւք անդամոց մարմնոյն. երկոտասան ըստ այսոյ վկասին զբ քառամանեակ. երկոտասան կայլակք աղբերաց, և որք արբին զայն զօրապետք. երկոտասան և վկայական արձանք գետաձինք ի Յորդանիսայ ծոցոյն համբարձեալք. երկոտասան և զոր Ներեսա կառոյց նպատակ ի կործանեալ հիման սեղանոյն։ Ահա երկոտասան թիւ խորհրդական՝ զորքազան անուան ձերոյ յիշատակարան կոչման՝ վկայեալ վերակարգելոցդ։

ԺԶ. Եւ ես ի սոյն յարեալ համբարձիդ ի յիմանալեացն յանհասութիւն զպտղածին Հոգւդ երդոյ տուիս՝ զպակօղ և զնորոգօղ անուան էութեան աւետարանաց զբ Երրորդութեն։ Ի անգի ի սողոքես երից քառադրաց յորջորջեալ կոչմամբ զծանուցեալն մեզ տերութիւն միափառ և համապատիւ, անպարագիրը և անվայրափակ, Հայր և Որդի և Հոգի, և միաշարք դասեալ զթիւն պատուական և օրհնաբանեալ երից աղբակցայ՝ երկոտասան վերանկարի։ Ահա և յայսոսիկ ցանկալիք, և վեհագունաւն վկայելիք, և անձառելեաւն վերագրելիք։ Ինտանիք ով, և սրբոց քաղաքակիցք. շինուածք իմանալեաց, անբակ տաղաւարք. արարչութեանն օթևանք, և ախորժելի բնակարանք։

ԺԷ. Ոսկ Երեքտանասնիցն ձառ, փոխարկեալ ըզդէմն բանիցս, յաւէտ ըզձական և ախորժելի խորհուրդ ցուցանի։ Ի անգի զայսքանեաց բազմագուսմբ դասուց ընտրելոց՝ որ բան զօրասցի ի նուէր ներբողելնի։ Ալ ասն զի յամենատքն գրութէ աւետարանական պատմաբանութեն՝ զկնի մաքրակենցաղ և տիրաքաղոզ Հանապարհորդութեն առ առաքօղն Քեպեալ հասին, յանդիմանակաց տեառն պատկերի զուարթ բերկրանօք. և զօրութէ անուան կոչողին փառաց ինքեան պատմէին, զմերժումն ախտիցն և զայսոցն հալածումն, աւետարանեաց նոցա մեծագործն յուսոյ տեսութէ. Ինդացէք ասէ ընդ գրելոյ անուան ձեր յերկինս։ Ալ փափագելի մեծի և աներկևան երանութեանն. քանզի որ գրեաց զնոսա Հայ, նոյն և

վկայեաց, այսու պարգևօք անուանակոչեալ ժառանգք և որդիք նը արքայութեն։ Ովք ածազգեստք ամենայնիւ գոյիւ կատարեալք բազմաբեւր բարդեալ բարուք, իսկապես շնորհիւ պատարեալք, ապկնիազ պարգևօք լցեալք։ Նոքանանենկի երկակի լեզուացն այլասեռ ձայնիցն ի մի տեսակ զուգաշուրթն խօսակցութե համահաւաքիչք, բարժանելոց յոքնակի ազգաց՝ անսասանելի շաղկապք սիրոյ, դասք և դասապետք վայելչականք պարուց, տիեզերաց երկրի դատաւորք, գումարք թագաժառանգք կայսերի, ինքնակալ պետութիւնք իշխանականք, գունդք գեղեցկագեղք նախարարաշնեայ պատուելոց, եկեղեցիք ընտրելոց երկնից բնակութեն, կաճառակիւք և կցորդք դասակցութեցն վերից, կոյտք կայունք և անխախտելիք անմահին փառաց, կցորդք հանդիսի իմաստութեանն հանճարոյ, կամք և յարձակմունք ակնարկութեան վերնայնոյն, շարք աստեղանիշք եկեղեցւոյ հարսնութե, արհեստական ձևք պսակաց զարդու Սիոնի, եւ Թանասուն բոյսք արմաւենեաց ի նշանանուն Եղեմ։

ԺԲ. Նոյ միանգամայն գրելով զամենայն ի սոյն կարգ բանիս պատկանագրութեան, զնկար անկուածոյ Ճառիս դրուատի՝ պայծառապէս պճնազարդեցից։ Որ բանն ածառի յայ անժամանակ իսկութեամբ ծնեալ միայնակ անճառն յանքննին ծոցոյ. որ և ի կնոջէ կուսէ մաքրելոյ և յանարատ սրբուհոյ, անդրանիկ և անհարազատ, ի մօրէ յատուկ՝ անհաղորդ կամաց հօր երկրաւորի, ածն ըստ տեսականին, և մարդ ըստ պարզունն միաւորական խառնութե. ոչ սոսկ և ոչ վայրապար, այլ մեծի իրակարգութե նշխար՝ զնեզ սրբագունդ դասք առաքելոց վերակոչեաց։ Ոչ ընտրութե միայն վկայեալ, այլ և պատշաճականաւ թուով պանծանաց պայծառացուցեալ, կարգք և կնիք տասանց եւ Թանց խորհրդականաց, ըստ ժամանակաց յեղյեղուն շարժուն Թեան դարուց։ Նոքա զերկուսն յեւ Թանանանիցն Թիւ յարակցեալ, զնշանակ ապառնեացն և զներկայիցս, զերկնաւորացն և զստորնայնոցս, զմարմնոյ և զհոգւոյ, զտապանակակիր տախտակացն, զեր-

կեակ գոյութեն երկնից, զերկուս լուսատուացդ, և զլուսաւորացն երկնային, զարդեմայ և զմերս երկրի, զՆոյն օրինի և զնորոյ աւանդութեն։

ԺԹ. Այլ արդ այսքանեաց խորհրդոց՝ նկարագիրք և պատկերք։ Ոչ առաքեալք միայն, այլ և նահատակք. և ոչ խոստովանօղք միայն, այլև վկայեալք. ոչ չարչարեալք միայն, այլև կատարեալք. ոչ մարտիրոսք միայն, այլև մարտիրոսք. ոչ ընծայեալք միայն, այլ և նուիրեալք. ոչ մատուցեալք միայն, այլև յարգեալք. ոչ պատուեալք միայն, այլ և պատարագեալք։ Ոչ մարմնաբար միայն ծախեցեալք, այլ ինկապես բուրմամբ վերնայնոյն ծխեալք. քանզի հոտ անոյշ Աստի և հօր նորին հաճութեն զդովեալդ դաս՝ խմաստունն Պաւղոս քարոզեաց. ցանկալիք և երևելիք, գովելիք և պատկառելիք, ինկելիք և պսակելիք։ Ընացուածք զարմի տանն Յակոբայ, զաւակք անհաղորդք չարեացն Յոդովմայ, ժառանգք հաւատոյ նախնոյն Աբրահամու։ Օ՛ի թէ ոչ տեառն զօրութեեց Թողեալեր զձեզ զաւակ ընտրութեն նորոյ Միութեն, լիներ հանգուցանակից ստուերականն Սինայի։ Այլ հաւքարձաւ բարձրացաւ Աստ փառօք յերկրե՛ի ձերմէ բանէ, որպէս Թափեցաւ անկեանն՛ի վերուստ յիւր գԹութէ։

Ի. Այս արդ՝ եթէ Հրոորդութեանն իսկութիւն՛ի լեզուէ ձերմէ ծանուցաւ, և արարիչն ձեւք պատմեցաւ, և այ որդին՛ի ձէնջ քարոզեցաւ, և խորք անքնին վերին պարգևացն յերկրի յայտնեցաւ, ապա երկնայինք և հոգեձաշակք և արփիաբնակք, որդիք՛ի հնորհաց հօրն բարձրելոյ՝ քան Թէ երկրածինք զձեզ դաւանեմք։ Օ՛ի եթէ՛ի ստուերագիր տառն մովսիսեան անդրանիկ որդի Իսրայէլ, և դարձեալ՝ որդիք էք այ և տեառն ձերոյ. ևս և յամբաստանաւկանն ձայն նախադրեալ յայ անուանեալ որդիս, որք առ դատերան մարդկան մտին. և դարձեալ, ես գրեցի Թէ աճք իցէք, և բարձրելոյն որդիք. իսկ պաշտօնէից նորոյ աւետեացս, և Հմարտութեանն տեսողաց, և Աստի ժառանգակցաց, և անձառ մարմնոյն բաշխողաց, և աճելոյն կերպին անկակցաց, առ որդեգրութեանն պատիւ ոմն Թերամտեսցէ և երկ-

քայեսցի ։ Ալ ասե զի որ ՚ի նոցանէ բանն և քարոզու-
թիւն՝ եւից զտիեզերս ։ Այլ իբր զկամայն այ զպատ-
գամն ընդ արարածս տարածեցան, և որպէս զարար-
չական բանին երիվարս՝ զծովածուփ ալիս կոխե-
ցին, և զվիշապն ապստամբ՝ հզօր մենքենայիւ բա-
նին սանձեցին, և զբռնացելոյն գանձուց մթերս՝
արիաբար գերեալ կապտեցին, և զփիւնիկեցի զօ-
րուն գումարտակ՝ ՚ի կենդանի ջուրն հեղձուցին, և
զկարծրացեալ մտաց անդաստան՝ արօրադրեալ գե-
րահերկեցին. և զմարդկան ապստամբութիւն՝ կրօ-
նից և մահու հնազանդեցուցին, և զանօղջախոհ կեն-
ցաղ երկրածնացս՝ մաքուր հանդիսի կուսութեան
տուին, և արարողին արագ սուրհանդակք՝ ընդ հե-
ռաբնակ վայրս արշաւեցին, և իբր զանձուկ գաւիթ
մի յարկի՝ զաշխարհս ամենայն ոտամբ չափեցին,
և իբրև հին արուեստին վարժիւք՝ զմտաց սրտին
քսակ մաքսեցին ։ Այլ ՚ի ձկնորսաց դասուց կոչե-
ցեալք՝ զբանական կոյտս ուռկանեցին, և ՚ի հալած-
չաց ՚ի սոյն հրաւիրեալք՝ զխաչեցեալն ՚ած պատմե-
ցին, և ՚ի հեթանոսաց ոմանց ողջմեալ՝ զմոլեգնա-
պատիր կուռսն մաքրեցին, և ՚ի վերիպարհետ բժըշ-
կաց ընտրեալ՝ զաչս ոգւոց լուսաւորեցին, և յա-
ղախնածին ծառայից ստրուկք՝ հրամանատուք տե-
րանց իշխեցին, և յայսքանեաց նուաստականաց՝ ՚ի
ծայրագոյն չնորհ ժամանեցին ։

ԻԱ. Այլ իբր զմի հնազանդ պատանի՝ զաշխարհս
ամենայն աշակերտեցին, սկզբնաւորեալ Յերուսա-
ղէմ, զնսեմմանուն վայրսն Կեդարու, զանունակիր
կոչման Թոռնին Հագարու որդւոյ Աբրահամայ, զծո-
վական կղզիս քետացւոց զարմին Վանանու, զմի-
ձակն բաժնի ժառանգութեն Աեմայ՝ բնաւին եզե-
րօքն, զԱդիրոնն բազմահոլով, ընդ ասորեստան
մեծն և երկայնանիստն, զԱինկորոմն դրամբքն Պար-
սից, տոհմին Ամմանայ որդւոյ Աետուրայ սերմանն
Աբրահամու ։ Զվայրս արևելեայնս Աարաց և Ա-
րեաց պարթևականաց, Աադանայ և Աադիանայ,
զպարսկահեղձնն խուժաց, զի իբիա ընդ ծոցն հա-
րաւային ծովուն հզօրի, Պոպէիւ հանդերձ զկողմն
Ասիայ ։ Զերիան ՚ի հնգից Աթեովպիայ. ոմն ՚ի

նոցանէ և զերկուսն ընդ երիս . այլ ոմն ՚ի նոցանէ զաշխարհ փղշտացւոց և զՕդատնոյ՝ հանդերձ հնդկայնօք , և զՕնուր փիւնիկեցւովք : Օ սատա-զայիս և զսկիւթացիս , զվտիճնացիս՝ որ և Հռով-մայեցիս , ընդ դաղմատացիս և եղիմացիս , խառն ընդ հիւսիսի և ընդ արևելս . յորում առաւել քնա-կեաց քանն նոցա և աւանդութիւն : Ասեն զի ընդ-արձակեաց ած Յաբեթի , ըստ մարգարէութեն Նոյի , և բնակեցոյց ՚ի տան Սեմայ , այսինքն յառաքելա-կան վիճակին բաժնի . որք ՚ի հարազատութէ սիրե-ցեալն Սեմայ հովուեցին զնոսա յարկաւ վերարկուի Թևոց պատուիրանին վերակացութէ :

ԻԲ . Նա այսպէս արագելով հետիոտս տարժա-նաքայլ քրտնաթոր և աշխատակիր վաստակօք ընդ լայնատարր ընդարձակ տեսակ երեսաց գետնոյս տարածման , ընդ Յոյնս , ընդ բարբարոսս , ընդ ոչ լսօղս զկենդանարար անուն Յոի , ընդ անճանաչս մարգարէիցն և նոցին պատգամացն : Նա իբր զմտաց անփակ սրուէ , և զփայլ մաքուր փայլատակման՝ ընդ արարածս ամենայն հետևեալ լցին : Նա՝ ի խաւարին կռապաշտութէն վերածեալ՝ ի փառս զտոհմ ազանց երկրի , փրկեալս և ազատեալս՝ աւազանին անբիծն արգանդի անխարդախ ծնունդս և անեղծ ժառանգս՝ հաստարակաց փրկողին տեառն ընծայեցին : Նա իբրև որդիս՝ քան թէ պաշտօնեայս ծնողին այ՝ մերն Յոի կենցաղակից գոլով մաքրաբար , արժանապէս լու-սածին մարմնոյն գովեալ հանգստեանն սպասաւո-րեցին . որում յանդիման աչաց նկատման՝ զի նմա-նէ յայտնեալն ած բոլորից վերապատմեցին : Որ և նուաւ և զինի նորուն՝ անձառելի հրաշագործու-թէք զախտս մահացուս ՚ի մարդկանէ հալածեցին , զտեսանելիս խաւարեալ աչաց՝ կրկին յաւելմամբ լուսաւորեցին , զլուծեալ անդամս ախտացեալ մարմ նոց՝ յառողջութիւն կենաց կանգնեցին , զմեռեալս յարուցին ՚ի կեանս վերստին և յանտարակոյս փրկու-թիւն , զդևս աներևոյթս չարին զօրաց հող-մով բարկութեամբ կամացն այ՚ի սպառ հալածեցին , զելս ընձայից երկնային մտից բնակութեան՝ հողա-ծնաց բացին , զահեղին հեթանոսաց՝ աչ ձեռնադրե-

յին, զՀրեական ձեռնարձակուէին իշխանական բանիւ կապեցին, զփայլուսին երեսաց դեղազարդուէնե մովսիսեան կերպին՝ ստուերին տեսակաւ ցուցին, զսրտմտուէ սոսկալի սաստից վերին բարկուէնե յարթաճոյ երկրի տրոհեցին։ Այս իբրև ամենայնիւ այսքանեօք լցան լիացան և երանեցան, ապա նուիրեալ պատարագեցան ՚ի սպանդ վերնական բարձրեալ սեղանոյն, և նկարագրեալ դրոշմեցան ՚ի գիր մատենի վերին դպրուէնե։ Այս ոսկերօքն ցամաքելով՝ զօրեն կենդանեացս լինել փրկանք, և զմրցանակ յաղթուէեան փրկչին և անապական մահուն քարոզեն բարձրահնչակ աւետագրուէնէ, զմկրտուէնին և զքաւուէնին և զյարուէնին կրկին նորոգմանն։

ԻԳ. Այգբա մեր նախնիք, սոքա մեր ծնօղք ըստ աւազանին, սոքա դաստիարակք մերս իմաստից, սոքա վարդապետք աշակերտելոցս, սոքա դաւանուէեան բարեաց ուսուցիչք, սոքա եկեղեցւոյ սրբոյ հիմնադիրք, սոքա կյօրդակիցք արդարուէնէ պաշտամանս, սոքա խրախոյսք ընտրական կրօնիցս, սոքա ձեռնադրօղք քահանայուէեանս, ՚ի վայնե ընկալեալք և մեզ մատնաւորեալք, հաւատարիմ ուխտի դաշնաւորք, վկայք վեհագոյնք ՚ի ծառայուէնիս կարգի։ ՚Ի ձեռն սոցա ընդունական և հաճոյական մաղթանաց հայցման աղօթից՝ ընկալցուք և մեք մասն փրկուէնե ՚ի բարերար դթուէեանց խնամոցն այ, զօրանալ ձեռին մեր ՚ի հնօրհս, ՚ի բժշկուէնիս, ՚ի բաշխումն կենաց պարգեւաց։ Այսան նոյնին ընդ նոսին, իմում հաւատոյ մատին՝ քաւեալք փրկեալք և արդարացեալք, ՚ի վայն ՚ի տէր մեր, որում յաւիտենական փառք և միշտնջենաւոր գովեստ անդադար երգոց, ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի մեծ և յերջանիկ հայրապետն Ի տէն Յակոբ եպիսկոպոս և վերադիտող սկզբնաւոր երկնահանդէս աթոռոյ Մծբնի քաղաքի։

Ա. Բարձրացիր Աստուած հոգևոր դիմաւոր անձ նաւոր խնկաւոր և խորհրդաւոր, երկնաւոր խորան լուսաւոր գերափառ՝ յաղթող Աստուածային, քերովբէստուեր կատարի անկայի և լուծականի, կաստողի և ոչ պաճնողի։ Որ որ խաղոց և կամ կէտ գծի ի միջոց երկուց կառուցեալ՝ սահման ճանուցման վերկին և վոքունն, մահաձրկին և կենաչնորհին, յարարակային և օրաւորին, երկնայնոյն և անցաւորին. առ գիրն եղծական, և առ հոգին մնացական. սակս ծառայական միջնորմ օրինին, և տիրականն համակցորդ և սիրապատար աւետարանին ի յաշխարհականն պայման ուխտի, և ի վերնայինն շաղկապ բանի։ Աստի յաւէտ իսկապէս պարեաց և կամ կարապետ գոլով նախընթաց սկզբնաշաւիղ անստուերական պաշտելի տօնեալ երջանկացն. ուր Հարսնեկանն միադրուճի համակայուճին առ օրէնս երկրի անկցորդ, և առ հասարակաց իր՝ անհատասար։ Ուստ մարմնայինն հիւթաւոր աչաց պարագրեալ, և ըստ իմաստից անարգել դիտմանն դուն ինչ նկատեալ։ Այս քանզի անմերձ է բանիս ձգումն առ անհատուճիւն ծածուկ խորհրդոյս, որքան քանակուճիւն փոքուն առ ստուարին դիմակ, և անձկականն գիծ առ լայնականն ծիր, և մարմնայինն յօդ առ տիրականն գոյ, և ձեռինն հասումն առ մտացն արագումն, և երկրակոս հիւթաւոր առ սերափին սրբաբան, և մահացու լուծական առ վերնական կենսածին։ Ոչ ի որքան անդր և ի վեր՝ կամարն յարկի անդրանկացն կայից վկայի անդանօր հրաշապէս, և ևս քան զնոն գերակայիցն և որդիքն լուսոյ դաւանին։

Բ. Յորոց և զինն աստանօր առեալ ի գովեստ բանից մատուցից. զի ծանիցես գիտասցես նկատել խորհրդեամբ իմաստից գոյից երկիամանց, Թէ

ոչքան փողին ներհիւսին կուտին յաւելին ի յոք-
նատարը յաձախութեի չուականն յերկարուի, բազ-
մատիպ պատուածք ի թելս բանի՝ առ միոյս սրբոյս
Յակովբայ պատուասիրութեի, և իբր ի պատահումն
զօրաւորի համային յայտնապէս՝ խոկոյն ամիոփեալ
ակար երևին։ Որով և առ սոյն բերեալ զբարբառ
տառիդ, զհասարակացն կցորդութեի ազգապետ ցե-
ղականութե, լուսաբնակ և երկնաժառանգ բարձրա-
գահ օրհնաբան էիցն խմբակցութեանցն յիշատա-
կելով։

Դ. Վանդի որպէս ի ծիրս աստեղաց զարուսեակն
երկնից ի ձահ ե դասել ի շար սկսմանն, և ի պատ-
ուական ականց գումարտակն՝ զյոքնաշահն և զյա-
ձախագինն, և ի մարդս՝ զանհատս հմտականացն,
և ի նիւթս վերհադունիցն և գեղազանիցն՝ զոսկին
Սոփերայ և կամ զքարն ձաձանչաւոր լուսափայլ,
և ի կոյտս կայից բարձրութե ջերանց՝ զԱիոնն, և ի
քաղաքս զՅրուսաղէմ, այսպէս և ի գունդս մաքրե-
ցելոց՝ զծանուցեալն և զհռչակեալն։ Ո ի եթէ բա-
րի անուանի ծառ անչնչական հողաբոյս ի նիւթոց
փայտից՝ պակաս տեսչալի պտղոյն քաղցրութեան,
և անգաստան արգասաւորական պտղածին՝ ըստ ա-
ռաքելոյ՝ զօրհնութիւն ընդունի զվերնոյն, և աքան-
չանի մանանայն հացին՝ սակս երկնի, և ծով դրուա-
տի՝ ունակ մարգարտի, ապա զորպիսի արժանաւոր
գովեստ ընկալցի մայրն սկզբնապատիւ, լուսարկու,
գեղապանծ քողաշարդ։ Ա յլ և շնորհաշուք մօրն
Սիոնի վերնումն ամրոցի, որ զայծ ծնաւ մարդացեալ
և օրինակին տեսակաւ զանորակին երկնեցեալ ան-
ախտակիր կերպարան։

Դ. Աստի և աւազանն կենդանարար տիրագոյ,
զսրբազգեստիցն վերընծայեաց զանհամար ազինս
հոգեկրօնս համախորհուրդս՝ դասուց դասուց առա-
ւելութիւն լրական շինութեան եկեղեցական կա-
ռուցման, ի միաբուն զուգապարութիւն անմահից
փառաբանողացն լուսակերպիցն։ Վանդի անդ ելա-
նէին ըստ դաւթեան ձայնին՝ ազգք ազգաց, ոչ ըզ-
պաշտօնն Յակոբայ վկայել պիտակ տիրապէս, այլ
զայծն երկնի ի յերկրի հիւթաւոր կերպիւ տեսա-

հել : Այս ինչ եթէ աշխուժ արկեալ կան ձեռակերտա-
կան մարդկային բեմի ՚ի յերկրի՝ կարծրատատ և կա-
կաճափորձ և վրիպակընտիր՝ մահացու դատել դա-
տողաց , այլ դատաւորն համադոյից՝ կշռօղն մը-
տաց՝ և անգոյիցն նախագծօղ : Այս եղ զոմանս ա-
ռաքեալս՝ առ ՚ի յինքենէ , զոմանս մարգարէս զու-
շակս ապառնեացն , զոմանս աւետարանիչս կենացն
բանի , զոմանս հովիւս առ տածումն խնամոց , զոմանս
վարդապետս առ դատումն վարժից , ՚ի հաստատել
զնչքս ՚ի հողմոց խաբէութեան , ՚ի վաստակս գործոց
պաշտամանն առ Տէր : Այս հասարակացիր մինչև ՚ի
շինուածն ՚ի յոքունց մասանց միասցի յօդեալ մաք-
րապէս ՚ի գլուխն գովեալ տէրունի :

Ե · Պատանօր առ սիրն բանի ՚ի սոյն միութիւն
զուգափայլութեան , ՚ի շառաւիղէ ելեալ , ՚ի գեղեց-
կաստեղն ոստոց ընձիւղեալ , ՚ի նախնեացն բուսեալ ,
՚ի հարցն վեհից երևեալ , ՚ի տոհմէ հզօրէ յայտնեալ ,
՚ի պարագլխէն արդարոց ծագեալ , աբրահամեան գո-
գովիւ գգուեալ , ՚ի վերուստ անտուստ վկայեալ , ՚ի
յամպոց մաքրոց անձրևեալ , ՚ի նորոգ գոյութեանց
ցօղեալ , ՚ի յելից արևու փայլեալ յեդեմեան դի-
մանցն ընտրեցեալ , ՚ի գլխոյ տարածման երկրի պար-
գևեալ , յաջողակին հողմոց զօրացեալ , յակնար-
կութենէ բարձրելոյն բերեալ , ՚ի հարուստ գարուց
նկատեալ , հոգւով Այ օծեալ , ՚ի կամաց Աւին կոչե-
ցեալ , ՚ի պատճառին բանէ հիմնացեալ , ՚ի պարգևէն
լուսոյ յարդարեալ , ՚ի պսակողէն վկայից հաստա-
տեալ , ՚ի բարերարին բերանոյ օրհնեալ :

Զ · Անուն խորհրդական , կրօնքն վերնական ,
վարքն մաքրական , ընթացքն հրեշտակական , կո-
չումն գովական , նկատումն ուղիղ միական , շաւիղն
ճշմարիտ , կիրքն անհասական , աւանդն անշարժա-
կան , սէրն անկեղծական , լոյսն անշիջական , հաւատքն
անապական :

Է · Ինն յաղթական խմբից հազարաց , բա-
րեհամբաւեաւն ՚ի ժողովս ազանց , անուանին ՚ի կոյս
բաղմաց , արձանագրեալն ՚ի մատեանս ազգաց , ցրօղն
աներևոյթ գաղանաց , ախոյեանն դիմամարտիկ զօ-
րաց դիւաց , քառամանեակն գեղեցկին լանջաց , նետն

արարողին կապարձաց, աղեղն լարեալ յաղթողին գրկաց, քարն պարսից տերունեղոյն ձեռաց, գայիսոնն ընտիր հզօրին կամաց, գերակայեալն աշխարհիս մահանց, անկցորդն պարտեաց մեղանաց, անունակն նիւթոյ յանցանաց, տարօրինակն մարմնաւորաց։

Ը. Ոյն ծագեալ՝ի ստորին երկրի, ակն արևու՝ի մէջ աշխարհի, անձնահամայն իսկապէս՝ի հոլեղինի, միջնորդ կենդանի դատողին բանի, ծիր նհանջման վշտաց տագնապի, սահման կենաց յընթացս ախտի, Հարան երկրորդ՝ նորս Իսրայէլի. ապաքէն նիչ մահու՝ի խունկ բուրաստանի, նշանակ կենաց՝ի մահու սաստի, ցանկ ընչական սատակման վճռի, բժշկապետ մարմնոյ յօգեալ ընդ հոգի, հրաշացեալ գեղով՝ի դէմս կերպի, զօրութիւն ազդման՝ի տուր հաղագի, նշոյլ փրկուԹ հնորհացն Յիսի։ Ընդ այսքանեօք նուագօք՝ի զանազանակ մասունս բանի յաւէտ պսակեալ, երջանիկդ՝ի գումարս գնդի հայրապետական մեծարեալ դասուն, ընտրեալ ՚ուր՝ Յակովբ։

Թ. Ի հեռաւորաց խուժային պարսկական ազանց գիւցազանց՝ շառաւեղ լուսոյ ՚ծնպաշտութեան, ՚ի հովուէ որդւոյ Իետուրայ որ յԱբրահամէ՝ երկրորդ Յակոբ նախնոյն գերազանց. փրկողին արեան անբիծ հարազատ՝ ՚ի վէմն կենաց կառուցեալ։ Ի՚ի յերեք նեակ բերանոյ լուսապատրոյգ ձայնէնդեղ տիրազօր ձարպաւորական իւղալիր անձառապատկեր և խոթախորհուրդ աշտանակակիր ձրագացն տեսանողին ջահայեալ։ Ի՚ի վիմաքեր և արձանակառ քարէն փրկութեան Օ օրաքաքելի՝ ակն միատեսող անհասիցն և ծածկեցելոցն, շինեալ հիմն վստահութեան նմին պատկերի՝ զվարս քարիս քոահաձոյս, ոսկի ընդ արծաթ պատուական քարամբք, ըստ պաշտօնեան նշանագրութեանն։ Վետ հարց հոգեմտնունդ զաւակաց, երրորդական Լ՚ին պաշտօնեայ, ՚ի կանոնագրացն հաւատոյ՝ի դաւանաւորայ հարցն Լիկիայ՝ քակտիչ լուծանող անպատուաստ խզմամբ սուսերաւ բանի՝ արիւսեան բաժանմանն։

Ժ. Ջարացոյց հոգևոր ժողովրդոցս խրատու, ոչ եղծեալ՝ այլ գրեալ, ոչ մեռեալ՝ այլ կացեալ, ոչ

բարձեալ՝ այլ մնայեալ, ոչ լռեալ՝ այլ ձայնեալ, ոչ ղուղեալ՝ այլ յայտնեալ, ոչ պատեալ՝ այլ պատմեալ, ոչ ամփոփեալ՝ այլ տարածեալ, ոչ կարկամեալ՝ այլ կարկառեալ, ոչ քակտեալ՝ այլ անկեալ, ոչ ուռայն՝ այլ պատարուն, ոչ ցրեալ՝ այլ ամբարեալ, ոչ ստորնայինն՝ այլ վերնայինն։ Ի լայն աստիարիսի երկրիս կենցաղի՝ նահատակ յաղթօղ. ոչ սրով մահացու զինու խողխողեալ, այլ բովանդակապէս աշխարհի խաչեալ. ոչ ի փայտ դատապարտութեամբ սևեռեալ, այլ ի պատուիրան երկիւղին Այ պնդեալ. ոչ բռնաճիգ դահճացն ձեռօք յականայս պարտաւորեալ, այլ անձամբ զանձն մատուցեալ։

ԺԱ. Նոյնք իմաստասիրապէս յեղյեղեալ զկոչումն անուանդ առ ի պատկանիցն կցորդութիւն բանիս բարդութեան, ոչ ե տարապիր։ Վանդի Յակովբ՝ այսինքն ե խաբօղ, ուստի զընթացիցն գործի Նդամայ, որ ե հողեղէն մարմնասէր անասնակենցաղ։ Ոյ սան որոյ ի դէմն կերպաւորեալ մեկնապէս, որպէս թէ զնաբիսխ ուռողայ մասանց մարմնոյն անդամոց, որովհետև պարար բուռն հեշտութեամբ ախտից մոլուցն, զնա և զնորին մասին ազգակիցք ի ձեռն ըմբռնման ձեռինն ձգման ոտինն առաւել ընդ կրունկն բերմամբ, ի գլուխ կացուցեալ ըմբշամարտապէս աթոռեսիս ելլադական իւղեալ մրցողաց պատկան սարասիս, խաբեաց քան եթէ յաղթեաց։ Նդպարզապէս տեսաւորեցաւ կցորդեալ ընդ առաջնոյն կոչման՝ երկրորդիս անուն։ Վանդի նա համասերմ միաբոյս զուգաշաւիղ եղբօրն յաղթեաց. իսկ եբանեալս ի հրաշս փառաց մեծս հայրապետ, տոհմ արշակունեաց անուանակերտից, բարձընտրեաց, գահանշանաց, պատուապարգևից, պսակահիւսից, թագաժառանգաց, զկիրս մննդակից աձման հասակին ի կռուարանի այսր յաւիտենից զօրաբար և արիապէս կամ թէ հոգեպէս, իբր կենդանի անձնաւոր զինչականն քառաքայլ պարտեաց, և գերազանց գտաւ Նդոլմայ, որպէս նախնին խաբօղ Նդոլմայ։

ԺԲ. Նս քանզի գեղեցկազան և վայելչակերպ առաքինութեամբ ձահաւորեցան մարդկային ընթացք առ

միայնակ յառուսին նպատակի ընտրութիւնէ ըստ ժողովողին նախատացութեան, առաջի աչացն այ գոլ Ճանապարհք առն. և ի՝ հեչ փորձեցաւ լինել ըստ վերինն Յաւելի գնացք բարի մարդկանն զարմի, և անբիծք յընթացս այս Ճանապարհի համային երանին, ապա սեռն և աներկեւան մտաց տեսութիւն գյիշատակեցեալ յոյ հովուիս հզօրի սրբոյս Յակովբայ գհիմն սկսման և գաւարտ լրման՝ կենցաղոյս աՃման՝ յառաջ խաղացման՝ տերամբ վկայեմք։ Յաւ արմատացեալ խարխխեալ պնդեալ զսա բազկի բարձրելոյն, և՝ ի ձեռն ձեռին Յինն մշակեալ, և կենդանի հոգւոյն նորոգեալ։ Յո՞ր և բանին այ բարբառ նախաժամանեալ՝ Ճշմարտապէս գլխաւորեցաւ յասելն առ գովեալ գունդ աշակերտացն, ես ընտրեալ տնկեցի զձեզ, և եդի կազմեցի՝ ի մի և՝ ի նոյն հիմն գովելի, զի գուք յառաջեալ պտղաբերեսջիք։ Յաւ գարձեալ՝ եթէ ես որթ արմատաւոր, և գուք ոստ սաղարթաբեր, և անպարապիրն հայր՝ հանդերձիչ կազմիչ երկրագործ։ Յաւ գարձեալ՝ զանկղորդն ինքեան միութէ՝ առ պըտղոյն բերութիւն ամայի. և ևս առ հօրն իւրում պատասխրեալ զբոլորից բարեպարութիւն, աՃենայն տունկ ոչ իմ արմատացեալ ձեռամբ հօր իմոյ՝ քակտեսցի։

ԺԳ. Յաւ արդ ստուգապէս խոստովանեսցի՝ զբս այս՝ միացեալ հաստատեալ՝ ի տունկն կենաց բարեացն բերբի, և ձգեալ ձգտեալ զել շառաւեղն կենացն բանի հովւական ձայնի՝ ի վեր քան զերկինն, և անդր քան զծով. և՝ ի դամբանի գոլով երկրաւոր, ընդ բարձրելոյն գտաւ միաւոր. և մինչ երն յերկրի խոկ կենդանաւոր անցաւոր, եղև անձնաւոր մշանջենաւոր. և՝ ի խիստ վարս կրօնաւոր, վայելչապէս գոյր պսակաւոր. և անպատսպար գաւազանաւոր, հոգեզրահ շնորհիւ զինաւոր. և հասարակաց գոյն նիւթաւոր, մարմնացելոյ բանին կերպաւոր. և ստոր բիցս աստեաց՝ անկարօտին հանգուցաւոր. և մանպատ գեղ պատկերաւոր՝ ըստ արփիաբնակ խմբին լուսաւոր. և մաքրակենցաղ վարուք Ճգնաւոր, բազմաժառանգ որդւովք պտղաւոր. և ընդ երկնային ձրից պատմաւոր, արքայութէ՝ ՀՀն աւետաւոր.

և համբրէն սեռք բանաւոր , նա կրկնակի ընչով հոգևոր . և այլք կայսերաց հրովարտակաւոր , նա ի վերուստ մեզ պատգամաւոր . և մարգարէիցն հետոց ուղևոր , հզօրապէս փառօք թագաւոր . և տնանկօրէն կրիւք տխրաւոր , ընդդէմ վշտաց մահու ահաւոր . և ի դադարման եղծման շիրմաւոր , արարչական բանին սպասաւոր . և թշուառապէս յերկրի աստ վտանգաւոր , ընդ Աւեի սիրով երկնաւոր . և միակի մերոյս աղցաւոր , յոքնապատիկ պատուով բիւրաւոր :

ԺԴ• Այլ արդ յիրաւի զայսքանեաց դրուագս բղխման բանին այսր դասեցի . քանզի ամենայնիւ բարգաւաճեցաւ վերաձառելովքս տիրապէս՝ քան թէ մարդկապէս . յընթացս բանի , յազդումն ձայնի , ի հրաման սաստի , ի համբաւ բարւոյ , յատեանս հրապարակի : Հոգիս գարձոյց անդրէն ի մարմնի , յաջողաճոս արար զօրութեան , մեռեալս կանգնեաց և կենդանացոյց . զմին մահացոյց , և գարձեալ կեցոյց , զի խմին մեծի կատարեաց զհրաշս , աչաց ընծայեաց վերստին լոյս , աւուրս համառօտեալս յերկարաձգեաց , զյաճախութեան ամաց զգնացս փակեաց , նշանս գործեաց մեծապէս , զգոյնս հերաց նոր յեղանակեաց , ծերութիւն ի տղայութիւն կանխեցոյց , ոգեղացոյց զմսեղաւ պատկերս , ամօթով ծածկեաց՝ քան թէ վերարկուաւ , զհասակ օրիորդաց եցոյց պատաւունս : Աթէ օրհնեաց՝ լցաւ , եթէ անէծ՝ արձանացաւ , եթէ գուշակեաց , կատարեցաւ . եթէ մաղթեաց , իմկեցաւ , եթէ նուիրեաց , ձենձերեցաւ . եթէ բանս եդ , կառուցաւ : Ընդ երկնայնոցն կցորդեցաւ ի կարգս բանից , զթանձրութիւն Աւետարանի էհերձ , զերկիր բաժանեաց նշանաւ խաչին շեշտակի , քան թէ Աովսէս զծովն գաւազանաւն . աղբեւրս յանապատի բղխեցոյց , յանդընդոց երկրի՝ ջուրս խաղացոյց , ի ստորին ծոցոյ անբաւ խորութենէ՝ վտակս կոչեաց , փրկութ ի թշուառութեանց՝ բազմաց աղօթեաց , բարեպատեհ ամաց հանդիպեաց , զմեծն արքայից օրհնեաց , աջ կարկառեաց ի գագաթն՝ զոր հրեշտակք պսակէին , իբր առ նուաղ՝ լաւ օժանդակեաց , ի շուք ընդրկի զաղ-

դու անմարմնոյն տեսաւորեցաւ, մատակարար մարդկային կերպին՝ զայ պաշտօնեայն հաձեաց, ի տապալնակի մարմնին զհոգին յաստեացս փրկեաց։

ԺԵ. Վանդի յիշատակեալ զլաստն ասպրացու նոյեանն փայտի, յորում կեցին նուազք յանբաւից, և իսկոյն ի դէմս առեալ զնորհուրդն՝ իմաստապէս տպաւորեցոյց, զաշխարհ իւրայովքս պատկեր ծովու ծփեալ ի բազմաց, ոչ լուծական ալեօք կոծեցեալ, այլ ի զանազան պատահմանց շարժեալ, ախտիւ զայրացեալ, մեղօք պղտորեալ, յեղանակօք այլայլեալ, և ընդդիմակայ ներհակօք զիրեարս բախեալ։ Այն յաղթէ, և ոմն պարտի, փախնու արշաւէ յանապատէնն սահման, և անդէն նհանջի։ Իբր դուման կենդանի զօրաց՝ միմեանց պատահեն, և անդէն ցրին, քակտին, լուծանին։ Իբրև ազինք զանազան ազգաց ի զուր խառնվելոց յերկրէ կորուսեալ, անշնչապէս բարբառին, անձայն աղաղակեն, անխորհրդաբար խիզախեն. կեան և ոչ երևին, գոն և ոչ էանան, են և ոչ Ճանաչին, մնան և ոչ տեսանին։ Օփոխանումն էից առակեն, զնաղացումն ժամանակաց յայտնեն, զսասանումն աւուրց նկարեն, զանցաւորացս բարձումն գրեն։ Ի ծովու են ոլորագիք ահագինք՝ գնաւորին սաստկութիւն ձևիանաման անուանեալ կիտիւ. են և մանուկք ընդ նավս տակըք, բազմացեալ օտարատեսակ այլազան գարմից. բանայ զկոկորդն ըմբռնողական, և ձգէ զնաւսա իբր ի վիհ մահու, և են նորա նիւթ պորտոյն պարարման։ Այն և յերկրի բռնութիւնք բռնադատիչք փոքունց, որք զօրեն սոցին, իբր նա նոցին. և են կերակուր ժանեացն ծախման՝ ձկունք որսորդաց, իբր նոքին՝ կամաց զրպարտչաց։

ԺԶ. Այս ծով մեծ լիածիր և յոքնատարած, տիեզերագրաւ բոլոր էից գոգ, ծնեալեաց սեռից անքոյթ ծոց, և բնակ բնակի անդորը երևի մարդկան ըստ Գաւթի յատակաւոր կարծր պնդութիւն, վասն որ արեգակամբ պարարի, սակս որ երկնից լերմամբ պարագրի, վասն պէսպէս չքնաղ իմն իրաց. որ սակաւուն գյոգունս ազգին, և ի բազմին գնչվինան նշանակեն. մեծն ի փոքուն Ճանաչի, և գոյգն գյա-

ւէտն պարունակէ. Հլօրն յանկարծէն պատկառէ, և վեհն ՚ի տկարէն ընդոտնի. տեղի յարդարէ ուժգինն քաղցուն, և առանց մարտի ՚ի բացուստ հերքին։ Այս են միանգամայն յաւիտենից ըղձից զատուցեալ, տրոհեալ, հեռացեալ ՚ի հրաշիցն ծայրս. ծնող անշնչական՝ հոգւով տնօրինեցելոց. մայր՝ որ զի՛ հարուստ դարուց ամբարեալն՝ ՚ի քթթթել ական արտադրէ, և երկնայնոցն՝ յաւիտենիւս մանկավարժէ, և առ ապագայն ստացողապէս դաստիարակէ։ Ունի միտածին ինքնաւոր անարօրադիր բոյսս բիւրաստեղունս, և ծառս զանազանս. սերք սերմանց անձառից ընդդոգեալ ՚ի մի, բանականաց տոհմից առպարեզ, և ձառք զանդիւցն աստուստ ընթեռնու։ Ճուրթեն ոտին հետարան. են և ՚ի ծովու Վին ձանապարհք, և շաւիղք նորա ՚ի ջուրս, որ զանհասուրթեն ձառ առակէ. այլ յաւէտ քատակ զնմանն ունի երկիր զծովու, և են ընդ բնաւին հագնեցուրթեանն հայելի ստորին խորհինս անցաւոր մարդկան։ Այս խաղաց անդնդապետականաւն ծուլակաց՝ սատանայ ընդ մերասեր ազգականուրթեանս. և նշանակեալ ազգէ յայտնապէս զաղանդն ահարկու պատրանաց երկրի ՚ի շնչելն ուժգին, ՚ի փչելն ախորժ օրհնակաւ, ցոլման աստեղաց, ըստ տերունեան կանխասաց բանի։

ԺԲ. Ընդ ծանուցեալ իսկապէս համակերտուրթիւն երկաքանչիւրոցն առ մի կերպարան տեսակի զուգեալ։ Այլ և ՚ի խաղս այսպանման ծաղուս ընդպահկեն կանձառք կացիս վերին հրեշտակացն՝ զվիշապն յօդաւոր ընդ պարզականին, և ըմբռնեալ շղշափեն զորն մահացու՝ հին հնաբիւրն խորագիտուրթեամբ ընդ վերնումն դասուն՝ և մարմնաւոր մաքրոցն մարտիկք. և ածեն զսուրն մեծ և զսուրբ՝ զսաստ հրամանի բանեն այ ՚ի վերայ կամակոր օձին վիշապի. և իբր զնկուն մի ձագ՝ կապանօք անկասկած բերեն ըստ Յայեայ, Յոբայ և մեծին Պաւղի։

ԺԳ. Յօսիսեաւ ինն պատրաստուրթեանցն հանդերձանաց կուռ վառեալ, անկապուտ սնդեալ՝ անվան ամրացեալ նախապատիւս սրբոյս Յակոբայ, նշանաւ յիշատակի մասին օրհնուրթեամբ ջափաբերակա-

նի՝ զապաւէնն քառոտանեաց մաքրոց և անմաքրից, զնախակերան փայտի տախտակ իբրև զհինս յիշատակարան հաւուցն անցելոցն, վասն որ ՚ի ժամանակին առասպել վարկան, և զհաւատոյն աչս փակեցին առ անցեալ դարուցն յարմարավէպս, և անվրէպ գործս. և իբր թէ չէին եղեալ իրին էութիւն, անպիտան գրեցին զդէմն բանին և պարսաւելի՝ իբրև երկն և ծնունդ շաղակրատ մտաց ընդվայրաձառից։ Վանդի և յայլ ոմն անուն խուժական հեթանոսօրէնն փոխաբերեցին ուրուապէս՝ Պաւկաղիոն ընդ Կոյն ասել. և որ զտապանին յարմարադրութիւն սադրեցին սուվիմք եղանիլ։ Կյոսու պատճառաւ վրիպեցուցանողաւ՝ ՚ի կշտամբանս յանդիմանութիւն թերահաւատիցն կացուցանէր զընտրհեալ շերտին զդոյի հատուածս. և այս էր կասկած վարկածից խորհրդոցն կարծեաց։

ԻԹ. Վանդի ոչ իբրև զկեանս համայն խակապէս, այլ իբր զկենդանեացն հաւաքարան զայս խնդիր դիտեաց։ Ասան զի զօրացելովն ՚ի կեանն բնաւից, ՚ի փրկութիւն ազանց, ՚ի լոյս աշխարհաց, ՚ի նպատակն վարուց անբծաց, ՚ի յաղաստանն տիեզերաց, ՚ի գանձն բարձանց, ՚ի լուծիչն մեղաց, ՚ի զարդն ՚ճճադրոշմ երեսաց, ՚ի ձիրն արուեստից արարչին կամաց, ՚ի խաչն հաստողին փառաց, ՚ի վարժարանն կրից կուսանաց, ՚ի կացարանն հոգւոյն հոսանաց, աւետարդ ուրեմն ՚ի մեծին նպաստ զփոքուն խուզել զնորհրդարան, զդաշնայինն խմբին ջոկարան, առ տիրական բանին ուխտարան, և անպարտելի ձեռինն յաղթարան։

Ի. Ահա յայտնապէս պատրուակ քողոյ բարեզարդութեան ձահաւորական բանիս անջպետեցաւ, առ ծոմն երկնալիր, առ տապանն ամենակիր, առ այրն ՚ճծրնտիր, առ կամն անպատիր, առ ուղիղ հաւատոյն խնդիր, առ խորհուրդն ձառագիր, առ դիմակն ամենագիր, առ եղական պատկերին իր։ Ո՛չ վայրապար ընթացք, ոչ անկայուն միտք, ոչ վրիպակ հետք, ոչ սասանեալ սիրտք, ոչ անխրատ երիս կամունք, ոչ շնջեալ լեզուք, այլ ամենագոյ արգասիս լեալ շահաւետուչ ՚ճծականաւ՝ հովիւս այս բարւոյ։

ԻԶ· Այեծն առաջնորդաց, պարծանքն լաւաց, յարդարիչն եկեղեցականաց, հանդիսարանն նահատակաց, ախոյեանն յաղթականաց, խրախոյսն համբերողաց, նաւակատիսն մարտիրոսաց, ապաքինիչն մահու երկանց, սպեղանին խոտոռեալ վիրաց, այցելուն ապաւինողաց, խնամարարն յուսոյ պահողաց, դուռնն մտից վերնում պարգեւաց։ Ի մտեանս սոփերի անեղծական գրոյ, ի տանէ խոհեմականի պետուեալ բարւոյ, ի ծովէ մեծէ ակն մարգարտոյ, ի դառնարմատ ծառոյ՝ Ճաշակնոր պտղոյ, ի փշաւ գետին անդւոյ՝ սահման դալարոյ, ի մեռուեան ստուերէ՝ նշոյլ մեզ լուսոյ, ի տխրական կայենից՝ շառաւիղ յուսոյ, յանակնկալ գոյէ ստեղն խնկոյ, յանուշակ արդեանց՝ բուրումն ծխոյ, ի մանն սիրոյ՝ պարգեւ զմուռոյ։ Ոյուիրակ մաքրութեան՝ աղբեւր ջրոյ, հանդարտ կերպարան՝ հեզութեան հոգւոյ, կրաւկարան կենդանի՝ արփիափայլ հրոյ· աղգաթիւ բարբարոսականի զարմի անմաքրի, և մերձաւոր հպաւոր ընտանի՝ արեան երջանկի, որդի սեպհականքեռ սերմանողի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի։

ԻԲ· Ամէն կենաց հաւատոց, ակօսատարք խոհեմք ի նաւահանդիստն վերին· երկիր լուսաւորք երկակի երկնի, երկուորիք ըստ առակողին և ուչ անորդիք, կրկին բարեաց տուրք ըստ մարգարէին, երկու ընդ միոյ՝ բարձրելոյն քարոզք, երկու պետական գլխաւորութիւնք վեհից, ոմն սկզբան և ոմն լրումն կենաց· եկեղեցւոյ շինուածոյ երկու տեսանելիք, երկակի ունկանց լսողաց՝ երկու օրհնադիրք փառաց տէրութեանն յաջմէ և յահեկէ։ Ի գաղատնային բարոյից՝ նոխազք նուիրելիք, յանապական կենդանեաց՝ ոչխարք պատարագելիք, ի չարեաց հեթանոսականաց՝ աննուազ բարիք, ի խաւարատնուն հաւոյ՝ մանկունք լուսոյ, փոխակերտեալք Ոյեհիւ առ այլից յայլմէ, ի սպանողաց մարմնոյ՝ կենդանապարգեւք հոգւոց։ Այս այսու սոքին ուչ սուն մի ստորագրին, քան եթէ մեծապանծ պարծանօք ի լոյս ներբողին։

ԻԳ· Այս թէ պարտ է զտարացոյց փոքունս առ մեծին օրինակ դասել, որպէս աքանչանի Թիւրակէ ի

խածանօղ մահացու սողնոց առ կենացս նիւթ պատրաստեալ, յորոց որք զբաժկայինն միշտ համբուրեն կրթականութիւն. ի թորմանէ բոսորակայլակ կաթուածոց քառատանեաց անմաքրից՝ ներկուածք կայսերական հանդերձից. ի զաղիր գարշութեանց որդանց, պատուական նիւթք մետաքսից. ի գետնամուտ և վիմադարան գաղանաց, առ կերպասուցն գեղեցկութիւն ստուք ասրէից. ի ժանեաց փղաց և կապկաց՝ աթոռոցն յօրինեցան կառուցմունք հանդերձանաց արքայից: Այլ և ի խղխղից խոտոց արմատոց՝ որդան կարմրութի գունեղանալ բարձից: Այս արդ վայելուչք ի տգեղաց, և ընկալուչք յանպիտաց, բարձունք ի խոնարհաց, և առաջինք ի կրկներաց, ըղձալիք ի վատթարաց, և հրաշալիք ի յանարգաց, համակերտ օրինակութիք առ չքնաղ ընտրութիւն սրբոցս՝ յարահիւսմամբ Հառիս բաղկացաւ:

ԻԴ. Իսկ զանհնարինն հնարաւորութի՝ յերգադրութիւն բանից շարադրել, զկոչողին փառս յաձախս: Օ՛ի ի տատասկէ քաղցրութի թզոյ, և կամ ի փշոյ ողկոյզ խաղողոյ ասել փրկողին, ո՛չ զտնկոց այլայլականաց առ օտար բերումն պտղոց, այլ զասուն մնեղեաց բանաւորականաց զկամացն անփոփոխութի: Իսկ սոքա միաբանեալ ընդ միմեանս, ելին յերկրէ ըստ տեսանողին, և սասանեցան յեղանակեցան ըստ դաւթեան երգոյն, որպէս երկիր ի նորոգ կրօնս, սոքա ի վերստին համբոյր և ընտրական բարս՝ Այս ոչ և այս երջանկաց ցեղ Յակովբ, ի յոմանց աղգաց փանաքին մտախոյզ իմաստական ախտարատակաց խորադիմիս հմայից, իբր ստեղծչին ասեմ աղդեցմամբ՝ կոչեցաւ Օ՛գօն, այսինքն է հանդարտ. իբր թէ հեզ, որ է հաստատուն, այս է անփոփոխ. որ է լրութի կատարելութեան. որ և անուանն իսկ թարգմանեալ մեկնապէս հիմն է հաստութի: Այսու ոչ սկիզբն ղգօնութեան ղերկեալ ետն սահմանեալ հառեաց Սողովմոն: Իսկ անսասանապէս անյեղյեղաբար կարծրակառոյց խարխլեալ անտապալելի, գերատրոհ մնալով տատանման մրրկածին հնչից ընդոստման, տանն է նշանակ վիմադրական անվտանգ

անդղդելի • զոր փրկչականն բան գծագրեաց յաւետարանին : Յոր յարկ տիրաբնակ և անձեռակերտ, ընչաւորակոյտ բանաւորական՝ և երջանիկս այս պատկանեցաւ պնդապէս հոգւով ՚ի կամս նորա յարակ : Զոր ազգապէս սորին զսոյն առ սուիմբ, ՚ի նմին՝ ազդեցմամբ այսու թելադրեալ բանն ամենուսնակ հայրենի, հաստատուն, ասելով, ՚ի սէր իմ կացէք : Նա դարձեալ, պետն պարու զնդին առաքելականի օրհնելոյ Պետրոս աւետէ, դուք ՚ի վէմն կենաց շինիք տաճար հոգևոր յանարատ քահանայուն : Նա Պաւղոս դարձեալ զնոյն երկրորդէ, դուք ՚ի կենդանի արձանն շինիք ՚ի քնակութիւն հոգւովն այ. և դարձեալ հաստատուն եղերուք, սնչարժ կացէք, զտեղի կալջիք. և դարձեալ, որ հաստատեաց զձեզ ՚ի սոյն ՚ուր ՚ուճ է :

ԻԵ. Նա արդ ՚ի պատճառն յարեալ կենաց՝ ՚ի սկզբնահայրն բարեաց Յա, օրհնաբանեսցուք զնա ՚ի ՚ուրս նորա ըստ սաղմոսողին. և վասն նորին՝ զերկիւղածս անուան փրկողին մերոյ հոգւոյ բարձրելոյն փառաւորեսցուք. և կնիք գլխաւորութեան բանիս աւարտման՝ զսոսկալի և զպաշտելի անունն այ՝ սահմանն փրկութե՛ և կեդանութե՛ նկարեալ դիցուք, իբր զգլուխս մարմնոյ զգայականի՝ առ պայման կառուցման անդամոցն բերման : Նա քանզի յաղթէ սրբոյս այս պատիւ սակաւամանեայ մերս գովեստի, և գերազանց փառացն նշոյլ՝ առ դասս խմբի երջանկաց պարու, և քան զնմանիսն յաղթական և պայծառագոյն, և հայաստանեացս պահպանութե՛ մերձաւորագոյն, և առ դէմն բանիս մերում տպաւորագոյն, վիճակաւն գաւազանի ընտրութե՛ մեզ ընտանեգոյն : Աստի և մեք հետևեցուցաք զսուրհանդակ բանիս աւետապատճէն նամակամատոյց առ մեծի հովուիս պատուատարութե՛ : Յորում ՚ճառս յիշատակի հրաշապատում դրուատականի՝ և հրեշտակական լեզուին դիւրերագ և հրանիւթական երգոյն գործի, բարեբան բանի յաղթական ձայնի, կասեալ նհանջի : Ո՛ւ ան զի ել լուսակերպապէս ՚ի թեթև թևս բարձրութեան ՚ի հովտէս մահացուաց երկրէ՝ յանդրանկացն վերից վիճակ, ՚ի նշան պարգևացն

ուխտի, և կենդանուին՝ ըստ ասացելոյն, ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ։ Քանզի ի պատուիրանաց Տեառն զարթուցեալ և իմաստնացեալ, ատեաց զամենայն չարեաց ընթացմունս, և զշուք չնորհին Ցեի ի պատկերի իւր կերպաւորեաց, և յաղթօղ մահու եղեւեալ ցուցաւ, և զերակայ ապականութեան յայտնեցաւ, և զվաստակ աւետաւորական ոտիցն Ձգանց արիապէս ի գլուխ իւր կապեաց, և կայսերական դիմաց ահագին տեսաւորեցաւ, և ի մաքրականն գործականի սրբութեան աղդումն աձեցոյց։

ԻԶ. Աղաղցոյց վտակս կենդանականս յապառաժ սրտէ, յանդղջական ոգւոյ՝ հառաչանս հեծեծանաց հաստատեաց, ի տեսանելեաց աչաց արդարացուցիչ արտասուաց վիժակս վայրաթերեաց։ Երբև կենդանի զօրեղ՝ մոլութեան սատակման սատրեաց, ընդդէմ դիւագունդ դասուն՝ հաւատոցն քանիւ մնչեաց. իբրև նահատակ հանդիսայարդար՝ ի կատարածի լրմանն գոչեաց, և որպէս խրախոյս բոլորից երկրի, ի մրցանակ Ձակատուն ձայնեաց, և նախաշաւիղ առաքինորդական յանտարակոյս յարկ հրաւիրեաց, և գայթակղելոց անձանց՝ յարուցիչ ձեռն կարկառեաց, և զմեղացն կապ՝ աղօթիցն սուսերը խլեաց, և զպակասումն ամաց՝ մաղթանացն հայցմամբ կրկնեաց, մահու և կենաց՝ երկատեսակ բուրումն բարդեաց, զհանգստեանն աձիւն՝ փրկութեան աւանդ մնելոյ, զդրեալ մուրհակս պարտուցս գոյի՝ պարգևական քանիւ պատառեաց, զարձաթ փրկանաց անցաւոր վարձու՝ ոչ դրաւեաց, անկաշառ ոստիկան ամենայն հոգւոց, խորհրդաբանեաց, վայելչական հանդերձիւ փառաց՝ զինքն զգեստաւորեաց։ Եւ առաքելոցն պահպանմամբ զվայթոց բանսարկուին կոխեաց, և զանձն ընդ փայտ խաչին Ցեի՝ տենչանօք կախեաց, և ճաճորդացոյն կենդանարար կրիցն հաւասարեաց, և համբերական մարտին յաղթութեանն միաբանեաց, և կերպարանին խորհրդոյ կամացն իւրոց կցորդեաց, և նորոգապէս յարութեի էական լուսոյն հաղորդեաց։ Օ՛ փականս երկնից խտրոցաւն հանային հերքեաց, զհեթանոսացն սիրտ՝ ի հնազանդութեի ճշմ նուաձեաց, և ի նեղու-

Թեան մեծ անդորրութիւն մեզ ընդարձակեաց, քնակ բարձրելոյն ոտից՝ ի յերկրի աստ հիմնաւորեաց։

ԻԿ• Յողովրդոց բազմաց անբաւից դաստ դուստրեաց, կենդանաբաշխ աղբ քահանայից՝ յիմանալիսն համարձակեաց, զորբոց և զայրեաց հոյլս՝ ինքեանն ձեռօք պաշտեաց, ընդ մարմնոյ կարեաց՝ և զոգւոց կէտս կատարեաց, և հաղարապետ կամ մատակարար՝ իմաստութեամբ բնաւից տնտեսեաց, և առատաբար զօրութիւ հոգւոյն առ համօրէնս մանաւորեաց։ Ո՞փերս օգտակարս և աշխարհակեցոյցս՝ մատենագրեաց. որով սահմանաւ կշռուէ բանի՝ զչարախօսաց բերանս կարկեաց, և զհերձուածողականն խիստ դառնութի ամենայնիւ իսկ ըմբերանեաց, անջնջական կանոնս յաւիտեանս յարակայեաց։ Նա իբրև զայս մասունս հանդերձանաց բարուքեաց նիւթեաց, ապա մատուցաւ անարատապէս կամաց բարձրելոյն ի հոտ անուշից, զենութի հաձոյական և զոհ բանական, պատարագ մաքրական և նուիրութի ընտրական քահանայապետին մեծի, վերնայինն երկրի ընծայեալ։ Ո՞ւ իբրև զգաժնեաց գոռոզ մարտակից՝ զմարմնոյս չարուն վանեաց, և անուանն իւրոյ յիշատակ՝ զամենակալ զօրուն Նինն հրաւիրեաց։

ԻԸ• Նա արդ արժանապէս և իրաւաբար համարձակութի այսքանեաց փառաց սմին գանձեցաւ, հոգւով սլացաւ ի վեր համբարձեալ յառհաւատչեայ ակնկալութեանն. և ի մասունս ոսկերաց մարմնոյն՝ զանճախելի պարգեւն անկեաց, որով յուսացոյց և եցոյց զյարութիւնն կենդանութե, խրամակարկատ գտաւ ցանկոյ հաւատոյ։ Նշտարակ կանգնեաց զբաբեխոյ դիտաւորութե ընորհին, արձան հիմնեցաւ գրով նկարեալ քաջալերութե, մահարձան կենաց կառուցաւ հալածելոց ապաւինութի, սիւն երկաթի ձգեցաւ եկեղեցականաց ամրութեան, ի պատուար պղնձի պարսնակեցաւ, ըստ Նրեմիայի բանաւ կարգութե։ Ինչ զի զհամառօտն գլխաւորելով աստանօր, աշխարհ միանգամայն նուաւ ունի հանդերձեալ զապագայիցն յուսադրութիւն. և ի նոյն ինքն յեցեալ կայ կանգուն, անդղրդելի նորոգ անկործան, միջնորդեալ երկնի և երկրի։

ԻԹ. Այս նահատակ յաղթող՝ այսը Հանդիսի, այս սպառազէն արի՝ այսմ Ճակատու, այս մարտիկ քաջ բեփառ՝ այսմ ասպարիսի, այս վկայ Ճշմարիտ՝ այսմ պարգևի, այս աթոռակալ խնկելի՝ այսմ վեհապու-նի, այս պետ պանծալի՝ այսը աստիՃանի, այս դա-տաւոր դրուատեալ այնմիկ ատենի, այս պսակաւոր պայծառ՝ այնը հրապարակի, այս որդի պերՃալի՝ այնը քաղաքի, այս ժառանգ պՃնեցեալ՝ այսմ Տրու-սաղէմի, այս կամարար օրհնեալ Հօրն Աստի։ Օ սա յիշատակեցաք, զսոյն բարձրացուցաք, սուլիմբ աղօ-թեցաք, կաՃառ կացուցաք, պարս խմբեցաք, լապ-տերս լուցաք, եւ զղջ անուշութե մատուցաք, կան-թեղս աստեղօրէնս վառեցաք, Հուր խորհրդական ընդ խունկ խառնեցաք, սուլիմբ լուսաւորեցաք, սո-վաւ բժշկեցաք, սուլին եւ մահու ընկալաք։

Ա. Աղով և Հայցեմք ՚ի քէն, բարերար Տէր փառաց Յո, Հօրդ միայնոյ միածին որդի, բարեգթացեալ Հաճեսցիս Հայել Հոտոտել յայս զոհ պաշտամանն մաղթանաց բանի. և Հիմնեցուսցես զայս քար գոլես-ոի ՚ի շինուած յարկի քումդ Հանգստի գաւանալա-նի այս բարի Հովուի, և փոխադրեսցես մեզ տուն բնակութե՝ զլուսապաՃոյՃ գաւիթ տաՃարիդ ար-քայականի։ Օ ի սուլիմբ միշտ ՚ի քեզ պատուաստե-ցայց, բևեռեալ յուսով Հաւատոյ սնդմամբ, և գե-րակայ փորձութեց գտեալ, անտարակոյս ՃանապարՀ Հորդութե անարատապէս առ քեզ Հետևել։ Եւ Հո-գելից զօրութե օրհնեալ օժանդակեսցես կատարե-լապէս զայս պատՃէն տառի. զի որ ընթերցցի և վերծանիցի, Հոգւով քո լցցի, և բժշկեսցի ՚ի պես-պես ախտից կորստականաց անձին և մարմնոյ, բա-րեխօսութե Հայցման աղօթից սրբոյդ Յակովբայ։ Աղում կցորդեալ Հաւատարեսցուք մասամբ Հաւա-տոյ ՚ի փառատրութիւն մեծիդ ժամանել. զերծող-ական միութիւն Երիդ փառաւորեսցուք օրհնաւաք ձայնիւ, զՀայրդ երկնաւոր, և զորդիդ միածին, և զՀամագոյ Սբ Հոգիդ։ Աղում փառք, պատիւ և զո-րութե, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Գանձ լուսոյ փառակից որդւոյ անձառ զօրութեի ահեղ մեծութեի, անբաւ բնութեի, լոյս ի լուսոյ, ոգի բարձրելոյ, պատկեր անփոփոխ, պարզ անշինելի, հաստիչ հոգւոց, հանդերձիչ մարմնոց, անուն պաշտելի, Աշմարիտ բարի, անեղծանելի, Հակիւ ընդ հօր, և տէր բոլորից։ Նմա ընկալցիս վերկրպագուի քումդ ծառանողացս քեզ ի հաձութեի. աղաչեմք։

Բաբուն հանձարոյ տեսուչ մերոյ, անթարգմանելի խորհրդ այ, որ դու միայն միտդ յիսկութեէ տեսակ առանձին, ոգի տիրական ուրոյն կերպարան կատարելութեանն, յորմէ գոյացան եղեալքս ամենայն. ուսո՛ւ յօրինակ նորոյ փրկուեէ զնախնի խաւարն աշխարհատարած անգարդութեէ հին նեմանեէ գեղատխուր անպատրաստութեէն վայելչական հրաշազարդութեէ շրջմամբ քո ի ջուրս բանիւ բղխողիդ ի լոյս փոխեցեր։ Նմա ընկալցիս։

Ի զօրս վերինս փառատրողացն որբաբանեալ՝ կազմիչդ ամենից ի կտակս օրինացն և մարգարէիցն, ազգումն և պատձառ ի տառս իմաստնոցն, և քարոզողացն առաքիչ և տէր. հնչումն ահաւոր և ձայն կենդանի, հանդերձիչ երկնի, և առ Յոյիւն տիեզերահեղձոյց ծովուն ցամաքիչ, բաժանող շրթանց առաջին ձայնիւքն մնոտիաժողով միաբանելոց յայլ հրաւէր նորոգ պանծալի համաբարբառ տպաւորութեէ։ Նորմ սաստիկ եգիպտակործան, և ամպ վերարկու տոհմին Յակովբայ, ուժգին և հանդարտ նոյն առ Նեղլոս, պատմաբանիչս հրովարտակօք քոյինաշունչ պատգամադրութեէն, և յապագայսն տեսողուի հրամայեցեր ածայնապէս. որով զձանապարհ յաղթողին մահու և Ներևարայ՝ յաւուրս վերջինս այսու ծանուցեր։ Նմա ընկալցիս։

Պատվեստ քեզ անեղծ և տէր անստեղծ, ամենիշխան և թագաւոր երկնի, ինքնաձեռն աշ զօրեղութեէ մարդացելոյն այ օծումն, կերպիւ աղաւնոյ ցուցեալ ի Յորդանան, հաւասարափառ զուգաթիւ

ընդ հօր հրամանատուր գործոցն Յոի, և տնօրի-
նականացն մեծին գուշակուամն, տեսուլեաւ լուսոյ հո-
վանի ի լերինն Թաբովրական արարչատես ներգործ-
ծեցելոցն, ի ցոյցս դիմաց ի ձևս հրաշից ի յաւն
դարուց ի հարս նախնեացն առ ձեռն երևոյթ
տուեալ զօրինակն Աշմարտուլեաց, նշանակ յայտնի
կանխագրելոցն, կնիք սկզբնատիպ Թագաւորուլեց,
օծման իւղոյն մաքրուլեաւ սահման և սկիզբն։ Ա՛հա
ընկալեիս։

Ա՛վ զարմանաւոր և սքանչելապայծառ հեղեալ
ի յերկն բնուլեաւ անթերի, անհատ անդուստ և այսր
աննուազ, բարեբանեալդ յօրհնեցելումն, յերեսս
բոցոյ բուրելոյ խնկոցն Աշնմամբ խառնելոյ, հիա-
նշմար մըրիկ ահարկու ընտրողական հրեղինաց լե-
ղուացն բազմեալ ի պարծանս աշակերտելոցն. յա-
ւուրս լըման պենտակոստէից՝ զՀրաձաշակն բաժակ
կենաց մատուսակեցեր քոյոց սիրելեացն, զթերինն
իսկապէս լցուցեր, զտարակոյսն փարատեցեր, զտգի-
տուինն խմաստնացուցեր, զբարեացն աւանդն կրկնե-
ցեր, զփափաք ըղձիցն արձանացուցեր, սպասողացն
քումծանուցար, ամբարձելոց ձեռացն աղերսիւ ա-
րագ յայտնեցար, պաղատանաց ձայնիցդ հեծուլեաց
փոյթ ժամանեցեր, զղօղեալսն երկիւղիւ խառնեալ
խնդուլեաւ ընդ սիեղերս տարածեցեր, վկայ հաւաս-
տի լըման Հնորհի խոստմանն աւետեաց եղիցդ միած-
նին՝ յաւազանին ջուր միացուցեր, զՀնորհիդ քո լոյս
եկեալ յերկնից օդով քաղցրուլեաւ ժառանգ ան-
մահից կենաց յերկինս գրեցեր։ Ա՛հա ընկալեիս։

Ոտիցդ մաքրումն և աղաւտարար խնամակալ զօ-
րեղ՝ բարեխօս և խաղաղարար առ քեզ պաղատիմք
ՀՁ անսկիզբն ստեղծիչ Հնչոց, հոգի կերպաւոր, անձն
դիմաւոր՝ որդւոյ մերձաւոր՝ բնաւից Թագաւոր՝ ընդ
հօր միաւոր, որով Հնաւն ի տուր պարգևի անաչառ
բաշխմամբ բարձունք և ստորինք։ Ընկալեիս զքո
ընարեալսն և զօրացուացես ի հանդէս քումդ պա-
տուիրանիդ, զքահանայապետն մեր դիտողուլեան՝
քոյինակրօն պատուոյդ սրբուլեաւ, զայցելուն դատ-
մանն ընտրուլեաւ՝ որ ընդ քեզն է կցորդուլեաւ, զպետս
վարժից կրթուլեաւ՝ որ ընդ քեզն է դաւանուլեիւն,

զբազմամանեայ գումարս դասուց յանուն քո ժողովելոցս, զբարեպաշտ Թագաւորն մեր՝ իւրովք զաւակօք, զինաւորօք և զօրապետօք՝ ՚ձօուԹեդ քո պաշտօնեիւք, ձիականօք և հետևականօք, սուսկականօք և քաղաքացիօք, ուխտաւորօք և նուիրողօք, ասպաձեռնօք և ամենայն մարդկան հասակօք. որ հովուես և բարձրացուցանես՝ ամենառատ տէր լիապարգև ՚ի պետս կարեաց փրկուԹե՛ քումդ աղաչողաց։ Լ՚հա ընկալցիս։

՚Ի քեզ նկատեալ հայի, բարեգործ, ամենայն ակն տեսողի, ապաւէն յուսոյ փրկուե՛ կենաց առաջնորդ ՚ի լոյն վերին, զրգիչ կենդանեաց՝ հանդիստ մեռելոց, խնամող ուղեկից ամենավստահ, տեղի բերկրուԹե և վայր ցնծուե, անպարագրելի ունող համայնից, վերանորոգեալ դասակարգեսցես զՀրաժարեալսն ՚ի քեզ հաւատով հանդիսի բարեբանական գԱԹուԹե՛ օրհնեալդ ՚ի բարձունս։ Լ՚հա յիշեսցես և ողորմեսցիս ննջեցելոցն յուսով յարուԹե, խնդրեմք։

Լ՚ս ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք։

Ոտեղ զմարմինս մեր ՚ի մի շաւիղ ընտրուե՛ ճչոյ սիրոյն որ առ տէր, խնդրեմք։

Վերազանց կոչումն և ձայն կենդանի, ահաւոր մեծանուն հզօր, հոգի հեզուԹե՛ մարդասիրուե՛ գԱԹուԹե և ողորմուԹե. բարեխօսուԹի՛ կուսի իսկուհւոյդ մօրն կենդանեաց՝ հանդերձելոյդ ՚ի քէն տիրամօրդ և ՚ձօաճնիդ, մաղԹողական աղերսակուԹի՛ մեծին ՚ի ծնունդս կանանց մկրտուԹե՛ն կարապետի, և համագոյակցիդ քո ձեռնադրողի, խնկանուերը հայցմամբ երջանկացն՝ առաքելոցն և մարգարէիցն, մարտիրոսական հանդիսիս սքանչ Յոտեփանոսի՝ և որ նուաւ զօրացան վկայք, մեծավաստակ առաքինուԹի՛ դաւանողին զքեզ սքանչ Վրիդորի և ամենեցունց մեր լուսաւորչի, մաքրակրօնից աղանց միանձանց և զքեզ ՚ձօ խոստովանողաց։ Ալր ՚ի վերջնումն աւուր մեծի յայտնիս նորոգել միայն ողորմած զ՚ի քէն գոյացեալքս։ Լ՚ս այժմ ողորմեաց մեզ տէր ՚ձօ մեր ըստ մեծի ողորմուԹե՛ քումմ։

ԳԱՆՁ Ի ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ։

Գանձ քաղձալի բարուէ մեծին գտեալ և ծածկեալ, լռուի անթերի բերող համայնից, և դու ինքն ի քնաւս. զոր ոչ իսկ տաներ երկինն վերին անվայր քո խորան եթերն անմատոյց։ Անդրպետ ընդ քեզ զարմից հրանիւթից ցուցար սահմանեալ. անքանակ պատկեր գթուիթեց խնամոյ, յաթոռս փառաց Թագաւոր բարձանց՝ ի վեր քան զբան։ Անդ ընկալցիս զաղերս աղօթից յարմարեալ խնկօք յայս յարկ նուիրեալ՝ որ եկեղեցի, աղաչեմք։

Նախձան պերձալի՝ կոչումն ընտանի՝ ձայն ախորժելի անպարագրելի, որ ի թևս թեթևս հողմային օդով ամենաստահ կառավարութիք քազմեալ տիրապէս՝ արկեր քեզ գահոյս յառակս խորհրդոյ աւետեաց ելից լոման՝ աճօղդ ի յարմար զիրին կատարումն՝ նկատեալ զվայր քոյին քնակութեդ, յաւէտ անդրպետ և յոգիս մեր միշտ, զոմն աթոռս և զայլն պատուանդան, տեղի լուսատարը աղանց բոլորից։ Անդ ընկալցիս։

Նմաստագործ անսխալատեղծ պատշաճակերտ կազմիչ համայնից, որ յսկզբնաձեռն յառաջակառոյց՝ զայս կերպարան հրաշազարդ իրի հաձեցար լինել։ Ալ, ախ զբնակին՝ ապա զբազմեալն. ձգեցեր զերկինն՝ և անդ զերկնայինսն. հաստատեցեր զԱդին՝ և զկնի զԱդամ. զյօդուած տապանին՝ և ի նմա զապրեալսն. տաղաւար նախնւոյն հիւրընկալուի աբրահամեան. օծեալ արձան և տուն այ. սանդուղք մեր եղից և հետ քո իջմանն, ահարռնեան վրան պաշտամանն և կտակ մատենի, դատիչ խօսողաց բարձր Նարիկին ընտրութե. մեծին Նաղովմինի՝ տաձար լուսակիր, լեառն ին և տուն այ, ամբարձեալ նշան յազգս հեռաւորս փողով ձայնարկու կոչման աշխարհի ըստ տեսանողացն զանձառ քո խորհուրդ։ Անդ ընկալցիս։

Նեղապաճոյճ աշտարակ կանգնեալ, երկաթեղէն սիւն անկործանելի, և պատուար ամուր եղեալ պինձի, ոսկեձայլ աշտանակ լուսոյ, կղզի պարփա-

կեալ ալեօք աւրուԹԵ ըստ երկրորդ տեսուԹեն Աղե-
կիելի՝ Աոր հրաւիրմամբ եկեալ՝ի Նոյեայ, ՚ի խընդ-
դիր իմաստից դիմեալ ՚ի Աաքայ յօտարասերմ ա-
զանց Ռանանու, յօժարընԹացՙի Խաբելոնիկ։ Ստ-
ցեալ ոգի սիրով փեսային, դուռն հիւսեալ մայրա-
տախտակօք, քարինք բիւրեղք ընդ կալկեհանաց,
պաղպաջունք արփիանկարք մահարձանօք արծաԹե-
ղինօք, քաղաք կենդանի շինեալ ՚այ՝ հոգւոյ ազգեց-
մանըն խօսեալ Ցոի, լեառն պարարտ մածեալ սըր-
բուԹՙ։ Ասՙա ընկալցիս։

Ուրախ լեր դշխոյ հարսն պանծալի՝ պսակաւոր
մեծ զարմանուհի, բազմազաւակ կուսուԹՙ բերկ-
րեալ։ Աո՚ի սկզբան անդ գծագրեցար, և աստ՚ինո-
րոմս հանդերձեցար՝ ոսկեփայլ չքնաղ գոյուԹՙ,
յեղանակաւ կոչմանն Նագարու՝ փոխեալ աղախ-
նոյն՚ի Աինայէ՚ի Աաղիմ՝ եկեալ ինքնին անդրա-
նիկն հօր՝ առնուլ զքեզ կցորդ ընդ լքեցելոյ աղինն
Յակոբայ. արկեալ քեզ հիմունս պաշտելիս զառա-
քելոցն գումարուԹիս, աստեղանիշ լուսաւորուԹՙ
բոցաձաձանչ շքով պաՀուՀեալ՝ յարգանդ մաքուր
և՚ի ծնունդս անախտս երկնեալ անդստին ժառանգս
այ. որ է օրինակ առձեռն յուսով ակնկալուԹեան
ղհաղաղուԹՙ գտեալ իսկապէս։ Ասՙա ընկալցիս։

Աաբունն լուսոյ հզօր Թագաւոր փեսային երկնա-
ւոր՝ անձառ խորհրդով՚ի հանդէս իւնձոյիդ պարու
կարգեաց քեզ կանոնս անխոհելիս. բազմամանեայ
օրինակ կերպիդ՚ի նոյն տեսուԹՙ բոլոր էուԹՙ, ՚ի
կերպարանս բիւրատեսակ առ՚ի շինուած կաԹո-
ղիկէի. հասակ տոհմիդ զանազանուԹՙ՚ի մի ժողո-
վեցող հնազանդուԹՙ. տուն և տեղի և յարկ ծած-
կուԹի, ձարակ տօԹոյ՝ և վէմ օգնականի, մարմնա-
գոյիցս հոգեաձիր, զուարճ ընդ մարդկան ընտանեցու-
ցիչ, համանուռնակ աղանց կուտելոց, յոյս քաւուԹՙ
պարտաւորելոց, նախացուցակ համարձակելոց, կա-
տարելոց անձանց խմբարան։ Ասՙա ընկալցիս։

ԱմաստուԹՙեն հօր բնակուԹիւն՝ եւԹնաստեղեան
սեամքք կառուցեալ՝ յորում օրհնեալն պատարագի
՚ի սպանդ կամաց ձաշակման երկնաւոր հացին՝ ՚ի
գահաւորակ սբՙյ սեղանոյն, կենաց մանանայն և գառն

երկնաւոր՝ որ բառնայ զմեղս կենդանեաց և ննջելոց։ Այո՛ն ինքն ամենայն և յամենայնի՝ զենուն մեծ քան զՀաբելին. ուր զցրուեալսն տնօրինէ անբռնադատ եկաւորութ՛ե, ի գիրկս տաճանց սիրոյ քաղցրութ՛ե կոչէ ձեռամբ յամրոցն անմատոյց, փախուցելոցն պատսպարան, ի վերնայարկ սրահն հոգեկիր, ուր զաշակերտսն զարմանագրեաց։ Յորում եղեսկին կարգեալք զօրութ՛ք գահերիցութ՛իք վերադիտողաց, ի պատիւ աւուրս քո ուրախացեալք՝ ունողք անկեան անբծայն պարու. զՀայրապետն մեր եպիսկոպոսօք քահանայիւք և սարկաւագօք, զվարդապետս դպրօք և հոգիապայծառ վարժապետական չնորհիւ, զթագաւորն մեր իւրովք զաւակօք, և որք ընդ նովաւ են իշխանութ՛իք պետութ՛իք և զինուորութ՛իք հարազատ սիրով օրհնեալ յամենից։ Ահա յիշեսցես և ողորմեսցիս հոգւոցն հանգուցելոց յուսով յարութեան, խնդրեմք։

Այս ևս առաւել զյորդորումն սիրոյ։

Թոտեալ վերստին զմերժեալսն առ ի քէն՝ միջնորդութ՛ե բազմելոյն ի քեզ, ազաչեմք։

Պոտեալ ահն պատուական մարգարտի անձառ ներդործուե՛ք յաշխարհիս ծովու Մարիամ՝ որ ածաձին, դուստր լուսոյ և մայր Միսինի, անձեռագործ հիման հաւատոյ Ճշմարիտ պատկեր՝ որոյ այսր օրինակի անուամբս օծեալ կնքեցար, հարսնարան միոյ բանին մարմնացելոյդ առ ի քէն այ, բարեխօս ընդ քեզ ընկալցիս առ ի հաշտութ՛ե պարտաւորելոցս՝ զշառաւեղն անմահից կենաց զՄարթպետն կոչման սբ՛ց, և զՊսակն մարտիրոսաց, առաքելովք և մարգարէիւք, և որ մերն է ուսաւորիչ՝ հանդերձ միանձամբք Ճգնաւորօք, որք են ժառանգք այ՝ ճնեալք յորդեգրութ՛ե որ աւազանաւն՝ անանձրպետ հոգետոհմութ՛ե, յորում կրկին հայցեսցես նորոգել զփոքրն ի մեծ լայնուե փառաց՝ անպարտնակ բացարձակութ՛ք զմայրն մաքուր զաւակօք հանդերձ ուխտիւք պսակելովք յայնմ առագաստի յաւուր ահաւոր երևման մեծիդ այ։ Այս այժմ ողորմածդ մեզ տէր ածմ մեր՝ ըստ մեծի ողորմութ՛ե քումմ։

ԳԱՆՁ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ։

Գանձ անքնին, ճաճկեալ մեծութեի, զօրեղ ա-
հաւոր միշտ բարի. և երեքսրբեան անսահմանելի՝
օրհնանուն կենդանի, անձառ իսկութեի փակեալ ի
ղպալեաց, համագոյ անթարգմանելի, անհասանելի
հեռաւոր և անընդմիջելի մերձաւոր անմահ Թագա-
ւոր։ Ա՛յա խնկեսցին մաղթանք մեր առաջի քո ամե-
նակալ, աղաչեմք։

Ոսկեից համայնից էից՝ի կուսից քառից՝ի մի եղե-
լուի զերկիր հաստատեցեր, խորհուրդ կրկին ձեռն-
արկ վերստին, ընդդիմակ միջնորդաց երկուց՝ եղջ-
ման և նորոգութեե, տեսութեի կենացդ փայտի։ Ա՛յա
խնկեսցին։

՚ի բարձունս անբաւս՝ անհետազօտելի գոլեստիւ
ծնեալ ահեղ անմատոյց, յանհանգչելի նուագ ներ-
բողից աղգաց հրանիւթից՝ պանծալի երգով պսա-
կեալ զքեզ ՚ած բոլորից։ ՚ի սահմանս երկրակշռու-
թեց երկնից՝ ՚ի թևս չորից արփիակերպից՝ բաղմօք
կարգեցեր քեզ պատիւս անպատուս։ ՚ի դրախտն
Ա՛դենայ ՚ի տնկոյն պարտեալ՝ ազդեալ ձայնեցեր ՚ի
ծառն օրհնութե։ Ա՛յա խնկեսցին։

Ցուշակ գարնայնոյ ՚ի թռիչս ամբարձման յօրի-
նակ երկնի կամաց գԹաճիդ, ՚ի լաստն ապրացու
նոյեան տապանիդ։ Պատկեր փրկութե կերպարան
հրաշից ապաստան յուսոյ գեր ՚ի վերնայինսն զնոր
ժողովուրդս ուխտիւ միջնորդեալ ՚ի թևս խաչիդ
առ քեզ մատուցես։ Ա՛յա խնկեսցին։

Ա՛վ գեր մատենի մատենդ ՚այ կենսունակ տախ-
տակ անխորտակելի, և աւանդ նորոյ օրինի սրբա-
մանութե անեղծանելի։ Ի բուսեն ցուցմանց կանխա-
պատմութե աւետեաց ըղձից, ՚ի բիւրուց հիւթից
մեզ ՚ի յօգնութե սոյն իսկ ծանուցար։ Ցիսկ պաշտե-
լի գրաւ աշխարհի շաւիղ անհետազօտելի՝ արեամբ
արարչին նկարեալ ՚ի փառս լուսոյ։ Ա՛յա խնկեսցին
դարձեալ խնդրուածք մեր առաջի քո ամենակալ,
աղաչեմք։

Աթուռնեաց պետ և ձիր իմաստից տէր Յո՛ Ա՛ր, միայն ուսուցիչ զանխմանալիսն՝ որ ոչ գծագրի յայսմ յաւիտենի, պատկեր հօր անհաս՝ ի վեր քան զբան, ուղղեալ յայս ճշան հաստատեա սուիճն պըն-դութիւ զսիւնս աշխարհի. պահեալ ամրութիւ ըստ քումդ իրաւանց՝ զհովուապետան խաչանց քոց քա-նաւոր հօտի, զեպիսկոպոսունս երիցամբք և սար-կաւագօք, զվարդապետս դպրօք և քնաւին իսկ պաշտօնէիւք եկեղեցականօք, զթագաւորն մեր իւ-րովք ծննդովք, հանդերձ պետական նահանդօք հնազանդեցելովք։ Աբասցես լինել երկիւղածութիւ սրտի խաչիդ պարծանաց՝ ի քեզ զօրացեալ։ Ահա խնկեսցին։

՝Ի քեզ համբառնամք զձեռս զմիտս և զդպայու-թիս հոգւոց իմաստից։ Աբծանացուսցես զմեզ անշարժ պնդութիւ ընդ հովանեաւ թևոց որբ խաչիդ, զարբայութիւն յաղթող, զդատողութիւն անպատիժ, զիշխանականն հանդարտս, զքինաւորութիւնն խրատեալս, ձիւալարժիցն տուր սանձս, սոսկականայն անգծութիւ, հետևականն խրախոյս, քաղաքայնոցն պատուէր, նուիրողացն լրութիւ, ուխտաւորացն սիրփանս, ննջեցելոցն հանգիստ, և համօրէն ժողովըրդեան քումդ սուիմբ ամրութիւ պաշտպանութիւ քաւութիւ առողջութիւ և ողորմութիւ օրհնեալ յաւիտեան։ Ահա յիշեսցես և ողորմեսցիս ննջեցելոցն յուսով յարութիւ. հայցեմք։

Աև առաւել զյորդորուածն սիրոյ։

Պատել զմարմինս մեր՝ ի մի շաւիղ ընտրութ հոգւոյ սիրոյն որ առ տէր. խնդրեմք։

Զոհաբանութիւ խնամոց խնդրողին զխաղաղութիւ միշտ յերկրպագուացս, պաշտպանութիւ ծնողի փրկչին և մարմնաբանի անպարագրելի սքնչն Աբիամու ՝ծածծնի և միշտ կուսի. աղերսիս և աղաչանօք մկրտչին Ջուրբք զհոգին հրաւիրողի կարապետին մեծին Յովաննու, պաղատանօք Թագաւորելոցն օծութիւ հոգւոյն առաքելոցն սրբազգեստից, նահատակութիւ նախկին վկային սքնչն Ստեփանոսի՝ որ է որդի անդրանիկ փրկագործ կրից երկրորդն Ադամայ արգահատութիւ և աղօթիւք արի երջանկաց մարտիրո-

սայն կատարելոց, խոստովանողական դաւանութիւնն սրբոյն Կիրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի և յանմերձենալիսն նուիրողն, միտապաշտօն քաղկատարածոյնէ մաքուր միանձանց, և առենայն ընտրելոց պսակելոցն ընդ քեզ խաչակիր վարուք յաւուրն մեծի։ Այժմ ողորմեաց մեզ տէր ամէն մեր՝ ըստ մեծի ողորմութեանդ քումմ։

ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԵԱՆ։

Լ֊ինն աջոյ աջոյ ձեռինն,
աջոյն իւր աջ ընդաջմէ հօր,
հօր ընդ աջմէ լուսոյն փառաց։
Ի֊ծոց ծնողին ծագումն անուն,
յարփւոյն ծագումն եկեալ ի սէր
կուսին ծնեալ ծոյոյն ծաղիկ։
Ծ֊աղիկ ծոցոյ ծոց հայրենի,
ամպոյ նըման իջեալ յերկինից,
զսէր իւր ի մեզ քաղցրիկ ցօղեալ։
Ամէր ի յամպոյ ամպ սիրաշարժ,
օդոյն ցօղեալ ի նոյն գեղման,
վայր իջուցեալ կաթն անձրևայ։
Ի֊ սիրոյ սէր ծանուցեալ,
սիրաբողբոջ տարփմամբ լցեալ,
սիրով ընդ սէր միաբանեալ։
Լ֊ուսինն ի լոյս ի լրումն եկեալ,
Ձոխ Ձեմելով՝ պիշերավարն
ըզկնի Ձեմէր բարկ աստեղօք։
Ա֊ռաւօտուն ցօղիկն իջեալ,
ի նոր Սիոն զծայրսն տուեալ,
քաղցր արևով արուսեկին։
Վ֊արուընաբեր զարնանաշարժ
գեղգեղելով երփնազարդեալ,
նոր հարսանեաց միաբանեալ։
Ն֊կայք նոր մեք ղուարձացեալ,
վառ ի վառեալ տիալ ծալ ի ծալ
թփոյն տերև յօրինեսցուք։

ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԵԱՆ

Ե֊րգ զարմանալի, երգ շարժվարժենի
տեղի եղեր բարեկերտին,
խորհուրդ խորհուրդ համերամ
զարդ երամից զարդ։
Ո֊ՉՆ ի նոՉ յեռից
սափոր եղեգնաշէն տնկոյն,
մանն օրհնօրէն, նշդարենի ռահ։

Յունիցն նրբենից՝ ի մի կից կամար,
նէհեմ թէ նէհեմ մէջօրէի ժամն։

Աչքըն ծով՝ ի ծով ծիծաղախիտ
ծաւալանայր յառաւօտուն,
երկու փայլակնաձև արեգական նման.
շողն՝ ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս։
Ալսիցն երամից զարդ՝
երամից զարդ ոլորս են առեալ
եռահիւսակն բոլորեալ այտիւք։
Յայտէն նռնենի սարդիատունկ
գեղաշիտակ ծայրից ծաղկանց.
որոյ սիւնն՝ ի սրտին
նուսխայօրէն կարկաջայր։
Զեռացն եղիշոյ կամարակապ կապերը.
ատիճաղ պատիճաղ, սրտղի խտղի երգով։
Ժիւսեր զելևելն ընդ միմեանս,
հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ձեմեր։
Լերանն երկթերթի, վարդն՝ ի շրթանց կաթեր.
լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն։
Նոցըն լուսափայլ, կարմիր վարդով լըցեալ.
ծղնքըն ծիրանի մանուշակի հոյլք։
Խնկեալ՝ ի կընդրկէ,
բուրվառ հրով ոճայնով լըցեալ.
ձայն քաղցրանուագ որ՝ ի նմանէ հնչէր։
Պեղեցիկ պատմուճանաւըն զարդարեալ էր,
՝ի կապուտոյ, ՝ի ծիրանոյ, ՝ի բեհեզոյ, ՝ի յորդանէ։
Պօտին արծաթափայլ ոսկետունն,
կամարակապ յականց, յականց շափիւղայ,
մանրամասին յօրինուածով պճնեալ։
Ընձինն՝ ի շարժել մարգարտափայլ գեղով.
ոտիցն՝ ի գնալ շողն՝ ի կաթել առնոյր։
Ըմն Թագաւորին, այն նորածին փրկչին.
զքեզ պսակողին փառք յաւիտեանս. ամէն։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ահաւ եմ գեղեցիկ դուստր Նւայի Նրուսաղէմ.
ահա նա հարսն իմ ցանկալի,
սիրով կապեալ ընդ փեսային։
Նշման է եղբօրորդին իմ այծեմանց որթուց եղանց.
ահա նա ձայն եղբօրորդւոյն
խանդաղատեալ սիրով լըցեալ։
Նա՛կ իմ սիրելի, ևկ մերձաւոր
հարսն՝ի մայրեաց Ի իբանանէ.
ահա նա խայտայր, ինձօրով գիս պատեցէք
տարեալ մուծէք՝ի տուն գինւոյ։
Ունէք իւր աղաւնոյ,
Թև լայն կարմիր մանեակ ոսկւոյ.
ահա նա լեառըն կընդրկի,
հոտ նարդոսի և զըմըռսի։
Գեղ եր գովելի
մանուկ անհաս անժամանակ.
ահա նա լեառըն դիտարան,
շուշան հովտաց ծաղիկ դաշտաց։
Գասք մարգարէիցն
երգեն՝ի յայն թլրին վերայ.
ահա նա լեառըն շուշանի,
հոտն իւր վարդի կինամոնի։
Որդիք նոր Սիոնի
ելէք տեսէք՝ի Նեթզահէմ.
ահա ելէք դուք՝ի յայրին,
երկիր պագէք Թագաւորին։
Ընդ հովիւսն երգեցէք,
և ընդ մոգուցն երկրըպագէք.
ահա զոսկին Թագաւորին,
գնուսնկն Աստուծոյ հօր միայնոյ՝
Որում փառք և գոհութիւն
և հանապազ փառատրութիւն.
յաւիտեանս յաւիտենից
Ամէնատոս օրհնեալ՝ի համայնից։

ՏԱՂ ՑԱՑՏՆՈՒԹԵԱՆ

Ա՛ետիս մեծ խորհրդոյ,
խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ։
Ա՛ետիս, լոյս հօր ծագեալ
՚ի ծոցածին յէուԹենէ.
Ա՛ետիս, յայտնեալ Ա՛ստուած
՚ի հողեղէն գոյացուԹիւնս։
Ա՛ետիս, առաքեցաւ
հրեշտակապետըն Գաբրիէլ,
Ա՛ետիս տայր սրբուհւոյն,
դստեր ԴաւԹի Թագաւորին,
Ա՛ետիս քեզ տիրամայր
բերկրեալդ ուրախ լեր, տեր ընդ քեզ,
Ա՛ետիս քեզ տիրամայր
սրովբէականաց քրովբէականոց,
հուպ երրակին լոյս գերազանց,
լուսոյն արփի վեհինաձեմ.
սեռիցն ընԹացք բիւրուցն ի՛ջեալ,
շողշողենի փողփողենէջ,
մանրահեղեղ գաղտնի շաւիղ
անծանօԹի Ձանապարհին։
Ա՛ետիս քեզ տիրամայր
կոյս Ա՛արիամ տաճար բանին.
Ա՛ետիս տուք Ա՛դամայ,
այսօր լուծան անէծք մեղացն.
Ա՛ետիս նահապետացն,
ահա տեսին ում ցանկալին.
Ա՛ետիս մարգարէիցն,
այսօր եղև լրումն օրինացն.
Ա՛ետիս քեզ ՌեԹզահէմ
երկիրդ Յուդայ տունդ ԵփրաԹայ։
Ա՛ետիս ծառոյ ծաղկանց
բողբոջախիտ խիտասաղարԹ,
զոր գեղեցիկ պտղինաւէտ
ակնահաճոյ համ քաղցրունակ,
հոտ բուրազուարԹ փունջ խոտոնեբամ
ծայրից վարդից փԹիԹինաղարդ

Թերթ տարածեալ ոսկեձաձանչ
տերևախիտ կանաչացեալ։
Ընդեղիս, երկրպագեր
մեծ կարապետըն Յովաննէս,
Ընդեղիս, բառնայր ի գիրկս
Աղխսաբեթ մայրն Յովաննու,
Ընդեղիս տայր Յովաննէս
յորդ աղբերաց հոյլ վտակաց
ջուր մանուածոյ ծիծաղ ծաւալ,
կարկաջահոս ուխտնահոս,
ծայթինասեր մանուածաւալ
շրջանապտոյտ մանր աւազին.
հոլով խորոց մէտ մէտ ղուգին
վայր վեր անկ վեր վայր ի վեր՝
փուլթան ի ջուրս Յորդանանու.
Ընդեղիս քեզ Յորդանան,
Քրիստոս ի քեզ գայ մկրտիլ։
Ընդեղիս քեզ Յովաննէս
ձայն բարբառոյ յանապատէ։
Ընդեղիս ինձ Յովաննու՝
ձեռն իմ ըզտերըն մկրտէ։
Ընդեղիս հրաւիրողիս
զհարսըն մաքուր սուրբ փեսային։
Ընդեղեայ եմ կոչնատերս՝
մի հրաժարիք ի հարսանեացս։
Ընդեղիս Յորդանանու
Երմոնի և Անիրայ,
լերինաթինդ խոր վէմ ի վեր
ծրփին ի նոյն շառաւ յորձանից,
հրակոծ լերանց անծիւին ի տապ,
բոցն ի ծաւալ ծուխ խոր հերձաւ
ձապաղ ձեպով դարձ նոյն ի դարձ,
խաղայր փուլթուլ ի տեսանել։
Ընդեղիս տիեզերաց,
այսօր հնչեաց ձայն ի բարձանց.
Ընդեղիս որդւոյ մարդկան,
այսօր որդին գայ մկրտիլ.
Ընդեղիս հողեղինաց,
տեսաք զհոգին աղաւնակերպ,

Ալէտիս, յայտնեալ այսօր
խորհուրդ սրբոյ Յարութեանն.
Ալէտիս, միշտ երգեսցուք
Քրիստոս օրհնեալ ես յաւիտեան։

ՏԱՂ, ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան։
Այլ այն իջանէր ի լեռնէն ի Սասեաց,
և ի վերայ նորա աթոռք են կարգեալ,
և ի վերայ նորա գահոյք ոսկեղինք,
և ի վերայ նորա բեհեզք ծիրանիք,
և ի վերայ նորա որդի արքայի,
և յաջմէ նորա վեցթևեան սերովբէքն,
յահեկէ նորա բազմաչեայ քերովբէքն,
առաջի նորա մանկունք գեղեցիկ,
ի գիրկս նոցա խաչն տէրունական,
ի ձեռին նոցա սաղմոսարան և քնար.
որք երգէին և ասէին,
Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան։
Ալճեալ են ածեալ զսայլիկն,
ածեալ են կացուցեալ.
և ահա չքարժէր սայլիկն այն՝
և ահա չխաղայր անիւն այն։
Նթէ հարիւր բարդ խոլըրձան, վեց կոլընկան,
մին մանուշակ խրձադիզեալ.
ի Սասեաց յաջ կողմանէն
սայլիկն ածեալ են կացուցեալ
և ահա չքարժէր սայլիկն այն,
և ահա չխաղայր անիւն այն։
Նթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
և սամոտիքն ապրիշիմի.
փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ.
և ահա չքարժէր սայլիկն այն
և ահա չխաղայր անիւն այն։
Ալին ձորտն ձոխ էր և ձախուկ
ուռամիջակ հաստաբազուկ
լայնաթիկունք խարտիշագեղ ահեղագոչ
նա ձայն ածէր եղն ամլին

կանչուն առնէր աթոռակին։
Այնէ եղինքն են սաթ ու սպիտակ
ծաղկախայտուցք արագաքայլք ընթացականք,
եղջեւրն ամէն խաչանման,
և մազն ամէն հոյլ մարգարիտ.
և ահա շարժէր սայլիկն այն
և ահա խաղայր անիւն այն։
Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին
նա ձայն ածէր եղն ամոլին։
Սայլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի.
Այս այն հարիւր բարդ խոլորձանն՝
այն նահապետքն են մարգարէք.
Այս այն վեց բարդ կորընկանն՝
վեցօրեայ գործքն Աստուծոյ.
Այս այն մին մանուշակ՝
միաւորեալ Երրորդութիւնն։
Այս այն մանուկ խարտիշագեղն՝
այն Յովաննէսն էր մկրտիչն.
Այս այն չորս կուրծրն սայլին՝
աւետարանն էր Քրիստոսին։
Ի գիլ գայր ի գիլ սայլիկն ի գիլ
ի Մասեաց յաջ կողմանէն՝
սայլիկն ի գիլ գայր ի գիլ
և ձգընչալով գայր մտանէր Երուսաղէմ,
և որդիք նոր Սիոնի նոր երգէին զայս ասելով,
փառք Քրիստոսի. Ալլսօր արձակեցաք։

ՄԵՂԵԴԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Այս ձայն զառիւծուն ասեմ՝
որ գոչէր ի քառաթևին,
ի քառաթևին գոչէր,
ձայն առնէր ի սանդարամետն։
Սանդարամետն այն ի դող եղեալ
սասանէր ի ձայնէն ահեղ։
Ահեղ ձայնս որ ես լուայ՝
սա քակէ զամուրս որ ունիմ,
Ո՛ամուրս իմ քակել կամի,
գերեզմն առնել գերեդարձ։

Վերեացն երանի ասեմ՝
որ եղեն ի յառն առիւծուն,
ի յառն առիւծուն եղեն՝
այլ չունեին ակն տանջելոյ,
Ակն տանջելոյ չունեին՝
ակն ունին անանց սլսակին,
Պսակ բոլորեալ առնուն
յառիւծէն յանմահ արքայէն.
Վառելք փրկողին ասեմ՝
որ փրկեաց զդերեալսն ի բանտին։

ՄԵՂԵԴԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հաւուն հաւուն արթնացեալ,
դիտելով զհեթանոս՝
Զայներ ձայներ տատրակին
սիրանուագ սիրելոյն.
Վարձիր դարձիր սոսկացի
ընդ վիմին հովանեաւ.
Ի՛կ հարսնուհիդ ի լերանց ընծուց
ի դաշտաց այծեմանց.
Ականեալ եկեալ տաղաւարի
Աստիրայիմ Լեթելին։
Ելեալ ելեալ յասպարէզս
ի յայգին Կեդրոնի։
Ընձան կոխելով
գոյն ի գոյն բոսորի։
Ընկեալ փայտ ի հաց,
ըզգենլիս իւր զենեալ։
Խառնել ի գինի
զխառնելիս անուշից։

ՏԱՂ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՑՆ

Յանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն
հրահոսավտակ բոցաշաւեղ եռանդն.
որոյ դրանդն ի յերկինից հողմահնչեաց
բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուաց։
Ի ձայն բիւրակերպ օդինատիպ լսումն

աւետաքարող տրտմակամաց դասուց
պետրոսեան երամ հրաւիրողակ բարեաց։
Հրով մաքրողին վերառաքեմք
իննաբար երդ ի նա մէտ.
եւ Թնաղի շնորհաց հոգւոյն սրբոյ՝
հոգի հօր, եւ որմն նոյնատիպ դիմաց։
Հոգի Աստուծոյ,
հոգի զօրութեանց, հոգի հեզութեան,
հոգի գիտութեան, իմաստութեանց,
հոգի խորհրդոյ եւ հանճարոյ։
Մի իմոյ եւ զիս մի դատապարտեալ
զբո ձեռին շինեալ տաճարս.
յիս օթեվանեա, քո կամելդ գործ է կատարեալ։
Կամեցող բարեաց
բարեգործեա յիս ի բազմամեղս.
երգել երգենից պատիւ միշտ էականիդ
կամաւ քո եւ զիս վերնորոգեա ի փառս։

ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Վոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսից արփենից։
Ի վեր ի վերայ վարսից
ծաւալեր ծաղիկ ծովային։
Ի համատարած ծովէն
պղպջեր գոյնն այն ծաղկին,
Նրփին երփնուկնակ ծաղկին
շողշողեր պտուղն ի ձղին։
Վրքում վակասիր պտուղն
սնաներ խուռն տերևով.
Տերևն տաւիղ տուողին
զոր երգեր Դաւիթ հրաշալին։
Ի փունջ խուռներամ վարդից
գոյնըզգոյն ծաղկունք ծաղկեցան։
Այդ սօս ու տօսախ ծառերդ
վարդագոյն ոստս արձակեցին։
Այդ նոճ ու բողբոջ արօսդ,
զարդ առեալ վարդն շուշանին.

Շուշանն շողեր յոլտին
շողշողեր դէմ արեգականն,
Ամն հիւսիսային հաւէն,
հով հարեալ գոհար շուշանին,
Յայն հարաւային լեռնէն,
քաղցր օդով ցօղեր շուշանին,
Շուշանն շաղով լցեալ
ընդ շաղով և շար մարգարտով,
Ծաղկունքդ ամէն շաղ առին,
շաղն յամպէն ամպն յարեգակնէն,
Ըստեղքն ամէն շուրջ առին,
դէմ լուսնին գունդ գունդ բոլորին,
Գունդ գունդ խաչաձև գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ։
Փառք հօր և որդւոյն յաւէտ
սուրբ հոգւոյն այժմ և յաւիտեանս։

ՏԱՂ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Երկինքն ի յերկիրս և երկիրս ի յերկինքն,
Այրեկք ի խոնարհ, և վերեալք ի բարձունս.
Երկին նոր երկին լոյս արփաղարդեալ,
Այ երին աւետիքն ի յերկիր ծաւալին.
Գուշակք ի յհից եւթնատես միակին,
Յորհուրդն եթերեան նոյն ի թիւս հոգմոյ.
Ծանոյց տեսանողն ի յերկուց թռուցեալոցն,
Զարսինըք կանայք արծուաթռիչք սըրընթացք,
Ընդ հողմք ի չորից վեր ի յօդս ամբառնին,
Ընդ յայն քառադեան գետն վտակ բըխենայր
Զոսեր իջաներ անդր ի ծոմն առաջին,
Յաղայր ծաւալեր անդր ի ծոմն որ յետոյ։
Ծովուն առաջնոյ անդր երամք ապաւնեաց,
Ծովով երկրորդի ձագք արեամբ թաթաւին.
Ծաւալ ծով ի ծաղ քաղցր օդով շարժենայր,
Շարժեր սաքայեան ի կղզիս կնդրկի.
Ընձեակ շափիղայ տեառն յայգին Եդրանի.
ի խաղս գետոյ հրով վառեալ բուրաստան,
Ընդ անդ մակաղին երամակքն Գեբայ,
Ղոճիս սարդենայ փառք պատիւ Կարմեղայ։

ՏԱՂ ՍՐԲՈՑ ՓԱՌԱՍՆԻՑՆ

Պոնդք սուրբ վկայից ՚ի սոսկալի պատերազմին,
հանդիսաւորեալ հասին ՚ի գլուխ ասպարիսին։
Որպէսից պաշտօն բարեհնչեան երանութեան,
բանաւոր ղենմունք ողջակիզեալք աստուածոնէ։
՚Ի կատարածին անտիրական յօժարութեամբ
ահագնակոչիմ՚ի չարչարանսըն համբերեալ։
Պոնն մահու գործեալ սաստկակսկիծ քրտնակայլակն,
խառնեն զարտասուս ընդ վարդագոյն արեան իւրեանց։
Ողորմ աղետիւ կողկողագին պաղատանօք
մաղթանօք խնդրեն ըզտանջանացըն յաւելուած։
Որաւունիք բարիք անհատասար երկրաւորաց,
բոսորերանգեան վայելչութիք արիացեալք։
՚Ի կիրըս մարմնոյ ՚ի կենակից մեր բնութենէս,
ելին ՚ի յերկինս խառնեալ ՚ի զօրս երկնաւորացն.
Որևելապէս յայտնի քարոզք տիեզերաց,
տօնըք հրեշտակաց ՚ի մատենի կենաց գրեալ։
Որանաւետեալք անդ ՚ի վերինն Որուսաղէմ,
տեսլեամբ զուարճանայք արարողին տիեզերաց.
Որախճանք պերճականք երուսնական մարմնոյն սկսեք.
աստեղք աչխարհի ՚ի բարձրուս երկնից տեսեալք.
Պոհալեանութի՚ն արարողին, անմահութի՚ն
նախընթացողին, միշտ խընբախոյս նահատակաց։

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԻՆԿԱՑ ՎԱՆԱՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑԻ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ

ՀՐԱՄԱՆՔ ՅԾԱՍԵՐ Թագաւորութեդ, ով տէր արքայ, բուռն և աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր, մեկնել զերգ երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ Սողոմոնին է հոգւով։ Օ՛ի եթէ նիւսացին Վրիգոր, որ կատարեալ վարդապետ էր և հոգիաբնակ, ՚ի բուն կատարմանէ մեկնութեէ այսմ գրոցս վերջացեալ գտանի, ոչըչափ և առաւել ես, որ ամենայնիւ տգէտ եմ և ունայն ՚ի հոգւոյն ընդ՚հաց, ոչ կարացից հետեւել մտայն ասացելոց ՚ի սողոմոնեան հոգւոյն։ Այնուամենայնիւ զի չէ փոքր դատապարտութիւն և պատիժք՝ զբանս արքայ գրոց օտար մեկնութեք աղաւաղեալ՝ վասն ոչ տգէտ երևելոյ, և փառամոլ հպարտութեք՝ զոչէսն իբրև զՀնամարիտ ցուցանել։ Այլ զի հրաման ունիմք հնազանդ լինել Թագաւորաց հրամանաց, յանդգնիմ ասել զիմ տկար մտայս հասողութեն. յուսացեալ՚ի հոգին սբ, զնորայն կատարելով հրաման, որ ասաց, Թէ հպատակ կացէք Թագաւորաց։

Ընդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտս երևեցուցեր առ ՚ի քննել զգիրս, և հոգտանել ուսմանց, որ է գուշակ երկիւղն Հն, և օտարանալոյ ՚ի պիղծ հոգւոյ և ՚ի վայրապար քննութեէ և ՚ի մեղսասէր բարուց, և այնմ երանութեէ մնատւորիլ, որ մարգարէն ասէ, Թէ "Երանեալ է այր՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամբարշտաց,, և որ զկնի գայ։ Ոչ և սակաւ ինչ յառաջ երթեալ՝ ասէ,

«Ա՛յլ յօրէնս ՚ին խորհեցայ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի»։ Ապա զհատուցումն խորհելոյն զօրէնս ՚ին ՚ի վերայ բերեալ ասէ, Թէ «Նղիցի նա որպէս ծառ՝ որ տնկեալէ ՚ի գնացս ջուրց»։ Օ՛ն որպէս ծառ՝ որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց, անթաթշամ է, նոյնպէս և որ զպատուիրանս այ քննէ, և այնմ հոգ տանի ՚ի տուէ և ՚ի գիշերի, այնպէս անթաթշամ մնայ յայսմ ՚ի կեանս. և զամենայն զոր ինչ առնէ, յաջողէ նմա ՚ին։ Որպէս Պաւղին իսկ յաջողեաց. զի այր թադաւոր էր, և այնչափ մեծ թագաւորն զպատերազմաց և զամենայն պիտոյից մարմնոյ հոգս առ ոտն հարեալ, զայն և՛ն խորհէր. վասն որոյ անպարտելի մնաց ՚ի թշնամեաց։ Նոյնպէս և ՚ի Պողոմոնէ տեսէ՛ք, Թէ քանի՛ տիեզերակալ թագաւոր էր. բայց հանապազորդեան հոգք այն էր նորա, զոր յընթեռնուլդ էք. և այլ ևս այնչափ գրեան, զոր և աշխարհս չէր բաւական ՚ի բառնալ՝ եթէ մնացեալ էին գրեանն. բայց զի չէր աշխարհ արժանի, և չալիտեր որ ուսանէին մարդիկ, զայնպիսի անչափ գիտութիւն եբարձ ՚ին յերկրէ. զի զամենայն ինչ ՚ի գիտութի՛ն էր բերեալ, որ ինչ արարեալք էին այ ՚ի վերայ երկրի. և եթէ չէր գլորեալ, այլ ևս մեծաց չնորհաց էր հաճեալ։ Ա՛րդ ընդ այնպիսին պարտ է նախանձել թագաւորաց, և անյագաբար ուսանել զօրէնս ՚ին։ Այլ այժմ կացցէ այդ, զի ՚ի սկիզբն մեկնութեան գրոցս միեսցուք։

Ա՛րդ նախ զայս արժան է ասել, Թէ զինչ մեկնի Նրգ երգոց. և այսու զանբաւ պատուականութիւն նորա ուսանել։ Նրգ երգոցդ է օրհնութի՛ն օրհնութե՛ց։ Որպէս և մեք սովոր եմք խորանին սրբութե՛ն, ուր սեղանն ՚ին կայանայ, սրբութիւնք սրբութեանց կոչել. որպէս ասէ իսկ առաքեալ։ Ա՛յսինքն՝ եթէ եկեղեցին է սրբութի՛ն, և խորանն ՚ին՝ կրկին սուրբ և առաւել ՚ին։ Նոյնպէս և նա ամենայն երգոց օրհնութե՛ց գեր ՚ի վերոյ է. որպէս և ՚ի նորումն աւետարանն՝ ՚ին և պատուական կոչի քան զայլ գիրս. նոյնպէս և նա քան զնոսին։ Յաղագս որոյ իմանալի է՝ Թէ ձայնիւ երգելին ՚ի տաճարին, առաւել ևս յանգուա՛ծ, և մարգարէական հոգւով՝ քան զգաւա-

Թեան սաղմոսն. զի անձառ է խորհուրդն՝ որ ի յայն սարսափելի քանան ծածկեալ է։ Այլ ոչ կարէ ոք ի մարմնեղինաց խմանալ, բայց եթէ ոքք ըստ Պաւղոսին են հոգւով, որ յերրորդ երկինս էլ, և զանձառ քանան լուաւ. զոր ոչ էր կար մարդոյ խօսել։ Ա՛ան զի ոչ տեւէ լսելիքս այս ա՛յ խորհրդոյն լսելութեան, որպէս և ոչ աչքս այս տեսութեն ա՛յ։

Ա՛րդ զանձառելիսն կամեցեալ պատմել Սողոմոնն՝ ի մարմնաւոր իրս առակեաց. այսինքն՝ ի փեսայ և՝ ի հարսն, յերջօրորդի և յօրիորդ, ի դուստր և յաղաւնի, ի ստինս և ի տաշխս, և յեւղ թափեալ, ի խնծոր, յայծեամն, ի Սողովմոն, ի Թագաւոր, ի քաղաքն Երուսաղէմ, ի պարտէզ, և որ այսպիսիքք ցանկալի աչաց հայելոյ, և լսելեաց ախորժելիք, և մտաց փափաքելիք։ Օ՛ի որպէս ծնողք տղայոց՝ զպատուական իրս՝ ի բարեեռեսակ ամանի ծածկեն, զի նոցա արտաքոյ տեսեալն ցանկալի թուին քան զոր՝ ի ներքս եդեալ գանձն, զի այնու յորդորեսցին և զգուշութեամբ պահպանութեան որ՝ ի ներքս։ Այա և եւղ անոյշ և մեծագնի, որպէս նարդոսն՝ որ՝ սա իսկ յիշէ, ամանիւ ամփոփի. այլ և հոտ անոյշ ոչ՝ ի բացի մարթի ինալ, որպէս և ա՛որն՝ ի սրբուհի աւետարանին ասէ, թէ՝ "Ա՛ի արկանէք ըզմարգարիտ ձեր առաջի խոզաց"։ այսինքն, թէ մի տայք տկար լսելեաց զանձառելիսն. նոյն հոգի ուսոյց Սողոմոնի՝ մի յայտնապէս սփռել զորս ետես հոգւով լուսոյն. և մի ամենևին Թագուցանել զխորհուրդ եկեղեցւոյ, և զիրկութեի, և զ՝Ա՛ի մարմնանալն, և զամենայն ինչ զոր կրեաց վասն մարդկան սիրոյ, և զմահն, և զյարութեին, և զմիաւանգամ գալուստն, և զոր ինչ անդ կայ պահի պարգեւք սրբոյ՝ անխմանալիք, և զտոփուն սիրոյ սրբոյն որ առ՝ Ա՛ա, որ արեամբ և մահու չափ կրեցին յանձինս, սիրելով զ՝Ա՛ա, որպէս և նա զմեզ. որ վասն զիւր զանբաւ սէրն յայտ ածելոյ մեզ՝ հարկեցաւ մարմին զգենուլ և դարձեալ՝ զոր արիւնն հեղուլ վասն մեր։ Այր կարողն էր իշխանաբար փրկել զմեզ՝ ի սատանայական բռնութեէ իբրև զնծ, զայն իրաւամբք արար, և զնա բռնութեբ կապեաց։ Այա և զայն հանդարտու-

Թէ գործեաց, և ոչ տերութէ։ Օ՛ի իրաւամբք փըրկեսցի գերութիւն նորա և ողորմութիւն, որ է այսինքն զմահն՝ զոր ըստ իրաւանց դատեաց զմեզ ՚ի հող դառնալ վասն անարգելոյ զպատուիրանն՝ որ վասն պտղոյն չուտելոյ, և զարդար դատն՝ առանց իրաւանց ոչ եբարձ՝ որ ունէին իշխանութիւն։ Ա՛յլ ինքն զադամեան զգեցաւ մարմին, և զմահ նորա յինքն առ, և իրաւամբք փրկեաց։ Ա՛յս և ընդ իրաւունն զողորմութիւն խառնեաց, և ընդ ողորմութիւնն՝ զիրաւունսն. և այսու ամենայնիւ եցոյց զանպատմելի սէրն՝ որ առ մեզ։ Օ՛այս ամենայն պատմէ Դրդ երգոյն, և զեկեղեցւոյ պայծառազարդութիւն խաչիւն և սեղանովք, մարմնով և արեամբն Տեառն, զբ աւազանաւն և իւղովն սրբով, հին և նոր կտակարանօք, առաքելովք և մարգարէիւք և վարդապետօք, քահանայականօք և Ճգնաւորականօք, կուսանօք և մարտիրոսօք, քրիստոնեայ Թագաւորօք, և բովանդակ ամբիծ ժողովրդօք, որ յեկեղեցւոջ էր տնկելոց. և զայնպիսի պարգևսն, և զանքընդնելի, և որ այլն ևս սոյնպիսիք անՃառ պարգևք, որ առակաւոր բանիւս եցոյց մեզ։ Ա՛յլ և նա Ճշմարտապէս ոչ ծանեաւ զբովանդակն, և ոչ ծանուցանել մարթաց. և ոչ զոր ինքն գիտաց, մեզ յայտնի յայտ եբեր, այլ առակաւ։

Ա՛պա եթէ հարցանէ ոք, Թէ զիա՞րդ ՚ի հարսն և ՚ի փեսայ առակեաց. և զիա՞րդ մարթի զնոյ խորհուրդն մարմնաւոր ցանկութիւք նշանակել, և զանչափ սէրն նմա՝ ախտի սիրով օրինակաւ ՚ի յայտ բերել։ Ա՛խ՝ արժան է զցանկասէր բարս մեր աւաղել. որ այնչափ օտարացեալ եմք յնոյ խորհրդոյն, որ այս անմահական ցանկութիւք հարկեցաւ Տոգին Սբ ՚ի ձեռն Սողոմոնի պատմել մեզ զանտանելիսն։ Ա՛յսպիսի իրաց աղագաւ և երանելի վարդապետն տիեզերաց Յոհան վարի բանիւ [1], Թէ այնպիսի սրբական վարս պիտոյանայր մեզ ստանալ, որ գիրս ոչ պիտոյ էր. որպէս Ա՛յրէն, և Ա՛բրահամու և նորին որդւոց և Թոռանց. որպէս Յովբայն, և Մ՛ովսէսին, և առա-

1 Մ՛ակն. Մ՛ատթ. ձռ. ւո։

քելոյն . որ փոխանակ գրոյ ՚ի սիրտս նոցա քնակէր, և ուսուցանէր , և ՚ի տախտակս սրտին գրէր , և ոչ ՚ի գիրս : Զրդ նոյնպէս պարտ էր լուսաւոր և հրեշտակային սիրտ ստանալ, որ ոչ պիտոյանայր մեզ այնպիսի առակ ցուցակի՝ ՚ի հարսն և ՚ի փեսայ կերպանել զխորհուրդս Քրիստոսի և եկեղեցւոյ, և որ յերկինս են անխմանալի բարութիւնքն : Զրդ քանզի զայնպիսի պատիւ կորուսաք , և զայնպիսի աչս կուրացուցաք , ծն առեալ յերկրորդն դիմեցուք , և ՚ի ձեռն մարմնաւորացս տեսցուք զՀոգևաորսն . որպէս և պատմէ Մովսէսն՝ ընկալեալ զչնորհս Հոգւոյն նոր : Ա՛յս և սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին և հարսին ընդ փեսայի , որ ազատ լինի ՚ի պիղծ խառնից , չի օտար ՚ի Հոգւոյն չնորհաց , որով և խորհուրդն ՚ի Քրիստոս և յեկեղեցի աւարտի , ըստ առաքելոյն, թէ " Խորհուրդս այս մեծ է . բայց ես ասեմ ՚ի Քրիստոս և յեկեղեցի ,, . վկայելով Մովսէսեան բանիցն : Զրդ որ զսուրբ ամուսնութիւն պղծէ պղծ խառնակութիւք և չար գործովք , զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ , և զՔրիստոս անարգէ , որ այսմ օրինաւին է :

Բայց մեք դեռ զառաջի եդեալ խորհուրդս մեկնեսցուք , և ցուցցուք , թէ որչափ սէր ունի ՚ի առ մարդիկ . այնպէս , որպէս փեսայ ընդ հարսին . որպէս ասէ Գրացի , թէ " Որպէս ուրախ լինի փեսայ առ հարսին, այնպէս ուրախ լինի Տէր ՚ի քեզ ,, : Օ որ և Պաւղոս իսկ ասէ յողբոմն Յովհաննու , թէ " Բազում ցաւ է սէր քո ինձ քան զսէր կանանց ,, : Զրդ չիք յերկրի պատուականագոյն և առաւել քան զսէր առն և կնոջ : Ապա եթէ ոմանց ոչ շատ կարծի և կարևոր , յաղագս այնր չիցուի՝ զի ոչ սրբութեամբ լինի եկեալ յամուսնութիւնն . և ոչ սրբութեամբ իցէ պահեալ զկուսութիւնն , այլ անառակ պղծութեամբքն իւրովք փախուցեալ իցէ յինքենէ զչնորհս Հոգւոյն : Իսկ որ անբիծ և անապատ գայ ՚ի նոր յամուսնութիւնն , և անձառ սիրով սրբով Հոգւոյն սկզբ իցեն միաւորեալ ընդ միմեանս , այն օրհնութիւն օրհնին , որով Զքայէն և Իւսայն օրհնեալ միաւորեցան : Ա՛յս՝ որ այսպիսի սիրով և

օրհնութիւնքն լինին միաւորեալ, ի վերայ իրերաց ա-
րեամբ չափ մեռանին։ Այս ևս և վասն ընտանեաց
սիրոյ բազումք ի Քրիստոս անկան և ուրացան ի հալա-
ծանաց ժամանակին։ Այլ և Ադամ ևս ի դրախ-
տէն և ի լուսեղէն փառացն՝ յայլագոյն կնոջէն սիրոյ
մերժեցաւ, և արտաքս անկաւ. և ոչ վասն ած լինել
լոյ, այլ ի նորա սիրոյն ծանրը համարեցաւ քակիլ։
Որ գիտեր Աչմարտապէս՝ թէ պատժելոց էր լինքն
յայ. զի ոչ էր անգէտ, այլ լի մարգարէական հոգ-
ւով. և զի դեռ չէր ևս ի հնորհաց հոգւոյն անկեալ.
վասն զի չէր անցեալ զպատուիրանսն։ Այս և յետ
ուտելոյն զպտուղն ոչ ի սպառ կորոյս զհոգին. այլ
որպէս մինչ ի դրախտին էր, հոգւով սրբով ծանեաւ
զամենայն կենդանեաց զբարս, և յածելն այ զնոսա
առ Ադամ՝ ըստ իւրաքանչիւր բարուց և բնութեց
կարգեաց զմի մի անուանս նոցա։ Եւ ի ննջելն իւ-
րում յորում ստեղծաւ Եւայ, և յածել զնա առ
նա՝ մարգարէութիւն ասաց, թէ "Այս այժմ ոսկր
յոսկերաց իմոց ,. և զորդեծնութեան աձումն որ ի
հնոջէն, և թողուլ զհայր և զմայր, և երթալ զհետ
հնոջ, և լինել մարմին մի։ Այս և յետ ուտելոյն ի
պտղոյն՝ գիտաց մարգարէութիւն զփրկութիւնն մեր՝
զոր ի ձեռն հնոջն էր լինելոց, այսինքն ի ձեռն աբ
ածածնին. վասն որոյ և կեանս կոչեաց զկինն. ապա
թէ ոչ այդպէս, զիա՞րդ կոչէր զնա կեանս, որ ամե-
նայն ծննդոց Ադամայ՝ մահու պատճառն եղև։ Այս
և որպէս ասէ Ցուսաւորիչն, թէ [1] "Օ այս ասե-
լով՝ զամենայն որ մինչ ի կատարած գործք լինելոց
էր յերկրի, և ի ձեռն Քրիստոսի զիտաց
նա,։ Ադդ եթէ մինչ ի փառաց անտի անկեալ էր,
զմարգարէութիւնն ունէր հոգի, ոչքափ ևս առաւել
մինչդեռ ի փառսն էր. այո՝ և առաւել ևս ունէր։
Ադդ յայտ իսկ է, որպէս առաքեալ ասէ, թէ Ա-
դամ ոչ պատրեցաւ, յօձին սուտ խոստումն՝ որ սա-
տանայիւ, այլ կինն պատրեցաւ և յանցեաւ. և
Ադամ չաղագս ոչ բաժանելոյ ի հնոջէն եկեր զպը-
տուղն և սիրելոյ զնա, այլ ոչ վասն ածանալոյ՝ որ-

1 Ադաթ։

պէս կ'ինեն։ Կ'ա և այժմ իսկ յաղագս սիրելոյ զկա-
նայս՝ մեծարեն արք զկանանց խրատս և զբար կամ
նոցա կարի յոյժ գիտեն, թէ չէ պատշաճ, այլ՝ի սի-
րոյն հարկին առնել։ Կ'երդ զայս գիտացեալ Սողո-
մոնի՝ կարևոր սէր՝ի մարդումն քան զամենայն սէր,
և առակեաց՝ի Վէմի սէր և յեկեղեցւոյ առ Մի-
մեանս։ Կ'այլ ո՛չ եթէ այսու միայն կշռի սէրն այլ. զի
որչափ ընդ այծ և ընդ մարդիկ է առաւելուն, նոյն-
չափ սիրոյն գերազանցութեի քան զամուսնութեան։
Կայց որ զիրքս զայս ընթեռնու, պէտս ունի մաքրել
և զխորհուրդս յամենայն մարմնաւոր ամուսնական
մտածուեց, և ապա մխել՝ի լսելուն։ Օ՛ի այս գիրքս
լեառն է Վորեբ, ուր այծ բնակեաց. և որպէս անդ
յորժամ գաղան մերձենայր՝ի լեառն, քարկոծ լի-
նէր, նոյնպէս և որ գազանաբարոյ մտօք մերձենայ
յերևելի բանս գրոցս այսորիկ, վնասն կրէ զկիրս։
Ա՛յսն որոյ արտաքոյ ամենայն խորհրդոյ մարմնեղե-
նայ պարտիմք լինել, խնդով զաչս մարմնոյ, և բա-
նալ զհոգւոյն. զի կարասցուք նման Սովսիսի՝ յայծա-
բնակ յայս ելանել իմանալի լեառն և զի սմա այծային
խորոյն զծածուկս ըստ կարի յայտ ածել։ Ասուր
առաջնորդ եղիցի Հոգին սբ, յաւելլով՝ի մեզ լե-
զու ասելոյ, և լսողացդ միտս լսելոյ։

ԷԿԼԷՍԻԱՍՏԷՍ

Կ'այսինքն ժողովումն եկեղեցւոյ, որ բաժանեալ
էր՝ի մնոտի պաշտօնեն. զի եկեղեցի կոչի ժողո-
վուրդն։

" Գիտացի, թէ մարմին զօրացուցանել զմանկու-
թի„։ Կ'այսինքն, ծերացեալ մեղօք մանկունին Կ'ե-
դամայ՝ հոգւոյնէն սրբով՝ի գիտութի եկն Սողոմոնի.
այն մարմինն, զոր Վ'ա զգենլոց էր՝ի մկնջ։ Գարձ-
եալ, այնմ մարմնով մեր հնացեալ բնութիս զօրաց-
եալ՝ի մանկութիւն դառնայ, զլուսեղէնն զգենլով
զպատմուճանն յորմէ մերկացաւն։

„ Կարձրացուսցէ՝ի շտեմարանս մեր„։ Գոհ ըզ-
դրախտն և եթէ զերկինս իմանաս, երկոքին լսի,

յոր բարձրացուսցէ Տէր զխոնարհեալքս մեզոք ։ Այլ եթէ հարցանէ ոք , եթէ ո՞ արար զայս փրկուիլ , լսէ . Յաղաւորն մեր Ա՛ստ , „ որ ի գահոյս իբրև արմաւոսկեղէն զմեալից „ ։ Յաղաւորեալ մարմին միանալովն ընդ այ բանին , “ Ի գահոյսն այ , արմաւ ոսկեղէն „ , մարքուր ի մեղաց իբրև զոսկի , զաճուձէն դուշակէ՝ միացեալ ընդ մարմնոյն , այսինքն ընդ արմաւենւոյն ։ Այլ թէ զիարդ մարմինս մեր արմաւենի կոչեցաւ , վասն զի անբիծ ի մեղաց՝ նորայն մարմինն էր ։ Ո՛վ եթէ Պաւիթ զարդարս իբրև զարմաւենի ծաղկեալ ասէ՝ վասն վայելչականուձէն , քանիսոն ածացեալ մարմինն ։ Այլ “ զմեալիցն „ , զի զմեռելոձի կրեաց ։ Որում և բերաւ իսկ ի մտգուցն ընծայ ընդ երկուսն պատարագն առ ի գուշակուձին այսմ ։ Յաղաւորմ ասել , որ ի Թաղմանն զմեսեցաւ ։

“ Պարձցի Թագաւորն անդրէն ի մանկուձէն „ ։ Այս բան զառաջինն բանսն կրկնէ , որ ասացն , Թէ “ Ա՛արմին զօրացուցանէ զմանկուձ „ ։ Այլ զի Թագաւոր ևս կոչի մարդս՝ զի պատկեր այ արարաւ ։ “ Պարձցի Թագաւորն անդրէն ի մանկուձիւն „ ։ Այսինքն՝ յառաջին փառն , զոր ի դրախտին ուներ ։

“ Այրելէն ի սենեակ իւր „ ։ Որպէս յառաջաբանին՝ որ շտեմարան կոչեաց զարքայուձիւնն , ուր շտեմարանելոց իցէ զարդարսն , զնոյն ասա դարձեալ սենեակ անուանեաց ։ Այլ սիրելի , վասն զի սիրեաց զմարդիկ առաւել քան զՀրեշտակս . յաղագս որոյ սիրոյ և զմեր քնուձիս զգեցաւ ։

“ Ներգեցէք զսերն „ ։ Այսինքն , Թէ օրհնեցէք զայն սերն , որ այնչափ սիրեաց , որ զայնչափ պարգևս դարձեալ շնորհեաց մեզ իւրով իսկ մահուամբն ։

“ Այս իսկ եմ ի սաղմոսարանին „ ։ Ներկու իրս լսէ բանս , Թէ գրեալն ի սաղմոսարանին ես եմ զոր ինչ արարի ուղղուձիս փրկուձէ և կրեցի , գրեալ է ի սաղմոսարանին ։ Այլ և ես մի մի ոչ կամիմ բերել զվկայուձինն , զի ի համառօտն եմ ի փութալ ։ Այս երկրորդ , Թէ կամի ոք երգել և օրհնել զիմ սերն ի սաղմոսին , ես եմ որ ուսուցանեմ , Թէ

արպէս պարտ է օրհնել : Այսմ և առաքեալ վկայէ, ԹԷ " Ո՛որ կամքն յաղօթս , որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք . այլ ինքն հոգին բարեխօս լինի ի հեծութիւն անմռունչս " : Այլ ի հեծութեամբ աղօթելն քո՝ հոգին՝ որ ուսուցէ քեզ զբանս օրհնուէ՝ անբարբառ անմռունչ :

" Այրգեցից ընդ ընկերս իմ " : Այսինքն ընդ հրեշտակս : Այլ թէ զիա՞րդ հրեշտակք ընկերք կոչին . մի՝ զի յարարչէն եմք գոյացեալ որպէս և նոքայն . և երկրորդ՝ զի ոչ էաք հեռի ի հրեշտակաց փառաց , այլ փոքր ինչ խոնարհ քան զհրեշտակս , որպէս և ասէ Պաւլիւ :

" Այրգեսցուք և ուրախ լինցուք ի Թագաւոր սիրելի" : Այսինքն, ի Թագաւորն մեր Այ՛ր որ սիրեացն զմեզ , ուրախ լինցուք ընդ վերստին ստանալն զկորուսեալ փառսն . և երգեսցուք օրհնութի՛ն նմա :

" Ակնկալեալ ակնկալեցի զտէրունէ " : Այսու յայտնէ, թէկպէտ և անտես է ինձ , զի մարմնաւորս ունիմք աչս , անտեսութեամբ օրհնեսցուք զնա :

" Այնք մեր լրսնաւորք " : Ահամարս Թուոց տասնն է կատարեալ և եթէ այլ Թուէ , ի մին դառնայ , ասել՝ մետասան . և որ ի կարգին է . նա և ՚ճաճաքան վկայէ այսմ[1] : Այրդ որպէս ի միակն , նոյնպէս և ի տասնեակն տան տան հարիւր է . և հինգ տասն յիսուն . հարիւրն կատարեալ Թիւ է որպէս զտասն . և յրսունն կէս Թիւ որպէս զհինգն : Այրդ զկէս աչս ունի մարդ , և ոչ զկատարեալ . այսինքն յրսնաւորք : Այրդ զիա՞րդ կարէ տեսանել զճաճկեալն ի տեսլեան , այսինքն յրսնաւորէս : Ելա և ի հարիւրաւորացն , այսինքն ի հրեշտակաց անտեսանելի է . Թէկպէտ և ոչ որպէս մեզ , այլ և ոչ կատարեալ :

" Տո՛ր արար զքեզ և հաստատեաց զքեզ " : Ելա արար զառաջինն , և նա դարձեալ հաստատեաց զանկեալն՝ ի նոյն փառսն :

" Պատրաստեաց զքեզ յարդանդէ , գեղեցիկ ի կանայս մայր քո " : Այրդանդ՝ որ աւազանն է . և մայր

1 Ճառ . ե . ի Պաւքայն :

Աիոնէ եկեղեցի կոչի . զի " Աիոնէ ասի մայր. և մարդ ծնաւ ի նմա " :

" Ընդէ մարմին առ նոյն անխեղճ անաղտ յայլմէ տեսութենէ " : Յայնքան ի հոգւոյն սրբոյ : Ա՛ւ և առաքեալ ասէ , " Ընդեալ վերստին՝ ուր յապակաւ նայիս սերմանէ , այլ յանապականացուէն , կենդանի և մշտնջենական բանիւն Աայ " :

" Օ՛ի այսպէս ունէր " : Յայնքան թէ յառաջ այսպէս ունէին մարմին անխիղճ , անարատ , լուսաւոր , մինչեւ եր ի պղծոյն ձաշակեալ :

" Այս կայր այս օրհնութիւնք օրհնութեանց " : Յսու զԱւթայ բանան հօր իւրոյ քերէ վկայ , օրհնութիւն օրհնութեց ասելով , թէ " Որ ասաց ցիս որդի իմ ես դու , և ես այսօր ծնայ զքեզ " :

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ՈՐ Ի

ՍՈՂՈՄՈՆԻ

Սողոմոն՝ խաղաղուն Թարգմանի, որով առա-
կէ զԻ՚ն. զի նա է խաղաղուն մեր, որպէս ասէ ա-
ռաքեալ։ Ի՚րդ քանզի ծնաւ նոր ծնունդ, աղաչեմք
զծնօղն՝ մայրական սիրովն համբուրել զմեզ, մերձե-
ցուցանել զբերանն ացեային. զի ի համբուրելն նո-
րա զմեզ՝ արբցուք յայնմ բերանոյ գայն՝ որ ինքն ա-
մենաւքք բերանն ասաց. «Եկէ որ ծարաւի իցէ, և
կեսցէ առիս, և արբցէ»։ Յաղագս այնորիկ ասէ,
Թէ

«Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւ-
րոյ»։ Ա՚յս և անառակ որդին գոլով մեք, համբու-
րիմք յերկնաւոր հօրէն, ըստ ասելոյ առաքելին յաւե-
տարանն։ Ի՚րդ զսէրն՝ զոր սիրեաց զմեզ, առաւե-
լուլ աղաչեմք՝ համբուրին առակաւ։

«Օ՚ի բարի են ստինք քո քան զգինի»։ Պա-
տուիրանք՝ որ ծընդին ի հոգւոյն ի ստեանց գրոց,
բարի են քան զգինի, ըստ մարգարէին ասելոյ, Թէ
«Խարի են ինձ ամենայն բանք բերանոյ քո քան
զհազարս ոսկւոյ և արծաթոյ»։ Օ՚ի կաթն որ ի
ստենէ գղխէ, կենդանուԹէ է պատճառ. իսկ գի-
նին՝ միայն զօրուԹէ։

«Նո՚ւ հոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս ա-
նուշահոտուԹէ»։ Ա՚յսպէս առաքինուԹիք և բարի
գործք՝ որ յաճուԹեան իւղոյն բուրեն. այսինքն զոր
ուսուցանէ հոգին սե՝ որոյ մերձենան և հոտոտին
ի նա։

«Նո՚ւշ Թափեալ է անուն քո»։ Նո՚ւ զի որ Թա-
փեալ է յամանէ, անշնին է, և միայն ամանիւն չա-

նաչէլ լեալ ՚ի նմա իւղոյն . այսպէս ՚ա՛ծուԹ՚ենն բնուԹ՚ենէ անջնին և անիմանալի և անտեսանելի է , իբրև զեւղն Թափեալ : Այլ զոգիս արդարոց և տղայացեալոց ՚ի մեղաց՝ անուշահոտ , որպէս և զամանն՝ եւղն պատուական : Այդ զի Թէ իբրև Թափեալ եւղ է ՚ա՛ծուԹ՚ենն անուն և գիտուէն ՚ի մարդկանէ անհասողուԹ՚ , նա և ՚ի կատարեալ սրբոց , և ո՛չ միայն ՚ի սրբոց , այլ և ՚ի բուլանդակ յերկնայնոցն . սակայն մեր բնուԹ՚իս միուԹ՚ ՚ի ՚ո՛ր կուսէն՝ որչափ մարԹ էր տեսանել զեւղն , տեսաք : Օ՚ որ և ինքն ՚ո՛ր ասաց ցկոյրն , իբրև եհարց եԹէ „ Կո՛ւ հաւատա՞ս յորդի՛ ՚այ „ . և նա պատասխանեաց , Թէ „ ո՞ է ՚ո՛ր „ . և ՚ո՛րն ասաց , „ և տեսեր զնա և որ խօսիդ ընդ քեզ , նա է „ : Օ՚ մարմինն ՚ա՛ծացեալ տեսանելով զինքն զեւղն անտես ասաց տեսանել :

„ Վա՛ն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ „ : Օրիորդս՝ զայնոսիկ կոչէ , որք ՚ի մեղաց տղայացան . նա և զհրեշտակս ևս :

„ Օ՚ հե՛տ քո ՚ի հոտ իւղոց քոց ընԹասցուք „ : Օ՚ ի որք արժանի լինին զբանին ՚այ ՚ձաչակս ՚ձաչակել՝ և զնորա հոտն առնուլ , անյագաբար զհետ հոտոյ իւղոյն ընԹանան . և ո՛չ երբէք դադարեն յընԹացից . Թէ և բանդ և կապանք հասանիցե կրել , ո՛չ դառնան . և եԹէ զոգիս պարտ իցէ Թողուլ . որպէս և առին իսկ յանձն առաջին սէրն , որք յայսմ հոտոյ եղեն հոտոտեալք :

„ Օրիորդացն պատմէ հարսն վասն փեսային զոր ինչ ընդհեաց նմա „ : Հարսն՝ եկեղեցի և ժողովուրդ կոչի . և օրիորդք՝ հրեշտակք և ՚ո՛ր . որպէս ասաց տղայացեալն ՚ի մեղաց : Այդ պատմէ հարսն օրիորդացն , այսինքն առաջին հարցն և մարգարէիցն և արդարոցն , նա և հրեշտակաց :

„ Տարաւ զիս արքայն ՚ի սենեակ իւր „ : Ով յարքայուԹ՚ենն փոխեաց զիս յիւր բնակուԹ՚ենն . վասն զի փոխանակ դրախտին՝ մերոյ բուն բնակուԹ՚ենն , յորմէ մերժեցայ , զևս առաւելագոյնն ետ ինձ :

„ Հարսն պատմէ օրիորդացն , և նոքա ասեն , ցընծասցուք և ուրախ լիցուք ՚ի քեզ . և սիրեսցուք զըստինս քո քան զգինի „ : Այսինքն ուրախակից լինին

արդարքն՝ հեթանոսաց փրկուԹԵ. և միաբան ցնծան ՚ի փրկիչն Յն, և սիրակից լինին միմեանց ստեանցն սիրոյ, որ են պատուիրանքն այ։

" Օրիորդք փեսային բարբառին զանուն հարսինն "։ Օրիորդս՝ զբարեկամս փեսային Քին ասէ. բաղում անգամ չէ պէտ մեկնել։

" ՈւղղուԹԵ սիրեաց զքեզ։ " Օ այս և ՊաւիԹ ասէ, " ուղիղ է Ճր ՚ի ՚ձ մեր "։ Ընդ եԹէ նա սիրեաց զմեզ՝ որ ուղիղն է, և ՚ի քէն զնոյն պահանջէ սէր ՚ի սիրեցելոյդ։

" Հարսն ասէ. սեաւ եմ ես և գեղեցիկ՝ դստերք Երուսաղէմի, իբրև զվրանն Կեդարու, և իբրև զխորանն Սողոմոնի։ Մի հայիք յիս, զի ես եմ սեացեալ. զի խեԹիւ հայեցաւ յիս արեգակն։ Որդիք մօր իմոյ մարտեան ընդիս. և եդեալ զիս պահապան այգեստանին, զի զայգին իմ ոչ պահեցի "։ Ընդ եԹէ բանքն յիրեարս ոչ յարին դրոց մարգարէականաց, դու մի աւելնալին զհաւաստին պահանջեր։ Օ ի ասէ երանելի վարդապետն տիեզերաց Յոհան, ԹԷ [1] Յերբայեցւոց լեզուէ ՚ի հելլենացի Թարգմանեալ, և ՚ի հելլենացւոյն չկարէ զբանն բովանդակ բերել. մանաւանդ որ առ մեզս՝ որ ՚ի յոյն լեզուէն, կամ յասորւոյն Թարգմանեալ՝ մեայլ առեալ է ՚ի հայ լեզու [2]։ Օ նոյն և նիւսացին Գրիգոր ասէ ՚ի սոյն մեկնուԹԵ [3]։ Այլ միտք բանիս այս է. յասել օրիորդացն ցհարսն, այսինքն է ցհեԹանոսաց հաւատացեալս, Թէ ուղղուԹի սիրեաց զքեզ զայնպիսի մեծ սէր. արդ մի այլ Թիւրիր և հեռացնար յուղղուԹենէն։

Պառնայ հարսն զոհանալով զփեսայէն Քէ, պատմէ զիւր առաջին յանցանսն և զպատիժն՝ զոր կրեաց։ " Սեաւ եմ ես, որ գեղեցկացայ այժմ նորա ողորմելոյն, Պատերք Երուսաղէմի "։ Պատերք Երուսաղէմի՝ արդարոցն ասէ, նա և հրեշտակացն ևս զստերս սովոր է կոչել. որ բաղում անգամ կայ ՚ի

1 Մեկն. ծննդոց։
2 Աւրէն. այլայլէ ՚ի հայ լեզու։
3 Մեկն. երգ. ճառ. ը։

դիրս մարգարէականաց . զի զհամեստութիւն ունկնդրիս ակնարկեայս . վասն զի պատկառելի է կանանց ազգ առաւել քան զարանց : Այլ որ ասէ , թէ " Լերեւ զվրանն Կեդարու ,, Կեդար , խաւար թարգմանի . այսինքն թէ սատանայի վրան եղէ ես , և ոչ ղորմելոյն այ՝ այժմ Յողոմինի խորան յարմարեցայ : Ոմն այս զտաձարէն ասէ՝ խորան Յողովմինի , թէ այժմ լերեւ զխորանն Յողովմինի եղէ տուն այ : Այսու զեկեղեցի հեթանոսաց գուշակէ : Այսպա դարձեալ զառաջին տգեղութիւն յուշ ածեալ՝ ի վերայ բերէ , ասելով :

" Ա՛ի հայիք յիս , զի ես եմ սևացեալ ,, : Ոմն ղօք սևութիւնն ասէ . զի յանցանս ըմբռնելով իմ , խեթիւ հայեցաւ յիս արեգակինն ած : Այսու զդառնութիւնն պատիժն՝ ղոր ած ի վերայ , և զվերժելն յերեսացն այ և ի դրախտէն ասէ : Այս վասն ոչ յանցանէն այս եղև :

Այսէ հարսն . " Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս ,, : Իմոյ մօրն որդի՝ զսատանայ կոչէ . զի ի միոյ արարչէ ստեղծեալ են :

" Այս եդեալ զիս պահապան այգեստանին , զի զայգին իմ ոչ պահեցի ,, : Այս այն է , որ ասէ , թէ " Այդ զնա ած ի դրախտին փափկութեան , գործել զնա և պահել ,, : Ա՛յ եթէ գործոյ ինչ , կամ պահպանութիւն պէտս ունէր դրախտն , ուր ամենայն վայելչութիւն և ածային պահպանութիւնն էր . այլ գործել զարդարութիւն , և պահել զպատուիրանն յառաջագոյն վարդապետեաց :

" Յփեսայն ասէ հարսն . Պատմեա ինձ զոր սիրեաց անձն իմ . ուր հովուես , ուր հանգուցանես ի միջօրէի . գուցէ լինիցիմ երբեւ զընկերեալն յերամակս ընկերաց քոց ,, : Այդ պատմեալ հարսինն , թէ յոր տգեղութէ և ի սևութէ յորքան գեղեցկութիւն փոխեցաւ , անյիշաչար եղեալ փեսային՝ հարսինն անօրէնութիւնս , վասն անչափ սիրոյն իւրոյ , նոյնգունակ բորբոքեալ և սա ի սէր նորա , և աղաչէ զփեսայն պատմել , թէ ո՞ր է Ճանապարհն որ հովուեսցի ընդ ձեռամբ հովուին՝ յանստուեր լոյսն գնացեալ , որ ի թշնամեցն որոյ անպարտելի մնալ մարթասցէ :

Օ ի մէջօրէն՝ լոյս և արև անստուեր է. վասն այնո-
ր իսկ ասէ ի մէջօրէի. Կուցէ լինիցիմ սատանայական
վարուք սևացեալ ընդ յառաջագոյն ընկերացեալսն
մեղօք, և օտարացեալ ի բարի տեղւոյ Ձարակացն։
Որպէս ասէ իսկ ինքն Տէրն ի սրբուհւոյ աւետարանին.
« Լոս եմ քաջ հովիւն. ընդ իս եթէ ոք մտցէ, կեց-
ցէ », և որ զկնի գայ։

« Փեսայն ցՀարսն ասէ. եթէ ոչ ծանիցես զանձն
քո, գեղեցիկդ ի կանայս. ել դու զհետ դարձ-
պարացն հօտից և արածեա զուլս քո ի վրանս
հովուաց[1] », ։ Ըստ հարցման հարսինն պատասխանի
առնէ փեսայն, յիշեցուցանելով զգեղեցկութիւնն
զոր ետ նմա, և զդուշացուցանելով Ճանաչել զանձն,
ըստ մարգարէին ասելոյ, թէ « Նայեաց յանձն քո »։
Ընդ զայն ասէ, թէ յիշեա զառաջինն պարգևան,
այսինքն զդրախտն, և զփառսն՝ զոր առեալ ապա-
կանեցեր մեղօք, և դարձեալ ողորմութիւն գտեր. ոչ
ի բարի գործոցն՝ զոր արարեր դու, այլ ի ձեռն
իմ, որ հատուցանող եղէ ընդ քեզ՝ քո մեղացն.
որպէս ասէ մարգարէն, թէ « Ցկեր հատուցանող ընդ
իմ »։ Ընդ այլ եթէ զայս ամենայն զմտաւ ոչ ածես,
ոչ հայիս ի քեզ և ոչ խոնարհեցուցանես զքեզ
յամբարտաւանութեդ քոց, և կամ ի ձեռն ուղիղ
վարուց քոց և կամ այլ բարի գործոց քոց, զոր ի
դառնալդ քո ի չարէն, հպարտանաս որպէս նախա-
հայրն քո, և յայսմ հետէ ոչ գնաս բարիոք, յա-
ղագս այնորիկ ելանես ի հօտէս իմմէ, որք ասրով
և կաթամբ պտղաբերին, և փոխանակ արօտի իմոյ՝
խառնիս յուլոցն ջրիս. որ ամենևին անպտուղ են.
զի ոչ ասր, և ոչ կիթ ունին. որք օտարացեալ են ի
բարւոք հովուի վրանէս, ելեալ ընդ այլ գարշապարս
օտար հօտից, որ կարծին հօտ գոլ՝ և ոչ են հօտ. և
ապա այլ ոչ ևս գտանես զբարի հովիւն։ Ընդ զգու-
շացիր զփրկութենին՝ զոր արարի քեզ, ընդ կառայն
և ընդ երիվարացն աներևոյթ վարաւորիւնն պատե-
րազմելով իմով անարգել զօրութեամբս. այս է որ
ասէ։

1 Օրինակք. հովուաց։

« Զիոյն իմոյ ՚ի կառան փարաւոնի նմանեցուցից զքեզ մերձաւոր իմ »։ Ոչ ընկղմեալ զկառս նորա, մերձաւոր իմ արարի, անցուցեալ ընդ ծով մեղաց։ Ա՛րդ ես ՚ի համառօտն եմ ՚ի փուքթալ. և թէ երկայն կամիս լսել զբանս, երթ առ նիւսացին Վրիգոր[1]։

« Որիորդքն ցհարսնն ասեն »։ Ա՛յսինքն բարեկամք փեսային, որ են առաքեալք և մարգարէք, և վարդապետք, որ հանապազ խրատեն զմեզ զմտաւ ածել զվերստին ստեղծուածն մեր, թէ քանի՞ քան զառաջինն առաւելագոյն ունի. առակելով՚ի տատրակ, ՚ի մանեակ, յոսկի և յարծաթ և ՚ի ձիս։

« Վանդի գեղեցկացան ծնօտք քո իբրև զտատրակի »։ Ո՞ւ սրբասէր է հաւն այն. և եթէ դէպ լինի վարուժանին իւր մեռանել, ո՛չ երբէք միաւորի ընդ այլ ումեք ՚ի չիւրոյն մինչև ՚ի վախճան իւր։ Ա՛րդ զծնօտն գովելով ձևով տատրակին՝ զայս ցուցանէ, թէ երես և պատկեր ՚այ ես. և սրբուհի՛ ես զարդարեալ որպէս զտատրակ. և ահ պատուիրանացն նորա զարդարեալ է զքեզ իբրև զմանեակ ՚ի պարանոյդ, սուրբ և մաքուր ՚ի մեղաց որպէս զոսկի և զարծաթ։ Ա՛յնու նմանեալ, և ո՛չ ձշմարիտ արծաթ և ոսկի։ Ո՞ւ արտաքոյ է մտաց մարդոյ այն գեղեցկութի՛ն հոգևոր, որով զարդարեալ է մարդն. և հանգստարան ՚այ իբրև զձի. որ և միայն Պաւղոսի նմանի, և նորայոյն ոգւով, որ զբանս անձառ լուաւ։ Ա՛րդ զայս ասացին օրիորդքն, վկայելով փեսային բանից, որ ձիոյն իւրոյ որ ընդ փարաւոնի մարտեաւ, նմանեցոյց զառաքինութի՛ն հարսին։ Այդպա առաւել և ցուցին պարգևաց հասանել, թէ ո՛չ միայն ՚ի քեզ հանգչի որպէս ՚ի ձին, և եթէ բարի գործովք զարդարիս, այլ և ՚ի գիրկս իւր ընդունի զքեզ. վասն այնր ասէ։

« Մինչև արքայ ՚ի գիրկս իւր ընկալցի զքեզ »։ Ա՛յլ ինձ այսպէս թուի, թէ կատարեալ մեհնութի՛ն բանիցս հասու ո՛չ եղեր, վասն որոյ հարկիմ դարձեալ համառօտել։

[1] Մեկն. երգ. ճառ. ֆ։

« Զիոյն իմոյ ՚ի կառն փարաւոնի նմանեցուցից զքեզ մերձաւոր իմ »։ Արդ հարցանելի է վասն Զիոյն. եթէ քո իցէ, զիա՞րդ իցէ ՚ի կառն փարաւոնի. և կամ ո՞վ իցէ փարաւոն։ Այս, և մեկնեցից։ Զի այ է մարդկային բնութիւն. վասն զի հանգստարան և բնակարան էր ածութեն, որ պարծէր խրոխտացեալ իբրև զձի խստերախ, և դարձեալ ՚ի ձեռն մեղացն եղև կառավար սատանայի, որ առակի ՚ի փարաւոն. ընդ որում փրկիչն ՅՍ մարտեաւ խաչիւն. որ օրինակ էր խաչին՝ գաւազանն Մովսէսի, որ եհերձ զծովն և ընկղմեաց զփարաւոն՝ այսինքն զսատանայ և զիւր պատկերն, որ իբրև զձի կապեալ էր ՚ի կառս նորա, դարձեալ յինքն ամիոփեաց։ Այս է, որ ասէ, « Զիոյն իմոյ ՚ի կառն փարաւոնի։ » Ասն զի կարող զօրութեամբ ածութեն կործանեաց զփարաւոնի կառն։ Այլ դարձեալ. երևոյթ ձին, որ իբրև զթագաւորական իսկ զարդարեալ էր, և ՚ի կառն փարաւոնի լծեալ էր, իմ էր և այն. զի իմ է ամենայն ստեղծուած։ Արդ այն զարդարեալ ձիոյն իմոյ նմանեցուցի զքեզ, զոր վարեցի բանութեամբ. որք ասէինն, փախիցուք յերեսաց Իսրայելի։ Այնպէս և զարդարեալ մանեկաւ, և որով համարեաց ՚ի կարգի, արար իւր երիվար, ընկղմեալ զաներևոյթ փարաւոնն ՚ի ծովն հրեղէն, և զքեզ այնչափ պերճացոյց առաքինութեամբ առեալ յինքն, որ նորա երիվար էիր, որ փոխանակ նստելոյն ՚ի վերայ քո ՚ի գիրկս իւր ընկալաւ զքեզ. մանաւանդ թէ ՚ի վերայ ուսոց իսկ եբարձ՝ որպէս ասէ տէրն յաւետարանին։

« Հարսնն ցիւր անձն, և ցիեսայն ասէ. Կարդոս իմ բուրեաց զհոտ։ Ընդարս տաչխի եղբօրորդին իմ ՚ի մէջ ստեանց իմոց հանգիցէ։ Ողկոյզ ծաղկեալ եղբօրորդին իմ ինձ ՚ի մէջ այգեստանեաց Ենգադայ »։ Պարարտ է այն ՚ի բերս այգեաց։ Կախ առաջին զայս իմա, թէ որ փեսային կոչի, նոյն և եղբօրորդի կոչի. զի բանն ած ՚ի հրեից մարմնացաւ. և հրեայք և հեթանոսք եղբարք են, վասն զի Աստուածայ են երկոքինն։

« Ընդարս տաչխս եղբօրորդին իմ ՚ի մէջ ստեանց

իմոց հանգիցէ»։ Այս այն է, որ ասէ յաւետարանին, թէ «որ հաւատայ ինքեաց, թէ ՚ած ձեմարիտ է»։ Արդ որ ՚ի նմին հաւատայ, և զնորայն պատուիրանն և զերկեւղն ՚ի սիրտս իւր ծրարեալ ժողովէ, իբրև զպատուական եւզ և զանուշահոտ խունկ է. մանաւանդ որ այլոց ևս տարածանէ զհոտն, որպէս առաքեալ ասէ, թէ «Հոտ անուշ եմք ՚Քստի առ ՚ած ՚ի մէջ փրկելոցն և ՚ի մէջ կորուսելոցն»։ Այլ և կայ կենդանի՝ որ յանուշահոտոյն մեռանի. որպէս և մեղաւորք՝ որ ոչ ընդունին զվարդապետութեի անուշահոտ գրոց, որ ՚ի մէջ ստեանցն հանգուցեալ է, այսինքն ՚ի սիրտս սրբոց։ Այս որք ընդունին, կենայց ՚ի կեանս լինի վերափոխումն, և որք ոչն ընդունին, ՚ի մահուանէ ՚ի մահ։ Որպէս ասէր մեծ նահատակն Ա՚ստի Ագնատիոս, թէ՝ Ո՞ք ինձ կրեմ։ Ո՞ր լուեալ Տրայիանոսի, ասաց, թէ զԱգնատիոս որ ասաց զնաչեաւն յինքն ունել, այրել հրամայեմ, որ խաչեաւն ևս զկնի դորա այրեսցի։

«Փեսայն ցհարսն ասէ։ Ա՚հաւադիկ ես մերձաւոր իմ, ահաւադիկ ես գեղեցիկ իմ, աչք քո աղաւնիք»։ Ով որովհետև մերձեցար ինձ, և օտարացար ՚ի մեղաց, զառաջինն գեղեցկութենէն՝ որ ՚ի դրախտին ունեիր, ստացար. և ոչ միայն այսմ պարգևի հասեր, այլ և աղաւնոյ աչս ստացար ինձ նայելովդ, այսինքն զՀոգւոյն սրբոյ։ Ո՞վ ի զոր ինչ հայի ոք, ՚ի նոյն փոխի մտօք։ Ա՚րդ եթէ ոչ յերկարանամ ՚ի բանս մեկնութեէ, գիտեա եթէ զհամառօտն եմ յախորժել։

«Հարսն ցփեսայն ասէ։ Ա՚հաւադիկ եղբօրորդին իմ, այլ և գեղեցիկ. առ գահոյս մեր հովանաւորք։ Վերանք տանց մերոց մայրք, դարաւանդք մեր նոճք»։ Յուցեալ փեսային զոգւոյն աչսն մաքուր որպէս զաղաւնի, վկայէ հարսն, թէ զոր ոչ կարէի յայնժամ տեսանել՝ մինչ ոչն էի յաղաւնոյ քնութէն փոխեալ, արդ աղաւնի լեալ՝ տեսանեմ զեղբօրորդի իմ։ Ո՞վ թէպէտ և եղբօրորդի իմ եղեր մարմին առեալ զիմ տգեղութէն, այլ և գեղեցիկ իմ

1 ՚Ի վայս նորա։

ես վասն խառնելոյ ՚ձեռնեդ ընդ իմն. որպէս և ասէ մարգարէն " Կեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան ,, : " Ո՛ւ գահոյս մեր հովանաւորք ,, : Այսինքն , հովանի մեզ և տուն՝ զՔ՚ն անուանակ տնօրինուքեն : " Կերանք տանց մերոց մայրք ,, : Ընփոփ և անուշահոտ են փայտքն այն , և պատշաճ առ ի շինուած . որպէս և մարմին ՚ն մերոյ պատշաճի շինել զտունս զայս , և կամ՝ զմեզ ինքեանս մաքրել ի բնակել . որոյ տունն մեք իսկ եմք ըստ Պաւղոսի :

Բ . ,, Փեսայն ցիւր անձն և ցհարսն ասէ " : Այս յայտնաբանէ փեսայն զիւր գեղեցկութիւն , զոր հարսինն հոգւոյ ակամբ ընդ աղօտ տեսեալ , պատմեաց զանտեսանելին և զանպատմելին :

,, Այս ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց " : Ո՛ զարմանալի իրս . որպէս մարմինն տնօրինեալ ՚ն , այնու զանտեսանելին մեզ ի տեսութիւն էած , նոյնպէս ջանայ ցուցանել զբարեզարդութիւնն՝ զոր զգեցաւ երկիր՝ զՔ՚ն ընդունելով . թէ որպէս երկրի տեսութիւն ծաղկովք պսակեալ՝ զուարճացուցանէ զաչն տեսողաց , և շուշան՝ որ ի հովիտս , այնպէս որք որպէս զդաշտս տարածանեն զոգիս իւրեանց ինձ ի բնակուն , և իբրև զհովիտս հորդին լինել , փթթին զինեւ առ ի ցնծութիւն անձառելի տեսողաց . և ոչ միայն այս , այլ

,, Որպէս շուշան ի մէջ փշոց , այնպէս մերձաւորն իմ ի մէջ դստերաց " : Այթէ ոչ ես միայն փեսայս գեղեցիկ այսմ ծաղկաց օրինակաւ , այլ և որ յիս մերձ է հարսնն , ի մէջ դստերաց այնպէս վայելչանայ՝ որպէս շուշան ի մէջ փշոց : Դստերս , զհարսնասցեալն սատանայի ասէ. այս ինքն զմեղաւորս : Փշոցս՝ մեկնուն չեն պէտք , յիշելով զառակս փշոցն և զորոմանն յաւետարանին , զոր տէրն ոչ հրամայեաց հանել ի միջոյ ցորենոյն մինչև ի ժամանակին հնձոց , որ է կատարած աշխարհիս : Այլ երգ երգոցս կաթուած և վայելուչ ևս համարեցաւ զլինելն արդարոց ի մէջ մեղաւորաց : Այի՝ զի առաւել ևս պայծառ երևեսցին վարք արդարոցն, որ ընտրի պատուականն ի մէջ անարդաց : Այս երկրորդ , զի թերևս դարձցին փուշքն ի շուշան , տեսանելով զնոցայն սիրատուին :

« Հարսն ցփեսայն ասէ ։ Երբև խնծոր ի փայտս անտառի , այնպէս եղբօրորդին իմ ի մէջ դատե- րաց ,, ։ Ցես զայն , զի աշուիձան աշուիձան յաւելու ի գովուլթի փեսային ։ Օ՜ր յառաջն շուշան և ծա- ղիկ անուանեաց , այժմ խնծոր ։ Օ՜ի ծաղիկն զաչըն միայն զուարձացուցանէ , բայց խնծորն՝ տեսակաւ զաչըն , հոտով զքիմն , և ապա ի զօրուլթի կերակ- րոյ գայ ։ Նա զոր անդ փուշ ասաց , աստ՝ անտառ . որ անտառացեալ են մեղօք մարդիկ . որպէս ասէ , թէ " Ոչ պականեաց զնա խոզ անտառի ,, ։ Նա դատերս՝ զանօրէն հարց որդիան ասէ ։

« Ընդ հովանեաւ նորա փափագեցի նստել և նստայ . և պտուղ նորա քաղցրացաւ ի կոկորդ իմ ,, ։ Ոունի այս շատ պէտս մեկնուլթե . որք յանտառս և ի ծառս վարսաւորս ձօնէին . արդ զխնծորն ծանու- ցեալ՝ որ ի կենաց փայտին մեզ տուաւ , փափագ- մամբ ի հովանի նորա ապաւինիմք , և անշարժ հա- ւատով զնովաւ նստիմք ։ Նստելն՝ զսկսանելն ի Թիւր վարդապետուլթինն ասէ ։ " Նա պտուղ նորա քաղցրացաւ ի կոկորդի իմում ,, ։ Ոչնաւ՝ թէ զխոր- հուրդն կենարար , և զպտուղն որ ի փայտին կենաց իմանաս , և թէ զբանս որ յաճայինն բերանոյն մեզ տուաւ , երկոքին լսին , ըստ մարդաբնին , թէ " Ոաղցր են ի քիմս իմ բանք քո քան զմեղր բերանոյ իմոյ ,, ։

« Յօրիորդն հարսն ասէ ։ Տարայք զիս ի տուն գինւոյ ,, ։ Ոյսէ , թէ ուչ յագիմ բացուստ ի բաց բերմամբ ի բաժակէն , կամ ի բանիցն ճաճայնոց . զի անյագ ցանկուլթիւն ունիմ , և անաչխատելի ըն- թացս . արդ տարէք զիս ի տունն իսկ այսմ բարու- լթեանց . զի չունիմ այնպիսի փափագումն առ փե- սայն և առ պատուիրանս նորա՝ եթէ ձեւք տեսից և լուայց , և այնու յագեցայց ։ Գինի՝ զուարճու- լթեան առլիճ է . և յայս կեանս մնռացումն սիրեն առնել արտմուլթե . վասն այնորիկ գինի կոչէ զպար- գևացն Ոյ ձիր ։

,, Կարգեցէք ի վերայ իմ սէր " ։ Ոչ յարմար- մանն բանից ի խնդիր լինիր . զպատճառաւն միայն հաւանեաւ , զոր յառաջ ասացի ։ Կարգեցէքն այս- պէս լսի , որպէս յայլում տեղւոջ ասէ . Օ՜արթուս-

ջիք զսէրն։ Այէր՝ ահ է. վասն զի անուանն այ սէր Ճանաչի, որպէս առաքեալ ասէ, Թէ "ահ սէր է. և որ կայ ՚ի սէրն, բնակեալ է յահ, և ահ ՚ի նմա"։ Երդ աղաչէ Հարսնն զբարեկամս փեսային՝ ջեռեալ սիրով փեսային՝ մի հեռասրտութիւք պատգամաւորիլ, որպէս յառաջ մարգարէքն, այլ առաքելաբար մեծանալ ՚ի տունն Քրիստի, զոր գինի կոչեաց. զի տեսութիւք երեսաց առաւել բորբոքի սէր սիրեցելոյն յերկոցունց։ "Այս է կարգեցեալք ՚ի վերայ իմ սէր"։ "Ա՛ւ հաստատեցէք զիս իւղովք"։ Այսպէս՝ ողորմութիւն կոչի. արդ զայս ասէ, Թէ ՚ի տեսանելն զփեսայն՝ առաւել ծանեայց ոգւոյն ական բացմամբ զանչափ ողորմութիւնն՝ զոր մեզ արար, և ևս հաստատեցայց, և ողորմութիւք ողորմութիւն գտայց. որպէս ասէ ահաբան[1]։ "Կուտեցէք յիս խնծոր"։ Խնծոր՝ զբարի գործոց գեղեցկութիւն ասէ։ Օ՛ի որպէս խնծոր տեսութիւն և հոտոյիւ յառաջ ևս քան զձաշակելն ախորժելի է, նոյնպէս զանազան առաքինութիւք տեսակս զուարթացուցանէ զտեսողս։ "Վա՛ն զի խանդակաւթ եմ սիրով"։ Ո՛չ զանչափ հանդիսիւ սէրն, որ առ սբեան քնակեաց ՚ի ձեռն Քրիստի գալստեանն, որ անյագ եղեն, որ զայն համ սիրոյն ճաշակեցին. զի ո՛չ բաւականացան պէսպէս նեղութիւքն զոր կրեցին՝ կամ ՚ի սատանայէ, կամ ՚ի մարդկանէ, այլ և յանձանց ևս անքաւ յաւելին նեղութիւնս, մարգարէին Պաւղոսի նմանեալ, որ ՚ի յայլոց նեղութեց վերայ, զոր ասաց, Թէ "Շ ըջեցան զինեւ երկունք մահու, և վիշտք դժոխոց գտին զիս"։ յաւել ևս զնեղութիւն անձին իւրոյ. որպէս ասէ, Թէ "Օ՛նեղութիւն և զանձկութիւ գտի"։ Որպէս նբ Ա՛ստուածաբանն և մեծն Պաւղոս, և այլ սբք նոցին նմանք,[2] պարգեւս զնեղութիւնն՝ որ վասն Քրիստի, համարեին. զոր օրինակ խնծորս, զոր և ասէր ցսբն Գրիգոր՝ Տրդատ, Թէ[3] Ա՛յդ է ուրախութիւն։ Այս նա ասէ, այո այս է ուրախութիւնն։

1 Յաղագս հարուածոյ կարկտին։
2 Ագաթ։
3 Ագաթ։

„Ահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ, և աչք նորա պատիեղ լինէա“։ Ոչ սոյն զայս յայլումն տեղի ինքն երկրորդէ, „Երկայնուն կենաց յաջմէ. և յահեկէ իւրմէ փառք և մեծութիւն“։ Եւ զայս ասէ, թէ չէ իմ սիրոյս և հանդիսի սրտիս այլ լցուիս, բայց միայն ի նա յարիլ, և զնա տեսանել. թէ և պէսպէս փորձութիւնք նեղուիցեմ ի վերայ եկեսցեն, միայն զաչքն և զահեակն լնձ հովանի և պահապան կալցի։

„Հարսն ցօրիորդսն ասէ“։ Օրիորդք՝ հրեշտակք կոչին, և մարդիկ՝ որք հրեշտակացան։ „Երդմնեցուցից զձեզ դստերք Երուսաղէմի՝ ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի, եթէ յառնիցէք, զարթուսջիք զսէրն՝ մինչև կամեսցի“։ Անդաստան՝ աշխարհս կոչի, նա և երկինք. և զօրութիւն և ուժգնութիւն անդաստանի՝ ասէ, որով հաստատեցաւ աշխարհ և երկինք. և կայ սեղմեալ և աղխեալ անշարժ զօրութիւն և ուժգնութիւն անդաստանի, այսինքն ասէ։ Այս և հրեշտակք և մարդիկք որ յանդաստանին են բնակեալ, երդմամբն յիշին։ Եւ զայն զօրութիւն երդմնեցուցանեմ յառնել և աղօթել և զարթուցանել զնոյն ինքն զբաւանդակ սէրն ըստ. զի զկամս իւր լցուսցէ ի մեզ։ Այս է զոր ինքն տէրն աղօթել հրամայեաց. „Եղիցին, ասէ, կամք քո որպէս յերկինս և յերկրի“։ Եւ զոր որք երդմնեցուցանէինն դստերք վերինն Երուսաղէմի՝ են հրեշտակք և սուրբք որ յերկրէս։

„Լուեալ զձայն փեսային՝ հարսն, ասէ“. Զայն եղբօրորդւոյն իմոյ“։ Տես աւանիկ, որ յառաջ քան զխոստովանելն բերանով զծածուկսն Աստուածէ, սակայն մնայ պաղատանաց, զի և այլք ծանիցեն զարդարութիւն նորա։ Ոչ թէ և ողորմած է, այլ և արդարադատ։ Ոչ ձայնելն առ նա և զփափագանօք պաղատելն՝ պարտուցն մեր վճարումն համարի։ Եւ յաղաչել հարսինն, այսինքն եկեղեցի որ ի հեթանոսաց զօրիորդսն, տանել ի տուն դինւոյ, և մի որպէս յանցաւորաց պատգամաւ արտաքոյ փեսային երեսաց. և յերդմնեցուցանելն զդստերս Երուսաղէմի՝ զարթուցանել զսէրն, մինչև կատարեսցին կամք նորա բարիք ի մարդիկ, ոչ մնաց բա-

բեխօսացն աղաչանաց փեսային, այլ լուեալ զաղաչ-
ղին մաղթանս՝ ձայնեաց նա զհաշտութիւն, և ընթա-
ցաւ ընդ առաջ, որպէս և յաւետարանին ասէ իսկ
առաքեալ անառակ որդւոյն։ Ո՛վ ինքն շրջի խնդրել
զարժանաւորսն, և որք սիրենն և խնդրեն զկամս նո-
ցա ծանուցեալ յառաջատեսութեանն։ Ասացն աս-
է։ "Զայն եղբօրորդւոյն իմոյ, ահաւասիկ եկն սա
վազելով՝ ի վերայ լերանց, խայտալով՝ ի վերայ
բլրոց"։ Զայն ասէ, որ՝ ի մարգարէիցն առ մեզ
լուր։ Որպէս լուաք, սոյնպէս և տեսաք, այսինքն
զբանն ՅԾ, որ "բազում մասամբք և բազում օրի-
նակօք խօսեցաւ ընդ հարսն մեր մարգարէիւք, ՚ի
վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդ-
ւովն"։ Այս է որ ասէ. "Ահա սա եկն վազելով՝ ի
վերայ լերանց, խայտալով՝ ի վերայ բլրոց"։ Լե-
րինք և բլուրք՝ բռնութիւնք սատանայի կոչին, զոր
առ ոսն կոխեաց գալստեամբն Իւրով, ըստ ասելոյ
մարգարէին, թէ "Լերինք և բլուրք խռովեցան,
սասանեցան, և դողուշին կալաւ զնոսա"։ Ահա և ըզ-
նոյն իշխանութիւն՝ առաքելոցն ետ տէրն՝ ի վերայ
լերանց, ոչ միայն խայտալ՝ ի վերայ լեռնացեալ մե-
ղացն, այլ և՝ ի ծուռ առաքելոյ։

"Ելմանն է եղբօրորդին իմ այծեմանն կամ որթու
եղանց՝ ի վերայ լերանց Ռեթելայ"։ Ասն տեսո-
ղքեն նմանեցուցանէ զեղբօրորդին այծեմանն, թէ-
պէտ և չէ կարի պատշաճ. զի նա յառաջ քան
զսահեղծանելն Աս տեսանէ զինչ առ մարգուսին, ըստ
ասելոյն, թէ "Մինչև ստեղծեալ էր զերեզ յորո-
վայնի գիտեմ զքեզ"։ Այլ սակայն զի յանասունս
քան զայծեամին չէք տեսանօղ, վասն այնորիկ Ելի
տեսանողութեն օրինակէ զնա։ Այս զի եղն՝ օձի սա-
տակիչ է, որպէս և տէրն՝ աներևոյթ օձին։ "Ի վե-
րայ լերանց Ռեթելայ"։ Ըստ երբայեցւոց լեզուին
Ռեթել երկինք կոչի, որ և՝ հանէ զփրկեալսն յօձէն։
"Հարսն նշան տայ զփեսային՝ օրիորդացն. ահա-
ւասիկ՝ սա եկաց զինի որմոյն մերոյ"։ Որմ՝ զմար-
միննն ասէ, որ՝ ի կուսէն։ "Յառեալ ընդ պատու-
հանն, զմարգարէսն. հայեցեալ ընդ վանդակա-
պատն՝ զօրէնսն"։ Այսինքն թէ յառաջ նորօք

զլոյս ածուԹենն ՚ի մեզ նշուլեաց, ապա եկաւորուԹենն մարմնով ՚ի կուսէն։

«Պատասխանի ետ եղբօրորդին իմ լինձ, և ասէ, արի եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ»։ Այս կոչն է, որ Քրիստոս եղև որ ասացն։ «Լինկայք առ իս ամենայն աշխատեալք», և որ զկնի։ Եւ գեղեցիկ, վասն աւազանին լուացմանն ասէ. աղաւնի, վասն հոգւոյն զգեցմանն. մերձաւոր իմ, վասն զի մարմնակից Քրիստոսի եղաք։

«Վասն զի ահաւասիկ ձմեռն էանց»։ Ձմեռն՝ զկռապաշտուԹենն ասէ, որ տարածեալ էր ՚ի վերայ երկրի։ Էանց և այսինքն գալստեամբ եղբօրորդւոյն, որ Ն Քրիստոս։ Այնպէս, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան, զնաթէուԹի սատանայի նշանակէ, որ իբրև զջաղի կերպարանի՝ և կորստեան անձրև է, որպէս առ Ջրհեղեղսն, յորմէ հալածական գնացին գևքն. այս է՝ գնացեալ մեկնեցան։

«Ծաղիկք երևեցան յերկրի մերում, ժամանակ յատեալ եհաս»։ Այսու զգեղեցկուՀի գարնանն նըշանակէ, որ Քրիստոս եղև ՚ի ձմերայնոյն հալածմանն. և ծաղիկ, զարդարոց բազմուԹենն առաքինուԹեաց և ածպաշտուԹենն ծաղկոցովք կոչէ։ «Ժամանակ յատելոյ եհաս», կտրել և յօտել զպէղծս ՚ի սրբոց։ «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում»։ Որպէս հաւք ՚ի ժամ գարնայնոյն արօրանան և տաբածանին ընդ երկիր, նոյնպէս և ՚ի գալ Հոգւոյն գարնայնոյս ցնծան սիքն. մանաւանդ առաքեալք և մարգարէք և վարդապետք և որ նոցա քարոզուԹեաբ հրեշտակային և Հոգևոր երգովք օրհնեն զաած ՚ի գիշերի և ՚ի տուընջեան։ Այս է «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում»։

«Ելիք ծաղկեցին, ետուն զհոտ իւրեանց։ Այգի՝ զհաւատացեալս անուանեաց, որք ծաղկեցան այլ և այլ և պէսպէս գունովք և պտղովք և հոտովք, ոմն մարտիրոսուԹեաբ, ոմն զանազան առաքինուԹեաբ, ոմն բարեգործուԹեաբ։ «Արի եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ։ Ընդ որում զառաջին բանս կրկնեաց հաստատելով զիւր կոչումն, Թէ ոչ ՚ի ձեռն պատուհանին և վան-

դակապատին, այսինքն մարգարէիւք կամ օրինօք, այլ իմով իսկ կոչմամբս արի եկ։ Այս կրկնելով ըզբանան եցոյց թէ արքայուն Ճանապարհն զկայ չառնու որչափ՝ի մարմնի է, ըստ ասելոյն ՚ն «Ոչն արիք զնաւացուք աստի»,, և ՚ն ճաճաբանի մեկնելոյն [1]։

«Այս ևկ աղաւնի իմ ընդ հովանեաւ վիմիդ մերձ՚ի պատուար պարսպիդ»։ Ցՙես, թէպէտ և աղաւնի եղև, այլ հանապազ պահանջէ յաւելուլ ևս՚ի մաքրութիւն, և չհամարել զինքն՚ի կատարեալ մաքրութիւն։ «Այս որ համարիցի կալ, զգոյշ կայցէ, գուցէ անկանիցի»։ «Ընդ հովանեաւ վիմիդ»։ Ալ էմ, զՙինչ կոչէ, զի առաքեալ ասէ, թէ «Ալ էին եր ինքն Քրիստոս»։ Այս պարիսպ, զպատուիրանն ասէ. որպէս կայ՚ի գիրս։ Ընդ հրամայէ այսուհետև աւետարանաւն վարել և նոցա քարոզութիւն և ոչ օրինօքն։ Որում վկայէ առաքեալ, թէ «Յափանեալ էք՚ի Քրիստոս, որ օրինօքն արդարանայք»։ Այս «մերձ՚ի պատուար պարսպիդ»։ Ամէն և զաւետարանականսն պահելովն չես հեռի յօրինացն, վասն զի լրումն օրինացն Քրիստոս է, ասէ, առաքեալ։ Այս ինքն տէրն ասէ, թէ «՚ի ընուլ եկի զօրէնս»· այսու ցուցանէ թէ թերի էին օրէնքն։ Ընդ զբովանդակ լցեալն կատարելով քո, մերձիս՚ի պարիսպն, այսինքն յօրէնսն։ «Ցոյց ինձ զդէմս քո, և լսելի արա ինձ զբարբառ քո. վասն զի ձայն քո քաղցր է և դէմք քո գեղեցիկ»։ Օ այս, երդ երդոց փեսային բանիւ ասէ. և նիւսացին Դրիգոր բաժանէ զայս, և հարսինն բանիւ ասէ [2], որում և մեք հաւանիմք։ Ընդ աղաւնի լեալ հարսինն, և ըզվէմն իմացեալ, որ է Քրիստոս, աղաչէ, ցոյց ինձ զդէմս քո, և մի՚ևս ընդ ևս մարգարէիւք և օրինօք խօսիր. այլ որչափ տեսանելի ես մարմնաւորաց՝ ցոյց ինձ զերևելապէս դէմս քո, զի տեսից և յագեցայց յերևել փառաց քոց. և որչափ տանկին լսելիք մարդկան՝ լսեցո՚ն ինձ զձայն քո. զի ընդ հովանեաւ աւետարանական քարոզութեդ արածեալ, զօտար հովուի զհետ ոչ երթայց. զի թէ ընդ պատուհանսն,

1 Յովագս Աղբատասիրս։
2 Մ՚ենն. երգ. ճառ. Ե։

այսինքն ընդ մարգարէիցն հոյլն՝ այսքան ախոր-
ժելի եր քո ձայնդ , ապա որչափ թէ դիմաց քոց
արժանացայց լսել զիրկութեան իմոյ աւետեաց
լուր :

" Յորիորդան փեսայն ասէ . Կալարուք մեզ ա-
ղուէսս փոքրիկունս զապականիչս այգեաց . զի այգիք
մեր ծաղկեսցին " : Այս ցհրեշտակն ասէ , որ հար-
կաւոր հոգիքն են առաքեալք ի սպասաւորութիւն
մարդկան : Եւ դարձեալ ևս առաւել ցառաքեալսն
ասէ , որ որսորդք եղեն ընդհանուր տիեզերաց :
Զայն զի նոքա նախ զաղուէսն որսային ի կորուստ ,
հալածելով յայգեացն : Զաղուէս , զսատանա կոչէ ,
և այսպիսք զեկեղեցի , որ են հաւատացելոց անձինք ,
զորս առաքեալքն արտաքս կորզեցին ի ժանեաց ա-
ղուէսուն՝ որ հակառակն եր Աստուածութեան . զի և
ի մահուանէ ի կեանս փոխեցին : Որ և ասաց իսկ
տէրն յորժամ դարձան առաքեալքն խնդութիւ , և
ասեն , " Տէր , և դևք հնազանդին մեզ յանուն քո ,
ասէ , ահա ետու ձեզ իշխանութի կոխել զօձս և զկա-
րիճս նա և զամենայն զօրութի թշնամւոյն " : Այլ
որ յայլ ժամու՝ լեառն և վիշապ և իշխան կոչէ զսա-
տանայ , աստ աղուէս և փոքր , յաղագս ահարկու
զօրութեց առաքելոցն զոր ընկալան ի վերայ նոցա՝
ասէ :

" Յարսն ասէ զայս ինչ . Զղբօրորդին իմ ինձ և
ես նմա , որ հովուէն ի մէջ շուշանաց , մինչև տիւն
լուսաւորեսցի , և շարժեսցին ստուերք " : Յարսինն
տեսեալ զինքն յորոյ աղուեսուն աղատեալ , խնդա-
մտութե տայ զինքն երկրագործին , որ զմիջնորմն
ցանկոյն քակեաց : Եւ քանզի ոչ ևս որմով օրինացն
ի միաւորութե փափագելոյն որոշի , ապա ասէ , Թէ
ես եղբօրորդւոյն իմոյ և եղբօրորդին իմ ինձ : Եւ
դարձեալ , Թէ որովհետև Քաշակեցի ի սիրոյ նորա ,
և տեսի զցանկալի դէմն և լուայ զախորժելի ձայնն ,
ես ի նմա , և նա յիս . արդ յայսմ հետէ ոչ կարէ
երկրային ցանկութե կամ կարիք որոշել զիս ի նմա-
նէ : Ընկէս և եղև իսկ և տեսաք զայս ի մարտիրո-
սացն և ի Քրիստոսորայն հանդիսս : Ընկէս առա-
քեալ ասէ , Թէ " Ի մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրի-

նեղութիւն թէ անձկութի՛ թէ հալածանք ,, , և որ ՚ի կարգին է ։

“ Որ հովուէն ՚ի մէջ շուշանաց , մինչև տիւն լու- սաւորեսցի , և շարժեսցին ստուերք ,, ։ Այսինքն թէ ոչ ևս խոտով ձարակեցուցանէ որ է անաստնացեալ մարդոց կերակուր ։ Այսո՛ , զմարմնաւոր վայելուչս ասէ . այլ ոչ այսու , այլ հոգևոր կերակրովք կերա- կրէ , զոր կերան իսկ և զմայլեցան սքանչ ամենայն , և արհամարհեցին զմնոսի ցանկուխս , և մնան յուսով տուընջեանն ծագելոյ , որ է օրն վերջին . և մի՛ յա- ւիտեան շարժեսցին , այսինքն անցանեն , և ասպա յա- գին սքանչ անչափ ծարաւովն որ առ փեսայն Քրիստ ։ “ Պարձեալ , նման է եղբօրորդին իմ այծեման , կամ որթուց եղանց ՚ի վերայ լերանց խնդաբերաց ,, ։ Այս- ինքն թէ տես զամպարշտաց զգործուածս սրահայեաց ակամբգ որ նստիս ՚ի բարձունս , և առ ի՛նն հաւ զօձս և զվիշապս ։ Որպէս և է իսկ բնութի՛ եղանց կոխել զօձս և սպանանել ։

գ . “ Յանկողնի իմում ՚ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ , խնդրեցի զնա և ոչ գտի , կոչեցի զնա , և ոչ ետ ինձ ձայն ,, ։ Այս բանք բաղում բա- նիւ պէտս ունին մեկնութե՛ , և սակաւուք ոչ պար- փակի ։ Այլ սակաւ պատմի . զթանկագոյնն ընդար- ձակ բանից ՚ի նիւսացին Աբրիդոր յուղարկեցից ։ Որք և անց հարսինն գիտութե՛ն ընդ այսքան առակս զոր թուեաց , և եհաս ՚ի կատար գիտութե՛ն Քրիստ , յորում եմքս , ասպա հանդիստ կարծեաց զգիտուն թէ արդ հասեալ եմ , և անհոգացաւ ։ Որպէս մարդ աշխատեալ և յանկողնի հանգեալ . նոյնպէս և սա յուզիւք մեծ դանդուց , այսինքն լուսաւոր մեծ գի- տութե՛ս և Աշմարիտ , յոր հասեալ ցանկութե՛ հանգչի որպէս յանկողնի . և զՊաւղոսի ասելն ոչ յիշեաց , թէ “ փոքր ՚ի շատէ գիտեմք և փոքր ՚ի շատէ մար- գարէանամք , և թէ այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ ,, ։ Քրիստ՝ զայս կենաս կոչէ առ այն կենօքն . և մերին և աղջամղջին , ծածկեալ մարմնովն ոգիք որ- պէս ՚ի տան կամ ՚ի բանտի իսկ , անտես են արտա- քոյ կացելոցն ։ Որ և մարգարէն բանտ և կապանս

ասէ, Թէ "Հատեր զկապանս իմ, և տէր, հան՛ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ,,: Ա՛րդ "յանկողնի իմում՛ ի գիշերի խնդրեցի, զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա, և ոչ գտի. կոչեցի զնա, և ձայն ևս ո՛չ ետ ինձ,,: Ա՛յսինքն Թէ որչափ և խնդրեմ զայ զօրութիւնն կամ գտեսութիւնն փառացն կամ զանուանն մեծութիւնն կամ զպարգևսն որ արդարոցն է պատրաստեալ և որ սոցին նման, օտարացեալ գտանիմ: Այլ զայս հասեալ գիտութիւն որ՛ի մարգարէից և յառաքելոց և՛ի վարդապետաց մեզ ասացաւ հոգւովն սրբով, և՛ի նոյն ինքն՛ի տէրնէն աւետարանեալ, զայս իբրև ոչ գտեալ համարեցաւ կատարեալ գիտութի՛ն որ՛ի հանդերձեալսն գիտունք լինին՝ որ արժանաւորին այնմ, և այնպէս համարին, Թէ չէ՛ իսկ տուեալ ձայն, և ո՛չ խօսեալ առքօք: Օ՛ի ո՛չ կարէ մարմնեղէնն լեզու խօսել զայն կենաց իրս, որպէս ասէ իսկ առաքեալն Պաւղոս, Թէ "Լո՛ւայ զբանս անձառս, զոր ո՛չ է պարտ մարդոյ խօսել,,: Պարտն՝ փոխանակ չկարելոյ է:

"Գարեայ և շրջեցայ ընդ քաղաքս՛ի հրապարակս և՛ի փողոցս, և խնդրեցի զնա և ո՛չ գտի. կոչեցի զնա, և ո՛չ ետ ինձ ձայն,,: Քաղաք և փողոց և հրապարակ՝ զերկինս կոչէ և զհրեշտակս՝ որ՛ի նմա. յորոց ո՛չ կարաց հասու լինել գիտութե՛ն վերին խորհրդոցն՛ի նոցանէ:

"Գտին զիս պահապանքն, որք շրջէին՛ի քաղաքին: Հարցի՝ Թէ զոր սիրեաց անձն իմ, տեսի՞ք,,: Այնուհետև ոչ պատասխանելովն իմացուցին՝ Թէ անհաս են և նոքա գիտութե՛ն: Օ՛ի որչափ՛ի գիտութե՛ն հասանէ մարդ, հիմն լինի առաւել բարձրագոյն գիտութե՛ն:

"Իբրև փոքր ինչ անցի ընդ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ,,: Գանգի է գիտութե՛ն, որ ամենայն ծանօթութե՛ն հասման խափանումն խնդրողացն առ գիւտան լինի. յաղագս այնորիկ ասէ, Թէ "փոքր ինչ յորժամ անցի ընդ նոսա, գտի,,. ապա՛ի հաւատ և՛ի հոգին՝ որ ապաւինեցայ: Գ՛ման է այժմ և բանքն Պաւղոսի, Թէ "Իբրև ոչ ծանեաւ աշխարհ իմաս-

տուԹքն զնձ, հաձեցաւ ՚ձ յիմարուԹք քարոզուԹեանն ապրեցուցանել զՀաւատացեալս»։ Կտեսեալ զփեսայն, ասէ, կալայ զնա և ոչ Թողի զնա՝ մինչև մուծի զնա ՚ի տուն մօր իմոյ և ՚ի սենեակ յղացեղոյն զիս»։ Օ՚Հաւատոյն ըմբռնումն ասէ, որով մուծանիմք ՚ի մայրն, ՚ի տուն և ՚ի սենեակ յղացելոյն զմեզ. որ է դրախտն և երկինք։

«Օ՚օրիորդան երդմնեցուցանէ այս երկրորդ անգամ՝ Հարսին. Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղէմի՝ ՚ի զօրուԹիս և յուժգնուԹիս անդաստանի. ԹէՀ յառնիցէք, զարԹուսջիք զսէրն մինչև կամեսցի»։ Օ՚այս միանգամ մեկնեալ եմ։ Կայց դու աչս զառաւելուԹի սիրոյն Կ՚որ յորս քնակէ, ԹէՀ ոչ՚ափ անյագ առնէ զմարդիկ։ Կ՚ինչափ հասեալ շնորհաց և գիտուԹե, որպէս ԹէՀ չև հասեալ՝ զայն տայ երդումն, յորում անհասուԹեանն էր և տգիտուԹե, զարԹուցանէ զսէրն իբրև ոչ կատարեալ առեալ։

«Փեսայն վասն հարսինն ասէ. Կ՚ո՞վ է սա, որ ելանէ յանապատէ իբրև ստեղն ծխոյ խնկեալ զմուռս և կնդրուկ յամենայն փոշեաց անոյշ իւղոց»։ Կամի ցուցանել փեսայն զգեղեցկուԹե հարսինն, այսինքն զՀաւատացելոց ցՀրեշտակս հարցմամբն, որ օրիորդքն առակին, ԹէՀ սեաւ գիտեմ ես զդա կորուսանելով զիւր կերպարանն ՚ի դրախտին. արդ ուստի՞ է սմա այս կերպարանք և անուշահոտուԹե, զոր յանապատէ առեալ և գայ ՚ի բարձրուԹե երկնից։ Կնապատ՝ զանապատացեալն ՚ի չար գործոց ասէ. որում և ԿաւիԹ ցանկայր Թևօք հոգւոյն Թաչել։ «Կբրև զստեղն ծխոյ խնկեալ», զիւրեաւ պարփակելով զառաքինուԹե և զբարեգործուԹե կոչէ։ «Կբրև ըզխունկս և զմուռս և կնդրուկ յամենայն փոշեաց անուշոյ»։ Օ՚մուռս՝ մեռելուԹե նշանակ. կնդրուկ՝ անուշահոտ վարուց։ Կ՚րդ տես դու, զի մեռուցանել նախ պարտ է զմարմինն մեղաց, և Կ՚ոչ մահակից լինել և անուշահոտ վարուք՝ Կ՚ոչ մաքրուԹէն հաւասարել. և ապա հարսն Կ՚ոչ մարԹի լինել, և վերանալ առ փեսայն Կ՚ս։ «Օրիորդքն ասեն զայս ինչ»։ Կամեցեալ հարսինն առաւել ևս զփեսայն

գեղեցկուհին և գլխակեալսն ծանուցանել, զի եթէ այն Սողոմոն անուանեն. վասն զի Սողոմոն՝ խաղաղութիւն թարգմանի, որ է Քրիստոս, որ եղև խաղաղութիւն մեզ, և զմիջնորմն ցանկոյն քակեաց, և զայծ ընդ մարդկան հաշտեցոյց։

"Ահա գահոյք Սողոմոնի, վաթսուն զօրաւորք շուրջ զնովաւ ի զօրաւորացն Իսրայէլի"։ Երկոտասան ազգս բաժանեցաւ Իսրայէլ, և երկոտասան հինգն վաթսուն է, նա և զգայութիւն ի մարդ, հինգ։ Արդ այսպէս կամի ասել, թէ որպէս յօրէնս երկոտասան ազգն իսրայէլացան, և իւրաքանչիւր հնգեակն զգայութիւքն մաքրեալք հաճոյացան Քրիստոսի. և ըստ երևելեացս ինքն Իսրայէլ Սողոմոնի թագաւորութեան կամարարք և գահոյք. սոյնպէս այժմ այսմ Սողոմոնի ամենայն տիեզերք՝ գահոյք են, ուր հանգչին կամքն Քրիստոսի։ "Օ՜ օրաւորք շուրջ զնովաւ ի զօրաւորացն Իսրայէլի"։ Արդ ի նոր Իսրայէլիս զօրաւորքն են ամենայն սքանչելք հաւատացեալք։

"Ահեղ քան զունին սուր, և ուսեալք զպատերազմ"։ Այս սուր՝ սուսեր հոգւոյն է, որ է բանն Քրիստոսի. որով ուսան պատերազմել ընդ աներևոյթ թշնամոյն։ Արդ իւրաքանչիւր սուսեր յաղթող։ Օ՜ի ոչ է մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, եթէ չայ բաժամ ընդ իւր ունել ոչ մարթի, այլ անդնդելի յաղթողն հաստատեալ է, որով ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս մարտնչին։ "Յարհաւրաց գիշերայնոյ"։ Արդ յայտ է, թէ արհաւիրք գիշերայինն և խաւարայինն՝ որ անկեալն է յերկնից կոչի։

"Պահաւորակ արար իւր արքայ Սողոմոն ի փայտից Լիբանանու։ Օ՜ սիւնս նորա արար արծաթի, և զկոնք նորա ոսկի և զձեղունս նորա ծիրանի. և զմէջ նորա ականակապ տարածեալ, սէր ի դստերաց Երուսաղէմի"։ Ցոյացեալ եմ քաղցր անգամ, թէ Սողոմոն զՔրիստոս նշանակէ. զի ի զաւակէ Դաւթի, և թագաւոր և արդարադատ և խաղաղարար և տաճարաշէն։ Սակայն քանզ որ ի սա, սակաւ, իսկ ի Քրիստոս յոլով. զի արմատ Դաւթի և թագաւոր երկնի և երկրի և արդարադատ առաւել և ողորմած և ամենայն երկրի խաղաղութեան առիթ, քառնալով

զկռապաշտութիւն յաշխարհէ և զխռովութիւն երկնայնոցն ընդ երկրայինս. որով և ընդ ամենայն երկիր տաճար ՚այ՝ ՚ի ձեռն Քրիստի կազմեցաւ, փոխեալ զօրէնսն ՚ի ձմարտութիւնս, թագաւորաւն և տաճարօքն, որ են եկեղեցիք։ «Կահաւորակ արար իւր արքայ Սողոմոն յանփութա փայտից»։ Փայտ Լիբանանու՝ հեթանոսք են։ Այս վկայէ քեզ Պաւիթ, թէ «Անրեսցէ զմայրն Լիբանանու»։ Այս դարձեալ՝ մանրեսցէ որթուն օրինակաւ, զոր Սովսէսն մանրեաց, որ է սատանայ և նորա կամարարքն. և ՚ի կռապաշտութէ առեալ զմեզ արար իւր գահոյս, զի ՚ի նոսա է տէր և ՚ի սքս հանդուցեալ. և Պասայեաւ ասէ, «Այս յո՞ հանդեայց և դադարեցից, եթէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս, և որ դողան ՚ի բանից իմոց»։ Կա և առաքեալ ասէ, թէ «Ոտան մեծի ոչ միայն անօթք ոսկեղինք և արծաթեղինք են, այլ և խեցեղինք և փայտեղինք»։ ՚ի վերայ բերէ «Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայսպիսեացս ասի, եղիցի անօթ պատուական»։ և որ զկնի։ Գոյց, թէ չէ մարդ որպէս զայլ տունկ և զբոյս որ ՚ի սնունդ, այլ ՚ի կամս է լինել. Թէպէտ ոսկի լինի թէպէտ արծաթ թէպէտ խնծոր. Թէպէտ դառնաբեր թէպէտ քաղցրաբեր թէպէտ փշաբեր։ Որպէս և մեր առաքեալն և լուսաւորիչն, յաձախ բանիւ ասէ զայս[1]։ Ընդ ՚ի փայտից Լիբանանու՝ ոմանք ոսկեղինք, ոմանք արծաթեղինք, ոմանք ծիրանի, և լինին փոխելով զբարն ՚ի բարի։ Այլ պատշաճ է զգահաւորակն ՚ի բովանդակն յեկեղեցի առնուլ և որ ՚ի նմա առաքեալք և մարգարէք և վարդապետք և հուսանք և պէսպէս առաքինութիւնք զարդարեալք սքք։ Ով որ և բացայայտէ առաքեալն, թէ «Ով որս եղ ՚ած յեկեղեցւոջ, այս են, նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս»։ և որ զկնի շարէ ընդ իրեարս։ Այս ոչ մի մի համարէ, զի բուն պատուականքն գահաւորակին այս են երեք կարգս, այսինքն եկեղեցւոյ շինուածքն։

«Ասէր ՚ի դստերայ Երուսաղէմի։ Այլք, և հայե-

1 Ագաթ։

ցարմ՛ւք դատերք Երուսաղէմի յարքայ Սողոմոն՝ ի պաշկն, որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր ուրախութեան իւրոյ։ "Ակը՝ ի դատերաց Երուսաղէմի"։ Ուրախակիցս և սիրակիցս և զոհացողակիցս իւր կոչէ զդատերս Երուսաղէմի, զհրեշտակս. և որոյ աղագաւ փոխեցաւ ի բանան անտառացեալն մեղաք, և եղև դահաւորակ Ա՛նի պէսպէս առաքինութիւնք զարդարեալ պսակաւն փչեայ, զոր՝ ի գլուխ իւր եդ արքայ Սողոմոն, այսինքն Ա՛ն և օրհնեաց զերկիր, զանէծսն՝ ի գլուխ իւր բառնալով, որ ասացն, թէ "Փուշ և տատասկ բուսցէ քեզ"։ Այս և՝ ոչ ուսաւորիչն մեկնէ այսպէս[1]. Թէպէտ և նիւսացին Երիգոր այլազգ[2]։ Այլ զսա որ գեր՝ ի վերոյ է քան զնա և զբերս առնումք վկայ։ Այլ որ ասէ, թէ "Ելէք, հայեցարո՛ւք դատերք Երուսաղէմի", այսու վերինն Երուսաղէմն դատերք լսին, ի տես կոչելով զնոսա առ՝ ի տեսանել զտէրն իւրեանց՝ զայնպիսի ունելով զպսակ, որ վասն եկեղեցւոյ յանձն էառ զզարմանալիսն մեծ։ Դարձեալ, և զներքինն Երուսաղէմի զդատերսն ասէ, յորս ինքն տէրն դարձաւ և ասաց, թէ "Դատերք Երուսաղէմի, մի լայք՝ ի վերայ իմ։ "Որով պսակեաց զնա մայր իւր"։ Այր զՍիոնն ասէ, զի Սիոնն Թարգմանի մայր, և որք զտէրն պսակեցին, ի նմա բնակեալ էին։ Ա՛ն այնր՝ ի մօրէն ասէ զպսակիչն։ "Յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր ուրախութեան իւրոյ"։ Երդ մի զարմանար դու, թէ ուրախութեան և փեսայութեան օր կոչէ զջարչարանացն օր. վասն զի ինքն իսկ տէրն փառս կոչեաց իւր զօրն զայն և ըզժամն, ասելով թէ "Եհաս ժամ, զի փառաւորեսցի որդի մարդոյ"։ Օ՛ի զմերն՝ իւր ասէ. վասն որոյ և զայնպիսի պսակ յանձն էառ. և մեք այն օրն իսկ փեսայացաք և ուրախացաք, որ՝ ի տրտմութեան էաք հինգ հազար ամ՛ վասն գրախտին կորստեան, և անկեալ էաք՝ ի փառացն զոր ունէաք լուսեղէնն զգեստեաւն, յորմէ մերկացեալ անարգեցաք։

1 Ա՛գաթ։
2 Մեկն. երգ. Ճառ. Ե։

Դ. «Փեսայն ասէ. Ահաւասիկ ես մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աչք քո աղաւնիք»։ Յայնըհետէ թէ այդ գեղեցկութիւդ քո այժմ՝ եղև իմ այլազգ պսակեալովս այսինքն գլուխ իմ փշեայ պսակելով որով և դուդ գեղեցկացար իսկ, յիս առնելով զգեղեցկութիւն մեղացն քոց՝ իմ փշեայ պսակելովս։ Ահա այս գեղեցկութիւն զաւազանին մաքրութիւնն յայտ առնէ, որ՝ի ձեռն հոգւոյն սրբոյ նոր ծննդեանն եղև։ Այրկնեալովն՝ յայտ արար, թէ առաւել գեղեցիկ կերպարան ունին որ՝ի նոր ստեղծումն ստեղծանին և պահեն անարատ, և յաւէտ քան զառաջինն՝ զոր Ադամ ունէր յիւրում փառան։ Որպէս ասէ իսկ երանելին Կիւրիղոս ՅՃաձաեան[1]. Ստեղծումն ՅՃայրին և քան զառաջինն և՛ բարձրագոյն. զի այն ստեղծումն թէպետ և լուսաւորութիւն և անցաւս և անտրտում ունէր կեանս հանդերձ անմահութիւն, սակայն միջասահմանն էր փորձն. եթէ պահեսցէ, ապա անմահ մնալ։ Ասայց այժմ որդի ՅՈյ լինել և այսց ամենայնի պարգեւաց հասանել, զոր ՅՃայրինն Ադոմն սերացեալ և սքանչացեալ, ՅՈ՛ ձև հանեալ որ ինչ յերկրէս տենչալի թուին, այսու երևեցուցանել կամի զանձառ շնորհացն մեր ձիր։ Ասայց և ոչ՝ի ծայրս դիտութիւն հանդուրժեաց հասանել, թէպետ և ջանայ օրինակաւ յայտաբանել։ Ասայց արդ ասա, թէ կայ ինչ ըստ երևելեացս գեղեցկութենն այնորիկ օրինակ, յոր դարձեալ գոյացաք, ով փեսայդ մեր ՎՅ։ Այլ ինձ այսպէս թուի, որպէս տղայոց կաթն կամիս ջամբել և ոչ հաստատուն կերակուր. զի դեռ մանրմունդ եմք՝ յայսմ կեանս գոլով և ոչ կարեմք զհոգևորսն իմանալ։ «Ածք քո աղաւնիք բայ՝ի լռութենդ քումմէ»։ Ահա վկայեաց բանիս, թէ մաքուր ես և միամիտ իբրև զաղաւնի. այլ որչափ եսդ լռութիւն փակեալ է, ոչ կարելով յայտնել. վասն զի ոչ կարես լսել. զի ամն խեցեղէնն են ականջամանքդ, և ոչ բաւանդակին անձառելեացն լսու լինել։ Ամրաք քո իբրև զերամակս այծեաց, որք երևեցան

1 ՚Ի Մկրտութենն Քրի։

ի Դաղայադէ։ Այսինքն զի իբրև մեռեալ է մազ, անկենդան, անցանկութիւն, անհպարտ, օտարացեալ յաշխարհէ և մեռեալ. զի վարսն անզգայական է, որպէս աչքն տեսանօղ է և անխոտորնակ ի չարն և միամտութիւն ի բարին, նոյնպէս և որպէս գՀերսն կամ զմազն արտաքոյ ամենայն ախտից ես։

"Այտամունք քո իբրև գերամակս կտրելոց, որք ելանեն ի լուալեաց"։ Այսն զի մաքուր և ախորժակ է լուացեալն և թեթևացեալն ի բեռանց աւոյն։ "Ամենեքեան երկուորիք են, և անորդի ոչ դոյ"։ Այսինքն թէ "բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբոյն". և ոչ եթէ քեզ միայն վարդապետեն որոճողութիւն ատամունդդ զմարքուրն, այլ և զայլս ճնանկին մանր իրատելով վարդապետական բանիւն և որոճողաբար ուսուցանելով մանր մեկնութիւն ձեզ գրոց։

"Իբրև զլար կարմիր են շրթունք քո. և խօսք քո գեղեցիկ"։ Լար՝ կարմրուն գովելի այն է, որք առեամբ ներկանին շրթունքն։ Այս այն, զի աւետարանական բանիւն խօսին և ամենայն հոգևոր խօսիւք։ Բայց զլարն չէ արժան թողուլ, զի բազում ինչ այն է, որ լարիւս թակարդի։ Այդ ասէ, թէ որ ի կարմրացեալ շրթանց խօսք ելանէ, լար է, և կարէ զմարդիկ և առ ինձ ձգէ ի բարիսք քարշումն։ "Իբրև զկեղև նռան այտք քո բայց ի ներքուստ քումմէդ"։ Իրկու բնութիւնք են նռան. զի երևելիքն դաժանք են, և աներևոյթքն ախորժականք և բազում առողջութիւնք առիթք։ Այդ հարսն Քրիստոս, այսինքն եկեղեցի՝ ի վերոյ պողեալ է գերեսս առաքինական վարուք և խաշորած գնացք և տաժանելիք, այսք արտաքոյ՝ նռան կերպիւ։ Այսք որ ի ներքս ի նա ամբարեալ է, յոյսն է և սէրն և հաւատն որ առ ինձ. որով յուսով այնմ ամենայնի համբերէ. զի որպէս նռան ի ներքս համբարեալքն կարի յոյժ ցանկալի է ի կերակուր, նոյնպէս և վարք առաքինութեց քրտնալիր է և մեծ աշխատութիւք առլցեալ. իսկ պտուղ նորին ամենայն փառաւոր է և փառաւորեալ. յաղագս որոյ մարգարէն ասէ, "Ամենայն փառք դստեր Թագաւորի ի ներքոյ"։ "Ասց ի լուս-

Թէդ քումմէ »։ Ով որչափ ես դեղեցիկ, ընդ լուս Թէ ե և ոչ յայտնի առ այժմ, որչափ ի տկարութէ մարմնիդ պատեալ ես։ Ասա այսմ, « Օ որ ակն ոչ եառես, և ունկն ոչ լուաւ »։ « Յերկրէ զաշտարակն Դաւթի պարանոց քո, որ շինեալ է ի Աւլպիովէթ »։ Դաւիթ աշտարակ է շինեալ նշանաւոր, և այսմ նմանեցուցանէ վայելչականութէ զպարանոց հարսինն։ « Հազար վահանք կախեալ կան զնմանէ և ամենայն նետք սպառազինաց »։ Հազարն՝ զբազմաւորականն ցուցանէ. ըստ այսմ՝ Թէ « Կառք այ բիւրապատիկ են, և հազար ուղղիչք »։ Օ որ և առաքեալ՝ վահան զՀաւատսն կոչէ, ասելով, Թէ « Առէք զվահանն Հաւատոյ »։ որ կախեալ կայ զպարանոցաւն, որով և զեղեցկացեալ՝ աշտարակին Դաւթի նմանի։

« Երկու ստինք քո իբրև զերկուս ուլս երկուբիս, որք արածին ի շուշանս »։ Երկու ստինս ասէ, վասն զի երկու քնութէիք են ի մարդումն, մարմին և հոգի. և երկուս ունելով աչս մարմինն, զհոգի և զըմիտս, և ընտրողականութէ արածին, զի զփուշն Թողուլ շուշանօք բուծանին, այսինքն հոգևոր կերակրովք։

« Մինչև տիւն պայծառասցի, և շարժեսցին ստուերք »։ Տիւ և լոյս ասի է, եԹէ ոչ հոգին Աբ, և նոյն ինքն Աբ, որ զստուերն հալածէ ի մտաց. ըստ այսմ, Թէ « Ի քէն է, տէր, աղաւէս կենաց, և լուսով երեսաց քոյ տեսանեմք զլոյս »։ Որով և նոքիմք լուսաւորին միտք և սիրտ որ ի մէջ ստեանցն է. յորոց և կաԹին ի ձեռն հոգևորական կենդանութեն ժողովեալ մածանի՝ տալ և այլոց կերակուր։ Զրդ համառօտ զայս և առաքեալ ասէնք, Թէ անձն քովանդակ եկեղեցի, և որ ի նմա բաժանեալ շնորհքն՝ զգայարանքն որպէս անդամ ի մարմնի. զոր սա մի մի Թուեաց ակն և շուրԹն և ատամն և այտ և պարանոց և որովայն կոչելով։ Ակն՝ զմարգարէսն է իմանալ որ կանխատեսք եղեն այսմ շնորհաց, որպէս և սոյն ինքն Սողոմոն, և որ ըստ նմայն։ Պարանոց, յորոյ վերայ գլուխն կայանայ կառուցեալ, և ամենայն կենդանին ի վեր և ի վայր յարեցեալ

հանդերձ ամենայն զգայուԹիւ, որ Պաւղոս աշտա-
րակին նմանեցաւ, որ շինեաց ի Յաղլպիովղ յա-
ղագս դատաւորուԹեանն պատերազմողաց, որ է Պաւ-
ղոս մեծն և որք իբրև զնայն յորոց վերայ Քո կայ,
ուստի ամենայն կենդանուԹիւն բաշխի յեկեղեցի: Այս
որովայն, որպէս ըսէ Ուսաւորիչն մեր և Յոհան,
և որք իբրև զնոսայն. որոց վկայէ տէրն, Թէ "գետք
յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանուԹեան".
այսինքն հոգւոյն ընդ որս: Այսպէս և առաքն ըսէր
Թամբքն կարմրացեալովք որ յորովայնէն են ի վեր
բերեալ, որոնձալից մանրէ զբանս գրոց՝ զանյայտն
յայտ առնելով և ի գիտուԹիւն տալով մարդկան, և
լուսաւորելով զայլ ևս նուաստ անդամն ի մարմնի
յեկեղեցւոջ, որով բովանդակի մարդն և հարսն
Քրիստոսի լինի: "Գնացի առանձինն ի լեառն զմռսոյ և
ի բլուրն կնդրկի": Ոչ այս երանելին Յոհան յի-
շատակէ, Թէ նման է այս բան որ մարգարէն ասէ,
Թէ "Ինձան հարի միայն, և ի հեԹանոսաց ոչոք էր
ընդիս", այնմ բանի, Թէ "Գնացի առանձինն ի
լեառն զմռսոյ և ի բլուրն կնդրկի": Լերդ լեառն
զմռսոյ՝ զմահն, որ վասն մեր միայն պատերազմեալ
մենամարտիկ կրեաց. և բլուրն կնդրկի, զի ածու-
Թեն միացեալով կոխեաց զհնձանն ի խաչին:

"Այնուհետև գեղեցիկ ես մերձաւոր իմ, և արատ
ինչ ոչ գոյ ի քեզ": Այսինքն իմ խաչելուԹեն և
մահուամբն եղեր այնպիսի անարատ և գեղեցիկ և
արեամբ գառինս, որ և բարձի զմեղս աշխարհի: Այս
և որ մերձենան ի նա, և նորա մեռելուԹեն կցոր-
դին, առնուն և զանուշահոտուԹիւն՝ կնդրկին օրի-
նակաւ:

"Արի հարսն ի Լբանանէ. ելի ի Լբանանէ,
եկեսցես և անցցես ի սկզբան հաւատոյ, ի գլխոյ
Սանիրայ և Հերմոնի, ի մռեաց առիւծուց և ի
լերանց ընծուց": Այսինքն յանտառացեալ մեղօք
լեռնէ եկեալ ի հաւատսն յիսկզբանէն ծնեալ ի
Յորդանանէ աւազանին. զի Յորդանան ի մէջ եր-
կուց այոց լերանց ելեալ և բղխեալ, որով լուացաւ
իսկ հարսն և գեղեցկացաւ, նա, որ գաղանաբնակն
էր ընդ առեւծս և ընդ լինս, որ զօրացեալ և բըռ-

նացեալ էին, և որպէս զառեւծ խայտաբղէտ կռաւ պաշտօնէն. որպէս լինի Թուխ։

"Արտացուցեր զմեզ քոյր մեր Հարսն սրտացուցեր զմեզ միով ակամբ քով և միով քառամանեկաւ սպրանոցի քս"։ Այս բարեկամք փեսային ասեն, որք են հրեշտակք, ցեկեղեցի, որ է Հարսն։ Արտացուցեր, թէ ոգի եառուր մեզ և սիրտ՝ տեսանել զոր ոչն գիտեաք, այսինքն զնախախնամական սէրն, զոր եցոյց առ մարդիկ զծնունդ աւազանին զորդեգրութիւնն, և զարքայութիւնն ևս. զոր մահու խաչին արար։ Արոյ մեռելոյնն հաղորդակից եղեր զմեսաւն, և անուշահոտութէ կնդրկին փառակից ես լինելոց։ Ընդ ի ձեռն քո ծանեայ զնա և զգօրութի նորա և զսէր նորա որ առ մարդիկ։ Արուվ և ասեն հրեշտակք ցքոյն որ է եկեղեցի, թէ պակաս ակամբդ քո որ ասի մի, անցուցեր զմեզ քո միակնութիդ, որ առաւելեալ եմք քան զքեզ բազմակնութէ և պսպրանոցիւ։ Ընդ մեք երկոքումբք բնութիք, այսինքն տեսութեամբք և պարանոցիւք հզօրք. սակայն ի ձեռն քո տեսանեմք և լսեմք ի քէն ուսեալ զայսպիսի անձառ խորհուրդ և փրկութէ։ Այս է, յաղագս որոյ ասէ առաքեալ, թէ "Յայտնեսցի արդ իշխանութէդ և պետութէդ որ յերկինս են ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութէն այ"։ Ասելով եկեղեցւոյ քոյր կոչելով զանախատ ազգակցութէն նշանակելով մեր բնութէս, հրեշտակաց։ Այս քառամանեակ պարանոցի՝ որ ընդ լծոյն Քրիստի ախորժակ կամաք մտեալ եղաք։ Ընդ ասաց, թէ կոչելով փեսային եկիր ի Լիբանանէ, և զայսպիսի զգեցար շնորհս. բայց մի զայդ գալդ միայն բաւական համարեսցիս, բայց այլ և այլ ևս եկ և հանապազ ևս իսկ ի գնացս կայցես, այսինքն ի վարս առաքինութէ, ըստ մարգարէին, որ ասէ, թէ "Գնասցեն նա ի զօրութէ ի զօրութէ"։ Արում և Գրիգոր ծածկեան վկայէ, թէ[1] միտաւարժ պարտ է լինել յառաքինութէն և դիւրաշարժ. յաղագս այնորիկ

1 Ի ներ կերակին։

յառաջ ասացեալ էին ի լքանանէ, յետոյ դարձեալ կրկնէ։

" Օ՛ի գեղեցկացան սոքունք քո քոյր իմ հարսն, զի գեղեցկացան սոքունք քո՛ ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս։ Սոքունք սոլոր են կերակուր տալ՝ որք յերկիր ծննդեամբ գան մարդիկ։ Օ՛նոյն օրինակ ստեամբքն զսրտից մաքրուել զսրբոյն որ յեկեղեցւոջ բուսան, գուշակէ. զի սիրտն առ ստեանցն է։ Այլ զի կանխագոյն զկաթն ասաց տալ ստեանցն, արդ զինո՛րդ այժմ՝ ի գինի փոխեաց և ասաց, թէ գեղեցկացան՝ ի գինւոյ։ Արդ այսպէս իմանալի է զՊաւղոսի առաքելոյ բանն, թէ " որ կաթնկերն է, տգէտ է բանին արդարութեան, և կամ թէ զմիւսն է ասել, թէ իբրև տղայոց՝ ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ և ո՛չ հաստատուն կերակուր "։ Այսու նշանակէ զեկեղեցւոյ տղայութիւն յիսկզբանն կաթամբն որ՝ի ստեանցն դիւեցեալ. և արդ զկատարելութիւն գինեւով զի կատարելոցն է հաստատուն կերակուր և ըմբելի։ Այս որպէս գինին ուրախալիցս առնէ զզմայլեալսն կերակրով, նոյնպէս բանք սքի հոգւոյն՝ի սրտից սրբոց բղխեալք, այսինքն՝ի ստեանցն, զուարճացուցանեն զլսօղսն և զանձառն տան կենդանութեան և ուրախութի։ Այստ նմին օրինակի և զհոտ հանդերձիցն է իմանալ, որ իբրև զխունկս բուրէ։ Օ՛ի որք զանուշահոտ առաքինութեանց զբարի վաստակոց բուրմն հարկանեն, ո՛չ միայն ինքեանց լինին փրկութեան պատճառք, այլ և զմերձեցեալսն առ նոսա և զտեսօղսն օգտեցուցանեն. ո՛չ միայն՝ի կենդանութենէ, այլ առաւել և յետ մահուանն, թէ և բազում ժամանակք ընդ մէջ անցանեն։

" Ասղը կաթեցուցանեն շրթունք քո, քոյր իմ հարսն, մեղր և կաթն՝ի ներքոյ լեզուի քում. և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի "։ Այս արդ չունի բազում պէտք մեկնութեան։ Ասեղ՝ զբազդը և զախորժակ վարդապետութիւն կոչէ. որ՝ի մերձաւորաց և՝ի հարսնացելոց Քրիստի ջամբին՝ի մարդիկ և քաղցրանան՝ի սիրտ լսողաց ըստ Պաւղոսի, թէ " Քաղցր են՝ի բերան իմ բանք քո քան զմեղր "։ Այսողում ասել որ մարգարէին քաղցրացաւ յու-

տեղն՝ որ յառաջ քան զուտեղն դառն է ի բերանն, և քաղցր ի կլանելն : Այսն զի դառն է ի սկզբանն առաքինութեին , և յետոյ քաղցր : " Արդ և կաթն ի ներքոյ լեզուի քո " : Ցղայոյն կաթն , և կատարելոյն մեղր : Յառաջ քան զամենայն լեզուս՝ այս անոյշ կերակրոյ տուօղ՝ է իմանալ զերանելին Յոհան վարդապետն տիեզերաց , նոյնպէս և զՅաճախան , և որք իբրև զնոսայն անուշակ կերակրովք : Դարձեալ կրկնէ՝ ասելով, " և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի: Այս է պատարագ անուշահոտ, յոր հոտոտի Աճ ի հոտ անուշից , ոյք զկամս և զըսորհուրդս և զմարմինս՝ ինքեանք մատուցանեն այ ողջակէզս :

" Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն , պարտէզ փակեալ և աղբեւր կնքեալ " : Ցես, թէպէտ և պարտէզ է , այլ փակելոյ պէտս ունի . և թէպէտ և աղբեւր է , այլ կնքելոյ , ոչ լինել կերակուր և ըմպել ի օտար խաշանց և ոչ արկանել զմարգարիտ առաջի խոզաց , և ոչ տալ օտար լսելեաց :

" Ադաքումն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղով ծառոց , ծաղիկ հանդերձ նարդոսիւ : Նարդոս և քրքում և եղէգն խունկն և կինամոն հանդերձ ամենայն փայտիւք Լիբանանու , զմուռս և հալուէ հանդերձ առաջին ամենայն իւղովք " : Այնքան առ քան զսա մեկնեմ, լսօղքդ ձանձրանայք , բայց զի զղուռն խմաստիցն բացեալ եմ , զոր այլ վարդապետք մանր կտտեն , ես համառօտեմ և ի քան առաքելոյն աւարտեցից, որ ասէ, թէ " Պտուղ հոգւոյն այս է . սէր , խնդութիւն , խաղաղութիւն " : Այս յայլսում տեղւոջ, թէ " Ողորմութիւն . հաւատք , յոյս , սէր , հեզութիւն , խոնարհութիւն , քաղցրութիւն , եղբայրսիրութիւն , անսխակալութիւն , անբնչասիրութիւն , պարզմտութիւն և անձին սրբութիւն , և որ սոցին նման " : Ակսք դաժանք ի գործելեացն , որպէս զմուռսն , կէսքն անուշահոտ , իբրև զեւզն , կէսքն ցանկատեսակք՝ որպէս ծաղիկք : Այսոքիւք այ պարտէզ լինի հարսն : Այդ անուշահոտ բազմափեաց որ ի խորանին յայն մովսիսեան ծխէր , որ էր իսկ օրինակ բիւրապատիկ առաքինութեց որ ի սքս,

յորս առաւել ցանկութիւն հոտոտի ՚ած, քան որ յայնժամ ՚ի խունկսն և ՚ի պատարագս երեկորին և առաւօտին։ Այլ զի նմանեսին յառաջ մինչև նաամբն հասեալ, չվայելեցուցանէ զկերօղսն՝ փշովք պատեալ է, նոյնպէս և որ ՚այ պարտիզ և դրախտ լինի յայսմ ՚ի կեանքս, յառաջ նեղուածիք պարտի կեալ, քաղցիւ և ծարաւով և տքնութիւնք և աշխատութիւնք, և որ այլ կիրք առաքինութեանց, որով և ինքն զինքն նեղէ. և որ գայ ՚ի վերայ փորձութիւնք ականայ՝ թէ յընկերաց և եթէ ՚ի սատանայէ, զակամայն վասն ՚այ սիրոյն կամաւոր արարեալ՝ համբերէ, ապա լինի պտուղ ախորժելի ՚այ որպէս զնուռն որ ՚ի մէջ փշոց էր մինչև էր հասեալ։

Այդ այնպէս արժան է որ Աստի հարմանայ, և նորա պարտիզ լինի, ՚ի մէջ փշոց յառաջագոյն կեալ, այսինքն ՚ի մէջ առաքինութեց, և ապա լինի կերակուր փեսային Աստի։ Այա և ծաղիկ ևս լինի, որպէս նարդոսն և քրքում, որ մինն ջերմ է և միւսն անուշահոտ. այնպէս պարտ է ջերմին սիրովն Աստի վառել և բորբոքել զհոտ առաքինութեն և ամենայն բարեգործութեն։ Այսեն զքրքմին, թէ միջասահման է, ոչ կարի հով և ոչ կարի ջերմ, այլ ՚ի չափու ուանի զիւր զօրութեին։ Այսու օրինակաւ ուսուցանէ, թէ և առաքինութեի պիտոյ է պաղաբերել պարտիզին ՚այ, այլ յանչափին փախչել պարտ է, և ընդ մէջն գնալ, զի մի անչափութեն գլեսցի։ Այնպէս և ՚ի հաւատսն՝ զգրեալսն ընդունել հաստատուն հաւատով, և առաւել քան զգրեալսն ոչ իմանալ և ոչ զանքննելիսն քննել, այլ զամենայն անկարելի իրս և զանլինելի և զանհաւատալի՝ ՚այ զօրութեին հաւատալ, որ կարողն է յամենայնի։ Այնպէս և եթէ ոք ՚ի սուգ լինի վասն մեղաց գործելոց, ոչ առաւել քան զչափն սգալ, զի մի ՚ի յուսահատութեի անկցի և ասիցէ, թէ ոչ գոյ փրկութեի, և յաղագս այնը կամ ոչ դառնայցէ ՚ի մեղաց, և կամ զՅուդայինն կրեսցէ կիրս, որ խեղդեցաւն՝ թէ ոչ գոյ աշխարութեի, որ էր անչափ սգալ։ Այս զի՞ մի մի թուեմ, ամենայն գնացից և վարուց իրաց՝ ՚ի չափու պարտ է կալ. որպէս ուսուցանէ խորհուրդ քրքմին,

և ոչ խոտորել, ոչ յաջ և ոչ յահեակ։ Այլեգն և կինոմանն ՚ի նունենեաց դրախտին ՚ի հարմանէն պտղաբերեալ։ Օ եղէգն քան զամենայն խունկս անուշահոտ գիտեմք, որ և ՚ի խունկսն որ ՚ի խորանին՝ հրամայեցաւ խառնիլ առ ՚ի ծխելիս այ։ Այլ գկինոմանէն ասեն, թէ ՚ի սաստիկ եռանդն կաթսայի մատչի, գիջուցանէ գջերմութիւն եռացման ջրոյն որ ՚ի նմա, նոյնպէս և եթէ ՚ի յոյժ ջերմին բաղանիս մտանէ, առժամայն իսկ զովացուցանէ զտունն։ Այլ այնպիսի իրս, որ և անհաւատալի թուի լսողաց. զի ասեն, թէ մարդ որ ՚ի քուն լինի և կինոմանն առ նմա իցէ, և որ հարցանէ զբան ընդ ննջեալն, պատասխանի առնէ, բայց միայն ՚ի բերանոյն վերայ դիցէ գկինոմանէն. և ՚ի քուն լինի, և արթուն է, և պատասխանիս բանիցն հարցողաց յօդաւորս և պատշաճս առնէ. ՚ի քուն թուի, և արթուն է։

Մարդ այսպէս ուսուցանէ խունկս այս, թէ մարդ որ այ տայ զինքն, մարդ թուի, բայց չէ մարդ. զի թէ պռոնկութեամբ խորհուրդք նեղեն զնա, եթէ բարկութեամբ և եթէ ագահութեամբ և որ ինչ ախտաք մարմնաւորք, նա ոչ ընդունի. այլ հրեշտակայն հաւատարիմ վարուք, որ արթունք են և անքուն և անախտք և անկարիք. և մարդ է, և չէ մարդ, զի ՚ի քուն է մարդն առ հրեշտակաց խմաստիւքն. նմանեցոյց ըզպտուղ հարսինն, որ ՚ի հոգևոր պարտիզին և ՚ի դրախտին։ "Այս զմուռս և հալուճ հանդերձ առաջինն ամենայն իւղալիքն"։ Օ մուռս՝ մեռելութեան վէմի նշանակ է և թաղմանն. և հալուճ և այլ առաջինն պատուական եղէգն ածուէն միացելոյ ընդ մարմնոյն, որով զմահ կրեաց։ Մարդ եցոյց եթէ փայտ եր ՚ի Լիբանանէ մարդ ՚ի մեղաց անտառէն, և եկեալ ՚ի Լիբանանէ և վէմի չարչարակից և մահակից եղեալ, և՝ մեռուցանելով զմեզս՝ եղև անուշահոտ հարսն վէմի՝ միացեալ ընդ նմա մաքրութեամբ վարուք. որպէս ասէ առաքեալ, թէ "Ոլոր միանգամ մկրտեցաք ՚ի վէմ [illegible], ՚ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեալք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ. զի որպէս յարեաւ ՚ի մեռելոց վէմ փառօք հօր, նոյնպէս և մեք ՚ի նորո-

գուսն կենաց շրջեսցուք։ Ո՛վ որպէս տնկակից եղաք նմանութեանն մահու նորա, այլ և յարուցեա նորա հա-ղորդ լինիցիմք»։ Այս և յաճուրդն անուշահոտի, որպէս ասաց յաճախինն Յովհաննէս։

«Ղազեւր պարտիզաց, ջրհոր ջրոյ կենդանւոյ և հոսեցելոյ ի Լիբանանէ»։ Լսոյս առաւելու գհարս-սինն զգեղեցկութիւնն քան զառաջինն. զի յառաջ պարտէզ կոչեաց զհարսնն, և ապա սակաւ մի յա-ռաջ երթեալ՝ աղբեւր պարտիզաց, թէ ոչ դու միայն եղեր պարտէզ, այլ և զայլս բազումս ո-ռոգեալ՝ պարտէզ և դրախտ այ առնես, պտղաբե-րել զարդարութեանն պտուղս։ Այս ջրհոր ինքն յաճ կո-չեցաւ, որպէս ասաց մարգարէին. «Ո՛վ Թողին զաղբեւրս ջրոյ կենդանւոյ»։ Այս դարձեալ՝ ցսամա-րացին ասաց տերն «Ահա գիտեիր դու զպարգևսն այ, և ով է որ ասէդ ցքեզ, թէ տուր ինձ ըմպել, դու խնդրեիր ի նմանէ և տայր քեզ ջուրս կենդանի»։ Այս դարձեալ, թէ «Որ հաւատայն յիս, գետք յո-րովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեանն»։ Լսըդ որպէս յաճուրդն անուշահոտութեանն հաղորդին, որք նման մահակից լինին և նման հարսնանան, նոյնպէս և որպէս զնա ջրհոր ջրոյ կենդանւոյ լինի՝ որ նման հարսնանային որպէս զինքն. Թէպէտ ի Լիբանանէ լինին եկեալ, այսինքն ի մեղաց անտառէն. զի ան-տառ է Լիբանան. զոյն և զկնի մեկնէ աւետարա-նիչն Յովհաննէս, «Ո՛յս ասեր վասն հոգւոյն, զոր ընդունելոց էին որք հաւատային ի նա»։

«Ո՛արթիր հիւսիսի, և եկ հարաւ»։ Լսկինքն գնա՛ հիւսիսի, և եկ հարաւ։ Հիւսիսի՝ սատանայ և իւր գործքն կոչին. որպէս ասէ սոյն իսկ Յովհաննէս, Թէ «Ամիստ հողմ է հիւսիսի. զի հեռի է յարե-զական ջերմութենէ, և վասն այնորիկ սառեալ է։ Նոյնպէս և որք յարեգակնէն արդարութենէ հեռա-բնակ են, սատանայական խորհրդովք են լցեալ և սառեալ են մեղօք, ոչ լքնուն ջերմութենէ արեգա-կանն, այսինքն քանիւք գրոց սրբոց ոչ վարդապե-տին՝ որ զանզղջութենէ սառն հալէ, և զղջումն տնկէ հողմով հոգւոյն սրբոյ, որ է հարաւ։ Լսըդ հարա-ւոյն դալ հրամայէ ի պարտէզն, այսինքն ընորհաց

հոգւոյն սըկ , և հալածել զսատանայական գործս . վասն այնորիկ ասէ , զարթիր հիւսիսի , որ է գնա , և ՚ի կէս հարաւ , որ է հոգին սբ և նորին ջերմ հողմ , որ հալածէ զձմեռն : " Հ նչեա ՚ի պարտէզ իմ: և բուրեսցին խունկք իմ „ : Այս հոգւոյն սըկ առատ շնչումնն է ՚ի պարտէզն Աստի , որ հարսն անուանեցաւ , ուստի ծաղկեցան ազգի ազգի շնորհք ՚ի մարդիկ . որպէս ասէ առաքեալ . " Ասեմն ՚ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան , այլում բան գիտութեան , միւսումն հաւատք , այլում աջողութիք զօրութեց , այլում ընտրութիք հոգւոց , այլում մարգարէութիք „ : Այս զի՞ մի մի թուեմ զբազում շնորհս որ յեկեղեցւոջ ասացեալ է , ՚ի վերայ բերեալ ասէ , " Ո՛յս ամենայն աջողէ մի և նոյն հոգին սբ , և բաժանէ իւրաքանչիւր շնորհս՝ որպէս և կամի „ : Արդ այս է որ ասէ , " Հ նչեա ՚ի պարտէզս իմ; և բուրեսցին խունկք իմ „ : Արաջին խունկս՝ գՊատրոս և գՊետրոս և զտանեակս նոցին ընկերսն , և մեր տր Ա ուսուցուիչն և Յոհան ոսկեբերան . և այլք անչափք իբրև զնոսայն :

Ե . " Հարսն աղաչէ , զի իջցէ փեսայն իւր . Իջցէ եղբօրորդին իմ ՚ի պարտէզ իւր և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց „ : Տեսեալ Հարսինն զիւր զայնքան անչափ առաքինութիքն ծաղկեալ որպէս ՚ի դրախտի և ՚ի պարտիզի , զոր ուսաւ ՚ի փեսայէն և ՚ի հրեշտակաց , աղաչէ իջանել և ուտել , որ նշանակէ զՀայցելն այ ՚ի բարեգործացն : Այս և անկարօտ է այծ , այլ սակայն քաղցեալ և կարօտ է մերոյ փրկութիե , որպէս և ասաց ինքն ցաշակերտսն իւր , յորժամ նեղէին զնա ուտել հաց . Թէ " Իմ կերակուր այն է , զի արարից զկամն այնորիկ՝ որ առաքեացն զիս „ : Որ և էր մեր դարձն առ նա , և զնորայն պահել զպատուիրան : Այս ինքն իսկ ասաց , Թէ " Վ՚աղցեայ և ետուք ինձ ուտել , ծարաւեցայ և արբուցէք զիս „ : Ուսուցանէ բանս և զխոնարհութիե՝ ոչ առաքինական վարուքն ամբարտաւանել և յանհոգս լինել . ՚ի բարի գործսն՝ զխոնարհութիւն ունել և աղաչել բեկ սրտիւ և խոնարհ ոգւով ընդունել զպըր-

տուղս արդարութեանդ. որպէս ինքն իսկ Հրամայեաց աղաչել և ասել, "Լուեսցէ աղբայութիւն քո": Որ աղաչանս նայեցեալ փեսային որ ասէ մարգարէին թէ "Մինչեւ կարդացեալ լցէ քո, ես լուայց քեզ, և մինչդեռ խօսեացիս, ասացից թէ ահաւասիկ հասեալ կամ": Նոյնպէս փեսայն լուեալ աղաչանաց հարսինն ասէ, լուայ աղօթից քոց և "Մտի՛ ի պարտէզդ իմ քոյր իմ և հարսն, կթեցի զմուռս իմ հանդերձ խնկովք, կերայ զհաց իմ մեղու իմով": Որոյ կոչէ, և ապա հարսն. զի որ զկամս ոյ առնէ, ապա և հարսնանայ իսկ նմա: "Լու կթեցի զմուռս իմ հանդերձ խնկովք": Այսինքն զի զմեռելութեանն պտուղ, որ վասն ձեր մեռայ, կթեցի յիմ պարտիզդ և ի հարսնեդ առաքինութիւն խնկովք բուրեալ, մեռեալ ըստ զմասոյն օրինակի, և անուշահոտ ըստ ացծութեանն սիրոյ ընդ մարմնոյս միացելոյ: "Կերայ զհաց իմ մեղու իմով": Այ միայն կերակուր եղեր ինձ՝ կերակրելով առաքինութեամբ հացիւ, այլ և քաղցրացար ինձ որպէս զմորիսխ մեղու: Որպէս երանելի վարդապետքն ացծաբան և Յոհան. որք որպէս ի բերանոյ ոյ խօսին և ասեն, կերակրեա զիս առաքինութիւնդ: Որ և Պետրոսի նոյն կերակրով հրամայեաց կերակրիլ՝ յուցակի կտաւոյն, յորում էր ամենայն շունչ կենդանի, այսինքն անխտիր զհեթանոսս կերակուր տալ ոյ որպէս զաբրեայս, և մի խառնակ համարել: "Լբեր զդինի իմ կաթամբ իմով": Որ այս ինքն իսկ ասաց յորդիսն Որ եբեդեայ: "Կարի՛ք ընկել զբաժակն, զոր ես ընկելոյ եմ", այսինքն զմահն զոր արբ, և արեամբն զդինին, և կաթին արբուսյաւ, այսինքն զմարդկան տղայութի, որ այնմ արբմամբն՝ որ զբաժակ մահու արբին, տղայացան անմեղութիւնք որպէս զկաթնկերս: Որ և ինքն տէրն ասաց. "Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանկտի, ոչ կարիք մտանել յարքայութիւնն ոյ": Յոլովիւմ ասել, զոր տէրն մեր արբ և ետ առաքելոցն և ասէ, "Այս է իմ արիւն, առէ՛ք և արբէ՛ք", և որ զինի սորին բանն. այդ իսկ է "Կերայ մերձաւորք իմ, արբէ՛ք և արբեցարո՛ւք եղբարք իմ": Որ մեւս աւետարանչին ասէ, "Ահա ոչ կերիջիք զմարմին որդւոյ մար-

գոյ և արքջիք զարիւն նորա, ո՛չ ունիցիք կեանս յանձինս ։ Ասդ արբամբն որ ինքն արբ, և ապա առաքելոցն էտ, եցոյց թէ եկեղեցւոյ և հարսին զայս բաժակս էտ ըմպել և իւր մահակից լինել. զի խորհուրդն որ կատարեմք, մահու նորա յիշատակ է. և զհաւատ պատարագն դնելով 'ի վերայ սեղանոյ առաջի հօր, զնորա մահն որ վասն մեր եղև, առաջի հօր ունիմք և այնու փրկութեն հայցեմք մեզ։ Ասդ թէսկետ և երանելին Յոհան ասէ, թէ [1] ինքն վասն այնր արբ յիւրմէ արենէն, զի զնոսա յորդորեցէ յրմպել, զի մի՛ ասիցեն՝ թէ արիւն զինւոյդ կարիցեմք ըմբել. բայց բուն պատճառն այս է, թէ զիմ արբուածս զմահ և զանմեղուն, որ է գինի և կաթն, և ձեզ պիտոյ է ըմպել, և որպէս ես զձեզ կերակրեցի իմով արեամբս, և ձեզ պարտ է զիս կերակրել տաղտկութեբ և մեռելութեբ, որ ըստ այմ կենացս. որպէս առաքեալ ասէ "Վա՛հ ոք կամի իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ յիմար լինի. զի եղիցի իմաստուն" յայմմ աշխարհի. և զՔ՛ի կերակրիցէ իւր գինւոյն և կաթամբն, զնորայն ստանալ վարս, որպէս ասէ դարձեալ առաքեալ, թէ "Ո՛մանողք եղերուք լինձ, որպէս և ես Քրիստի". և այլուր, թէ "Քրիստոս 'ի ձեզ է, բայց եթէ անպիտանք իցէք". և թէ "որ մկրտեցայք 'ի Քրիստոս, զՔ՛ի զգեցեալ էք"։ Եւ Կիւրիղոս Ածաբան ասէ, թէ [2] Քրիստոսս գիտեմ զկեցեալն ըստ Քրիստի։ Ասդ ասելով, թէ արբէք և արբեցարուք, 'ի վերայ բերէ, թէ

"Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ։ Այսինքն թէ չի՛ արբեցուի՝ այս արբուածս թէ քուն թմբրութեան բերէ, որպէս գինին որ յորթոյ. այլ որպէս ածուբքն 'ի գերեզմանին արթուն էի և մարմնոյն մեռելութքն 'ի քուն, նոյնպէս և որ զայս արբուածս ըմպէն, արթնանան ահն անմահութբ ընդ իս. այս է, որ ասէ, թէ "Կեցցէ յաւիտեան". և "թէ և մեռանի, կեցցէ". թէ և զմարդկային ունելով քնութեն, ննջէն, այլ արթուն էն զընորհս հոգւոյն յինն

1 Մեկն. Մատթ. Ճառ. ձբ։
2 Ներբող 'ի մեծն Աթանաս։

քեանս բերելով։ Արդ եթէ ոչ էր այս այսպէս, զիարդ կարէին այս տակաւ մարմնով զայնպիսի կիրս չարչարանաց կրել առաքեալքն և մարտիրոսքն այնչափ նեղութիւք, նոյնպէս և Ճգնազգեաց Հայքն։ Ա՛ն նաւանդ մեր [1]ուսուցիչն, որ տասն այր զեւթն օր ի գլխի վայր կախաղանին ի բրածեծ առնելն՝ զնորա սրտին արթնութիւն ոչ կարացին թմբրեցուցանել այնպիսի դառն տանջանաւքն, այլ զմիտսն արթնութիւք առ Ած ամբարձեալ. անհատ աղօթիւքն ընդ այ խօսեր յայնմ աւուրսն, և գութ աղերսանաց առաջի այ արկանէր վասն աշխարհիս մերոյ փրկութեան։ Ի գաւազանի զարկուածն բաւական է քուն թմբրութեան մտաց մերոց հասուցանել, իսկ երանելին յայնչափ անչափ չարչարանս անխոտորնակ զմիտսն և անդրդուելի զլեզուն ի խնդրուածս առ Ած ունելով զիարդ ոչ նմանէր արթուն սրտին Պետի, և ննջմամբն մարմնոյն, զոր օրինակ սա քնութիւք կրից ննջմանն մահակից եղեալ Պետի արթուն մտօք։ Այս է, որ ասէ, թէ "արբէք և արբեցարուք եղբարք իմ" զի արբեալ զչարչարանս, ես ննջեցի ըստ մարմնոյ, և սիրտ իմ արթուն եկաց ըստ Աստուածութեան։ Այսր օրինակ և դուք ինձ էք նմանելոց արբամբս այսու իմով զմահ։ "Հարսն զգայ զփեսային բախել ընդդուռնն. Զայն եղբօրորդւոյն իմոյ բախէ ընդդուռնն"։ Զգէ տես զայս, թէ որք զբաժակն՝ և զգինին զայն ըմպեն յայս քնալից կեանս, որպիսի արթուն միտս ստանան, ըստ խրատու աւետարանական բանին, եթէ "Լցցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս և Ճրագունք լուցեալք, և դուք նմանողք մարդկան՝ որ սպին ունին ՚ի նեղութեանց, թէ երբ դառնայցէ ի հարսանեաց, զի յորժամ գայցէ և բախիցէ վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի է ծառային այնմիկ, զոր եկեալ տէրն գտանիցէ արթուն"։ Այսմ նմանեալ սքէք որ հարսնացան փեսային Պետի, ի պահու կալով և լսել զձայն եղբօրորդւոյն Պետի, որ բախէ զդուռնն կոչելով ի մուտս արքայութեանն երկնից։ Փեսայն՝ որ է Պետ, ասէ, ի

[1] Ագաթ։

քախել զդուռնն։ «Ա՛ծ լինձ քոյը իմ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ. վասն զի գլուխ իմ լցաւ ցօղով և վարսք իմ մանր անձրևովք գիշերոյ»։ Ա՛րդ համառօտ այս է սորա մեկնութիւն. «Ա՛ծ լինձ քոյը իմ մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ»։ Ա՛յսու բանիւք զմկրտութիւն լուսաւորութիւնն գուշակէ զհարսինն, թէ՝ ի ձեռն հոգւոյն ծննդեանն և արբմամբ խորհրդական արեանն՝ քոյը և մերձաւոր իմ եղեր, և արդարացար հոգւովն, զաղաւնոյն առեալ բնութիւն և կատարեալ եղեր, զի ոչ որդի եղեր. և որ որդի ոչ արժանանայ լինել, ամենայնիւ կատարեալ է. զի այլ զինչ բարձրագոյն փառք գոյ քան զայս յերկրի կամ՝ ի յերկինս։ Ա՛ծ թէ ոչ պահեմք և գործեմք զշնորհն և զփառսն տուեալս, նախատինն նմանեմք, որ առեալ զլուսաւորութիւն և զանկարօտ և զանցաւ և զանմահ կեանս և զդրախտն ոչ պահելովն և ոչ գործելովն կորոյս դարձեալ։ Ա՛յդն և մեզ ուսուցանէ մի՛ յանհոգս լինել կատարելութեանն ընդհուպ, այլ որպէս թէ ոչ առեալ, այնպէս զգուշանալ. զի տալ զկատարելութիւնն՝ ի նմանէ է, և պահելն՝ ի մէնջ լինի, զոր ասէ երանելի վարդապետն. յաղագս այնորիկ ասէ, թէ ծած զգուռնդ Ճանապարհին, որ տանի՝ ի կեանսն. և մի՛ կատարելութիւդ հանգստեան զքեզ և քնոյ և դիւր կենաց դներ. որպէս ասէ առաքեալ. «Ո՛չ ոք համարի գիտել ինչ, չևևս գիտայ որպէս արժան է գիտել». և դարձեալ ասէ թէ «Ո՛չ համարիմ զանձն իմ, թէ հասեալ իցեմ, բայց մի՛ ինչ է, զի զառ՝ ի յետոյսն մոռացեալ և յառաջադէմն նկրտեալ եմ. ուշ եդեալ ընթանամ զհետ կոչմանն՝ այ՝ի՛ ՅՅ»։ Ա՛րդ բայց լինձ զքո մուտդ. «զի գլուխ իմ լցաւ ցօղով և վարսք իմ մանր անձրևովք գիշերոյ»։ Ա՛յս այնմ նման է, որ՝ի միւսանգամ գալստեանն զվերսն զոր էառ վասն մեր, ցուցանէ։ Ա՛յլ անդ վասն կշտամբելոյ զմեզ ցուցանէ, որ առ երախտաւորն ապերախտ գտանիմք. բայց աստ առ՝ի յորդորելոյ զմեզ զիւր քիրսն որ վասն մահուն ահի կրեաց՝ ի գիշերին, յիշեցուցանէ հարսինն՝ որ յաւետարարանին ասէ, թէ «Ո՛րտուն քն

ոլոռն ոլոռն հոսեին ՚ի նմանե ,, ։ Օ այս ասէ , Թէ իմ քրտամբս ես , զայդ անմեղուէ աղաւնոյ և զկատարելութէն զգեցեալ և քոյր իմ և հարսն լեալ. որ քրտամբ իմով որ յայնմ պիշերի զքիրան անի. ծիցն բարձի , և ես ընդ քո վշտացեալ համբերեի աշխատեալ քրտամբքն . արդ պահեա զոր առերդ , այսինքն զմիամտուէն աղաւնոյ և զկատարելուէդ , և մի կորուսաներ դարձեալ. զի երկրորդ անգամ խաչ ևս ոչ է և ոչ մահ վասն քո ։

“ Հարսնն զայս ինչ ասէ ։ Վերկացայ զպատմուճան իմ , զիաւրդ զգեցայց զնա ։ Ուացի զոտս իմ զիաւրդ աղտեղացուցից զսա ,, ։ Այսինքն քո այսչափ երախտիքդ և քրտամբդ որ վասն իմ , զգեստ պատուհասին որ վասն իմոյ յանցանացն մերկացեալ , զիաւրդ դարձեալ զգեցայց , քաւ լիցի ։ Նա որ լուացեր մկրտութէն զգարշապարս և զոտս որպէս զերանելին առաքելոյն և ամրացուցեր ՚ի Թուխից խածանօղ օձին , զիաւրդ աղտեղացուցից զսա մեղաց ընթացիւք ՚ի պոռնկուէ կամ ՚ի սպանուէն կամ ՚ի գրկութէն և որ սոցին նման . և որ լուսով զգեցայս և իշխանութէ ունիմ յերկինս ուղևորել և ընդ հրեշտակս պարել ։

“ Այզաւորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ ծակն , և որովայն իմ խռովեցաւ ՚ի նա ,, ։ Տես զայս , Թէ պէտ և որպէս զՊաւղոս կամ զՊետրոն ոք լուսաւորի հոգւով և ՚Ի նի խորհրդոյն Քանայ տեսօղ լինել , այնպէս որպէս փոխանակ ամենայն անձին զձեռն միայն տեսանել , և այն ընդ նեղ և սուղ նուազ ինչ տեղի՝ որպէս ընդ ծակ ։ Յաղագս որոյ ասէ առաքեալ . “ Այժմ տեսանեմք երբեմն ընդ հայելի օրինակաւ՝ այլ յայնժամ դէմ յանդիման , այժմ խեղամուռ եմք փոքր ՚ի շատէ , այլ յայնժամ գիտացից որպէս և նայն ծանեաւ զիս ,, ։ Այսաց , Թէ զոր ետ ինձ փեսայն զչնորհն և զոր խոստացեալ է տալ և զինչ վասն իմ կրեաց , և Թէ որչափ եղև մեզ նորա մեհուամբն չնորհ , և որ այլ այսպիսի անբաւ և անպատմելի պարգևք , որ աստ եցոյց զսրբոցն , առ այնու զոր անդ ՚ի Հանդերձեալ կեանսն է յուցանելոց և ՚ի գիտուԹէն տալոց , այնպէս է առ այնմ՝ որ

պէս թէ զձեռն միայն ընդ ծակ ինչ տեսանիցէ, և որպէս կաթ մի ջուր առ ծովուն ջրով, և որպէս ձրագ առ արեգականբ, և որպէս տղայ յորովայնի մօրն՝ առ ծեր այր: Նա տես, զի և յայն սակաւ և սուղ տեսութենն խառնեցաւ որովայնն. որպէս և ասաց, թէ "որովայն իմ խառնեցաւ ի նա": Այլ և Պաւղոսի սակաւ տեսութենն շրտոյց և կուրացոյց զնա յաչացն, որպէս Յովհաննու առաքելոյն ի տեսլեանն, որպէս Եզեկիէլին. և այս ի հրեշտակաց միայն ի տեսուէ, որպէս և Դանիել ասաց, "տեր, յերևեցաւ քո խառնեցաւ որովայն իմ յիս". և որ զկնին դայ: Այլ որպէս խօթ աչք զարեգակն ոչ կարէ տեսանել, այնպէս և մարդկային քնուես զաստուածոյն ոչ կարեն տեսանել կամ իմանալ՝ որչափ յայսմ ի կեանս է: Յաղագս այսորիկ զՊաւղոս արտաքոյ մարմնոյն առեալ յերրորդ երկինս տարեալ՝ անդ եղոյց զանձառելիսն. իսկ յորժամ դարձաւն յերկիր՝ ոչ կարաց մարմնեղէնն մտօք և չըբաժանբք պատմել զոր ետես և զոր լուաւ զանբաւսն. այլ ասէր և ս, թէ "լուայ բանս անձառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել", այսինքն թէ չկարէ բերել մարմնեղէնն լեզու զանմարմնեղէնին զնորհուրդ: Այսպա եթէ ոք ասիցէ զձեռն եղբօրորդւոյն որ ընդ ծակն ձգեալ՝ զորդի, զի աչ հօր կուչի. և զմարմինն, զոր միացոյց ընդ ոճուԹենն, ծակ իմանայ, չէ և այս հեռի ի խորհրդոյն. զի որպէս սակաւ ինչ ծակ առ տաճարաւ այնպէս և մեր քնուԹիս առ ոճուԹենն: Այլ ինձ առաջինն պատճառն հաճելի է. նա և միաբան գրոց, մանաւանդ մարգարէականացն ի բազում դէմս բաժանի: "Յարեայ բանալ եղբօրորդւոյն իմոյ: Զեռք իմ կաթեցուցին զմուռս և մատունք իմ զմռսով լցեալ ի վերայ ձեռաց փակաղակին, երբ տեսի զձեռն կարկառեալ ընդ ծակն", այսինքն ով յայտնեալ զնորհուրդսն ընդ նեղ լսանցոյց, բացան աչք հոգւոյս և տեսի որչափ կարելի է մարմնեղէնն աչաց տեսանել, և զարԹեաւ հոգի իմ ի ԹմբրուԹէ մեղաց և յարեայ հիացմանէ երկրաւոր կրից ի բաց դնելով զախտս, և մեռուցի զիս մեղացն ընդ մեռելոյն մեռեալ՝ որ վասն իմ մե-

ռեալ անմահն։ Օ որ և ասէ առաքեալ, «մեռեալք ընդ նմին մկրտութեանն ի մահ, որով և ընդ նմին յարեաք հաւատովք այ ազդեցութեան». և որ զկնի գայ բանն։ Պրդ յայտ է թէ յառաջ մեռանել պիտոյ է և սպանանել զանդամս մարմնոյ, որպէս հաստատէ զսոյն առաքեալ. և ապա լինի մուտ այ և յածային խորհրդոցն ի մարդն։ Պյս է որ ասէ, թէ ի բանալն եղբօրորդւոյն իմոյ՝ «ձեռք իմ կաթեցուցին զմուռս». սոյնպէս և «մատունքս ի վերայ ձեռաց փականակին»։ Օ մուռն մեռելութեն գուշակ է. և ի ձեռքն են գործօնեայ գործոց։ Պրդ հաստանէ ձեռն եղբօրորդւոյն Պնի ի ձեռն հարսինն, այսինքն է հաւատացելոց. և նորա ձեռինն հաւասարեցին հարսին ձեռքն՝ ի փեսային ձեռքն մերձենալովն, մաքրութեք մեղաց և մեռելութեք ընդ նմա։ Պյս է որ ինքն տէրն համառօտեաց. «Ով ոք գայ առիս, և ոչատեայ զամենայն ընտանիս, նա և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել»։ Պատմեալ. թէ «նեղ է դուռնն և անձուկ ճանապարհն, որ տանի ի կեանսն»։ Պրդ յայտ է, թէ նեղութեք և մեռելութեք հետեւի այն ճանապարհն. բայց առ որում սեր փեսային տեղի տանէ, նորա յուսոյն դժուարինն դիւրին թուի։ Յաղագս որոյ խրախայեալ մեծ առաքեալն Պաւղոս, խրախոյս տայ, ասելով, թէ «Ոչ արժեն չարչարանք ժամանակիս զհանդերձեալ փառսն, որ յայտնելոց են ի մեզ»։ Յոր և դու հայեաւ այժմ. բաղում թագաւորք և թագուհիք աստ ըստ իւրեանց կամացն գնացին, և յետին օր մահուն իւրեանց երթալով ապաշաւելով ելին յաշխարհէ. և յառաջ քան զօր դատաստանին ի խղճէ չարեացն և յահէ դատաւորին ի տանջանս են։ Նոյնպէս և բաղում թագաւորք և մեծամեծք արհամարհելոյն զաշխարս, և ի վերջին աւուր կոչմանն իւրեանց երթալով, և յուսովն որ առաջի կայր ինքեանց, ուրախութեք հրաժարեցին յաշխարհէ, անձառ զուարթութեք բերկրեալ ընդ վաճառն զոր արարին. զի զերկինս ընդ երկրի առին, և յառաջ քան զկատուցմանն օրն որպէս առեալ աստստին զվարձան, և յուրախութեն ևս են.

և զնա անդադար օրհնեն, որ նոցա ձանաչել շնորհեաց զմոտի կենացս ուղղութեի և յաւիտենական կենացն ի խնդիր ելանել։ Արդ փեսայ և եղբօրորդի, որպէս բազում անգամ ասացի, Քո կոչի։ Փեսայ ասի, զի սիրեաց զմարդիկ որպէս փեսայ զհարսն. զոր և հաստատէ առաքեալ, թէ "Այսեցայ զձեզ առն միում իբրև զկոյս ոք յանդիման կացուցանել Քրիստոսի"։ Եւ եղբօրորդի անուանի նոյն ինքն Քո, զի Հրեայք և հեթանոսք՝ Աստուծոյ են. վասն այնորիկ եղբարք կոչին և Քո, զի ի Հրեից է, և եկեղեցի՝ որ են հեթանոսք և նոր հաւատացեալ ժողովուրդք Քրիստոսի, եղբօրորդի զՔո կոչեն։ Եւ հարսն և քոյր և պարտեզ՝ հեթանոսք յաղագս այնորիկ կոչին, զի որպէս հարսն զսրբուհի և զսէր փեսային խոստացեալսն առն իւրում միայն պարտի պահել. և եթէ ոչ պահէ, և զայլ ոք սիրէ պղծեաց զանկողին փեսային և օտարացաւ ի նմանէ, նոյնպէս և հաւատացեալք, որ ի Քո միացան մկրտութիւն, և հաղորդք եղեն նորա մարմնոյ և արեանն, և ապա յետ այնորիկ ի սէր աշխարհիս որոշեն զինքեանս, և միանան ի պէսպէս ցանկասիրութիւն ցնորս, ի պոռնկութիւն, ի սպանուած, յամբարտաւանութիւն, յագահութիւն, ի փառասիրութիւն, ի հեռ, ի նախանձ, և որ սոցին նման չարիք, լուծին զփեսային Քո սէրն, և զուխտն՝ որ ընդ իւրեանց. և ուսուցչին չարեաց սատանայի հարսնացան, և յիրաւի ընդունին զանվրէպ տանջանսն։ Այլ կայն թէ դառնան առ նա, և յայնմ ևս մարդասէր է տէրն, և զի ողորմած է և ոչ կամի զմահ մեղաւորին, վասն որոյ և մարմին իսկ առ, և զմահ անարգանաց մեռաւ։ Այնպէս և քեռն պութ ըստ այնմ պարտի լինել, և պարտիզին առ գործօղն պտղաբերել և ոչ օտարաց կերակուր լինել։ Այլ մեք ըզկարգ բանին լուռն հարցուք։ "Ասացի եղբօրորդւոյն իմոյ. եղբօրորդին իմ էանց, և հոգի իմ եւ ընդ բանի նորա"։ Ցէս, զի ընդ բանաչն և էանց. այսինքն, եթէ յորժամ ես ի միտս գրոց համբարձի զիմով մտաց աչս, տեսանել զնորա զանքննելի խորհրդոյ տեառնէական շնորհացն, և բացի զսիրտս ժողովել ի ներքս զսուղ տեսեալսն և քննել և տեղեկանալ և

հասու լինել խորոց գիտութեանց նորա, միայեանն յիմ տկար մտացս հասմանել՝ այնպէս զարհուրեցոյց զիս, որպէս զի ցանկութիւք այնմ մեռանել զայն՝ զոր ընկալայ զգիտուն՝ ի բանալն. յաղագս այնորիկ ասէ, թէ "էանց եղբօրորդին", որպէս թէ ընդ տեսանելն զնա՝ և փութապէս գնաց որպէս փայլակն գիւրըննթաց: "Եւ հոգի իմ գնաց ընդ բանի նորա": Այս ինքն թէ սակաւ ձաձանչ ընկալեալ զբանիցն նորա, հոգի իմ եթող զիս և գնաց ի բանս նորա: Որպէս թէ ծանեայ զնա և ի սէր նորա միացայ և ի պատուիրանս նորա եռացայ. և ի համարելն թէ հասի, և՛ս առաւել գիտացի զիս հեռի ի հասողութենէն. զի ի տեսանելն զարեգակն ճշմարիտ, ի ձեռն լուսոյն ծանեայ, թէ ոչքափ հեռի եմ ի գիտութենէն. և զմտաւ ածի զսորին իսկ զՅովհաննն զՈսկեմնի զասելն յայլում տեղւոջ, թէ "որ յաւելու ի գիտութիւն, յաւելցէ ցաւս": Այս ասելով ոչ եթէ հրաժարեցուցանէ յուսանելոյ զգիտութիւն՝ զի մի յաւելցին ցաւք, այլ յորդորէ առաւել և յաճախել ի գիտութիւն, և այնչափ գիտութիւնն իմանալ զանհաս գիտութինն այլ և միացելոյ գիտութենէն: Ի որպէս արբեալ, որչափ ըմպէ, և առաւել ծարաւէ, նոյնպէս և որ յառի յԱծաշունչ գրոց միտս, խորհի և խոկայ, որչափ ուսանի, և առաւել ցանկայ այլ և ուսանել. զի գիտէ, թէ ոչ գտանէ ըզլրումն գիտութենէ գրոց սքոց. և այն ցանկութիւն մտացն ջերեալ՝ որպէս ցաւք լինի յոգւոյն. զի ի ձեռն սակաւ հասողութենէն ձանձրէ զանբաւ միացուածոն, և ցանկութիւք այնմ գիտութենէն՝ որպէս ցաւօք վարակի. այլ ցաւքն այն և հոգւն հորդէն զառողջութիւն միտս: "Ելանդրեցի զնա, և ոչ գտի. կոչեցի զնա, և ոչ ետ ինձ ձայն": Այս վկայէ բանիցս ասացելոյ, թէ զոր գտին, և որումն բացի, առ միացելովքն այնպէս թուեցաւ, թէ ոչ տեսեալ եմ, և ոչ լուեալ իսկ զձայնն:

"Գտին զիս պահապանքն որ շրջելին ի քաղաքին, հարին վիրաւորեցին զիս, հանին յինէն զձորձս իմ պահապանք պարսպացն": Զոր պահապանս պարսպացն զս պատուոր հոգիսն զՀրեշտակս իմանալն է:

Օ՞ր յայտնէ առաքեալն Պաւղոս. „Ոչ ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ առաքին՝ ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն „: Նոյնպէս սաղմոսասուացն ասէ. „Կացցէ զսահմանս հեթանոսաց ըստ Թուոյ հրեշտակաց իւր „: Օ՞ր հրեշտակք ըստ գաւառաց և ըստ քաղաքաց պահապանք են մարդկան անհատատիցն. իսկ հաւատացեալոցն՝ ամենայն անձին մի մի հրեշտակ. և սրբոցն և առաւել, ըստ ասելոյ մարգարէին թէ „Բանակք հրեշտակաց շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա „: Արդ եթէ պահապանք են հրեշտակք, հարկանել և վիրաւորել և կողոպտել չէ նոցա, այլ գողոց և գիւաց: Արդ յայտ է, թէ հարկանել և վիրաւորել և զձորձս հանել զայն ասէ, թէ և ես անհաս եղայ, և ոչ կարացի հետազօտել խորհրդոցն իւր. սակայն յոյս ունիմ ի խնդրելն իմ, թէ գոնեա ի պահապանաց պարսպացն ուսայց ի սրբոց կամ ի հրեշտակաց, նոքա և զինքեանց նոյն կիրս կրել ասացին. և ապա յուսահատեալ իմ, իբրև լուայ ի նոցանէն զնոյն անկարուածէ իմացուածէ նոցա, և այնպէս եղև ինձ վտանգ, որպէս զայն որ վիրաւորեն և զձորձս հանեն. զի մերկացաւ յինէն պատմուճան ակնկալուածէ իմոյ: Այլ սակայն թէպէտ և սպառսպուռ բարձին զյոյս այսմ ցանկալի խնդրոյս, սակայն և ես առ յոյժ փափագմանն և տենչանաց և ծարաւմանն ոգւոյս՝ կապակցեալ սիրով որ առ եղբօրորդին, զարձեալ յաւելեալ ի խնդիրսն և ոչ հաւանեալ նոցա յանձն առաջի ունելոյն, ընդ երդմամբ արկեալ զնոսա, ասացի:

„Արդիւնեցուցի զձեզ զսահմանք Երուսաղէմի ի զօրութիւս և յուժգնութիւս անդաստանի, եթէ գտանիցէք զեղբօրորդին իմ, պատմեցէք նմա, թէ խանդակաթ եմ ի սէր քո „: Ցե՛ս, թէ որպիսի՛ անմեկնելի և անհամբերելի սէր է եկեղեցւոյ սրբոյ ընդ նմա. և վկայ այսմ բանից՝ վկայիցն հանդէսք. որք զայնպիսի տանջանսն վասն Քրիստի յանձն առին, որ արտաքոյ է տեւողութէ մարմնոյ. այլ Քրիստի նոցա յայնքան սիրոյն ջերմեռանդնութէն տեսեալ, ըստ փափագանաց նոցա՝ ետ նոցա անմահանալ ի ցաւս տան-

ջանացն . որպէս և մեղաւորացն ՚ի յաւիտենական տանջանսն , երիւք պատճառաւք : Մի զի սիրեցին սքէն՝ եթէ հնար գոյր ոչ մի անգամ մեռանել վասն սիրոյ նորա , այլ և բեւր անգամ, նա և հանապազ ջօր . որպէս և ասէին իսկ բանիւք : Որպէս և սքէն Կիրիգոր ասէր ցՋրդատ , թէ [1] " Խնդրեցի ՚ի նմանէ յերկարել ,. Այն և յիւր աղօթսն խնդրէր յայ զյերկարութիւն : Երդ զի ցանկութիւն արդարոց ընդունելի է նմա, տուկ չնորհէ նոցա : Եւ երկրորդ՝ զի և հեթանոսաց գիտուն արասցէ զսրբոցն գործով որ առ նա . և նախանձ արկցէ նոցա այնպիսի սիրով ջեռնուլ . որպէս և տայր իսկ երդումն Երկրնաոս սրբոցն . տեսեալ զնոսա յայնպիսի գառն նեղութիւն՝ ասէ , [2] " Ցաց՛ք ինձ հաւատեաւ , թէ զի՞նչ հատուցման ակն ունիք՝ որ այդչափ չարչարանաց համբերեք , թուի թէ առաւել մեծ իցէ ,, : Ասն որոյ և հաւատայ իսկ ՚ի Քն , և նոցունց նահատակիցն եղև : Իսկ երրորդն , զի և սրբոցն մնալով կենդանի ՚ի վտանգսն յայնպիսի , իմացին՝ թէ յայ է կենդանութիւն . և կենայ և մահու նա է տէր : " Երդմնեցուցի զձեզ դստերք Երուսաղէմի ՚ի զօրութիւն և յուժգնութիւն անդաստանի ,, : Ոչ այս միանգամ ցուցեալ եմ, թէ անդաստան զաշխարհս անուանէ . և ուստի աշխարհի զօրութիւն և ուժգնութիւն՝ որով հաստատեալ է, և որով պահի յանսասանութիւն, ՚ի նա տայ երդումն , որ է Քն : " Եթէ գտանիցեն զեղբօրորդին , պատմել , թէ խանդակաթ է ՚ի սէր նորա հարսնն ,, : Երդ երանի է հարցման սիրոյն այնմ անձին , առ որում գտանիցի . որպէս և պարծի իսկ Պաւղոս , եթէ " Ոչ հրեշտակք և ոչ իշխանութիւնք , և որ զկնի գայ , ոչ կարեն մեկնել զմեզ ՚ի սիրոյն Քնէ ,, : Ահա այս է սէր , որ գովելի ունի յերկինս և յերկրի այժմ, և յաւուրն Քնի . և ոչ այլանդակ սէրս կամ ընչից , կամ իշխանութեց , կամ գեղոյ , և այլ սոյնպիսեաց . որ աստ պարսաւանս բերէ, և անդ՝ անմահ տանջանս :

1 Ագաթ :
2 ՚Ի վարս նորա :

«Դատերք Յրուսաղէմի և պահապանք պարսպացն Հարցանեն ցհարանն»։ Յրդումն առեալք նոքա, Հարցանեն ցհարանն զկերպարանացն՝ որ ի մէնջ էառ, զի անտեսք են, և ի մէնջ ուսան. որ և դեռևս ուսանին, որպէս և գրեալ եմ յառաջ քան զայս։ «Օ՛ինչ է եղբօրորդին քո յեղբօրորդեաց գեղեցիկդ ի՞ կանայս. զի՞նչ է եղբօրորդին քո. զի այդպէս երդմնեցուցեր զմեզ։

«Հարանն նշան տայ զեղբօրորդւոյն։ Յղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր, ընտրեալ՝ի բիւրուց»։ Յայսու զմարմին և զարիւն մարդկութեանս զոր առ ի Ա՛ր կուսէն, ասէ, սպիտակ և կարմիր. վասն զի մարմնով և արեամբ գոյացեալ է ի կուսէն. բայց թէպէտ և այսպէս, այլ ոչ՝ի սերմանէ առն յղուեալ ունելով ածածինն, և ոչ ապականութիւն ծնունդ, այլ՝ի Հոգւոյն սրբոյ յղութիւն, և՝ի կուսէն ծնունդ, կոյս և յետ ծննդեանն մնալով նոյն կուսին դրամբք փակելով եղեալ, անհամեմատ յայլոց ծննդեանց. վասն այնորիկ ասէ, թէ ընտրեալ՝ի բիւրուց. զի ոչ երկունք՝ի ծննդեանն և ոչ ցաւք և ոչ տրտմութիւնք. այլ որպէս հրեշտակն զուրախութիւն և զերկրպագութիւն աւետարանեաց կուսին, նոյնպէս և եղև ուրախութիւն ի ծնունդն։

«Գլուխ նորա յոսկւոյն կեփազեայ»։ Որպէս ոսկին այն առաւել մաքուր է և պատուական քան զայլ ոսկի, նոյնպէս և գլուխն մեր Ա՛ր քան զամենայն մաքուրս առաւել է, որ յերկինս և որ յերկրի են։ Որպէս ասէ մարգարէն, թէ «Ա՛ղջ ոչ գործեաց նա, և ոչ գտաւ նենգութիւն՝ի բերան նորա»։ Օ՛ որ և ինքն տէրն ասէր. թէ «Ո՛՝ի ձէնջ յանդիմանեցէ զիս վասն մեղաց»։ որ և ամենայն մեղաց մաքրիչ իսկ եղև. որ և «Վտրձեալ է ամենայնիւ ըստ նմանութեանէ առանց մեղաց». որպէս ասաց առաքեալ։ «Ալարք նորա կռածոյք, սեաւք իբրև զագռաւ»։ Ըստ գրոց՝ ոչ՝ի գովութիւն կարգին են, այլ՝ի նախատանաց. բայց սա զվայելչականութիւնն ասէ՝ ըստ մեծութեամ զիջանելով. զի վարսք քաջաթուխք՝ կարի յոյժ գեղեցիկք են երիտասարդաց։ Ա՛յս և «գեղեցիկ երի՝ի տեսանել քան զամենայն որդիս մարդկան». զոր

յառաջատես եղեալ և հայր սորին Մողոմինի, ասէ։ Ընդ եթէ ոսկւով և ականջք, և որ ինչ ընդ երկրիս վայելչքս կերպաձեւեալ զդեղ եղբօրորդւոյն՝ պատմէ Հարանն, դու մի զարմանար. զի ասէ առաքեալ, Թէ «Ընդերեւոյթք նորա՝ ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին»։

«Աչք նորա ազաւնիք՝ ի մէջ լիուեց ջուրց, լուացեալ կաթամբք նստեալ՝ ի վերայ լիութեց ջուրց»։ Յայնքան, միամիտ է. որպէս գովեաց տէրն զաղաւնին, այնպէս են աչք նորա. ոչ այլ և այլ խարդախ և թիւր հայեացս ունի որպէս զմարդիկ, այլ ուղիղ ճշմարիտ և սրահայեաց. և զայս տեսանէ, զոր կրի՝ ի մարդն, և ոչ մոլարս խաբեալ յաչացն. որպէս ասէ աւետարանիչն Յովհաննէս։ Այլ և յառաջատես քան զստեղծուելն. որպէս առ մարգարէն Յրեմիա ասէր, Թէ «Ինչուան ստեղծեալ էիր, գիտեմ զքեզ»։ «Ուացեալ կաթամբ»։ Ոչ կաթինն հայեացք ոչ ըստ ջրոյն՝ կամ ըստ այլ իրաց բնութեց զայն ցուցանեն յինքեանս՝ զոր չեն. այլ միայն զիւրն ցուցանել բնութեց. ոչ այլ ինչ յինքեան կարէ ցուցնել որպէս այլ խոնաւք։ Այլ զինչ է՝ ի վերայ լիութեց ջրոյ նստեալ։ Ոչ որպէս ջուր տեսակ և հայելի լինի արեգական, նոյնպէս և որք զտեն և մաքրեն զիւրեանսն յաղտոյ մեղաց, ՝ի նոսա երևի, և որպէս՝ ի նոսա իսկ նստեալ կարծի՝ ի հայեցողսն. և լինի նա ծառ տնկեալ՝ ի գնացս ջուրց, բերել պըտուղ անթառչամ և յարատուղ անծախ։

«Ծնօտք նորա իբրև զտաշտս խնկոց բուրեն զանուշահոտութիւն իւղագործաց»։ Այս ցուցանէ զմանրապատում որոնմանէ վարդապետութեան քանս վարդապետաց, առաքնորդաց եկեղեցւոյ, որ յարաժամ անաչխատ շարժմամբ ծնօտիւ անոյշ իւղով եփեցելոյ անուշացուցանեն զմիտս և զհոգիս հուրդս մարդկան. զժողովեալսն՝ ի սիրտս սքս իբրև՝ ի տաշտս, սփռեն առաքին մարդկան. ոչ կարի խոնարհութիւն զանխմանալիսն ծածկել, և ոչ կարի յայտնութիւն զիւրալուր զհոգիս հուրդն ՚այ առնելով. այլ միջակ ուսմամբ տալ զգիտութիւն գրոց, զի մի դիւրընկալութիւն արհամարհեսցի իբրև զդիւրագիւտ իրս,

և մի անիմացուԹ֊ն անյուսասցի գԻւտ ՚ի յուսանելն կամեցողաց , այլ սակաւ Ջանիւ ՚ի յիշատակարան սրտից ժողովել զբանս գրոց ։ Դարձեալ որպէս ՚ի վեր բերելով զկերակուրս՝ անասնոց որ արածին և որոձեն , սոյնպէս և վարդապետք զ՚ի սիրտ ժողովեալսն ՚ի մտացն ՚ի վեր բերեն զհոգւոյն սքղ զբանս . և դարձեալ ՚ի վեր բերեալ և մանր ծամելով շարժմամբք անաչխատ ծնօտից , տան ՚ի բերանոյ ՚ի միտս մարդկան զլուսաւորուԹ֊ն գրոց սրբոց , նմանեալ խնկոց եփեցականաց ։ " Շ ըԹուն֊ք նորա շուշան բղխեն զմեզս լիուԹ֊ե ,, ։

Դ֊ըդ տես կրկին զգուշուԹ֊իս . զի որպէս ծնօտքն տաշտք լեալ՝ մատուռակեն զանուշահամ և զանապակ բաժակն յոգիս լսողաց բանին, նոյնպէս և շրըԹունքն շուշանացեալք՝ բղխեն զմեզս լիուԹ֊ե . զի խրատեն մեռանել ըստ մարմնոյ և մեռուցանել զանդամս մարմնոյ՝ ոչ սակաւամեռուԹ֊ե . այլ լիուԹ֊ե այսինքն կատարեալ մեռելուԹ֊ե ։ Օ խորհուրդս մտացն մեռուցանելով, ոչ խորհել զերկրաւորս , այլ զերկնայինն . զրօվայնն մեռուցանել սակաւասպիտուԹ֊ե կերակրոց . զաչսն մեռուցանել՝ ոչ հայելով յախորժակս պոռնկական տեսուԹ֊ե . այլ ՚ի գեղն ցանկալի և յերեսս փափագելի փեսային Դ֊ի՛ն , որում հարսնացեալ խակ եղաք ։ Դ֊ստ այսմ և զամենայն անդամսն խմացիս և զի՞մ զգայուԹ֊իս , որոց մեռելուԹ֊ե Ճշմարիտ կենդանուԹ֊ի սատցուք , խրատեալք ՚ի շուշանացեալ շրԹանց սրբոց ։

" Ձեռք նորա ոսկիք Ճախարակեայք , լցեալ ագամբք Յ֊արսոսի ,, ։ Տես , զիա՛րդ զմի մի անդամ ՚ի Թիւ արկեալ բացայայտ գովուԹ֊ե՛ն Օ ի որպէս Ճախարակեալ անօԹք ամենևին զտեալ և մաքրեալ են ՚ի զազրուԹ֊է և ՚ի տգեղուԹ֊է , սոյնպէս և եղբօրորդւոյն ձեռնն մաքուր ՚ի մեղաց իբրև զոսկի ։ Դ֊է զինւն միայն ունելով գործք , որպէս ձեռք մարդոյ , այլ ակամբք Յ֊արսոսի լցեալ . ըստ այնմ որ Յ֊ովհաննէս կիւելն ասէ , Թէ " Դ֊ի են աչօք Թևք նոցա ,, ։ Դ֊ըդ եԹէ սպասաւորացն ՚ի՛ն հրեշտակացն ամենայն անդամք ակն են և լի տեսանողուԹ֊է , ո՛րքան առաւել Դ֊տուծոյն մարմնացելոյ բանին Դ֊ի՛ն , որ Թէպէտ և

զմերս Հառ բնութե՛ի կուսէն, այլ ածային բնութե՛ն միացեալ, ամենայն անդամ ակն է և տեսանող. որպէս ասէ լուսաւորիչն մեր Կրիգոր, եթէ՝ «Ի՛ն ամենայն իրօք լուր է, ամենայն իրօք տես է, ամենայնիւ բան է»։ ոչ որպէս մեք՝ որ առանձինն ունի իւրաքանչիւր անդամ զիւրաքանչիւր գործ. ոչ ակն լսել կարէ, և ոչ ունկն տեսանել. ոչ բերան գնալ, և ոչ ոտն խօսել. և որ այլ անդամոյն գործ։ Այլ Թէպէտ և մերովս միացաւ մարմնով, սակայն բաւանդակ ընդ իւր ունի զածութե՛ն զամենակարողութե՛ն և զամենատեսութե՛ն։ «Արուեստն նորա տախտակ փղոսկրեայ ականակապ շափիղայ»։ Յուցանէ զածային որովայնն ոչ որպէս զմերս կերակրոց միայն ընդունօղ և ըմպելեաց, այլ Թէպէտ և մերովս կերակրեալ, այլ տախտակ փղոսկրեայ է յականակապ շափիղայէ. այսինքն ամանն ածային դոլրութե՛ց և զրչութեանց։ Օ՛ն Թէ որ Հաւատայ ի՛ նա, ածային ստանայ որովայն, և գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ կենդանութե՛ն. ապա ո՛րքան ածայինն այն որովայն ընդունակ կրից մարմնականաց, և ժողովարան իբր տախտակ իւրոց ածային իմաստից է, որ և անապական է. որպէս փղոսկրն անփուտ ասեն լինել։

«Արուինք նորա սիւնք հ՛ձեայք հաստատեալք ի՛ վերայ ոսկեայ խարսխաց»։ Ցե՛ս, որպէս ձշգրտիւ զտնօրէնութի՛ն Աստի ածայինն Յողոմոն՝ բանիւ հարսինն նշան տայ զեղբօրորդւոյն զկատարեալ մարդկութե՛ն լինելոյն ածութե՛ն։ Ա՛մենեսեան պեղծն Աեստորիոս, որ եղծիչ է եկեղեցեաց և Հալորդ Հրէից, և մահմետականաց Հաւատոյ խորհրդակից։ Օ՛ն կամեցեալ ձշգրտել զածային տնօրէնութի՛ն՝ անօրինել և միացեալ, անդամ անդամ, և ընդ զգայարան զգայարան՝ զածութե՛ն խառն գուշակէ։ Ի գլխոյն առեալ սկիզբն, և ընդ ամենայն անդամն անցեալ. որով կարկի բերան պղծոյն։ Ա՛րդ կ՛ձեայ և ոսկի խարիսխ սեանցն ո՛վ է, Թէ ոչ ածութե՛ն միացեալ ընդ մարմին՝ անապական մաքուր և անախտ զօրու-

1 Ագաթ։

թէին ։ « Հասակ նորա իբրև զ Իբանան , ընտրեալ իբրև զմայրս »։ Օ ինչ դուշակէ այս՝ ասելով մի անձն զծածկին մարմնոյն , զիմաստ մարթի նմանիլ մայրիցն Իբանանու բազմութեն , որ յառաջ քե- րէ վասն բազմութե մայրիցն, թէ « Երդարք որպէս զարմաւենիս ծաղկեսցին . որպէս մայրան Իբանա- նու բազուկք եղիցին »։ Եթէ ոչ յայտնապէս աղա- ղակէ մաւուրաց և անզգայից , թէ և՛ի մարմնի փակեցաւ յաղագս խառնմանն , այլ զօրուէ և հա- սակն բարձր քան զմայրսն Իբանանու և բազում։ Ա՛ւ եթէ միայն այնչափ զօրութեին և բարձրութեին է , այլ զի մերս առեալ , ՚ի մերոցս պարտի օրինակ բերել։ Որպէս և մարգարէն ասէ, թէ « Յաթոռն Դաւթի նստցի . և զարքայութե նորա յաջողեսցէ ։ Նմանպէս և Դաբրիէլ ասէր ցկոյս , թէ « Տացէ նմա տէր Ած զաթոռն Դաւթի հօր նորա . և թա- գաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակովբայ յաւիտեանս »։ որ ամենայն երկրի էր թագաւոր , Յակովբայ միայն ասէր՝ ըստ մեզ զինջանելոյ ։

« Կոկորդք նորա լի քաղցրութե »։ Քաղցրութե , զայն ասէ զլի քաղցրութե բարբառոն Ածային կո- կորդին . ընդ որ աղաղակ բարձեալ ասէր ։ « Կեայք առիս ամենայն աշխատեալք և բեռնաւորք . և ես հանգուցից զձեզ »։ Եւ դարձեալ, թէ « Ա՛ւ եկի կո- չել զարդարս , այլ զմեղաւորս »։ Եւ որ այլ սոյն պիսիք քաղցրութե նորա կոչմունք առ մեղաւորս , և ամպարիշտս։ Որպէս և ասէր ցպառնիկ կինն, թէ « Ծողեալ լիցին քեզ մեղք քո »։ Եւ ցմիւս պոռ- նիկն , թէ « Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ, երթ յայսմ հետե մի մեղանչեր »։ « Եւ ամենևին ցան- կալի »։ Տես , ամենևին ցանկալի , ասէ . այսինքն թէ ամենայն ցանկութե գեր ՚ի վերոյ է . յորում պա- տի ցանկութի դադարէ . զի ոչ գտանի առաւել քան զցանկութի ցանկալին ։ Ըստ որում տէրն ասէր , թէ « Խաղաղութի մարգարէք և Թագաւորք ցանկացան տե- սանել զոր տեսանէք դ, և ոչ տեսին . և լսել զոր լսէք դ , և ոչ լուան »։ Ըստ որում և այլուր ասէ տէրն ցաշակերտան . « Երանելեացն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել, և ոչ

կարասջիք տեսանել»։ Որոյ տեսուԹԵ ցանկացեալ մաքսապետն Զաքէոս, և հոգևորապէս տեսեալ զնա մարմնով ծածկեալ, ՚ի բաց մերկացաւ յիւրմէ զգեաւս և վազեաց, դիտացեալ ցանկալի միայն զինքն զտերն։ Որ և առաքեալքն տեսեալ զամենևին ցանկալին, որպէս տեսանել արժան էր, Թողին զամ ինչ, զկին և զորդիս զհայր և զմայր և զինչս և որ ըստ այսմ ևս, և գնացին զհետ նորա։ Ի ստուգապէս ծանեան, Թէ նա միայն է ՚ի տեսողուԹիս ցանկալիս՝ Ձիմարիտ։ Որում և Հերովդէս ՚ի բազում ժամանակաց ցանկացեալ էր տեսանել զտերն. այլ զի կուրացեալ հոգւոյ աչքն՝ մարմնոյ աչացն տեսուԹեն՝ որ մեղօք խաւարեալ էր, անարգել զգանկալին ուսուցին։ Որ և այժմ ևս հանդիպելին յանարժանս նորա գործոցն հրաշիցն տեսուԹէ, ոչ տեսանել որպէս արժան է. զի կուրացեալ է առաջնորդական միտն։ «Ա՛յն է եղբօրորդին իմ, և այն մերձաւոր իմ, գտերըք Երուսաղէմի»։ Որչափ կարըեր, զառաւելեալն քան զբանս և զօրինակս եղոյց գտերացն Երուսաղէմի զդեղեցկուԹ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան։

«Հարցանեն գտերըք Երուսաղէմի՝ ո՞ր գնաց եղբօրորդի նորա։ Ո՞ր գնաց եղբօրորդին քո, գեղեցիկդ ՚ի կանայս. ո՞ր գնաց եղբօրորդին քո. և խնդրեսցուք ընդ քեզ»։ Ա՛ստանօր գտերս Երուսաղէմի՝ զհրեշտակս ասէ, զվերինն Երուսաղէմի զընակիչսն։ Ա՛յլ՝ տէս դու, զի զանտեսանելին իւրեանց, որ մեզ տեսաւ ՚ի մարմնի եղեալ ընդ մեզ, ցանկան տեսանել մարմնով. զոր և ՚ի մինչ խակ ուսան, և դեռ ևս ուսանին զնորա խոնարհումն յերկնից և զմարդեղուԹին։ Որպէս ստուգ առաքեալ, «Ո՛ի յայտնեսցի արդ իշխանուԹեցն, որ յերկինսն են, ՚ի ձեռն եկեղեցւոյ»։ զնորա փրկուԹենաբեր տնօրէնուԹիւնն ՚ի մինչ լուեալ գիտունք լինին. և աքանչացեալք անբաւ զարմացմամբ ընդ անչափ սէրն որ առ մեզ և ընդ անխմանալի խոնարհումն, ընդ մեզ միաձայնեալ օրհնեն, և տօնակից ընդ մեզ լինին. որպէս և բացայայտեն վարդապետք։ Ա՛յլ որ «դեղեցիկդ ՚ի կանայս» զՀարսնն կոչեն, յաղագս

դեղեցիկ վարուց՝ զոր ստացաւ եկեղեցի Քրիստի գալըստեամբն. և զի զհարսին ունիմք զօրինակ։ Այսպէս և կանայս ասէ, զի հարսնուքի կանանց է։

2. «Աղբօրորդին իմ էջ ի պարտէզս իւր»։ Պարտէզ՝ զհաւատացեալս ասէ, որ հարսնացան Քրիստի։ Որպէս և ի միւսում տեղւոջ այգի անուանէ հայր սորուն Սողոմոնի. նոյնպէս և Նսայի։ Այլ ինքն իսկ եղբօրորդիս Քրիստ ասէ յաւետարանին, թէ «Ես եմ որթ, և դուք ուռ»։ «Աղբօրորդին իմ էջ ի պարտէզս իւր ի տաշտս խնկոց, հովուել ի բուրաստանն, և ժողովել ի շուշանս»։ Որ պարտէզն է, նոյն և բուրաստան կոչի. և որ եղբօրորդին՝ նոյն և հովիւ լինքեանէ անուանի, ասէ լով. «Ես եմ հովիւն քաջ»։ Այլն հովուել և արածել զոչխարս՝ ոչ ևս ագահ հովուօք հովուիլ. որպէս և ասէ Աղեկիէլիս մարգարէիւ. Որ զարօտն արմտիս նախ ինքեանք ուտէին, և զյատակ ջուրս նախ ինքեանք ըմպէին, և զմնացեալն յինքեանց զընդգետինս հարեալսն զդարմանան և զկոխեալ ի կձղակացն զպղտորեալ ջուրսն Թողուին հօտին, և զգերսն ի նոցանէ զենուին, և զվատեալսն ոչ յանձանձէին, և որ այլ այսպիսիք բանք, զոր մարգարէիւքն բողոքէ զանօրէնութէ հովուացն։ Այլ զինքն լինել հովիւ ասէ սովիմք մարգարէիւ, որ ձարտարութիւնք արածէ և յանձանձէ, և ոչ տայ գողոյ ապականել, այլ առաքինութէն և արդարութէն ջամբեալ մեզ՝ ժողովէ ի մէնջ շուշանս. այսինքն, զծաղիկս հաւատոյ բանին և զսրբութէն, որովք զուարճանայ փեսայն Քրիստ։

«Ես եղբօրորդւոյն իմոյ, և եղբօրորդին իմ ինձ՝ որ հովուէն ի մէջ շուշանաց»։ Այսու բանիւք յայտ առնէ հարսնն զչերին սէրն զոր ունի առ եղբօրորդին. և ոչ կամի քակել ի հովուութէ նորա, և զհետ օտարի յօտար արօտս երթալ. որպէս և ասայ ինքն եղբօրորդին Քրիստ. «Ակնարք իմ ձայնի իմում լսեն, և զկնի իմ գան. զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ»։ Ո՛ի աչս տեսանողս ստացեալ հօտին, շուշանաբոյծ հովուին հետևեալք, որ ձա-

բակ նախ և առաջին զևւր մարմին և զարիւնն տայ, և ապա զանպատմելի բարութիւնն։ Այս՝ զհամեղուԹիւ գրոց իմաստից, որ քաղցր են ի քիմս սրբոց քան զմեղր բերանոյ. և անդ՝ զայն որ արտաքոյ է իմաստից, որ է ըստ Ճաճաբանի ասելոյն [1], նորա ուսուցանելն, և մեր ուսանելն. զոր և ինքն իսկ ասաց նոր ըմպել ընդ ձեզ յարքայուԹիւն հօր։

"Ցեսայն ցհարսնն ասէ։ Պատեցիկ ես մերձաւոր իմ իբրև զանուշահոտուԹիւն, գեղեցիկ ես իբրև զԵրուսաղէմ, իբրև զհիացումն կարգեալ։ Պարձո զաչս քո յինէն. վասն զի դոքա ընդոստուցին զիս։" Տես աստանօր զանբաւ գովուԹիւն հարսինն որ ի փեսայէն։ Օ՜ի տեսեալ զհարսնն ճանուցեալ զփեսայն, զոր և Թուեաց գովուԹիւք զմի մի զգայարան մարմնացելոյ բանին անճառապէս սքանչմամբ, և որչափ հնար էր՝ մերովքս երևեցելովքս և ապականացուովս ձևացուցեալ զփափաքելին, զարտաքոյ մերոյս բնուԹենէ և երևելեացս և ապականացուիս ծանուցեալ զգեղեցկուԹիւն, որքան ուսանելն փափաքելին, և զտարփումն անյագ սիրոյն որ առ նա, երանելի և փեսայն Քն՜ ՅաճայԹն բերանովն զհաւատաս հարսինն և զգեղեցկուԹիւն՝ յոր փոխեցաւ աւազանաւն ըստ իւրաքանչիւր անգամոյ և զգայուԹեաց. զի եղև ատուգապէս, որպէս ասաց Յաճաբան [2], առ Յած հայելովն՝ Յաճանալ. ցուցանէ, Թէ զ՜ստուածոյն առնուն զգեղեցկուԹիւն՝ որք ի նա հային և ի նա մտանեան. որպէս պատրոյգն ի ձրագն մերձենալով՝ ի նոյն լոյս փոփոխի։ Զ՜րդ զոր հարսնն [3] ետ նշան զգեղեցկուԹենէ փեսային և եղբօրորդւոյն, նոյն լեալ և ձևացեալ զհարսնն՝ փեսայն գուշակէ, ասելով. "Պատեղծիկ ես մերձաւոր իմ՝ իբրև զանուշահոտուԹիւ". տես մերձաւոր լինելովն փեսային Քն՜ի՝ հարսնն, յաղագս այնորիկ եղև գեղեցիկ իբրև զանուշահոտուԹիւ։ Օ՜ի որպէս որ յանուշահոտ մերձենայ, անուշահոտի՝ նոյնպէս և որ առ Յած մերձենայ, Յաճանայ։ "Պա-

1 Ճաւ. ք. ի Պապքայն։
2 ի Ծնունդն Քրի։
3 Օրինակք հարսն։

ղեցիկ ես մերձաւոր իմ իբրև զԵրուսաղէմ»։ Ո՛վ քնակարան եղև փեսային գեղեցկի՝ որպէս զերկինս և զվերինն Երուսաղէմ։ «Իբրև ղՀիացումն կարգեալ»։ Այսինքն Թէ՝ ի Հիացումն կարգեցար. զի տեսանելով զփոփոխումն քո՝ ի սեւութէ մեղայն, զոր ունէիր յառաջ քան յիս մերձաւորիլն, յայնպիսի աքանչելաւեսիկ գեղ ամբծուէ, ընդ որ Հիանամ. և հրեշտակաց Հիացումն լինի որպէս տերն Հիացաւ իսկ ընդ Հաւատս Հարիւրապետին, և ասէ, Թէ «Ես ոչ յԱ-րայելի այսպիսի Հաւատս գտի երբեք»։

«Վարձո զաչս քո յինէն. վասն զի դոքա ընդոստուցին զիս»։ Այսինքն, աչաց քոց յատակատեսութէն և ստուգատեսուէ որ յիս, որ իմացար զիմ անօրինական գեղեցկութիս, որ՝ ի տկար և՝ ի հողեղէն բնութէ եղայ, որ հրեշտակաց անիմանալի էր, և դու իմացար և տեսեր՝ ի վեր քան զբնութէ տեսուէ զիս, ընդոստուցին զիս այդ աչք։ Վարձո զաչս քո յինէն՝ ի խուզել զիմ զանհաս բնութեանս զգեղեցկութէն, զի մի յառաւել տեսանելն և յամել՝ ի քննելն՝ շլասցին և կուրասցին մտաց աչքդ. որպէս Պաւղոսին մարմնոյ աչքն՝ ի հայելն՝ ի սաստիկ լոյսն։ Ո՛վ որպէս յարեգակն պչնուչն՝ պակասումն ընձեռէ աչաց հայեցողին, նոյնպէս և աւելի քան զչափն յառիլ՝ ի խորս գիտութէն այ, շլացումն մտաց աչացն բերէ. վասն զի որչափ էն այծ տեսութէք և զօրութէք և սքանչելագործութէք, ոչ կարէ ոք հասանել. որ և հրեշտակաց անհասանելի է, Թող Թէ մարդկան։ Այդ վարձո զաչս քո յինէն ասէ փեսայն Քրիստոս. զի դոքա ընդոստուցին զիս երկիւղիւ և սքանչմամբ։ Սքանչմամբ, յաղագս սրահայեցութեց. և երկիւղիւ, Թէ գուցէ յառաւել հայելդ կուրասցիս։ Ցա և Սովսէս՝ ի սակաւ ինչ տեսանելն զարձոյց զերեսս իւր և ոչ իշխեր հայել։ Նոյնպէս և Ղևիա ծածկեաց մաշկեկաւն զերեսն՝ ի տեսանելն զԱստուծոյն միայն, որպէս Թէ ձայնի արձագանգ միայն։

«Սրսք քո իբրև զերամակս կտրելոց, որ ելևեցան՝ ի գաղայադէ։ Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց, որք ելանեն՝ ի լուալեաց»։ Սրսքն

հպելով ի վարսն փեսային՝ որ վասն մեր սևացաւ և զմերս յինքն էառ, «որ ոչ գիտեր զմեզս՝ վասն մեր մեղս արար, զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն»։ Եւ արդարացաք սպիտակացեալք մկրտութիւն և լուացմամբ աւազանին. ի Յաղայադէ երամակացեալք քաղմութեամբ հաւատացելոց ի Քրիստոս հարանացելոց։ Եւյոյնպէս և ատամունք մանրօղ բանին կենաց՝ իբրև զերամակս կարելոց, որք ելանեն ի լուալեաց հոգևոր ջրոյն, որ լուանայ և մաքրէ առաւել քան զոչխարս մաքրեալս։ «Եվենեքեան երկուորիք են, և անորդի ոչ գոյ ի նոսա»։ Ոյս լուալեաց երամակաց հաւատացելոց՝ յառաջագոյն և Եսայիաս վկայէ. «Արբուխ լեր ամուլ, որ ոչ ծնանէիր. գոչեա և աղաղակեա, որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբոյն»։ Եւ սու զքաղմածնունդ լինել ի յուղղութիւն վարս՝ ըզհեթանոսաց քաղմութեան հաւատացելոց գուշակէ։ Որպէս և ի միում վայրի սոյն մարգարէ Եսայի ի բերանոյ Տեն վերաձայնեալ աքանչելմամբ հարցանէ. «Ո՞վ են սոքա, որ իբրև զամպս թռուցեալ են, և իբրև զաղաւնիս ձագախառն երամովին գան առ իս։

«Իբրև զլար կարմիր են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկ, իբրև զկեղև նռան այտք քո, բաց ի լռութիւնդ քումմէ»։ Ոյս յառաջագոյն քան զայս ասացեալս դարձեալ երկրորդեաց զգովութիւն հարսինն, մերձենալովն ի փեսայն։ Եւ ցայն յաչսն ածայինսն, վարսից ի վարսն լուսաւորսն, գլխոյն ի գլուխն Քրիստոսի, շրթանցն ի շրթունսն, որ բղխեաց զկենդանութիւն. զի կարմրացան շրթունքն արեամբն Քրիստի, և զնոյն խօսին զոր ինքն ուսոյց խօսել, աղօթս առնել թշնամեաց և օրհնել զհալածիչսն, և որ նոցին նմանք։ Եւ որպէս նուռն կարմրութիւն կեղևոյն զի ներքս հմբաւրեալ անուշակերակրութեին՝ առ ի յառողջութիւն ախտացելոց և փափագողաց հայեցուցանէ լուծիչ, սոյնպէս և ընտրեալք այ սակաւ ինչ յերևելիս տեսողութիւն երևեցուցեալ զբարի գործս, զի ներքս ի սիրտն և ի միտսն զանչափ առաքինութիւն և ածասիրութեան համբաւս լուսաբեամբ ծանուցանեն. զի և իմաստութեամբ հետազօտեալ ի

մարդ՝ ի դիմայն երևի : Այս է որ ասէ, Թէ " բաց
ի լուսնէդ քումմէ ,, : Ահա որչափ ես գեղեցիկ զա-
նազան զգայութիւնք լեալ և զարդարեալ լուեալ ես,
և անպատմելի մինչև յօրն, որ ամենայն խորք ի վեր
գան , և անտեսանելիք ի տես գան , և լուեալք լսին.
զոր ինքն փեսայն յահեղ ատենին հրեշտակաց և
մարդկան ցուցանէ : Արդ սակաւ ինչ Թուելով
զբազմութիւն սրբոցն ծանուցանէ , որ յայս վեց հա-
պարեան դարուս զտեալ մաքրեցան ի մեղաց՝ նեղու-
թիւք և պէսպէս փորձութիւք , զոր կրեցին ի սատա-
նայէ և ի սատանայացելոց ի մարդկանէ , և եղեն
Թագուհիք և հարսնք և օրիորդք փեսային Քրիստոսի
ըստ իւրաքանչիւր ջանից և քրտանց , անուանեալք
և լեալք Թագուհիք և հարսնք և օրիորդք , զոր և
ասէ իսկ :

" Ալաթսուն են Թագուհիք և ուԹսուն հարսնք ,
և օրիորդք որոց ոչ գոյ Թիւ ,, : Այսու զբազմութիւն
այնց բացայայտէ , որք յուԹերորդին փառաւորին
ընդ Քրիստոսի , և ուրախանան հանգստեամբ ընդ նմա .
իբրև Թէ ընդ նմա աշխատեցան ի վեցդարեան ժա-
մանակին իւրեանց , որպէս ասէ սբ Յ ուսաւորիչն
մեր [1] , և ընդ նմա են ուրախանալոց : Ալաթսուն
Թիւքն զերկուս միտս իմանի . և զի վաԹսունն ի վեց
տան և ի հինգ երկոտասան մասունս բաժանի :
Այս հինգ երկոտասան ցեղիցն Իսրայելի՝ ասէ . յո-
րոց ի վեցհազարեան դարուս հինգ զգայարանաք ե-
ղեն ընտրեալք ի նոցանէ , և յաղագս անդրանկու-
Թէ կոչեցան Թագուհիք , զի յառաջ քան զՀեթա-
նոսս հաճոյացան ՚ի : Որպէս և ասէ ի Յովհաննու
աւետարանչի տեսլեանն՝ զամենայն ցեղ ուրոյն ու-
րոյն Թուելով երկոտասան հազար ի մի մի ցեղէ :
Այս ուԹսուն հարսն և օրիորդս անԹիւս զայնոսիկ
ասէ , որ ի հեթանոսաց հաճոյացան ՚ի : Այսու հա-
մարով ոչ եԹէ ընդ համարով փակէ զնոսա , այլ որ-
պէս ի միակն, նոյնպէս և ի տասնեակն ցուցեալ
բացայայտէ , և անԹիւ ցուցանէ զարդարացեալսն
ի հեթանոսաց՝ քան ի Հրեից Քրիստոսի գալստեամբն :

1 Ագաթ :

Այս երկրորդն, վաթանիւն զվեց հազարեան դարուն ասէ. և որ ՚ի նոսա բազում քրտամբք և աշխատու-թիւք փորձեալ՝ որպէս արծաթ ՚ի բովս, որպէս յա-ռաջն ասացի, առին զթագուհւոյնէն անուն՝ վասն առաւել սիրելի ոյ լինելոյն։ Որ աստ խակ փառա-ւորեցան ՚ի մարդկանէ, և անդ առաւել ևս փառա-ւորելոց են։ Որպէս ՚ածածինն և Յովաննէս մկըր-տիչն, և նախավկայն, և առաքեալքն, և մեր լուսա-ւորիչն Գրիգոր, և վարդապետն տիեզերաց Յոհան, և երրորդութենէն ծանուցիչն ՚ածաբան։ Այս ուրեմն հարիւք, որ կրտսերագոյն քան զնոսա են վաստակօք, բայց առաւելագոյնք քան զօրիորդսն են՝ որ յու-թերորդին են պսակելոց ուրեմն հարիւքն։ Այս որ զա-նազան վարուք և ապաշխարութեամբ զհաշտութեն գտեալ են, և արքայութենէն հասանեն յութերորդին, օրիորդք կոչին՝ որոց ո՛չ գոյ թիւ. զի անչափ են ա-պաշխարութենէ փրկեալքն։ Օ՛ի հարիւս՝ զմարտիւ-րոսս կոչէ, և օրիորդս՝ զՀնաւորս և զապաշխա-րողս զաղքատացեալս մարմնով, և որ ՚ի ժամ ելա-նելոյն յաշխարհէս գտանեն արտասուօք և ապաշա-ւանօք զթողութի մեղաց և զարքայութինն՝ հաղոր-դութեամբ մարմնոյ և արեանն Քրիստի։ Այս և սո՛ր առաւաւորիչն[1] կարգ մի զապաշխարողսն և զնոս-տովանողսն համարէ և որ ՚ի ժամ ելանելոյն գառ-նան, ՚ի թուել զմարտիւրոսս և զՀնաւորս և զվար-դապետս և որ այլն ևս, և թիւ մի զնոսա դնէ։ Ընդ յերկուցդ զինն՝ որ հաճոյն թուի քեզ, ընկալ. և կամ զերկոսինդ ևս, զի միաք գրոց ՚ի բազումս մեկնին։

" Ումի է աղաւնի իմ կատարեալ իմ, մի է մօր իւ-րոյ, ընտրեալ ծնօղի իւրոյ ,, ։ Տե՛ս, թէպէտ և այլ և այլ են անուամբ թագուհիք և հարիւք և օրիորդք, և որ ըստ անուանց և փառաց, այլ ըստ աւազանին և ըստ խոստովանութենէն արտասուաց մի են, աղաւ-նիք լեալք մօր եկեղեցւոյ, մի լեալ որդիք և ծնօղի հոգւոյն սրբոյ։ Ումանն այսորիկ ասէ. " մի է աղաւնի իմ կատարեալ իմ, մի է մօր իւրոյ, եկեղեցւոյ, ըն-

1 Յաճախապատում. Ձառ. ԺԷ. : ԺԸ. : ԺԹ. : Ի՛. :

տրեալ ծնողի իւրոյ, հոգւոյն սրբոյ ծննդեամբ աւազանին։ Ի ծնանի հոգին նոր վկրտութեամբ և մնուցանէ եկեղեցի մարմնով և արեամբն Քրիստի։ Ոսոյն և Յասիլիոս վկայէ ասելովքն.[1] "Նոյնպէս և Ձեմարիտ մայրս ձեր եկեղեցի կոչեաց զբազմութիւն հնազանդ և կամարար որդւոց, զհաւատացեալսդ առեմ զժողովոց։ Եւ յառաջ երթեալ, ասէ, Քանզի զի սիրուն հօր և հաւատացեալ մոր, այսինքն ով և եկեղեցւոյ՝ հաւատացեալ գոլով որդիք, սէր անխախտելի առ հայրն ձեր պահեցէք. և նայեցեալք ի սրբոցն ժողովս, որ են գանձք ձերոյ մոր եկեղեցւոյ, բերկրեալք յուսով ուրախութեամբ ցնծացէք. որպէս զի հնորհքն՝ որ զնոսայն լուսաւորեցին, և զձեզ արժանի արասցեն հասանել ի մանն վիճակի ժառանգութեանց սրբոցն ի լոյս" Եւ յառաջ երթեալ՝ ասէ, Ստեփանոս սրբոյ մոր եկեղեցւոյ նոր որդի և պարծանք միանգամայն լուսաւորեալ նորա։ Ցնս զի զեկեղեցի՝ զոր հաւատոց մայր ասաց, զնոյն և Ստեփանոսի ասաց և այլ սրբոց առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց և ամենայն հաւատացելոց։ Ի թէ փառաւք ոչ են մի սքքն, այլ մի են ծնունդք նոր եկեղեցւոյ. և յայսմ եկեղեցւոյ ի մի եկեղեցին փոխին ի վերինն Երեմ։ Ոան այսորիկ պիտոյ է զեկեղեցի առաւել սիրել քան զմարմնոյ ծնօղս՝ վասն առաւել ծնողութեն։ Ի որպէս հոգի առաւել է քան զմարմին, նոյնպէս և հոգւոյ մայր՝ քան զմարմ նոյ մայր։ Քրդ որպէս որք ի մօրէ կաթանցն և ի մանդենէ նորա օտարանան, և զմահ կրեն, նոյնպէս և որք յեկեղեցւոյ և ի նորա ստեանցն և ի հոգևոր կերակրոցն ի գրոց, որ է ստինք եկեղեցւոյ, օտարանան և ոչ փափաքմամբք և բաղձանօք մտանեն ի նա և կերակրին ի նմա գրովք, ոչ կարեն կեալ, այլ մեռանին զանմահ մահն։ Ի այսոսիկ և մարգարէն տեսանելով ասելով. " Ոտար եղեն մեղաւորք ի մօրէ, խաբեցան յարգանդէ և խօսեցան սուտ"։ Այսինքն զդաւանութիւն և զուխտն զոր ուխտեցին ի ծննդեան աւազանին, սիրել զՀայրն

1 Կերքող ի սուրբն Ստեփանոս։

ած և զմայրն եկեղեցի, ստեպին և օտարացան։ Ո՛ի զոր արտաքոյ գտեալ սատանայի՝ ՚ի մօրէն որ է եկեղեցի, գերի առեալ տանի, որպէս զմարդավաճառ, որք գողանան զմանկունսն՝ զոր հեռագոյն ՚ի ծնօղացն գտանեն։ Այսպէս զաղօթսն զոր յեկեղեցւոջն պարտ է առնել առաջի սեղանոյ նորա, ուր ՚ի նմա բորդուածին բնակեալ է, զայն ՚ի գռեհս և ՚ի հրապարակս և յանստուերք տեղիս պաշտեն, և զեկեղեցւոյ պատիւն գռեհացս և փողոցացս տան. որ դատապարտուածի, և ո՛չ ողորմուածի գտանեն վասն այսր յանցանացս, որ զեկեղեցի արհամարհեն և արտաքոյ զպաշտօնն կատարեն. բազում բանից՝ և ողբալից աւաղանաց պէտք են, որ զայսոսիկ առնեն, և այլ ժամանակի պէտք են ասելոյ, զի չի՛ փոքր ինաս այն։ Այլ մեք դեռ զառաջիկայ բանս մեկնեսցուք։ “Տեսին զնա դատերքն, և դովեցին. Թագուհիք, և երանեցին նմա ,,։ Դատերքն և Թագուհիքն տեսին զՀարսն և երանեցին նմա։ Այս՝ դատերս և Թագուհիս՝ զժողովս հրեշտակաց կոչէ, զեկեղեցիս անդրանկաց գրելոցն ՚ի յերկինս։ Տե՛ս, որպիսի՛ փառաց եհաս մարդս, որ հրեշտակք՝ որ անմահութիւնք և լուսեղէնք փառօք են պատուեալ և գերագոյն բնութիւնք հոգիացեալք և մերձ յԱծ են, մարդկան երանեն։ Այլ յիրաւի՛ իսկ, զի ընդ մարդկան Ած. այլ և մեր բնութիս Ած լեալ ևս և ընդ այ միացեալ, և հրեշտակաց Ած։ Այլ հրեշտակք ահիւ և դողութիւք մեր Ածացեալ բնութես փառաբանիչք և երկրպադուք և դողութեամբ հայեցողք։ Ո՛ի զԱծ ո՛չ ոք ետես երբեք. և որ յԱծն միաւորեցաւ մեր բնութիս, յաղագս միաւորուեն և նա անտեսանելի է ՚ի հրեշտակաց։ Այլ զարձեալ հրեշտակք՝ որ անմարմինք են, ծառայք այ կոչին. և մարդիկ որ հողեղինք են, հոգւոյն սրբոյ ծնունդք և որդիք անուանին. և կերակրօղք մարմնոյ և արեան նորա. և ՚ի մեզ առնելով զայն՝ որ նոքա հուպ լինել չիշխեն և ոչ հայել կարողանան, ապա յիրաւի կարօտին մեզ հրեշտակք, նա և նախանձին ընդ մեր անչափ ձիրն, որ տուաւ ՚ի փեսայէն. որպէս ասէ Պօղոս առաքեալ բանիւն յաւետարանն՝ անդրանկին որդւոյն բանիւ, որ են հրեշ

տակը, Թէ " Ի՞նչքանի ամբ են, զի ծառայեմ քեզ, և երբեք զպատուիրանաւ քոյ ոչ անցի. ուր մի երբեք ոչ եառուր ինձ, զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. և դմա, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեզն պարարակ զնեսը ,, , այսինքն զորդին այ զնեալ մարմնովն՝ զոր ի մէնջն էառ: Այս և սպասաւորք եւս մեզ եղեն վերագոյնքն քան զմեզ, որպէս ասէ առաքեալ. " ոչ ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորուն այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն ,, : Ի՞րդ յերանելն զՀարսնն դստերքն և Թագուհիքն՝ ասեն.

" Ո՞վ է սա՝ որ երևեալս է իբրև զառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն, իբրև զհիացումն կարգեալ,: Այս արդարև հիացումն է ի հողեղէն բնութէ այնպիսի լինել իբրև զառաւօտ և իբրև զլուսին և իբրև զարեգակն կարգեալ ի հիացումն հրեշտակաց: Ի՞սյամ և ասէն վկայէ, ասելովն, " Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութէ երկնից ,, : Այա եւս առաւել քան զարեգակն ծագեսցեն արդարքն. բայց զի յերկրի քան զայս ոք չիք պայծառագոյն, վասն այսորիկ սովին կերպիւ գովին արդարքն:

" Ցետայն ցՀարսնն ասէ, ի պարտէզս ընդուզեացն իջի հայել յարմտիս ուղխից. տեսանել՝ եթէ ծաղկեաւ իցէ նռէն, ծաղկեաւ իցէ որթ, ծաղկեաւ իցեն նռնենիք ,, : Ի՞սյա քննելի է յոյժ. զի պարտէզ ընդուզեաց ասաց զՀարսնն, և զայլ բերոյ խնդրեաց զտեսութէն ծաղկաց և ոչ պարտիզին. զորթոյ, զնռէն, և զնռնենւոյ: Ի՞րդ ինձ այսու իմանի՝ ընդուզեաց պարտէզ զերկիր ասել. և զմարդիկ բնակող սորա՝ ընդոյզ կոչէ. զի երկու բնութէ է ընկոյզն զանկեալ, մի՝ փեճեկոնն, որ ունի զփայտի բնութէն. և մի՝ որ ի ներքս պարարտութէն, զի և հոգի որ պարարտ է զօրութէ, մարմնով պատեալ է. բայց թէ միաբանին յարդարութէն, և ոչ լինին հակառակ իրերաց, որպէս առաքեալ ասէ, Թէ " Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ և հոգի հակառակ մարմնոյ. և զի սոքա միմեանց հակառակ են, մի զոր կամիցիքն՝ զայն առնիցէք ,, : Ի՞րդ եթէ ի հակառակացն դարձեալ միա-

բան գտանին իրերաց, ըմպելով զուխս հոգւոյն, արմտիք լինին ծաղկաբերք և վայելչական գեղեցկատեսութիւն. բարձրանան իբրև զնոճ, և անապականանայ մարմինն իբրև զհոգի, և որթ լինի գինեբեր, զի՝ ի բաժակ երկնաւոր փեսային Ամէնեցի ողկոյզն, և կերակուր լինի երկնաւոր արքային, զորօրինակ նուռնն՝ Թագաւորաց։ Այլ զինջումին որ ասաց, Թէ "՝ի պարտէզս ընդուզեաց իմոյ", զմարմնաւորութիւն զինջումն բանին այ ասէ, որ՝ի դէպ ժամանակի եղ յերկիր յարօրեալն օրինօք և մարգարէիւք, կատարեալապէս տալ ցուցանել զտեսակ պտղոց փրկութեան՝ ի ծաղկելոցն բերից արմտեաց. զինորբա զդալուստ փրկչին քարոզեցին, որ էր ծաղիկ, և՝ ի ժամանակի գալստեան ցուցակի միածնին այ տնօրէնութիւն ժողովել զպտուղ այգւոյն. որպէս առակաւորի յաւետարանին։

"Հարսնն ցփեսայն ասէ։ Ընդ տաց զտեսիս իմ՝ ի քեզ. ոչ գիտաց անձն իմ, եդ զիս իբրև զկառան Ամինադաբայ"։ Ի լսել Հարսինն զինջումն փեսային և զինդիր ծաղկացն, պատասխանէ, Թէ ոչ միայն ծաղկեցայ ազնուական ծաղկօք, այլ և կերակրեցի զքեզ ըստ ախորժակաց ածութեդ. քո զոր խնդրես՝ ի մարգկանէ կերակրել զքեզ աննուազաբար՝ ի ստեանցս իմոց՝ մաքրութիւս՝ ի ՚ոբ սրտէս՝ որ առստեանցս յարամանի "Ոչ գիտաց անձն իմ", այսինքն որպէս կաթնն՝ ի ստեանցն յաներեւութիցն կերակուր լինի անբծութեդ տղայոց, նոյնպէս և խորհուրդք անբիծք սիրոյն ջեռեալք՝ կերակուրք լինին անպիտութիւ մարդոյն՝ այ. որ ոչինչ խնդրէ՝ ի մարգկանէ, բայց զսիրտ ՚ոբ, որով չածք տեսանեն, և յորս ինքն հանգչի, որպէս ասէ մարգարէն, Թէ "Այս յո՛ հանգեայց, Թէ ոչ՝ ի հեզս և՝ ի խոնարհս սրտիւ, և որք դողան՝ ի բանից իմոց"։ Եւ որպէս զկաւս հանգիստ լինին փեսային բարձրացեալ վասն։

"Ոստերքն և Թագուհիքն ցՀարսինն ասեն". Հարձիր դարձիր սուննացի, դարձիր դարձիր, և տեսցուք՝ ի քեզ"։ Ցնս զհրեշտակաց զաքանչումինն յաղագս մարդկան բնութես փոփոխման՝ ի չարեաց՝ ի

բարիս։ Ցեսցուքն, զղաւրմանատեսութեի հրեշտակաց ցուցանէ, որ այլ ազգք էաք՝ի հրեշտակաց, և այժմ անցուցաք քան զհրեշտակս՝ հրեշտակատեսութեամբ։ Օ՛ի նոքա անախտ ունելով բնութի՝ և անբիծ և անաշխատ, յաղթեցան՝ի մինչ. զի հողեղէն և ախտալից և տակաւ բնութիքս անցուցաք զնոցայն զօրեղութիքն, յաղթեալ մեր ախտից և կրից և բնութեց կարեաց։ Եւ յիրաւի զարմանան, և զտեսութիւնն խնդրեն. զոր և առաւել սքանչմամբ հայեցուցանէ փեսայն զհրեշտակն, զոր և զտեառս և Թագուհիս անուանէ, ցոր և ասէ։

Ի. "Ց՛տեառն և ց՛Թագուհին փեսայն ասէ, Օ՛ինչ տեսանէք՝ի սոմիացին որ եկեալ է իբրև ըզգուշդս բանակաց։" Յայնքան Թէ զինչ կարէք դուք զսոմիացւոյն տեսանել զգեղեցկութիւնն, որ իբրև ըզգուշդս բանակաց բազմացեալ է արմտովք բարեաց գործոց. բայց ես ծանուցանեմ ձեզ։ Եւ ապա տայ նշանս, պատմելով։ Ա՛յլ սիդոնացի յաղագս առաւել չարութեն կոչէ զՀարսնն. զի առաւել յաճախ էին՝ի կռապաշտուե և յամենայն անօրէնութե, նմանեալ սիդոնացւոց։ "Օ՛ի գեղեցկացան գնացք քո կօշկօք՝ դուստր Ա՛մադաբայ։ Ցես, զոր յառաջ սիդոնացի կոչեաց զՀարսնն փեսայն, զոր հրեշտակքն և յառաջ կոչէին սիդոնացի, ասա դուստր Ա՛մադաբայ անուանեաց. ցուցանելով Թէ որոյ պղծոց նախնեաց ծնունդք և դստերք, ծնունդ և դուստր և Հարսն եղեն Ա՛ստի, զի ոչ ևս ունին զգաշապարս բոկս կասկածաւորս օձին խայթոցաց. այլ կօշկօք արդարութե ամրացեալք՝ անկասկած են՝ի Թիւնից խածանող օձին։ Ա՛յլ և լուացեալք՝ի մեղաց՝ որպէս զոտս առաքելոցն ջրով և հոգւով՝ի փրկչէն. որ և առին իշխանութի կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրուե Թշնամւոյն. վասն այնորիկ առաւելան գեղեցկութիք, զի ագուցան՝ի յոտս զպատրաստութի աւետարանին խաղաղութե, որպէս առաքեալ ասէ։ "Յարմարումն բարձից քոց նմանութի ուլանց յեռելոց գործոց ձեռաց արուեստաւորի։" Ա՛րդ որպէս ոտքն ամրացան՝ի խածանողէն, և գեղեցկա-

ցան այնպէս կօշկօք. նոյնպէս և գլուխն բարձրացաւ ի կործանմանէն որ յերկիր կցեցաւ անկեալ ի բարձրութենէ դրախտին։ Խարձիւ, որ իբրև յուլանց յեռեալ. զի իմաստ ուղղին ի գլուխ մարդոյն է։ Ասդիայայ է թէ որպէս բարձ՝ բարձօղ և հանդիստ գլխոյ է, նոյնպէս և գրոց գիտուն և իմաստք պատուիրանաց ՝ի՝ գլխոյն և իմաստից որ յուղղոյն, բարձող և հանդիստ է, զի ի նմա դադարեն ամենայն ծփեալ ալեկոծութիւք խելացն յոյզք՝ յենլով իբրև ի բարձ. և չտան ընդունայն յածիլ ի ծուփս ընդվայրաքնին խուզից։ Յաղագս այնորիկ ասաց. "Յարմարութիւն բարձից քոց նմանութիւն ուլանց յեռելոց գործոց ձեռաց արուեստաւորի"։ Ո՛ր պէս ուլն յեռեալ ժողովէ յինքն զպէսպէս զանազանութիւն գեղոց մարգարտաց, նոյնպէս և գրոց գիտութիւն յեռեալ ի մարգարէականաց յօրինաց յառաքելոց ի վարդապետաց ի մարտիրոսաց հանդիսից ի ձգնաւորաց մարտից և ի նոյն աւետարանականաց հրամանացն և աւետաւորութեանցն, իբրև զբարձ ի ներքոյ խելապատակայն եդեալ՝ ոչ տան կործանել յերկիր. զի որպէս անբարձ գլուխ ի գետին, և զերկրիս իմանալ է զթիւր վարդապետութիւն մոլար գիտուն հերձուածողացն. որ ոչ կարացեալ յիմաստս գրոց սրբոց յեռել, զանօրէնութիւնն Աստի յերկուս բնութիս հատին, և յայլ և յայլ զանազան միտս իմացան զգրոց բանս. որպէս Արիոս և Մակեդոն և պեղծն Նեստոր կործանիչ և եղծիչ աշխարհի, և որ այլ բեւր հերձուածողք։ Նա և ի վարս և ի կերակուրս և յամենայն գոյացութիւնս աշխարհի արարածոց երկնի և երկրի և հրեշտակաց և մարդկան և հանդերձեալ գալստեանն և ահագին աւետնին և յաւիտենական գեհենին՝ իմաստս մոլարս գտին, և այլոց ուսուցին։ Նա և գոն և այժմ բազումք, որ ուսուցանեն զայնպիսի մոլար ուսմունս։ Այս այս լինի յերկուց պատճառաց. մի՝ զի ոչ քննեցին զգիրս, այլ բաւական համարեցան զիւրեանց իմաստութիւն առ ի յոյզ գիտութենէն. որպէս առաջինն իմաստունքն իմաստութիւն իւրեանց ի կռոց պաշտամանէն ոչ կարացին քակել զանձինս, և ձանձ-

չել իմաստութիւն զայծ. որպէս բողոքէ առաքեալ. Թէ կամեցեալ էր քննել իմաստուքն, յարարածոցս իսկ զարարիչն մարթացեալ էր գտանել, իմանալով զարարածոց անկայուն և անզօր և զփոփոխական բնութիւնս, Թէ այլ արարող գոյ սորա յաղագս որոյ և ետ իսկ այծ զառաւելութիւն իմաստուքն։ Այլ երկրորդ պատճառ, զի ի հոգւոյն Թևոց հեռի եղեալ ի ձեռն մեղաց մարդիկ, հակառակ ոգին պիղծ մնեալ ի ներքս զիւրն ուսուցանէ իմաստս, և յիւրն դադարեցուցանէ Թափուրս ի հոգւոյն սրբոյ։ Այլ ոչ սքոյն գլուխք յայսպիսին դադարեն բարձ, այլ յայն որ ի ձեռաց արուեստաւորին Ճարտարի հոգւոյն սրբոյ՝ են նիւթեալ և յեռեալ։

« Պորտ քո Թակոյք Ճախարակեայ, ոչ նուազեալ ի գինւոյ խառնելոյ »։

Երդ նոյն օրինակ և պորտքն գնոյն ունին միտս. զի որպէս Թակոյքն Ճախարակեալ և յօրինեալ ինքեանք յինքեանն փափագելի են, և փութացուցանեն զմիտս գինարբուացն, մանաւանդ մատուցանէին՝ յօրինել ի նոսա զհեղումն գինեաց խառնելոյ, նոյնպէս և պորտն Ճչմարտեալ և մաքրեալ ի մեղաց ընդունարան լինի հոգւոյն ընդհայց և գինւոյն անապակի և ըմպելւոյն անուշութեանն, խառնեալ յիւրեարս զարբուհին որ ի հնոց և ի նորոց գրոց, որ և յառաջ քան զլսելն՝ տեսութեի գեղեցկութեն յորդորէ յարբուհի, և ընտրութեի ժողովելոյն ի պորտն զտեալ և մաքրեալ ի մեղաց։ « Արովայն քո որպէս շեղջ ցորենոյ փակեալ շուշանաւ »։ Օրովայնիդ այնպիսեաց և զայլ ամենայն զգայութեանց գեղեցկացելոյ՝ ըստ առաւորիչն մեր յատկապատուհն գովութեի մանրակրկիտ յաձախ Թուէ [1]։ Այսու զի այնպիսիքն իսկ են գանձուցն հոգևորի ամանք հողեղինք, որպէս ասէ առաքեալ, Թէ « ունիմք զգանձս զայս յամանս խեցեղինս »։ Այլ զի այս այսպէս, ընդ դէմ դնի յամանս խեցեղինս այնպիսի պատուականն գանձ, զայս ինքն Պաւղոս մեկնէ, « զի առաւելութիւն զօրութեանն լցէ յայ, և ոչ ի մէնջ »։

1 Յաձախապատում. Ճառ Ե։

Ալան զի այնու առաւել երևի զօրութիւն այ, տկար ամենոյ՝ զծանր և զանտանելին տանել։ Արդէս յաբարածոյ իսկ տեսանի, զի զերկինս և զերկիր ի վերայ տկարի եդեալ և հաստատեալ է, և ունի անսասանելի զամենայն։ Այս և ածածկին տկար բնութիւն ամեն և տարօղ եղև անտանելւոյ բանին այ բնութեն խառնեցելոյ ի մարմինն որ ի նմանէ։ Այոյնպէս և տկար մարդիկ զհոգւոյն ընկալեալ զընորհս յորովայնս իւրեանց՝ յիւրեաց վերայ դիզեալ իբրև զշեղջ ցորենոյ, աղացեալ առատամբք վարդապետութիւնք հայց լինին ի կերակուր քաղցելոց և կարօտելոց այնմ հոգևոր կերակրոյ։ "Այս փակեալ շուշանաօք"։ գունովք հրաշից որպէս զշուշանս հրաւիրեն զհրեշտակս ի տեսութիւն. որպէս ասացաւ իսկ յառաջագոյն ի գտտերացն և ի Թագուհեացն, թէ "Դարձիր, և տեսցուք ի քեզ"։

"Այրկու ստինք քո որպէս երկու ուլս երկուորիս այծեմանց"։ Արդ երկու տեսակ են ի մարդուն, որպէս ասէ ածաբան, հոգի և միտք։ Այս երկոքին նաքա զյարակայութիւնն առ սրտին ունին, ուր ստինքն առկային, և վասն այնորիկ ստինս անուանէ զնոսա զմծտաբնակն ի նա։ Այս որպէս ստինք՝ կաթինն ամեն են, և կենդանատուր կերակուր տղայոց, նոյնպէս և միտքն և հոգիք արթունք և լուսաւորք և սրահայեացք են իբրև զայծեմանն, զածային հեռատեսութիւն իբրև զմծտաւորս տեսանելով անձանց անմոլար ցուցանեն Ճանապարհ, և այլոց որք զհետ նոցա գնան, և անորոգայթ յորսողաց պահեն, և կերակրեն զտղայացեալսն ի մեղաց, որպէս ստինքն զաղայսն։

"Աչք քո որպէս գծովակին Այսեբոնի ի դրունս դստերաց բազմաց"։ Աշխարհն այն կարի յոյժ ի բացեայ է հեռատեսութեաբ, զոր ոչ ոք տայ նշան գնմանէ։ Աչս ես այսպէս իմանամ, թէ բարձրագոյն է երկիրն այն և ի ստորև ունի գծովակն մեծ հանդիսացեալ հայեաց։ Այն օրինակ և աչքն հարսինն եկեղեցւոյ՝ մեծացեալ մեծութեաբ հոգւոյն, անդադրնալի հայեցն ի դրունս երկնից, ուր դստերքն բազմութեաբ հրեշտակացն բանակին ոչ խոտորելով յաջ կամ յահեակ, և

ապասեն Թագաւորին երկնից անյագաբար նայեցմամբ, զի արժանասցին մնանել ընդ դրունսն ընդայն, ուր դասերք այնր քաղաքի են բնակեալք։ "Ընդունք քո իբրև զաշտարակն Լիբանանու՝ որ դիտէ ի դէմ Դամասկոսի,,։ Ոչ ի սրպէս աշտարակն Լիբանանու զվայելուչ հայեցուածսն ունի հանդէպ Դամասկոսի, այնպէս ընդունք քո հոտոտել փափագեն վայելուչ հայեցմամբ զանուշահոտութենէ հոտոյն մաքրութենէ իւղոյն որ ի վերին Դամասկոսէ, այսինքն քաղաքին երկնից։ Ցողովմ ասել զՊաւղոսին՝ որ զառաջինն պատուական գիտութենէ Յրրորդութենէն անդ ընկալաւ ի մերձենալն ի Դամասկոս, և ի դամասկացւոյն Ընանիայէ զշտուն աչացն բժշկել ձեռնադրութենէ նորա, և ի հոտն յայն սխրալի և քաղցելի հոտոտեցաւ և հոտոտեցոյց զամենայն հեթանոսս. զորոյ հոտոյ ընդունք հոտոտեալք՝ ուչ յապեցան, այլ զմայլեցան իբրև զարբեալք ի գինւոյ պատուականէ, որ զիմանալի խելապատակ ուղղոյն անուշացուցեալ քնով ցանկալւով և հրեշտակայնով, և զաշխատեալսն ի մեղաց հանդուցին։

"Հիւսք գլխոյ քո իբրև զծիրանիս, իբրև զթագաւոր թագ ի գլուխ յընթացս ասպարիսաց,,։ Ոչ ի սրպէս ծիրանիք թագաւորաց վայելչականք են սեպհականութենէ, որ միայն նմա է իշխանութենէ զարդարել ծիրանօք, նոյնպէս և գլուխք որ հերս և զարդ և զփեսային երկնաւորի զփառս ունին, վայելչացեալք են մաքրութենէ իբրև ծիրանեաց զգեստուք և իբրև թագ ի գլուխս [1]թագաւորաց ի մէջ զօրաց յընթացս ասպարիսաց։ Լուր հարցցէ ոք, թէ զինչ պատկք են գլխաւորք պարգեւք մարտիւրոսացն. զոր օրինակ բազմաց երևեցաւ սրբոյն. որպէս Վառառնիւսի [1] և Վեռնդեանցն [2], և այլոց բազմաց։ Այս թագաւորաց դնի ի գլուխս, վասն զի պատուական քան զամենայն մասունս զգայուեց մարդոյն՝ գլուխն է. յոր ուղիղն է գանձեալ, ուստի խմաստն խելացն և կենդանութենէ սկիզբն, յորում և լուսատես աչքն

1 ի վարս նոցա։
2 Եղիշէ Ցեղանակ։

և քմաց և հատուտելեաց դիրք և ականջացն լսելու-
թիւն, և բերանն որ կերակրով և ըմպելեօք պահէ
զկենդանութիւն, և զխեղացն և զսրտին խմաստս խո-
սիւք ի յայտ բերէ լսողաց։ Արդ վասն այնորիկ
զնա պսակէ, զի ուղիղն վարդապետէ անձինն և խե-
ղացն՝ զգործս և զբանս և զառաքինութիւս և զսրբու-
թիս և զսէր և զողորմութիւ և որ սոցին նման ՚ածա-
հաձոյք խորհուրդք և գործք։ Արդ Թագաւն ըզ-
գլուխն պարփակեալ պսակէ, որ պատճառն և խըր-
բատուն է ամենայն բարեաց, և գլխովին պսակ-
մամբն՝ երևեցուցանէ և զամենայն անձն պարփա-
կեալ պարգևօք, "Ամագ ի գլուխ եդեալ՝,, ցուցա-
նէ այնու զանձառ լուսաւորութիւնն և զզօրութիւն ՚այ
ագուցեալ ի գլուխն առ Թող այսքանեաց բարեաց
խորհրդոց և օգտակար ուսմանց, որպէս ասէ սոյն
Սողոմոն, "պսակ ընորհաց ընկալցիս ի գլուխ քո,,։
Շ նորհ զ՚ածային զօրութեն զգեցուցին ասէ, ի գլուխն,
որ՝ իբրև Թագաւ զարդարեալ է, մարմնաւորօքն
զաներևոյթն ձևացուցեալ զփառս, և երևելեօքս
և մնոտի ցանկալեօքս զաներևոյթ և զՀմարիտ ցան-
կալին։ Արդ երանի՛ որ անթառամ Թագին արժա-
նանան, և հարմանան Քրիստոսի, զի նմին Թագակից լի-
նին յանհատ Թագաւորութեն Քրիստոսի։

"Քանզի գեղեցկացար և հեշտալի եղեր, սեր ի
փափկութե քումդ,,։ Հայեաց Հմարտապես ի Թուեալ
գովութիս ամենայն զգայութեց հարսինն, և Թէ ո՛ր-
պէս մի մի Թուեալ և գովեալ, համառօտ դար-
ձեալ ասելով, "Քանզի գեղեցկացար և հեշտալի
եղեր,,։ Այս է ստուգապէս գեղեցկութի մարդոյ,
որ զամենայն զգայութիւնս՝ ՚այ ծառայեցուցանէ և
՚ածացուցանէ զնոսա՝ յ՚ած մերձենալով, ՚ածային
գործոյն հաղորդեալ։ Որ և զայնպիսի բանս արժա-
նանայ լսել ի փեսային Քրիստոս, Թէ գեղեցկացար և
հեշտալի լինձ եղեր։ Ո՛վ անբաւ երանութիւն, որ ՚այ
բերանովն խոստովանի գեղեցիկ լեալ և հեշտալի
իւր։ Որում ցանկացան սքանչ առաքեալք և մար-
գարէք, մարտիրոսք և Հգնաւորք և վարդապետք
ամենայն քահանայականօք, որ դուստր և հարսն ե-
ղեալ ՚այ, մուտացան զժողովուրդս և զտունս հարց

իւրեանց. օտարացեալք աշխարհի, և որ ինչ յաշխարհիս, փափկացան առաքինութեանէ վարուք և սիրեցան ի փեսայէն, որ ասաց, "Ահեր ի փափկութեան քումմ,,. Թէ սիրեմ այնչափ սիրով զայնպիսի փափկութիւն, որպէս մարմնաւոր փեսայք զմարմնաւոր փափկացեալ հարսունսն:

"Զանեցաւ մեծութիւն քո արմաւենւոյ, և ստինք քո ողկուզաց,,: Զայսպէս ցանկալի եղեր ինձ ի տեսութիւն որպէս զարմաւենւոյ մեծութիւն, և ստինք քո որպէս տղայոց՝ ախորժելի, զոր ի վերայ բերեալ, ասէ:

"Ասացի, ելից ի վերայ արմաւենւոյն, կալայց զբարձրութիւն նորա,,: Զկնի հայեաց ի սերն յանբաւ ոյժ, որ առ սա՛ւ և առ արդարս. որ քան յաթոռն քերովբէական նստեալն՝ առ սրբոցն հանգչելն բաղձալի է նմա: Զսա այս քեզ նշան որ ի Յակովբ նախահայրն իջեալ, և իբրև ընկեր ընդ ընկեր ի սեր պատեալ դիրկս արկեալ և հակառակեր ընդ նմա որպէս պրկոց անցանելով. որ և բուռն հարեալ զամենայնի ընդարմացոյց: Զս մարգարէին Զսայեաս ասեր. "Զս յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և յայնոսիկ որ դողան ի բանից իմոց,,: Օ՛ի պրկի և փափագէ ի սա՛ւ՝ որպէս յանբաւ ցանկալի իրս: Ար և տեսեալ զբաղձալի ցանկութիւնն և զմեծութի զՀարսինն որպէս զարմաւենւոյ՝ ասաց, "Զլից ի վերայ, կալայց զբարձրութիւնէ նորա,,: Ար և խոնարհեցոյց զերկինս և էջ և բուռն եհար զընութիւնս մերմէ յաղագս անպատմելի սիրոյն իւրոյ որ առ մեզ: "Զս եղիցին ստինք քո որպէս ողկոյզ որթոյ, և հոտ բերանոյ քոյ իբրև խնծոր, և կոկորդք քո իբրև գինի ազնիւ,,: Որպէս ողկոյզն նախ զաչսն զուարթացուցանէ տեսութիւնն նախ քան զկերակրելն, նոյնպէս որ ի սահանոյ սրտիդ բղխեն բանք ընդհաց, նախ զլսելիսն բերկրեն, և ապա զսիրտն զախորժոյզսդ բանին: "Զս հոտ բերանոյ քոյ իբրև զխնծոր,,: Զսկիզբն է անուշահոտութիւն վարուց սրբութիւնէ, որ տարածանի ի մեծամեծս և ի փոքունս՝ իբրև զանուշահոտութիւնն խնծորոց, յոր հոտոտի փեսային երկնաւոր առաւել քան ի գինս և ի նուէրս ստուե-

բին, որ ասի ՚ի հոտ անուշից նոյն։ Ոչ ի միչ եթէ ձեռն ձերոց հոտն՝ անուշահոտութիւն եր այլ, այլ մատուցողացն մաքրութիւն հաճոյացուցանէր և հոտ անոյշ լինէր այլ, որպէս Հաբէլին։

«Եւ կոկորդք քո իբրև զգինի ազնիւ»։ Ոչ որպէս գինի ուրախարար է արբեցելոց, նոյնպէս և երդ սրբոց և անարատից, և բանք կոկորդաց նոցա ուրախացուցանեն զփեսայն երկնաւոր, առաւել քան զհրեշտակաց սրբասացութիւնք երգս։ Ոչ նոքա կարողութիւն և անախտութիւն են փառաբանիչք նորա, յաղագս որոյ միչ է զարմանալի, այլ մարդոյ հողեղէն զանգուածով և ախտիւ և կարեօք պատելով զանախտին և զանկարեացն բերեալ զնմանութիւն, կարի սքանչմամբ լի է, կոկորդ ասէրովբէիցն առնուլ և զնոցայն երգել։ Եւ զիաւրդ ոչ ուրախացուցանէ զփեսայն, որպէս ՚ի զարմանալ դատերացն և Թադուհեացն ընդ գեղազէշ սխրալի տեսակ սոմնացուոյն՝ որ է հարսնն, և յասելն ցնա՝ թէ դարձիր դարձիր սոմնացիդ և տեսցուք զնոր և զչքնաղ տեսութիդ քո, յինքն առեալ փեսայն զկոչն հրեշտակաց, այսինքն դատերացն և Թագուհեացն՝ պատասխանեաց և ասէ «Ո՞րչ տեսանիք ՚ի սոմնացիդ», զի որչափ է սխրալի, միչ կարէք տեսանել, բայց թէ ինձ՝ որ հրապարակատես առնել կարող եմ զմարդկան ծածուկ առաքինութիւն։ Իր և ապա մի ըստ միոջէ համարեալ զգայարանացն հրաշս՝ և ծանոյց նոցա զհարսինն գեղեցկութիւն։ Նոյնպէս և հարսն ՚ի դէմն դատերացն և Թագուհեացն ասէ զայս, «Երթեալ ընդ եղբօրորդւոյն իմոյ յուղղուի, բաւական լեալ երթամբք իմովք և ատամանբք»։ Այսինքն թէ յաղագս այնորիկ եղէ ձեզ սքանչելի, զի հրաժարեալ յաշխարհական մեղսասէր օձապատիր խաբմանց նախնոյն իմոյ, զնացի զհետ եղբօրորդւոյն իմոյ յուղիղ վարս որ զիս զգեցաւ և իմովս յաղթեաց և եցոյց ինձ զուղղութիւն. նախ ինքն առնելով, և ապա ինձ ուսուցանելով, որպէս ասէ առաքեալն Պաւղոս յերկրորդում ՚ի գիրս Իւրում. «Յորում ընկալաւ Քս առնել և ապա ուսուցանել»։ Ոչ վասն այսորիկ եղև մարդ, զի նախ ինքն արասցէ զամե-

նայն՝ զոր քանիւ վարդապետեաց և գործովք ուսուա-
ցէ զՀեղուԹէ զխոնարհուԹէն. որպէս ասաց ինքն
տէրն, Թէ "ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ
սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց": Այն-
պէս և զքաղցրուԹէ. որուհ որ ապտակն հաճ ետ
այլին երեսացն, քաղցրուԹէ ասաց, "Մահ չար ինչ
խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եԹէ բարի,
ընդէր հարկանես զիս": Նա՛ի կոչէն զնա դիւա-
հար՝ ոչ ընդդէմ դարձեալ Թշնամաներ, այլ քաղց-
րուԹիւ ասէր, "Ձիս դև ոչ դոյ": Այսպէս և զան-
ոխակալուԹէն, որ աղօԹեր վասն խաչահանուացն,
"Հայր Թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն":
Այն օրինակ եղոյց և զաշխատուԹէն իշով վՀարել
և զանգոռոզաբար կեալն իւր՝ ի վերայ իշոյ նստե-
լովն: Այսպէս և ի հարսանիսն արար, զջուրն ի
գինի փոխելովն խնդակից լինելով խնդացելոյն և
ընծայաբեր: Նա՛ի սուգ՝ զջափ տրտմուԹէն եղոյց
արտասուելովն, և ուսոյց մեզ սգակից լինել եղբօր՝
իւր տրտմելովն: Նա՛ զջափ կերակրոյն գարեղէնն նա-
նական և ձկամբն վՀարելով. և ի վերայ խոտոյ
բազմելովն՝ եղոյց զանապարան և զջափաւոր Հարկն
վՀարել: Նա՛ զայլ զամենայն որ ինչ պէտք է ուս-
մանն, նախ ինքն յանձն կրեաց և մեզ զնոյն եղոյց
Ճանապարհ: Այ ան այսորիկ Հարսնն ասէ, Թէ "Նը-
Թեալ ընդ եղբօրորդւոյն իմոյ յուղղուԹէն": Այս
ինքն Թէ զՀետ նորա գնացի յամենայն ուղղուԹիւն՝
զոր արար յերկրի, և նմանող եղէ նմա. որպէս
Պաւղոս ասօքն ընդիր ասէր, Թէ "Եմանո՛ղք եղե-
բուք լինէք, որպէս ես Քրիստի": Նա՛ ուստի՞ տուաւ այն-
չափ ջօրուԹիւն Հարսինն՝ Քրիստի ուղեկցուԹէն յուղ-
ղուԹի: Ի յահագին խորհրդոյն ՀաղորդուԹէն ի
մարմնոյն և յարեւնէն Քրիստի, զոր ետ մեզ ի ջօրու-
Թիւն, և բաւական արար շրԹամբք ըմպել և ատա-
մամբք մանրել զայն՝ որ Հրեշտակքդ դուք դատերք
և Թագուհիդ Հայել չէիք բաւական. որ ի խաչին
ոչ մանրեցաւ ոսկրն, ըստ յառաջագոյն դուշակուԹ
մարգարէին զայն բաւական եղաք մանրել ատա-
մամբք, և անբռնանդակելն և կիսելն Հրոմն ոչ այ-
րիմք կիսանուտ մարմնովք, և դուք անհարկել ոչ

կարեկ և ոչ իշխեկ, և ես բաւական եղէ անբաւա-
կանելոյն, որպէս զՅոճաճինն որ յորովայնի ընկալաւ,
և ոչ կիզաւ, և որպէս զմրրենին նորին օրինակն։
Ո՞այս որպէս թէ պանճացեալ յանձառելի պարգև
փեսային, պարծի ընդդէմ հրեշտակաց Հարսնն, և
՚ի վերայ բերեալ՝ ասէ,

"Ա՛ս եղբօրորդւոյն իմոյ, և առ իս դարձ նորա"։
Ա՛յսինքն թէ յայսմ կերակրոյ միացեալ ՚ի նա, ես
նմա և նա ինձ. որպէս և ինքն տէրն ասաց յաւետա-
բանուն, թէ "Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զա-
րիւն իմ, յիս բնակեսցէ և ես ՚ի նա"։ Ա՛ւ դար-
ձեալ. "Որպէս դու հայր յիս, և ես ՚ի քեզ, զի և
նոքա ՚ի մեզ իցեն. և ես ՚ի նոսա, և դու յիս"։
"Ա՛ւ իս դարձ նորա"։ Ո՚ւ վերայ այսր միաբեր՝ և
զայն ասէ, որ գալոյ է միւսանգամ առնուլ զմեզ
առ ինքն և յիւր փառն դասել և զօտի ածել և
պաշտել զմեզ. որպէս և ասացն իսկ,

"Ա՛ւ՚ղ եղբօրորդի իմ, ելցո՛ւք յանդաստան, հան-
գիցո՛ւք ՚ի գեօղս։

Կանխեսցո՛ւք յայգիս, տեսցո՛ւք՝ եթէ ծաղկեաՀ
իցէ որթ, ծաղկեալ իցէ նռէն, ծաղկեալ իցէն
նռնենիք"։ Ցէս աստանօր զմիաբեր Հարսինն ընդ-
փեսային, որ կանխագոյն ասաց փեսայն, թէ "՚ի
պարտէզ ընդուզեաց իմոյ միայն տեսանել, եթէ ծաղ-
կեալ իցէ" այսու բանիւք զոր այժմ Հարսնն ա-
սաց, որ էր գալուստն յերկիր Ո՚ւրի՝ ՚ի խնդիր սեր-
մանցն, զոր մարգարէքն սերմանեցին, թէ ծաղկեաՀ
իցէ, որ պտղաբերեցաւ իւր գալստեամբն։ Ա՛րդ
Հարսնն միացեալ ընդ փեսային, սիրէ հաղորդակից
լինել տեսութեանն բերոյ պտղոյն և ծաղկացն. յա-
ղագս այնորիկ անդ փեսայն, իմի, ասէ. զի իմի յեր-
կնից. և ասաց Հարսնն, երթիցո՛ւք, ասէ. զի յերկրի
գոլով Հարսնն՝ սիրէ շրջել ընդ փեսային, "որ յերկ-
րի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ"։ Որպէս
և ասաց, թէ "Ա՛յլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են
յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր
և ձայնի իմում լսելոցն և եղիցին մի հօտ և մի հո-
վիւ"։ Որ և շրջեցաւ իսկ Հարսամբն. այսինքն առա-
քեալքն, ոչ միայն ընդ Հրէաստան, այլ և ընդ հե-

Թանոսս, ուր սամարացին. ուր փիւնիկ ասորին. և այլք բազումք։ Այս և զկնի համբառնալոյն՝ ընդ առաքեալս և ընդ նոցին աշակերտսն և ընդ վարդապետսն և ընդ մարտիրոսս շրջեցաւ քարոզել և տեսանել զծաղիկ և զպտուղ հաւատոյ բանին։ Այս վկայէ այսմ տէրունական խոստումնն, թէ «ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»։ Ընդ առաքեալքն ոչ հասին ի կատարած աշխարհի, ապա ուրեմն յայտ է, թէ մինչև ցայժմ ընդ ամենայն հաւատացելոց է ի տեսանել զծաղիկս, և զուարճանալ ընդ բերս պտղոցն։ Այլց դու տես զգթածութիւնն որպէս զփեսայի և զհարսին՝ ընդ հաւատացեալս. զի ոչ մնայ հրամանի՝ որպէս ի հնումն մարգարէքն, այլ զայն ստացեալ սէր զոր և փեսայն, աղաչէ շրջել ի խնդիր մոլորելոց և ի գիւտ կորուսելոց։ Որպէս հաւն իսկ բազումք անձամբ զանձինս ի մշակութիւն՝ յառաքելոց և ի վարդապետաց։ Որպէս և մեր լուսաւորիչն, որ զկին և զորդիս Թողեալ կամաւ եկն առ Տրդատ, և զայծ ազաչէր վասն ամենայն մարդկան դարձի, որպէս և կայ իսկ յիւր աղօթսն[1], պէսպէս պաղատանօք հայցուածս զոր ինչ ոչ է ժամանակ երկրորդել զամենայն։ Տես, որթ և նոճ և նռնենի, ասաց. զի որ դարձան ի հաւատս և հարսնացան Քրիստի, ոմանք ունին պտուղ, այլ ոչ գիտութիւն, որպէս Հարիւրապետն, և կոռնելիոս, նա և Պաւղոս իսկ, որ ըստ արդարութեանն օրինացն եղեալ անարատ։ Այս ոմանք անպտուղ իսկ, որպէս Ընեսիմոն, որ և նոճ. և նոքա ողկոյզ և նուռն, այլ ոչ յաճգիտութեանէ կատարեալ։

«Անարատորք հաւն զհոտ իւրեանց առ դրունս ամենայն մրգաբերք, նոր առ հնով, զոր ետ ինձ մայր իմ, պահեսցի քեզ եղբօրորդի իմ»։ «Անարատորք հաւն զհոտ իւրեանց»։ Ընդ ի ձեռն յուցակութեանս, զոր իմացուցի, առաջնիկայս չունի ինչ առաւել պէտս մեկնութեանէ, բայց համառօտն այս է. զոհանան զբերոց հաւատացելոց, որք քարոզութիւ-

1 Գաթ։

առաքելոյն, և զկնի նոցա վարդապետքն անհամարք՝ բեւեռք բիւրուց զանազան առաքինութեիք հաստատեալ ոյժ։ Ամենք վկայական արեամբ, ամենք ճգնաւորական հանդիսիւք, ամենք կուսութեամբ, ամենք առաջնորդական և քահանայական վերակացութեիք, ամենք աղքատութեիք և հիւանդութեիք, և ամենք մեծութեիք՝ հասարակաց առնելով զինչս. և որ սոցին նման, միաբանեալք ամենեքին ի սէրն ոյժ և ի հաւատս և ի յոյս և յողորմութեիք և ի խոնարհութեիք և ի սրբութեիք և յեղբայրսիրութեիք և ի քաղցրութեիք և յանոխակալութեիք և յերկայնմտութեիք և յանընդհասիրութեիք և յարհամարհել զերկրաւորս և ցանկալ երկնաւորին և զարհուրել ի գեհենէն և փափագել արքային և արքայութեանն։ Այս ամենայն է, որ ասաց, թէ "մանրագործք եղուն զհոտ խրեհանոյ առ գրունս մեր ամենայն մրգաբերք, նոր առ հնով զոր ետ ինձ մայր իմ, պահեսցի քեզ եղբօրորդի իմ"։ Այս առաքելոյ և առաջնորդաց գոհացուցական բանք են՝ հաւատացելոյ Քրիստոս, որ ընծայեն նմա այժմ և յաւուրն մեծի ժողովուրդ կազմեալ, և աւետեն զմարգարէին, "Հաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած"։ Զայն է այսմ, զոր ասաց, թէ "պահեսցի քեզ եղբօրորդի իմ", որ առանց ամօթոյ տան համարս զժողովրդեան, և ընծայեն ոյժ։ "Նոր առ հնով". ի նորոյ և ի հնոյ։ Այլ որ ասէ, թէ "զոր ետ ինձ մայր իմ"։ Այր հասարակաց եկեղեցի է, և հոգին Աստուած, որ ծնաւ աւազանաւն, և մնոյց արեամբն Քրիստոս։

Ը. "Ալ տացե քեզ եղբօրորդի իմ, դիւել զստինս իմ"։ Ա՛ր անյապաղ փափագման սրբոցն՝ որպէս անհաւատալի լինին հասման փառացն ոյժ և ի միտ առնելոյ զվաստակս և զջանս նոցա և զսրտին բաղձանս. և այս առ խոնարհութեիք հոգւոց սրբոցն, որ չունին ի համարի զիւրեանց ստեղծեալն սրտից բացուածս առ նա. որպէս Պաւղոս առաքեալ ասէր, թէ "ես ոչ համարիմ զանձն իմ, թէ հասեալ իցեմ"։ Այնպէս և այլ սքեանն։ Ի գիտացեալ զնախահօրն կործանումն, մանաւանդ թէ զստատանայինն իսկ ի բարձրութ

և ՚ի հպարտութիւնէ լեալ, ջան նոցա խոնարհութիւնն ան-
ձանց եդեալ, տրուպ ամենեցուն զանձինս համարել
և մոռացումն ինքեանց վաստակոյն առնել, և չհա-
մարել արժանի ՚ի ծառայութիւնէ գալ այ, զի ուսեալ
են ՚ի նմանէ, որ ասացն, թէ "Յորժամ զամենայն
հրամայեալսն առնիցէք, ասասջիք, թէ ծառայք ան-
պիտանք եմք. զոր պարտէաք առնել՝ արարաք,,։
Այս ինքն թէ ծառայ անպիտան իցէ ոչ յաւելուլ
՚ի ծառայութիւնէ քան զհրամայեալսն։ Օ՚ի այսպէս
ուսուցանէին զանձինս ՚ի խոնարհութիւնէ մնալ, և ան-
արժանս չնորհացն համարել. որպէս առաքեալ ա-
սէ, թէ "Ցրուպ եմ ամենայն առաքելոց,,։ Այս և
քաւանդակ ամենայն սրբոց և հոգւով սքվ լցելոց
գործ՝ այս է. զի զինչ և առնիցէ ուղղուհս և կամ
սրտից սէր ցուցանել առ այծ, առ խոնարհութեան
մտացն չհամարել՝ թէ ՚ի գիտուէն է այ, իբրև զան-
արժանից։ Վ՚ան այնորիկ ասէ, թէ "Ո՚տացէ
քեզ դիւել զստինս իմ,,։ Այսինքն թէ ընդունել
զիմ սրտիս սէր առ քեզ, վասն այսորիկ ՚ի վերայ
քէրեալ՝ ասէ, "Գտեալ զքեզ արտաքոյ համբուրե-
ցից, և ոչ անդամանեսցես զիս,,։ Օ՚ինչ է, այսպիսի
սէր քո սերդ՝ որպէս թէ անդամանել, այլ այս մնե-
կանութէ սէր. պարծանաց և հրապարակատեսութէ
արժանի է. և որք յայն սիրոյն ձաշակեցին, արբե-
ցան նորա սիրոյն և արհամարհեցին զկին և զորդիս
և զինչս և զստացուածս և զիշխանութիս և զփառս՝
նա և զանձինս ևս, և մահուամբ և արեամբ և աղ-
քատութեամբ կատարեալք, համբուրեցին զՔ՚ն, և
համբուրեցան ՚ի նմանէ։ Այս է պարծանաց և երա-
նութէ սէր և գովուէ ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ։

"Գտեալ ածից զքեզ ՚ի տուն մօր իմոյ և ՚ի սենեակ
յղացելոյն զիս,,։ Այսաց, թէ "արտաքոյ գտեալ համ
բուրեցից զքեզ, և ապա առեալ ածից զքեզ ՚ի տուն
մօր իմոյ և ՚ի սենեակ յղացելոյն զիս,,։ Օ այս առա-
քեալ մեկնէ, ասելով. "Որոյ տունն մեք ինք եմք,,.
և որ զինի, լեալ ՚ըզ հոգւոյն տուն և մօրն մերոյ հօր։
Գ՚րդ յայտ է, որպէս Յասիլ ասէ, թէ [1] Արանօր

1 Ներբող ՚ի սուրբն Ստեփանոս։

հոգին՝ որ, անդ հայր և որդի ճանաչի բնակեալ. որպէս ասէ մարգարէին, թէ «Հնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա»։ Արդ սենեակ և տուն՝ հարմարն եղև տեսչին. և է ճանապարհ ի տունն յայն՝ խոնարհութիւն, և որ ոչն է խոնարհ, հոգւոյն սրբոյ հալածիչ է, և ոչ հանգուցիչ. որպէս ասէ Հասիլ։ [1]

«Արդ ի սենեակին աճեալ, արբուցից զքեզ ի գինւոյ իւղագործաց, յօշարակէ նռնենեաց»։ Այս է, որ ասաց, թէ «ո՛տացէ քեզ դիւել զսրինս իմ»։ Արդ արտաքոյ գտեալ և արժանացեալ համբուրի, ապա ի սենեակ և ի տուն անձինն և ի սրտին առեալ զփեսայն, և Հրեղինէն բնակարան լեալ, խոստանայ արբուցանել նմա զուրախութիւն գինւոյ և օշարակ ի նռնենեաց, որ են սրտին գիտակցութիւնք՝ որ առ ՅԾ բարեաց խորհրդոց անիմանալեաց մեզաւորաց, որովք կերակրի և որովք ըմպելովք քուծանի ՅԾ, զի այս է կերակուր Այ. ի վերայ բերէ, թէ ոչ միայն բնակարան եղէ Այ կամ փեսային, այլ և նովիմբ հովանացայ և պահպանեցայ, զոր և ասէ։

«Հեռակ նորա զգլխով իմով և աջ նորա պատիցէ զինեւ»։ Հայսու զանմեկնելի պահպանութիւնն և զվերակացութիւնն որ առհարսնն, որ է եկեղեցի, բացայայտէ։

«Հրդմնեցուցի զձեզ գտերք Հրուսաղէմի ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի, եթէ յառնիցէք՝ զարթուսջիք զսէրն մինչև կամեսցի»։ Օ այս երկրորդ անգամ մեկնեալ եմ։ Այց ասելով զբազմադիմի շնորհն որ առ մեզ, և զանխմանալեօք պարգեւսն, երդմամբ յորդորէ զհրեշտակս փառաբանակից իւր և գոհաբանակից լինել Այ սիրոյն որ առ մեզ և զարթուցիչ, զի չհամարի միայն վինքն բաւական օրհնութիւնք երախտեացն Այ, որով և առաւել ևս զարթչի սէրն ի գոհանալն և ի փառաւորելն մեր գնա։ Օ՛ի մի ի տասանցն բորոտացն դարձեալ առ տէր և գոհացեալ ի ձայն մեծ փառաբանութենէն ի վերայ մարմնոյ բժշկութեցն, որ և զհոգւոյն ևս ստացաւ զլուսաւորութիւն և զյաւիտենական

1 Ներքոյ ի սուրբն Մատթէոս։

կեանան ։ Այլ ինքնէքն ապերախտք գտեալք առ ե-
րախտաւորն՝ զրկեցան ի միոյն և այս կատարեալ պար-
գևացն և յածայինն բերանոյ գովուեցան ։ Զդ հարս-
նըն ոչ ապերախտ եղեալ առ անխմանալի երախ-
տիսն ՚այ և առ այնչափ պարգևսն, յիւրմէ ընդհա-
կալեալ և գոհաբանակից մեր կոչեցեալ զհրեշտակս՝
զարթուցանէ զսէր փեսային յայն պարգևս՝ զոր կա-
մեցաւ տալ մեզ, և ոչ արժանացաւ առնուլ նախա-
հայրն ։ Այս է, որ ասէ ։ "զարթուսջիք զսէրն մինչև
կամեսցի „ ։ զոր խնդրեաց զգոհութիւն յինուցն, և
ոչ եգիտ ի նոսա զիւր կամացն խնդիր ։

" Ստեփքն և Թադուհիքն ասեն, Ո՛վ է սա, որ
ելանէ սպիտակացեալ՝ յեցեալ յեղբօրորդին իւր„ ։
Ո՞ արմանան հրեշտակք ընդ մաքրութիւն և լուսաւո-
րութիւն անարդ և աղտեղեալ մեր քնութիս, որ այն-
պիսի անքննելի ընդհայց հանդիպեցաւ ։ և ընդ եղ-
բօրորդւոյն իւրոյ Ո՞ի միացեալ, և ի նա յեցեալ՝
ելանէ ուր հրեշտակացն բանակք քնակեալ են, ու-
ղեկից լեալ Ո՞ի, որ զձեռանէ առեալ տարաւ
զմեզ ի տեղի անկելոց հրեշտակացն ։ զի զոր ի դը-
րախտին ոչ հանդուրժեաց տեսանել, տեսցէ ի
փառսն իւր ։ "Փեսայն ցհարսնն ասէ, Ի՛ն ներքոյ խընձ
ծորոյ զարթուցից զքեզ, անդ երկնեաց զքեզ մայրն
իմ, անդ երկնեաց որ ծնաւն զքեզ „ ։ Ա՛խ՝ արժան է
զքնուէ խնծորոյ տեսանել, և ապա զզարթուցումն
որ ի ներքոյ նորա՝ իմանալ ։ Խնծոր՝ առաջք կերակուր
է, և հիւանդաց յոյժ ախորժելի, և Թադաւորաց կա-
րի իսկ վայելուչ, և պէսպէս զանազան հոտովք անու-
շացուցանէ զքիմն հոտոտելեաց ։ զոր և "ըն Գրի-
գոր լուսաւորիչն մեր ասէ [1] ։ Զդ խնծորոյ նմանե-
ցուցանէ զբանս օրինաց և մարգարէից, որ հո-
գւովն սրբով տուաւ մեզ, նախ՝ ի սինհեական լե-
րինն ի ձեռն Մովսէսի, և ապա ընդ ժամանակս
ժամանակս առնեաց մարգարէիւքն ։ Այլ որպէս հաւք
ի ձուոց վերայ նստեալ յերկարաձիգ ժամանակաւ
ի ձեռն ջեռմանն ընձեռեն զկենդանաստեղծութիւն
հրամանաւ արարչին, նոյնպէս և մեր քնուիս ի ներ-

[1] Ագաթ։

քոյ օրինացն և մարգարէական պատգամացն եւ դեալ յերկարաձիգ ժամանակաւ՝ երկնեցաւ յայ ՚ի հօրէ և յորդւոյ, որ մեր փեսայն և եղբօրորդին աւնուանեցաւ, և ծնաւ ՚ի հասարակաց մօրէն, որ նոքա է բնութեք ծնօղ, և մեր ընդհիւ։ Այս վասն զի երկունք ասաց, և երկունք՝ մօր է, վասն այնորիկ մայր կոչեաց զՀայրն Աբէի, և մեր։ Այլ երկնեաց Հայր, որպէս ասացի, օրինական և մարգարէական պատգամօք. և ծնաւ ՚ի Քրոյ և ՚ի Հոգւոյ՝ որդիս իւր և եղբարս Աբէի. զի մի է մայր մեր ծնօղն՝ Հայրն ամենակալն ած ։ Այս և իւր մկրտութեչն և աւազանաւն ծնաւ Աբէ, և Հոգւոյն սրբոյ գալստեամբն զփակեաւն Հրդամայ զերկինս՝ եջաց. և լինքն զնոյն ծնունդ և մեզ պարգեւեաց ՚ի Հոգւոյն սրբոյ. և կոչեցաւ որդի մարդոյ, և զմեզ արար որդիս ՚ի։ Որպէս և արձակ բանիւք ասէ երանելի վարդապետն Յոհան, Թէ [1] Դուք մի՛ յերկուանար Թէ ոչ լինիս որդի ՚ի. զի անկարելի էր որդւոյն ՚ի լինել որդի մարդոյ՝ քան Թէ մարդոյ որդի ՚ի լինել։ Արդ յերդմնեցուցանել հարսինն զարԹուցանել զսէր փեսային, պատասխանի առնէ զվաղընջուց հետէ զղարԹուցեալ սէրն՝ զոր կասեցոյց Հրդամ յանցմամբն։ Վասն նա ըստ անոխակալ զԹուԹեչն, և ըստ աւրէնական սիրոյն իւրոյ ոչ եԹող ՚ի ձեռանէ, այլ դարձեալ զԹացեալ օրինօք և մարգարէիւք՝ որպէս դաստիարակաւ յանձանձեաց և երկնեաց և ծնաւ զմեզ վերստին, «Ոչ յատկանացու սերմանէ, որպէս առաքեալն Պետրոս ասէ, այլ յանապականացուէն, կենդանի և միանձնական բանիւն ՚ի»։ Յաղագս այնորիկ ասէ, Թէ «Ի նեղբոյ խնծորոյ զարԹուցից զքեզ, անդ երկնեաց զքեզ մայր իմ. անդ երկնեաց, որ ծնաւ զքեզ։ Այսինքն Թէ զարԹեալ էր նորա սէրն ՚ի մեզ, և միայն նպաստաւորուԹի ՚ի միջնջ պիտոյանայր կամէն աւետ։ Արդ որովհետեւ Հոգւոյն աղդմամբ և նոր ծննդեամբդ ՚ի հօրէ իմմէ՝ իմացար զայնքան սէրն որ առ քեզ. «Որ չիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատ-

[1] Մեկն. Մատթ. Ճառ. ը։

նեաց զնա »· զորօրինակ ասաց առաքեալ՝ Եւ դարձեալ

« Զինչ զնա իբրև զինքեք ի վերայ սրտի քո, և իբրև զմատանի ի վերայ բազկի քո »։ Եւ յայնկն ԹԷ պահ պահեա և կնքեա ինձ զսիրտ քո և զբազուկ քո· զի մի ի վայր անկցիս յամբառնալդ, և մի մոռա- ցօնս առներ զործելեաց իմոց ընդ քեզ երախտեաց իմ տնօրինութեաւն, որ իմոյ ծնողին որդի զքեզ ա- րարի։ Եւ դարձեալ մի տար զսիրտ քո դարձեալ սատանայի խորհրդոց· և մի զձեռն քո և զբազուկ ձգեր ի նա։ « Ա՛ման զի հզօր ես իբրև զմահ սէր, և խիստ իբրև զդժոխս նախանձ »։ Եւ յայնկն ԹԷ որպէս մահ խիստ է՝ յորս ժամանէ, և հզօր նախանձ՝ որպէս դժոխք· այսպէս և որք յինէն այսպիսեաւ սիրով սիրեցան, և փոխանակ ընդ այնպիսւոյ սիրոյ՝ զիմ սէրն մեղ- կեն և զհակառակորդն սիրեն, այսինքն զմեղս և զան- օրէնութիւն և զսէր աշխարհիս, նախանձ սրտմտու- թիւն բարկութիւն ահն՝ իբրև զմահ յարձակի ի վերայ նորա· և ապա անբժշկական սատնայ ցաւս։ Զի թէ կանայք յարանց սիրեցեալք, և նոքա փոխա- նակ արանց սիրոյն ի սեղեխս ձգտեցուցանեն զսէրն, ոչ միայն խաւրեն զսէր արանց յինքեանց, այլ և աւելի ատելութիւն քան զամենայն ատելութիւնս ընձե- ռեն ինքեանց, և օտարանան յարանցն, նա և մահ բարկութիւն կրեն յարանց՝ բազուկք, որպէս և ասէ սոյն Սողոմոն, թէ « Զի է նախանձու սրտմտութիւն առն նորա, և ոչ հանդուրժեսցէ յաւուր բարկու- թեանն », ապա ոչնչափ ևս առաւել փեսային և այն և փրկողին զմեզ հզօրանայ բարկութիւն ի վերայ հարա- նացելոցս այ՝ իբրև զմահ և զդժոխս, որ այնչափ յաձախ սիրոյ՝ ատելութիւն առ նա ցուցանեմք, և սատանայի՝ որ սեղեխաբար դողանայ զմեր՝ոբ ամուս- նութիւն ընդ Քրիստի և խրատուցանէ՝ ախորժելով տա- րածանեմք զանձինս, ի ներքոյ անկեալ ամենայն պղծալից խորհրդոց և գործոց նորա։ Ա՛ման որոյ յիւրաւի գտանեմք փոխարէն զանմահ մահն և զդը- ժոխսն անքննելի։ Եւ դարձեալ ո՞ր բերան կարէ երանել զայն, որ զայսպիսի սէր ծանուցեալ, և զայ գոհա- նալ գիտէ, և պահել զսէրն և ոչ եղծանել մե- ղօք։ Եւ դարձեալ, ո՞ր բերան բաւէ աւաղել զո-

տարացեալսն մեղաց յայնքան սիրոյ, և բնակիչս եղեալ անմահ դժոխոցն։ Ասա որոյ ՚ի վերայ բերեալ՝ ասէ,

“Ճանեաք նորա թեւք բոցոյ հրոյ, և ջուրք բազումք ոչ կարասցեն շիջուցանել զսէր, և գետք ոչ արդելցեն զնա”։ Այս և ՚ի մարմնական սիրոյ յայտ գայ. զի ուր ՚ի սէր բնակէ՝ ծնօղական կամ ամուսնական՝ և որ ըստ այսմ, ոչ գետք կարեն խափանել. և ոչ սուր և ոչ հուր և ոչ մահ։ Վասնի՛ք ՚ի վերայ որդւոց և ՚ի հուր և ՚ի ջուր և ՚ի սուր մատնեցան և ՚ի սով. նոյնպէս և ՚ի վերայ աւազաց։ Արդ որչափ առ ՚ած սէրն է, և աս անմեղկելի է ՚ի մարդկանէ, և յաղթող հրոյ և ջրոյ և կապանաց և քերանաց և բանտից և կնոջ և որդւոց. որով յաղթեցին իսկ սիրեալքն ամենայն առաքեալք և մարգարէք և մարտիրոսք և Ձգնաւորք, Քրիստի սիրոյն արբեալք։ “Եթէ տացէ այր զամենայն զկեանս իւր ՚ի սէր իւր, արհամարհանօք անդռնանեսցեն զնա”։ Օ՜այս այսպէս իմանալի է, թէ ոչ է այ սէրն որպէս զմարդկան. մանաւանդ զմեղաց, որ որչափ յաճախէ սէրն, նոյնչափ արհամարհի և անգռնի ՚ի մարդկանէ։ Այլ այն սէրն որ առ ՚ած, այնչափ գովութիւն և մեծարանաց արժանի է, որով և Պաւղոս պարծի. “Ախթեցի զքեզ տէր՝ զօրութիւն իմ. և թէ նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ. ՚ած սրտի իմոյ բաժին իմ ՚ած յաւիտեան”։ Այսինքն թէ դու ես իմ բաժին. և յորժամ զքեզ չիշեմ, նուաղէ սիրտ իմ չիս։ Այլ թէ “սիրտ իմ ցնծասցէ առ ՚ած կենդանի”։ Այլ այլ բազում բանս այսպիսի աղաւաղականս զմայլական սիրոյն ՚այ ջեռեալ զօրայս գտանես, զոր ոչ բաւեմ թուել։ Նոյնպէս և զՊաւղոսին անբաւս ևս, սոյնպէս և զայլ առաքելոցն։ Այս այսմ և զայնչափ վարդապետացն և զսրբոցն ՚այ, որով սիրով ջեռեալ՝ յաղթեցին աշխարհի և ամենայն կարեաց և փորձութեց։

“Քայր մեր փոքր է և ստինս ոչ ունի, զի՞նչ առցուսցուք քեռ մերում, յաւուր յորում պատմեսցի նմա։ Եթէ պարիսպ իցէ, շինեսցուք ՚ի վերայ նորա մարտկոցս արծաթեղէնս, և եթէ դուռն իցէ, յո-

ընկեցուք նմա տախտակս մայրս ,, : Ա՛յս բանս այս-
պէս իմանալ , Թէ ՚ի հրեշտակայնոցն ասէ զօրութեց՝
վասն հարսինն , որ է նոր եկեղեցի՝ որ ՚ի հեթանո-
սաց . և քոյր ասէ , յաղագս ՚ի միոյ արարչէ լինելոյ-
թէ և ստեղծողութեան . և փոքրիկ , վասն անարդ
բնութես ասէ , զի հողեղէն եմք , Թէ և միւսն հրե-
ղէն , այսինքն հոգին՝ որ ընդ մարմնոյս լծակցեցաւ .
բայց քան զհրեշտակս փոքր է . որում և մարգարէն
վկայէ , “Փոքր ինչ քանզարհ արարեր զնա քան զհրեշ-
տակս քո , բայց առաւելագոյն փառաւք և պատուով
պսակեցեր զնա ,, . և որ զինի բանս է : Ա՛յս և այնպէս
փառաւորեաց զմարդն պատուով , որ սատանայ նա-
խանձ բերեալ ընդ նմա , յափշտակել կամեցաւ .
յաղագս որոյ անկաւ իսկ յերկնից և յիւրմէ փա-
ռացն : Ա՛րդ տարակուսին հրեշտակք վասն տկար
բնութես , որ անտանելի և ահաւոյին խորհրդոյն և փա-
ռացն և տեսութեն և գիտութեն հասու եղև : Ա՛յս
ասինս՝ որպէս բազում անգամ գրեալ եմ , զշտե-
մարանս սրտին և զմտացն կոչէ : Ա՛յս տարակուսին
հրեշտակք՝ անտանելի զայս բնութես գիտելով այնմ
անտարը տարողութեն . յաղագս այնորիկ ասէ , Թէ
“զի՞նչ արասցուք քեռ մերում յաւուր յորում
պատմեսցի նմա ,, Ա՛յսինքն , երբ պատմի փոքր և
անստին անհանձար բնութես մարդոյն՝ ՚ով զհողե-
ղէնն առնուլ բնութի , և յորովայնի և յարգանդի
և ընդ կուսական արգանդն ծնանիլ որպէս ումեք
ինքեանս՝ և կուսին կոյս մնալ , և կաթամբ սնանիլ :
Ա՛յս և զի երկայն է զամենայն Թուել զայ կիրս , զա-
մենայն զմարդկայինս կրելն , զոր յանձն էառ բաց
՚ի մեղաց . և Թուք յանձն առնուլ և ապտակ և
գան մարակի և այպերանս զգեստու և փշաւ պսա-
կիլ , և ծեծելոյ զՅածային գլուխն եղեգամբ , և մերկ
՚ի խաչին բևեռել ընդ չարագործս , և լեղեաւ և
քացախով կերակրիլ , և մեռանիլ ՚ով , և խոցիլ ՚ի
զինուորէն տիգաւ և պատիլ և Թաղիլ , և որ սոյն-
պիսիք : Օ այնպիսի պատմութե զնմարդ լուեալ հա-
ւատացէ , կամ ընկալցի փոքրն այն ստեղծուած և
անստին : Ա՛յս և առ Յածածինն էս իմանալի է՝ լսել
՚ի հրեշտակէն , Թէ յղանալոց ես և ընդունել և

կրեալ յորովայնի, և որ այլն ևս։ Այս է իսկ արդարև տարակուսելի և չբոլոր գայթագղութեի և հեթանոսաց յիմարութեի, յաղագս որոյ ասէ մեծ առաքեալն, բայց միայն տեղւոյ տալի է ցոյ հոգւոյն. "Որ առնէ զմեծամեծս և զանքնին և զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ։ "Այս և յաղագս այնորիկ ոչ կարացին հաւատալ ամենայն մարդիկ, զի ոչ գտաւ հոգւոյն սքի տեղւոյ ի նոսա. որ զանկարելին կարելի ցուցանէր ցոյ նոցա։ Այսն որոյ ի վերայ բերեալ՝ ասեն հրեշտակք, որ տարակուսին վասն մեր փոքր և անստին բնութեես։

"Այս եթէ պարիսպ լոյս, շինեսցուք ի վերայ նորա մարտկոցս արծաթեղինս. և եթէ դուռն լոյս, յօրինեսցուք ի նմա տախտակս մայրս"։ Արդ յառաջաբանի գրոցս ասացի, թէ ոչ գոյ յարմարանք մարգարէականք, զի ի բաղմաց լեզուաց և առեալ փոփոխութեի, յերբայեցւոյն ի հելլենացի, և ի հելլենացւոյն ի յոյն և յասորի, և ապա ի հայ։ Այլ միտքն այս է. եթէ մարդ էր և կենդանի տեղծուած ի հաստարակաց արարչէն, և պարիսպ էր, այլ յաւելեաք, և արծաթով իսկ պայեալուածսն խառնեաք՝ մարտկոց շինելով. և դուռն էր, յօրինեաք ի նա տախտակս մայրս, և յաւելով ի փոքրկութեի, որ տանելի լինէր մեծութեամբն պարիսպն, կամ մտանել ի դուռնն։ Արդ զայս լսելով Հարսն, Համարձակի և պատասխանի առնէ հրեշտակացն տարակուսելոյն. որպէս և գրեալ իսկ է.

"Հարսն Համարձակի. Այս պարիսպ և տունք իմ իբրև զաշտարակ"։ Այսինքն, թէ մի կարի յածիք ի հոգս յաղագս իմ տակաւ բնութեես. զի զօրութիւ ամենակալողին՝ փոքրս մեծագոյն քան զպարիսպ եմ և ամուր. և անստինս՝ իբրև զաշտարակն իմ տունս։ Ոչ որ զերկինս և զերկիր և զմեր բնութես և զձերդ յոչընչէ արար, նա զիս մեծացոյց և զտունս իմ առաւելացոյց քան զձերդ. զի զոր դուք ոչ կարէք լսել և տանել և կրել, իմ տակաւ բնութես կարողացեալ քան զձերդ՝ լսեաց և տարաւ և հաւատաց։ Այսն որոյ ի վերայ բերեալ "Այս ևի յաչս նորա

իբրև գտեալ խաղաղութիւն ։ Որ կորուսեալս էի որպէս զգրաճն և զոչխարն՝ որ յաւետարանին ՚ի փեսայէն իմմէ առակի , և պատերազմ և խռովութիւն ունէի ընդ երկնայինսն և ընդ երկրայինս վասն մեր ապստամբելոյն , այժմ խաչիւ փեսայիս եղէ յաչս նորա ձգմարտապէս խաղաղութիւն , և գտեալ ՚ի մէջ ՚ի մէջ ՚ի մէջ

բարտ տեղիս արօտից ուչ տանի, որպէս մեղադրէ երկնաւոր Սողոմոնն մարգարէիւքն։ Եւ զընկերին և զծառայիցն և զեղբօրն ուչ հոգ տանել որպէս զանձին, զուսուցանելն զսրբուն և զողորմած բարս և զխոնարհուն, զանծուլսն յաղօթս, զանհեղգուԹին ի պահս և յերԹալ ի տուն այ և ուսուցանել, երԹալ ի տեսս հիւանդաց և բանդարգելեաց՝ և հիւրոց ընդառաջ և յընդունելուԹին և յպարկուճն, և զեկեղեցիս պատուել ընծայիւք և պատարագօք և սպասուք, և զտօնս տերունականս մեծարել ըզդաստ փառաբանուԹիւ, լուցմամբ և նուիրօք, նոյնպէս և զլուշատակս սրբոց, և զքահանայս պատուել որպէս զպաշտօնեայս այ և զառաքնորդս Ժողովրդեանն Ա՛ին. և Թագաւորաց և տէրանց մի առաչս ծառայել, այլ սրտի մտօք. և որ այլ կարգ քրիստոնէուԹեն են, զոր չեմք բաւական այժմ Թուել, զոր խնդրէ ած, որ կոչեցաւ Սողոմոն ի հոգևոր առաքնորդաց և ի մարմնաւոր, ըստ իւրաքանչիւր պատշաճի առնել և ուսուցանել հեզաբար։ Ո՛վ վասն այնորիկ տիրեն մեզ, զի ընդ մեր պատերազմ հարկին հարկանել հոգևոր առաքնորդքն ընդ սատանայի, և մարմնաւորքն արիւն ևս պարտին հեղուլ ի վերայ մեր և պատերազմ տալ ընդ Թշնամեաց, և եԹէ կարասեաւ և եԹէ մահուամբ, Թափել ի Թշնամեայ։ Եւ դատ առնել իրաւամբք անակնառուԹիւ անհանգիստ որպէս զայ սպասաւորս. և զամենայն մարդոյ տուն՝ որպէս զիւր համարել։ Որպէս գրէր Ցրդատ մեծ Թագաւորն, մինչ դեռ ի կռապաշտուԹեն իսկ էր, առ իւր աշխարհս ԹԷ[1] « Որպէս տանուտէր որ ընդ իւրում տանն հոգայ, նոյնպէս և մեք հոգամք վասն Հայոց աշխարհի »։ Ընդ եԹէ կռապաշտքն այնպէս հոգ տանէին շինուԹեանց աշխարհի և ոգւոց փրկուԹեան մարդկան, որ զքրիստոնէուԹէ ի պաշտօն կոչին, ԹԷ խնդրեն ի մէնջ, ասեն, աստուածքն, և չէ մեզ իրաւացի հարկք և ծառայուԹիւք նոցա, եԹէ այսմ փոյԹ չառնեմք. որպէս Ցրդատ՝ սրբոյն

[1] Ագաթ։

Պրիգորի ասէր, թէ [1] «Ընդ ահի դիցն զնորա շատ և զմտերիմ ծառայուէին չիշխեցի»։ Նոյնպէս և Պարսից Թագաւորն ի արդանանքն գրէր [2], և այլք բազումք. որ և գեհենի և տանջանաց և դատաստանի ակն ոչ ունէին։ Ընդ մեզ որ ի գիտութեես եմք և հաւատացեալ եմք ի Քն, և ակն ունիմք գալստեան նորա՝ և գիտեմք ստուգապէս եթէ համարս պարտիմք տալ ըստ այսմ ամենայնի. նոյնպէս և ընդ անձանց ընդ խորհրդոց բանից և ընդ գործոց, քանի՛ պէտք են զգուշանալ, զի մի տմբթուլ կացցուք յահէզ աւուրն առաջի երկնաւոր արքային Աղամանի՝ ի պահանջելն յայգւոյն զպատուէն։ Ալ ասն որոյ բեւր երանի են՝ որ տան զպատուէն լիապէս, և բիւրուց բեւր աւաղանաց, որք ոչ կարեն հատուցանել զպատուէն։ Ընդ արարեալ սկիզբն Աղամանի ի Ձառս առաւաւ, նախ զի դրախտին ստեղծուէն նախահօրն և յանկանելն ի փառացն. և դարձեալ առնուլ զփառս՝ Քի գալստեամբն, և հարմանալ նմին հեթանոսաց, և պէսպէս և զանազան չնորհաց հանդիպել, զոր կարգեցաք և եդաք ի գիրս յայսմ, ած փակեաց յայգի ի հարմանէ անուանէն և յիւր միւսանգամ գալուստն և ի պահանջումն պտղոյ արդարոցն, զոր յառաջ հարմանն կոչեաց, ցուցեալ զառաւել սերն առ մարդիկ, թէ ոչ միայն հարմնացեալ եմք և միաւորեալ ընդ փեսային Քի, այլ և կենդանակուր եմք նորա՝ որպէս խաղող յայգւոջ վայելչական, և ելեալ ի սկտեղս Թագաւորին Քի։ «Զատ զայգին իւր ցպահապանն»։ Պահապանքն՝ այսոքիկ են, զոր ասացի։ Պարձեալ, և ամենայն անձն՝ իւր պահապան է։ «Ըստ այր իւրաքանչիւր ի պտղոյ իւրմէ հազարս արծաթոյ»։ Ընդ այգի ասաց և պատուղ՝ արծաթ. ըստ այսմ զնաւրդ յարմարի, թէ ոչ յայտ է, զի առակաբանիւս վարի. որպէս է խակ բովանդակ գիրս երգոյ երգոցս։ Ընդ հազարս ըզկատարեալ և զբազմաւորական բերսն ասէ՝ զարդարոց։ Եւ արծաթ, զի որպէս արծաթն ընտրի և փորձի ի բովս, նոյնպէս և սքանչն որպէս զարծաթ փորձ-

1 Ագաթ։ 2 Եղիշէ Ցեղանակ. ք։

ձեալ են յերկրէ, և սրբեալ և պարզեալ եւթնապատիկ ՚ի հողոյ։

"Ա՛յգին իմ լինձ առաջի իմ,,։ Այլ որպէս մինչ յերկրի էր մարդն, և ընդ երկնաւ որպէս վարագուրաւ միջնորդեալ էր. այլ իմ էր, և լինձ, և առաջի իմ հանապազ։ Ա՛յսու և առաքեալ վկայէ, ասելով "Ա՛յժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման,,։ Այս որ այլք բազումք սոյնպիսիք ՚ի սրբոց ասացեալք յաղագս այսր հաւատարմութեանն։ "Հաղարք Սողոմոնի և երկերիւրք, որոց պահէն զպտուղ նորա,,։ Ցնա աստանօր զանչափ սէրն ՚ի յընդ մարդկան. յաղագս որոյ և Յաճախեան ասէ, Թէ [1] և ոչ ընդ մի ինչ այնքան զուարճանայ Յաճ, որքան ընդ մարդոյ ուղղութեանն և փրկութեան։ Ա՛յս ինքն Թէ ոչ ընդ մի իրս այնպէս զուարճանայ Յաճ, որչափ ընդ մարդ արդար և Յաբ. յաղագս որոյ զերկինն և զերկիր արար և որ ինչ յերկրի է. վասն որոյ մարդ իսկ եղև, և որ այլն ևս։ Ա՛րդ հազարք Սողոմոնի, իւր ասէ. Թէ լինձ է շատ պարգևանն և խնդութիւնքն ուղիղ գտանել մարդոյն և պատշաճ՝ քան իւր իսկ մարդոյն. այնպէս որպէս ընդ հազարն և ընդ երկերիւրն ընդ մէջ է, լինձ հաշար և նմա երկերիւր. որ զերկու բնութիս ունիմ միաւորեալ ՚ի մի, հոգի և մարմին։ Այս կատարեալքն լինձ, որ կատարեալս եմ Յաճութիւն և մարդկութիւն. մարդ կատարեալ, նոյնպէս և Յաճ կատարեալ, յաղագս զմեզ ՚ի կատարեալ փոխելոյ։ Օ՛ի տասն և հարիւրն և հազարն կատարեալ թիւք են։ Օ՛ի մինն ՚ի տասն աւարտի, և այլ ոչ յառաջ, բայց եթէ երկրորդէ. նոյնպէս և մի տասնն, տասն տասն լեալ հարիւր՝ այլ ոչ յաւելու. նոյնպէս և հազարն՝ տասն հարիւրիւ։ Այս զկնի այսր և պահապանացն ասացի վարձս տալ, ոչ միայն որ զինքեանս պահէն, այլ որ առաջնորդութիւն են պահապանք և Ձնմարիտ միակք այգւոյն, եթէ հոգևորք և եթէ մարմնաւորք, վարձս առնուն ՚ի Տեառնէ Յեսէ Քրիստոսէ։

"Յարսնն ասէ։ Որ նստիցէ ՚ի պարտէզս, այլք

1 ՚Ի Յայտնութենն Քրի։

անսան քեզ, ղձայն քո լսելի արա ինձ »։ Եւ զոր զոր փեսայն այգի անուանեաց զՀարսնն, և այլք յառաջագոյն պարտէզ, ըստոյն Հարսնս երկրորդեալ՝ պարտէզ զինքն փեսային կոչէ, որ զպտուղ այգւոյն պահանջէ։ Ո՛այս ասելով, Թէ դու զօրութի՛ւն իմ. և քո օգնութի՛ւդ և՝ զօրացուցանելովդ տամ զպտուղ. բայց միայն ղձայնդ քո լսելի արա ինձ։ Ո՛այն զոր ասաց իսկ աւետարանաւն, Թէ « Լուկայք առիս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ »։ Եւ զոր աղաչէ Հարսնն, Թէ ղձայնդ քո միայն լսելի արա ինձ. զի անմոլար հետևեցից զՀետ Հովուիդ՝ որ ասացեր, Թէ « Լուծարք իմ ձայնի իմում լսեն և զինի իմ գան, և զօտարի զՀետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ՚ի նմանէ. զի ոչ ճանաչեն զձայն նորա »։ Եւ զայն աղաչէ, զի միայն ձայնին անկարօտ պահեսցէ ցանկալոյն և փափագելոյն. որում անմոլար զՀետ երթեալ՝ տայցէ զՀաղարս արծաթոյն և ըզպտուղ այգւոյն և զբերս պարտիզին։ « Եւ լաւ անսան քեզ »։ Լրպէս Թէ ամենեքեան քեզ սպասեն, և ամենեցուն ակնկալիք դու ես, երկնայնոց և երկրայնոց, և որ ՚ի նոսա արարածք։ Եւ այս է՝ այլք անսան քեզ։ Ո՛ձայնդ քո ևս լսելի արա ինձ, որպէս և հրեշտակայ որ մծտաւորք են քան զմեզ. և քո լուսովդ լուսաւորին, որպէս մեք զգալի և իմանալի աբեգակամբս, և նոքա քեզ։

« Փախիր եղբօրորդի իմ, և նմանեաց այծեման, կամ որթուց եղանց ՚ի վերայ լերանց խնկաբերաց »։ Տէս զյաւելուած պաղատանաց Հարսինն նման մարգարէին սաղմոսերգողին փութացուցանել յօգնուի, ասելով, « փութա՛ յօգնել ինձ, և մի՛ յամենար »։ և դարձեալ, « զի նուաղեաց սիրտ իմ, վաղվաղակի՛ լուր ինձ, և փութա՛ յօգնել ինձ տէր փրկութե՛ն իմոյ »։ և որ այլ այսպիսիք, զփախիրն ասելով դուշակեն, և « զնմանեաց այծեման, և կամ որթուց եղանց ». ըստ Եաւթի Հայցմանցն, զարագահան լինել աղաչէ, որպէս զայծեամն և զեղնորթ՝ որ սրահայեացք են և երագահաս։ Եւ զՀանդերձեալ գալստեանն ՚ի մէջ բերեալ պահանջելով զպտուղս, զոր խնդրէ յամենեցունց ՚ի միւսանգամ գալստեան փե-

սային, յորժամ ՚ի մէջ գիշերին բարբառ լինի. “Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա„: Որ տեսանէ զիւրաքանչիւր խորհուրդս և զգործս նմա նուիրեալ ընդ աղօտ առակին այծեմանն և եղան, որ ՚ի բարձունս լերանց բնակէ. աստ ՚ի մարդիկ լեռնացեալ առաքինութիւք և անուշահոտ վարուք որպէս լերամբք խնկաբերօք, և անդ ՚ի ձբ և ՚ի վերին թռուցեալ ընդ փեսային ՚ի լեառնն յերկինս, զոր և ասէ Ծաբաան [1]. նա և ՚ի ներքս մտեալ արագընթաց, նմանեալ առակողին բանիս որ ասէ, թէ “փախիր եղբօր որդի իմ„: Օ՚ի արագընթացն և փախիրն, զմի միտս ունին: Այդ ասելովն, թէ նա ՚ի ներքս մտանէ արագընթաց՝ ՚ի վերայ բերէ, կէսքն ընդ նմա ՚ի ներքս մտանեն որ են հարսնացեալքն փեսային. և այլքն արտաքոյ արգելանին մնան, զմտելոյն ժամանակն ՚ի պատրաստելն ծախելով: Այս բազումք յետոյ լան՝ զկնի ուսեալք զտուգանն պղերգութեն, յորժամ ոչ ևս յառագաստն մտանել իցէ. և յոլովագոյնս մաղթեն, զորս չարաչարն փակեցինն, այլսմ օրինակի նմանեալ վերջացելոցն ՚ի հարսանեացն. զորս բարի հայրն ուրախ առնէ բարեաւ փեսային, յաղագս կնոջ նորահարսինն, կամ յաղագս լծոյ եզանց, զորս չարաչար ստացաւ, վասն փոքրագունիցն զմեծամեծսն տուժեալ: Այդ զայս ասէ Ծաբաան [2]. զոր և Սողոմոն յառաջագրէ, թէ ՚ի փախչել փեսային կամ յերագելն յերկինս յորժամ գայ դատաւոր մեղաւորաց և կոչնական արդարոց, և զորս ընդ իւրն երթալ արժանաւորքն, զնոսա առեալ արագ ՚ի ներքս մտանէ որպէս փախստական, և փակի դուռնն՝ մեղաւորաց: Օ՚ի մինչ պատրաստելն պարտ էր զՀնապարհն, զայն յանօգուտ իրս ծախեցին, զաշխարհիս իրս հոգալով, զլուծս եզանց և զկին և զորդիս և զանդաստանս և զայլս՝ զոր յերկրի ծուխք: Այս յայնժամ զընդունայն լալիւնն լան՝ վերջոյ ուսեալք և զմտաւ ածեալք զվնասն իւրեանց՝ յորժամ ոչ ևս կալմելի է: Յորոյ վերայ բերեալ՝ ասէ [3]. քանզի ոչ

1 } ՚ի Մ կրտուելն Քրի:
2 }
3 }

ոք անդ մնանէ յարհամարհողացն և ծուլացելոցն և յաղտեղեացն, այլ ոչ փեսայապէս զարդարեալ, թէ և աստուստ զինքն սպրդիցէ՝ մնոտի յուսովք խաբելոք: Ո՛այս ասէ, թէ և աստ խաբեմք զմեզ սնոտի յուսով. ումն զայս իրս ասելով և ումն զայն, և թէ քրիստոնէից ոչ գոյ գեհեան, և ողորմած է Աստ. որ վասն մեր մարդ եղև և չարչարեցաւ վասն մեր և մեռաւ, արդ նա զիա՛րդ մոռանայ զգուշն՝ և առաքէ զմեզ ՚ի յաւիտենական հուրն, կամ հանէ յառագաստէն: Ա՛յս է սնոտի յուսովքն խաբեալ, զոր և ՚ի վերայ բերէ, [1] յորժամ ՚ի նեղքս լինիցիմք, յայնժամ գիտէ փեսայն զորս վարդապետէն. և որք մերձ լինիցին ընդ նմա երթեալ հոգիքն՝ եղիցին ընդ նմա. որպէս Թուխ ինձ, վարդապետելով զկատարեալսն և զմաքրագոյնսն: Ա՛րդ ծանիր յաստ. քանի ասելոյս թէ զամենայն զոր լինչ խօսեցան, և զոր լինչ ասացին մեզ գիրք, օրէնք և մարգարէք և աւետարանն, որ է Ա՛ստ. և առաքեալք և վարդապետք յայտապատում և առակախօսք, անկատարք են և թիւրք առ հանդերձեալ ուսումն, զոր վարդապետեալ փեսային ուսուցանէ զկատարեալսն և զմաքրագոյնսն՝ անդ կատարելոցն կատարեալ փառաւք, որպէս զՀրեշտակսն. և մաքրելոցն, որպէս զսերովբէսն և զքերովբէսն կատարեալ մաքրութիւ: Ա՛յս և զոր տէրն ասաց "ոչ ըմպել ՚ի բերոյ որթոյ մինչև արքից նոր ընդ ձեզ յարքայութիւն հօր իմոյ". զայս կատարեալ վարդապետութիւն՝ ասէ սոյն Դիւրիդոս աստաբան յայլուս տեղւոջ, թէ [2] որ է նորա ուսուցանելն, և մեր ուսանելն: Ա՛րդ թէպէտ և բարձրագոյն և մեծամեծ խորհուրդ առաքաւորեաց Յովհաննէ երգոյ երգովքս, զբաւանդակ զԱ՛ստ գալուստն և զմնայն չարչարանաւքն հանդերձ և պայուրութիւն և զմիւսանգամ գալուստն և զհեթանոսաց հարսնութիւ փեսային Ա՛ստի և զեկեղեցւոյ լուսաւորութիւ և զչորհայ հոգւոյն առատուի մարգարէութիւ և առաքելութիւ և վարդապետութիւ

1 ՚Ի Մ կրոտութիւն Քո՛ի:
2 Ճառ ը. ՚ի Պասքայն:

և մարտիւրոսուԹիւ և կուսուԹիւ և քահանայուԹիւ և Հիմնաւորական հանդիսիւ և ապաշխարողական վարուք և որ Ի՞նչ պատարագաւն, մեղուցելոց և մեռեալոց յոյս։ Ա՛յնու զոր ուսանելոց են սուքն Ի նոր ոգուԹեն և Ի կատարելուԹեն իւրեանց Ի սիրոյ փեսային, յոյժ անկար է այս, որ Ի Սողոմոնէ ասացան, և այլքն ամենայն որ Ի Հնոց և Ի նորոց պատմեցան Ի վերայ այսր ամենայնի հրաշից ոյ որ եղեն՝ և որք լինելոց են, որչափ բաւական արար ասէր Ցե ասել և ուսուցանել։

Ա՛ղաղաեսցուք զբանս մեհնաւԹեց երգոյ երգոցս, և ասասցուք զոր ՚ծաբան ասաց Յիշեն [1]. որոյ և մեք հաղորդեսցուք, որ մեհնեցաքս զայսոսիկ, և որք ուսանիցէք Ի նոյն ինքն Ի Ի՞նչ Ցե Ի տէր մեր, ո՛ւրուք փառք յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից ամէն։ Վարձեալ, ևս յաւէտ փառք ընծորհատուողին նմա մերոյ Ցեի Ի՞նչ հանդերձ հարքն և ՚ըր հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՆԻՋ. ԹուականուԹեաս Հայոց՝ հարկեցայ ես Ոսկիփոր քահանայ Ի Կարեկայ, որդի ՚ն Խոսրովայ անձաւացեաց, եպիսկոպոսի Ի Գուրգենայ ՚ծաձաձեր քաղաքակեալ արքայէ՝ յորդւոյ ԱքուսաՏնի համազասպ Թագաւորի՝ առ Ի մեհնուԹիս ահաւոր բանիցն Սողոմնի, և բացայայտել զխորին ճաճուկին որ Ի նոսա, որ են քաղցր առ Ի լսել։ Ա՛ման զի զփեսայէ և զՀարսնէ ասէ, որ և զտեառնէ և զկարմրացեալ շրԹանց և զայտից գեղեցկուԹէ և զաչաց ցանկալեաց և զքեռ և զեղեօրորդւոյ և զօրիորդաց՝ և զայլն ամենայն այսպիսեաց բանից տուփականաց և սրտից խաղտանաց սեռն սիրոյ շաղկապ միաւորուԹեան. զոր լուեալ մարդկան անխմանալեօք մտօք յայլ և յայլ իրս խմանային։ Ա՛պա Ի հոգս եղեալ ԹագաւորինՆ այսպիսի իրի, յղէ առ իս մի անգամ և երկիցս. որոմ ոչ իշխեցի ընդդիմա-

1 Ի ՄկրտուԹենն Քրի։

նալ, զի ծանեայ՝ եթէ ա՛ծահաճոյ է հրամանն, և՝ մեկնեցի զերգս երգոյն նորին հրամանաւ։ Ո՛չ թէ պէտ և աւելի գործ քան զիս առի զանձամբ, առ երկիւղն անհնազանդութեա՛ն զի մի թագաւորական հրամանն անկատար մնասցէ, սակայն յոյժ յանդգնութի՛ էր ինձ այս, և բազում բամբասանաց արժանի յամենեցունց, նա և յա՛ծայրին կողմանէն պատժոյ ակնկալեալք։ Այլ յերկոցունց կողմանէ, յա՛ծայնոցն և՛ ի մարդկայնոյն զթագաւորական հրամանն առաջի կալեալ՝ կարծեմ արդարանալ, զի իւր իսկ Ինքն հրաման է՝ հնազանդ լինել թագաւորաց իբրև ա՛յ, և որ հնազանդի՝ իւր համարի ա՛ծ, և որ անհնազանդ գտանի՝ և զայն ևս իւր համարի։ Ո՛ր աղաչեմ՝ ընթերցասէրդ՝ մի մեղադրանս յաւելուլ ինձ յաղագս ձեռնարկութե՛ն գործ՝ որ աւելի էր քան զարժանն իմ։ Ո՛չ ըստ հարկապահանջ խնդրողին ո՛չ կարացի վերջացեալ գտանիլ, այլ յուսալով իմ՛ի հոգին ա՛ծ, զմնաւ ածի թէ ո՛չ անտես առնէ գաղաչանս առ նա, սիրելն արարի աղօթիւք և արտասուօք խնդրել. որ և նայեցեալ յանարժանութե՛ն իմ և՛ի սրտեառնդն կամին հայցողին, եբաց զբերան իմ յասել և՛ի համառօտել զսա՛ և՛ փառս Ինի. ամէն։

Գիրքը ենթարկվել է ախտահանման
27–42 թ.
Ա 61